# Ռաֆֆի
## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆՈԹԵՐ

ԱՂԹԱՄԱՐԱ ՎԱՆՔԸ

Խոսակցություն ազգային լուսավորության վերա, դուրս հանած մի ճանապարհագրութենից, որ եղած է 1858 թվակ. շրջելով Վասպուրականի և Տարոնի կողմերում:

Արեգակի վերջին ճառագայթները մտան Նարեկյան սարերի հետքը: Մի թեթև զեփյուռ բերում էր ուխտավորների փոքրիկ նավակը Բզնունյանց ծովակի երեսից: Երկար ժամանակ նստած մի բարձրավանդակի վերա Աղթամարա կղզումը, սպասում էի ուղեկցիս, որ նավ մտնելու միջոցին պատահմամբ ինձանից ետ մնաց: Բայց իզուր. ընկերիս մի այլ ձախորդություն էր պատահել, պատճառը, իմ նավամուտ լինելուց հետո, նորա ձին, որ արածում էր ծովեզերյա դաշտումը, հանկարծ արձակվելով փախել էր: Արդեն միամտեցա, որ նա զբաղված լինելով որոնել յուր ձին, կարող չէր իսկույն գալ. նորա գալստյանը մնաց սպասելու առավոտուն:

Լուսինը մի երկաթյա երկնաքարի նման, կրակից նոր դուրս բերած, կարմիր երեսը ցույց տվեց Վարագա սարերի կատարներից, և նորա արծաթափայլ լուսով սկսան շողշողել ծովակի հեզիկ ալիքները: Ես նստած էի մի բարձր քարաժայռի վերա, որին զարկվում էին ծովի երթևեկ ալիքները, և սրտիս մտածությունների մրրիկը խառնվելով հեղանյութ տարրի ալեկոծության հետ, արձակում էին երևակայությանս սենյակի մեջ նորանոր արձագանք: Հանկարծակի մի նոր ձայն շփոթեց մտածությունս: Հայեցա, և ահա տեսանեմ մի նորահաս տղամարդ, բռնած ձեռքին մի փոքրիկ պարսկական խալիչա, ասում էր — Իլի՛ վեր, ախբա՛ր, ասիկա մեր հայր սուրբի տեղն է. ամեն օր էսա վախտ, աստեղ նստած, դահվա կխմե, մըկա էլ կուգա կոր. իսկույն հասկացա, որ դա վանքի ծառաներիցն էր. եկողն ևս՝ գլխավոր վարդապետներից մինը: Լավ եղավ, մտածեցի, գոնյա՛ հայր սուրբի հետ փոքր-ինչ ժամանակ կանցուցանենք, նոր բաներ կլսենք:

Հայր սուրբը եկավ: Ես ոտքի վերա կանգնեցա, աջն համբուրեցի, ձեռքը գլխիս դրեց՝ շնորհակալ եմ, մի պահպանիչ ևս ասաց: Կարծեմ. այս պատիվը չցուցաներ ինձ, եթե չսողացնեի ձեռքը քսան դուռուշանոց պեազ մեճետյան: Ինչևիցե: Աստված սորան կյանք տա. սևագլխի գործն այն է. նա մեղք չունի: Հայր սուրբը տեղ ցույց տվեց, ծալապատիկ նստեցա: Երեք այլ վարդապետներ ևս նորա մոտ շարվեցան. չորս հատ ևս, քրդի նման, գլուխները կարմիր, դեղին և զանազան գույներով մարհամաներ փաթեթած մարդիկ կային, որոնք թե ինչ ազգից էին, չիմացա իսկույն. բայց հետո հասկացա, որ հայ են: Շատախու և Մոկաց կողմերի իշխաններից: Դառն դահվայի փոքրիկ բաժակները սկսան պտույտ գալ, և մինն ևս ինձ տվեցին. խոսակցության տուտը բացվեցավ:

— Հըմը՛, որդի՛, ուստի՞ էս, որտեղի՞ց կուգաս, հագուստիցդ Ռուսաստանու հայերուն կնմանիս. ապրի՛ս դո՛ւ, ի՞նչ է քեզ ստիպեր, այսպես ջահիլ-ջահիլ եկեր էս, Հայաստանու վանքեր կպտտես, զորանաս, սուրբ նշանի շնորհը վրադ լինի՛:

— Հա՛յր սուրբ, ես Պարսկահայոց գաղթականներից եմ. մանկութենից Ռուսաստանում մեծացած լինելով, նոցա հետ նմանություն ունիմ: Բայց բնիկ սալմաստեցի եմ, Ատրպատականի ժողովուրդ:

Հայրենիքի սերը բերել է ինձ այս կողմերումս շրջելու. ուխտավոր եմ, սուրբ Կարապետի վանքից եմ գալիս:

— Աստված ուխտդ ընդունելի՛ արասցե՛: ( — Երանի քո աչքերուն, — կրկնեցին մյուսները). բայց ասա՛, որդի՛, Պարսից կողմերեն հե՛չ ընծա մի, հոգեբաժին, կամ ուրիշ բան ունի՞ս բերած, որ օրհնության գիր տանես: Պարսկաստանու հայերը, թեպետ մոխրապաշտից մեջը կբնակին, բայց շատ ջերմեռանդ ու բարեպաշտ մարդիկ են, ամենայն ժամանակ անոնք չեն պակասեցներ յուրյանց ընծաները սուրբ վանքերեն:

Հայր սուրբի փաղաքշական գովասանությունը կամա ակամա մի քանի դեղիններս, ոսկի դահեկաններ պիտի խլեր ինձանից, բայց ի՞նչ օգուտ, նորա բախտից քսակս հրաժարիմք էր կարդում: Ինչ պետք է արած, պարտական եմք, պիտի տամք. կարելի է ավետարանի կողքին այդպես գրած լինի: Դոքա թո՛ղ մնան. չիցե՛ թե մեր վարդապետը բարկանա: Ա՛խ. ծառա՛ եմ նորա աքին. նորա անեծքը կրա՛կ է:

— Ճշմարի՛տ է ասածդ, բայց ինձ ո՛չ մի բան տված չեն բերելու. միայն ես ինքս խոստացած ունիմ դարպաս տալու հարյուր դուռուշանոց դեղին մեճետիա, այսքան հազիվ իմ կողմից բաժին հասանի սուրբ ուխտին: Ըստ որում պարսկաստանից դուրս գալուցս հետո, բավակա՛ն վանքեր եմ տեսած, և ամեն մինին մասնավոր գանձանակ ընծայած:

— Աստված ևս առավել կարողություն տա. մեք ձեզանից միշտ շնորհակա՛լ եմք, թե՛ տաք, և թե՛ չտաք: Ո՛րդիք, դուք լա՛վ գիտեք, որ աշխարհի ամենայն բանեն զրկված եմք. մեր ումուդը, մեր հույսը մեր ժողովուրդն է. մեք անոնց համար աղոթք կանենք. անոնք էլ մեզ չպիտի աչքե ձգեն. թե՛ սա աշխարհումս և թե՛ ան աշխարհումը մեր հոգվո փրկությունը մեզնով է:

—Այս ո՛վ չգիտե, ասաց վարդապետներից մինը, մի՛թե Քրիստոսն չէ՞ր որ ըսավ. «Եվ զոր կապիցեք երկրի, լինիցի կապեալ երկինս. և զոր արձակիցեք, լինիցի արձակեալ» և այլն: Մեկ բաղնիք որ կերթաս, բաղնիքպանը քու մարմնի կեղտերն կլվանա ու կմաքրե, դուրս գալու ատենը, զանիկա չե՞ս վարձատրեր: — Հապա մենք, որ ձեր հոգվո ախտերն ու կեղտերն միշտ կսրբենք, մեզ պիտի առանց վարձատրանա՞ց թողուք: Հոգիներս դուրս կգա՝ օրն յոթն անգամ ժամ ըսելով, շաբաթն երկու անգամ պատարագ ընելով, ու ծունր իջնելով, ո՛վ գիտե ի՞նչ ճգնություններով: Ինչո՞ւ, որ Հայոց ազգը հաստատ մնա, փառավոր ըլլա, Լուսավորչական օրենքը չկորչի:

—Ադոնք թո՛ղ մնան, — ասաց առաջինը: Տիրացուն, կերեի, ինքն ալ գրոց աշակերտ է. անկարելի է, որ աս առարկաներս հասկցած չըլլա: Բայց, լսե, տիրացու Հակոբ, Ռուսաստանու և Պարսկաստանու վանքերը ու ժողովուրդը ինչպե՞ս են համեմատելով մեր վանքերու ժողովրդյան հետ:

—Խնդրում եմ, այդ բաները ինձնից չհարցնեք. չիցե թե իմ պատասխաններս այդ նյութերի մասին վշտացնեն ձեր սիրտը, և շատ կարելի է, ձեր բարկությունը հարուցանեն իմ վերա: Նաև զանազան տեղերից, անհամար կարգավորք կսկսեն յուրյանց սև վեղարների տակից մռմռալ և անեծքի կայծակներ թափել իմ վերա, ուր մնաց Հայոց նոր քննարանների գրիչ շարժիչը իմ վերա: Գիտե՞ս ես վաճառական մարդ եմ, չուն իմ այն գլուխը ամեէ մի սրախոսության պատասխանատու լինել: Այլև առածն ասում է «ճշմարտախոսի գդակն է ծակ»: Քանի որ ճշմարտությունը Հայաստանից փախչում է, հարկավոր է մեզ ևս թաքչիլ (թաք կենալ):

—Ըսե, ո՛րդի, ճշմարտությունը մերկանդամ է, արժան չէ զանիկա թաքուցանել: Կարելի է, քու դատողություններդ արժանի ընդունելության բան ըլլան, խելքը հասակի ու մորուքի վրա չէ. դատ անգամ խիստ մանուկ և պատանի սրտերու մեջ կպատահին վսեմ ու արժանավոր մտածմունք, մի՞թե փոքրիկ բլուրներու մեջ ազնիվ մետաղներու հանքեր չեն գտնվեր:

— Հա՛յր սուրբ, դուք կամենում եք սրտիս խոցերը բանալ. և արդա՛րև, ո՞ր օրի համար պիտի մնան դոքա. լավն այն է, որ բացվին, դուք ևս հասկանաք, որպիսի՞ ցավեր այրում ու խորովում են սիրտս: Քանի որ աշխարհագրության մեջ, մասնավոր մարդերի գրվածների մեջ կարդում էի հայոց ազգի բազմության թիվը, նոցա կրոնասիրությունը, նոցա բարոյական ազնիվ բարք ու վարքը, և պատմութենից տեղեկանում էի նաև նոցա առաջինների բարեփառությանը. — հիրավի, սիրտս մի անչափ ուրախությամբ լցվում էր. փա՛ռք էի տալիս նախախնամականին, որ այդպիսի բարեբախտ ազգի զավակ եմ: Բայց երբ գրքերը մի կողմ դրած, կամեցա ականատես փորձով ստուգել այդ կատարելությունը և բարեփառությունը. ո՛հ, այն երեխայական հոգեզմայլությունքը փոխվեցան մի անտանելի վշտի:

—Ինչո՞ւ այդպես, — ասաց վարդապետը, — ընդհակառակն, քու ուրախությունդ տասնապատիկ պիտի ավելնար:

—Ո՛չ. խղճալի վիճակի մեջ եմ տեսնում ձեր ժողովուրդը. միանգամայն մեռած տգիտության խավարի մեջ, որ և պատճառ է տալիս զրկվելու աշխարհային և երկնային փառքից:

—Այդ բանիդ միտքը լավ չեմ հասկնար. ի՞նչ կնշանակե. մեր ժողովուրդը տգետ գոլով զրկվում է աշխարհային և երկնային փառքե: — Կարծեմ ասել կուզես, ո՛չ աշխարհիս մեջ ունին մարմնական երջանկություն, և ո՛չ երկնքի մեջ հոգեկան փառք:

—Այո՛, այդպես. տգիտության ներհակն է գիտություն, որին ուրիշ խոսքով լուսավորություն, ուսումն եմք ասում: Լուսավորությունը մի այնպիսի ասպարեզ է բացում մարդու առջև, որի մեջ գտնում է նա երկու գլխավոր ճանապարհներ. մինը տանում է դեպի այս աշխարհի երջանիկ կյանքը. իսկ մյուսը՝ դեպի երկնքի հավիտենական փառքը: Ըստ որում՝ լուսավորությունը ուսուցանելով մարդուս զանազան օգտավետ արհեստներ, կրթում է նորա միտքը, բացում է ճանապարհը դեպի զանազան գյուտեր և հասունանում է նորան հնարներ, որովք նա հեշտությամբ կարող է հարըստանալ ինքը և հարստացնել յուր հասարակությունը: Այլև լուսավորությունը ազնվացնում է մարդուս բարք ու վարքը և շինում է նորան օգտակար և բարեգործ անդամ ազգի. դորանից հետևում է առաքինությունը, այն միայնակ կենդանի և կենդանա ցուցիչ մասը կրոնի, որ և պատճառ է տալիս հանդերձյալ կյանքի բարելավությանը: Դորա հակառակ, մի մարդ կամ թե մի ազգ, որ խավարի ու տգիտության մեջ է, ունի մի նեղ ու անձուկ դուռն ապրուստի. նորա կյանքը ստրկության և ծառայության մեջ է. նա հայթայթում է յուր ապրուստը դժվարին և անտանելի աշխատութեններով. նա և կորցնելով կրոնի կենսական մասը, հոգին, կամ թե մեռցնելով նորան, այնուհետև պիտի առաջանա սնապաշտություն կամ կռապաշտություն:

—Որդի, այդ բանի մեջ դու շատ կսխալվիս, մեր ժողովուրդը իր վիճակին նայելով, բավականին լուսավոր է:

—Ո՛չ, հայր սուրբ, ոչ միայն ձեր ժողովուրդը, և դուք, այլև բոլոր ազգը յուր նախնիքի բարեփառության ժամանակներում ևս լուսավորության համար հոգս չէ տարած: Անի քաղաքում կարդում ենք հազար և մի եկեղեցի, բայց մի վարժատան անուն անգամ չկա: Նույնպես Հայաստանի մյուս տեղերում տեսանվում են անթիվ վանքեր, բայց վարժատան նշույլ չկա: Երևում է հայը, որպես այժմ, նույնպես և առաջ, ունեցել է մի սնոտի սեր դեպի կրոնը.

Աշխատել և բազմացնել եկեղեցիների, վանքերի, կրոնավորների և ճգնավորների թիվը: Այս պատճառով հայոց գիտնավորը, շուտով կրոնավորի կարգը ընդունելով, դիմում էր դեպի վանք, ըստ որում այնտեղ պաշտվում էր սրբի տեղ: Ո՞վ կցանկանար վարժապետության, ո՛վ էր վարժապետի պատիվ գնողը, ո՛վ էր նորա ժողովող և դարմանող հոգաբարձուն, կամ ազգասեր իշխանը նույնիսկ հասարակության մեջ: Բայց, ավա՛ղ, մեր թշվառությանը. կարծես այժմ ևս ազգն յուր թանձր թմրության քնից զարթած չէ, որ այն վանքերից դուրս բերելով հայոց գիտնավորը պիտանի կացուցաներ յուր որդիներին. հայոց ուսումնարանը վանքերի պատերի միջից դուրս հաներ և դներ ժողովրդի մեջ և շիներ հասարակաց կրթության և լուսավորության տուն:

— Հը՛մ... — գլուխը շարժեց վարդապետը. կերևի կոր, դու ևս ան պարոններեն ես, որ ազգի վանքերը, ազգի սուրբ աթոռները քանդելու կջանան, կրոնավորաց դեմ կպատերազմին: Այդ միտքերը նոր ազանդ տարածել է, լուսավորչա սուրբ կրոնը խափանել է: Ո՛չ, եղբայր, հայը յուր նախնյաց շավիղեն դուրս չգար, նա որպես մինչև ցայժմ սուրբ պահեր է նախնյաց ավանդությունները ու ծեսերը, նույնպես պիտի պահե մինչև հավիտյան:

Ոհ, այդ ի՞նչ նախանձու հոգի է, որ դուք ունիք հայոց գիտնավորների հետ: Թո՛ղ մնան աշխարհական գիտունները. բայց և ձեր համակարգ եղբայրներից մինը, երբ սկսում է ազգային լուսավորության խնդիրների վերա մտածել, իսկույն վեր են կենում նորա ընդդեմ ահագին բազմություն նախանձոտ հակառակորդներ ձեր միջից: Ինչ ասեմ ի մասին աշխարհական գիտնավորների հայոց մեջ, որք թափառական ման են գալիս աշխարհից աշխարհ, և ո՛չ մի տեղում դադար չեն գտանում: Խղճալի Մ. Թաղիադյանցը աստանդական մինչև ի Հնդկաստան հասավ, վերջը Պարսկաստանի քաղաքում ավանդեց յուր չնաշխարհիկ հոգին: Ապովյանը — և անգիտելի է, ինչ կերպով կորցրեց յուր թանկագին կյանքը: Բայց ե՞րբ կլինի, որ մեր Հայաստան աշխարհում ևս կառուցանվին աթենյան տաճարներ, և հնամոլության մառախուղը վերանա, մի՞թե ազգն ստեղծվել է վանքի ու վանականների և դատարկ ծիսապաշտության համար: Դորա հակառակ, վանքը և վանականքը և բոլոր կրոնական կարգերը սահմանված են մարդուս համար և պիտո է ծառայեն մարդկության օգտին: Իսկ երբ որ նոքա անպիտանացան, և համեմատ չեն ազգի և ժամանակի պիտույքին, ապա պետք է ի բաց մերժվին: Այժմուս ազգը, յուր տգիտության բանտի մեջ, ճգնավորների աղոթքին և վանականների աղերսանքին այնքան կարոտություն չո՛ւնի, որքան փափագում է կրթության ու քարոզության ախտահալած դեղին, այն զարթուցանողական ձայներին, որ լսելով սթափվի յուր մահահրավեր թմրութենից, փակած աչքերը բանա և տեսանե լուսավոր աշխարհը, լուսավոր ազգերը, ինքն ևս աշխատի հասանել լուսավորության, ուրեմն և բարվոքել յուր դրությունը:

—Ո՛հ. լուսավորությո՛ւն... լուսավորությո՛ւն... անխել բառ, անխել զրույց... Նոր հավեր են եկել, երկաթի ձվեր կածեն: Մի քանի խելառներ ազգը կլուսավորեն. ան ևս հայոց ազգը. ան հարյուրավոր սրբերու անեծքին տակ ճնշված ազգը և մեզ ալ թույլ չեն տար, որ մեր տեղերում

հանգիստ մնալով, գոնյա հանապազօրյա ազոթիվք և սաղմոսերգությամբ պահպանեմք նոթան: Եթե մեր աղոթքները չըլլային, գիտե՞ս, մինչև հիմա հայոց ազգը հաստատ կմնար:

—Ի՞նչ օգուտ այդ աղոթքներից: Երբ որ տեսանում եմ շատ հայաբնակ գյուղեր կես ժամու ճանապարհով հեռու մի վանքից, ուր գտանվում են բավական վարդապետներ. բայց ժողովուրդը ամենևին բարձիթողի արած: Տարին երկու անգամ քահանայի երես չեն տեսանում, աստուծո, Քրիստոսի անունը հազիվ գիտեն, հավատքից ունեն մի քանի սնապաշտական կարծիքներ. գիտեն մի քանի առասպելախառն պատմություններ սուրբ գրքերից: Առավել լավ չէ՞ր լինելու, եթե դուք ժողովրդի մեջ մնալով, կրոնի պատվիրաններ ուսուցանեիք նոցա, ազգի որդիքը դաստիարակեիք և կրթեիք:

— Ո՛հ, բաներս թամամեցավ. մեք տարիներով կին մարդո երեսը չուզեմք տեսնել. ճգնավորը միայն ավագ շաբթի օրը իր սարից դեպի վար կգա. դա մեզ կըսե, գնացեք ժողովրդյանը մեջ. ապա վանքերն մեռելներո՞ւն մնան: Ժողովրդյան հետ մեք ի՞նչ բան ունինք: Հա՛, աստված մեր հոգին կառնե, թո՛ղ մեր վանքերաց մեջ մեռնիմք:

— Ահա՛ այդ թյուր նախապաշարումն է, որ պատճառ է տալիս ձեզ հեռանալով ազգից, ժողովուրդն անտերունչ, անհովիվ թողլով, առանձնանալ վանքերի խցերում: Այդ իրողությունն է, որ ի վաղուց հետե տգիտության ցեխի մեջ է խրել ձեր ժողովուրդը: Որովհետև նոքա ձեզ սուրբի տեղ պաշտում են, հայտնի բան է, որ և ձեր դատողությունները մեծ ազդեցություն ունին նոցա վերա: Դուք ամենևին անհոգ եք ազգային լուսավորության համար, և ձեր կյանքը ընծայել եք ունայն և մեռյալ կրոնասիրության. ապա ժողովուրդը որքան անձնատուր պիտի լինի անշահ սնապաշտոթենների. ի՞նչ օգուտ, հնդկական բրահմանները, պարսից դերվիշները ձեզանից առավել ապաշխարանք, կամ րիազաթ են կրում: Եթե այդ բանը նոցա հոգուն շահ ունի, ձեզ ևս կլինի: — Բնա՛վ ոչ, մարդս ծնված է հասարակության համար, պարտական է որևիցե գործակատարությամբ արդյունաբեր լինել ընկերությանը, իբրև մասն յուր բոլորին:

Վարդապետը բարկացավ:

— Այս ի՞նչ զրույց է. մենք վանքե՞րը պահենք, թե ժողովրդյանը լուսավորություն տամք: Ծո, ախպար, մեր ժողովուրդը հազիվ թե անտանելի չարչարանքներով կկարողանա ապրուստ ճարել, և իր գլուխը պահել. լուսավորությունը անոր հա՞ց կուտա, թե հալա՞վ: Ասենք թե մեր ժողովուրդն մինը գութանի մաճը ձեռքեն թող տալով, որդին ալ խուրկիցն իջնելով խարազանի տեղ գրիչ վեր առան. մի տեսնեմք, հայոց դիվանխանեքում գրագրությո՞ւն պիտի անեն, թե յուրյանց մեծ առևտրական հաշիվները պիտի գրեն: Ծո՛, մի թո՛ղ տուր այդ օձու հեքիաթները1. թե աստված կսիրես: Որու ձեռքի մեջ գրիչ կտեսնեմ, անոր ճիպին մեջ մեկ փարա չիկա. ձեռք վեր կալ այդ սարսաղ խոսքերեն. քեզի համար պահիր. հայոց ազգը թող յուր հալին մնա, նա ձեզ նման մարդերու խրատներուն կարոտ չէ:

—Ճշմարիտ է, Քրիստոսը հարմարին խոսեց ձեր մասին. «Եթե աղն անհամ դառնա, ինչով համ պետք է լինիս», — դուք ինքներդ խավարի մեջ եք, թշվառ ժողովուրդը ինչ լուսավորություն պիտի ստանա ձեզանից. պատճառ, կույրը կույրին չէ կարող լինել առաջնորդ: Ուրեմն, լավն այն է, որ դուք այդ վանքերում մնաք, մինչև հայկական Պարնասից ծագե հայոց համար լուսավորության

արշալույսը: Ձեզանից մեզ օգուտ չկա. թող հայոց նորահաս մուզայքը յուրյանց ախորժ ներդաշնակությամբ կենդանացնեն ազգի ուսումնականության մեռած հոգին:

—Այդ ո՞ւր ես ասում. հայոց ազգը ի սկզբանե անտի ապերախտ է եղել դեպի յուր կրոնավորքը: Կարդա Խորենացին և այլ պատմությունք, կտեսնես, քանի-քանի չնաշխարհիկ կրոնավորք մահ ընդունեցին ժողովրդեն, յուրյանց բարեգործության փոխարեն: Դու ևս այն օձերու ծնունդ ես, ավելորդ բան չէ քու նախատինքը կրոնավորաց ընդդեմ:

—Ապա ի՞նչ ասեմ, վարդապետ. Մշու դաշտի Նորշեն, Առինջ, Հողունք կոչված գյուղերը որքա՞ն հեռավորություն ունին սուրբ Հակոբա, սուրբ Հովհանու և սուրբ Գլակա վանքերից, որոնց մեջ բնակում են շատ վարդապետներ. մի՞թե ձեր անհոգությունից չէ, որ լատինադավան վարդապետն նոցա մեջ բույն են դրել. կամ թե Խնուս գյուղը որքա՞ն հեռու է, ուր ամերիկացի միսիոնարը բարձր ամբիոնից քարոզ է կարդում:

— Ընկի՞ց է. չես գիտեր. որովհետև կաթոլիկը արծաթ ունի, կուտա, պռոտեստանտները արծաթ ունին, կուտան, կդարձնեն. մենք արծաթ չունինք, որ տանք, ո՛վ կլսե մեզ. արծաթն եղած տեղը, «Տեր տերը դաշտն կթուրքանա»: Հոգին ու հավատը մարդո աչքին չեն երևնար:

— Ամենևին այդպես չէ, որպես դու կարծում ես. թող վանքերն ձեզ լինին, որոնցից դուրս գալը այդչափ դժվարություն է պատճառում ձեզ: Այդ վանքերի մեջ երբեք գիտնական վարդապետներ պակաս չեն. մի՞թե մեղք կլիներ վանքի մեջ մի փոքրիկ ուսումնարան հաստատելով հավաքել վիճակներից մի քանի մտացի երեխայք, նորանց աստվածաբանական գիտությունների մեջ քաջ կրթել, հետո քահանա ձեռնադրելով արձակել դեպի վիճակները: Նորահաս գիտնական քահանայքը թող սկսեին ժողովրդին քարոզել, նոցա որդիքը մասնավոր ուսումների մեջ կրթել, եկեղեցական արարողությունքը խորհրդավոր կացուցանել ժողովրդի հոգու համար: Այն ժամանակ և հավատացյալքը մին բան հասկանալով, կգիտենային յուրյանց կրոնի ուղղությունը, արժանավորությունը: Եվ պապականների լոկ խոսքով թե «Դուք մոլորյալ եք, վա՛յ ձեր հոգուն, դուք արքայության ժառանգ լինելու չեք, դժոխքի բաժին կլինիք, ձեզ փրկություն չկա և այլն», չէին խաբվելու մերայինքը. բայց խղճալի ժողովրդից ի՞նչ իրավունքով պահանջենք, որ յուրյանց ազգային դավանության վերա հաստատ մնան, եթե նոքա ամենևին անտեղյակ են նորան: Ծնած օրից եկեղեցում մի քարոզի ձայն լսած չեն, գրի սևն ու սպիտակն չեն իմանում. աստվածաշնչի ու այսմավուրքի պատմությունը յուրյանց պառավ տատիցն են լսած առասպելախառն: Ժողովրդի հոգևորական տնտեսությունը մնացել է գյուղական անկիրթ քահանաների ձեռքում և սոքա յուրյանց պարտականությունը այդպես են հասկացել, որ մկրտության և պատարագի, պսակի և թաղման կարգերը կատարելով, և յուրյանց պաշտոնավարձը ստանալով, կարծում էին, թե չցուցել են յուրյանց քահանայական խորհուրդը: Ի՛նչ փույթ դոցա, ժողովուրդը թուրքացավ և պապադավան դարձավ, նոցա աջահամբույրը, նոցա ժամուցը պակաս չլինի, բավական է:

Այս միջոցին եկան, նստեցան մի քանի ուրիշ վարդապետներ, որք մի վայրկյան լուռ կենալուց հետո, գոռացին չորս կողմից. — Տո՛դա հերձվածող է, հո դա պռոտեստանտ է, դորա խոսքերից շատ մոլորություններ երևում են: Այս գիշեր միայն պատիվ քո այստեղ մնալը, առավոտուն դուրս. լուսավորիչը մեր օրինակն է, որ խստակրոն ճգնությամբ կյանքն անցրուց Սեպուհ սարումը:

—Երանի թե դուք սուրբ լուսավորիչն ունենայիք ձեզ օրինակ. բայց մի՞ լավ քննեցեք այն խնկելի տղամարդի և ձեր կյանքը. տեսեք, որևիցե համեմատություն կա՞ ձեր ու նորա մեջ. նա Հայաստանը լուսավորելուց հետո, մեհյանները քանդելուց հետո, Արիստակեսն յուր փոխարեն, ավելի քան չորս հարյուր երեսուն եպիսկոպոսներ ազգի հովվության համար ձեռնադրելուց հետո, երբ որ տեսավ բոլոր իղձերն կատարած, Մովսեսի նման յուր անձը թաքցրեց: Բայց հավատացեք, որ լուսավորչի ժամանակ յուրաքանչյուր նահանգում հազիվ թե գտանվում էր մի կռատուն. բայց այժմ համարյա ամեն ժողովրդականի սրտում պաշտվում է մի-մի Անահիտ: Ապա այդ շնչով մեհյանները ե՞րբ քանդվելով պիտի դառնան Քրիստոսի համար սուրբ տաճարներ:

—Բավական է, քարոզ մի՛ կարդա: Քո ասածները մոլորություն են: Քեզ համախոհ շատ մարդիկ այժմ գրիչ վեր առած բամբասում են մեզ, մանավանդ այն Մոսկվայի և Պետերբուրգի պարոնները, որք վանք ու վանականը թողլով, բռներ են վարժատան պոչը ու կերթան. աստված անոնց կամքով չընե. անոնց միտքը մեզ հայտնի է:

— Հայր սուրբ ջան, ծառա եմ սուրբ աջիդ. կարելի է, ես մոլորյալ լինիմ. բայց դուք, իբրև Օրենսուսույց վարդապետ, պարտական եք իմ մոլորությունս ուղղելու հեզ խրատաբանությամբ, և ո՛չ բարկությամբ: Ես ազգի ցավով սիրտս այրված խորովված պատանի եմ: Թողեցի Ատրպատականը, եկա տեսնելու Հայաստանը, գուցե փոքրիշատե մխիթարվիմ: Ընդհակառակն, սկսյալ այն րոպեից, մինչև ոտքս կոխեցի հայրենի քաղցր հողի վերա, ամեն մի քայլափոխում սիրտս լցվում է նորանոր ցավերով, ամեն մի քայլափոխում աչքիս դեմ բացվում են ողբալի տեսարաններ. — մի կողմից փառավոր քաղաքների, վանքերի ավերակները, մյուսշ կողմից՝ տեսանելով այդ խղճալի համազգիքս, խելքս իմ մեջ մնում չէ. աչքիս առջև մթնում է: Այն ողորմելի ժողովուրդը, որ մին ժամանակ ունեցել է սեփական փառք, տերություն, քաջություն, այժմ մթին խավարի մեջ նստած է բոլորից զուրկ: Ապա ի՞նչ առնեմ, հա՛յր սուրբ. դու մեղադրում ես այժմյան գիտնականներին, ասում ես, նոքա յուրյանց հոգևորականների պատիվը չեն ճանաչում, ուրիշ ազգերի առջև խայտառակում են: Ապա ի՞նչ պետք է առնել. մինչև այժմ ազգի պակասությունները քողարկելով, բանն այստեղ է հասել. բարբարոս ազգերը լուսավորություն ստացան, իսկ հայր (թող նորանց, որ շատ աշխարհներում գաղթական են). — հայը, հայրենիքի սրտի մեջ, Հայաստանի ծոցումը խորին տգիտությամբ պաշարված. թո՛ղ մենք ամենևին չխոսենք, թո՛ղ հայ գիտնավորը առժամանակ ևս լռե. մի՞թե ձեր պատվին ինքնըստինքյան մեծ խայտառակություն չէ՛, որ ամերիկացի քարոզիչը, հռոմեական եկեղեցու քահանան հեռավոր աշխարհներից գալով, Հայաստանի սրտի մեջ բույն են դնում, յուրյանց համար նոր ժողովուրդ են ձեռք բերում. իսկ դուք ձեր սեփական հոտը չկարողանաք պահպանել. անփույթ առանձնանալով վանքի խցերի մեջ, անօգուտ կյանք վարեք: Բայց, որպես ձեր անհոգությունը տեսանում եմ, այդպես ևս չէ մնալու, ըստ որում փոքր կայծերը պատճառում են մեծամեծ հրդեհներ: Շատ կարծիք կա. նույն այդ վանքը, որ միջնադարյան ասպետների նման, համարում եք ձեզ սեփական բերդ, մի ժամանակ դորա մեջ ևս բարձրանա այն ազգի ամբիոնը, որին դուք հերձվածող և մոլորյալ եք համարում:

— Զարմանա՛լի բան. դուք միշտ կպահանջեք, լուսավորություն լիսի, լուսավորություն լինի, ուսկի՞ց կլինի լուսավորությունը, եթե ոչ տերության գանձար անեն: Բայց մենք ո՛չ թագավորություն ունինք, և ո՛չ գանձ. հազիվհազ առանձնացեր ենք վանքերու մեջ, մեր սև օրը կուլանք: — Հա՛, հա՛, քո Մկրտիչ վարդապետն ալ, հողը անոր գլխին, ան ապերախտը թողավ անապատը, իր կրթված ու սնված սուրբ տեղը. ուզեց տպարան ու դպրոց հաստատել, լուսավորություն տարածել. հիմա ան է, որ չարվադարի նման տարին մի անգամ կվազե դեպի

Պոլիս, ամիրաներից օգնություն խնդրելու, մեծ պարտքերու տակ է ընկած. անխելք գործ. անիմաստ բան2: Ա՛յ թշվառական ո՛վ քեզի կստիպեր քո չափեն դուրս շալակ վեր առնուլ, ոտդ կոտրվի, տակը մնաս: Վանքերի խորշերում մի կտոր հաց չկա՞ր, որ ուտեիր, քո աղոթքիդ, ժամ ու պատարագիդ լինեիր: Այդ գործերեդ ի՞նչ կթափվի, որ դու ինչ հավաքես: Ազգը կլուսավորվի, թո՛ղ մի քիչ ալ խավարի ու անդունդը գնա՛, քեզ ինչ փույթ: Բոլոր Վասպուրականը քեղ թշնամի ես արեր, չգիտես, ի՞նչ է շինածդ: Վարագումը տպարան և դպրոց է հաստատեր. թո՛ւհ, կործանվի տպարանն ալ, դպրոցն ալ. հենց մեք ուղղական, սեռական, տրական չգիտեմք, մեզ չօրհնեցին: է՛հ, աղոնք փուչ բաներ են. մեր Մեսրոպ ու Մովսեսն ալ քերականություն գիտեին. բայց սոված ծարավ ման կուգային: Կտեսնենք, քո Արծվի վերջն ալ. ինչպես կթռցնեն նորան յուր ճտերուն հետ դեպի Բյուզանդիոն: Հո հայոց ազգը, մեր բոլոր սրբերեն անիծյալ ազգը, վերջը պիտի կործանվի. թե քարոզես, թե չքարոզես: Մեռած հիվանդի բերանը միշտ դարման լեցրու, տեսնեմք, կկենդանանա՞:

Տեսանելով արդեն, որ վանահայրը, բարկության բոցով առավել տաքացած, քաղաքավարության դիմակը վայր ձգեց յուր վերայից, և անվարագույր երևցնում էր յուր մոլար դատողությունների պատկերը, որով ես հեշտությամբ կարող էի ծանոթանալ մեր հնապաշտ կրոնավորի հոգու հետ. այնուհետև սկսում եմ համոզական խոսքերով վարդապետի բարկության հրդեհի վերա ջուր ցանելով խոսակցության թելը երկարացնել: Թո՛ղ չձանձրանա մեր կարդացողը. այս խոսակցության մեջ տիրում է մի ասիական երկարաբանություն. ինչ պետք է արած: Եվրոպացին ո՛վ է ճանաչում Աղթամարա վանքումը. մեր վարդապետի գլուխը եթե դրով ծակելու լինիս, այնուամենայնիվ ասածները նորա գլուխը չեն մտանելու... ո՞ւր մնաց եվրոպացի համառոտաբանությունը:

— Հա՛յր սուրբ ջան. ես շատ եմ ցավում, որ ձեր միտքը մոլորված է այդպիսի վտանգավոր գաղափարներով, այդպիսի ազգակործան գաղափարներով, որք խորուն տպավորություն ունին, որպես քո երևակայությանդ մեջ, նույնպես և բոլոր քո միաբանակից եղբայրների: Հայոց ազգը ամենևին անիծված չէ: Հայոց ազգը ամենևին կործանման համար նախասահմանած չէ: Նա մի պատվական ազգ է: Նա յուր հետին ռամկության մեջ ունի մի ջերմեռանդ հավատ դեպի փրկիչը. ունի շատ մաքուր բարք ու վարք: Մի այդպիսի ազգ, մի այդպիսի քաջ, խելոք ազգ, ինչպե՞ս բանալու չէ մտքի փակված պատուհանները, ընդունելու լուսավորության շողը: Նա պողովատի նման ունի սաստիկ ձգտողություն դեպի ուսման մագնիսը: Հա՛յր սուրբ, հո հոգուն մատա՛ղ: Մի՛ նախատիր հայոց ազգը, քո բերանը կրակ է. դա մին ազնիվ, ընտիր ազգ է: Ա՛խ. հոգիս դուրս գա նորա համար: Նա, չունենալով յուր համար առաջնորդ, աչքերի լույսը պակսած, կարեմ ասել, բոլորովին կույր, չէ շեղվում յուր ճանապարհից. գնում է այն նեղ ու անձուկ շավղով, որ ցույց տվեց նորան սուրբ Գրիգորիսը: Մի՞թե անպիտան է ոսկին, մինչդեռ հողի գրկումն է. թող մաքրե նորան քիմիան, այն ժամանակ կտեսանես նորա վառվռուն ճաճանչները, այլև դու ինչո՞ւ այդպես կողնավորապես դատում ես Արծվի ջանքը, նա արծիվ է. սրատես աչքերովը Վարագա բարձրավանդակից տեսանում է յուր ազգօգուտ տնօրենությունների շատ հեռավոր սահմանները: Նա առաջինն է, որ կամենում է զարթեցնել Վասպուրականի ժողովուրդը մահահրավեր թմրությունից: Ինչո՞ւ անիծում ես նորա դպրոց ու տպարանը, այդ երկու գլխավոր գործիքը, որ այնքան ձեռնտու են ազգային լուսավորության բանին: Նա արդեն կրում է յուր մեջ այն բարձր, վսեմ միտքը, որով հոգևորված է յուրաքանչյուր կրթյալ ազգասեր հայերի մեջ: Նորա խորհուրդները տարբեր են ձերայիններից: Նորա գործեիի վախճանը շահավետ է. երանի թե մեր

բոլոր կրոնավորք ունենային այն ազնիվ ոգին, որպես Մկրտիչ հայր սուրբը: Ի՞նչ երջանկություն կլիներ:

— Սորանք իմ գլուխս չեն մտներ... Մկրտիչ վարդապետն, մեք լավ կճանաչեմք նորան տիրացության ժամանակից. մին փարա չուներ գլուխը գերծել տալու, ի՞նչ ելավ, հն էն շլել (բարձրահասակ) Մկլոն է: Խազինա չգտավ, ինչո՞վ պիտի կառավարե տպարանը ու վարժարանը: Ասում եմ, ափսոս է, մի քանի տարի կյանք ունի, թող չփչացնե խենթ ու խելառ գործերու մեջ. թող նա ևս առանձնանա յուր վանքումը, խաղաղ ու հանգիստ նստե, ազգի բարիքն վայելե ու անոնց համար աղոթք ընե: Վատ չեմ ըսեր, սիրտս նորա համար կցավի, եթե ոչ, նա թագավոր դառնա, իմ վանքս չէ կարող ձեռքես դուրս հանել:

Ես ինչ որ ասում էի, հնարք չէր լինում, վարդապետը հենց յուր զուռնան էր փչում: Կարծեմ. խոսքերս նորա հնացած և քարացած մտքի վերա չէին ներգործում: Ա՛խ, երկար ժամանակ պետք է (արդյոք կհաջողվի՞) մինչև փափկանա այդ քարացած սիրտը, և ընդունե եվրոպական կրթության տպավորությունները:

— Եթե դուք ազգասիրություն ունենայիք, Մկրտիչ վարդապետը ինչո՞ւ պիտի ամեն մի կարոտության համար Պոլիս գնար. եթե դուք սեր ունենաք, այն վեհ Արծվին շատ ամուր թև ու թիկունք կդառնաք, նա ոչ մի բանում կարոտություն ունենալու չէ: Բայց, ի՞նչ օգուտ, որ անձնասիրությունը թույլ չէ տալիս: Գիտե՞ք, Հայաստանի վանքերի գլխավորները կարող են ունենալ մի-մի փառավոր վարժատուններ և տպարաններ: Գիտե՞ք, որքան արդյունք ունին այդ վանքերը, մեծ եկամուտներ ունին, եթե օրինավոր վերակացությամբ և տնտեսությամբ հավաքվին մի առանձին գանձարանում, ազգի օգտի համար գործ դրվին: Օրինակի համար, Մշու սուրբ Կարապետի և Գլակա վանքերը միթե կարող չեն մի փառավոր վարժարան ունենալ, ուր կարող էին դաստիարակվիլ և կրթվիլ բոլոր Մշու հայազգի ժողովուրդը: Նոցա արդյունքը էջմիածնա հավասար է, բայց ի՞նչ օգուտ, բոլորը վարդապետների ագահ ախորժակին զոհ է լինում: Նաև այդ Աղթամարը, որ ունի երկու հարյուր գյուղից առավել վիճակավոր ժողովուրդ, եթե ամեն մի գյուղից մի աշակերտ ընտրվի, վանքի մեզ երկու հարյուր աշակերտից ձևացած ընտիր վարժատուն կձևանա: Այլև Հայաստանը Եվրոպա չէ, որ մի ուսանողը տարեկան երեք հարյուր, կամ ավելի ևս ռուբլի ծախս ունենա գնալու համալսարան, բան ուսանելու: Այստեղ աշակերտի համար ավելի ծախս հարկավոր չէ. հասարակ շալեղեն հագուստները բավական են. և ուտելիքը վանքի խոհարանի պարզ կերակուրներից, որ բոլորը կարող են հատուցանել վանքի բազմաթիվ գոմեշների, կովերի և ոչխարների հոտերը. և հացը արդեն գալիս է վանքի սեփական անդաստաններից, որոնք, բացի վանքի գութանից, մշակվում են և բարեպաշտ ժողովրդի օգնությամբ:

— Տես, մինչ ո՞րտեղ վանքերի գաղտնիքը հասկացեր են. ասորմե առաջ աշխարհականը ի՞նչ գիտեր. մեզի սրբի տեղ կպաշտեր: Աշխարհեն մի օգուտ չունինք, ասոնք կամին կոր մեր վանքերի ապրուստն ալ մեր ձեռքեն առնուլ: Ծո՛, աշակերտն կուտե, զահրըմար (օձի թույն) ուտե. աշակերտը ի՞նչ գործ ունի վանքի մեջ. մեղրաճանճի բույն կհավաքեմք կոր մեր գլխին. քի՞չ ցավ ունինք. անոնք ալ մի կողմեն ավելնան: Էգուց ու մյուս օր մեկ սև վեղար ալ կձգեն գլխներին, մեկ ծանր բեռն ալ անոնք կլինին մեզի վերա, քի՞չ են այդ կըռոլմիշները (կոտորվածքը):

— Վարդապետ, դուք ամենևին ասածներիս ուշադրություն չեք առնում. երևում է, իմ խոսքերը քամու նման ձեր ականջների մոտից անց են կենում, ահա այդ է, այդ անձնական շահասիրությունն է, որ ձեզ գիտնավոր անձների աչքից ձգել է. դուք ձեր անձին երջանկությունը և ձեր փառքը չեք փոխում ազգի բախտավորության ու փառքի հետ: Ահա սորանով իրավունք են ստանում ազգի գիտնականքը ձեզ չսիրել:

—Է՛հ. չարը տանե քո գիտնականքը: Ծո անխելներ. Այսմավուրքը, ծառա եմ նորա սուրբ զորությանը (երեսն խաչ է հանում), Այսմավուրքը կարդացեք, որ բան հասկնաք, թե հոգիներուդ շահ լինի, և թե մարմիններուդ: Մարդ չհասկանար, թե ի՞նչ կզրուցեն այդ շատախոս տետրակները, իրենց նոր օձի նման ոլորուն լեզվավն: Սատանան ալ կարող չէ հասկնալ: Ալ ի՞նչ մնաց, որ մեր գլխուն չբերիք. գնացեք, թե աստված կսիրեք, Մեսրոպն ու Խորենացին, և Լամբրոնացին իրենց գերեզմաններին դուրս հանեք, տեսնեմ կհասկնան սիստ և մինտ, սիմետրիա, անատոմիա, ֆիզոդնոմիա բառերու նշանակությունը: Ծո, հիմարներ, անպես կուրացեր եք, որ ձեր հոր խաչն ալ չեք ճանչնար: Ի՞նչ եղավ, որ Մոսկվա., Փարեժ, Վիեննա կբնակվիք, Ձեր պապի լեզուն գրեք, որ մարդ հասկընա. ի՞նչ ադպես կթեքթեքեք ձեր լեզուն նորանոր բառերով: Ծո Նազարյանց, ի՞նչ ըսեմ քեզի. դու միշտ Մոսկվայեն կբոռաս, թե աշխարհաբառ պիտի գրել ու մտածել, որ ամեն մարդ հասկնա: Տեսնեմք քու աշխարհաբառն է խրթին, թե Նարեկը, կամ Լամբրոնացիի ճառերը. քավ լիցի, թե ես մեկ բան ալ կհասկնամ: Խեղճ ռամիկը, որու համար դուն կգրես, ի՞նչ պիտի հասկնա: Հայք ամեն երկիր ցրված են, նաև ամեն մեկ նահանգի բնակիչք կխոսին առանձին աշխարհաբառ լեզվով, որոնց մինը մյուսին անհասկանալի է: Ուրեմն աշխարհի երեսին քանի երկիրներու մեջ հայք կգտնվին, այնքան ալ լեզուներու տարբերությունք: Դուն որ կուզես քու աշխարհաբառը հասարակաց լեզու ընել, որու համար մեծ դժվարությունք կան, լավն ան չէ՞, գրոց լեզուն, որն որ շատերուն հասկանալի է, հասարակաց ընել: —Հայր սուրբ, դու ծանո՞թ ես Եվրոպայի այժմյան հեղինակների հետ, և ունի՞ս տեղեկություն նոցա գործերեն, նոցա մտածություններեն, ստանո՞ւմ եք որևիցե նորատիպ գրվածք, օրագիրք, ամսատետրակներ:

— Եթե վանքի բոլոր սենյակներու մեջ ալ դիզված ըլլան նե այդ անպիտան գրվածները, ես իմ Նարեկն ու Սաղմոսը չեմ թող տար և իզուր ժամանակ չեմ կորսունցներ անոնց վրա: Բայց համարյա թե միշտ պատահելուն պես թափառական տղամարդեր, որոնք կուգան կերթան, քեզի պես նույն սազերը կչալեն մեր ականջներուն: Անոնցմե լսած եմք ու սովրած այդ անունները:

—Այդպե՞ս. ուրեմն, պատահում են երբեմն ուսումնական անձինք հեռավոր աշխարհներից. հայրենիքը տեսնելու համար դոքա գալիս են, ներկայանում են վանքերի վարդապետներին: Հայտնի բան է, նոցա խոսակցությունը ուսումնական նյութերի վերա կլինի. պատճառ ազգային առաջադիմության վերա խոսելն ու գրելը այժմուս ազգային գիտնավորների մեծ մասի համար դարձել է մի գլխավոր նյութ: Եվ ամեն մի կրթյալ անձն սուրբ պարտականություն է համարում յուր վերա, գրել ու մտածել և հրատարակել յուր կարծիքը համազգիների լուսավորության պատկանելի խնդիրների վերա:

—Անօգուտ ջանք. այլապես կարելի չէ սահմանել այդ գործը: Հայոց ազգին մեջ ով որ սկսավ փոքր առ ինչ խնամք տանել նորա հառաջադիմությանը, շուտով արդեն կընդունի ապարեխտ հասարակության ձեռքեն մահադեղի բաժակը: Կարդա հայոց պատմության թերթերը, անտեղ կտեսնես այն հոյակապ անձանց ցավալի վախճանը:

— Հայր սուրբ, այդ հայտնի բան է. այն մեծամեծ արդյունակատարությունքը, որք ազգային հաստատության համար էական սյուներ են, պահանջում են հոգաբարձուներից և շատ ու ծանր զրկանք, զոհաբերությունք, չարչարանք, երբեմն այո, և մահ. որպես եղած են այն մեծամեծ նահատակությունքը, պատերազմները, այն պատվական անձերի կորուստը: Ապա դուք ի՞նչ եք համարում քաջազնական առաքինություն ասած բանը: Դուք միայն հայում եք դեպի մեր ազգը: Կարդացեք Հունաց, Հռովմայեցոց և նոր Եվրոպական ազգերի պատմության թերթերը նոցա մեջ, իբրև պարզ հայելու մեջ, կտեսանեք քաջազնական առաքինության փայլուն վաստակները: Իսկ դա անպիտան մարդու և մեռած սրտի գործ է, որ մինը յուր անձնական խաղաղությունը չխառնակելու համար, հասարակաց օգտին անհոգ լինի:

— Օրհնած, չեմ հանկընար ինչ կխոսիս. դու դեռ երիտասարդ ես. խելքդ խախուտ է. չես հասկցեր, թե աշխարհս ինչ բան է: Մարդը քանի խելք ունի, թող կենաց վերջին օրերը լա. ի՞նչ գործ ունի նա ընդհանուր ազգին հետ. նորա, ստեղծողը առանց մեզի ալ լավ գիտե հոգալ նորա պետքը: Քանի ծեր չես, ձեռք ու ոտքդ զորեղ են, աշխատիր վերջին օրերուդ համար ապրուստ ճարելու, սոված կմեռնիս: Աշխարհ է. շատ ապրել, ուշ մեռնել կա: Ան ժամանակ, որ ծերացար, աչքի լույսից ընկար, ալ ո՞վ է քու պատիվ գիտցողը, կամ եթե աղքատության մեջ դուն մեռար, ով պիտի հաց տա քու որբիկներուն. քու ազգը պատվել գիտե՞ մի երախտավոր մարդու ազգասիրական, ինչպես կըսես, արդյունակատարությունքը: Է՛հ. փողի սիքային դուրբան ըլլամ. և հոգվո է, և մարմնո: Վանա Գաբրիել առաջնորդը մեռավ, եթե այնչափ արծաթ թողած չըլլար, անպես հանդիսով նորան կթաղեի՞ն մի:

—Ահա, այդ դժնդակ եսական միտքն է, որ պատճառ է տալիս ձեզ, երկրավոր հարստությանը գերի դառնալ. երբ մի վանք, կամ մի հոգևոր վիճակ ձեռք եք բերում, իսկույն աշխատում եք զանազան խաբեբա ճանապարհներով արծաթ հավաքել: Այն է, որ հայոց վարդապետը մեռանելուց հետո մի երևելի վաճառականից առավել մեծ արծաթ է թողնում (երանի թե շատերի արծաթը յուրյանց մահից առաջ հողի մեջ թաղված չմնար): Երանելի, դու աշխատիր, ազգի համար օգտավետ գործեր հառաջացնել. տեսանենք, հայը քո պատիվը կմոռանա՞: Նա ո՛չ թե քո ծերությունը կպահպանե, այլև մեռանելուցդ հետո, փոշի դարձած նշխարքդ պաշտելով անմահ կպահե քո հիշատակը: (՞՞) Նա գերեզմանիդ վերա սուրբ տաճար կանգնելով, զոհեր կմատուցանե սեղանիդ վերա(՞՞):

—Ծո՛, քանի կենդանի եմ, հե՛շտ ապրիմ. մեռնելուց հետո մարմինս թող ինչ կամի լինի. դորա համար ի՛նչ հոգամ ...

Թուրքն անօրեն է, խոսքն՝ օրինավոր. «Ֆիրսանդի ֆութ էյլամա» (մի հաջող միջոց ձեռքեդ անց մի թող). ինչպես կտեսնեմ կոր, այդ նորահաս իմաստակները, ժամանակ կլինի, տասն պատարագ ընես, մեկ փարա չեն տար: Սուրբ Մեսրոպը միտք բերեք. սոված ման կուգար: Դա ան ազգն է, Լուսավորիչ Սեպուհ չգնար նե, Տրդատի հետ ի միասին կխմեին մահադեղը: Մեջքներուս իլիկը կոտրեցավ, ադ ազգի համար ծունր դնելով, աղոթք ընելով, դեռ շնորհակալ չեն. կուզեն վանքերն ալ մեր ձեռքեն հանել: Խեղճ ճգնավորը վանքն չեն. սարերու մաղարեքն ալ անոնց արժան չեն համարեր, փա՛ռք քեզի, տե՛ր, փառք քեզի՛. վերջներս ո՞րտեղ հասավ:

— Օրենքը արծաթով տալ սիմոնականություն է. որպես ձրի ստացաք, նույնպես ձրի պիտի բաշխեք. շատ ժամանակ է տեսանում եմ, նաև մեր երկրում հարսի ու փեսայի մեջ չհասություն է դուրս բերվում: Բայց զարմանալի է, երբ մանեթի կանոնները քննում են, իսկույն չհասությունը վերանում է. մանեթն առավել օրինավոր գործ է կատարում, քան կանոնագիրքը: Մի երեխա է ծնվում, մի մարդ է մեռնում, պիտի այնքան ժամանակ անկնունք և անթաղ մնան, մինչև հատուցանեն աթոռահարկը, քահանայի Ժամուցը, երեցփոխանի տուրքը, և այլն: Կամ թե Հայաստանու եկեղեցու ավանդությանը հետևելով, երբ մի նորահաս տիրացու կամք ունի ընդունելու քահանայական լուծը, ձեռնադրող եպիսկոպոսը քննորեն հարցուփորձ պիտի առներ. առաջին, նորա գիտության վերա. երկրորդ, նորա անարատության վերա. երրորդ, թե ունի՞ վկայություն ժողովրդի բերանից յոլր առաքինի բարք ու վարքի և կրոնի սրբության մասին: Սորա հակառակ, եպիսկոպոսի առաջին հարցուխնդիրը լինում է, որքան արծաթ պիտի տար: «Այսքան, հայր սուրբ». «փոքր է, ո՛րդի, հավելցրեք»: Այս է ահա պատճառը, որ ազգի մեջ գտնվում են այնպիսի քահանայք, որք կարգավոր գոլով, հայր մեր ասել չեն իմանում: Իհարկե, մի բան, որ արծաթով ստացվի, նորանում ևս դժվարությո՞ւն կա: Ըստ մեծի մասին, այն մարդիկը, որք աշխարհական կյանքի մեջ չեն կարողանում ապրուստ ճարել, թե փոքր-ինչ սևը սպիտակից կջոկեն, քահանայությունը մի առանձին ապրուստի դուռն համարելով, մտանում են այդ ծանր լծի տակ:

Հայր սուրբը կրկին բարկացավ:

— Անիծվի այդպիսի ժողովուրդը, միթե դա թուրքեն ալ վատթար է, որ յուր մոլլաներուն, սեիդներուն տալիս է խումսը (հինգերորդ մասը գույքի) և զաքիաթը (տասանորդը գույքի որպես կրոնական տուրք): Դա եահուդեն ալ վատ է, որ յուր ռաբբիներուն, խախամներուն տալիս է ֆիթրան. ապա մեք ձեզի հետ ինչպե՞ս վարվիմք, որ մեզնից շնորհակալ ըլլաք: Կըսեք, մեկ դուրուշ չտամք. հոգիներդ թող դուս գա. և աղոթք ըրեք, և եկեղեցական կարգերը կատարեցեք, և ազգի որդիքը կրթեցեք. ո՛հ, այդ ինչ բան է, որ մեր գլխին կբերեք. մեզ բամբասանքի տակ եք ձգեր: Աստված ձեր դատաստանն ընե. աչ ի՞նչ ըսեմ. խղճմտանք չունիք, հույսներիդ կտրվեր է, ոչինչ բանի չեք հավատար, ո՛չ ժամը գիտեք, ո՛չ պատարագը. ո՛չ գիրքը: Լոկ բռներ եք վարժատան ու տպարանի պոչը ու կերթաք: Ո՛հ, բերանս բաց կընես, կուզես ինչ որ սրտիս մեջ կա, ըսեմ: Անցյալ տարիները, Թիֆլիզու, Երևանու, Ղարաբաղու կողմերը ժողովարարության գնացեր էի, անտեղ տեսա մի քանի Ռուսաստանում կրթված հայեր: Ա՛հ. սատանան առնու անպիսի հայը. ո՛չ լեզու գիտեն, ո՛չ պահքը, ո՛չ օրենքը. միայն կորած ու սրած պալենները (շլյապայի նման, Հայաստանի խեցեղեն անոթ) գլուխներին թեք դրած, ուռած-ուռած ման կուգան. ո՛չ իրենց հոր պատիվը գիտեն, ո՛չ կարգավորին: Կարեմ ասել, կամչնան ասելու, թե մեք հայ եմք, մի խոսքով, անոնցմե քաղաքավարություն չտեսա: Աստված հաստատ պահե մեր ժողովուրդը: Ինչ վատ բաներ կան, ձեզմե կգոյանան: Մեր ժողովուրդը սրբի պես կպաշտե մեզ. քիչ կմնա, մեր ոտքերնիս լվանա, ջուրը խմե: Տուներնին, որ կերթաս, փարվանայի պես գլուխներուս վերա պտուտ կուգան. կըսես, թե անոնց համար լույս եմք դարձած: Սեր է, կարագ է, մածուն է, մեղր է, սեղան կբերեն. քիչ կմնա, որ իրենց հոգիներնին հանեն, մեզի տան: Աստված իրենց կարողություն տա. ալ մի խեիրի բարաքաթ ըսես, անոնց մեջ կգտնվի. ձեզի մեջ ի՞նչ կա. սատկած էշ կփնտրեք, որ նալերնին հանեք:

— Հայտնի բան է, օտար ազգերի վարժատներում կրթված ու դաստիարակվածը տեսածիդ նման կլինի: Մեր աշխատությունը ևս այն է, որ ազգը սեփական վարժատունք ունենա, ազգի որդիքը

կրթվին, դաստիարակվին հայկական հոգով, լինին կատարյալ հայ: Մանուկների սիրտը կակուղ մոմի նման, ինչ կնիք զարկես նորա վերա, այն ևս կընդունե և կպատկերացնե յուր մեջ: Ոչինչ այնքան բնական չէ, ինչպես այդ: Ամենայն հայ, իբրև անդամ հայկական հասարակության, յուր կարողության չափ պարտական է խնամք տանել ազգային մարմնի շինությանը: Կարգավորք քահանայք, որպես կրոնի տնտեսք և սպասավորք, ևս առավել պարտական են հորդորել, քաջալերել, քարոզել խոսքով ու օրինակով: Հայրենիքը, ազգը պատկանում է հոգևորին և աշխարհականին միանգամայն: Գիտես, յուրաքանչյուր տարի քանի-քանի անձինք մեր ազգից հոգով օտարանում են, հեռանում են և պիտի հեռանան: Ըստ որում հայոց մանուկների համար մասնավոր դպրոցներ հազվագյուտ են: Կրոնի ուսումը մանկական հասակից նոցա սրտի մեջ չէ արմատացած: Երբ որ այլազգի դպրոցներում դաստիարակվում են, իհարկե, իհարկե, ասում եմ, պիտի այլազգի հոգի և սիրտ ստանան, ավելի սիրեն օտարինը, քան թե յուրյանցը, որ ողորմելիքը երբեք տեսած չեն և չեն տեսանում մի պայծառ կերպարանքի տակ: Չափահասների համար քարոզությունը մեր եկեղեցիքներում սովորություն չէ, որ գոնե հայոց քրիստոնյան հասակավոր տարիներում յուր կրոնից մի բան լսե: Եկեղեցական ընթերցվածներից, որ բոլորը գրոց լեզվով են, ռամիկ ժողովուրդը մի բան չէ հասկանում, և այդ ռամիկը համեմատելով գրագետներին այնպես է որպես 2.1000. ուրեմն նոցա համար են ավետարանը կարդացած, և թե Մուհամմեդի Ղուրանը: Երկուսից ևս մի բան չէ հասկանում ժողովուրդը: Բայց սորա ներհակ, երբ ճիզվիտը յուր աղոթագիրքը կամ ամերիկացի քարոզիչը յուր աստվածաշունչը վեր առած, մտնում են մի գյուղացի աղքատի խրճիթ, նորա կողմը ժողոված մանուկ ու չափահաս մարդիկ, կին և աղջիկ, և սկսում են յուրյանց պարզ, հետին ռամկին հասկանալի լեզով աղոթել նոցա հետ միասին. կամ պատմել նոցա տիրոջ պատվիրանները, Հիսուսի խոսքերը. — այն ժամանակ յոթանասուն տարիքով ծերունին ևս զարմացած, երկյուղած զգացմունքով լցված, ուշադրությամբ լսում է, հիանում է, և հոգոց հանելով ասում է. «Մեղա քեզ տեր, մեղա, ո՜հ. հենց իզուր տեղը մորուքներս սպիտակացավ, անխելք ծնվանք, անխելք մեծացանք, և անխելք պիտի մեռանինք: Ա՜հ, մեր հոգու ճարն ինչպե՞ս պիտի լինի: Այս ի՞նչ է ասում աղոթագիրքը, ի՞նչ է ասում ավետարանը: Ինչո՞ւ մեր քահանայքը այդպիսի խոսքեր մեզ չեն պատմած: Վա՜յ, մեք կկորչինք: Վարդապետներն ևս մեզ իմաց չեն արել: Կարելի է մեր գրքերի ու ավետարանի մեջ դոքա գրված չեն: Նոր բաներ ենք լսում, վա՜յ մեզ ու վա՜յ մեր հոգուն»:

— Եկ դու, հա՜յր սուրբ, որքան խելք ունիս, բանեցրու, որքան զորեղ փաստեր ունիս, գործ դիր. միայն հասկացրու այն ալևորին, թե բոլոր ազգերի ավետարանը մին է, զանազանությունք չկան, բայց նորա գլխում բան մտցնել կարելի չէ, նա մի լոկ խոսքով քեզ կկապե. «Ապա եթե ավետարանը մին է, ուրեմն այդ խոսքերը մեր ավետարանում ևս պիտի գրված լինին. ապա ինչո՞ւ համար մինչև այժմ մեր սուրբ հայրերից լսած չեմք»: — Թեպետ Ավետարանը ամեն շաբաթ կիրակե մեր եկեղեցում կարդացվում է, և մեր ժամասեր ալևորը ամեն օր լսում է նորա ձայնը, բայց ինչ օգուտ, որ աղվեսի սառուց ուտելու նման, ատամները կրճտում են, փորը մի սննդական բան չէ գնում: Ահա այդ է պատճառը, որ ձեր ժողովրդի հավատը մեռած է:

—Ի՞նչ կխոսիս, ի՞նչ. մեր ժողովրդի հավատը մեռած, այն սուրբ հավատը, այն, Քրիստոսի արյամբ, Լուսավորչի նահատակությամբ գնված հավատը մեռա՞ծ. անտանելի՜ հերետիկոսություն. խլվեցեք ականջներ, ասիկա չլսեմ:

—Մի բարկանար, հայր սուրբ. մարդուս բարկությունը, ինչպես գրած կա, չէ գործում աստուծո արդարություն: Թող առժամանակ լռեն մեր նախնիքի մեծամարմին մատյանքը. մեք սկսենք խոսել նորանից, որպես տեսանում ենք հավատը ավետարանի մեջ, և ձեր ժողովրդի սրտի մեջ:

—Հայոց կրոնը, որ յուր սուրբ հիմնադրեն մինչև ցայժմ հաստատ կմնա հայկյան որդիներու մեջ, հազարավոր թշնամիներու դեմ, յուր անհաղթելի ճակատը անդրդվելի պահելով, — մի այդպիսի կրոն կարելի՞ է մեռած համարել:

—Հայր սուրբ, իմ խոսքս հայոց ընդհանուր կրոնի վերա չէր. ես նորա հետ գործ չունիմ. իմ խոսքս ձեր մասնավոր ժողովրդի կրոնի այժմյան վիճակի վերա է: Պատճառ, երբ որ քրիստոնեությունը քննում ես յուր բուն աղբյուրի, ավետարանի մեջ և դարձյալ նայում ես տեսանելու նորան ձեր ժողովրդի սրտի մեջ, քավ լիցի, թե ճանաչում եմ նորան: Այստեղ երևում է էականի լոկ ստվեր, մի կենդանական մեռյալ պատկեր: Այստեղ Քրիստոսը, ավետարանը ինձ երևում են հեթանոսական մեհյանների մեջ: Որովհետև այն գլխավոր շարժարանները, որք պտուտում են քրիստոնեության ճախարակը, հավատն ու գործն եմ ասում, — դոցա առաջինի շպարել է երեսը զանազան երանգներով և առել է յուր վերա սնապաշտության կնիքը, որ, կարծեմ, նույնիսկ Մեսիան չկարողանա ճանաչել. իսկ երկրորդը ամենևին չկա. եթե լիներ, պետք է դուրս փայլեր կյանքի հանդեսների մեջ ընկերասիրությամբ, ազգասիրությամբ, հայրենիքի շինությամբ:

— Քրիստոնեական կրոնը պահանջում է երեք գլխավոր բան. հավատ, հույս և սեր: Ձեր ժողովուրդն ունի չափազանց հավատ, բայց ինչպիսի — նյութական: Ըստ որում պաշտում է նա եկեղեցական կարգերը մի առանձին ջերմեռանդությամբ, նայելով միայն նոցա արտաքին երևույթի վերա, բնավ չհասկանալով նոցա խորհուրդը: Գիտե. ծնելուց հետո նա մկրտված է, որ մաքրել է սկզբնական մեղքից. նորանից հետո, եթե նոր մեղք արած լինի, հաղորդությունը քավում է, ամուսնական կարգը նույնպես մեղքից ազատ է. մեռանելու ժամանակ թե մեղքեր լինին, այն ևս վերջին խոստովանությամբ և հաղորդությամբ սրբվում են. եթե մի փոքր մեղք դեռևս մնացած լինի, այն ևս երկնքումը քավում են նոքա այս աշխարհի պատարագովը և քահանաներին հոգեբաժին, աղքատներին հաց տալով — վերջացավ, գնաց. արքայության դուռները քո առջև բաց են: Ծառա եմ մի այդպիսի շնորհի. ի՞նչ կամիս, արա: Հոգին դուրս գա թող, քահանան քո մեղքին ցավը լա. աջահամբույրը, ժամուցը, հիշոցը և այն բոլոր կատարած կարգերի հատուցումը, որ արել է, մի՞թե ձրի են: Սարսափելի անձնախաբերություն: Ահա ձեր ժողովուրդը հավատքի — այդ զգալի նյութական իրողությունների վերա — ամրացնելով յուր հույսը, կրոնի երկրորդ մասը, մտածում է, թե դոցանով է յուր փրկությունը: Բայց կրոնի երրորդ մասը, սերը, որից հառաջանում է բարի գործ, և ամենայն ինչ, որ բարի է, որից բխում է մարդկային կյանքի երանությունը այս և հանդերձյալ աշխարհում, այդ սերը, որ հոգի է տալիս, կենդանացնում է հավատքի նյութական խորհուրդները, այդ պատվական մասը մեռած է, որ ավետարանական ուսման անկյունաքարն է, որ պարունակում է յուր մեջ օրենք ու մարգարեք, որ և մարդկային ազգի սրտի մեջ արմատացնելու համար աշխարհ եկավ Հիսուս Քրիստոս:

— Ասենք թե քո ասածները ճշմարիտ են. ի՛նչ է դորա պատճառը, — ասաց վարդապետը:

— Միտքդ բեր, որ մեր խոսակցության սկզբումը ասացի, տգիտությունը զրկում է մարդս աշխարհի և երկնքի փառքերից: Որովհետև ժողովուրդը միշտ երևելի իրողությունների վերա հաստատելով յուր հույսը, նորա մտքի աչքերը կույր են, աներևութի համար անփույթ է լինում:

Այստեղ ևս պարտականությունը ձեզ է հասանում: Զորօրինակ, հմուտ բժիշկը հիվանդի ցավին հարմարվելով, դարման է մատուցանում. և թեպետ տված ճարը լիներ շատ զզվելի, բայց իբրև վերածնիչ առողջության, պիտի անշուշտ գործ դրվի: Արդյոք ինչի՞ց ընկավ ժողովուրդը այս սնապաշտության մեջ. — տգիտութենից: Ուրեմն նորա հոգաբարձուն աշխատելու է, որ տարածվի գիտությունը: Այդ է ահա պատճառը, որ լուսավոր անձինք զոռում են ամեն տեղից. լուսավորությո՛ւն, լուսավորությո՛ւն, վարժատո՛ւն, վարժատո՛ւն, քարոզություն աստուծո բանի և այլն և այլն: Մի շատ վնասակար նախապաշարումն է մտքի, ամենևին անպայմանաբար պաշտող լինել մի ազգային սովորության, որպես թե դա աստվածադիր սուրբ պատգամ էր: Բայց աստվածադիր պատգամները նույն ինքն աստված երբեմն փոխում է. երևի, նա ևս մարդկային որպիսությունը, ժամանակի պայմանների մեջ, ուշադիր է: Աշխարհի ստեղծագործութենից մինչև ցայժմ երեք տեսակ օրենքներ մի աստուծուց դրված տեսանում ենք. բնական, մովսիսական և քրիստոնեական. մինը մյուսից տարբեր: Այսուհետև հայը, յուր բազմադարյան հնությամբ չպարծենա, թե Լուսավորչի ժամանակից մինչև ցայժմ անփոփոխ է պահել յուր կրոնը, կամ թե ծաղր առնե մյուս ազգերին, իբր թե նոցա մեջ շատ փոփոխություններ եղած են: Արդյոք կհասկանա, թե դորանով քանի՞ ահագին ասպարեզներ ետ է մնացել լուսավորյալ ազգերից:

Կամեի առավել պարզաբանել ասածս, բայց չեմ կամենում լսել այն, հիվանդոտ ազգասիրությամբ կուրացած քննաբանների բամբասանքը, որք ստվերը գրկախառնում են փոխանակ սիրուհուն, որք Հայաստանը միմիայն աշխարհացուցի վերա տեսանելով հեռավոր սահմանների վերա, ամենևին չունի տեղեկություն նորա այժմյան վիճակի մասին.-Երբ դոքա կարդում են նոր բան, փոք-ինչ դիպչողական յուրյանց հայրենակիցների սրտին, իսկույն սկսում են հրեից նման աղմուկ բարձրացնել. «Դու եկել ես մեր օրենքը քանդելու». և այլն: Եվ սկսում են զանազան կողմերից գրիչ շարժել. «Դու մոլորված ես. դու հերետիկոս ես. դու տխմար ես», և մարդկային լեզվի մեջ եղած բոլոր նախատական բառերը թափել և սպառել մարդու գլխին: Ո՛հ. ինչ պետք է առնել այստեղ. կարծես թե մի նախասահմանյալ օրենք է, որ ճշմարտությունը դուրս երևելով, իսկույն քողարկվի և աղավաղվի բազմաթիվ թշնամիների ձեռքով, և ամենայն ճշմարտախոս ատելի ու զզվելի դառնա: Այդպես վեր կացավ մարգարեների, առաքյալների և շատ ճշմարտաքարոզ մարդերի ընդդեմ մի ամբոխ նախապաշարված մտքով: Այլևս ինչ պետք է արած, հրաշագործություն չգիտենք, որ մեզ հավատան. խոսքով կամ թե գրով երբ որ մի նոր բան հայտնվում է, իսկույն դրոշմում են մարդու ճակատին մոլորյալ անունը: Զարմանալի՛ բան. միևնույն է, եթե մի հիվանդ ամաչելով չհայտներ բժշկին յուր ցավը, որ գտանվում է մարմնի պատկառնլի մասնումը: Ի՛նչ է վախճանը. մա՛հ: Թո՛ղ հայը առժամանակ ես կաքավ թռչունի նման գլուխը ձյունի մեջ թաղե, իբր թե որսորդը չէ տեսնում նորան: Տխմար, դու հազար որ պակասությունները ծածկես, արդյոք դոքա եվրոպացու սրատես աչքից անհայտ կմնա՞ն: Թո՛ղ ձեր ասածը լինի, բայց ժամանակը ամենայն բան կհայտնե. մեք գործ չունիմք:

Մեր խոսակցության միջոցին երեք հայեր ոչինչ չէին խոսում. երևում էր, սկզբումը իմ լեզուս չէին հասկանում, բայց հետո խոսակցության ընթացքը մի անախորժ տպավորություն գործեց նոցա սրտի վերա. ուստի մինը սկսավ յուր խանգարված լեզվով այսպես խոսել:

— Դու էսկնա կզրուցես, հավալա ձմեռվան բքու (սաստիկ ցրտի) մեր գոմերաց դռան առջև ցրտուց փետանայիր, թոբա (քավ լիցի թե) քեզ ներս տանեինք: Դու ի՞մալ մարդ ես, գորա՞ն (թուրք) ես, քո՞ւրդ ես, մեք չենք գիտի: Շաղախու սուրբ Գևորգ (երդվում է), ակյար անխավատ էլ էսա խորաթաներ (զրույցներ) կանե: Աղեկ է, բերան չի քեթըրվե դեխ հետև: Մեր երկրուց մեկ մարդ

ասանկ զրուցեր, սուրբ Էջմիածին կտապլոտեր (կգժվեր), էն վախտին է, օղորդ է, անզգամին ո՛չ աստված. ասանկ է: Աստված միտքից հաներ է քեզ, նա վալլա սատանան ձախ թևիդ վերա կու գրե:

— Վարժատուն բանի տեղ կուգա մի, — ասաց մյուսը, — մեք կարդալ չեմք գիտի: Աստված չե՞նք ճանչնա: Համա բաբո, ինչ կանդար կարդացվոր տեսեր եմ, փա այ (բոլորն ևս) ծուռ են: Էլ մը աստված մեր վանքեր, մեր վարդապետներ խաստատ պահե. խլա (պատճառ), մեր խոգու ջրագ էնոնք են. մեր օրենքներ էնոնք կուկատարեն: Խազար որ կարդացվոր էլնես, կարա՞ս մեկ տղա մկրտել: Լաքին վարդրպետներ, ծառա եմ իրենց սուրբ աջին, մեզ համար ժամ կասեն, մեր մեռելներաց գերեզման կ’օխնեն:

Բիլա (առանց) էնոնց մեք կարա՞նք արքայություն երթալ: Պալի (այո) մեր խոգին էլ, մարմինն էլ էնոնց ձեռքն ի:

—Համա մղտեսի խոխե, — կրկնեց առաջինը, — էսօր իմ ակընջներ խլվեր, ես էս մարդու խոսքեր չը լսի. էսա մարդ ինչ կը խոսի. վանքերաց շնոխք վրա մեզ չելնի, մենք ինչպե՞ս կապրինք. մեր խոգու չարեն ինչ կեղնի. էսա մարդ ֆոթկու սուրբ Գևորգ չի գիտի: Որ ծառա եմ իրեն սուրբ շնոխքին, հըմեն տարի ընոր տոնին մեկ վերու (վայրենի) ոչխար մատաղ կուքեր իրեն ոտքով: Հապա ո՛րտեղ մնաց վանքի սուրբ աքլորի եղելություն, որ զուր չի խոսի, ըխտավոր դուրս չելնե. հաղյար (եթե) դուրս ելնե, բքեն կու խեղդե. յա չէ, մեր աթոռի (Աղթմարա) խրաշխք չի գիտի, որ սուրբ մեռոնը առանց կրակի կեփվի:

—Հա՛, քյավոր Պիտո, — կրկնեց խոխեն, — մեր վանքերաց ո՛ր մեկ խրաշխք ասես, էսա մարդ խավատա: Շաղխու սուրբ Գևորգ, որ խայ չեղներ, համա մեկ շաշխանամ (մեջը ութանկյունի հրացան) պիտի տե վեր ի նոր կողին. համա խայ ի, ղարիպ ի: Ապա մեր Նարեկացու խրաշխքագործությանը ի՞նչ պիտո ասե, որ փլած պատի ակի խատած ճետեր թխսմերով մաղի մեջ դրան, գերեզմանի վրեն տարան, սաղցան. բա, որտեղ կու մնա Լիմ անապատա Գեորգ ճգնավորի գործ, փիլոն կու թալեր վեր ծովուն, վրեն նստած կերթեր սարեր ճգնելու, որ էսա էնոր խրաշխքներաց մեկն ի: Համա ութը տարի չկա, մեր կույս Մարգրտի եղելություն, որ եկեղեցվոց մեջ աղոթքի ժամանակ լույս կաթեց վրեն3: Շատ ըխտավորներ զատ (հեռու) տեղերաց կուքին էնոր տես: Վանու անխավատ քաղքցիք մեր կույս Մարգրիտ տարան, կորուսին: Ի՞նչ մարդ կարա չխավտալ, դու սուրբ տեր սկանորդու և տիրամոր ընկնաներու խոսքերաց, սրբերաց միտքը կը պատմեն ըխտավորներաց4:

Ռամիկ պարոնների խոսքերը մեր վանահոր սրտին քաջալերություն տվեցին, ուստի նոր զորություն ստացած սկսավ խոսել այսպես.

— Իմ որդիք, աստված ձեր հավատն օրհնե: Այսուամենայնիվ, մի հույս, մի հավատ, ձեր մեղը կա, սիրելիք, ադոնք ամենայն հավատքե ավարա (զուրկ) են. որպես կարելի է չհավատալ. օր մի խոտախին մեկը հաց կտանե գութանի մշակներաց. ճանապարհին սոված լինելով, հացերը կուտե. մեզրի (թաշկինակի) մեջ քակորներ կլեցնե, սուրբ Նարեկացին պատահելով կխաչակնքե, քակորներ հաց կդառնան: Կամ մի օր երեք կարգավոր լսելով Նարեկացու անունը, կուգան, որ տեսնեն նորա հրաշքները: Սուրբ Նարեկացին ինքն կուգա անոնց մոտ: Ուրբաթ էր, օրը պահոց, կիրամայե, երեք աղավնի ի սեղան բերան, աստեղ ան վարդապետները ժպտացին, սուրբ

Նարեկացին կհրամայե ուտելու, անոնք կհրաժարվեին, ան ժամանակը հրամայեց անոնց կենդանացնելու աղավնիքը: Անոնք չկրցան, բայց սուրբ Նարեկացին խաչակնքելով, աղավնիքը թռան ու գնացին:

Այն կողմից գլուխը շարժելով, ռես Ակոն կրկնեց. ա՜խ, ա՜խ, ա՜խ. թե որ մեր վանքերաց քեթր աչքենք, հավալա մեր աչքի լույս կխավրի. էն դադար հրաշք, որ անոնց մեջ կտեսնանք. Փութկի սուրբ Գեորգա տավար, ոչխար, առանց մուշտակի, առանց չոպանի սարերաց մեջ կպտտեն. ո՜չ գող կտանե, ո՜չ գիլեր կուտեն. աստված մեր վանքեր հաստատ պահե. աստված վարդապետներ մեր գլխեն պակաս չանե. մենք կարդալ չենք ուզեր. համա մենք աստուծո համար սոպպան կգործենք5: Դևը որ Հոգվոց վանքին կհնազանդի, մենք ի՞նչ ենք, որ թրպահ չեղնենք6: Աստված մարդո կտոր մը հաց տա այս աշխարհիս մեջ, և իր արքայությունեն չզրկե. ծո, մեր տղայք կարդալ ի՞նչ կընեն, զաթի մեր աղբյուրի շնորհքեն մեր երկրի մարդիկ քիչ մը խելքից քեթր են7:

Կարդալ որ իմանան, անկից հետքը ջլիս կխենթանան: Բաբո՜, մենք մեր ճժերից բեզար չենք: Մեր տիրացու Պ. կարդացվոր է, հա, աստված անոր տունը ավերե. ոչ խոգու է, ոչ մարմնու. ամա դժոխքը էնղադար դև ու ստանա չիկա, որղադար էսա մարդ յուր գլխին ժողված, գիշեր ու ցորեկ չարաց հետ խաբար կուտա (կխոսի): Իշտա աս ալ քո կարդացվորի գործը: Մստոյենց տիրացու Ն. խո յուր խոր ու մոր մալ դովլաթը կրակի մեջ էրիցեց. ի՞նչ է. ես ոսկի պիտ որ շինեմ. մըկա կտոր մի ճաթի կարոտ է:

— Տիրացու Հակոբ, — երեսը դեպի ինձ դարձուցանելով, ասաց Պիտոն, — բաբո՜, դու դեռ տղա ես, կարգավորի ղադր (արժանավորություն) գիտելը աղեկ բան մըն է. ինչու որ կարգավորի մեկ բերան ջուր ի, մեկալը սուր ի: Անի քաղաքը մեկ կարգավորի անեծքով խարաբա եղավ. հապա դուք ի մալ չեք վախնար կարգավորի դեմ գեշ զուրցելուց: Կարդա՞լ կըսեք մի. փուճ բան մըն է. ոչ արքայություն կտանե, ոչ դժոխք: Թե կուզես խոքուդ ճար ըլնի, ծում պահիր, հինգ Նավակատյաց միս մի ուտեր, ղադիմ մասն առ: Տարին քանի մը խետ մատաղ արա, մեռելներաց գերեզմանը օխնել տուր, վանքերաց ուխտը մի բաթըլի (ուխտազանց մի լիներ): Տերտերներաց ժամուցը ու քո մեռելներաց խոքու բաժինը մի կտրեր: Էսա, էսկնա բաներ գործե, որ արքայություն գնաս, թե շատ աղեկ կուզես, Երուսաղեմ մըն ալ գնա, լույս տեսնաս, մուղդուսի էլնես, թե չէ, կարդացիր Վեցհազարյակը, Սողոմոնի թղթերը, Եփրեմվերդին, Պղնձե քաղաքը ջրի նման իմացիր, դոքա քո խոգուն ճար կանեն:

— Ծո որդիք. դուք անպես կկարծեք, որ տիրացու Պ. միայն չարաց հետ կխոսի, հավատացեք, ադոնց երկրում, ամենքն ալ գլխավոր կախարդներ են8: Անցյալ տարի Վենետկու մի վարդապետ եկավ այստեղ (երևի Հ. Ներսեսը) ան խելառի մեկը: Հին աղավաղյալ մագաղաթի վերա գրված գրչագիրներ, որ մենք ոչինչ բանի տեղ չենք դներ, նա սրբոց մասունքի նման կհավաքեր: Նա կպատմեր, թե Եվրոպա աշխարհում շատ ամիսներու ճանապարհ հեռավոր տեղերու հետ մի քանի բոպեում կխոսին. կամ թե սայլերը առանց տավարի ինքն իրեն կերթան. ուրիշ շատ զարմանալի բաներ կզուրցեր, որք կատարյալ կախարդություն են:

Մի խորին լռություն տիրեց սրտիս. Տեր-Աբրահամյանցի նամակը միտքս ընկավ9: Վարդապետները գնացին «Եկեսցե» ասելու: Կրկին միայնակություն: Ծովի ալիքների ձայնը սկսավ լսելի լինեի. մի վսեմ զգացողություն թագավորեց սրտիս վերա: Ահա քեզ այգ զգացողության բանաստեղծաբար արտահայտությունքը.

Ամեն տեղ տիրած խորին լռություն.

Կարծես թե մեռած լինի բնություն:

Նստած սգավոր, պանդուխտ միայնակ,

Ո՛հ, քե՛զ եմ տեսնում, ով փայլուն լուսնյակ:

Աշխարհի սկզբից դու մինչ ի վախճան,

Երկնակամարով առնում ես շրջան.

Ո՛հ, դու տեսե լ ես հայ ազգ բարեփառ,

Արդյոք տեսնո՞ւմ ես նորա ցավ անճար:

Արդյոք դո՞ւ ևս խղճալուս նման,

Տեսած Հայաստան ժանտ ոտքի կոխան,

Թափում ես աչքից աղի կաթիլներ,

Եվ սրտիդ միջում ցցվում են նետեր:

Քա՛ր է քո սիրտը, և խիղճդդ մեռած.

Քանի՞ արյուններ, քանի՞ կոտորած

Տեսար, լռեցիր և դարձյալ պայծառ,

Հայ երկրի վերա կապում ես կամար:

Զա՛յն տուր, ով ծովակ, ինչո՞ւ լռում ես.

Ողբակից լինել չկամի՞ս դժբախտիս:

Շարժեցե՛ք, զեփյուռք. ալիքը վետ-վետ.

Խառնեք արտասուքս այս ջրերիս հետ:

Հայաստանի մեջ անցքերին վկա,

Սկզբից մինչ այժմ, խնդրեմ ինձ ասա՛.

Մի՞թե միշտ այսպես կըմնա Հայաստան

Փշալից անապատ, երբեմն բուրաստան:

Մի՞թե միշտ այդպես ազգը խղճալի,

Կըլինի ծառա օտար իշխանի,

Մի՞թե աստուծո աթոռի մոտին

Անարժան է հայն և հայի որդին:

Արդյո՜ք գալու է մի օր, ժամանակ,

Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ,

Եվ ամեն կողմից պանդուխտ հայազգիք

Դիմել դեպ յուրյանց սիրուն հայրենիք:

Դժվա՜ր այդ՝ միայն, տեսուչըդ վերին,

Կենդանացրու հայության հոգին,

Ծագի՜ր նոցա դու քո լույս գիտության,

Որով իբր էակք նոքա բանական,

Կճանաչեն մարդուս կյանքի խորհուրդը,

Կը լինին գործովք տիրոջ փառաբան:

Հանկա՜րծ ծովակի երեսին մի լույս.

Ջրից դուրս եկավ նազելի մի կույս.

Մի ձեռնում ուներ նա վառած լապտեր,

Իսկ մյուսում՝ քընար փայլուն փըղոսկեր:

Արդյոք Հուրի՞ էր, հրեշտակ աննշան, —

Ոչ, հայ մուզաների տիպ համանման:

—Հայոց ճակատագիրը կարդա, ով մուզա,

Ներկա և գալոց գուշակիր, ասա՜:

(Ասաց երկնային այն ոգի քաղցրիկ).

—Ավետիք տամ քե՛զ, նժդեհ պատանի.

Սրբի՛ր աչքերից արտասուքդ աղի:

Կըգան նոր օրեր, օրեր երջանիկ. —

Երբ տիրոջ կամքը, ազատ ու արդար

կըթագավորե — կրկին ոսկեդար:

—Հայոց մուզայքը կը զարթնուն կրկին.

Հայոց Պարնասը կը ծաղկի վերստին,

Եվ Ապողոնյան կառքը լուսարար

Կըբոլորե հայոց թուխ երկնակամար:

—Մենք ևս քո պես, — երբ խորին գիշեր

Պատեց Հայաստան, — սգավոր օրեր

Շատ ենք անցուցել. այժմ սիրելի,

Մենք ևս Հաշտության ստացանք ձիթենի:

Սրբեցե՛ք քնարի լարերը ժանգոտ.

Ելե՛ք Հայաստան երգով եռանդոտ.

Զարթեցրեք հայոց աշխույժքը մեռած,

Լցվեցավ կամքը, հասավ ժամանակ,

Օրը կըբացվի, — ահա՛ Արուսյակ՝

Ձեզ հայտնի նշան, ասում է աստված:

Կրկին մթնացավ: Չքացավ պատկերը:

Երկար ժամանակ դյութական ձայնը

Լըսվում էր խառն ալիքների հետ,

Օդին տիրել էր բուրումն հոտավետ:

Ախորժելի՛ լուր, ավետիք քաղցրիկ.

Որպիսի՛ հրճվանք. Մուզայդ գեղեցիկ,

Ասա մեզ, մեկնիր, արդյոք հնարի՞ն

Մի մեռած մարմնի զարթնուլ վերստին...:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Տպելով մեր Պարսկաստանի ճանապարհորդությունը, հարկավոր ենք համարում հայտնել, որ նրա միայն 24 նամակները հրատսրակվեցան «Մշակի» 1872 և 1873 թվականի համարներում, այն ևս այնքան համառոտ կերպով, որ կարելի է բոլորն մի կարճ քաղվածք համարել իսկականից: Իսկ այժմ նպատակ ունենք ի լույս ընծայել մեր ամբողջ հանապարհորդությունը, որ կազմված է 50 նամակներից:

ՐԱՖՖԻ

1876

ՆԱՄԱԿ Ա

Սիրելի ընկեր, Ս. Ք.

Դու ստացել ես իմ նամակները Զվիցերիայից և Իտալիայից, ես երկար նկարագրել եմ քեզ այդ կախարդական աշխարհների հիանալի բնությունը: Դեռ իմ նամակների մեջ կարդացել ես կլասիկական Հունաստանի և ծերունի Եգիպտոսի հրաշալի հնությունների մասին: Ես նկարագրել եմ քեզ աղմկալի Ստամբուլի և սուլթանի ճոխ ու շռայլ հարեմատունը, այն փափուկ բանտը, ուր թափվում է այնքան սեր և արտասուք...: Դու երկար ծիծաղել ես իմ վերա, նկատելով, թե որպիսի ջերմեռանդությամբ ես նկարագրել եմ սուրբ Երուսաղեմը և բիբլիական Պաղեստինի ուխտյալ երկիրը: Դարձյալ իմ Թիֆլիսի նամակների մեջ դու տեսել ես նկարագիրքը հայկական Կովկասի և նորա լեռնաբնակ ցեղերի կենսագրությունքը, այլև ես բավականաչափ տեղեկություն տվել եմ քեզ նրանց սիրուն կնիկների մասին:

Բայց այսօր թողնում եմ սուրբ Էջմիածինը, Անին և Արարատը, և Շահթախտից անցնելով Արաքսը, տանում եմ ինձ հետ սրտիս տխուր և ցավալի զգացմունքները: Եվ ահա իմ առջև դրած են Մագվա քարուտ և այրված դաշտերը — Պարսկաստանն է այդ:

Պարսկաստա՛ն. ի՛նչ հեշտ արտասանելի մի բառ... բայց նա շնչում է ասիական բռնակալության բոլոր զարհուրանքով...: Ես ոտք եմ կոխում այն անգութ հողի վերա, որ հիշեցնում է ինձ պատմական Արտազը կամ Շավարշական դաշտերը, որ Շապուհի, Վռամի և Հազկերտի օրերում

ներկվեցան մեր նախահարց արյունով, իսկ այժմ ոռոգվում են նրանց դժբախտ սերունդի արտասուքով...:

Սիրելի ընկեր, դու մի՛ հուսա այսուհետև իմ նամակների մեջ ճաշակել ուրախություն, որովհետև նրանք լինելու են այնքան տխուր, որքան տխուր է այժմ ինձ շրջապատող կյանքը:

Առաջին քայլափոխից, երբ ոտքս կոխեցի այդ արյունախում երկրի վերա, իսկույն զգալի եղավ տեղային անկարգության ծանր ներգործությունը — մաքսավորներն սկսեցին սովորականից ավելի մաքս պահանջել, թեև իմ բեռներում վաճառքի նյութ ամենևին չկար, այլ նրանք պարունակում էին հագուստս և ուղևորությանս վերաբերյալ մի քանի իրեղեններ: Անցաթղթի պատճառով երկար տանջեցին ինձ, ասելով, թե ինչո՞ւ նա չէր գրված պարսկերեն լեզվով, որ իրանք կարողանային կարդալ: Հիմարներն չգիտեին, թե մի օտար տերության հպատակ պարտավոր չէ պարսկերեն անցագիր ունենալ: Եվ այդ կառավարչական պաշտոնյայքը ոչ այլ ոք էին, քան թե մի քանի անիրավ շահախնդիրներ, որոնք վարձելով սահմանագլխի մաքսատունը, կողոպտում էին անցուդարձ անողներին, առանց օրենքի և առանց հաշվի, որքան թույլ էր տալիս նրանց բռնաբարությունն:

Մի քանի թումանի ավելորդ վճարն ազատեց ինձ այդ անախորժություններից:

Մեր կարավանի մեջ կային քսանի չափ հայ մշակներ, որոնք Պարսկաստանից անցել էին Երևանի նահանգում գործելու, այս թշվառներն ոչինչ չունեին, ոչ բեռ, ոչ գրաստ և ոչ մի այլ մթերք: Նրանց բոլոր ունեցածը բաղկացած էր պանդխտության գավազանից ու մի պարկից, որի մեջ կապել էին իրանց շալակին ճանապարհի պաշարը: Ես նկատեցի, որ մաքսավորներն նրանցից ևս փող էին պահանջում: Ես զարմացա, հայտնելով մաքսապետին, թե դրանք աղքատ մարդիկ են և ապրանք չունեն: «Ես էլ գիտեմ, որ ապրանք չունեն, պատասխանեց մաքսապետը, բայց նրանք պետք է վճարեն սիլաջի կոչված տուրքը»: Ես սկզբում չկարողացա հասկանալ այդ օտարոտի բառի նշանակությունը, բայց հետո իմացա, որ սիլաջին մի տուրք է, որ առնվում է միմիայն քրիստոնյա մշակներից, երբ նրանք վերադառնում են օտար երկրներից դեպի իրանց հայրենիքը, — դա նրանց չոր և ցամաք մարմնի մաքսն է...:

Ես շատ ցավեցա, տեսնելով, որ այն մշակներից մինը հիվանդ էր, նա ոչինչ չէր կարողացել վաստակել օտարության մեջ, այլ ընկերներն իրենց փողով մի ավանակ էին վարձել նրա համար, որ տանեն, հասցնեն իր տունը և չթողնեն, որ նա մեռնի օտար երկրում: Ես տեսա, այս ողորմելիից նույնպես պահանջում էին հիշյալ տուրքը, անգութ կերպով ծեծելով: Ընկերներն վճարեցին նրա փոխարեն և ազատեցին նրան: Եվ տեղեկանալով, թե մահմեդականք ազատ են այսպիսի տուրքերից, իսկույն ես երևակայեցի այն անիրավ խտրությունը, որ կառավարությունը դնում է մուսուլմանների և քրիստոնյաների մեջ...:

Մենք անցանք Արաքսը վաղ-առավոտյան, բայց ամբողջ օրը մեզ պահեցին զանազան անիրավ պահանջմունքների համար: Երեկոյան մեր կարավանը հազիվ թե կարողացավ ձգվել դեպի ճանապարհ: Նա շարժվում էր թույլ և դանդաղ կերպով: Մեր շուրջը տիրում էր խորին-գերեզմանական լռություն: Միայն երբեմն ավանակների զռինչը, գրաստների զանգակի ձայնը և չարվադարների հարայ-հրոցը՝ միախառնվելով, դարձնում էին շրջակա սարերից խիստ տխուր և վայրենի արձագանք:

Ճանապարհը վատ էր և անտանելի. անկարելի էր գնալ կառքով կամ սայլակով. ես նստած էի մի անպիտան ձիու վերա, իսկ իմ բեռները տանում էին երկու ջորիներ:

Խիստ ճիշտ է ավանդությունը, որ առածի ձև է ստացել տեղային հայերի մեջ, թե՝

Բոլոր աշխարհին լույս թափեց աստված,

Բայց խեղճ Մազվին՝ միայն քար տեղաց10:

Եվ իրավ, սուրբ Սանդուխտի — հայոց առաջին նահատակ օրիորդի, սուրբ Թադևոսի — հայոց առաջին առաքյալի և Վարդանյանց քաջերի արյունը ծծող երկիրը շուշաններ և վարդեր չէ բուսեցնում, որպես երևակայում են նորան մեր ոգելից բանաստեղծները: Բայց նա մերկ է և այրված, անապատի պես մերկ է նա... և երկրի ամբողջ մակերևույթը բաղկացած է սև, միապաղաղ քարահատակից: Ավանդությունն ասում է, թե այդ երկրի վերա մի օր բարկացած երկինքը քարեղեն անձրև տեղաց, նույնիսկ ժամանակում, երբ այդ երկիրը ներկվեցավ այնքան սուրբերի արյունով... այն օրից դադարեցավ մշակի ցանքը, այն օրից երկիրը զլացավ տալ յուր պտղաբերությունը...:

Բայց բնագետը, նայելով նույն քարեղեն տարածությանը, բոլորովին այլապես է մտածում: Նա ասում է, թե հին ժամանակներում, այո՛, անհիշելի հին ժամանակներում ծերունի Մասիսը այնպես սառն և հանգած չէր, որպես այժմ, նորա երակներում դեռ եփ էր գալիս հրեղեն զորություն, և նա բոցավառվում էր յուր ջերմ-երիտասարդական կյանքով: Լինում էին օրեր, որ բարկանում էր նա, աստուծո պես խի՛ստ էր նրա բարկությունը. և յուր ահագին բերանից դուրս էր ժայթքում մի ամբողջ հրեղեն օվկիանոս, որ հալած մետաղի հոսանքի նման տարածվում էր հեռու և հեռու դեպի յուր շուրջը...: Եվ այնքան կատաղի և այնքան ուժգին էր նրա հոսանքը, քանի ջերմության սաստիկ զորությունը հառաջ էր մղում հալած հեղանյութը յուր հրեղեն ալիքներով, իսկ երբ սառեց, նա թողնում էր երկրի վերա մի հաստ քարեղեն կեղև:

Ահա այս քարեղեն կեղևի վերայով ձգվում էր մեր կարավանի ճանապարհը. նա այնքան անհարթ էր և խորդուբորդ, որ ինձ երևում էր, թե մենք գնում ենք մի հսկայական խարտոցի վերայով, ուր մինը մյուսի մոտ շարված չեչաքարի բեկորները դեռ ներկայացնում էին սառած լավայի ալիքավոր փրփուրները: Իմ ձին ամեն մեկ քայլափոխում դողդողում էր, ոտքերն սայթաքում էին և սպառնում էին ինձ գետնին զարկել, և ջարդուփշուր անել: Ես ստիպվեցա ցած իջնել և գնալ ոտքով: Չգիտեմ, որպես ես հիշեցի մի տեղ, որ մանկությանս ժամանակ կարդացել էի Խորենացու մեջ, գուցե հենց այդ «քարուտ և խորդուբորդ» դաշտերումն էր, երբ մի օր մեր Ատոմ նախարարն պարսից Շապուհ արքայի հետ՝ որսորդության ժամանակ հանդուգն կերպով արշավում էին վայրենի ցիռերի երամակի հետևից, և ճանապարհի դժվարությունից ետ քաշվեցավ Շապուհ: Իսկ Ատոմ Մոկացին ծաղրելով նորան, ասաց. «Հառաջ գնա՛, աստվածորդիդ պարսից, եթե տղամարդ ես»: Իսկ նա պատասխանելով, ասում է. «Դու գնա՛, որովհետև այս քարերումս դևերը միայն կարող են հառաջ վազել»:

Այս ճանապարհը կարավանի միակ ուղին է այս կողմով, որ դեռ մնացել էր յուր նախնական անհարթության մեջ...: Բայց ես չէի զգում նրա դժվարությունները, իմ միտքը պաշարված էր նույն րոպեում բոլորովին այլ զգացմունքներով...: Ես մտաբերում էի հայի անցյալ մեծությունը և նրա ներկան, տխո՛ւր և թշվառ ներկան...:

Հունիս ամիսն էր:

Խաշնարած ցեղերն յուրյանց անասուններով հեռացած լինելով դեպի խոտավետ սարերի արոտամարգերը, թողել էին ամբողջ գյուղեր բոլորովին անմարդաբանակ: Եվ այդպիսով մենք գնում էինք համարյա անապատների միջով: Ավազակները, այս միջոցներում բուն դնելով նույն գյուղերի դատարկ տներում, շատ հաջողությամբ հարձակվում են ճանապարհորդների վերա, կողոպտում են նորանց:

Կարավանի մեծավորն հառաջագույն զգուշացրուց մեզ, թե մինչև հառաջիկա իջևանը շատ երկյուղալի էր ճանապարհը և հրամայեց ամենին պատրաստ ունենալ յուրյանց զենքերը: Ես էլ լցրեցի իմ ռևոլվերը և ասեղնավոր հրացանը առի ձեռքս: Նաև պատվիրեցի իմ ծառա Մեսրոպին, որ նա ևս պատրաստ ունենա յուր զենքերը և վտանգի ժամանակ չհեռանա ինձանից: Մեսրոպը մի նորահաս երիտասարդ էր Զեյթունի հայերից, որ Կ. Պոլսից առել էի ինձ հետ որպես ծառա. այս քաջը նույնքան սրտոտ էր, որքան պարզամիտ և հավատարիմ: Լսելով իմ պատվերը, նա խիստ եռանդոտ կերպով պատասխանեց. — «Համա՛, աղա, դու իշարե մը արա ձի, ես էն անխավատներին ըսկոն թոթվեմ ի ցած, ընչուր տերևն ի ծառեն»:

Մեր դրությունը ավելի վտանգավոր էր այն պատճառով, որ ինձ ասեցին, թե ավազակներն խիստ անգթությամբ վարվում են առավելապես քրիստոնյաների հետ: Նրանք թեև կողոպտում են յուրյանց հավատակից մահմեդականներին, բայց շատ սակավ է պատահում, որ սպանեին նրանց, բայց քրիստոնյան յուր կայքի հետ զրկվում է և յուր կյանքից: Եվ այս վտանգը ավելի սպառնում է այն քրիստոնյաներին, որոնք ասիացիք են, բայց եվրոպացիք շատ անգամ բացառություն են կազմում, որովհետև ինկլիս, ռուս և ֆրանգ ազգերն, ցույց տված լինելով պարսիկներին յուրյանց սրի զորությունը, ունեին մի առանձին առավելություն նրանց աչքում, բայց ամեն պարսիկ, որ կամենում էր մի խիստ նախատական բառով վիրավորել յուր ընկերին, ասում է՝ «դու հայ ես... »:

Նկատելով, որ իմ եվրոպական հագուստներս առիթ էին տալիս թուրքերին կարծել՝ թե ես ինկլիս եմ, և մտածելով, թե մի այդպիսի կեղծիքը կարող էր ազատել ինձ զանազան ցավեցուցիչ հանգամանքներից, ես ոչ միայն չցանկացա դուրս բերել նրանց մի այդպիսի մոլորությունից, այլ ինքս հայտնեցի, թե ինկլիս եմ, և տերության գործով գնում եմ Թեհրան:

Այո՛, ես ստիպվեցա ուրանալ իմ հայությունը...: Որքան ցա՛ծ դրություն է այդ...: Մի՛ նախատիր ինձ ընկեր, ի՞նչ բան չէ անում երկյուղը...: Ի՞նչ պետք էր արած...: Երևակայիր ճանապարհորդությունը զանազան բարբարոս ցեղերի միջով, և իմ չորս կողմում սպառնում էր զարհուրանք և մահ...:

Բայց իմ բարեսիրտ Մեսրոպի վերա երևի վատ տպավորություն գործեց իմ գործ դրած խորամանկությունը, նա մոտեցավ ինձ այս խոսքերով.

—Աղա, մեկ էլ էնպես մի՛ խոսեցեք, մե՛ղք է:

—Ինչպե՞ս, Մեսրոպ:

—Դուք ասեցիք՝ ես ինկլիս եմ:

—Միթե վա՞տ է ինկլիսը, — հարցրի ես:

—Լավ է, թե վատ է, այդ իմ խելքին չէ հասնում, բայց ես գիտեմ, որ ինկլիսը մեր լույս-հավատեն չէ...:

Ազգայնության գաղափարը հեռու էր Մեսրոպի մտածությունից, նա այդ մասին ինձ չէր մեղադրում: Նա միայն վրդովված էր նորանով, թե ինչո՞ւ ես կոչում եմ ինձ այն ազգի անունով, որ յուր հասկացողությամբ քրիստոնյա չէր:

Բայց ես իմ բարեսիրտ Մեսրոպի ուշադրությունը կամեցա դարձնել մի այլ առարկայի վերա:

—Տեսնո՞ւմ ես այն սարը, Մեսրոպ:

—Այն բարձր սա՞րը, որի գլուխը պատած է ձյունով, — հարցրուց նա:

—Հենց այն: Դու գիտե՞ս նրա անունը:

—Չեմ գիտի, աղա, նա Զեյթունի սարերից չէ: Ես մեր երկրի բոլոր սարերը կճանաչեմ, դա նրանց նման չէ:

—Դա Արարատն է, Մեսրոպ, դա Հայաստանի ամենամեծ սարն է:

Մեսրոպը ոչինչ չպատասխանեց: Երևում էր թե Արարատը և թե Հայաստանը նրան չգրավեցին: Նա բացի յուր Զեյթունից, բացի հայոց «լույս-հավատից» ավելի ոչինչ չէր սիրում: Ես մտածեցի նրա միամիտ գլուխը պտուտացնել մի քանի պատմական տեղեկություններով:

— Գիտե՞ս, Մեսրոպ, այս սարի վերա նստեց Նոյի տապանը ջրհեղեղից հետո, այստեղից բազմացան բոլոր մարդիկը, որ աշխարհի երեսումն են: Այս սարի չորս կողմում բնակվում էին մեր պապերը, դրա համար այս նահանգը կոչվում է Արարատ: Մեր պապերի օրերում այս կողմերում մեծ-մեծ քաղաքներ կային, դու տեսար նրանց ավերակները միայն: Այն քաղաքներում նստում էին մեր հին թագավորները և տիրում էին շատ երկրների վերա:

Մեսրոպի աչքերն վառվեցան մի վայրենի կրակով, և նա անհամբեր ընդհատեց իմ խոսքը:

—Մի՞թե մենք թագավորներ ենք ունեցել, մի՞թե այդ երկիրն մերն էր առաջ:

—Այո՛, մերն էր...: Այն ժամանակ հայերն այսպես խեղճ չէին որպես այժմ, նրանք յուրյանց հողի տերն էին: Հայ անունից այն ժամանակ ամեն մարդ դողում էր, դորա համար հայը ինձ նման չէր ուրանում յուր ազգությունը, կամ ինչպես դու ասում ես յուր «լույս հավատքը»:

—Բայց մեր թագավորնե՞րը, — հարցրուց Մեսրոպը զարմանալով, — ի՞նչ տեսակ մարդիկ էին:

—Նրանք հսկաներ էին, հասարակ մարդիկ չէին, Մեսրոպ, նրանք աստվածների հետ էին պատերազմում: Նրանցից առաջինը՝ մեր նախապապ Հայկը, սպանեց Բաբելոնի աստուծո որդի

Բելին, որ մի վիթխարի հսկա էր: Հայկի թոռներից մեկը՝ Արամը, սպանեց Ասորոց Արևի որդուն11, որին նույնպես աստուծո տեղ էին պաշտում: Արամի թոռներից մեկը՝ Տիգրանը, պատերազմեց վիշապների հետ, նրանց թագավորին12 սպանեց և նա ամբողջ ցեղը գերի բերավ, բնակեցրուց, տե՛ս այն մեծ սարի մոտ, որի անունը քեզ ասեցի: Մենք ունեինք և մի ուրիշ թագավոր, նրան կոչում էին Արտավազդ, նա խիստ փառասեր և ամբարիշտ մարդ էր. նա յուր մտքին դրել էր կործանել բոլոր աշխարհը և ապականել ամեն երկրները: Հայրն անիծեց նրան: Հոր անեծքը բռնեց որդուն: Մի օր Սրտավազդ այդ սարի մոտ որս էր անում, հանկարծ վրա հասան Մասիսի քաջքերը, նրան բռնեցին և տարան Մասիսի գլուխը, շղթաներով կապեցին, և որտեղ բանտարկեցին մի գնդանի մեջ, ուր մնում է մինչև այսօր:

Իմ առասպելավիպական պատմությունները բավական գրավեցին Մեսրոպին, նա հետաքրքրվեցավ և հարցրուց, թե ի՞նչ էր նշանակում Մասիսը, որի գագաթան վերա բանտարկեցին Արտավազդին:

— Մասիսը, — պատասխանեցի ես, — նույն այս սարն է, որ ուրիշ անունով Արարատ է կոչվում: Դա Հայոց երկրի սուրբ սարն է, որի գագաթան վերա բնակվում էին մեր հին աստվածները:

Վերջին խոսքը ձգեց Մեսրոպին կատաղության չափ զարմացման մեջ:

—Բացի Քրիստոսից մի՞թե մենք ուրիշ աստվածներ էլ ենք ունեցել, — հարցրուց նա:

—Ունեցել ենք: Քրիստոսն այն ժամանակ մեր աստվածը չէր. մեր աստվածներն այն ժամանակ մեր ազգիցն էին. նրանք հայեր էին և հայերեն էին խոսում, և Հայոց երկիրն էին պաշտպանում: Եվ այն թագավորներն, որ հիմա պատմում էի քեզ, նույն աստվածների որդիքն էին:

— Չէ՞ որ Քրիստոսն էլ հայ էր, — պատասխանեց Մեսրոպը, միամտությամբ:

— Ո՛չ, նա հայ չէր, նա Հրեից ազգիցն էր և հրեաստանցի:

Մեսրոպը ավելի կատաղեց, երբ լսեց յուր համար միշտ պիղծ համարված հրեա անունը:

— Մի՞թե դու մեր տերտերից շա՞տ գիտես — ասաց նա, — տերտերն ինձ այսպես է ասել, թե Քրիստոսն հայ էր:

—Բայց նա քեզ պատմե՞լ է մեր հին թագավորների գործքերը:

—Նա այսպիսի բաների վերա չէ խոսում, մեղք է, — պատասխանեց բարկացած Մեսրոպը և յուր երեսը խաչակնքեց:

Մեր վերջին վիճաբանությունը ընդհատեց մի սարսափելի տեսարան: Բլուրի հետևից մեր դեմուդեմ երևաց մի կարավանի սկիզբը, երբ մոտեցան, տեսանք, բոլորն հայ ընտանիքներ էին, որ յուրյանց երեխաներով, աղջիկներով, հարսներով և տղամարդերով գնում էին ուխտ դեպի Ս. Նախավկայի վանքը, բայց ճանապարհին ավազակների պատահելով, կողոպտվել էին: Խե՛ղճ մարդիկ, երևի նրանց ուխտագնացությունը անկեղծ սրտով չէր և սուրբը պատժեց նրանց...:

Ցավալի՛ մի տեսարան էր այդ:

Տղամարդիկը, որն վիրավորված, արյան մեջ շաղախված, որն սպանված, կապել էին յուրյանց գրաստների վերա և այնպես տանում էին. կանայքը և աղջիկները, բոլորովին պլոկված, մե՛րկ էին նախամոր Եվայի պես...: Ավելի ցավալին այն էր, որ այս թշվառ սեռի գեղեցիկներն և մանկահասակներն գերի էին ընկած ավազակների ձեռքում: Մայրերի, հայրերի լացն և աղաղակն ոչ այնքան սպանվածների և վիրավորվածների համար էր, որքան հափշտակված կույս աղջիկների համար:

Մեր կարավանի մեծավորն, տեսնելով այդ, մեծ երկյուղի մեջ ընկավ: Բոլոր կարավանի վերա նույնպես տիրեց սարսափ և ապշություն, մանավանդ երբ լսեցին, թե ուխտավորների կողոպտվելն պատահած էր ոչ այնքան հեռու մեզանից:

Հուսահատությունը տիրեց բոլորի վերա: Ոմանք ասում էին՝ հառաջ չգնալ, բարձրանալ մերձակա բլուրի գլխին և սպասել, մինչև ավազակներն հեռանան ճանապարհից: Իսկ մեր կարավանի մեծավորն, որ մի փորձառու մարդ էր, պնդում էր, թե պետք է շարունակել ճանապարհորդությունը և իշևանին հասնիլ, որովհետև վտանգն արդեն անցած էր, նրա համար, որ ավազակներն յուրյանց ավարը ուխտավորներից ստացած լինելով, վաղուց հեռացած կլինեին ճանապարհից: Բոլորն համաձայնվեցան, և մեր կարավանը կրկին շարժվեցավ դեպի առաջ:

Բայց ես չցանկացա բաժանվիլ ուխտավորներից երկու պատճառով՝ նախ որպես բժիշկ ինձ պետք էր խնամք տանել յուր ողորմելի վիրավորվածներին, երկրորդ, իմ մեջ հայտնվեցավ մի ցանկություն. տեսնել Ս. Նախավկայի վանքը, որ ավելի հեռու չէր գտնվում: Մեր չարվադարը13 նույնպես հոժարվեցավ իմ կամքին և բաժանվեցավ կարավանից, երբ ես խոստացա պայմանյալ վարձից ավելի ընծայել նորան մի քանի թուման:

Որքան հնար էր այն միջոցում օգնություն մատուցանել վիրավորվածներին. ես գործ դրեցի: Այն սարսափելի անապատում, հեռու մարդկային բնակությունից, բժշկի հանկարծակի հայտնվիլն մի աստվածային պարգև է ողորմելի հիվանդի համար, և ես երբեք մոռանալ չեմ կարող, թև որպես արտասուքը աչքերում աղաչում էին ինձ, որ չթողնեմ նրանց եղբայրը, քույրը, հայրը մեռնի...:

Մութը բոլորովին պատել էր, երբ մենք ճանապարհ ընկանք դեպի վանքը, ես նկատեցի, որ իմ ուղեկիցներիս մեջ կար և մի քահանա: Նա մոտեցավ ինձ այս խոսքերով.

— Աստված քեզ երկար կյանք տա, աղա, թե դու չլինեիր, մեր վիրավորներն բոլորն կկոտորվեին: Սուրբ Նախավկան քեզ օրհնե:

Ես ուշադրություն չդարձրի նրա խոսքերի վերա, միայն հարցրի.

— Քանի՞ հոգի էին ավազակները:

— Տասն և հնգից ավելի, — պատասխանեց քահանան:

— Լավ, տասն և հինգ հոգին ո՞րպես կարողացավ կողոպտել ձեզ, քանի որ ձեր կարավանը հարյուր հոգու է հասնում:

— Է՛հ, աղա, միթե չե՞ս իմանում, որ երկու գայլն մի ամբողջ հոտ ոչխար է ցրվում, — պատասխանեց քահանան յուր հատուկ ոճով, — մենք որ կանք, Քրիստոսի գառներն ենք, բայց նրանք Մուհամմեդի գայլերն են: Սուրբ Ավետարանը, ծառա՛ լինեմ նրա սուրբ զորությանը, չես կարդացել, որ իմանաս: Տերն մեր Հիսուս Քրիստոսը ասում է՝ «արածեա զոխչարս իմ» — այս խոսքերից երևում է, որ մենք հայ-քրիստոնյաներս ոչխարների պես պետք է լինենք, որ աստուծո արքայությունը ժառանգենք:

— Այսինքն, թո՛ղ մեզ օտար ազգերն կողոպտեն, անպատվեն և կոտորեն, մենք հայ-քրիստոնյաներս պետք է լռենք և համբերությամբ տանենք: — Այդպես չէ՞, տեր հայր:

— Հա՛, այդպես, որդի, — «Համբերությունը կյանք է», — ասում է սուրբ գիրքը:

Լսելով հայ քահանայի կարծիքը և նրա վարդապետությունը, բոլորովին հասկանալի է լինում հայ մարդու թուլասրտությունը, որ հասնում է, արդարև, մինչև ոչխարային երկչոտության…:

—Բայց գիտե՞ս, տեր հայր, եղել են ժամանակներ, որ նույնիսկ այս դաշտում, ուր գնում ենք մենք այժմ, սուրը ձեռքում պատերազմում էին քեզ նման քահանաներ, սպանվում էին և սպանում էին այլազգիներին…: Նրանք ձեզ պես չէին խոսում… և այն ժամանակ հայ մարդու վիճակը ավելի լավ էր…:

—Այդ ես չեմ կարդացել, որդի, — պատասխանեց քահանան օձիքը թափ տալով14: — Իմ գրքերիս մեջ այսպիսի բան չէ գրված:

Որպես երևում էր, տեր հայրն զրուցասեր մեկն էր, նա ավելացրուց.

— Մեկ ուրիշ պատճառ էլ կա, որդի, որ աստված այսպես պատժում է մեզ. մենք Սուրբ Նախավկայի ղուլն ենք15, նա է պահում և պահպանում մեզ, բայց մարդիկ վատացել են, յուրյանց սուրբի հարկը չեն ճանաչում: Այսպես չէր առաջ, ես երեսուն տարվա քահանա եմ, ոչ մի տարի չեմ տեսած, որ ուխտավորների թիվն այսքան պակաս լիներ: Ես իմ երազում տեսա, թե որպե՛ս բարկացած էր Սուրբ Նախավկան… և այսօր մենք մեր մեղքի պատիժը կրեցինք…

Մոլեռանդները նույնպես ունեն յուրյանց առանձին վարդապետությունը, յուրյանց փաստերը, և նույն փաստերը հիմնված են դարևոր նախապաշարմունքների վերա: «Մենք Սուրբ Նախավկայի ղուլն ենք», ասում էր տեր հայրն… այսինքն՝ նրա ստացվածքը, նրա ժառանգությունը, այլ խոսքով՝ նրա հպատակներն ենք…: Այս խոսքերն ինձ հիշեցնում էին Դելֆյան Ապողոնի, Հերայի, Ափրոտիտեսի, Աթենասի, Աստղկա և Արամազդի տաճարներն, և հեթանոսական այն բոլոր աստվածները, որոնց նվիրական էին համարում երկրի այս և այն մասերը, ուր գտանվում էր նրանց մեհյանը, և նոցա աստվածապետական թագավորությունը առանձնապես տարածվում էր յուրյանց հատկացրած երկրի և ժողովրդի վերա: Նույնը իմ ճանապարհորդության ժամանակ ես նկատում էի Հայաստանում: Օրինակ, սուրբ Աստվածամոր անունով զանազան տեղերում շինված վանքերն և տաճարներն ունեին զանազան նշանակություններ և զանազան զորություններ: Մի տեղ սուրբ Տիրամայրն մեղմ էր և անփառասեր, նա չէր սիրում զոհեր և ուխտավորների բազմություն: Մի այլ տեղում նա խիստ էր և պահանջող, պատիժներ և պատուհաս էր թափում, երբ նրան ըստ օրինի չէին հարգում: Եվ եթե զոհերով և ընծաներով

հարգում էին նրան, փոխարենն սուրբ Աստվածածինը պաշտպանում էր յուր հլու ժողովուրդը չար մարդերի կամ մյուս սուրբերի վնասներից: Այսպես էին և Հերայի տաճարներն հեթանոսական աշխարհում...:

Բայց ես չկամեցա դիպչել տեր հոր սնահավատությանը, միայն նկատեցի.

—Եթե կառավարությունը ունենար այս ճանապարհների վերա յուր կանոնավոր հսկողությունը, ես կարծում եմ, այսպիսի վտանգներ չէին պատահելու ճանապարհորդներին:

—Ա... խանի կառավարության տակն են այս երկրներն:

— Ինչո՞ւ խանը յուր կողմից չէ դնում պահապան զինվորներ:

Տեր հայրն ծիծաղեց, ասելով.

—Ավազակներն հենց խանի մարդիկն են, և նրա դրած պահապաններն իրանք ավելի լավ կկողոպտեն խեղճ ճանապարհորդներին, և այսպես էլ լինում է, դեռ անցյալ տարի էր նրա պահապանները սպանեցին մի հայ վաճառական և նրա գեղեցիկ ձին գտնվեցավ խանի ախոռում: — Աստված ինքն մեզ մի ճար անե, որդի, — տեր հայրը փոխեց յուր խոսքը, — թե չէ, այս անհավատներից մեզ օգուտ չկա...:

—Բայց ամեն բան էլ աստծուն ձգելու չէ, քանի որ նա մեզ տվել է խելք, միտք և ձեռք մեր դարդերի ճարը մեր խելքով գտնելու, քանի որ նա մեզ չէ խնայել ոչ մի բան, ինչ որ պետք է, մեր գլուխը, մեր կյանքը և պատիվը պահպանելու համար: Բայց եթե մենք գործ չենր դնում աստուծո մեզ տված շնորհները, մեղավորն մենք ենք...:

Երևի տեր հորն դուր չեկան իմ վերջին խոսքերը, նա լռեց և ամենևին պատասխան չտվեց...:

ՆԱՄԱԿ Բ

Մենք հասանք վանքը երկրորդ ավուր երեկոյան պահուն: Առավոտյան պետք է սկսվեր ուխտավորների տոնախմբությունը:

Առավոտը լուսացավ:

Վանքում դեռ ամեն ինչ չուռ էր և անշարժ: Ուխտավորներն զբաղված էին յուրյանց հիվանդներով: Վանական միաբանությունը, յուր թթված ռեխով, խիստ սառն կերպով էր նայում յուր կողոպտված այցելուների վերա, որոնք այս անգամ չէին խոստանում առատ արդյունք...

Եվ արդարև, վանքն այս անգամ չէր որոտում այն բյուրավոր զվարճություններով, որ սովորաբար լինում են տոնական հանդեսներում, որոնք հիշեցնում են անցյալը, շատ հին հեթանոսական անցյալը և այն բոլոր կրոնական բարոյական մոլությունները, որ կատարում էին Աշտիշատի, Երիզայի և Բագարանի տաճարներում...:

Ես այն առավոտ ժամանակ չունեցա ոչ տեսնվելու վանահոր հետ և ո՛չ նայելու վանքի շինվածքը կամ քննելու նորա հնությունները: Ես հոգս էի տանում իմ վիրավորներին: Իմ վերջին այցելությունը եղավ մի երիտասարդի մոտ, որ արդեն հոգեվարքի մեջ էր. դեղերն այլևս անօգուտ էին նրան, միայն քահանան մատուցանում էր կրոնական վերջին մխիթարությունը: Հիվանդը միայնակ պառկած էր վանքի խուցերից մեկի մեջ, երևում էր, նա տեր կամ ազգական չուներ: Նա մի պնդակազմ և առույգ երիտասարդ էր, մարմինը պատած էր մահացու վերքերով, բայց տակավին չէր կորցրել յուր հիշողությունը:

—Ես մեռնում եմ, տեր հայր, — դարձավ նա դեպի հաղորդող քահանան, — թողություն տուր իմ մեղքերին, ես շատ մեղավոր եմ...

—Ի՞նչ է մեղքդ, որդի, — հարցրուց խոստովանահայրն:

—Ես իմ ձեռքով սպանեցի «նրան», ես չուզեցի, որ «նա» ընկնի անօրենների ձեռքում... — պատասխանեց հիվանդը դողդոջուն ձայնով:

—Ո՞ւմն սպանեցիր դու:

— «Նրան», որին սիրում էի... — եղավ հիվանդի վերջին խոսքը:

Ես հետո իմացա, որ այս երիտասարդը սիրելիս է եղել մի օրիորդ, որ նույնպես ուխտավորների թվումն էր: Ավազակներն կամեցել են հափշտակել նրան: Երիտասարդը երկար պատերազմել է ազատելու յուր սիրուհուն, բայց երբ հնար չէ եղել, ինքը մի սրի հարվածքով սպանել է նրան, ավելի լավ համարելով տալ ավազակների ձեռքը անմեղ աղջկա մեռած դիակը, քան թե նրա կենդանի մարմինը...: Երիտասարդի մի այսպիսի կատաղությունն որքան և վայրենի լիներ, նա դարձյալ ուներ յուր մեջ այն հատկությունը, թե հայ մարդու սրտում բոլորովին չէ մարած պատվի զգացմունքը, թե նա գիտե պատահած միջոցում գործ դնել յուր սուրը, և որպես երևաց, մի քանի ընկած ավազակներն այս երիտասարդի ձեռքով էին սպանված եղել:

Ես խիստ տխուր զգացմունքներով թողեցի մեռնողի խուցը և գնացի միայնակ ման էի գալիս վանքի բոլորտիքը: Բոլոր շինվածքներն յուրյանց կոշտության մեջ դարձյալ գեղեցիկ էին, որպես վաղեմի մարդու բնավորությունը յուր նահապետական պարզությամբ: Բայց որքա՞ն արծաթ ծախսվել էր այն հսկա շինությունների կառուցման վերա...:

Իմ ուշադրությունը ավելի գրավեց մի պարսկերեն արձանագրություն, որ փորված էր ահագին մարմարիոնի վերա և հագցրած էր վանքի դռան ճակատին: Այս արձանագրության պարունակությունից երևաց, որ պարսից մեծ իշխան Նաիբուլ-Սալթանան16 նվիրել է մի ամբողջ գյուղ Դարաշամբ անունով Ս. նախավկային որպես վանքային կալվածք և հաստատել է յուր նվերը արքունական ֆերմանով:

Մինչ ես զբաղված էի արձանագրության արտագրությամբ, իմ մոտ լսվեցավ մի ձայն.

— «Աստված պահապան»:

Ողջունելու ձևիցը հասկացա, որ հանդիպողն վարդապետ էր. մի թուխ դեմքով մարդ, որի երեսի ապուշ բացատրություններն և ոչինչ չհայտնող աչքերն լավ վկայություն չէին տալիս յուր մասին:

Վարդապետը բոլորովին զարմացավ, տեսնելով, որ ես կարողանում եմ կարդալ և արտագրել արձանագրությունը:

— Այդ կռապաշտի գրերը դու ինչպե՞ս ես կարդում, — հարցրուց նա զարմանալով:

«Կռապաշտի գրեր» ասելով, հասկանում էր հայր սուրբն ոչ թե պարսկերենը, այլ հին և անվերծանելի նշանագրերը, որպիսի են սեպաձև տառերն և այլն:

Իմ հարցմունքին, թե ո՞ւմ հետ պատիվ ունեի խոսելու, հայր սուրբն պատասխանեց, թե վանահայրն է: Ես մտածեցի փոքր-ինչ թափ տալ նրա գլուխը:

— Դուք ինչո՞ւ, հայր սուրբ, մինչև այսօր չեք աշխատել կարդալ այս «կռապաշտ գրերը», որովհետև այս գրերով ընծայված է ձեր վանքին մի ամբողջ գյուղ:

Վարդապետը բոլորովին նոր խոսքեր էր լսում, բայց խոսքերը նրան երևի չհետաքրքրեցին, և նա խիստ սառնությամբ պատասխանեց.

— Է՛հ, որդի, մենք այս վանքի քարերը չենք կարում պահել անօրենների ձեռքից, գյուղը ինչպե՞ս պետք է պահենք:

— Հարկավոր չէ, որ դուք պահեք գյուղը, այլ նա կպահե ձեզ և ձեր վանքը, եթե միաբանությունը օրինավոր կերպով հոգ կտանե նրա վերա, կմշակե և նրա հողից արդյունք կստանա:

—Է՛դ էր պակաս, — հեգնորեն խոսեց վարդապետը, — սրանից հետո պետք է վեղարը ձգենք, խարազանը առնենք և հող վարենք:

—Վեղարը ձգելու հարկ չկա, երկրագործությունը սուրբ է որպես քահանայի, նույնպես և հասարակ շինականի համար: Վերջապես, եթե ձեզ դժվար է գալիս դա, դուք կարող եք աշխատացնել ձեր գյուղացիքը:

—Մեր գյուղացի՛քը... անիծվին նրանք... այնքան ծույլ են, որ տրտնջում են աստուծո դեմ, «Ինչո՞ւ, աստված, հացը այնպես չստեղծեցիր, որ գետնից հենց թխած բուսներ, մենք վարելու, ցանելու, հնձելու, աղալու և թխելու հոգ չունենայինք»:

Մտքումս ասացի, թե դուք եք ծուլացրել նրանց:

Բայց ես չէի կարողանում հանգստացնել ինձ առանց լիակատար տեղեկություն ստանալու գյուղի մասին, թեև իմ հարցմունքների պատասխանը ստանում էի խիստ թերի և շատ անգամ բոլորովին տարօրինակ:

—Հայրենական, մայրենական լսել ենք, — առաջ տարավ վարդապետը, — որ այս գյուղը վանքինն է եղել, բայց ո՞վ է թողել, ումի՞ց է մնացել, այդ աստված գիտե:

—Բայց վանքը պետք է ունենա գյուղի մասին պարսից թագավորներից և մանավանդ Նաիբուլ-Սալթանայից շնորհված արքունի ֆերմաններ: Այդպես է երևում արձանագրությունից:

—Ես այդ չգիտեմ, բայց մտքիս գալիս է, շատ տարիներ առաջ — ես այն ժամանակ տասն և ութն տարեկան էի, հիմա, գիտե՞ք, հիսունից անցել եմ — հա՜, այն ժամանակ ես փոքրավոր էի, — «մեր հայր սուրբի» մոտ, աստված յուր հոգի՛ն լուսավորե, դու մեկ տեսնեիր նրան. ինչքա՛ն լավ մարդ էր, Սաղմոսը, Նարեկը ձեռքից չէր գցի, սուրբի տեղ կպաշտեին նրան, ինձ շատ կսիրեր «լուսահոգին», յուր հոգու հետ չէր փոխի. մի օր ասաց. «Ղազար, որդի, մի կտոր թուղթ բեր, իմ խուցի պատուհանը գոցի՜ր, տաքություն չէ պահում». — և իրավ, այն ձմեռ շատ ցուրտ էր, մեր հավերը ցրտից սառեցան, ես այս կողմ վազեցի, այն կողմ վազեցի, որ մի կտոր թուղթ գտնեմ, չկա ու չկա: Մեկ էլ աստված մտքիս բերավ, որ վանքի պահարանում մի սնդուկի մեջ հին թղթեր կային, իսկույն վազեցի դեպի պահարանը, մի քանի թերթ այն թղթերից վեր առի. նրանք էլ այդպիսի տառերով էին գրված, որպես այդ արձանագրությունը. այն թղթերով ես պատուհանը գոցեցի:

Հայր սուրբի անկապ պատմությունը որքան և տաղտկալի լիներ, դարձյալ ես հետաքրքրությամբ էի լսում, որովհետև նրա մեջ ես տեսնում էի հայ աբեղայի անհոգ և անմիտ պատկերը:

Նա շարունակեց.

— Այն ձմեռ առաջնորդի գործակալը մեր վանքը եկավ — թո՜ղ ոտը կոտրվեր, ամենևին եկած չլիներ — գործակալը սատանորդի մեկն էր, դևից յոթն օր առաջ էր ծնվել... Մի օր նա «մեր հայր սուրբի» խուցի մեջ նստած էր, հանկարծ աչքն ընկավ պատուհանին, «Տո՜, էդ ի՞նչ թղթեր են», — ասաց նա և մոտեցավ պատուհանին, աչքերումը կրակ վառվեցավ, սկսավ «մեր հայր սուրբին» չլսված խոսքերով հայհոյել: Մենք մտածում էինք, թե վարդապետը խելքը թռցրեց: Նա սկսավ թղթերը պատուհանից պոկել: «Ախա՜ր դրանք վանքի ղաբալաներն (կալվածագրերն) են» ասաց նա, պոկեց և սկսավ պատառոտած տեղերն ուրիշ թղթերով կպցնել: Շատ չմնաց մեզ մոտ առաջնորդի գործակալն, մեր վանքը թալանեց, կողոպտեց և գնաց Սրբազանի մոտ, թղթերն էլ յուր հետ տարավ: — Հիմա, որդի, խոսքը փոխեց հայր սուրբը, մեր վանքումը թուղթ չէ մնացել, եղած-չեղածն տարան, որը Էջմիածին, որը Թարվեզի առաջնորդարանը:

Սույն միջոցին վանքի ծառաներից մեկն մոտեցավ հայր սուրբին, ինչ-որ փսփսաց նրա ականջին, և նա առանց մի բան ասելու ինձ թողեց և հեռացավ:

Վանական միաբանության անտարբերությունը և նրանց անհոգությունը դեպի վանքի սեփականությունները ես նկատել եմ ոչ միայն այստեղ, այլ բոլոր հայոց վանքերում, մինչև անգամ Ս. Էջմիածնում: Զանազան մարդիկ, օգուտ քաղելով վարդապետների տգիտությունից, տիրել են այս և այն հողերին, մինչև անգամ վանքապատկան ամբողջ գյուղերին: Եվ շատ անգամ ինքը վանահայրը, կամ մի խարդախ վարդապետ, գողանալով կալվածագրերը, խիստ չնչին արծաթով ծածուկ տվել են անիրավությամբ տիրողին...: Ծերունի ականատեսների մտքի մեջ միայն պահվել է մի տխուր հիշողություն, թե «այս գետինը մի ժամանակ պատկանում էր վանքին... մենք նրա վերա վար ու ցանք էինք անում... »:

Վանքերում շատ անգամ ցույց են տալիս քեզ սրբոց մասունքներ, պատած ոսկով կամ արծաթով, ցույց են տալիս քեզ հին գրչագիր ավետարաններ, որոնց կազմերը նույնպես պատած են ոսկով և արծաթով, և նրանք զարդարած են գույնզգույն ակունքներով: Եվ դու միշտ լսում ես այս խոսքերը.

«Այս ավետարանի, այն սուրբ մասունքի վերա կային թանկագին ալմաստներ և գեղեցիկ գոհարներ, նրանց, փոխեցին և տեղը հասարակ գունավոր ապակիներ դրեցին...»: Ո՞վ փոխեց, ո՞վ տարավ, պատասխան չկա, որովհետև «տնային գողը միշտ անհայտ է մնում»:Ահա այսպես են վարվում այն հարստությանց հետ, որ ժողովրդի կրոնասեր ձեռքը թափում է յուր վանքերի մեջ, ահա այսպես սպառվում են մեր ազգային սեփականությունքը...

Ի՞նչ է պատճառը. — այն, որ մեր վանքերում չկա այն եղբայրությունը, որ ուրիշ խոսքով կոչվում է վանական միաբանություն: Մեր վանքերում կան միայն ծույլ ու տխմար աբեղաներ, որոնք միայն յուրյանց փորի և աղոթքների մասին են մտածում, որոնք մի որոշ նպատակի չեն ծառայում, որ վերաբերում էր հասարակության այս և այն շահերին:

Արդարև, վանական կազմակերպված միաբանություններն շատ անգամ հառաջ են բերում այն հրեշավոր ընկերությունները, որ կրոնական լեզվով կոչվում է կղերականություն. դա մի զորեղ և սարսափելի կուսակցություն է, որ ունի յուր որոշ նպատակը, որ ծառայում է յուր հատուկ գաղափարին, որ տիրում է ժողովրդի մտքի և սրտի վերա և կրոնական դիմակի տակ հառաջ է տանում յուր հոգևոր հարստահարությունները...:

Մենք հայերս բախտավոր ենք, որ չենք ունեցել և չունենք այսպիսի կղերական միաբանություններ, բայց մենք չունենք և այն վանական միաբանությունները, որոնց գործունեությունը նվիրված լիներ մի բարի նպատակի, որոնք ժողովրդի կրթության գործի մեջ մի բանով օգուտ բերեին:

Մտածել, գործել, որևիցե նպատակի ծառայել, կարող են միայն կենդանի մարդիկ, իսկ մերոնք զուրկ են կենդանությունից...:

Այստեղից հասկանալի է մեր վանականների այն սառն անտարբերությունը, որ ունին նրանք դեպի վանքի հարստությունները, որովհետև հարստության բաղձանք ունին նրանք, որ նպատակներ ունին: Այսպիսի մարդիկ հարստության վերա նայում են որպես յուրյանց նպատակները իրագործելու գլխավոր միջոցի վերա: Եթե կա մի վանքի մեջ տպարան, կա դպրոց, եթե միաբանությունը զբաղված է գրականության այս և այն ճյուղերը մշակելով, — այսպիսի վանքը միևնույն ժամանակ կաշխատե բարվոքել և այս նյութական դրությունը: Բայց մեր վանքերում ցանկանում են միայն ապրել, լավ է հանգիստ ապրել, և ժողովրդի ջերմեռանդությունը բավական է լցուցանելու նրանց մի այսպիսի անասնական բաղձանքը: Մեր վանականը յուրյան աշխարհից կտրված, ժողովրդից հեռացած, և կյանքի հետ յուր հաշիվները վերջացրած մարդ է համարում. նա մտածում է այն բանի վերա, ինչ որ հուգուն և երկնքին է պատկանում. նա գործ չունի աշխարհի հետ...:

Արեգակը բավական բարձրացեք էր հորիզոնի վերա, բայց օրվա տաքությունը տակավին զգալի չէր: Ես սկսեցի դուրս գալ վանքի բակից, մտածում էի գնալ դեպի վանքին պատկանող գյուղը և տեսնել նրա մշակությունները: Հանկարծ մի քանի բարձր ձայներ գրավեցին իմ ուշադրությունը: Ձայները լսվում էին մոտավոր գավիթից, ուր զետեղված էին վանքի անասունների ախոռները,

ձայները լի էին հայհոյանքներով և կծու խոսքերով: Իսկույն հասկացա, որ կռվում էին երկու կանայք, թեև նրանք չէին երևում:

— Անզգամ, — ասում էր մինը, — յուղը գողանում ես, պանիրը տանում ես, բուրդը ծախում ես, էլի լեզուդ մի արշին երկայն է...

— Հոգիդ էլ կհանեմ, աչքդ էլ կփորեմ, — պատասխանում էր մյուսը, — ինչ ձեռքիցդ կգա, արա՜, դու ո՞վ ես, որ ինձ արգելում ես:

— Իհարկե, — պատասխանեց առաջինը հեգնորեն, — թե ես էլ քեզ պես ջահել լինեի, թե ես էլ քեզ պես երեսս կոկեի, ինձ էլ թույլ կտային հայր սուրբի խուցը մտնել, այնտեղ ավել անել, հայր սուրբի շապիկը լվանալ — ինձ էլ չէին արգելի յուղ ու պանիր գողանալ:

— Դե՜, պատռվի՜ր, դե՜, տրաքիր, ես էսպես եմ, ես էսպես կանեմ... դու քո սպիտակ ծամերով շա՛տ բարի պտուղ ես... ուզո՞ւմ ես ամենը բացեմ... ուզո՞ւմ ես ասեմ...

— Ի՞նչ բացես... ես քեզ պես առանց էրկան (ամուսնի) տղայի տե՞ր իմ դարձել, թե...

Վերջին խոսքը մնաց կիսատ, նրան կտրեցին մի քանի հայհոյանքներ և ապա լսելի եղան հարայ-հրոց, թրըխկոց... ամա՛ն.. մեռա՛ ... խեղդվեցա՛ ... ազատեցե՛ք...

— Տո՜, լիրբ քածեր, ի՞նչ եք կատաղել, ինչո՞ւ եք մեկ մեկու խեղդում, — լսելի եղավ մի ուրիշ ձայն և ապա աղմուկը դադարեց:

Վերջինը վանքի տնտեսն էր, մի հինավուրց ալևոր, որ տակավին յուր բարկության մեջ մռմռալով, դուրս էր գալիս ախոռատան գավիթից: Տեսնելով ինձ, նա լռեց, և խորին կերպով գլուխ տվեց:

—Այս ի՞նչ կռիվ էր, ծերուկ, — հարցրի նրան:

—Վանքի խանումները (տիկինները) մեկ մեկու երեսը ծվատում էին, — պատասխանեց նա ավելի սառն կերպով:

—Շա՞տ են այս խանումները:

—Սատանան գիտե... դաշտի գայլերն համբարք ունին, նրանք չունին...

— Ի՞նչ են շինում այստեղ:

— Ի՛նչ են շինում... — կրկնեց ծերունին կոպիտ ժպիտով. — մեկը վանքի հացն է թխում, մյուսը խմորն է անում, մեկը ոչխարն է կթում, մյուսը բուրդ է մանում... շատերն էլ ուրիշ-ուրիշ «մասլահաթներ» ունին... հասկանում ե՞ս:

— Հասկանում եմ... — ասացի և հեռացա:

— Դե՜, գնա՜, աստված ողորմի քո հորը, — ասաց իմ հետևից ծերունին:

Գյուղի մեջ ես չմտա, նա զզվելու չափ կեղտոտ և անտանելի էր, նա չէր նմանում այն գյուղերին, որոնց արտաքին տեսքն անգամ ցուցանում է, թե այնտեղ բախտավոր և հանգիստ ապրում են մարդիկ: Ես անցա գյուղի մոտից. անցա դեպի մշակության դաշտերը: Ամեն կողմ երևում էր ամայություն, դեպի ամեն կողմ տարածվում էին անապատներ. մշակված էին խիստ սակավ տեղեր միայն: Ինձ պատահեց մի գյուղացի, որ դառնում էր հունձքից:

— Բարև, եղբայր, — ողջունեցի նրան:

Գյուղացին շփոթվեցավ, նրան ողջունում էր մարդ, որ յուր դիրքով բարձր էր նրանից. նա զարմացավ, որ իրան մարդի տեղ են դնում: Նա խոնարհությամբ գլուխ տվեց և փայտի նման մեխվեցավ գետնին: Խե՛ղճ մարդ, կարծես նրանում լեզու չկար...:

— Ինչպե՞ս է գնում ձեր գործը, — հարցրի ես:

— Վատ է, աղա, շա՛տ վատ... ցանքերը այս տարի չեկան, մի կողմից ցավը անասունները ջարդեց. էլ ի՞նչ մնաց. մեր հույսը ուխտավորների վերա էր. էն էլ մեր մեղքիցը էսպես պատահեց...:

Ուխտավորների կողոպտվիլն գյուղացին մի զգալի վնաս է համարում յուրյան. նա չէր ցավում, որ պատվելի մարդիկն վիրավորվել են, սպանվել են, նրանց կանայքը խայտառակվել են, այլ ցավում էր այն մասին, որ ինքը զրկվեցավ այն շահերից, որ սպասում էր նրանցից:

— Մի՞թե ուխաավորներն չլինեին, դուք չե՞ք կարող ապրել. ցանեցե՛ք, շատ ցանեցե՛ք, և ձեր արդյունքով սովորեցեք ապրիլ:

—Որտե՞ղ ցանենք, աղա, ամեն լավ տեղերը թուրքերն մեր ձեռքից խլել են. ամեն լավ արոտներն նրանց ձեռքումն է. մեզ ի՞նչ է մնացել:

—Ինչո՞ւ վարդապետները հոգ չեն տանում այդ մասին, չէ որ այս գյուղը յուր դաշտերով վանքին է պատկանում:

— Վարդապետները... վարդապետներն իրանց քեֆին են նայում... նրանց ի՞նչ հոգն է, թե գյուղացին աղքատ է, հաց չունի ուտելու... իրանք էլ մի կողմից են մեզ թալանում...

Վերջին խոսքերի միջոցին ես նկատեցի, շինականի աչքերն լեցվեցան արտասուքով. խե՛ղճ մարդ, ինչո՞ւ այնպես փղձկեցավ նա:

— Մի արտ ունեի, որ հորս ժամանակից ցանում էի, տանս հացը տալիս էր, — խոսեց գյուղացին բոպեական լռությունից հետո. — այն արտն էլ խլեցին ինձանից. տվեցին մեր դրկիցին:

— Ի՞նչ պատճառով խլեցին:

— Այն դրկիցի որդին «մեր հայր սուրբի» մոտ սպասավոր է, նրա համար խլեցին... Բայց ես անբախտ եղա, լավ որդի չունիմ, որ վանքումը ծառայե, կինս էլ մեռած է...:

— Գնա՛, եղբայր, աստված ինքը թող քեզ մի ճար անե, գնա՛ և համբերություն ունեցիր, կգա մի ժամանակ, երբ վարդապետներն այլևս չեն կարող տիրել ձեր ապրուստի և ընտանիքի վերա, այլ դուք ձեր ձեռքումը կունենաք նրանց սանձը...:

Գյուղացին իմ խոսքերից ոչինչ չհասկացավ, գլուխ տվեց և հեռացավ: Բայց նրա խոսքերն իմ մեջ խիստ, տխուր տպավորություններ թողեցին. ես երկար չէի կարողանում մոռանալ, թե վանական վարդապետը և թուրքի խանը յուրյանց գյուղացիների վերաբերությամբ միօրինակ հարստահարող են...:

Ես առավոտյան դուրս գալով, բոլորովին մոռացել էի, թե ոչինչ չեմ կերել. քաղցը սկսավ զգալի լինել, և էսօրվա արևը սաստիկ այրում էր. ես ստիպվեցա վերադառնալ դեպի իմ կացարանը: Շա՛տ ապրի իմ Մեսրոպը, նա ինձ համար պատրաստել էր մի թեթև, բայց խիստ ախորժելի ճաշ:

Ճաշից հետո ես աշխատեցի քնել, բայց հնար չեղավ, խռովված գլխին քունը մոտ չէ գալիս: Ի՞նչ անեմ, ինչո՞վ զբաղվեմ, եթե գնամ դուրս, դարձյալ նույն անախորժ պատկերներին պիտի հանդիպեմ: Նստեմ գրեմ, թո՛ղ նամակս երկար լինի, փույթ չէ, դու կկարդաս, դու սիրում ես այսպիսի բաների կարդալը: Ահա՛. —

Երբ որ քննում ենք նշանավոր վանքերի և ուխտատեղիների պատմական անցյալը, տեսնում ենք, որ վանքերը և ուխտատեղիները եղել են յուրյանց շրջապատող ժողովրդի թե բախտավորության և թե կործանման պատճառը: Թողնենք Դելֆյան Ապողոնի, Սպանդարամետական Բաքոսի և այլ դոցա նման տաճարները հեթանոս աշխարհի. թողնենք հարուստ Հնդկաստանի Օրանդեսը և Բենարեսը, թողնենք Դալայ-Լամայի Լհասսան — վեր առնենք արևելյան երկու մեծ ազգերի տաճարները՝ Քյաբան Մեքքայի մեջ և Սողոմոնի տաճարը՝ Երուսաղեմի մեջ: Արաբացվոց մեջ ղորեյյան ցեղը միշտ պատերազմում էր այն իրավունքի համար, որ յուր ձեռքում կարողանա պահել Քյաբայի բանալիները, որովհետև այս իրավունքի հետ կապված էին ոչ միայն նույն ցեղի նյութական շահերն, այլ ամբողջ Հեջազի բախտավորությունը: Երուսաղեմի մեջ ղևտացի քահանաներն նույն նպատակին էին ձգտում, որովհետև սուրբ տաճարի սպասավորության հետ կապված էր ոչ միայն մի ամբողջ քահանայական քաստայի բարօրությունը, այլև բոլոր Պաղեստինի բախտավորությունը նրա հետ կից էր:

Ուխտավորների բազմաթիվ կարավաններն բերում էին յուրյանց հետ առատ արծաթ և նույն արծաթով շահվում էր ժողովուրդը. նա փոխում էր այն արծաթի հետ յուր արդյունաբերությունները, յուր աշխատության պտուղները: Եվ այսպես, ուխտագնացությունը յուր մեջ ուներ և վաճառականական նպատակ. սուրբ տաճարի տոնախմբության հետ կից էր և առևտրական տոնավաճառը:

Բայց ապրուստի և գործունեության մի այսպիսի ձևը միշտ հաստատած է լինում խիստ խախուտ հիմքերի վրա. եղավ որ, մի կրոնական հեղափոխության պատճառով, սուրբ տաճարը կորցրուց յուր նշանակությունը, այն ժամանակ ուխտավորների երթևեկությունը դադարում է, և հետևապես թե վանքը և թե նրան շրջապատող Ժողովուրդը ընկնում են վերջին աստիճանի աղքատության մեջ և զրկվում են ապրուստից: — Որպես և Պաղեստինի հրեա ժողովրդի անկումը և նրա կանգնումը միշտ կապված էր սուրբ տաճարի կործանման և նորոգման հետ, այնպես էլ արաբները կորցրին յուրյանց նշանակությունը, երբ Քյաբան անցավ մահմեդական ազգերի ձեռքը:

Բայց նայելով Հայաստանի վանքերի և նրանց շրջապատող ժողովրդի վիճակին, բոլորովին հակառակ երևույթ ենք տեսնում: Ժողովուրդը որքան մոտ է վանքին, այնքան ծույլ, տխմար և աղքատ է, բայց որքան հեռանում է, այնքան թուլանում է վանքի վատ ազդեցությունը, և ժողովուրդը ավելի բախտավոր և գոհ է յուր վիճակից:

Ի՞նչ է պատճառը:

Հայոց վանքերի ուխտագնացության հետ կապված չէ որևիցե առևտրական նպատակ, հայոց վանքերի տոնախմբության ժամանակ չեն լինում տոնավաճառներ, այստեղ մթերքի և արդյունաբերության փոխարինություն չէ լինում արծաթի հետ: Ուրեմն վանքի գյուղացին, կամ նրան շրջապատող ժողովուրդը ավելի չեն շահվում ուխտավորներից. նրանք մինչև անգամ ուտելու իրեղեններ վաճառելու բախտից զրկված են, որովհետև ուխտավորներն կերակրվում են վանքի սեղանից և իրանց զոհելու անասունները գնում են վանքի հոտերից:

Հայոց վանքերում լինում է տոնավաճառ, բայց բոլորովին ուրիշ տեսակ. վաճառքի նյութը բոլորովին աներևույթ, բոլորովին վերացական մի առարկա է. վաճառքի նյութը սուրբ տաճարի և նրա մեջ բնակվող սուրբի շնորհներն և օրհնությունն է — իսկ այդ շնորհավաճառությունից շահվում են վարդապետներն միայն: Գյուղացին զուրկ է այս տեսակ առևտուրից, որովհետև նրա մշակության դաշտերում շնորհ և օրհնություն չէ բուսնում...:

Գյուղացուն մնում է մի բան միայն, այն է՝ ուխտավորներից ստացած նվերը, որ նրան տալիս են որպես ողորմություն: Բայց նվերներն և ողորմությունն միշտ լինում են վնասակար, որովհետև նրանք խլում են մարդից նրա ինքնագործունեությունը, զցում են ծուլության և աղքատության մեջ:

Բոլոր հայոց վանքերի գյուղացիներն ծույլ և աղքատ մարդիկ են և նրանց ընտիր օրինակը կարող է լինել Էջմիածնա Վաղարշապատը: Այս գյուղի մեջ մի քանի ընտանիքներ միայն բացառություն են կազմում, մի քանի տուներ միայն ուտելու հաց ունեն, և դրանք այն բախտավորներն են, որոնք ունեն վանքի պարիսպների մեջ ազգային կամ բարեկամ «հայր սուրբեր...»:

Բայց ես սխալված չեմ լինի, եթե դնեմ մի երկրորդ և ավելի խորին պատճառ վանքին մոտ եղող բնակիչների անգործունեության և նրանց ծուլության:

Վանական աբեղան աշխարհից հրաժարված մարդ է. նա իրան նվիրել է ճգնավորական կյանքին... նրա քարոզներն միշտ լի են այսպիսի խոսքերով՝ «Աշխարհս մի փուչ աշխարհ է, նրա մասին հոգ տանել պետք չէ. մարդը այս աշխարհում մի առժամանակյա հյուր է, այսօր կա, վաղը չկա... Մտածեցեք ձեր հոգու համար, աշխատեցեք երկնքում ձեզ համար տեղ պատրաստել և դա կլինի ժամով, աղոթքով, պասով և պատարագով ևն...»: Այսպիսի քարոզներն՝ բացի մարդուն անփույթ շինել իրական կյանքի և նրա պետքերի մեջ՝ ուրիշ նշանակություն չունին. այսպիսի քարոզներն նույնպես խլում են մարդից նրա աշխարհաշինության ոգին, մեռցնում են նրա մեջ աշխատության եռանդը:

Ես արդեն ձանձրացրի քեզ, սիրելի ընկեր, այսքան երկար գրելով հայոց մի վանքի մասին, բայց ես տալիս եմ քեզ մի հատիկ օրինակ միայն ամբողջ տեսակից, որից դու գաղափար կստանաս մեր բոլոր վանքերի մասին. նրանք շատ չեն զանազանվում միմյանցից.

Բացի ծուլությունը և անհոգությունը հայոց վանքերին մոտ եղող բնակիչներն ունին ուրիշ և ավելի վատ հատկություններ, այն է՝ վերին աստիճանի անբարոյականություն և հավատքի մեջ թուլություն: Առաջինը՝ բնակիչների կուսակրոն աբեղաների հետ ունեցած հարաբերության արդյունքն է, իսկ երկրորդն՝ նույնիսկ աբեղաների գայթակղեցուցիչ օրինակների ծնունդ է... կրոնափոխություններն և աղանդներն է... Կրոնափոխություններն և աղանդներն հայտնվում են ավելի վանքերի պարիսպների մոտ, որովհետև ոչ մի բան այնպես չէ թերահավատացնում և մոլորության մեջ ձգում ռամկին, որպես յուր վարդապետի չար օրինակը:

Այստեղ հարկավոր եմ համարում հիշեցնել քեզ Եզնիկի՝ մեր հինգերորդ դարու փիլիսոփա աբեղայի խոսքերը. «Այն որ սյուն է եղած և բոլոր շինվածքը յուր վերա հաստատված ունի, եթե խորտակվի, բոլորն էլ դեպի ցած կկործանե: Այնպես էլ առաջնորդն (ուղղություն տվող անձն) եթե աստուծո կամքին համեմատ չէ վարվում, ամեն եղբայրությունը սատանային կմատնե, և փոխանակ առաջնորդելու՝ մոլորության պատճառ կլինի: Մեծ հերձված և անբժշկելի չարիք է այնպիսի առաջնորդությունն, որովհետև մարդիկ օրինակին ավելի են նայում, քան ճշմարտությանը»:

Մինչ զբաղված էի այս խոսքերը գրելով, հանկարծ աչք ընկավ վանքի բակը, տեսա խուցերի մեկի միջից, աղաղակելով, մինը մյուսին հրելով, դուրս թափվեցավ մի քանի մանուկներ: «Օհո՛, այստեղ վարժատուն էլ է եղել...»:

— Երանի՛ թե չլիներ, — լսելի եղավ մի ձայն:

Ետ նայեցի, իմ սենյակում կանգնած էր վանքի տնտեսը, նույնը, որին տեսել էի առավոտյան երկու «վանական տիկինների» կռվելու ժամանակը:

—Ինչո՞ւ եք այսպես խոսում, — հարցրի ես:

—Ես այս մազերը այս վանքի մեջ եմ սպիտակացրել, — նա ձեռքը տարավ դեպի գլուխը, — իմ մեղավոր աչքերն շատ բաներ են տեսել... այս լակոտներն այստեղ մի լա՛վ բան չեն սովորում..

Չգիտեմ, ինչո՞ւ ես դարձյալ հիշեցի Եզնիկի խոսքերը. «Պետք չէ կրոնավորին (կուսակրոնների վերա է խոսքը) մանուկների հետ կենակից լինել...: Կրոնավորն եթե երկինքը բանալու լինի՝ չմտնես, եթե հրեշտակի վարք ունենալու լինի՝ չհավատաս»:

Ես այլևս չհետաքրքրվեցա վանքի վարժարանով, միայն հարցրի տնտեսից, թե ի՞նչ գործով եկած էր ինձ մոտ:

Ծերունի տնտեսը ծոծրակը քորեց, մի քիչ հազաց և գլուխը այս կողմ այն կողմ թափ տվեց — այս բոլոր ցույցերից երևում էր, որ նա մի բան կամենում է ասել, բայց դժվարանում է:

— Ասա, ի՞նչ կա:

Ծերունին դարձյալ սկսեց կմկմալ: Նույն միջոցին վանքի աբեղաներից մեկը, որ կարծես դռան հետքում հսկում էր, տեսնելով տնտեսի անհաջող դեսպանախոսությունը, ներս մտավ: Նա եկավ նստեց իմ մոտ, և ձեռքերը տրորելով, խոսեց.

— Ախար վանքումը մի կարգ կա, օրինած, մեր ապրուստն էլ ուխտավորներից է... էն էլ այս տարի մեր բախտից էսպես էլավ... ինչ որ մեզ պետք է հասներ, ավազակներն տարան...:

—Լավ, ի՞նչ եք կամենում:

—Ի՞նչ պետք է, օրինած, ձեզ պես աղաներն վանքի կարգն իմանում են... «դարպաս» կա, «խաչհամբույր» կա... եթե առանձին պատարագ էլ մատուցանել տալու լինիք հոր հոգուն, էն էլ յուր հարկն ունի...:

—Որքա՞ն կարժե մի առանձին պատարագը:

—Որքա՛ն պետք է արժենա, շատ-շատ մի երկու թուման... բայց ձեր նման աղաներն, իհարկե, վարդապետներին մի բանով ավելի կշահեն... մենք էլ միշտ աղոթող ենք...:

Վարդապետի մի այսպիսի սակարկությունը ինձ խիստ անախորժ թվեցավ, և ես պարզ նրան պատասխանեցի, թե ես իբրև ուխտավոր այս վանքը եկած չեմ, այլ ուխտավորների ցավալի դեպքերն ինձ բերավ այստեղ, որպեսզի նրանց որևիցե օգնություն մատուցանեմ:

Բայց վարդապետը պնդերես մեկն էր, նա իմ պատասխանով չբավականացավ, և կրկին լեզուն ծռմռելով, խոսեց.

— Թո՛ղ էսպես լինի, աղա, բայց մենք էլ խեղճ ենք, ազգի համար աղոթում ենք այստեղ...: Անցյալ տարի աղա Կ-ը եկավ մեր վանքը, շե՛ն մնա նրա տունը, քսան թուման տվեց, և մինչև այսօր մենք նրա հոր-մոր և օխտը պորտի անունները հիշում ենք մեր պատարագների մեջ...:

Ես տեսա, որ վարդապետը ինձանից, ինչպես ասում են, «ձեռք քաշելու» միտք չունի, մի քանի արծաթ պետք էր զոհել նրա ճանկերից ազատվելու համար:

— Ա՛ռ այս արծաթը, — ասեցի, — բայց աղոթք և պատարագ ինձ պետք չեն, ես ինձ համար աղոթում եմ:

Աբեղան առանց կարմրելու ընդունեց արծաթը և լի դժգոհությամբ հեռացավ: նախասենյակից ես լսեցի այս խոսքերը. «Դա հայ չէ, անհավատ է...: »

— Դու լավ չարեցիր, աղա, — ասաց Մեսրոպը, որ կանգնած լսում էր մեզ:

— Ինչո՞ւ:

— Դու բարկացրիր հայր սուրբին, նա կանիծե քեզ:

—Թո՛ղ անիծե, ես անեծքից չեմ վախենում:

—Դա լավ չէ, հոգևորի անեծքը ծա՛նր բան է:

—Աստված անիրավ անեծքը չէ ընդունում:

Մեսրոպը լռեց, բայց դարձյալ իմ խոսքերն նրան բավականություն չտվեցին:

Ես մյուս առավոտը թողեցի վանքը:

Անցնելով Մագվա դաշտից, ես այցելություն գործեցի և Ս. Թադեոս առաքելոց վանքին: Հայաստանի այդ նախկին սրբարանների հոյակապ կերպարանքը իսկույն հարուցին հիշողությանս մեջ այն հինավուրց ավանդությունները, որ իմ պառավ տատը ջերմեռանդությամբ տպավորել էր սրտիս մեջ: Բայց ես Ս. Թադեոս առաքելոց վանքի մասին ոչինչ գրելու չեմ քեզ. դու չես տեսնելու մի նոր բան: Ինչ-որ մինչև այսօր իմ հայոց վանքերի նկարագրությունների մեջ կարդացել ես, այժմ պիտի կարդաս նույնը, այսինքն՝ «կղերի մոլի վարք, վանքի եկամուտների անիրավաբար վատնողություն և շնորհավաճառությունը վերջին աստիճանի հասած17...: »

Մի բանով միայն այդ վանքերն պահպանել են իրանց հին նահապետական բնավորությունը, այն է, որ նրանց դռներն բաց են անում աղքատների առջև, և ամեն վաստակած ճանապարհորդը կարող է գտանել նրանց մեջ հաց ու հանգիստ:

Դու գիտես, ընկեր, որ ես չեմ սիրում քաղվածքներ անել ուրիշի գրվածքից, բայց այս անգամ իմ նամակը մտադիր եմ վերջացնել Եզնիկի խոսքերով: Այս երևելի մտածողը ապրում էր 5-րդ դարու սկզբումը, Սահակի և Մեսրոպի դարումը, այն դարումը, որին մենք պարծենալով «ոսկի» ենք կոչում, այն դարումը, որի եկեղեցականներն մի գեղեցիկ բացառություն են կազմում մինչև այսօր եղած իրանց դասակարգի մեջ: Բայց լսի՛ր, ինչպե՞ս է պախարակում Եզնիկը — այն երևելի եկեղեցականը՝ կուսակրոն աբեղայական կյանքը. «Անասունների միսը չեն ուտում, բայց իրանց եղբորը անկշտանալի կերպով կեղեքում են. գինի չեն խմում, բայց հոգին արյունով շաղախում են, ամուսնացածներին ատում են, բայց իրանք պիղծ խորհուրդներով միշտ պոռնկություն են գործում. վատ զգեստներ են հագնում, բայց ագահությունով այրվում են. այսպիսիներից արժանի է փախչել և նրանց հետ հաղորդակցություն չունենալ: » — «Մեր բերանները հոտել են պաս պահելուց, շարունակում է նույն փիլիսոփա-աբեղան, և մեր լեզուներն բթացել են սաղմոսներ կարդալուց, բայց այն բանը, որը աստված պահանջում է, չունինք, այսինքն է՝ սեր և խոնարհություն. շրթունքներով միայն սիրում ենք աստծուն և իզուր ենք աշխատում...»:

Տասն և չորս դար անցել է այս խոսքերի վերա, բայց մեր աբեղաները ամենևին չեն փոխվել... տասն և չո՛րս դար... դա քիչ չէ...: Եվ ես այսօր Եզնիկի խոսքերից ավելի հատկանիշը չեմ կարող գտնել, մեր վանքային աբեղաների պատկերը նկարելու համար:

Կուսակրոն աբեղայությունը, այլ խոսքով, վանքային միաբանությունը մի՛շտ եղել է մեր ազգի կյանքում մի անպիտան հասարակություն: Եղիշեներն, Խորենացիներն, Մեսրոպներն չեն կարող սրբել նրանց նախատինքը. այդ խնկելի մարդիկ եղել են իրանց ժամանակի հալածակա՛ն զոհերը, հալածակա՛ն նույնիսկ ծույլ և տխմար եկեղեցականներից...18:

Կարդա՛, եղբայր, Խորենացու ողբը, կարդա՛ Ղազար Փարպեցու թուղթը, կարդա՛ Եզնիկի վերջին խոսքերը, և դու կհամոզվիս իմ ասածների մեջ: — Մենք երբե՛ք չենք ունեցել ծաղկյալ եկեղեցականություն, մենք ունեցել ենք մի քանի պաշտելի եկեղեցական անհատներ միայն..:

ՆԱՄԱԿ Գ

Անցնելով Արաքսը, հինգ օրից հետո ես հասա Խոյ քաղաքը: Դա մեր հին Հերն է. մի կեղտոտ քարվանսարայում (պանդոկում) իջևանեց մեր կարավանը: Եվրոպացի մարդու երևանալն ասիական քաղաքում իսկույն շշուկ բարձրացրուց: Եվ քաղաքի իշխանը, որ էր մի շահզադա (արքայազն) Նաիբուլ-Սալթանայի տոհմից, ուղարկում է լրտեսներ, գտնելու իմ ով լինելը: Ես հայտնեցի՝ թե բժիշկ եմ, իսկ ազգով ինգլիս, և գնում եմ Թեհրան անգլիացոց դեսպանատունը:

Իմ բժշկական արհեստը և իշխանի որդու ու նրա կնոջ հիվանդությունն առիթ տվեցին ինձ շահզադայի հետ տեսնվելու: Նա առաջարկեց ինձ յուր հիվանդները, որոնց պատճառով ես ստիպվեցա մի քանի օր Խոյում մնալ: Մերժել իշխանի կամքը չէր կարելի, որովհետև ինձ ասացին, եթե հակառակ վարվեմ, նա կարող էր վրեժխնդիր լինել, կարող էր մարդիկ ուղարկել և ինձ ճանապարհին կողոպտել և սպանել տալ: Այսուամենայնիվ, նրա բռնի ստիպմունքը ինձ համար խիստ քաղցր հետևանքներ ունեցավ. ես ծանոթացա պարսից հարեմական դրության հետ:

Բժշկի առջև հարեմի փակված և անմատչելի դռներն բաց են. նույն օրում ներկայացրին հիվանդները: Իշխանը ինձ հետ էր, երբ առաջին անգամ մտանք կանանոցը: Ներքինիների բազմությունը ցամաք և լերկ երեսներով, սևամորթ աղախինների և սպասավորների խումբերն սկզբում ինձ վերա խիստ վատ տպավորություն գործեցին: Այս անզգա խառնիճաղանջի հսկողությունը հանձնված էր պահպանությունը բազմաթիվ կնիկների, որոնք պատկանում էին մի ամուսնի, այն ևս ծերուկ մի ամուսնի...:

Իշխանի որդու հիվանդությունն հասարակ տաքցոց էր, նա անցավ շուտով, բայց երբ մտանք նրա տիկնոջ օթյակը, նա ինձ ասաց.

— Բժշկապետ, ի՞նչ որ կուզես կտամ քեզ, իմ ախոռը լիքն է ամենագեղեցիկ նժույգներով և իմ մթերանոցում թանկագին խալաթներն անթիվ են: Դու կստանաս ամենապատվականը նրանցից, միայն թե տիկինը պետք է բժշկվի:

Ես ուշադրություն չդարձրի նրա խոսքերին և պատրաստվեցա քննել հիվանդին: Նա պառկած էր թանկագին շալերից պատրաստված անկողնի մեջ և նրա գլխի տակին դրած էին վարդագույն թավիշից բարձեր, որ զարդարած էին ծաղկավոր նկարներով և ոսկի փունջերով:

Հիվանդը մի մանկահասակ կին էր, որի հասակը դեռ չէր անցել քսան և երկուսից. դա արևելքի այն կնիկներից էր, որի դեմքն այրում է, որի հայացքի մեջ կրակ և ջերմություն կա, մարմնական տկարությունն անգամ յուր բոլոր կործանիչ զորությամբ չէր կարողացել խլել նրանից այս հատկությունը: Երբ ես սկսեցի հարցուփորձ անել հիվանդից, իսկույն նրա փոխանակ պատասխանեց ամուսին իշխանը, կարծես թե ողորմելի կինն իրավունք չուներ և յուր հիվանդության մասին խոսել օտար մարդու հետ, այն ևս բժշկի հետ:

— Բժշկապետ, — ասաց նա, — որ տեղն է ցավում, հայտնի չէ, ինքն էլ չէ իմանում, բայց ուտել՝ չէ ուտում, խմել՝ չէ խմում, ամբողջ գիշերներով մնում է անքուն, միայն լաց է լինում և օրըստօրե մաշվում է: Ասում են, չար ոգիներ տանջում են դրան, բայց մեր երկրի ամենահմուտ կախարդներն հեռացնել չկարողացան դևերին դուք, բժշկապետ, ձեր դեղերին ավելի մի՛ վստահացեք, թե կարող եք, հմայքներով մի բան արեք:

Իշխանը կարծում էր, թե բժիշկն անպատճառ և կախարդ պիտի լինի. ես չուզեցի նրան հակառակել և պատասխանեցի.

— Կտեսնենք:

Իշխանն իմ թերի պատասխանով չբավականացավ, նա դարձյալ սկսեց պնդել կախարդության մասին, և հավատացնում էր, թե ինքն այդ բաները ավելի լավ է հասկանում: Այդ մարդիկն ամեն բանի մեջ աշխատում են մնալ իշխան... ամեն բան նրանք գիտեն... և ամենի մեջ աշխատում են տիրող և բռնաբարող լինել... հրամաններ տալ...:

— Դուք կարո՞ղ եք ինձ թույլ տալ մի քանի րոպե մենակ լինել հիվանդի մոտ, — դարձա ես դեպի իշխանը:

Այս հարցն իշխանին կատաղության չափ զարմացրուց:

—Ի՞նչ կա, — հարցրոլց նա զայրանալով:

—Ես կամենում եմ կախարդության մի փոքրիկ փորձ անել... ձեր ներկայությունն կխանգարե...:

Նա փոքր-ինչ մտածելուց հետո ասաց.

— Բայց այստեղ պետք է գտնվի իմ ներքինիներից մեկն:

— Չէ կարող:

— Իսկ աղախինների՞ց:

— Կարող է:

— Քի՛զա, — ձայն տվեց իշխանը և իսկույն ներս մտավ մի եթովպացի աղջիկ:

Իշխանն տվեց հարկավոր պատվերը աղախնին և կամենում էր հեռանալ: Ես ասացի նրան.

—Հրամայեցեք, մինչև գործողությունն չվերջանա, ոչ-ոք չհամարձակվի այստեղ մտնել:

—Լավ, — ասաց նա և դուրս գնաց:

Բարեբախտաբար Քիզան ուրիշ լեզու չգիտեր բացի արաբերենից. նա դրած էր մեր մոտ որպես մի զույգ աչքեր միայն հսկելու համար: Ես մոտեցա հիվանդին և նստեցի նրա մոտ: Քննելով նրա մարմինը, ես գտա իշխանի ասածը բոլորովին ճշմարիտ. նրա ոչ մի տեղում ցավի նշաններ չէին երևում, կուրծքը, երակի զարկը, գլուխը, ամեն ինչ յուր կանոնավոր դրության մեջն էր:

— Ո՞րտեղդ է ցավում, — հարց արի հետո:

Նա յուր գեղեցիկ ձեռը տարավ դեպի կուրծքը, և սրտի վերա դնելով, ասաց.

— Այստեղ...

— Հասկացա...

Հիվանդի ցավն բարոյական էր՝ պետք էր այդ գաղտնիքը երևան հանել: Բայց որպե՞ս: Մինչև այս մտածմունքի մեջ էի, նա հարցրուց.

—Պարոն բժշկապետ, դուք իշխանին ասեցիք, թե կախարդություն գիտեք: Այդպես չէ՞:

—Այդպես է: Այո՛, — ասեցի:

—Կարո՞ղ եք այնպես անել, որ ինձ ջիններն այստեղից վեր առնեին, տանեին հեռու, հեռու, այնտեղ, ուր ես ցանկանում եմ...:

—Ձեզ ի՞նչ օգուտ դրանից:

—Այն ժամանակ ես կբժշկվեի...

—Դա փոքր-ինչ դժվար է:

Նա մտածմունքի մեջ ընկավ, և կարծես մի հուսահատական ամպ մռայլեց նրա գեղեցիկ և փայլուն աչքերը: Ռոպեական լռությունից հետո նա խոսեց.

— Եթե իմ ասածը դուք չեք ուզում կատարել, աղաչում եմ ձեզ, այնպես արեք, որ «նա» այստեղ չգա և իմ աչքին չերևնա...

— Ո՞վ: Ո՞ւմ համար եք խոսում, — հարցրի նրանից:

Հիվանդն ամենևին չլսեց իմ հարցմունքը և կիսախելագար կերպով շարունակեց.

— «Նա» ինձ հանգիստ չէ թողնում... «նա» մի՛շտ այստեղ է... գիշերները երևում է երազի մեջ... ցերեկներով ելանում է արթնության մեջ... «նա» միշտ ասում է «ինձ խոսք տվեցիր...» այսպես տանջում է «նա» ինձ...:

Խե՛ղճ կին, նրա սրտի հետ կապված էր մեկ «նա», բայց ո՞վ է այդ «նա»-ն, այդ մասին նա ոչինչ չասեց, որովհետև մի սաստիկ խռովություն վրդովեց նրան, և նա ընկավ խորին զառանցությունների մեջ:

Ես գործ դրեցի մի քանի բժշկական հնարներ, մեղմացնելու խեղճ հարեմական զոհի ուղեղի սաստիկ բորբոքումը և հեռացա նրա օթյակից: Բայց ինձ տանջում էր ողորմելի կնոջ գաղտնիքն, որ այնքան սերտ կապ ուներ նրա հոգեկան հիվանդության հետ:

Այնտեղից դուրս գալեն հետո իշխանն ինձ կանչեց իր մոտ. նա այլևս թույլ չտվավ ինձ պանդոկը գնալ և հրամայեց իմ իրեղենները բերել յուր տունը: «Դուք մեր հյուրը կլինեք, ասաց նա առատասրտությամբ, և կմնաք այստեղ, մինչև հիվանդներն լավանան»: Իշխանի բոլոր խոսքերի մեջ մեծ տեղ էր բռնում հրամայական եղանակն. նա կարգադրում էր մի անցորդ ուղևորի ժամանակը առանց նրա կամքը հարցնելու:

Ինձ տեղավորեցին դրսի տան սենյակներից մեկի մեջ, որ շատ հեռու չէր կանանոցից: Ընթրիքի ժամանակ իշխանն ինձ պատվեց յուր հետ սեղանակից անելով. նրա մոտ նստած էին տեղային բարձրաստիճան մեծամեծներից մի քանի հոգի: Կերակուրներն բերվեցան միանգամով, որ շարված էին առանձին-առանձի բոլորակ մատուցարանների վերա: Յուրաքանչյուր երկու հոգու առջև դրվեցավ մի մատուցարան, բայց իմ առջև առանձին մեկը: Ես կարծեցի, թե դրանով իշխանն կամենում էր ինձ առավել պատվել, բայց հետո հասկացա, որ դա ուներ յուր հատուկ պատճառը: Նրանք ուտում էին խառն կերպով միևնույն պնակից, միևնույն ափսեից, և միևնույն գավաթով խմում էին. բայց նրանցից և ոչ մեկը ձեռք չէր մեկնում իմ բաժնին: Ես առանձնացած էի որպես սամարացի, ինձ հետ չէին խառնվում: Սեղանի վերա չերևացին ոչ դանակ և ոչ պատառաքաղ, դրանց տեղ գործ էին ածում իրանց մատները, ես էլ հետևում էի նրանց օրինակին: Ոգելից ըմպելիքների փոխարեն դրած էին մեծ-մեծ ամաններով շերբեթ, դա շաքարով պատրաստված մի տեսակ օշարակ է, որ համեմած է կամ ռեհանի սերմերով և կամ կիտրոնի թթությունով: Շերբեթը խմում էին ահագին փայտյա շերեփներով, որոնց գլուխը մակույկաձև փորված էր, իսկ կոթը զարդարած էր գեղեցիկ դրվագներով: Կերակուրներն վատ չէին պատրաստված, ամենի մեջ երևում էր պարսկական նրբաճաշակ շռայլությունն: Բայց ինձ վերա վատ տպավորություն գործեց այն, որ ես առանձնացած էի սեղանից, որպես մի պիղծ պարիաս բրահմանի սեղանից, թեև ինձ շատ հաճելի չէր, նրանցից մեկն յուղի մեջ թաթախված ամբողջ ձեռքը կոխեր իմ պնակի մեջ:

Սեղանից ավելացածը պետք է ուտեին դրսում ծառաներն. բայց ես իմացա, ինձանից ավելացածն շների առջևն ածվեցավ, և ամանները կոտրատեցին, դեն գցեցին...:

Ընթրիքից հետո մատուցին մի-մի ֆինջան դառն դահվե, հետո սկսեցին ծխել: Այստեղ դարձյալ խտրություն: Նրանք չէին ծխում այն ղեյլանից (ծխաքարշ), որին իմ շրթունքն դիպել էր, բայց իրանք հերթով փոփոխում էին միևնույն ղեյլանը:

Իշխանի հյուրերն հեռացան խիստ ուշ. նրանք խոսում էին այս և այն կառավարչական գործերի մասին, և նրանց խոսակցությունն լի էր փաղաքշական, կեղծ ու պատիր խոսքերով: Ոչ մի ազգի լեզվի մեջ չկար այնպիսի տիտղոսներ և այնպիսի մեծարանք արտահայտող բառեր, որպես պարսկի լեզվի մեջ, դրանք գործ են ածվում ոչ թե հասարակ խոսակցության մեջ, այլև նամակներում, աղերսագիրներում և բոլոր պաշտոնական թղթերում, որ ուղղված էին այս և այն իշխանին: Եվ արաբական լեզվի պարսկերենի հետ հաջող բարդություններն դյուրացնում են այս խայտաճամուկ տիտղոսները կազմելու: Այստեղ կդնեմ նրանց հայերեն թարգմանությունները, քեզ փոքր-ինչ գաղափար տալու համար, որովհետև դու պարսկերեն չես կարող կարդալ: Օրինակ. «Ո՛վ աստվածանման» — «Ո՛վ արարածների ապաստանարան» — «Ո՛վ երկնքի նման հորինվածք ունեցող» — «Ո՛վ աստծո շուքը» — «Ո՛վ երկրպագության կետ» — «Ո՛վ հրեշտակներից սպասավոր ունեցող» — «Ո՛վ աստծու օրինակ» — «Ո՛վ հոգիների ապաստանարան»: — Այս տիտղոսներն գուցե մնացել են այն ժամանակից, երբ պարսիկներն

իրանց պետերին բարձրացնում էին մինչև Գերագույն էակի աստիճանը: Ահա մի քանի խոնարհություն ցույց տվող արտասանություններ.

«Քեզ զոհ լինեմ» — «Քո ոտքերի հողը դառնամ» — «Հոգիս քեզ մատաղ» — «Թո՛ղ քո ոտքերի փոշին համբուրեմ» — «Թո՛ղ քեզնից չարը հեռացնելու պատարագ դառնամ»:

Հարգություն ցույց տվող արտասանություններ.

«Իմ աչքի լո՛ւյս» — «Իմ գլխի պսա՛կ» — «Իմ հույս և ապավեն» — «Իմ երկնային ա՛ստղ» — «Իմ բախտի առարկա» — «Իմ կյանքի նպատակ»: — Այս բոլորը պետք է որպես կոչականներ հասկանալ առանց «ով»ի:

Ստրուկի լեզուն միշտ այդպես է լինում:

Ստրուկի լեզուն ճոխ է փաղաքշանք և հաճոյականություն ցույց տվող բառերով. նա գիտե, թե որպես պետք է աղերսել, և որպես պետք է ցույց տալ յուր ամենացած խոնարհությունը: Ստրուկի լեզուն ճոխ է հառաչանքներով, այս պատճառով և միջարկություններն նրա բառարանի մեջ մեծ տեղ են բռնում: Միթե այսպես չէ և մեր լեզուն: Ո՞վ ունի այնքան ձայնարկություններ, սրտի ցավը և տխրությունը հայտնող բառեր, որպես հայը: Բառերն ինքնըստինքյան չեն ստեղծվում, բառերն ծագում են ժողովրդի կյանքից: Հայի կյանքն անցել է լացով և սուգով. այս պատճառով նա տրտմություն արտահայտող բառեր շատ ունի: Եթե չես հավատում իմ խոսքին, կարդա՛, ընկեր, մի անգամ Նարեկը, հայոց այդ եղերական սաղմոսը, և դու կհամոզվես...:

Հյուրերի գնալուց հետո ես մնացի իշխանի մոտ մենակ. նա այն գիշեր չուզեց շուտով կանանոցը մտնել, երևի, ինձ հետ խոսելու միտք ուներ: Խոսակցությունն սկզբում խիստ հասարակ բաների վերա էր: Իշխանն զարմանում էր, երբ ես ասում էի նրան, թե ինչու նա կանանոցում, յուր ընտանեկան շրջանի մեջ չէ ճաշում և ո՛չ այնտեղ ընթրիք ուտելու սովորություն ունի:

—Ինչպե՞ս կարելի է այդ, պարոն բժշկապետ, կանանց հետ սեղան նստել. իմ մեծ որդին անգամ, որ ամուսնացած տղամարդ է, իրավունք չունի ինձ հետ ուտելու: Այն մարդիկը, որ այստեղ տեսար, մեր երկրի ամենանշանավոր ավագներն են, նրանց ես պետք է պատվեմ:

—Բայց մարդուն ամենից մերձավորն է յուր ընտանիքն, — նկատեցի ես:

— Այդ ուղիղ է, բայց ամեն մեկն յուր տեղը ունի:

Ընտանիքի գաղափարն մատչելի չէ մահմեդական մարդուն: Կինն նրա համար մի ստացվածք է, իսկ որդիքն նույն ստացքի արդյունքն են: Նա նայում է դրանց վերա այն աչքով, ինչ նայում է երկրագործն յուր հողի ու նրա արդյունաբերության վերա, որը կարող է նա փոփոխել, վաճառել և ամեն պիտույքի համար գործածել...:

Բայց իմ խոսակցությունն ընտանիքի մասին իշխանի մտքին բերավ յուր հիվանդ տիկինը, և նա հարցրուց իմ կարծիքը նրա առողջության մասին:

—Երբ որ դուք դիմում եք բժշկի խորհրդին, պետք է չբարկանաք, իշխան, նրա խոսքերն կվշտացնեն ձեզ:

—Լավ խոսքն մարգարիտ է, նա գետին չէ ձգվում, — պատասխանեց նա արևելյան առածով:

«Ճանաչողի մոտ», — ասացի մտքումս:

—Ուրեմն բարեհաճեցեք լսել: Կամենո՞ւմ եք, որ չմեռնի ձեր տիկինը:

—Ես դրա համար պահեցի ձեզ, որ նա առողջանա:

—Հավատացեք անկեղծ խոսքին, իշխան, ես և աշխարհի բոլոր բժիշկները ոչ մի օգնություն անել չենք կարող: Մի ճար միայն կա. — դուք պետք է արձակե՛ք ձեր տիկինը, եթե ցանկանում եք, որ նա կենդանի մնա, և ձեր կրոնքն թույլ է տալիս այդ անել:

—Արձակե՞լ նրան, — կրկնեց իշխանն զայրացած կերպով, — դա անկարելի է:

—Ուրեմն նա կմեռնի:

—Ինչո՞ւ, ինչո՞ւ իմ տան մեջ նա պետք է մեռնի. նա այստեղ ոսկու և գոհարների մեջ է ապրում, որտե՞ղ կարող է գտնել այս բախտը: Ես նրան ամեն բան տվել եմ:

—Բայց նա կարոտ է մի բանի, որ դուք չեք տվել և չեք էլ կարող տալ:

—Այն ի՞նչ է:

— Այն սերն է:

Իշխանն սկսեց ծիծաղել, որպես թե լսում էր մի հիմար խոսք: Բայց նա յուր ընտանեկան բռնակալության մեջ դարձյալ ուներ յուր առանձին փիլիսոփայությունը, մի փիլիսոփայություն, որ ծագում էր տիրելու, իշխելու և կոպիտ զորության սկզբունքներից:

— Ծաղիկներն ի՛նչ իրավունք ունին լույս և ջերմություն պահանջել արեգակից, — ասաց նա փոխաբերական կերպով. — դա կախված է նրա բազմախնամ ողորմությունից:

— Ես կպատասխանեմ ձեզ, իշխան, նույնպես այլաբանական ձևով. ծաղիկներն իրավունք կունենային պահանջել, եթե տեսնեին, արեգակն խտրություն է դնում նրանց մեջ, եթե տեսնեին, նա հավասար կերպով չէ թափում յուր լույսը և ջերմությունը նրանց վերա: Բայց արեգակն, որպես աստված, անաչառ և անկեղծ է:

Իշխանն զգաց, որ յուր համեմատությունն ծուռն էր, իսկույն փոխեց խոսքը.

—Իմ հարեմում կան ուրիշ շատ կնիկներ, և ավելի ազնիվ ու բարձր արյունից, քան ձեր այսօրվա տեսածը, նրանք բոլորն էլ գոհ են իրանց բախտից, և հնազանդվում են ինձ:

—Այդ բավական չէ: Հնազանդվելու և սիրելու մեջ մեծ տարբերություն կա: Առյուծն նույնպես հնազանդվում է յուր զսպողին, բայց նրան երբեք չէ սիրում: Նա հնազանդվում է, որովհետև երկաթի վանդակի մեջ է պահված...:

Իշխանն լռեց:

Իմ պատասխանները բավական հանդուգն էին, բայց նա ավելի չէր բարկանում: Ես հավատացած էի, որ նա յուր կյանքում չէր լսած այսպիսի մերկ ճշմարտություններ, բայց համբերում էր, համբերում էր ամենևին բանի տեղ չդնելով իմ խոսքերը:

—Ձեր խոսքերն զարմացնում են ինձ, պարոն բժշկապետ, — ասաց նա մի փոքր մեղմանալով: — Միթե այդպե՞ս են մտածում ֆրանգների երկրում:

—Այո՛, այդպես: Մեր երկրում կնիկներն սիրում են և պահանջում են տղամարդից փոխադարձ սեր:

—Դարձյալ սե՛ր, — ասաց նա գլուխը շարժելով: — Ի՞նչ է արդ սեր կոչված բանը, ես չեմ հասկանում: Ատրպատականի ամբողջ կես մասն ինձ է պատկանում, երկրի բոլոր հզորներն խոնարհվում են իմ կամքին, ամեն տեղ իմ «այոն» այո է, և «ոչն» ոչ: Բայց մի թույլ կին որպե՞ս կհամարձակվի հնազանդ չլինել յուր իշխանին: Ես նրան կսատկեցնեմ, ավազակի պես մորթել կտամ: Բայց արձակե՞լ, — ոչ երբեք:

—Այդ դուք կարող եք: Բայց միևնույն ժամանակ պետք է հասկանաք, որ կնոջ վերաբերությամբ դուք իշխան չեք, այլ հասարակ մահկանացու և հավասար ամուսին:

—Ես իմ ամուսնական պարտքը կատարում եմ, — պատասխանեց նա դարձյալ մեղմանալով: — Ես ավելի լավ եմ ճանաչում կինմարդու բնավորությունը. կինը նույնն է, ինչ որ երեխան, տուր նրա ձեռքը մի խաղալիք, նա արդեն գոհ է: Ես մինչև այսօր չեմ խնայել իմ հարեմից այն «խաղալիքները», որոնցով կնիկներն զվարճանալ սիրում են: Աշխարհի ամեն թանկագին զարդերն այնտեղ են մտնում և ուտելու բոլոր անուշեղեններն այնտեղ են սպառվում:

— Այդ ուղիղ է, իշխան, բայց դուք մոռացել եք մի բան, որը բազարում չեն ծախում, այն բանն մուտք չէ գործում ձեր հարեմում:

—Դարձյալ սե՞ը:

—Այո՛, սերը

—Որքա՛ն միամիտ եք, պարոն բժշկապետ:

Ես զարմանում էի, որպե՛ս ասիական բռնակալն թույլ էր տալիս մի օտար, անծանոթ մարդու մտնել յուր ընտանեկան գաղտնիքների մեջ: Բայց պետք է խոստովանել, որ պարսից ավագներն մեծ հարգանք ունին դեպի իմաստունները, և բժշկի վերա նույն աչքով են նայում: Այսուամենայնիվ, ես որոշեցի փոխել իմ խոսելու ձևը, և որպես ասում են, իշխանի «գլուխը

յուղել»: Ասիայում մարդ շուտով ընտելանում է կեղծավորության, մի շրջանում, որ ամեն ինչ կե՛ղծ է, ուղղախոսն միշտ դատապարտված է:

— Ձեզ, իշխան, աստված ստեղծել է ամենաբարձր փառավորության մեջ, շնորհել է ահագին զորություններ և դուք նրա ձեռքի ամենաբախտավոր արարածներից մեկն եք: Բայց աստված պահանջում է ձեզանից ողորմած լինել, որպես ինքն ողորմած է: Բարեհաճեցեք ընդունել իմ ամենախոնարհ խրատը, արձակեցեք այն կինը, եթե կամենում եք, որ նա չմեռնի:

Իշխանն ստեպ ծխում էր, բերանից մուխի ամպեր դուրս տալով: Նա լուռ էր: Ես առաջ տարա խոսքս.

— Ես որպես բժիշկ քննում եմ մարդերի մարմինը, սիրտը և հոգին, դրանք երեքն էլ սերտ կապ ունին միմյանց հետ: Մեկի տկարությունն խանգարում է մյուսի առողջությունը: Ես այսօր քննելով ձեր տիկնոջը, գտա, որ նրա հիվանդությունը բոլորովին հոգեկան է. նա յուր սիրտը տված է եղել ուրիշին, նախքան ձեր կանանոցը մտնելը...:

— Այդ ես գիտեմ... — պատասխանեց նա խորհրդական կերպով: — Բայց կանանոցը մտնելեն հետո նրա հաշիվները դրսի աշխարհի հետ վերջացան...:

— Լսեցեք, իշխան: Կանանոցի բարձր պարիսպներն, երկաթի ահագին դռները, ներքինիների և ստրուկների աչալուրջ հսկողությունը, — դրանց և ոչ մեկն կարող են փակել սրտի ճանապարհը. նա թռչում է ամեն տեղ, ուր և ցանկանում է, նա մտքից արագ է և կայծակից զորեղ...:

— Բայց ո՞վ կարող էր աշխարհում Ատրպատականի իշխանից ավելի գրավել նրա սիրտը:

—Այդ ես չգիտեմ: Սերն աստիճանների մեջ խտրություն չէ գնում: Բայց կա և ուրիշ բնական պատճառ:

—Ո՞րպիսի:

—Դուք անցել եք սիրելու և սիրվելու ժամանակից. ձեր հասակը պետք է յոթանասունից ավել լինի: Բայց տիկինը դեռ մանուկ է:

Երբ հասակի վերա խոսք եղավ, իշխանն, կարծես, մոռացավ մեր առաջին խոսակցությունը, և դարձավ դեպի ինձ այս հարցմունքով.

—Դուք, պարոն բժշկապետ, կարո՞ղ եք ինձ համար պատրաստել «կենաց ջուրը» և տալ ինձ այնպիսի մաջուններ, որ մանկացնեին իմ ծերությունը:

—Իմ բժշկարանում այսպիսի դարմաններ չկան:

—Դուք կեղծում եք, պարոն բժշկապետ, որ թանկ ծախեք ձեր վաճառքը, բայց ես կտամ, որքան կցանկանաք:

—Ես խաբելու սովորություն չունիմ:

—Մի դերվիշ խոստացավ ինձ համար պատրաստել «կենաց ջուրը». ամբողջ վեց ամիս նա իմ տանն էր. ես բերել տվի նրա պատրաստության համար ամեն ինչ, թեև նրանք շատ թանկագին էին, — մաքուր ոսկի, անծակ մարգարիտ, անտաշ ալմաստ և այլն: — Նա պատրաստեց, բայց իմ թշնամիներս հասկացան այդ բանը, դերվիշին կաշառեցին, և նա մի օր անհայտացավ:

—Ձեր մաքուր ոսկին, մարգարիտը և ալմաստն, երևի, ավելի պետք էին դերվիշին, քան «կենաց ջուրը» ձեզ համար:

—Ոչ. նա խաբեբա մարդ չէր:

Պարսկաստանում սակավ չէ այն մարդերի թիվը, որոնք իրանց համար արհեստ են շինել խաբել միամիտներին այլևայլ երևակայական խոստումներով: Տեսնում ես, մեկի համար խոսվում է, թե այնպիսի սուրմա (ծարիր) կարող է պատրաստել, եթե մարդ յուր աչքերը նրանով դեղե, կարող է աներևութանալ, և ուրիշներն նրան տեսնել չեն կարող: Մյուսն մի կախարդական գոտի կարող է պատրաստել, եթե մեջքիդ կապես, կարող ես մի ռոպեում աշխարհի մեկ ծայրիցը մինչև մյուսն թռչիլ: Մեկ երրորդն էլեքսիր պատրաստելու գաղտնիքը գիտե, որի մի կաթիլը կարող է հասարակ մետաղների ամբողջ լեռները զուտ ոսկի դարձնել: Այդ տեսակ մարդիկ գտանվում են առավելապես դերվիշների մեջ: Տեսնում ես, մի կիսամերկ, խելագար դերվիշի մասին, որ յուր ուղեղի զորությունը մաշել է աֆիոն ուտելով և բանգ19 ծխելով, խոսվում է այնպիսի առասպելական գիտություններ, որ արաբացոց «Հազար ու մեկ գիշերների» մեջ անգամ չէ կարելի գտնել: Բայց այդ մարդիկը որքան և հիմար լինեին, դարձյալ գիտեին, թե որպես պետք է վարվել միամիտների հետ: Նրանք իրանց մասին երբեք չեն ասում, թե այս կամ այն բանը գիտեն, և իրանց գիտության գաղտնիքը պահում են ամենայն խստությամբ:

Ինձ շատ անգամ պատահել է տեսնել Պարսկաստանում, մի մեծ իշխանի սեղանի գլխին լուռումունջ նստած է մի մարդ, մաշված հագուստով և մաշված դեմքով: Ամենքն հարգում են նրան և վարվում են նրա հետ շատ քաղաքավարի կերպով: Այդ մարդն տարիներով, ամիսներով այնտեղ ուտում է, խմում է, պառկում է: Տանուտերն նպատակ ունի դուրս քաշել նրանից գաղտնի գիտությունը, բայց նա պետք է այնքան աշխատի հաճոյանալ մեր իմաստունին, որ կարողանա կատարելապես գրավել նրա վստահությունը յուր հավատարմության մասին: Դա արժում է նրան բավական ծախսեր: Վերջապես, իմաստունն խոստանում է նրան մի բան տալ: Բայց այս բանը պատրաստելու համար այս և այն նյութերն պետք են, որոնք կամ շատ թանկագին են լինում և կամ բոլորովին հազվագյուտ: Օրինակ, կախարդական ծարիրը պատրաստելու համար հարկավոր է մի արմատ, որն միայն Տիբեթի լեռներումն է բուսնում, ո՞վ կգնա, ո՞վ կբերե այն արմատը, եթե ոչ ինքն դերվիշը, որ միայն ճանաչում է նրան: Ուրեմն պետք է հոգալ ճանապարհի ծախսը, որ գնա և բերե: Դերվիշը կգնա, էլ չի վերադառնա...:

Պարսկաստանում շատերի ամբողջ հարստությունն զոհվում է այս տեսակ խաբեբաների հնարագիտություններին. զարմանալին այն է, որ իրանք պարսիկներն արդարացնում են նրանց վարմունքը, որպես իմ հյուրասեր իշխանն արդարացնում էր դերվիշին, ասելով, թե յուր թշնամիներն եղան պատճառը, որ ինքը չկարողացավ խմել «կենաց ջուրը»:

Մեր գիշերային խոսակցությունն իշխանի հետ անցավ համարյա ապարդյուն. ես նկատեցի, նա մինչև անգամ ձանձրացավ, և ինձ բարի գիշեր մաղթելով, ինքն գնաց կանանոցը:

Գալով ինձ համար նշանակված կացարանը, ես տեսա, մեր Մեսրոպն այնտեղ նստած, մի մարդու հետ տաք-տաք խոսում էր: Նրանք խոսում էին հայերեն լեզվով: Ես զարմացա, իշխանի ապարանքի մեջ հայ մարդն ի՞նչ գործ ուներ: Բայց նա ինձ տեսնելով, իսկույն հեռացավ:

—Ո՞վ էր դա, Մեսրոպ:

—Դա հայ է եղել, աղա, բայց վաղուց թուրքացած է, իշխանի սարայդարն (դռնապանապետ):

—Ինչպե՞ս մարդ է:

—Լավ մարդ է, աղա, նա ասում էր, թե մեր օրենքը, մեր պատարագը և մեր մեռոնը դեռ սիրում է:

—Դու հավատո՞ւմ ես:

—Հավատում եմ, աղա, նա այս խոսքերը ասելու ժամանակ լաց էր լինում:

—Կանչի՛ր նրան:

Դռնապանապետն եկավ, խոնարհությամբ գլուխ տվեց և կանգնեց:

—Նստի՛ր:

—Այսպես էլ լավ է, աղա, — պատասխանեց նա, կրկին գլուխ տալով:

Ես գտա Մեսրոպի ասածը բոլորովին ուղիղ դռնապանապետի մասին. նա շատ բարի մարդ էր: Նրա հասակն արդեն անցել էր հիսունից, բայց որպես երկաթից ձուլած կազմվածքն դեռ բավական առույգ էր: Նրա կյանքի հետ կից էր մի ամբողջ եղերական պատմություն, որը չեր կարելի առանց սարսափելու լսել, թե ի՞նչ արկածներ առիթ էին տվել ողորմելի մարդուն ընդունել մահմեդականությունը: Բայց նա հոգով միշտ մնացել էր քրիստոնյա, թեև ծածուկ:

Բայց ինձ տանջում էր այն միտքն, արդյոք ծերունին գիտե՞ր մի բան հիվանդ տիկնոջ մասին: Նա պատմեց, թե տիկինն ազգով հայ է և Ս. գավառի մելիք Թ.-ի աղջիկն է: Նրա հայրն մի բռնակալ մելիք էր, և խիստ վատ էր վարվում ժողովրդի հետ. նա ամեն հնարներ գործ էր դնում պարսիկ իշխանին հաճոյանալու, որպեսզի ավելի անիրավաբար կարողանա հարստահարել յուր ձեռքի տակն գտնված հայերին: Այսպիսով կռիվն և հակառակությունն ժողովրդի և մելիքի մեջ անվերջ շարունակվում էր: Երկու կողմերն ևս իրանց ունեցածի մեծ մասը տուժեցին, պարսիկ իշխանին կաշառքներ և տուգանքներ տալով, որպեսզի մինը մյուսին վրեժխնդիր լինի: Մելիքն բոլորովին աղքատացավ: Բայց չարության կիրքն նրա մեջ դեռ չէր հանգչել. նա պարսիկ իշխանին յուր կողմն գրավելու համար՝ ընծայեց նրան յուր մի հատիկ գեղեցիկ աղջիկը, որ արդեն նշանված էր մի հայ երիտասարդի համար: Փեսան, երբ որ լսում է, թե յուր սիրուհին պետք է տարվի իշխանի կանանոցը, մի քանի ընկերներով գալիս է և ճանապարհի կտրում է, որ ազատե նրան: Բայց նույն իսկ աղջկա հոր մատնությամբ բռնվում է նա և քաղաքի հրապարակում գլխատվում է...:

— Այն օրից, — ասաց ծերունին, — երբ խեղճ աղջիկն լսեց յուր փեսացուի ցավալի մահը, այն օրից խելքը թռցրուց, և այն օրից հիվանդ է նա...:

Այս պատմությունն խիստ դա՛ռն տպավորություն ունեցավ իմ վերա. ես մտածում էի, բավական չէ՞ պարսիկ իշխանները մեր ժողովուրդը հալում, մաշում են. նույնիսկ հայերն մեկ մեկու միս են ուտում, մեկ մեկու տուն են քանդում... Եթե լավ քննենք մեր պատմությունը, մեր տխուր անցյալը՝ կտեսնենք, որ մեր բոլոր թշվառությանց պատճառն եղել ենք մենք՝ ինքներս:

Յուր պատմության միջոցին, ես նկատեցի, ծերունին նույնպես չկարողացավ սառնասիրտ մնալ, նրա աչքերն լցվեցան արտասուքով, նա հազիվ կարողացավ արտասանել վերջին խոսքերը. «Խե՛ղճ աղջիկ, կմեռնի նա...»:

Երբ մի փոքր հանգստացավ նա, հարցրուց.

—Ասացե՛ք, պարոն բժշկապետ, կապրի՞ նա:

—Կապրի, եթե հարեմից դուրս գա:

—Ես կազատեմ նրան, — պատասխանեց ծերունին հանկարծ ոգևորվելով, — այս ալևոր գլուխս դրել եմ նրա ուղուրին: Ես հազար անգամ փախած կլինեի այս դժոխքից, բայց մնացել եմ նրա համար միայն, որ ազատեմ նրան: Եվ իմ ցամաքած մարմնի մեջ մնացել է այնքան ուժ, որ կարողանամ կատարել բաղձանքս...:

— Դա մի բարի և քաջազնական գործ է, — պատասխանեցի նրան:

—Ա՛խ, եթե գիտենայիր, պարոն բժշկապետ, որքա՛ն տանջվում է նա... որքա՛ն արտասուք թափել են նրա աչքերը... Անիծվի՛ նրա հայրն...:

—Նա դեռ կենդանի՞ է:

—Ոչ, շան հիշատակ եղավ...:

Ծերունի դռնապանը ուրիշ շատ բաներ խոսեց ինձ տիկնոջ մասին, և ես բոլորովին համոզվեցա, թե այդ բարեսիրտ մարդն կարող էր նրան ազատել: Եվ որովհետև գիշերից բավական անցել էր, նա ինձ թողեց հանգստանալ, և ինքն հեռացավ:

Լսելով ծերունու պատմությունը, ես զգացի, թե որքան անզգույշ վարվեցա իմ խոսակցության մեջ իշխանի հետ նրա տիկնոջ արձակման մասին, բայց ի՞նչ պետք էր անել, արդեն անցել էր: Բայց այնուհետև էլ չխոսեցի տիկնոջ արձակման մասին, միայն գործ էի դնում այլ հնարներ, որքան կարելի է թեթևացնելու նրա կյանքին սպառնացող հիվանդությունը: Իսկ արձակումը, ավելի լավ է ասել, տիկնոջ ազատությունը ես թողեցի դռնապանապետին, հավատացած լինելով, որ բարեսիրտ ծերունին կկատարե յուր դիտավորությունը.

Ես պատրաստվում էի քանի օրից հետո թողնել Խոյ քաղաքը, այս պատճառով առնելով ինձ հետ Մեսրոպին, ես գնացի բազար՝ գնելու մի քանի բաներ, այլև դիտելու տեղային

վաճառականությունը: Ճանապարհին սկսեց անձրևել, ես մոռացա վեր առնել հովանիս, և մինչև հասնելս ծածկված չարշիների տակ, ոտքից գլուխ թրջվեցա:

Չարչիները լիքն էին բազմությամբ. որովհետև բացարձակ հրապարակներից մարդիկ հավաքվել էին նրանց ծածկած կամարների տակ չթրջվելու համար: Շատ անտանելի էր որևիցե շարժողություն գործել այն խառնիճաղանջ ամբոխի մեջ, ուր մարդիկ բեռնած ավանակներն, շներն, և ամեն տեսակ անասուն խառնվել էին միմյանց, որովհետև անցուդարձը կապվել էր, չարշիի մեջ մտնողն չէր ուզում դուրս գալ և անձրևի տակ ընկնել: Չնայելով այն բաբելոնյան խառնակությանը, ես էլ ուրախ էի, որ մասամբ ազատվեցա անձրևից, բայց չէի մտածում, որ մի նոր անախորժության հանդիպելու եմ:

Հավաքված ամբոխի միջով անցուդարձն էր խիստ նեղ և դժվարին: Բայց ես համարձակ և անփույթ կերպով գնում էի, որովհետև իմ եվրոպական հագուստն առիթ էր տալիս խուժանին ինձ ճանապարհ տալ: Բազմությունն հետաքրքրությամբ նայում էր ինձ վերա, որպես մի հրեշի կամ նորատեսիլ կենդանու վերա:

Դրսում տակավին կայծակը փայլատակում էր և լսելի էին լինում որոտմունքի զարհուրելի ձայներ: Որքա՛ն ազդում է բնության արհավիրքն արևելքցու վերա: Ես տեսնում էի, թե որպե՛ս խանութպաններն, ծալապատիկ նստած իրանց փոքրիկ կրպակներում, կծկվել էին և աղոթքներ էին փնթփնթում: Նրանք նայում էին ինձ վերա խիստ նենգավոր աչքերով, որպես խլուրդները նայում են իրանց բույների ծակերից: Ի՞նչ էր, որ նրանց այնպես բարկացնում էր:

Հանկարծ լսեցի գոռաց մի ձայն՝ «ա՛յ, անհավատ քաֆուր»: Ետ նայեցի, տեսա, թուրքերն հավաքված, ծեծում էին Մեսրոպին: Ծեծողների գլխավորն էր մի սեիդ: Ես հարձակվեցա նրա վերա, և մի քանի անգամ զարկեցի ձեռքիս գավազանով: Բայց տեսա, իսկույն հավաքվեցավ թուրքերի ավելի մեծ բազմություն, և անտարակույս, ինձ ևս խառնելու էին խեղճ Մեսրոպի հետ, եթե մի մոլլա զգուշացրած չլիներ կատաղի ամբոխին, ասելով «բան չունե՛ք, մի՛ դիպչեք, կոնսուլ է այդ անհավատը»:

Ես դուրս եկա չարշիից, իսկույն գնացի շահզադեի մոտ և հայտնեցի բազարի անցքը: Իշխանը շատ բարկացավ և հրամայեց սեիդին, որպես անկարգության գլխավորին, բանտ դնել:

Նույն ավուր գիշերը շահզադան ինձ իմացում տվեց, թե քաղաքի բոլոր սեիդներն (մարգարեի որդիքն) ապստամբած, կամենում են կոտրել բանտի դռներն, և բռնությամբ դուրս տանել իրանց եղբայրը: Ես տեսա, որ իշխանն անզոր էր նրանց հարձակման դեմը առնելու, որովհետև սեիդը անսխալական է և ոչ մի աշխարհային ձեռք չէ կարող նրան պատժի ենթարկել: Եվ մտածելով, թե իշխանի պատվին պակասություն կբերեր մի այսպիսի բռնությունը սեիդների կողմից, ես խորհուրդ տվի նրան, արձակել կալանավորին, այնպես ձևացնելով, իբր թե ես խնդրել էի, որ ներվի նրա պատիժը:

Իշխանը շատ նեղացավ, որ չկարողացավ պատժել ինձ վշտացնողին: Ընթրիքի սեղանի ժամանակ նա ասաց.

— Սեիդներն, իբրև մեր մարգարեի սերունդ, ունին մահմեդականների մեջ ծանրակշիռ հարգ և համարում, և մենք շատ անգամ դժվարանում ենք պատժել նրանց որևիցե անկարգության համար, կասկածելով, մի գուցե շարժենք ռամկի կատաղությունը:

— Բայց այսպեսով սեիդներն ավելի կլրբանան, — պատասխանեցի ես:

Իմ պատասխանը խիստ էր, որպես երևաց, իշխանին դյուր չեկավ. սեիդի մասին ասել «լրբանալ», դա կարող էր քրեական հանցանք համարվի, բայց իշխանը զանցառության տալով, ասաց.

— Սեիդին բոլորովին մեղավոր համարել չէ կարելի, որովհետև ձեր ծառան, անձրևից թրջված, անզգուշությամբ դիպել էր սեիդի հագուստին և պղծել էր նրան:

Մինչև այս խոսքը լսելս, ես չէի հասկանում խեղճ Մեսրոպի ծեծվելու պատճառը, այժմ պարզվեցավ, մանավանդ երբ իշխանն ավելացրուց.

— Անձրևային օրերում անկարելի է հայերին թրջված մանգալ բազարներում և քսվիլ մուսուլմաններին:

Խե՛ղճ հայ, որքա՛ն վա՜տ ես դու, — մտածում էի ես — մահմեդականը, որպես իմ աչքով տեսա, բազարում քսվում էր թրջված ավանակներին, շներին, և նրանցից չէր պղծվում, իսկ դու ավելի ստոր ես համարվում, քան այդ անասունները...:

Իշխանի խոսքն ինձ վերա վատ տպավորություն գործեց:

— Ուրեմն հայը Պարսկաստանում ունի՞ հնդկական պարիասի նշանակություն, — հարցրի ես:

Շահզադան չհասկացավ իմ ասածը, միայն հայտնեց.

—Մեր մոլլաներն այդ խտրությունը դրած են քրիստոնյաների և մուսուլմանների մեջ:

—Միտ դնելով այս պայմանին, ուրեմն դուք պիտի գարշի՞ք բոլոր ուտելեղեններից և ըմպելիքից, որ դուրս են գալիս քրիստոնյաների ձեռքից:

—Այո՛, — պատասխանեց իշխանը պինդ համոզմունքով. — մենք պիղծ ենք համարում բոլորը, ինչ որ արդյունաբերում է քրիստոնյայի ձեռքը:

Այժմ, սիրելի ընկեր, կարող ես հասկանալ Պարսկաստանի մեջ բնակվող ոչ միայն հայերի, այլ բոլոր քրիստոնյա ազգերի խղճության և աղքատության բուն պատճառը: Մի ազգ, որի ապրուստի գլխավոր աղբյուրներն էին՝ երկրագործություն և խաշնարածություն, իբրև մի պիղծ բան, չէ կարող վաճառել յուր աշխատության հում բերքերը: Այս խտրությունը Տաճկաստանի սուննիների մեջ չկա. դա կա միայն Պարսկաստանի մոլեռանդ շիիդների մեջ, թեև երկուսն էլ մահմեդական աղանդին են պատկանում: Շիիդը ավելի աններողամիտ և մոլեռանդ է, քան սուննին:

ՆԱՄԱԿ Դ

Իշխանի որդու և կնոջ հիվանդության պատճառով ես ստիպվեցա Խոյ քաղաքում մնալ ամբողջ մի շաբաթ: Բայց վերջին անախորժությունից հետո, որին առիթ տվեց անպիտան սեիդը, ես կայարանս փոխել էի քաղաքին մոտիկ արվարձանում, ուր բնակվում էին 40 տան չափ հայ ժողովուրդ: Բայց քաղաքում, այսինքն բերդի մեջ, ամենևին հայ բնակիչներ չկային, գուցե քաղաքը չպղծելու համար...:

Ես կենում էի հայոց արվարձանի եկեղեցու զավթում: Գիշերները ինձ մոտ հավաքվում էին հայոց քահանան, նրանց տանուտերն և ժողովրդի ծերերն: Խղճալի ժողովուրդ...: Նրանք ուրախանում էին ինձնով, տեսնելով, որ ես հայ եմ, և ինձ այնքան պատվում էր քաղաքի իշխանը, որ մինչև անգամ թույլ էր տալիս նստել յուր մոտ, ճաշել իր հետ...: Նրանք զարմանում էին, միթե հայը կարո՛ղ էր այսպես լինել...:

Եվ նրանցից շատերն կարծում էին, որ ես կամ անգլիացի եմ, կամ ֆրանսիացի: Ես նրանց ասեցի, ոչ թե եվրոպական հագուստը պատիվ է շահում Ասիայի ազգերից, այլ Եվրոպայի ուսումը և կրթությունը տիրում է խավար ազգերի վերա: Եվ երկար նրանց խոսում էի լուսավորության օգուտների մասին: Ես շատ ուրախանում էի, որ նրանք համակրում էին իմ խոսքերին, ասելով. «Այո՛, ուսումը մեծ բան է, աղա, սրանից առաջ, երբ օտար աշխարհներից մենք ստանում էինք մեր պանդուխտներից մի նամակ, ամբողջ ամիսներով մեր նամակը մնում էր առանց կարդացվելու. գյուղից գյուղ ման էինք ածում, տերտերներն էլ չէին կարողանում կարդալ: Այժմ, փառք աստծո, մեր որդիքն կարդալ գրել իմանում են»:

Եվ իրավ, նրանք ունեին եկեղեցու բակում փոքրիկ վարժարան, ուր երեխայքը սովորում էին մայրենի լեզվով գրել-կարդալ, և ասեցին, թե մի քանի հայաբնակ գյուղեր նույնպես ունին փոքրիկ դպրոցներ, բայց եկեղեցի և քահանա գտնվում էին բոլոր հայոց գյուղորայքում:

Ես տեղեկացա, թե ամբողջ Խոյա գավառում կային մինչև 700 տուն հայ ժողովուրդ: Նրանք պարապում են անասնապահությամբ, տարվա երեք եղանակներում՝ երկրագործությունով, բայց ձմեռն՝ ջուլհակությունով: Կնիկները մանում են բամբակից մանածը և տղամարդիքն գործում են կտավներ: Քաղաքի արվարձանում բնակվող հայերն գիտեն մի քանի արհեստներ, որպիսիք են՝ հյուսնություն, ոսկերչություն և զինագործություն, և բոլորն ըստ մեծի մասին աշխատասեր մարդիկ են:

Բայց խոյեցի հայերից չկան այնպիսիները, որոնք պարապում լինեին վաճառականությամբ. դա երևաց ինձ մեղանչել էր հայկական այժմյան բնավորության դեմ, որովհետև ամեն քաղաքում, ուր ես տեսել եմ հայեր, ըստ մեծի մասին եղել են վաճառականներ: Բայց այս երևույթը Խոյում ուներ յուր առանձին պատճառները, նախ, հայերն շատ աղքատ են, երկրորդ, եթե հարուստ ևս լինեին, նրանք թուրքերի երկյուղից չէին կարող իրանց հարստությունը երևան հանել. բայց վաճառականությունը պահանջում է այդ: Ինձ ցույց տվեցին մի հայ, ասելով, թե դա հարուստ մեկն է, բայց նա յուր արտաքին կերպարանքով ամենևին չէր որոշվում աղքատներից: Երբ հարցուցի, թե ինչո՞ւ նա այնպես վատ հագնված է, ինչո՞ւ նա ևս խրճիթի մեջ է բնակվում: Ինձ պատասխանեցին «նորա համար, որ թուրքերը եթե գիտենան նա փող ունի, մի գիշեր գլուխը կկտրեն և բոլորը կկողոպտեն»: Սարսափելի մի դրություն է այդ, երբ մարդ ունի, բայց չէ կարող վայելել: Ակամա աղքատ ձևանալ հեռու է մարդու փառասիրությունից:

Ես հարցրի, թե ինչ օգուտ նրանք կարող էին շահել իրանց արդյունաբերությունից, քանի որ մահմեդականներից պիղծ համարվելով, չէին կարող վաճառքի նյութ դառնալ:

Քահանան պատասխանեց, — Այդ մասին պետք է շնորհակալ լինել Մահմադ մարգարեից, որ մեր ձեռքից դուրս եկած ուտելիքները մուսուլմաններին հառամ (արգելված) է արած, բայց եթե հալալ (ուտելու թույլ տրված) լինեին, բոլորը ուժով կխլեին մեզանից և կուտեին: Դու կարծում ես, փողո՞վ կառնեին...:

—Օրինակի համար, — ավելացուց քահանան, — այս կողմերում, որպես սահմանագլուխ, տերությունը միշտ զորք ունի: Զինվորների համար զորանոցներ չլինելու պատճառով նրանց բաժանում են թուրքերի տներում կերակրվելու, բայց հայերի հացը նրանց պիղծ համարվելով, հայերն ազատ են մնում այդ ծանրությունից:

—Է՛հ, տերտեր ջան, ծառա լինեմ սուրբ աջիդ, — քահանայի խոսքը կտրեց ծերերից մեկը. — «Էշը թեև մատաղ չի լինի, բայց էշի գինը մատաղ կլինի»: Թուրքի սարվազներն, արդարև, մեր հացը չեն ուտում, բայց հացի գինը մեզանից առնում են...:

Ծերունու խոսքն ինձ ավելի հասկանալի եղավ, երբ պատմեցին, թե պարսից զորքերն արշավանքներ գործելու միջոցին կառավարությունից պաշար չեն ստանում, այլ նրանք ուտելիքն հավաքվում է ժողովրդից, որ կողմով և անցնելու լիներ զորքն: Դա կոչվում է սուլսար: Բայց հայերից ստացվում է զուտ արծաթ:

Բայց երբ խոսք բացվեցավ Մեսրոպի բազարում ծեծվելու մասին, քահանան պատմեց, թե քանի օր առաջ թուրքեր մեռնելու չափ ծեծել էին մի հայի: Ծեծելու պատճառն այն էր, որ հայը հագած ուներ թուրքի ձևով հագուստներ, և մի հաջի հանդիպելով նրան, մահմեդական է համարում և սալամ (բարև) է տալիս: Բայց հետո հասկանալով յուր սխալմունքը, հաջին մտածում է, թե մեծ մեղք գործեց աստուծո դեմ, որ մարգարեի շրթունքեն դուրս եկած բարևը20 նա տվեց մի անհավատի: Այս պատճառով նա սկսում է կատաղաբար ծեծել հային, թե ինչո՞ւ նրա հագուստը սխալմունքի մեջ գցեց իրան:

Ես բոլորովին զարմացա պարսկական մինչ այս աստիճան մոլեռանդության վերա, և ասեցի քահանային. — Ուրեմն այստեղ հայերն միշտ կարող են սխալեցնել մահմեդականներին և այսպիսի ծեծեր ուտել, որովհետև նրանց հագուստի ձևերն շատ նման են թուրքերի և պարսիկների հագուստին:

— Երևի, դուք չեք նկատել, պարոն, — պատասխանեց քահանան, — հայերն միշտ հագնում են մի տեսակ նշանավոր դաբա, որ յուր ձևերով և գույնովն բոլորովին որոշվում է պարսիկների հագածից, դա նրա համար է, որ մահմեդականներն ճանաչեն և հարկավոր միջոցներում խորշին նրանցից: Այսպես էլ հրեաներն հագնում են իրանց բոլորովին նոր հագուստի վերա մի տեսակ հին և անճոռնի լաբադա, որպեսզի մի կողմից իրանց հագուստի նորությունը ծածկեն, մյուս կողմից, ցույց տան, թե հրեաներ են: Բացի դրանից հայերը չեն կարող դեղին, կարմիր, կանաչ, մի խոսքով, վառ գույներով հողաթափներ հագնել կամ իրանց մորուքները սրբազան խինայով ներկել. դրանք մահմեդականներին են սեփական: Այնպես էլ հրեաները չեն կարող ականջի հետևից թող տալ թուրքերի նման բիրչկա (ճալվեր), այլ ականջի առջևից միայն, որն առաջին

նայվածքից իսկույն ցույց է տալիս նրանց իսրայելացի լինելը. որպես և հայերի քաքուլի մեջտեղը (այսինքն գագաթի վերա) միշտ սափրած է լինում, նորանով ևս որոշվում են թուրքերից:

— Խղճալի՛ ժողովուրդ... — կրկնեցի ես:

— Այսպես էլ թողնեն լավ է, — ավելացուց քահանան տխուր ձայնով, — մեզ պետք չէ թուրքի խինան և ոչ նրա կարմիր հողաթափները, միայն թե մեր երեխերքի հացը ձեռքներիցը չխլեին:

Այս բոլորի մեջ, ինչ որ պատմում էին տերտերը և ժողովրդի ծերունիքն, արտահայտվում էր ոչ միայն մահմեդականների խավարասեր բնավորությունը և նրանց աններողամտությունը դեպի այլակրոնները — այլ մի մեծ տնտեսական հարված, որին ենթարկվում էին ոչ-մահմեդական ազգերը: Նրանք համարյա կտրված էին հասարակության ընդհանուր հարաբերություններից, նրանց անձը և աշխատության պտուղը ոչինչ գին չունեին, որովհետև պիղծ էին համարվում: Այստեղից հառաջ էր գալիս հայ ժողովրդի դառն աղքատությունը: Թողյալ այդ, երկրագործը և յուր ընտանիքի համար վարելու, ցանելու գործի մեջ շահ չուներ. որովհետև կալվածատիրոջ հողերի ծանր վարձատրության պատճառով և կառավարության անթվելի հարկերի պատճառով, երկրագործը ոչ միայն չէ կարողանում ավելացնել մի բան վաճառքի համար, այլ դժվարությամբ լցուցանում է յուր ծախսերը: Ուր մնաց այն, որ կառավարության թուլությունից օգուտ քաղելով, շատ անգամ թուրքերն ավազակաբար կողոպտում են հայերի մշակության բերքերը, այնպես, որ խեղճ երկրագործը հունձքի արտերից հավաքում է կալի մեջ ցորենի խուրձերը առանց հասկերի, նրանց գլուխները կտրած են լինում, և յուր այգին շատ անգամ նա միայն ճռաքաղ է անում, իսկ հասուն ողկույզներն գողերի բաժին են դառնում: Ես բոլորովին ձանձրացա, վերջապես պետք էր թողնել Խոյը: Առավոտյան ես գնացի իշխանի մոտ իմ վերջին մնայո բարյավն ասելու: Նա շատ սիրով ընդունեց ինձ յուր մենարանում և պատվեց մի բաժակ սուրճով:

— Ես ձեզանից շնորհակալ եմ, պարոն բժշկապետ, — ասաց նա, — տիկինը և որդիս բոլորովին առողջ են:

Նա ինձ վարձատրեց մի քանի ընծաներով և հրամայեց քաղաքի մաքսապետին՝ չպահանջել իմ բեռներից մաքս:

Ես պատասխանեցի, թե մաքսը ես արդեն վճարել էի Արաքսից անցածին պես, այսինքն սահմանագլխի առաջին մաքսատնում: Իշխանն ասաց.

— Պարսկաստանում մի ապրանք, որ տեղափոխվում է մի գավառից դեպի մյուսը, ամեն մի գավառում առանձին մաքս պետք է վճարե:

—Ինչպե՞ս կարելի է դա, — պատասխանեցի ես զարմանալով:

—Այդպես է, — պատասխանեց նա, — ամեն մի քաղաք մեր երկրում ունի յուր սեփական մաքսատունը, որ առնում են մաքս, ոչ միայն արտասահմանից եկած ապրանքներից, այլև տեղային ապրանքներից ու բերքերից, որոնք փոխվում են մի քաղաքից դեպի մյուսը, կամ գյուղերից դեպի քաղաքը: Օրինակ, գյուղացի ջուլհակը, որ գործել էր մի քանի հատ կտավ, կամ գյուղացի պառավն, որ մանել էր մի քանի գրամ մանած, երբ տանում են բազարը վաճառելու, պետք է մաքս վճարեն: Կամ թե գյուղացին, երբ յուր երկրագործության բերքերը տանում է բազար

վաճառելու, պետք է մաքս վճարե: Եվ եթե մի մարդ, նույն ապրանքները գնելով, տեղափոխում է մի ուրիշ քաղաք, դարձյալ պետք է վճարե: Ամեն վաճառք, որ մի ձեռքից անցնում է դեպի մյուսն, առանց մաքսի չէ մնում:

Ես հայտնեցի իշխանին, թե իմ բեռներումս վաճառքի նյութ չկա, այլ նրանք կրում են և իմ դեղարանը և բժշկությանս վերաբերյալ գործիքները:

— Միևնույն է, — պատասխանեց նա, — ինչ որ գրաստների մեջքի վրա տեղափոխվում է, պետք է մաքս վճարել, եթե հող ևս լիներ:

— Մի այսպիսի անկարգ օրենքը չափազանց կդժվարացնե վաճառականության առաջադիմությունը և արգելք կդնե նրա զարգացմանը, — ասեցի ես: — Ինչո՞ւ է դնում Շահը այսպիսի վնասարար կանոններ:

Իշխանը խնդաց:

— Շահն այս բաներից տեղեկություն չունի, — ասաց նա, — նա չի դրել այս կանոնները, դրանք եղել են միշտ այդպես շատ հին ժամանակներից: Մի ժամանակ Պարսկաստանում տիրում էր մուլքի-թավայիֆ (феодализм — ավատականություն): Եվ մեր տերության ամեն մի գավառը ձևացնում էր զանազան միմյանցից անկախ խանություններ, որոնց մեջ ավատական խաներն էին իրանց գավառների ինքնակալ իշխաններ: Նրանք ստորադրված էին Շահին նրանով միայն, որ երբեմն վճարում էին մի մասնավոր հարկ, կամ պատերազմներում օգնում էին նրան: Իսկ շատ անգամ ապստամբվելով այս պարտավորություններն ևս չէին կատարում: Այն ժամանակներում լավ էր, շատ լավ էր իշխանների դրությունը: Նրանք կատարյալ աղաներ էին, բայց հիմա՞....: Եվ ամեն մի վաճառք, որ անցնում էր մի գավառից դեպի մյուսը, միևնույն էր, թե նա մտնում էր մի այլ տերություն, այն պատճառով մաքս էր վճարում: Թեև այժմ դարձյալ նույն ձևն պահպանվել է, բայց զանազանությունը նորանումն է, որ մենք մեր ստացածը պետք է ներկայացնենք Շահի գանձարանին: Դա եղավ այն ժամանակից, երբ Աղա-Մահմադ-խան ներքինին նվաճեց բոլոր ավատական իշխանությունները:

Որպես երևում էր, հին բռնակալն շատ հաճելի չէր գործերի մի այսպիսի փոփոխությունը. և երբ ես ասեցի. — Այժմ, երբ Շահը ազատ տիրում է բոլոր խանությունների վերա, թո՛ղ աշխատե փոխել հին ձևերը:

Նա պատասխանեց.

—Որքա՜ն միամիտ եք, պարոն բժշկապետ, Շահին ի՞նչ ձեռք կտա փոխել այն ձևերը, որոնց շնորհիվ ամեն տարի ահագին գումարներ մտնում են նրա գանձարանը...

—Բայց ժողովրդի դյուրությանն էլ նայելու է:

—Ժողովուրդն սովորած է բոլոր ձևերին ենթարկվել, ինչ որ հորինում է իշխանի կամքը: Մեզանում ժողովուրդը շատ հլու է: — Դու խոսում ես միայն մաքսի վերա, բայց ավատական ժամանակների բոլոր կարգադրություններն մինչև այսօր այնպես անփոփոխ մնացել են ամեն գավառներում: Օրինակի համար, դուք կտեսնեք, ոչ միայն ամեն մի քաղաքում, այլ յուրաքանչյուր

գյուղում, զանազան ծանրությամբ քար և կշիռ, զանազան երկարությամբ գազ և արշին, և զանազան մեծությամբ քոռ ու սոմար: Դրանք մնացել են նույն դրության մեջ, որպես եղել են առաջ, երբ այդ գյուղերն կամ քաղաքներն էին կալվածքներ որևիցե խանի կամ բեկի: Բացի դոցանից, հողի մշակության պայմաններն գյուղացիների հետ, նրանց զանազան տուրքերն և հարկերն ամեն տեղ միատեսակ չեն, նրանք բոլորը անփոփոխ մնալով, կրում են ավատական ժամանակների ձևերը:

—Դրանք մեծ արգելքներ են երկրի տնտեսության բարենորոգմանը, և մանավանդ վաճառականության ծաղկելուն, — կրկնեցի ես: — Ամբողջ տարիների ուսում պետք է սովորելու այս բոլոր զանազանությունները...

—Զանազանություններ դուք տեսնելու եք մեր երկրում շատ, առավելապես քրիստոնյաների և մահմեդականների մեջ. օրինակ, հայերից ստացվում է գլխահարկ, բայց մահմեդականներն ազատ են այս տուրքից:

Վերջին խոսքն ինձ շատ զգալի եղավ, երբ լսեցի, թե հայերն իրանց գլուխները պարանոցի վերա պահպանելու համար հարկ են վճարում...

— Դա անիրավություն է, խտրություն դնել մի տերության մեջ ազգության և կրոնի, — պատասխանեցի ես:

Իշխանը նկատելով, որ ես վշտացա, պատասխանեց.

—Դեռ հայերն բախտավոր են մեր երկրում, նրանց դրությունը ավելի լավ է հրեաներից. այդ թշվառականներից շատ տեղերում առնում են սախղալ-խարշի, այսինքն մորուքի հարկ, որ նրանք իրավունք ունենային մորուք թողնելու իրանց կրոնի համեմատ և չմեղանչելու Մովսեսի օրենքի դեմ:

—Դա կատարյալ անիրավություն է, — պատասխանեցի ես և վեր կացա:

—Դուք հիմա պատրաստվում եք գնա՞լ, — հարցուց նա:

—Հիմա, այս րոպեիս:

—Եվ չե՞ք էլ ցանկանում վերջին անգամ տեսնվիլ ձեր հիվանդների հետ և տալ մի քանի առողջապահական խրատներ:

—Դա ցանկալի է: — Հրամայեցեք ինձ առաջնորդեն նրանց մոտ:

Իշխանի ձայն տալովն հայտնվեցավ ներքինիներից մեկն, նրան հրամայեց, որ ինձ տանե հարեմը: Կանանոցում բոլոր տիկինների օթյակները որոշված է լինում: Նրանք իրանց աղախիններով, ներքինիներով և փոքրիկ սպասավորներով առանձին-առանձին բնակվում են իրանց հատուկ կացարաններում, որոնք բաժանվում են միջնապարիսպներով: Ինձ հայտնի էր իմ հիվանդի կացարանի մուտքը, և պահապաններն այնքան ծանոթ էին, որ պետք չէր մի առանձին հրահանգ

իշխանի կողմից, որ ինձ ներս թողնեին. այսուամենայնիվ, իշխանը տվեց ներքինիին ընդունելության պարտուպատշաճ պատվերները:

Երբ ես ներս մտա, եթովպացի Ֆիզան դարձյալ եկավ և դևի նման այնտեղ պպզեց: Ներքինին հեռացավ: Տիկինը ես գտա իմ կարծեցածից ավելի լավ դրության մեջ: Նրա առողջությունը բոլորովին ուղղվել էր: Երբ ես սկսեցի տալ նրան մի քանի պատվերներ, թե որպես պետք է գործածե իմ մոտ յուր թողած դեղորայքը, եթե մյուս անգամ հարկավորվեն նրանք, նա խիստ նազելի կերպով ինձ ասաց.

— Շնորհակալ եմ, պարոն բժշկապետ, դուք ինձ ազատեցիք մահից, ես միշտ կաղոթեմ ձեզ համար: Բայց այս դեղորայքն, կարծեմ, ինձ ավելի պետք չեն գալու, ես կարոտ եմ մի ուրիշ բանի...:

—Ես բոլոր սրտով պատրաստ եմ ձեզ պիտանի լինել: Հրամայեցեք, ի՞նչ բանի:

—Ձեր բարի խորհրդին: Ես հուսով եմ, — ավելացրուց նա, — որ դուք այնքան ազնիվ մարդ եք, որ կարեկից կլինեք մի անբախտ կնոջ:

—Տիկին, դուք կարող եք ձեր սիրտը ամենայն վստահությամբ բաց անել իմ առջև, եթե ես արժանի եմ դորան:

Նա սկսեց պատմել այն, որ մեծ մասամբ ինձ հայտնի էր, և ես լսած էի ծերունի դռնապանից: Նրա բոլոր խոսքերը վերաբերում էին յուր թշվառ անցյալին և այն ցավալի պատճառներին, որ առիթ տվեցին նրան ընկնել մահմեդական իշխանի հարեմի մեջ: Եվ նա վերջացրեց յուր պատմությունը այս խոսքերով.

—Ես այժմ դիմում եմ ձեզ, ոչ իբրև բժշկի, այլ մի բարի մարդու, խորհուրդ տվեք ինձ, ինչպե՞ս պետք է ազատվել այս դժոխքից: Ես կին եմ, մի թույլ և անփորձ էակ. իմ աշխարհի սահմանն եղել են այս սենյակի չորս պատերն, ես մի ուրիշ աշխարհ չեմ ճանաչում, ես չգիտեմ, թե որտե՞ղ կարող եմ գտնել իմ ազատությունը:

—Ձեզ պետք է մի պաշտպան, տիկին, և դուք արդեն ունեք այդ:

—Ես ոչ ոք չունիմ, — պատասխանեց նա ցավալի ձայնով: — Իմ բարեկամներս բոլորն սրից անցան, ես մենակ եմ մնացել, և մահը, մինչև անգամ մահը չէ ուզում ինձ մոտ գալ:

Նրա աչքերը լցվեցան արտասուքով, և նա նմանվում էր նույն բոպեում տխրության աստվածուհուն:

—Կրկնում եմ, տիկին, դուք ունեք մի պաշտպան, որ ուխտել է ազատել ձեզ, և դուք կարող եք բոլորովին մխիթարված լինել:

—Ազատե՞լ ինձ... Արդյոք կարելի՞ է... Այստեղ հազարավոր աչքեր հսկում են իմ վերա:

—Դուք հավատացեք, տիկին, որ իմ ասածը ուղիղ է:

—Խնդրեմ չտանջել ինձ: Ասացեք, ո՞վ է նա:

—Այն մարդը, որի ձեռքումն են այս ապարանքի բոլոր բանալիները:

Մի ուրախության նշույլ փայլեց տիկնոջ հուսահատ դեմքի վերա, և նա բոպեական մտածությունից հետո ասաց. ճանաչում եմ, նա բարի մարդ է: Բայց դուք որտեղի՞ց գիտեք այդ:

—Նա ինքն ասաց ինձ:

—Բայց ես կարո՞ղ եմ վստահանալ:

—Որպես ձեր հոր վերա: Նա մի հին զինվոր է, զինվորի բոլոր ազնիվ հատկություններով նա կկատարե, ինչ որ խոստանում է:

Ես նկատեցի՝ մեր խոսակցությունը բավական երկարեց և կարող էր կասկածանքի տեղիք տալ. ուստի վեր կացա:

—Դուք շտապում եք, պարոն բժշկապետ:

—Ես եկա ձեզ իմ վերջին մնայք բարյավն ասելու, ես մի ժամից հետո պետք է ճանապարհ ընկնեմ:

—Շատ ցավում եմ, որ այսպես կարճ եղավ մեր տեսությունը: Գնացեք, աստված թո՛ղ ձեզ հետ լինի. դուք կտանեք ձեզ հետ իմ օրհնությունը. ես երբեք չի պիտի մոռանամ ձեզ: Եթե ունեցել եմ ես մի քանի մխիթարական բոպեներ այս տխուր կացարանի մեջ, դրանք եղել են ձեր այցելության ժամերն:

Ես հայտնեցի իմ շնորհակալությունը նրա ազնիվ համակրության համար և կամենում էի դուրս գալ:

— Մի խնդիր ևս, — ձայն տվեց նա: — Գուցե դուք ունեք մի քույր, որ շատ սիրելի է ձեզ, ընդունեցեք ինձանից մի ընծա նրան տանելու համար:

Եվ նա դուրս հանեց փոքրիկ արկղի միջից զոհարներով զարդարված մի կուրծքի աստղ, և կամենում էր ինձ տալ: Ես մերժեցի, ասելով.

—Դժբախտաբար քույր չունիմ, եթե ոչ, սիրով կկատարեի ձեր բարի ցանկությունը:

—Միևնույն է, ես ուզում եմ մի փոքրիկ հիշատակ թողնել ձեզ մոտ:

—Ես կտանիմ ինձ հետ ձեր բարեսրտությունը: Այդ բավական է:

Ես կրկին և կրկին նրա ձեռքը սեղմելով, բաժանվեցա:

Դուրս գալով հարեմից, ինձ զբաղեցրել էր մի մտածություն, ես գտնում էի մի խոշոր հակասություն իմ մինչև այնօր ունեցած կարծիքի մեջ: Հարեմական կինը համարում էի մի տխմար էակ զուրկ ամեն զգացմունքից, ավելի լավ է ասել — մի պաճուճյալ խրձիկ, որին հարեմի մեծ երեխան, այսինքն նրա իշխանն գործ է ածում որպես խաղալիք յուր զվարճության համար: Բայց իմ հիվանդը զուրկ չէր զգացմունքից, նրա մեջ կար խելք, դատողություն. նա զուրկ չէր հոգու և սրտի գեղեցիկ հատկություններից — նա բողոքում էր ստրկության դեմ, նա խնդրում էր ազատություն: Այս բողոքը հառաջ չէր եկել նրա մեջ կրոնական մոլեռանդությունից, որ, որպես քրիստոնյա, անտանելի լիներ նրան կյանքը մահմեդական շրջանում: Նա բողոքում էր, որովհետև ստրուկ էր: — Ստրկությունն ազատության մայրն է...

Վերադառնալով իմ կացարանը, տեսա, Մեսրոպն ամեն ինչ պատրաստել էր, և իշխանի կողմից եկել էին մի քանի ձիավոր մարդիկ մեզ ճանապարհ զցելու համար: Նրանց թվում կար և ծերունի դռնապանապետը: Նա դիմեց ինձ այս խոսքերով.

— Պարոն բժշկապետ, մարդն որքան ծերանում է, խելքն էլ յուր հետ պակասում է. ես այնքան հիմար էի, որ մինչև այսօր չմտածեցի ձեզ՝ հայտնել իմ սարսափելի հիվանդությունը, այժմ ստիպված եմ ձեզ նեղություն տալ, երբ դուք ճանապարհի վերա եք:

Ես հասկացա նրա միտքը և պատասխանեցի.

—Ես պատրաստ եմ մի քանի րոպե զոհել ձեզ համար:

—Քայց հիվանդությունս կարոտ է առանձին տեսության:

—Ես կհրամայեմ մեզ մենակ թողնեն:

Այս լսելով, սենյակում գտնված մարդիկ դուրս գնացին, մենք մնացինք մենակ: Ծերունին մոտեցավ ինձ, և ձեռքը կուրծքի վերա դնելով, ասաց.

— Հիվանդությունս այստեղ է...

— Ես արդեն գիտեմ... և տիկնոջը հայտնեցի ձեր նպատակը:

—Հայտնեցի՞ք, և նա ընդունե՞ց:

—Ես նրան համոզեցի, որ ամենայն վստահությամբ կարող է հետևել ձեր խորհրդին:

—Ուրեմն ես կարո՞ղ եմ շուտով սկսել գործը:

—Պետք չէ շտապել, մինչև ես այս երկրից մի փոքր հեռանամ:

—Հասկանում եմ...

—Բայց մտածեցեք, որ ձեր ձեռնարկությունը շատ հանդուգն է, չիցե թե տիկնոջ կյանքը վտանգի մեջ զցեք:

—Դուք դեռ չեք ճանաչում ծերունի դռնապանին, նա մի ժամանակ առյուծի ձագը կորսար յուր բունիցը առանց մայրի իմանալու...

Այս խոսքերի հետ ծերունին մերկացրուց յուր կուրծքը և ցույց տալով այնտեղ մի խոր սպի, ասաց.

— Նայեցեք այս նշանին, դա ունի յուր հին պատմությունը... Այս ցամաք կեղևի տակ, — նա դարձյալ ցույց տվեց կուրծքը, դեռ պահպանվել է այն սիրտը, որ թշվառի վերա ցավել գիտեր, և այս մաշված բազուկներն դեռ բոլորովին չեն թուլացել մի անբախտի օգնելուց:

Նույն միջոցին ներս մտավ Մեսրոպը և հայտնեց, թե ձիերն արդեն պատրաստ են, և բեռներն բեռնած են: Ես վեր կացա:

—Ցանկանում եմ ձեզ հաջողություն, բարի ծերունի:

—Իսկ ես ձեզ բարի ճանապարհ, պարոն բժշկապետ:

Մենք ճանապարհ ընկանք: Իշխանի մարդիկն մեզ քաղաքից դուրս հանեցին, նրանց պատվիրած էր մինչև հառաջիկա իջևանը մեզ հետ լինել: Բայց ես տեղեկանալով, որ ճանապարհն երկյուղալի չէ, նրանց ետ դարձրի:

Բայց ինձ զարմացնում էր ծերունի դռնապանը, ո՞վ էր նա, և ի՞նչ դիպվածքով ընկել էր այստեղ: Մեսրոպն սուր հոտառություն ուներ, ավելի, քան որսորդական բարակը. նա հասկացել էր, թե ինչ նպատակ ուներ իմ գաղտնի խոսակցությունը դռնապանի հետ, և մոտեցավ ինձ այս հարցով.

—Դռնապանի «հիվանդությունը» բժշկեցի՞ք...

—Բժշկեցի: Բայց ասա ինձ, Մեսրոպ, դու էլ շատ մասլահաթներ ունեցար դռնապանի հետ, ի՞նչ մարդ է նա:

Մեսրոպի պատմությունից երևաց, որ Պարսկաստանում դեռ պահպանված է եղել այն հին սովորությունը, որ գործ էր դնում պարսից արքան Արշակունյաց պետությունը կործանելեն հետո, այսինքն՝ Մարզպանների դարում: — Այն սովորությունը, որով պարսից արքան կանչում էր հայոց նախարարներին իրանց զորքերի հետ և նրանց ուղարկում էր շատ հեռու, տերության վտանգավոր տեղերում թշնամու հետ պատերազմելու: — Դա մի միջոց էր, որ այն ժամանակ Տիզբոնի խորամանկ արքունիքն գործ էր դնում սպառելու հայոց ազնվապետությունը և նրա պատերազմող տղամարդիկը:

Այս կարգը, որ մի ժամանակ Տիզբոնի արքունիքը պահպանում էր յուր նենգավոր քաղաքական նպատակները կատարելու համար, թեև հնանալով, փոխեց յուր իսկական, խորհուրդը, բայց ոչ բոլորովին դադարեցավ: Պատահում էր, որ մի գավառի իշխանն յուր ստորադրյալ մահմեդական ժողովրդից զինվորներ հավաքելով, պետք է գնար Պարսկաստանի խորքերում, մասնակցելու շահի որևիցե արշավանքին. նա միևնույն ժամանակ կազմում էր յուր ձեռքի տակ գտնված հայերից մի առանձին գունդ: Հայոց զինվորներն իրանց հավատարմությամբ միշտ ավելի վարկ են ունեցել պարսից բանակների մեջ. այս պատճառով բանակի գլխավոր հրամանատարը շատ

անգամ պահել է նրանց յուր մոտ որպես թիկնապահներ, և միշտ նրանցով շրջապատել է յուր վրանը: Բայց երբ որ զինվորներն պահնորդության պաշտոնով կենում էին որևիցե քաղաքում, միշտ հայերին էր հանձնվում տերության նշանավոր պաշտոնակալների տան պահպանությունը: Ծերունի դռնապանը հասարակ գնդապետ էր, երբ վերջացնելով հաջող պատերազմը թուրքմանների հետ, նրանց զորքը վերադարձավ Խորասան՝ Մեշհետ քաղաքում ձմեռելու: Գնդապետին հանձնված էր քաղաքի կուսակալի տան պահնորդությունը: Նա յուր խումբով ամբողջ ձմեռն մնաց այնտեղ: Պարսկաստանում պահապան զինվորներն օրեկան հերթակալներ չեն, այլ նրանք չեն փոխվում ամիսներով և մինչև անգամ ամբողջ տարի մնում են միևնույն տեղում: Այսպեսով նրանք մինչ այն աստիճան ընտանենում են իրանց պահպանած տան հետ, որ սկսում են շատ մերձ հարաբերություններ ունենաք հարեմի հետ: Այս մտերմությունն հայերի վերաբերությամբ ավելի անկասկած է լինում, որովհետև հայի բնության պարզությունը պարսկին լավ ծանոթ է:

Բայց սերը աչառություն չէ անում: Մանկահասակ գնդապետն, որպես չափազանց հանդուգն և համարձակ մի զինվոր, միևնույն ժամանակ ուներ յուր բոլոր արժանավորությունները, որ ամեն կին նրան մի անգամ տեսնելով, չէր կարող չհամակրել: Նա ունեցել է բավականին գեղեցիկ մանկություն:

Բայց գնդապետի հայկական պարզամտությունը հասնում էր մինչև այն մոլեռանդության, որ նրա համար անսուրբ էր ամեն ինչ, ինչ որ մահմեդական էր, մինչև անգամ պարսիկ կնոջ սերը: Այս պատճառով նա միշտ իրան հեռու էր պահում հարեմական տարփածուների սեթևեթանքից, և միշտ խնդրում էր, որ յուր զորապետն փոխեր յուր պահնորդության տեղը, ուր այնքան հաճելի չէր գնդապետին:

Նույն օրերում կատարվում էր կուսակալի դստեր հարսանիքի հանդեսը: Գնդապետն նրա ապարանքում դեռ պահնորդ էր: Փեսա ընտրված էր Մեշհեդի սրբազանի գլխավոր վանահայրն. դա Պարսկաստանի մեջ նույն նշանակությունն ուներ, որպես Տալայ-Լաման Տիբեթում: Նա մի ծերունի մոլլա էր, այնքան հարուստ, որքան հարուստ կարող էր լինել վանահայրն ընդհանուր Պարսկաստանի մի ուխտատեղիի, ուր թափվում են բոլոր շիաների գանձերը:

Նույն միջոցին գնդապետի զորապետն նորան յուր մոտ է կանչում և ասում է այս խոսքերը. «Օհան, կուսակալի դստեր հարսանիքն է, այդ դու գիտես. բայց քեզ հայտնի՞ է, որ քո զորապետն սիրում է նրան»: — «Ես քո սրտի մեջ չեմ նստած, որ գիտենամ», սառը կերպով պատասխանում է գնդապետը: «Այդ իրավ է, ես այդ մասին մինչև այսօր քեզ ոչինչ չեմ ասած, բայց, Օհան, եթե նրան տանեն, քո զորապետը կմեռնի հուսահատությունից»: — «Ես ի՞նչ կարող եմ անել», — հարցնում է գնդապետը: «Դու կարող ես անել երկու բան, պատասխանում է զորապետը, մին՝ որ օրիորդին կարող ես ազատել ծերուկ մոլլայի գրկից, մյուս՝ որ կարող ես բախտավորել քո զորապետին»: — «Ի՞նչ հնարքով», հարցնում է բոլորովին շփոթված Օհանը: — «Լսի՛ր, ես կասեմ քեզ, էգուց գիշեր պետք է տանեն հարսին, այս գիշեր դու նրան պետք է այնպես թռցնես յուր տեղից, որպես ծիտը յուր բույնից»: — «Հետո ինձ ինչ կանեն, գիտե՞ս»: — «Քեզ ոչինչ չեն կարող անել»:

Գնդապետը երկար ընդդիմանալուց հետո, վերջապես հանձն է առնում կատարել զորապետի կամքը: Նրա ձեռնարկությունն թեև կապված էր սարսափելի վտանգների հետ, բայց նա յուր հանդուգն վստահությամբ արհամարհում է բոլորը: Կուսակալի տան բոլոր ծակամուտներն

հայտնի էին նրան, նա նույն գիշերում հայտնվում է հարսնացու օրիորդի սենյակում: Նա արթուն է լինում, նա ամենևին չէ զարհուրում, երբ տեսնում է գնդապետին: «Դու ինչո՞ւ մտար այստեղ», — հարցնում է օրիորդը: — «Եկա քեզ տանելու», պատասխանում է գնդապետը: — «Աստված իմ ձայնը լսեց, ասում է աղջիկը, ուրեմն գնանք»: Օրիորդը վեր է կենում և առանց երկար ու բարակ խոսելու կամենում է հետևել նրան: Այս վարմունքը զարմացնում է գնդապետին, և նա հարցնում է պատճառը: — «Դեռ դու չեկած, ասում է օրիորդը, ես աղոթք էին անում, խնդրում էի աստուծուց, որ ինձ չգցե այն ծերուկ մոլլայի ձեռքը. Որոշեցի մինչև տասն անգամ շուռ տալ իմ տերողորմյայի հատիկները, և մինչև վերջացնելն սպասել, կամ աստված կուղարկեր յուր հրեշտակը ինձ ազատելու, կամ եթե ոչ, ես վճռել էի ինձ խեղդել: Բայց աստված կատարեց իմ խնդիրքը»:

Գնդապետի սիրտն սկսում է իրան տանջել, նա չէ կամենում, օրիորդի հուսահատական դրությունից օգուտ քաղելով, նրան մեկ գերությունից ազատել և նրա կամքին ընդդեմ մի ուրիշ գերության մեջ գցել: Այս պատճառով պատմում է նրան, թե ինքն ինչ նպատակով օրիորդի սենյակը մտավ: Օրիորդը հայտնում է, թե ինքը ոչ մի զորապետի մոտ գնալու ցանկություն չունի, թող թե լիներ նա Շահի որդին, և խնդրում է իրան հանգիստ թողնել կատարելու յուր վերջին վճիռը, այսինքն՝ անձնասպան լինելու: «Բայց եթե ես քեզ բռնությամբ տանի՞մ», — հարցնում է գնդապետը: — «Այն ժամանակ դու կտանես իմ դիակը միայն: Տեսնո՞ւմ ես այդ դանակը»: Օրիորդը հանում է յուր ծոցից մի դանակ և պատրաստվում է խրել յուր կուրծքը: Գնդապետը խլում է դանակը սրա ձեռքից, ասելով. «Ես կտանեմ քեզ այնտեղ, ուր դու ինքդ ցանկանում ես»:

Մյուս օրը գնդապետը և օրիորդը կուսակալի ապարանքից անհետանում են: Բոլոր քաղաքն խռովության մեջ է ընկնում: Դեպի ամեն կողմ մարդիկ են ուղարկում որոնելու փախստականներին: Բայց գտնել անհնար է լինում: Միայն մի շաբաթից հետո քաղաքից շատ հեռու գտնվում են մի կնոջ և մի տղամարդի հոշոտված մարմիններ, որոնց գլուխներն անհայտ էին, և օրիորդին պատկանող մի քանի իրեղեններ նրանց մոտ գտնելով, կարծում են, թե սպանվածն նա պետք է լինի: Դորանով խռովությունը դադարում է: Բայց դա մի խաբեական հնար էր, որով գնդապետն կամեցել էր ծածկել յուր փախուստի հետքերը:

Մի ամսից հետո, Շեբազ քաղաքում, մի պարսիկ Ահմեդ անունով և մի գյուղացի աղջիկ Ֆաթմա անունով, մի մոլլայի մոտ գրել տվեցին իրանց ամուսնության թուղթը. նրանցից մեկը գնդապետ Օհանն էր, մյուսն իշխանուհի Զոհրան — Մեշհեդի կուսակալի դուստրը...:

ՆԱՄԱԿ Ե

Ես դուրս եկա Խոյ քաղաքից:

Առաջին անգամ ճանապարհորդը Պարսկաստանում տեսնում է մի ուղիղ և հարթ-հավասար ճանապարհ, որ հովանավորված էր երկու կողմից ուռենի ծառերով: Այս ուղին բավական երկար է, և ձգվում է սկսյալ քաղաքադռնից մինչև այն մեծ և գեղեցիկ կամուրջը, որ շինված է Ղոթուր գետի վերա:

Անցնելով կամուրջը, կարմիր սարի գագաթան վերա երևում էր մի փոքր մատուռ, նույն սարի կարմիր քարերից շինված: Նրա տխուր և տրտում կերպարանքն գրավեց իմ ուշադրությունը: Ես մտածում էի, թե մահմեդականների մզկիթն լինելու էր այն: Բայց տեսնելով, որ իմ ուղեցույց հայը,

գդակը առած, սկսավ ջերմեռանդությամբ նայել դեպի մատուռը և խաչակնքել յուր երեսը, հասկացա, որ մատուռը պատկանում էր քրիստոնյաներին:

—Ի՞նչ մատուռ է այդ, — հարց արի ես ուղեցույցես, որ դեռ չէր դադարել աղոթքի նման մի բան կարդալուց:

—Սուրբ Վարդանն է, աղա, սուրբ Վարդանը, ծառա եմ նրա մեծ զորությանը, — պատասխանեց նա ջերմեռանդությամբ:

Եվ ուղեցույցս սկսավ պատմել, թե սուրբ Վարդանը, այստեղ պատերազմելով անհավատների հետ, նահատակվել էր և նրա անունով շինված էր այս մատուռը: Եվ նա շատ զրույցներ ասաց սուրբ Վարդանի մասին: Բայց նա, որպես երևում էր, գրագետ մարդ չէր, և նրա խոսքերն չէին նմանվում գրքից սերտած պատմության. — նրանք կենդանի ավանդություններ էին, որոնցմով մեր կրոնական հերոսի սուրբ հիշատակը դեռ անմոռաց մնացել էր տեղային հայերի սրտերի մեջ:

Մատուռից կես մղոն անցնելով, հասանք Դուղլաղ, այստեղ կան մի քանի մերկ բլուրներ, որ տալիս են պատվական աղ:

— Նայի՛ր, աղա, — ցույց տվեց իմ ուղեցույցը մի քանի մեծ քարաժայռեր, որոնք թավալված էին աղահանքի ստորոտում: — Տեսնո՞ւմ ես այդ քարաժայռերը, — հարցրուց նա, — սուրբ Վարդանը հալածել է անհավատների գլխավորին մինչև դրանց մոտ, փախստականը յուր անձը ազատելու համար պատսպարվել է այդ
քարաժայռերի ետքումը, բայց սուրբն Վարդան յուր նետերով ծակոտել է քարերը և սպանել է նրան:

Ես ձիս քշեցի և մոտեցա, որ տեսնեմ այն քարաժայռերը: Եվ իրավ, նրանց վերա կային անհամար ծակտիք, հայտնի բան է, առաջ էին եկել քարի բնական կազմությունից: Բայց շատ հետաքրքրական եղավ, երբ տեսա, մի քանի թուրքի կանայք լողանում էին աղբյուրի ջրով, որ բխում էր նույն քարերից փոքր-ինչ հեռու: Նրանք ինձ տեսնելով, փախան, թաքնվեցան քարերի հետևում, բայց մի պառավ մնաց, որ պահում էր նրանց հագուստը:

— Ինչո՞ւ դրանք լողանում էին այս ջրով, — հարց արի պառավից, կարծելով, թե աղբյուրի ջուրն ուներ որևիցե բժշկական հատկություն:

— Օջախ (նվիրական տեղ) է, սահաբ (տեր) օջախ է, — պատասխանեց պառավը ամոթխածությամբ յուր երեսը ծածկելով. — փարատում է բոլոր ցավերը, երբ մարդիկ լողանում են նրա ջրով, — ավելացրուց նա:

— Ի՞նչ ասել կամիս, — հարց արի ես, ամենևին չհասկանալով պառավի խոսքերը:

— Ղազանֆարը, այն մեծ փահլավանը (հսկան) այստեղ սպանել է մեր պապերին, — ասաց նա հոգվոց հանելով: — Տեսնո՞ւմ ես այս աղբյուրը, դրա ջուրը բխում է նրանց արյան կաթիլներից...:

Ուղեցույցս պատմեց, թե մահմեդականներն այս աղբյուրը և այն ծակծկված ժայռերի տեղը համարում են օջախ, այսինքն՝ մի նվիրական սրբավայր, և ամեն ուրբաթ երեկո, հեռավոր

տեղերից գալով, վառում են ճրագներ և ծխում են ուզառլիկ (դա մի տեսակ բույսի սերմ է, որ խունկի փոխարեն գործ են ածում մահմեդականներն, թեև ամենևին անուշահոտ չէ)։ Ես մոտ գնացի, տեսա, արդարև, հարյուրավոր խեցեղեն ճրագներ, սևացած ձեթի և մուխի մեջ, շարված էին քարերի վերա։

Բայց զարմացա, թե ի՞նչ հարաբերությամբ ավանդությունն հիշեցնում է այստեղ Ղազանֆար անունը և ինչ պատճառով նա շնորհված է մեր հսկա նահատակին։

Ղազանֆար նշանակում է առյուծ հաղթական, կամ իբրև ճիշտ հայոց բառ՝ գազաններին հարկանող (գազանահար), որովհետև մեր հոն պարսկերենի մեջ միշտ ֆեի է փոխվում, որպես ֆարման հրաման, ֆրուշթա՝ հրեշտակ, ֆամ՝ համ։ Ղազանֆարը, կամ գազանահարը եղել է պարսից և հայոց Հերքուլեսը, հետո այս անունը որպես տիտղոս սեփականել են և հետագա հերոսներին, որպես մահմեդականությունը շնորհեց նորան Աբութալեբի որդի Ալիին յուր քաջագործությանց համար։

Ավանդություններն, անցնելով մի ազգից դեպի մյուսը, կերպարանափոխվում են, բայց նրանց իսկությունը մնում է միևնույնը։ Ուստի շատ զարմանալի չէ, որ պատմական ղազանֆար անունը մի ժամանակ հեթանոս պարսիկներն շնորհեցին մեր Վարդանին, իսկ այժմ մահմեդական պարսիկներն շնորհում են իրանց Ալիին, որովհետև մահմեդականությունը սովորություն ունի բոլոր նշանավոր անձանց անունները դնել իսլամի շրջանակի մեջ։ Որպես Ղորանի Աղեքսանդր Մակեդոնացին (Սկանդար Ղուլկարնեյն), Պղատոնը (Աֆլաթուն), Արիստոտելը (Ալասթու) և Սաբայի թագուհին, մինչև անգամ Քրիստոսը ու Հովհաննես Մկրտիչը, — բոլորն մահմեդականներ են։

Ես նայեցա, շատ հավանական է մտածել, թե Վարդանանց պատերազմը կամ Սրբույն Վարդանա նահատակության տեղը եղել է վերոհիշյալ մատուռի մոտակայքում, այսինքն՝ Ղոթուր գետի ափերի մոտ, որ կարծվում է պատմական Տղմուտը։ Թեպետ հայերից շատերի կարծիքն այն է, թե պատերազմը եղել է Մագվա դաշտերում, բայց այդ կարծիքը տարակուսական է երևում, որովհետև այնտեղ ոչ մի ընդարձակ դաշտ չէ հիշեցնում մեզ Ավարայրին և ոչ մի գետ՝ Տղմուտը։ Բայց ինձ երևում է, թե գլխավոր պատերազմը եղել է Դուզլաղի հարավային կողմում, այն նվիրական աղբյուրների մոտ, և այն ըստ ավանդության նետերով ծակոտյալ ժայռերի մոտակայքում, որտեղից փոքր-ինչ հեռու Ղոթուր գետը, յուր պղտոր ջրով, լիլային և ցեխոտ հատակով, ձևացնում է մի հեղեղատ, որին այլ անուն անհարմար էր տալ, քան անունս Տղմուտ։ Եվ ընդարձակ դաշտը, այնպես ցամաք և անապատ, հիշեցնում է ողբալի Ավարայրը...։

Խոյ քաղաքից ես դուրս եկա կեսօրից հետո։ Նույն ավուր գիշերի տասն ժամին հասա Սալամաստ գավառը։ Փայաջուկ անունով մի գյուղում իշևանեցի ես։ Այդ գյուղի բնակիչներն, հարյուր և քսան տան չափ, բոլորն հայ էին։ Արևելքում, մի հայաբնակ գյուղում, օտարականի իջևանն է՝ կամ քոխվայի (տանուտերի) տունը կամ քահանայի տունը և կամ ժամատան գավիթը։ Բայց ես իջևանեցի եկեղեցու երեցփոխանի տանը։ Մեր գրաստները տեղավորեցին, բեռները ներս տարան։ Եվ որովհետև ամառ էր, գյուղացիներն քնում էին կտուրների վերա, ինձ համար ևս իրանց մոտ տեղ պատրաստեցին։

Մեսրոպը շուտով կրակ վառեց, թեյ պատրաստեց, և խմելով տաք ըմպելին, ես բավական հանգստացա, բայց սաստիկ սոված էի: Մեսրոպին հրամայեցի, ինչ որ պետք էր գնե տանտերից և ընթրիքի հոգածություն անե: Քանի րոպեից հետո նա դարձավ տանտիրոջ հետ, որն մի ծերունի, մորուքավոր և բավական փառահեղ կերպարանքով մարդ էր: Նա շատ քաղաքավարությամբ գլուխ տվեց և կանգնեցավ իմ առջև:

— Աղա, — ասաց նա, — դուք աստուծո հյուրն եք, թե դուք, թե ձեր գրաստները և թե ձեր ծառաներն այստեղ արծաթով ոչինչ գնելիք չունիք, մենք միասին կբաժանենք, ինչ որ ծառայիդ պարգևել է աստված:

Այս խոսքերը նա արտասանեց այնպիսի մի զգալի կերպով, մինչ ես երևակայում էի, թե ինձ հետ խոսում էր հայր Աբրահամը, և ես չկամեցա վշտացնել նահապետական ծերունու հյուրասիրական զգացմունքը, և պատասխանեցի, թո՛ղ կամքն լինի:

Իմ հյուրընկալն շնորհակալությամբ հեռացավ:

Շաբաթական պաս էր:

Ես տեղեկացա Մեսրոպից, թե ընթրիքի համար պատրաստում էին պասվա կերակուրներ: Ես պատվիրեցի նրան, որ ինձ համար խաշել տար մի քանի հատ ձու և տապակեին մի հատ վառյակ: Մեսրոպը ինձ ասաց հեգնական կերպով.

—Չլինի՞ թե այստեղ էլ ուզում ես ուրանալ քո հայությունը:

—Ինչպե՞ս, — հարց արեցի ես:

Նա պատասխանեց, թե ես այս առաջարկությունը արդեն արեցի, բայց տանուտերն ասաց, մի՞թե քո աղան հայ չէ, և կարելի՞ է լուծել սուրբ աստվածածնա պասը:

Ես չկամեցա մոլորության պատճառ տալ իմ ջերմեռանդ հյուրընկալին և խոնարհվեցա կրոնքի պահանջմունքին... Բայց շտապում էի, արդյոք ե՞րբ պիտի տան ընթրիքը:

Մին էլ տեսա մի կնամարդ լռությամբ մոտեցավ, իմ առջև դրեց մի մեծ պղնձե տաշտ և ձեռքումը բռնած ուներ նույնպես պղնձե մեծ իբրիղ: Նա սկսավ իբրիղից լեցնել տաշտի մեջ սառն ջուր:

Այս կնամարդն գլխին ծածկած ուներ կարմիր աբրեշումե քող, որ առջևից իջել էր մինչև արծաթե քամարը, երեսը բոլորովին անտեսանելի կացուցանելով, և հագուստը ոտքից ցգլուխ բոլորն խայտաճամուկ և բավականին նոր ու մաքուր էր:

Դա տանտիրոջ մանկահասակ հարսն էր:

Ես հարցուցի, թե ի՞նչ էր կամենում նա:

Նորահարսն ոչինչ չպատասխանեց, միայն շարժեց գլխով և ձեռքով ցույց տվեց տաշտը:

Ես հասկացա, որ այս երկրի կանայքն սովորություն չունին օտար տղամարդերի հետ խոսելու, բայց ի՞նչ բանի համար էր տաշտը, այդ հասկանալ չկարողացա: Մեսրոպն հայտնեց, թե նա կամենում է, որ ես լվանայի ոտքերս, երեսս և ձեռներս և սրբեի ինձանից ճանապարհի փոշին:

—Այդ ես ինքս կարող եմ անել, ինչո՞ւ է նա նեղություն քաղում, — ասացի ես:

—Այդ երկրի կարգն այդպես է, — պատասխանեց Մեսրոպը, — եթե թող չտաս, քեզանից կնեղանան:

Այդ նահապետական սովորությունը զմայլելուց ինձ, և ես սիրով ընդունեցի մանուկ նորահարսի հրավերը: Նա սկսավ տաշտի մեջ լվանալ իմ ոտքերը յուր փափուկ ձեռքերով, որ ներկած էին հինայով, և նրա մատները զարդարած էին մատնիքներով, իսկ բազուկները՝ ապարանջաններով և գույնզգույն հուլունքներից շարած բազկակապով (ղոլբաղ): Եվ շարժվելու միջոցին նրա քողի տակից լսելի էին լինում, նույնպես հուլունքներով շարած, ոսկի և արծաթի դահեկաններով շղթայած, նրա պարանոցի և գլխի զարդարանքի զնգզնգալու ձայներն:

Նույն միջոցին ես մտածում էի այն բանի վերա, թե որքա՛ն հաճությամբ ընդունեց և Մեսիան Մագդաղենացի կնոջ մի այսպիսի հյուրասիրական պատիվը: — Դա մի սովորություն էր Իսրայելի մեջ, որ հյուրի ոտքերը լվանում էին և նրա գլուխը օծում էին յուղով: Բայց որտեղի՞ց մտավ հայերի մեջ:

Իմ լվացվելեն հետո նորահարսն լռությամբ գլուխ տվեց, և առնելով տաշտը, հեռացավ: Իսկ ես, արդարև, զգացի բավականին զվարթություն և կազդուրում իմ հոգնած անդամների մեջ: Կարծես թե այդ հանգստությունն ինձ նոր ախորժակ տվեց ուտելու:

Չուշացավ և ընթրիքն: Շուտով սեղանը սփռվեցավ, և կերակուրներն միանգամով մեջ բերվեցան: Ծերունի տանուտերն, մի ահագին դդմասրվակ լիքն գինի յուր մոտ դրած, ինձ հետ սեղան նստեց:

Նույն միջոցին ես տեսա, երկու բարձրահասակ տղամարդ, թեև արևից այրված դեմքով, բայց հսկայատիպ և զվարթերես, մոտեցան, խոնարհությամբ գլուխ իջուցին և, ձեռքերը սրտերին դրած, կանգնեցան մեր առջև:

—Դրանք ովքե՞ր են, — հարցուցի ես:

—Քո ծառայքը, — պատասխանեց ծերունին: Ես հասկացա, որ նրա որդիքն էին:

—Հրամայեցեք, որ նրանք ևս մեզ հետ սեղան նստեն, — ասացի տանուտերին:

—Ո՛չ, — պատասխանեց խորհրդական ձայնով ծերունին. — նրանք դեռևս երկար պետք է սպասավորեն, մինչև բարձի տեղ գտնեն ձեզ պես պատվավոր հյուրերի մոտ:

Ես տեղեկացա, որ ծերունու որդիքն այս մեծարանքը ցուցանում էին ոչ թե ինձ պատվելու համար, այլ նրանք միշտ համարձակություն չունեին նստելու իրանց հոր մոտ, որպես գերդաստանի պատրիարքի մոտ, որի հեղինակությունը հասնում էր մինչև անսխալականության: Կերակուրները, թեև պատրաստված էին ընդեղեններից, բանջարներից, բայց այնքան պարզ,

համադամ և քաղցրաճաշակ էին, մինչև ես ոչ մի անգամ քեզ հետ, սիրելի ընկեր, այնպես ախորժակով չեմ կերել եվրոպական ամենապատվական հյուրանոցներից մեկում:

Ես ծալապատիկ նստած էի ասիական թանձր գորգի վերա և, ետ դնելով եվրոպական դանակն ու պատառաքաղը, ուտում էի ձեռքով, որպես ուտում էին մեր պապերը: Դու կասես, մեր պապերը մինչև անգամ Վաղարշակ Արշակունիի օրերում, այսինքն՝ Քրիստոսից 150 տարի առաջ, պատառաքաղ էին գործածում: Այո՛, գործ էին ածում միայն բարձր նախարարները՝ ազնվապետական դասը, բայց ես և դու ձգել ենք ազնվապետությունը:

Որքա՛ն քաղցր է կենակցությունը ռամկի հետ, ժողովրդի հարազատ որդու հետ: Եթե դու ուզում ես ճանաչել նրան, պետք է նրա խրճիթը մտնես, նրա հետ բաժակներ փոխես: Ես երևակայում էի, թե այնօր կատարյալ հայ էի և սեղան էի նստած կատարյաք հայի հետ, որի կյանքի ամեն մի գծերից արտափայլում էր հայության հատկանիշը:

Ծերունին շուտ-շուտ լեցնում էր ահագին գավաթը գինով, մատուցանում էր ինձ, և ես խմում էի ու խմում...:

Ես հարցրի տանուտերից, թե նա քանի որդի ունի:

—Որդիների կողմից հարուստ եմ, — պատասխանեց նա, — երեքն տանն են, իսկ երկուսն պանդխտության մեջ:

—Ինչո՞ւ համար են գնացած:

—Փող աշխատելու:

—Մի՞թե այստեղ չեն կարող աշխատել:

—Այստեղ աշխատածը մեր ձեռքից խլում են... եթե որդիքս դրսից փող չբերեն, մենք չենք կարող ապրել:

— Դեռ ես բախտավոր եմ այդ մասին, — ավելացրուց նա, մեր երկրի տների մեծ մասում տղամարդիկ չկան, բոլորը պանդխտության մեջ են:

—Աղջիկ քանի՞ հատ ունիս:

—Փառք աստծո մի հատ, այն ևս մարդի եմ տված:

Ես նկատեցի, այստեղ ևս աղջիկ զավակների ծնունդը ծնողներին դժգոհություն է պատճառում, չնայելով, որ հայրերը նրանց վերա ավելորդ ծախսեր չեն անում, այլ ընդհակառակն փեսայից փող են ստանում:

Պարզ լուսնկա գիշեր էր:

Տանտիրոջ հարսերը կից կտուրից, նստած իրանց քնաշորերի վրա, և թաքնված իրանց զավակների օրորոցների ետքում, երբեմն գաղտուկ նայում էին մեզ վերա: Որքա՛ն զվարճություն է զգում մարդ, երբ քողի տակից հանկարծ տեսնում է այն վարդագեղ դեմքերը... նրանց վառվռուն աչքերի երևույթն այնքան հրաշալի է և արագընթաց, որպես ասուպների սահումը պարզ երկնակամարի վերա:

Իմ զգացմունքներն բորբոքվեցան... ես ուրախ էի, որ շրջապատած եմ հայերով... հայերով, որոնց սիրտն այնքան պարզ է, որոնց միտքն այնքան բարի է, որոնց հավատքն այնպես ջերմ և մաքուր է...:

Եվրոպայում կանայք երբեք չէին գրավում իմ ուշադրությունը. Նրանք բոլոր իրանց արվեստական կեղծիքներով և պաճուճանքներով անցնում էին իմ մոտից, որպես մեռյալ ուրվականներ: Կարծես նրանք այնպիսի կերակուրներ էին, որ մարդ, հաճախ տեսնելով, և ստեպ ուտելով, վերջապես զզվում է...: Իսկ այժմ այդ ծածկյալ հավերժահարսունքը ինչո՞ւ այնպես զմայլեցնում էին ինձ: Ինչո՞ւ ես այնպես անկեղծ պարզությամբ նայում էի նրանց վերա: — Ես գտանվում էի, այո՛, նահապետական սրբարանի մեջ...:

Ես բավականին ոգևորված էի, և սկսեցի երգել Հայաստանի այն գեղջկական երգերից մեկը, որ շատ անգամ քեզ հետ երգել ենք, սիրելի ընկեր, բայց երգել ենք օտար երկրում, օտար երկնքի տակ...:

Երևի, ծերունուն հաճելի եղավ իմ երգը: Խղճալին առաջին անգամ լսում էր մի երգ ժողովրդական բարբառով: Նրա խորշոմած աչքերն վառվեցան ուրախությունից: Եվ նա խիստ ախորժելի բացատրություն տալով յուր դեմքին, ասաց երգս վերջացնելեն հետո.

— Ձայնդ անսպառ, աստված ավելի շնորհ տա:

Հայերն այս կողմերում իրանց լեզվով չունին ժողովրդական երգեր. նրանք երգում են թուրքերեն կամ պարսկերեն լեզվով, և հայ աշուղներն մինչև անգամ իրանց երգերը հորինում են նույն լեզուներով: Պատճառն տիրող ազգերի ազդեցությունն էր, բայց ծերունի տանուտերն բոլորովին այլապես էր մեկնում. նա ասում էր, թե հայոց լեզվով միայն կարելի է հոգևոր երգեր ասել, և դա տիրացուներին ու տերտերներին է պատկանում:

— Բայց դու հասկանո՞ւմ ես, ինչ որ երգում են նրանք, — հարցրի ես:

— Գրոց լեզուն ես ո՞րտեղից կարող եմ հասկանալ, — պատասխանեց նա:

— Բայց իմ ասածը հասկացա՞ր:

—Հասկացա:

—Ո՞րն է լավ:

—Տերտերի ասածը հոգու շահ ունի, բայց քո ասածը մարմնու, — պատասխանեց նա: — Բայց հոգին աստծունն է, մարմինը՝ սատանային:

Մինչև ո՞ր աստիճան խաբված է մեր միամիտ ժողովուրդը...:

Ծերունին, նկատելով, որ ինձ շատ դուր չեկավ յուր ասածը, թույլտվություն խնդրեց, որ յուր որդիներից մեկն երգե: Ես հաճությամբ ընդունեցի:

Փոքր որդին սկսեց երգել, բայց մեծը ձայն էր պահում: Նրա թուրքերեն բայաթին հնչվում էր ցավալի տխրությամբ: Ոչինչ արտահայտություն այնքան ճշտությամբ չէ թարգմանում սրտի հատկությունները, որպես երգը: Ա՛խ, սիրելի ընկեր, մի ստրկացած ազգի երգն նույնպես տխուր է, որպես նրա կյանքը...:

Երգի յուրաքանչյուր տան վերջին տողը ավարտվում էր այս խոսքերով. «Եթե դու ինձ չսիրես, զանգատս խանին կանեմ»: — Խանը տիրում է հայ մարդու կենսական բոլոր երևույթների վերա, մինչև անգամ նրա սիրո և հոգեկան զգացմունքների մեջ նա իշխում է...

Ցավալի մտածմունքներ պաշարեցին ինձ... իմ զվարճություններն մի ակնթարթում ցնդեցան... և ես ընկղմվեցա դարձյալ դառն խորհրդածությանց մեջ:

Մեր ընթրիքն վերջացավ գոհության աղոթքով, որ կարդաց ծերունին, թեև նա գրագետ չէր: Նա աստծուն փառք տալեն վերջը, ինձանից ներողություն խնդրեց, ասելով, թե յուր սեղանը բոլորովին արժան չէր պատվելու ինձ նման հյուրին: Նա շուտով հեռացավ, մտածելով, թե ես հոգնած եմ, և թողեց ինձ հանգստանալ: Բայց որդիքն ոտքի վերա սպասում էին, մինչև ես քնեի, մտածելով, գուցե ես նրանց պատվիրելու մի բան ունենամ:

Ես խնդրեցի նրանցից մի փոքր խմելու ջուր դնել իմ մոտ և հեռանալ: Բայց զարմացա, փոխանակ ջրի դրեցին գինի: Ես հասկացա, այդ մի առանձին պատիվ էր հյուրին:

Թեև այն օր սաստիկ հոգնած էի, բայց քունը քանի ժամ էր չէր մոտենում իմ աչքերին: Ես մտածում էի: Բայց ինչե՞ր չէի մտածում ես...: Ես մտածում էի, մի այսպիսի ժողովուրդ, այդքան բարեսիրտ և բարեմիտ, ինչո՞ւ պիտի զուրկ մնա ուսումից և կրթությունից: Ես մտածում էի, թե մենք, դատարկ խոսքերով միայն գործ շինող, բայց իրապես ծույլ և անպիտան ուսումնականներս մի՞թե պարտական չենք ժողովրդին՝ լուսավորությունը նրանց մեջ չտարածելու համար: Ես մտածում էի, միթե աստված նրանց արյունը և դառն արտասուքը մեզանից՝ գիտուններիցս չէ՞ պահանջելու: Ի՞նչ է, որ նրանց թողնում է ստրկության մեջ, ի՞նչ է, որ նրանց ճնշվիլ է տալիս բռնակալ իշխանի լծի տակ, գործելու միմիայն օտարի շահերի համար: — Տգիտությունը: Բայց ո՞վ պետք է առաջնորդե նրանց կյանքի ուղիղ և լուսավոր ճանապարհի վերա: Մեր տանտերե՞րը — նրանք իրանք ուղղության կարոտ են...:

Ա՛խ, սիրելի ընկեր, շատ բաների վերա մտածում էի ես... բայց իմ բոլոր մտածություններն անրջային ցնորքներ էին...: Մենք նմանում ենք այն տուն շինողներին, որ միայն թղթի վերա մեռած մակարդակներ են գծում, և կարծում են, թե դորանով ամեն ինչ վերջացած է:

Գեղեցի՛կ գիշեր էր: Լուսինը փառահեղությամբ լուսավորում էր աստուծո արարածները: Ամառնային թարմ օդը շնչում էր ախորժելի փափկությամբ: Ես անքուն, իմ մահճի միջից լսում էի, թե որպե՛ս մերձակա կտուրների վերա նորահարսունք, օ՛ր-օ՛ր երգելով, քնեցնում էին իրանց

նորամանուկները, լսում էի, թե որպես պառավ մամիկները, հավաքած իրանց շուրջը հարցասեր թոռնիկներին, ցույց էին տալիս նրանց աստղազարդ երկինքը և պատմում էին զանազան առասպելներ համաստեղների մասին: Նրանք ցույց էին տալիս, թե ո՛րն է «Կոստանդիանոս թագավորի խաչը», — ո՛րն է «Յոթն եղբարց սեղանը» — ո՞րն է «Քարն ու կշիռը» — ո՞րն է «Բազումքը» և կամ ո՞րն է «Գութանը» և այլն:

—Մամիկ, մամիկ, այն աստղն չէ՞ արդյոք գայլը, որ կերավ գութան վարողներին հաց տանող երեխային, — հարցնում է փոքրիկ թոռնիկը:

—Հա՛, սիրեկան, այն պլպլացող աստղը գայլն է և նրա մոտ այն փոքրիկ աստղը հաց տանող երեխան է, — ասում է պառավը և հետո սպառնում է. — Նայի՛ր, Խաչո, որ մինակ դաշտը չգնաս, թե չէ, քեզ էլ կուտե գայլը:

Երեխան խոստանում է մինակ տանից դուրս չգալ և այնօրից ծնանում է նրա սրտի մեջ երկչոտություն և վախ գազաններից...:

Արորին այստեղ ասում են «ոսկի» և ոսկի արորը որպես հայերի, նույնպես և համարյա բոլոր արիական ցեղերի ավանդությանց մեջ ունի յուր միանման պատմությունը. նա համաստեղների կարգն է դասվում:

ՆԱՄԱԿ Զ

Ես այժմ Սալմաստումն եմ: Դա Ատրպատականի այն գավառն է, որ հայտնի է մեր պատմության մեջ անունով Զարևանդ կամ Զարեհավան, որ նշանակում է արևի ավան21: Եվ արդարև, կենդանի ավանդությունն մինչև այսօր պահել է այն հին զրույցը, թե այստեղ եղել է մի մեծ քաղաք, որ նվիրված էր արևին: Եվ մինչև այսօր Քոհնա-Շահարից (հին քաղաքից) սկսյալ մինչև Ահրևան՝ այսինքն Զարեհավան գյուղը երևում են հիշյալ լայնատարած քաղաքի հետքերը:

Ատրպատականը, կամ այլ կերպով, Ատրպայգյանը (կրակարան) որպես ցուցանում է այդ անվան բուն ստուգաբանությունը, եղել է խանձարուրն մոգական կրակի: Ատրպատականի զանազան գավառներում, առավելապես Սալմաստում, մինչև այսօր մնացել են իրանց նվիրական անմատչելիության մեջ ահագին մոխրաբլուրներ, որք, շատ հավանական է, ձևացել են ատրուշանների անհանգչելի կրակին դարերով զոհված վառելիքներից: Դրանք ցուցանում են, թե Զրադաշտի կրոնքը ավելի տարածված է եղել Զարեհավանում:

Եվ շատ պախարակելի չէ ոմանց կարծիքը, թե Սալմաստը կամ նրան կից Ուրմին եղել են Զրադաշտի հայրենիքն, որովհետև մինչև այսօր Սալմաստում մի գյուղ պահպանել է մեծ մոգի անունը, դա կոչվում է Զրադաշտ:

Սալմաստում ատրուշաններից ձևացած մոխրաբլուրներից նշանավոր են՝ Բութ-Ամեն (արձան հավատարմության), Փայա-ջիկի բլուրը, Դրիշկի բլուրը և Մահլամ գյուղի բլուրներն: Բայց շատերն կիսով չափ, կամ բոլորովին անհետացած են, որովհետև երկրագործները նրանց մոխիրը տանում են իրանց արտերը պարարտացնելու: Այստեղ անտառներ չլինելու համար գյուղացիք իրանց անասունների աթարը, փոխանակ հողերը պարարտացնելու, գործ են ածում վառելիքի

համար, և միակ բանը, որ մնում էր նրանց արտերին ուժ և զորություն տալու, էր մոխիրը: Իսկ կրով կամ այլ արվեստական կերպով հողի պարարտացնելը դեռ անծանոթ է այստեղ:

Գիշերով հասած լինելով Սալմաստ, ես չկարողացա լավ դիտել նրա դիրքը, բայց առավոտյան, երբ զարթեցա քնից, նկատեցի, որ գտանվում եմ մի հիանալի հովտի մեջ: Այդ հովիտի երեք կողմերն բոլորակ ձևով պատած են լեռներով, իսկ արևելյան կողմում ծփում է Ուրմիո գեղեցիկ լճակը: Սոլայ կամ Հարազով գետը, ճյուղավորվելով բազմաթիվ փոքրիկ առվակներով, ոռոգում է հովիտի երեսը: Եվ գյուղերը, զարդարած այգիներով և ձեռատունկ ծառերով, միախառնվում են և ընծայում են հովիտին բոլորակ անտառի կերպարանք:

Առավոտյան ես զարթեցա արևածագեն խիստ վաղ: Տրկ... տրկ... տրկ... լսելի եղավ մի օտարոտի ձայն: Դա ժամատան կոչնակի ձայնն էր, որ մղդսին դռնից դուռն ման գալով, փայտե մուրճով թակում է գյուղացոց դռները և յուր հատուկ բարեպաշտական ձայնով եղանակում է. «Ա՛յ քրիստոնյայք, ժամ համեցե՛ք, և ձեր հոգու ճարը լացե՛ք»: Զանգակի քաղցրահնչյուն ձայնը լռած է մահմեդական Պարսկաստանում, սիրելի ընկեր, որովհետև քրիստոնյա եկեղեցվո նաղուսի ձայնը պղծում է մոլեռանդ մուսուլմանի լսելիքը...:

Կտուրը, որի վերա պատրաստած էր իմ անկողինը, այնքան բարձր էր, մինչև իմ առջև դրած էին գյուղի բոլոր տանիքները, և շուրջանակի կանաչին էր տալիս գեղեցկազարդ հեռակայքն: Ես վեր առի երկփողի դիտակը, որ դրած էր իմ մոտ, և սկսեցի նայել դեպի իմ չորեքկողմը: Ես տեսնում էի գյուղական ամբողջ կյանքը յուր հրաշալի անմեղությամբ: Նորապսակ, մանկահասակ հարսերը, ամենից առաջ զարթնելով, վեր են կենում անկողնից. նրանք գաղտուկ հագնվում են, մինչդեռ նրանց սկեսուրն և սկեսրայրն քնած էին, և վազում են դեպի տնային գործերը: Աղջիկներն հարսերից առաջ, սափորները դրած ուսներին, գնացել են մերձակա աղբյուրից տան համար ջուր բերելու: Ամենից հետո զարթնում են պառավ մամիկները և ծերունի հայրիկները: Նրանք, մի ժամու չափ նստած իրանց քնաշորերի մեջ, հորանջում են, իրանց մարմինը քորում են և պատմում են մինը մյուսին, թե ով ինչ բարի կամ չար երազ էր տեսել: Բայց հենց որ լսվում է ժամատան կոչնակի ձայնը, նրանք վեր են կենում, լվացվում են և դիմում են դեպի եկեղեցին:

Մի քանի ժամ տևում է այդ տեսարանը: Ես նայում եմ... և ինձ երևում են հիանալի երեսներ թարմ, առողջ և անխարդախ գիծով: Ինձ պատկերանում է բիբլիական աշխարհը: Ես հիշում եմ Մարգարե թագավորին, որ մի այդպիսի կտուրից նայելով, սիրահարվեցավ գեղեցիկ Բերսաբեի վրա...

Արևը ծագեց: Ա՛խ, ի՛նչ սքանչելի կերպով նա վեր է բարձրանում Ուրմիո լճակից՝ ողջունելու գյուղացիների գործունեությունը:

Դաշտից վաղուց արդեն լսելի է լինում սայլավարի երգը, որ հունձքի արտերեն թափում է յուր աշխատության բերքը կալի մեջ: Անասունների նախիրը դուրս են քշում գյուղից: Կովերի և ոչխարների բառաչմունքն, ձիաների խրխինջն, ավանակների զռինչն, միախառնվելով, հնչեցնում են գյուղական անուշ մուզիկան...:

Հիանալի՛ կյանք:

Սալմաստը Ատրպատականի ամենից առավել հայաբնակ գավառն է, ուր կա այժմ մինչև հազար տուն հայ ժողովուրդ: Բայց 1827 թվականից առաջ հայոց գերդաստանների թիվն այստեղ հասնում էր մի քանի հազարի. նրանք գաղթեցին դեպի Ռուսաստան, թողնելով ամբողջ գյուղորայք դատարկ, որոնց մեջ հետո բնակվեցան թուրքեր: Այդ գյուղերում մինչև այսօր պահվում են հայերի եկեղեցիները և նրանց գերեզմանատները, մահմեդականների մոլեռանդությունը դեռ չէ կարողացել բոլորովին ոչնչացնել նրանց:

Ես վճռեցի մի քանի օր մնալ Սալմաստում տեղային հայ ժողովրդի կյանքը լավ ուսումնասիրելու համար: Եվ չկամենալով ավելի ծանրություն տալ իմ հյուրընկալին, մյուս օրը խնդրեցի, որ իմ կացարանը տեղափոխեն եկեղեցու գավիթում:

Ծերունին թեև դժվարությամբ, վերջապես համաձայնեցավ իմ առաջարկությանը: Եկեղեցվո գավիթում կային բավական մաքուր սենյակներ, որ հատկապես պատրաստված էին օտարականների համար. ես տեղափոխվեցա այնտեղ:

Ես այժմ առանձնացած լինելով, կարող էի լուծել սուրբ Աստվածածնա պասը, և այդ մասին Մեսրոպին ուղարկեցի մերձակա գյուղաքաղաքը, որ կոչվում էր Դիլիման, մի փոքր միս, յուղ, ձու և այլ զատիկվա ուտելիքներ գնելու:

Քանի ժամից հետո բազարից դարձավ Մեսրոպը, յուր գնած պաշարը բարձած ունենալով ավանակի վերա: Ես շատ բարկացա, տեսնելով, նա փոխանակ մի կտոր մսի, բերել էր մի ամբողջ քերթած ոչխար:

—Ի՞նչ պետք էր մեզ, հիմար, այդքան միսը, — ասացի ես նրան:

—Ապա ի՞նչ պիտոր ընեի, շներու դեմի՞ թալեի, — պատասխանեց նա տհաճությամբ:

Ես նկատեցի, Մեսրոպն նույնպես բարկացած է:

Նա սկսեց դժգոհությամբ ինքն իրան մրթմրթալ, թե ես ման էի ածում նրան «անօրենների» երկրում, ուր նա ամեն մի հանգամանքներում ստիպված էր հանդիպել անախորժությունների, ծեծ ուտել, հայհոյանք լսել: Թե այդ երկիրը Ջեյթունը չէ, ուր նա իրան վշտացնողին «շանսատակ» (շան հիշատակ) աներ, այստեղ նրա ձեռքերը կապված են: — Եվ այս բոլորի մեջ նա մեղավոր էր գտնում ինձ, ասելով, եթե նա չէ ցանկանում մեկին «շանսատակ» անել, այսինքն՝ սատկեցնել, շան հիշատակի արժանացնել, պատճառն այն էր, որ ինքն ստիպված կլիներ ինձ թողնել և փախչել, իսկ ես կմնայի առանց ծառայի:

Մեսրոպի խոսքերն բոլորովին անտեղի չէին, ես տեսա, նրա երեսը ջարդված էր և գլխիցը արյուն էր հոսել:

— Էլ ի՞նչ արեցիր, — հարցրի ես, — դարձյալ սեիդի քսվեցա՞ր:

Մեսրոպը պատմեց, թե այդպիսի դեպք պատահած չէր, միայն երբ նա մսավաճառի մոտ գնաց, և կամենալով մատով ցույց տալ նրան յուր խնդրած մսի մասը, անզգուշությամբ մատն դիպավ մսին, և մսավաճառն սկսեց հայհոյել նրան, թե ինչո՞ւ պղծեց միսը, որ այլևս չէր կարող վաճառել

որևիցե մահմեդականի, և սկսեց ստիպել Մեսրոպին, որ վճարե ամբողջ ոչխարի արժեքը և միսը ինքն տանե: Մեսրոպը ընդդիմանում է մսավաճառի մի այդպիսի պահանջմունքին, և թուրքերն հավաքվելով, ծեծում են նրան: Խղճալին ազատվում է նրանց ձեռքից, երբ վճարում է ամբողջ ոչխարի կրկնակի արժեքը:

Ինձ շատ խռովեց այդ անցքը, և չգիտեի, թե ի՞նչ պետք է անել: Վերջապես տվի Մեսրոպին մի փոքր սպեղանի, որ նա դնե յուր վերքի վերա, և ես վրդովված անցուդարձ էի անում սենյակիս մեջ: Հանկարծ ներս մտան մի քանի մարդիկ, նրանցից մինն էր իմ հյուրընկալ ծերունին, իսկ մյուսն, որ գլխին ուներ տափակ գդակ և հագած ուներ սև վերարկու, ընդառաջեց, «բարի ողջույն ասաց — իմացա, որ քահանա է: Դրանց հետ եկած էին՝ գյուղի ռեիսը (տանուտերը) և մի քանի հոգի աղսաղալներից, այսինքն՝ ժողովրդի սպիտակամորուքներից, որ հասարակության կառավարության մեջ պատվի և համարումի տեր մարդիկ էին: Բոլորն խոնարհությամբ գլուխ տվեցին, և մինչև ես հրաման չտվի, նրանք չնստեցին:

Ես շատ խղճահարվում էի, տեսնելով այս ողորմելի մարդկանց չափազանց խոնարհությունը. նրանց մեջ պակաս էր նահապետական ժողովրդի այն արձակ-համարձակ վարվողության ձևը, որ հառաջ է գալիս նրանց պարզ և միամիտ անփութությունից: Այսպիսի հարաբերություն կարելի է տեսնել անմեղ երեխաների մեջ միայն, որոնք բոլորն եղբայրներն են: Բայց հայերն այստեղ այնպես չեն, նրանց թե բնավորության և թե շարժմունքների մեջ նկատվում է ստորաքարշություն, ցած խոնարհություն, որ հառաջ է եկել դարևոր ստրկությունից: Բայց դա բնավորություն է դարձել: Եվ մարդ առաջին անգամ նրանց հետ խոսելիս, կարծում է, թե այդ ողորմելիքն չափից դուրս կեղծավոր և խաբեբաներ են, բայց այդպես չէ...:

Նրանց առաջին խոսքերն եղան բարովել իմ գալուստը, որ արտահայտում էին իրանց հատուկ ոճով և վերջացնում էին օրհնություններով: Ես կարճ շնորհակալություն արեցի, միայն տեսա, Մեսրոպն ներս բերեց, մի մեծ զամբյուղի մեջ դրած, զանազան տեսակ թաց մրգեղեններ, որպիսի են՝ խաղող, տանձ, խնձոր, դեղձ և այլն:

Ես հասկացա, որ դրանք իմ այցելուների ընծաներն են: Բարեսի՛րտ ժողովուրդ, նրանք երբեք չեն հայտնվում «մեծ» մարդու մոտ դատարկաձեռն: Սրանց խաներն վաղուց սովորեցրել են ժողովուրդը այս տեսակ զոհաբերությունների...:

Ես շնորհակալ եղա, ասելով, թե ինչո՞ւ պարտավորեցնում էին ինձ, թե ես ձրի բաներ ընդունելու սովորություն չունեի:

Նրանք պատասխանեցին. — «Դուք մեր թանկագին հյուրն եք, աստված ձեզ նման մարդիկ մեր ազգից պակաս չանե, բարով եք եկած, հազա՛ր բարով. մեր աչքի և մեր գլխի վերա տեղ ունիք, մենք և մեր որդիքն ձեր ծառաներն ենք, և մեր ունեցածը ձեզ մատաղ է»: — Մի ուրիշն ասաց. «Է՛հ, աղա, երանի՛ թե մեր ապրանքը դուք և ձեր նման աղաներն ուտեին, որ մեր արյունիցն են, թե չէ թուրքն գալիս է և տանում է, առաջն էլ չենք կարում կտրել, հենց կանգնած, աչքներս բաց-բաց մտիկ ենք անում: Գոնյա դուք կերեք, ձեզ հալալ է»:

Առատասիրտ գյուղացիների այսպիսի անմեղ խոսքերն զարմանալի ներգործություն ունեցան իմ վերա, և ես իմ մտքում ասեցի. «Բայց մենք, անպիտան գիտնականներս ինչո՞ւ չենք զոհում մեր ուսումը ձեր կրթության համար...»:

Ես ամաչեցա հայտնել նույն ավուր բազարի անցքը, որ պատահել էր Մեսրոպի հետ, որովհետև չէի կամենում նրանց մոլորության պատճառ տալ, թե պաս օրում իմ ծառան գնացել էր միս գնելու: Բայց նրանք արդեն լսել էին, և քահանան ասաց, երեսը խաչակնքելով.

—Սուրբ Աստվածածինը — ծառա լինեմ նրա մեծ զորությանը, ամեն բանի մեջ երևցնում է յուր հրաշքը: Մեսրոպի անցքը սուրբ Աստվածածնի պատիժը համարելու է:

—Ճշմարիտ է, — կրկնեցին մյուսներն:

Քահանայի այս մի քանի խոսքերը մեր քրիստոնեական դարերի ամբողջ պատմագրության կարճ բովանդակությունն էր...:

Թուրքերն խեղճ Մեսրոպի գլուխը ջարդել էին, նրան տուգանքի էին ենթարկել, ավելորդ փող էին առել — քահանան այս բոլորի մեջ մեղավոր էր գտնում դարձյալ Մեսրոպին, որովհետև նա պաս օրում միս էր գնել, և սուրբը նրան պատժել էր...:

Քահանան սույն իսկ համոզման մեջ է մնում հայոց պատմության ամբողջ քրիստոնեական շրջանում: Հույներն, պարսիկներն, արաբացիներն, թաթարներն՝ բարբարոսական խումբերով գալիս են, մեր աշխարհը կրակով և արյունով ծածկում են, չեն խնայում ոչ ծերի, ոչ երեխայի է ու կնոջ — բոլորը ոչնչացնում են և Հայաստանի գերին և հարստությունը առնելով, ետ են դառնում: Այն ժամանակ հայտնվում է քահանան — երկնքի և աստծո թարգմանը — և ասում է ժողովրդին. «Այս բոլորն ձեր մեղքիցն է, որ աստված պատժեց ձեզ, ապաշխարեցեք, մինչև աստուծո պատուհասը անցնի»:

Ժողովուրդը հավատում էր և դիմում էր դեպի եկեղեցին...:

Բայց մի մարդ կ չկար, որ ասեր նրանց. «Այն բոլոր ցավերը, որ դուք կրում եք, ձեր թուլությունիցն է, դուք մեռած մարդիկ եք. ձեզանում սիրտ և հոգի չէ մնացել, որ ձեր սրով պաշտպանեք ձեր երկիրը և ձեր պատիվը »:

Ես ոչինչ չպատասխանեցի քահանային, ի՞նչ պետք է ասեի, ես մի րոպեում չէի կարող դուրս բերել նրան յուր դարևոր նախապաշարմունքից, միայն հարցրի.

— Միթե հայերն այստեղ չե՞ն կարող ձեռք դիպցնել մահմեդականների մորթած մսին:

— Ոչ միայն մսին, — ասաց նա, — այլ ամեն թաց բանի, որ վաճառում են մահմեդականներն, դիպչել չենք կարող:

Ողորմելի՛ դրություն...:

— Բայց քրիստոնյան, — հարցրի ես, — դիպելով մահմեդականի թաց վաճառքին, ասենք թե, պղծում է այն մասը միայն, որր նա շոշափել էր. այլևս ի՞նչ հարկ կար ամբողջ մթերքի արժեքը նրան տուժել տալ:

Քահանան, որպես երևում էր, շատ հիմար մարդ չէր, նա պատասխանեց.

—Մի անգամ ես միևնույն հարցը առաջարկեցի մի մոլլայի, նա պատասխանեց. «Երբ որ մի մուկն ընկնում է մի կարաս լիքն բաքմեզի, միթե չէ՞ պղծում նրա ամբողջ բովանդակությունը»:

—Բայց բաքմեզը հեղուկ է, պղծությունը նրա մեջ կարող է թափանցել, իսկ միսը թանձր մարմին է, — կտրեցի ես քահանայի խոսքը:

Քահանան տվեց մի պատասխան, որ շատ հետաքրքրական էր:

— Իրավ է ձեր խոսքը, աղա, — ասաց նա, — բայց մահմեդականների կանոններն մաքրության և անմաքրության մասին այնքան խիստ են, որ շատ անգամ հասնում են ծիծաղելի առասպելաբանության: Օրինակի համար, գինին նրանց օրենքով պիղծ է, բայց գինու համար կա մի այսպիսի հադիս. «Եթե մի ջրհորի մեջ լեցնես մի կաթիլ գինի, և այն ջրհորի ափին բուսնի խոտ, եթե այն խոտը ուտե մի ոչխար, այն ոչխարը պղծում է ամբողջ հոտը, որի մեջ գտանվում է նա: Եվ այն հոտի ամեն մի ոչխարի միսը ուտելու համար անմաքուր է»:

Ես չկարողացա ծիծաղս զսպել, մի այսպիսի հիմար վարդապետությունը լսելով, և ասացի իմ խոսակցին.

— Այդ կանոնի հիման վրա բոլոր մահմեդականներն ազատ չեն մնալու պիղծ լինելուց, որովհետև, եթե ոչխարն մի կաթիլ գինու արտաշնչությամբ բուսած խոտը ուտելով պղծում է ամբողջ հոտը, ուրեմն և մեկ մահմեդական, ինքը գինի խմելով, կարող է պղծել մուսուլմանների ամբողջ հասարակությունը և այդպես, մինը մյուսից վարակվելով, կպղծվեր նրանց բոլոր ազգը:

Քահանան և նրա ընկերներն ծիծաղեցին, ասելով.

— Մահմեդականներն իրանց մոլլաների կապիկներն են, որպես ածում են, նրանք այնպես պար են գալիս:

Բայց իմ ծերունի հյուրընկալն ավելացրուց.

— Աղա, «կույրն որպես նայում է աստծուն, աստված էլ նույն աչքով նայում է կույրին»: Իրավ է, մահմեդականներն պիղծ են համարում մեզ, և գարշում են մեզանից, բայց մենք էլ նույն աչքով նայում ենք նրանց վերա: Մենք զարմանում ենք, թե դուք ինչպե՞ս ուղարկել էիք Մեսրոպին գնելու թուրքի մորթած միսը, չէ որ նրանք փչում են ոչխարը քերթելեն առաջ, և նրանց վաճառած մսի մեջ թուրքի շունչ է մտած: Մեղք չէ ուտել մի այդպիսի պղծությունը: Բայց մենք, առավելապես մեր կանայքը, միշտ հեռու ենք մնում մահմեդականների վաճառած ուտելիքներեն:

Ես չուզեցի ասել պարզամիտ ծերունուն, թե մարդիկ միօրինակ ստեղծվածներ են, թե նրանց մեջ ամենևին խտրություն չկա, թե մահմեդականը, թե կռապաշտը և թե քրիստոնյան, բոլորն եղբայրներ են: Ես չկամեցա ասել, թեև իսլամի հալածասեր ոգին ճնշում է այլակրոնների իրավունքը, բայց քրիստոնեությունն ունի յուր մեջ կատարյալ ազատություն: Ես չուզեցի այսպիսի խոսքերով խռովել ծերունու նախապաշարմունքը, մտածելով, թե մի տգետ ազգի մեջ, որպես հայերն են Պարսկաստանում, երբ չկա առողջ մտածողություն, երբ ազգային ինքնուրույնությունն

պահպանվում է միմիայն ավանդություններով և ժողովրդական ծեսերով — այսպիսի խտրություններն մեծ նշանակություն ունին ազգային գոյությունը պահպանելու համար: Որպես հրեից սամարացոց հետ չխառնվելն երկար ժամանակ կարողացավ պահպանել այս երկու ցեղերի ազգային առանձնությունները: Եվ հայերը, եթե կարողացել են Պարսկաստանում մինչև այսօր պահպանվել իրանց ազգային կյանքով, և եթե նրանք կուլ չեն գնացել մահմեդականների մեջ — դրանց պատճառը եղել է կրոնքի տարբերությունը և քրիստոնեության ու մահմեդականության ընդդիմադրությունը:

Այս պատճառով ես բոլորովին սխալ եմ համարում այն կարծիքը, թե մեր ազգը և եկեղեցին պահպանել են մեր եկեղեցականներն: Սո՛ւտ է այս: Հայոց եկեղեցականներն միսիոնարի հոգի չունին, ոչ միայն օտար ազգերի վերաբերությամբ, այլև նույնիսկ իրանց ժողովրդի վերաբերությամբ: Գոնյա պատմությունը մեզ որևիցե օրինակ ցույց չէ տալիս այդ մասին: Եվ եթե մաղելու լինիքս մեր 16 դարու ամբողջ հայ եկեղեցականները, նրանցից վայր կընկնին մի քանի Մեսրոպներ, Ներսեսներ, Եղիշեներ և Խորենացիներ միայն: — Բայց դրանք բացառություններ են...:

ՆԱՄԱԿ Է

Մյուս օրը ես կամեցա տեսնվիլ տեղային դատավորի հետ, որի վերա ես ունեի հանձնարարական նամակ Խոյի Շահզադայից: Վաղ առավոտյան ձի նստեցի, և Մեսրոպին ինձ հետ առնելով, դիմեցի Դիլիման գյուղաքաղաքը, ուր կենում էր նա: Դա մի իշխան էր Խոյի գավառապետի ազգականներից, որին հանձնված էր Սալմաստա կառավարությունը:

Հասնելով Դիլիման, ես լսեցի, թե այնօր իշխանը մահվան պիտի դատապարտեր մի քանի ավազակներ: Ես հետաքրքրվեցա տեսնել ասիական դատավորի պատիժը: Բայց ստուգելով, թե հանցավորներն պիտի պատժվին մի քանի ժամից հետո, ես որոշեցի նախ իշխունին տեսության գնալ:

Ինձ ցույց տվեցին ապարանքը, ուր կենում էր նա: Նրա դուռը լիքն էր ֆերրաշներով, սարվազներով և խառնիճաղանջ բազմությամբ: Ես ներկայացա նախ էշիկազասիբաշիին, այսինքն դռնապանների գլխավորին և խնդրեցի, թե ցանկանում էի իշխանին տեսնել:

Հրաշալի՛ Եվրոպա, քո լոկ հագուստն անգամ գրավում է ասիացու ուշադրությունը և նրա հարգանքը: Նա քաղաքավարությամբ խնդրեց մի փոքր սպասել յուր սենյակում, մինչև իմ մասին կծանուցաներ իշխանին:

Ես բարվոք համարեցի տեսնվելուց առաջ ներկայացնել նամակը, մտածելով, թե Խոյի Շահզադան շատ բարեսրտությամբ գրած կլինի յուր հանձնարարականը իմ մասին: Այս պատճառով թղթի փաթոթը22 տվեցի դռնապանների գլխավորին, տարավ յուր հետ:

Քառորդ ժամից հետո նա դարձավ և հայտնեց, թե իշխանը բարեհաճեցավ ընդունիլ ինձ, — բայց, ավելացրուց դռնապանապետը, դուք պետք է նեղություն կրեք հանել ձեր կոշիկները և հագնել ասիական հողաթափներ:

—Ինչո՞ւ, — հարցրի ես զարմանալով:

—Կոշիկներով գնալ անպատշաճ է, տեր, — պատասխանեց նա, — դուք հողաթափներով շնորհ կտանեք մինչև դահլիճի դուռը, այնտեղ նախասենյակում կթողնեք ձեր հողաթափները և հետո գուլբեքով ոտք կկոխեք իշխանի գորգերի վրա:

—Լավ, ինչի՞ նման կլիներ դա:

—Այսպես է մեր երկրի սովորությունը, — պատասխանեց նա, ապշած իմ վրա նայելով, թե մինչև որ աստիճան անքաղաքավարի էի ես, որ այս հասարակ բանն էլ չգիտեի:

Ես խոնարհվեցա տեղային սովորությանը:

Ասիայում քաղաքավարության կանոնները ըստ մեծի մասին հակառակ են եվրոպականին: Օրինակի համար, Եվրոպայում վերարկուները և ձեռքի գավազանը թողնում են նախասենյակում, բայց այստեղ առանց վերարկուի անպատշաճ է մի օրինավոր մարդու ներկայանալ, և ձեռքի փայտը պետք է յուր հետ ներս տանել: Եվրոպայում գլխարկը հանում են, բայց այստեղ գլուխը բաց անելը մեծավորի մոտ անպատվություն է, իսկ աղոթելու ժամանակ՝ մեղք: Եվրոպայում կանանց եթե կոշիկների վերի մասներն անգամ տեսնվին, ամոթ է, բայց այստեղ կանանց մերկ սրունքներն մինչև ծնկներն բաց են...

Ես հարցրի դռնապանների գլխավորից և մյուս ծեսերի մասին, թե որպես պետք էր ներկայանալ: Նա ասաց, թե մտնելով բակը, պետք է ուղղակի դիմել փենջարայի (լուսամուտի) հանդեպ և այնտեղից երկրպագություն տալ, իշխանը ներսից կտեսնի և ինքն հրաման կտա յուր մոտ գնալու: — Միայն մի՛ մոռացեք նախասենյակում թողնել ձեր հողաթափները:

Այս բոլորը ես մասամբ սովորած էի, բայց մինչև իշխանի դահլիճը մտնելը՝ ես երևակայում էի այն սարսափելի տանջանքը, որ պետք է կրեի, ուղտի նման չոքած նստելով նրա գորգերի վրա: Այս դրության դառը համը ես արդեն առած էի, ամբողջ ժամերով նստելով Խոյի շահզադեի մոտ:

Մտնելով իշխանի դահլիճը, ես կրկնեցի իմ երկրպագությունը, բայց զարմացա, տեսնելով այնտեղ մի եվրոպական աթոռ: Իշխանը մի փոքր շարժում գործեց առանց նստած տեղից վերկենալու և քաղաքավարությամբ հրավիրեց նստել աթոռի վերա: Իսկույն հասկացա, որ այդ մի առանձին շնորհ էր դեպ ինձ: Նրա առաջին խոսքերն խիստ փաղաքշական էին, նա շատ քաղցրությամբ արտահայտեց յուր ուրախությունը, տեսնելով մի եվրոպացի հյուր յուր երկրում (նա կարծում էր, թե ես ինգլիս եմ): Ես խիստ կարճ հայտնեցի իմ շնորհակալությունը նրա բարեսրտության համար, որովհետև պետք է առանձին վարժված լինել եղծավորության մեջ պարսից սեթևեթին պատասխանելու համար:

—Իմ ազգականս, Խոյի մեծ իշխանը, շատ գոհություն է հայանում ձեր մասին յուր նամակի մեջ, — ասաց նա կրկին նամակը յուր ձեռքը առնելով, — և հանձնում է ինձ հոգ տանել, որ ձեր ուղևորությունը իմ կառավարության տակ եղող երկրում լինի հանգիստ և ապահով. կաշխատեմ նորին վսեմության հանձնարարությունը կատարել ամենայն ճշտությամբ:

—Մեծ շնորհ արած կլինի ինձ ձերդ մեծությունն, — պատասխանեցի ես:

Այնուհետև նա սկսավ հարցնել, թե որպե՞ս տեսնում էի ես նրանց երկիրը, հավանելի էր ինձ, թե ոչ:

Ես պատասխանեցի, թե երկիրը բնությունից պարգևած է ոչ պակաս հարստությամբ. եթե արհեստը և կրթությունն օրինավոր կերպով կմշակեն նորան, բնակիչները կարող էին լինել բախտավոր. բայց քանի որ տիրում է մտավոր խավարը, նրանք կմնան այնպես թշվառներ, որպես են այժմ:

Իշխանը պատասխանեց.

—Մտաբերելով Պարսկաստանի անցյալը, որ շատ հեռու չէ գնացած, այժմ պետք է փառք տալ աստծուն, որովհետև ժողովրդի վիճակը շատ բարվոքված է: Բայց առաջ մեր երկիրը ներկայացնում էր ավազակների մի տխուր արշավարան:

—Բոլորովին ուղիղ է ձեր ասածս, — պատասխանեցի ես, — պետք է գոհ լինել ներկա կառավարությունից: Այսուամենայնիվ, ավազակների թիվը դեռ բոլորովին նվազած չէ:

—Ի՞նչ պետք է արած, — ասաց իշխանը հուսահատական ձայնով, — որքան կարողանում ենք, կոտորում ենք, բայց նրանց արմատը իսպառ կտրել չենք կարողանում: Այսօր ևս մի քանիսը մորթելու ենք:

—Արդարև, հանցանքները այստեղ շատ խստությամբ են պատժվում, քան թե ուրիշ երկրներում, և մահվան պատիժն յուր սարսափելի ծայրին է հասած: Բայց մի գիտություն, որ մեզանում կոչվում է վիճակագրություն, արդեն ապացուցել է, թե կոտորելով հանցավորները, չէ կարելի անհետացնել հանցանքը:

—Ապա ի՞նչ պետք է անել, — հարցրուց իշխանը զարմանալով:

—Պետք է որոնել հանցանքների պատճառը, այլ խոսքով, այն աղբյուրը, որտեղից նրանք հառաջ են գալիս և նրա ճարն անել: Օրինակ, մեկը աղքատությունից ստիպված գողություն է անում, պետք է աշխատել, որ ժողովրդից աղքատությունը վերառվի, և նրա ապրուստն ապահովելու հնարներ տնօրինել: Մեկ ուրիշը այլ հանցանք է գործում անբարոյականությունից կամ անկրթությունից, և եթե նա լավ դաստիարակություն ստացած լիներ, չէր անի:

Իշխանը սկսեց ծիծաղել:

— Դուք ասում եք, եթե ժողովրդի ապրուստը ապահովված լինի, նա գողություն չի անի: Բայց ես մեր երկրում շատ հարուստներ կարող եմ ցույց տալ, որոնք իրանց ձեռքի տակ ավազակների խումբեր են պահում: Կամ ասում եք, թե կրթությունը հեռու կպահե մարդուն չարագործությունից, բայց մեզանում շատ կարդացվորներն ավելի անիրավներ են, սրիկան յուր սրովն է մարդ սպանում, իսկ նրանք՝ իրանց գրիչով:

Երիտասարդ իշխանը թեև սխալ կարծիքների տեր էր, բայց նա դատել գիտեր: Ես չուզեցի երկար խոսել, թե կրթությունը որքան ընդարձակ նշանակություն ունի, և թե ճշմարիտ կրթությունը ի՛նչ բանի մեջ է կայանում:

Դահլիճը, որի մեջ նստած էր իշխանը, խիստ լայն լուսամուտներով նայում էր դեպի ընդարձակ բակը, ուր դահլիճեն քանի քայլ հեռավորությամբ ծփում էր մեծ շատրվանը, և բոլոր բակը զարդարած է գեղեցիկ պարտեզով:

Իշխանը անգործ չէր: Նա ինձ հետ վիճում էր, ծխում էր յուր փառավոր ղեյլանը, սուրճ էր խմում, և միևնույն ժամանակ նայում էր յուր դատաստանական գործերին: Ես տեսնում էի, ամեն մի զանգատավոր, որ գալիս էր յուր խնդիրը մատուցանելու, բակի դռնից մտնելեն առաջ հանում էր յուր հողաթափները, և այնպես մերկ ոտներով մոտենում ու կանգնում էր լուսամուտի հանդեպ, և մինչև այնտեղ մերձենալն անդադար երկրպագություններ էր տալիս: Ես մտաբերեցի այն ձայնը, որ մորենու միջից կոչեց Մովսեսին... «Էո՛յծ զկօշիկս քո»: Պարսից իշխաններն իրանց նույն գերագույն էակի տեղն են դնում...:

Դատերն առանց երկար քննության վճռվում էին իշխանի մի լոկ խոսքով: Դատախազների բախտից և նրանց կաշառներիցն էր կախված, թե ո՛ր աստիճանի իրավացի կամ անիրավ կլիներ վճիռը:

Իշխանը ինձ մի ժամից ավել պահեց յուր մոտ: Այնուհետև նա սկսեց խոսել Եվրոպայի վերա: Նա ինձ առաջարկում էր շատ հետաքրքրական և մինչև անգամ ծիծաղելի հարցմունքներ: Օրինակ, — քանի՞ կին ունի, հարցնում էր նա, ֆրանգների թագավորը:

—Երբ ես պատասխանեցի՝ թե, — մին, նա զարմացավ:

—Ապա ինչպե՞ս թագավոր է նա, — երբ ունի մի կին, մեր Շահը ունի հարյուրավորներ:

—Հասարակ մարդիկ քանի՞սն են պահում, — հարցրուց նա:

—Դարձյալ մեկը, — պատասխանեցի ես:

—Ուրեմն թագավորի և յուր հպատակի մեջ ի՞նչ զանազանություն կա:

—Այդ մասին ոչ մի զանազանություն:

Իշխանը կարծում էր, որպես կարող է թագավորն յուր ախոռատանը լեցնել բազմաթիվ գեղեցիկ ձիաներով, նույնպես և յուր հարեմը կարող է հարստացնել աշխարհի գեղեցկուհիներով:

Կամ թե հարցնում էր.

— Մե՞ծ եկամուտներ ունին այնտեղ դատավորներն. նրանք ամեն օր որսի գնո՞ւմ են, լավ բարակներ և բազեներ պահո՞ւմ են:

Ես ասեցի, թե նրանք ազատ ժամեր չունին այսպիսի զվարճությունների համար:

—Ապա ի՞նչ են շինում:

—Նրանք մտածում են և գործում են ժողովրդի համար:

—Իրանց ի՞նչ օգուտ, — հարցրուց նա ժպտելով:

Պարսից լեզվում նյութական արդյունք շահել և կառավարության որևիցե գործ կատարել՝ երկուսն էլ միևնույն նշանակությունն ունին: Պարսից ոչ մի քաղաքական պաշտոնակալ առանձին ռոճիկ չէ ստանում յուր ծառայության համար: Եվ եթե կամենում է նա վարձատրություն պահանջել, ասում է. «Ինձ մի գործ տվեք»: Նրա միջից ամեն ինչ դուրս է գալիս...

Ես աշխատեցի բացատրել դատավորի նշանակությունը և նրա պարտավորությունները, ավելացնելով, թե նա, որ արդարության համար է գործում և նրա իրականացնելու մասին է մտածում, պետք է հեռու լինի անձնական շահերից. որովհետև իրավունքը պաշտպանել և մի զրկվածի պահանջներին բավականություն տալ, ավելի մեծ զվարճություն է, քան թե որսորդությունը անտառների մեջ:

Իշխանը գլուխը շարժեց և ոչինչ չպատասխանեց:

Այնուհետև ես, առանց իշխանի անձնասիրությունը վիրավորելու, սկսեցի խոսել, թե իրերի այս տեսակ լինելն Պարսկաստանում կրթության պակասությունից է, միայն լուսավորությունը կարող էր փոխել նորան: Ես ցույց տվի, թե ուսումը և արհեստն ի՛նչ օգուտներ են բերում մարդկությանը, և թե առանց դրանց մարդկությունը ոչինչով չի զանազանվի վայրենի անասուններից: Այնուհետև, իբրև պտուղ լուսավորության և արհեստի, օրինակ բերեցի երկաթուղիները, շոգենավերը, հեռագիրները և շոգեշարժ մեքենաներով գործարանները, որոնցից զուրկ է Պարսկաստանը:

Իշխանը խիստ սառնությամբ պատասխանեց, թե դրանք բոլորն սատանայական բաներ են, որոնց համար նախ և առաջ պետք էր մարդուն յուր հոգին ծախել սատանային, մինչև նա կհաղորդեր մարդուն այդ գիտությունների գաղտնիքը:

Իշխանի խոսքերը թեև գոհացուցիչ չէին, բայց նա որպես արևելքցի չմոռացավ յուր հյուրասիրական պարտքը, լուր մոտ սուրճ և շերբեթ խմեցնելով, ղեյլան ծխել տալով, և խնդրելով, որ ստեպ հաճախեմ նրա մոտ քանի այստեղ եմ, այլև չմոռանամ ամեն մի ձախորդ դեպքում դիմել դեպի նա և այլն: Ես մտաբերեցի հայտնել Մեսրոպի անցքը, բայց դարձյալ չկամեցա, մտածելով, թե հիմար մսավաճառը կարող է մեծ տուգանքի ենթարկվիլ:

Իշխանը այնօր ոտքից գլուխ կարմիր էր հագնված արյունի գույնով: Դա նրա համար էր, որ արյուն պիտի թափել տար: Եվ ես շտապեցի տեսնել ավազակների մահվան պատիժը: Հանդեսը պիտի կատարվեր գյուղաքաղաքի հրապարակում:

Ես հասա այն ժամանակ, դահիճն նույնպես կարմիր հագնված, սրում էր յուր դանակը: Հրապարակը լիքն էր հանդիսականներով: Նրանք տեղ տվեցին ինձ խիստ մոտ կանգնել պատժարանին: Մի քանի րոպե տևեց վեճը փուչախ-փուլիի (դանակի փողի) համար. դա դահճի

վարձատրությունն էր, որ պիտի ստանար խղճալի զոհերի ազգականներից: Այնուհետև սկսվեցավ գործողությունը:

Մահապարտներն երեք հոգի էին, որոնցից երկուսն քուրդ էին, իսկ երրորդը՝ թուրք: Առաջինին ոչխարի նման գետին տարածեցին, և դահիճը մատները անցուցանելով նրա պնչածակերից, մորթեց, բոլորովին դուրս կտրելով գլուխը: Մի քանի հեծկլտոց, մի քանի դառն հառաչանքներ, — և ահա վերջացավ գործը: Այնուհետև նա կտրեց երկրորդի աջ ձեռքի դաստակը և ծայրատ բազուկը անմիջապես թաթախեցին եռացած յուղի մեջ արյան հոսումը դադարեցնելու համար: Իսկ երրորդի պատիժը սարսափելի էր: Երկու փայտյա ցիցերից ոտներեն նա քարշ էր ընկած գլուխն դեպի ցած: Դահիճը անհնարին սառնասրտությամբ յուր ահագին խենջարի հարվածներով սկսավ կես կիսել կենդանի մարմինը: Մինչև կուրծքը հասնելը խղճալին դեռ հառաչում էր: Ես զարհուրեցա և չկարողացա այլևս նայել:

Ուսանողությանս ժամանակ, սիրելի ընկեր, ես էլ շատ անգամ դահճի սառնասրտությամբ անդամահատել եմ մեռած մարդերի դիակներ: Բայց կենդանի արյան հոսումը սարսափ է բերում:

Ինձ ասացին, երբ մահապարտը հայ է, նրան չեն մորթում, այլև խեղդում են կախաղանի վերա: Որովհետև մահմեդական դահիճը նույնպես մեղք է համարում յուր դանակը պղծել հայի արյունով...

Դահիճը յուր պաշտոնը վերջացնելեն հետո, մի ձեռքում բռնած կտրած կառափը, մյուսում կտրած թաթը, սկսավ ման ածել խանութների առջև և յուր համար փող հավաքել: Բայց կեսն կիսած մարմնի յուրաքանչյուր կտորը տարան քարշ տալու գյուղաքաղաքի երկու գլխավոր դռներից երթևեկներին ցույց տալու համար:

Պատիժների հեղինակը Պարսկաստանը համարելու է. հեթանոս հռոմը նրա ընդունակ աշակերտն եղավ, բայց ինկվիզիցիան կատարելագործեց:

Պարսկաստանում պատիժների տեսակներն այնքան բազմաթիվ են, որ մի ամբողջ գիրք կարելի էր գրել նրանց մասին, բայց ես գրում եմ քեզ այնքան միայն, որքան կարողացա տեսնել իմ ճանապարհորդության միջոցներում:

Թեթև գողությունները պատժվում են ձեռների կամ ոտների թաթերը կտրելով: Բայց եթե գողությունը շատ փոքրիկ էր, հանցավորի քթիցը կալմուխի ուղտի նման թել են անցկացնում, և դահիճը ման է ածում հրապարակներում, և կամ ականջները մեխում են մի սյան վերա և այնպես կանգնեցնում են հրապարակում: Բայց շատ անգամ բոլորովին կտրում են քիթը և ականջները: Գլխատումը կամ գլուխը երկաթե ահագին մուրճով ջարդելը և կամ թնդանոթի խողովակի բերնեն կապելով կրակ տալը, — դրանք մեծ հանցանքների համար են: Դրանց թվումն է մահապարտին կենդանի թաղելը, կամ մինչև կեսը խորել գետնի մեջ, կրով ծեփել և այնպես թողնել, որ սովածությունից մեռնի: Քարկոծությունը կրոնական հանցավորների համար է, և մահապարտի դատակնիքը տալիս է մեծ մուշտեիդը, բայց դահճի պաշտոնը կատարում է ամբոխը: Բայց եթե հանցանքը թեթև էր, այսինքն՝ փոքրիկ հայհոյություն էր խոսակցել մեկը որևիցե սրբության դեմ, կտրում են նրա լեզուն:

Արևելքում որովհետև պատիվը աճում է մարդու հասակի հետ, և որքան ծերանում է մարդ, այնքան հարգելի է դառնում: Այս պատճառով մորուքը, մանավանդ ճերմակ մորուքը, ծերունու պատկառելության նշանն է: Պարսից լեզվում սպիտակ-մորուքությունը նույն նշանակությունն ունի, որպես մեր լեզվում բառս երիցություն: Կամենալով պատժել մի պատվավոր ծերունու, կտրում են նրա մորուքը, և նրա հետ զրկվում է նա հարգանքից:

Երկդիմի պատիժները, այսինքն՝ հանցավորն կամ կենդանի կմնա, կամ կմեռնի, — լինում են զանահարությամբ: Այս գործողությունը կատարվում են հանցավորի ոտների և մեջքի վերա, և հարվածների թիվը հասնում է մինչև հազարների:

Կանանց համար անդամահատության չկա, ոչ նրանց գլուխն են կտրում և ոչ մարմնի ուրիշ մասերը: Առհասարակ պատիժներն նրանց վերաբերությամբ խիստ չեն: Այդ, իմ կարծիքով, նրանից է հառաջ եկել, որ կինը մարդ չէ համարվում: Չափազանց եղեռնագործ կնոջը ցած են գլորում մի բարձր աշտարակի գլխից, երբ պետք էր սպանել նրան: Իսկ եթե հանցանքը թեթև էր, գցում են մի տոպրակի մեջ և զանակոծում են, այս հանգամանքում ևս պարսիկը ցանկանում է պահպանել կնոջ հարեմական անտեսանելությունը: Բայց կնիկներին պատժելը վերաբերում է կրոնի հոգևոր պետին և ոչ մարմնավոր իշխանության:

Շատ ծիծաղելի է պոռնիկ կանանց պատիժը: Հանցավորի երեսը մրոտում են, գլուխը բացում են և նստեցնում են ավանակի վերա, բայց հակառակ կողմով, այսինքն՝ քամակը դեպի անասունի գլուխը դարձրած, իսկ երեսը դեպի գավակը: Ավանակի ագին սանձի տեղ տալիս են հանցավորի ձեռնում, և այնպես թմբուկներ ածելով, ման են ածում հրապարակներում:

Պարսկաստանում հասարակ մարդկանց չեն աքսորում և ոչ աքսորի մի հատկացյալ տեղ կա: Աքսորվում են միայն քաղաքական մեծ հանցավորներն, մանավանդ, երբ նրանք թագավորի արենակիցներ էին: Այսպիսիների աչքերը փորում են և ուղարկում են ըստ մեծի մասին Արդաբիլի ամրոցը, բնակվիլ այն հռչակավոր մեչիդի մեջ, ուր դրած են Սաֆավիա թագավորների շիրիմները: Բայց եթե հանցավորն ձգտում էր գահին, նրան ներքինացնում են՝ ժառանգներից զրկելու համար, և կամ խմեցնում են այն նշանավոր թույնը, որ յուր հաճախ գործածության պատճառով կոչվում է «Ղաջարի ապուր»:

Մի փոքր խոսենք բանտերի վերա:

Պարսկաստանում առանձին բանտեր չկան: Բանտն այնտեղ է լինում, ուր բնակվում է դատավորը: Եվ որովհետև ամեն մի կառավարչական անձն իրավունք ունի պատժելու և բանտարկելու, այս պատճառով յուրաքանչյուրն ունի յուր տան մեջ մի բանտ: Դրա համար որոշվում են ներքնատան ստորերկրյա, մթին և խոնավ գետնափորները: Այնտեղ լի է ամեն տեսակ ապականություններով: Կալանավորը, նայելով հանցանքի աստիճանին, պահվում է զանազան ձևերով: Ըստ մեծի մասին պահում են շղթաների մեջ, կապանքի մի ծայրը պարանոցեն կցելով, իսկ մյուս ծայրը քարի վերա ամրացնելով: Բացի դրանից կալանավորի ոտները դնում են կոճղերի մեջ և այնպես սաստիկ պրկում են, որ շարժվիլ չէ կարող:

Ավելի սարսափելի են բանտային տանջանքները: — Կալանավորի կուրծքը շիկացրած շամփուրներով այրել կամ գլխին նույնպես շիկացած պղնձե թաս դնել. — դրանք ծանր հանցավորների համար են: Բայց եղունգների տակին և մատների միջոցներում, գրչի պես սրած

եղեգների կտորներ անցուցանելն սովորական է: Կան և ուրիշ տեսակ տանջանքներ, որոնք կոչվում են բանտային խաղեր, օրինակ, կալանավորի ամորձիքից ծանր քարեր քարշ տալ և ստիպեցնել,. որ նա վազ տա. սովորականից շատ ջուր խմեցնել կալանավորին և ջրի արտադրության խողովակը թելով պինդ կապել և այնպես օրերով պահել, մեկ ձեռնից կամ մեկ ոտնից քարշ տալ և ժամերով պահել. ոտների և ձեռների ծալքերում քար դնել և պինդ կապել. կալանավորին գցել փոքրիկ սենյակում և զանազան խեղդող նյութերով ծուխ տալ:

Կան և այնպիսի տանջանքներ, որոնց սովորելու համար ինքն սատանան պետք է շատ տարիներ աշակերտե պարսիկ բանտապետի մոտ: Ես չեմ գրում, մի՛ գուցե վիրավորիմ քո խիղճը, սիրելի ընկեր: Բայց այսքանը պետք է գիտենալ, որ այս բոլոր բարբարոսությունները կատարում է բանտապետը, ոչ թե հանցավորին խրատելու, կամ նորան դեպի ապաշխարություն ածելու համար, այլ նրանից արծաթ դուրս քաշելու համար: Որովհետև կալանավորի ազգականները, լսելով նրա կրած չարչարանքները, աշխատում են կաշառել բանտապետին, որ նրան հանգիստ թողնե: Իսկ բանտապետը բաժանում է ստացածը յուր մեծավորի հետ, որին պատկանում էր բանտը: Եվ այսպես, ողորմելի մահապարտը մինչև յուր դատապարտության հրապարակը դուրս գալը, մինչև յուր վերջին պատիժը ստանալը, զրկվում է նաև կայքից, նրա բոլոր ունեցածն մտնում էր բանտապետի և նրա մեծավորի քսակը...:

Ինձ պատմում էր մի կալանավոր, որ նոր էր ազատված բանտից, թե Ֆրան բանտապետը որոշյալ ժամանակով կապալով էր տալիս մի ֆերրաշի, այսինքն՝ ֆերրաշը, վճարելով բանտապետին մի որոշյալ գումար, իրավունք էր ստանում ինքն տանջելու կալանավորին և նրանից գոյացած արծաթը ինքն ստանալու:

Վերջացնելով հանցավորների մասին, հարկավոր եմ համարում հայտնել, որ մահվան պատիժները չեն կարող տալ նրանք, որ իշխանական ծագումից չեն, որովհետև կյանքը թագավորին և նրա սերունդին է պատկանում: Բայց լինում են և բացառություններ:

Կեսավուր տոթը սաստիկ այրում էր, երբ ձիս նստելով, Մեսրոպի հետ դարձանք դեպի Փեաջիկ, ուր էր իմ կացարանը: Ճանապարհին ես սաստիկ ծարավեցա: Գյուղի մոտ հոսում էր Ալոյան հովասուն աղբյուրը, ես մոտեցա զովացնելու իմ ծարավը: Մի գեղեցիկ օրիորդ, մի ձեռքում բռնած սափորը, մյուսում փոքրիկ կուժը, ջուր էր լեցնում յուր ամանի մեջ: Նա տեսնելով, որ ես կամենում էի խմել, լեցրուց կուժը և խիստ պարկեշտությամբ մոտեցրուց ինձ: Ես ոտքից ցգլուխ չափեցի սիրուն օրիորդը: Նա հագնված էր խիստ պարզ ձևով, որպես հագնվում են գյուղական աղջիկներն: Նրա երեսը չէր քողածածկված, որովհետև այստեղ աղջիկները, քանի չեն ամուսնացած, ման են գալիս բաց երեսով: Դա մի արտոնություն է, որ նա վայելում է յուր կուսական հասակում: Նա մինչև անգամ կարող է համարձակ խոսել օտարի հետ:

Գյուղական գեղեցկուհին զուրկ չէր և այն պաճուճանքից, որ հատուկ էր նրա մանուկ հասակին: Նրա գլխի փոքրիկ արախչինը զարդարած էր հուլունքներով և արծաթի դահեկաններով. ականջներին ուներ օղեր և պարանոցին՝ օղամանյակ: Ես շատ զարմացա, տեսնելով, որ օրիորդի քթից նույնպես օղ էր անցուցած: Ո՞ր ժամանակից մնացել էր հայերի մեջ այդ վայրենական սովորությունը:

— Ո՞ւմ աղջիկն ես, — հարց արի նրանից:

Օրիորդն ոչինչ չպատասխանեց և կարմրեցավ:

Կարծես թե ես խոսում էի գեղեցիկ Ռեբեկայի հետ, որ մի այսպիսի աղբյուրի մոտ ջուր խմեցրուց Աբրահամի երեց ծառային և նրա ուղտերին: Հիանալի՛ աղջիկ, նա շնչում էր հայկական քնքուշ սեռի բոլոր անմեղությամբ և ամոթխածությամբ:

— Կարդալ գիտե՞ս, — հարց արի նրանից:

Մի հեգնական ժպիտ խաղաց նրա վարդագեղ թշերի վերա, և նա խիստ սուր կերպով պատասխանեց.

—Ես տիրացու չեմ, որ կարդալ գիտենամ:

—Ապա ինչո՞վ ես պարապում դու:

—Ես մեր տան բանն եմ անում, երբ գործ չունիմ, գնում եմ վարպետիս մոտ, սովորում եմ կար կարել:

Ես հեռացա մանուկ օրիորդից, մտածելով, թե մինչև ո՞ր աստիճան արմատացել է մեր ժողովրդի մեջ այս նախապաշարմունքը, թե կարդալը միմիայն տիրացուների և տերտերների սեփականությունն է:

ՆԱՄԱԿ Ը

Նախորդ նամակումս ես քեզ գրած էի Ալոյան աղբյուրի մոտ ինձ հանդիպող գյուղացի օրիորդի մասին, որ այնպես կախարդաբար թողեց սրտումս ինձ դեռևս անհասկանալի մի զգացմունք: Ես դեռ չգիտեմ այս օրիորդի անունը, բայց որովհետև ես նմանեցրի նրան Բաթվելի դստեր՝ Իսահակա հարսնացուի հետ, այդ պատճառով պիտի կոչեմ նրան Ռեբեկա: — Չէ կարելի, որ ես չգրեմ քեզ մի քանի խոսք իմ Ռեբեկայի մասին: Նա հայ գեղջուկ աղջիկ է, նա անկեղծ կատարելատիպն է մեր հին օրիորդության:

Գեղեցիկ է իմ Ռեբեկան: Նա ունի նոճիի նման բարձր և ուղղաձիգ հասակ. նրա վարդագեղ թշերը, այնպես թարմ և անխարդախ, շնչում են մանկության բոլոր չքնաղությամբ: Նրա սևորակ աչքերն կարծես թե վառվում են մի դյուցական հրով, նրանց մեջ նայելիս, դու տեսնում ես անմեղությունը յուր աստվածային սրբությամբ: Նրա կամարաձև երկար ձգված հոնքերը և սաթի նման սև, թավ գիսակն հիանալի տեսք ունին: Իմ Ռեբեկան ներկայացնում է վայրենի գեղեցկությունը յուր պարզ և անպաճույճ վսեմության մեջ:

Այս տողերը կարդալու ժամանակ դու պիտի մտածես, և ճանապարհորդության մեջ սիրո ցնորքները դարձյալ հիմարացնում են ինձ: Ինչ կամիս, դու մտածիր, ես չեմ կարող չգրել իմ Ռեբեկայի մասին:

«Ես տիրացու չեմ, որ կարդալ գիտենամ», — ասաց նա: Ո՛չ, ես կհանեմ քո անմեղ գլխից այս մոլորությունը, խե՛ղճ աղջիկ, կարդալը քեզ ավելի պետք է, քան տիրացուի և տերտերի համար. դու պետք է կրթես նոր սերունդը, դու պետք է հարթես մեր լուսավոր ապագայի ուղին: Դու պիտի

կարդալ սովորես, այն ժամանակ դու այսպես աղքատ և խեղճ չես լինի, և քո որդիքն ուրախ և հանգիստ կանցուցանեն իրանց օրերը:

Այսպես մտածում էի ես, և շատ անգամ գնում էի այն նվիրական աղբյուրի մոտ, գուցե մյուս անգամ կհանդիպեմ նրան: Բայց նա չկար...

Հուլիս ամիսն էր:

Գյուղում չէր երևում ոչ մի մարդ: Բոլոր շինականները՝ կին, տղամարդ, մանկտի և մինչև անգամ չորքոտանի անասուններն — գործում էին մշակության դաշտերում: Միակ անգործ արարածն այդ գյուղի մեջ մնացել էի ես և շները, որոնք իրանց տխուր ձայնով երբեմն հնչեցնում էին օդի խորին լռությունը, և աքաղաղները, որոնց սուր և ձգական ձայնը ինձ հիշեցնում էր, թե այդ դատարկացած գյուղն բոլորովին թափուր չէ շնչավորներից:

Ես դուրս եկա իմ մելամաղձական օթևանից և դիմեցի դեպի դաշտը, տեսնել և հրճվել մշակների գործունեությամբ, և ավելի պարզ ասած, գուցե հանդիպել Ռեբեկային:

Ամառային թարմ և փափուկ առավոտներից մեկն էր:

Հեռավոր սարերի վերա, մրջեմի նման սփռված, ես տեսնում էի, արածում էին ոչխարների հոտեր: Առավոտյան զեփյուռը ծաղիկների անուշահոտության հետ բերում էր հովվի սրնգի մելոդիական հնչումները: Այդ ձայնին այնքան ծանոթ են ոչխարները, որ շատ սիրով հավաքվում են հովվի բոլորտիքը, երբ նա ածում է: Այնտեղ կանաչազարդ արոտամարգերի մեջ կազմված են հովիվների վրանները, աղջիկներն բուրդ են մանում, կանայք գորգեր են գործում, տղամարդը ոչխարները մազակտուր է անում: Եվ դու տեսնում ես սկզբնական մարդը իր նահապետական գործունեության մեջ, և հովվական կյանքը մոգական ազդեցությամբ հիշեցնում է քեզ՝ «այդպես էին ապրում մեր պապերը»:

Մի տեղ հասունացած հունձքի արտերն զմայլեցնում են նայողի սիրտը: Հողմը հանդարտ շնչում է այդ մարդկային սնունդը ապահովացնող բուսականների վերա: Ծանրացած հասկերն ծածանում են, խշխշում են և ոսկու փայլողությամբ ալեկոծվում են անդաստանի շիկագույն տարածության մեջ:

Մի տեղ հնձավորի մանգաղը փայլում է, և քաղված խոզանի երեսը ծածկվում է խուրձերի բազմությամբ, ժրաջան մշակներն մի կողմից դիզում են խուրձերը, մյուս կողմից՝ բառնալով սայլերի վերա, հավաքում են կալի մեջ:

Կալերը տարածված են գյուղի մոտ կանաչ դաշտի վերա: Նրանց միջով հոսում է մի առվակ, այնքան պարզ, որ հատակի գույնզգույն խիճերն սիրուն հուլունքների նման փայլում են, կարծես ծիծաղում են նայելիս: Կալերի մեջ կամնասայլն ճռնչալով պտույտվում է և մանրում է որայները. նրան ձգում են մի զույգ եզներ: Մի ծերունի, հեբուսացի Ուռնայի նման, նստած կամնասայլի վերա վարում է եզները և յուր երգի դողդողջուն ձայնով թեթևացնում է նրանց աշխատությունը:

Արևելքում անասունները սիրում են երգ և երաժշտություն: Հողագործը երգելով է վարում յուր գութանը. երբ նա դադարեց երգելուց, անասունները կանգնում են, որպես կանգնում է Բեդվինի

ուղտը, երբ նա էլ չէ երգում: Սայլավորը երգելով է քշում անասունները, և մինչև անգամ որմնադիրը երգելով է շարում աղյուսները: Նայելով այս աշխատավորներին, մարդ մտածում է, թե որքա՞ն ուրախ և գոհունակ է անցնում դրանց կյանքը... Արդյոք այդպե՞ս է...:

Ես դեռ կալերից չեմ դուրս եկել: Ինձ գրավում է մի մանկահասակ աղջիկ, որ նստած կալի դիզած խուրձերի հովանու տակ, հասկերի ձողերից հյուսում է փոքրիկ զամբյուղիկներ: Նա հյուսում է լի ապագա հույսերով, նա հյուսում է յուր զամբյուղիկները, որ հարսնաբաժինք տանե փեսայի տանը: Նրա, կրտսեր քույրը առվակի ալիքների մեջ թրջում է, կակղացնում է չորացած ցողերը և սիրով օգնում է ավագ քրոջը:

Կեսօր է:

Հովիվներն քշում են հոտերը գյուղին ավելի մերձակա մի տափարակի վերա,.դա բերատեղն է: Եվ ահա գեղջուկ կանայքը, կժերը գլուխների վերա դրած, խումբ-խումբ շտապում են այնտեղ: Եվ ոչխարներն ախորժանոք թափում են իրանց ստինքների ծանրությունները, և ամանները լցվում են փրփրադեզ կաթով:

Տոթը գնալով լինում է անտանելի և հեղձուցիչ: Թռչունները, սողունները, միջատները — այդ երկնքի ու երկրի ազատ որդիքը — թաքնվում են իրանց բույներում մի փոքր զովանալու, մի փոքր հանգստանալու համար: Բայց հայ մշակը ազատ չէ, նրա համար հանգստություն չկա, նա պիտի գործե... Արեգակը յուր հրեղեն ճառագայթներով այրում է հերկող մաճկալի գլուխը, բայց նա դեռ վարում է յուր արորը, որովհետև նա ստիպված է գործել և մի՛շտ գործել...:

Կարծես թե դու կարդում ես այս թշվառների ճակատին Կայենի դատակնիքը: Նրանք ծույլ չեն. գործում են, տանջվում են, մաշվում են, վաստակում են... բայց ո՞ւմ, համար. — աղայի և կալվածատիրոջ համար: Այդ մարդիկ մի այլ բան չեն, բայց միայն դժբախտ մեքենաներ, որ ծառայում են օտարի շահերուն...:

Տեսնելով այդ, սիրելի ընկեր, այն քաղցր տպավորությունները, որ գործում են նայողի վերա մշակ մարդու աշխատության գեղեցիկ պատկերները — իսկույն չքանում են, և նույն րոպեում առաջ է գալիս մեր սրտի մեջ մի դառն զգացմունք, երբ մտածում ենք, թե այդ մարդիկ ստրուկներ են...

Այսպիսի ցավալի մտածությանց մեջ ընկղմված, ես շարունակում էի իմ զբոսանքը, հանկարծ իմ միտքս է գալիս Ռեբեկան: Տխրության սև ամպերն կարծես թե հետզհետե ցրվում են, ես մոռանում եմ իմ շրջակայքը, և իմ երևակայությունը հրապուրող առարկան սկսում է կրկին ցնորել ինձ...

«Ես տիրացու չեմ, որ կարդալ գիտենամ»... — դարձյալ հիշում եմ այս խոսքը, մի խոսք, որի մեջ դրած է հայի դժբախտության բոլոր սկզբունքը...

Ես սկսում եմ որոնել «նորան»:

Ես վճռեցի դիմել դեպի այգեստանի կողմերը: Ինձ լսելի էին լինում հա՛յ... հո՛ւյ... այդեպանների ազաղակները: Նրանք զարկում էին իրանց ճոճանակները, նրանք ճռճռացնում էին իրանց ճռիկները, որպեսզի հալածեն ծառերից պտուղներին վնասող թռչունները: Բայց անամոթ սարյակները և չար ճնճղուկներն ավելի ուշադրություն չեն դարձնում այգեպանների հարայ-

հրոցին, և որկրամոլությամբ թռչում են մի ծառից դեպի մյուսը: Բարկացած այգեպանը արձակում է հրացանը, օդի խաղաղ լռությունը դողդողում է, և թռչունները խմբովին թռչում են մի այգիից դեպի մյուսը:

Ես միայնակ գնում էի այգիների միջով և այս տեսարանները ոչ ավելի գրավում էին ինձ: Հանկարծ մի քաղցր երգի ձայն հրապուրում է իմ լսելիքը: Այս քերովբեի ձայնը լսելի էր լինում մի փոքրիկ տաղավարից, հյուսված էր ուռիների դալար ճյուղերով նարվենդի ծառի անթափանցիկ հովանվո տակ:

Ես մոտենում եմ:

Հրաշալի՛ դեպք: Այդ կախարդական հովանոցի մեջ միայնակ նստած էր Ռեբեկան: Նա նույն րոպեում ասեղնագործում էր և երգում էր:

Տեսնելով ինձ, նա լռեց:

—Գեղեցիկ օրիորդ, — ասեցի ես, — կարելի՞ է մի քանի րոպե զովանալ քո տաղավարի մեջ:

—Ես այստեղ մենակ եմ, — ասաց նա երկչոտ ձայնով. — սպասեցեք, մինչև ես կկանչեմ իմ եղբորը, նա հեռու չէ, ահա այնտեղ գործում է բոստաններում:

«Ինձանից փախչո՛ւմ է վայրենի եղջերուն», — մտածեցի ես, նշմարելով նրա երեսի վերա կասկածանքի արտահայտությունք:

Նա դուրս գնաց հովանոցեն կոչելու իր եղբորը, խնդրելով ինձ, մտնել տաղավարում: Բայց քանի րոպեից հետո նա վերադարձավ միայնակ:

—Դուք չգտա՞ք ձեր եղբորը, — հարց արի ես:

—Ո՛չ, նա երևի տուն է գնացել, — պատասխանեց ամոթխածությամբ աչքերը դեպի ցած ձգելով:

Ես չգիտեի ի՛նչ ձևով խոսել նրա հետ: Եվրոպական աղջիկների հետ սովորած պերճախոս լեզուն գոլանում է, երբ հանդիպում է հայ աղջկա անմեղ սառնասրտությանը:

—Ես այժմ ձեր հյուրն եմ, — ասեցի, — կարծեմ դուք այնքան բարի աղջիկ եք, որ կներեք ինձ մի քանի րոպե այստեղ հանգստանալ, մինչև տոթն անցնի:

—Իմ աչքի վերա տեղ ունիք, — պատասխանեց նա ասիական քաղաքավարությամբ:

Ռամկի լեզուն ունի յուր առանձին սեթևեթը. նրա տրամախոհությունը բոլորովին տարբեր է մեզանից: Պետք է ուսումնասիրել և լավ ուսումնասիրել այդ լեզուն և այնպես խոսել նրա հետ: Բայց հայ աղջկա տաղավարի մեջ ես զգում էի իմ թուլությունը, ե՛ս, որ խոսել և համոզել գիտեի: Իմ ցնորքը, — թե ես կարող եմ նրա գլխից դուրս քարշել այն նախապաշարմունքը, թե կարդալը միայն տիրացուների սեփականություն չէ, — այժմ ինձ անգամ անհավատալի էր դառնում...

Մեսիան սովորած էր ժողովրդական բոլոր ավանդությունները, բոլոր առարկաները և առածները. և նրա լեռան վերա խոսեցած երկար քարոզը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ առածների մի շարք: Բայց այս եղանակով նա ավելի լավ էր հասկացնում. որովհետև ռամիկը յուրյան ծանոթ մի պարզ առածից ավելի բան է հասկանում, քան վսեմ և իմաստալից ճառերից: Իսկ այդ լեզուն անծանոթ է մեզ, ցնորամիտ պերճախոսներիս...

Ես նստեցի: Օրիորդը գնաց այգին և քանի րոպեից հետո նա դարձավ, զամբյուղի մեջ բերելով հասուն մրգեղեններ, որ ծածկած էին ծաղիկներով, նա դրեց իմ առջև, ասելով.

— Թեև ձեզ արժանի չեն, բայց պետք է գոհ լինել աստուծո տվածից:

Ես շնորհակալություն հայտնեցի, խնդրելով նրան նստել, որովհետև նա ոտքի վերա կամենում էր սպասավորել ինձ:

Բարեսի՛րտ դուստր նահապետական ժողովրդի. նա միայն յուր սպասավորությամբ կամենում էր ցուցանել յուր քնքուշ հյուրասիրության զգացմունքը:

Երկար թախանձելուց հետո, նա հոժարվեցավ նստել, բայց ինձանից հեռու, տաղավարի դռանը: Նա դրեց ծնկների վերա յուր կարը, սկսեց գործել:

—Այդ ի՞նչ եք կարում:

—Ինձ համար հագուստներ, — պատասխանեց նա: Ես նայելով կարին, կրկնեցի.

—Այսպիսի հագուստներ չեն հագնում աղջիկները:

—Չեն հագնում, բայց..:

Ինչ էր նշանակում այդ «բայցը», մտածեցի ես:

— Բայց ի՞նչ:

—Չեմ ասի: Դու չե՞ս իմանում, — ասաց նա միամիտ ձայնով:

—Ես ձեր երկրից չեմ, որտեղի՞ց պետք է իմանամ: Ասա՛, ե՞րբ են հագնում այսպիսի հագուստներ:

—Երբ որ դառնում են հարսներ, — պատասխանեց նա դժվաբությամբ, և ես նկատեցի նրա թշերը ներկվեցան վարդագույն ամոթխածությամբ:

—Հա՛, հիմա իմացա: Ուրեմն դուք նշանվա՞ծ եք, և այժմից պատրաստում եք հարսանիքի հագուստներ:

Նա լռեց, կարծես դժվարանում էր պատասխանել այդ խոսքերին:

— Ինչո՞ւ չեք խոսում. դուք նշանվա՞ծ եք:

Նա խիստ համեստությամբ ասաց.

— Դուք խո տեսնում եք իմ արախչինի վերա ոսկե դահեկաններ և իմ մատնում մատանի:

Նա ավելի շառագունեցավ: Արդարև, ես տեսնում էի, նրա գլխին դրած արախչինի վերա, ճակատի կողմից կարած, մի շարք ոսկի դահեկաններ և մատին մի հատ մատանի: Դրանք նրա փեսայի նշանդրեքն էին:

Դրամները գործածել որպես կանացի զարդարանք, ես տեսնում էի Հայաստանի ամեն կողմերում, ոչ միայն հայ կանանց վերա, այլև քուրդերի և հրեաների կանանց վերա: Եվ զարմանալին այն է, որ հայ կանանց պաճուճանքները շատ նման են հրեուհիներին: Տեսնելով մի հայ կին, կարծես թե կարդում ես Եզեկինլի հետևյալ տողերը. «Եվ քեզ զարդարելով զարդարեցի, և ձեռքերներիդ վերա մանյակ դրի, և պարանոցիդ վերա ապարանջաններ դրի: Եվ քո քթիդ՝ օղակ, ականջներիդ՝ գնդեր, ու գլուխդ պարծանաց պսակ դրի, և դուն ոսկիով ու արծաթով զարդարվեցար»: Այս բոլոր զարդերն ունին հայ կանայք, բայց քթի օղը և արծաթե պսակը, որ կոչվում է գոտի, այստեղի կանանց միայն հատուկ են:

Բայց իմ Ռեբեկան շատ հարուստ չէր. նա համեստ կերպով զարդարված էր, և նույն պարզության մեջ ավելի դուրեկան էր:

— Քո փեսայացուն այս գյուղացի՞ է, — հարց արի ես: (Ես նրա հետ անխտիր դու-ով և դուք-ով էի խոսում, որպես և նա):

—Ես նրան չեմ տեսել, միայն լսել եմ, որ կենում է մեզանից հեռու մի այլ գյուզում, — ասաց նա անկեղծությամբ:

—Ինչպե՞ս կարելի է, որ դու քո փեսային չտեսած, ցանկացել ես նրա հետ պսակվիլ:

—Հայրս ու մայրս տեսել են, նրանք հավնել են:

—Հայրդ ու մայրդ այդ մասին իրավունք չունին. դու ինքդ պետք է տեսնեիր, դու ինքդ պետք է քեզ համար փեսա ընտրեիր:

—Ամոթ չէ՞, — հարցրուց նա նազելի կերպով ժպտելով, որպես թե ես խոսում էի մի հիմար բան:

—Մեր երկրում ամոթ չէ, բայց այստեղ՝ չեմ իմանում:

—«Ամեն երկրի մեռելը իր տեղը կթաղեն», — ասաց նա մեզմ ծիծաղով:

Այդ գեղեցիկ ծիծաղն ինձ ավելի սիրտ տվեց: Ես նկատեցի, որ օրիորդն բավական ընտելացել էր ինձ: Եվ ասեցի.

— Այդ ուղիղ է, որ ամեն երկրի մեռելը պետք է յուր տեղը թաղել, եթե ուրիշ երկիր տանիս, նա կհոտի: Բայց դա չէ նշանակում, թե մի երկրում ինչ բան որ կա, մյուս երկրում չի պիտի լինի: Օրինակ, մեր երկրում աղջիկները գրել, կարդալ են սովորում, բայց այստեղ չեն սովորում:

— Ի՞նչ պետք է աղջկան գրել կարդալը, — հարցրուց նա սառը կերպով: — Աղջկան՝ կարն ու ասեղը. տղային՝ գիրն ու գրիչը:

Ես այնքան զբաղված էի իմ Ռեբեկայով, որ ամենևին չէի նկատել, որ երկինքը ամպել է, անձրևը խոշոր կաթիլներով թափվում է, և կայծակը օձի նման գալարվում թուխ ամպերի մեջ: Հանկարծ օրիորդը, երեսը խաչակնքելով, քաշվեցավ դեպի տաղավարի մի անկյունը, երբ փոթորկի ահեղ բոմբյունը որոտաց մեր շրջակայքում:

— Ինչո՞ւ խաչակնքեցիր երեսդ, — հարցրի ես, երբ նա մի փոքր հանգստացավ յուր խռովությունից:

Նա պատասխանեց, թե կայծակը աստուծո հրեղեն սուրն է, որով կոտորում է դևերին: Իսկ դևերն մարդերին վնասելու համար աննկատելի կերպով պատսպարվում են նրա մոտ, և կայծակը երկուսին միասին սպանում է: Բայց խաչակնքելն հեռու է պահում մարդուն դևերի մոտենալուց:

Ես ասեցի, թե այդ կարծիքը մի սնահավատություն է և ավելի ոչինչ, թե կայծակը առաջ է գալիս բնական պատճառներից, և աշխատելով բացատրել նրան, երկար խոսեցի դրական և ժխտական էլեկտրականության վերա...

Արդյոք հասկացա՞վ նա...

— Տես, — ասեցի ես, — եթե դու կարդալ սովորած լինեիր, այս բոլորը կհասկանայիր և կայծակից էլ չէիր վախենա:

Նա հեգնական կերպով ժպտեց և ոչինչ չպատասխանեց...:

Մրրիկն անցավ, ամպերը ցրվեցան, և արեգակը կրկին սկսեց թափել յուր պայծառ ճառագայթները: Ես վեր կացա, և շնորհակալ լինելով օրիորդից նրա հյուրասիրության համար, հեռացա տաղավարից: Ճանապարհին ես ինքս ծիծաղում էի իմ փիլիսոփայության վերա: Մի աղջիկ, որ կայծակը տեսնելով երեսը խաչակնքում է, նրան խոսում են դրական և ժխտական էլեկտրականության վերա: «Որքա՛ն անպատրաստ ենք մենք, մտածում էի ես, ինչպե՛ս ամեն բան գլխիցն ենք սկսում, փոխանակ հիմքից սկսելու...»:

ՆԱՄԱԿ Թ

Սիրելի ընկեր, դու գրում ես, թե ստացել ես իմ բոլոր նամակները: Դու գրում ես, թե նրանք շատ հետաքրքրական են քեզ, բավական ճիշտ տեղեկություններ տալով Պարսկաստանից, որի մասին մինչև այսօր խստիվ սակավ գրվել է:

Այս նամակովս ես կտամ քեզ մի քանի տեղեկություններ այս գավառի հնություններից, որոնց մեջ դու պիտի կարդաս պարսկահայոց թշվառ անցյալը:

Անցանելով Պարսկաստանի ամեն մի գավառը, ճանապարհորդը հանդիպում է բազմաթիվ բերդերի և ամրոցների, որոց ոմանք փլատակված են, իսկ շատերը դեռ մնում են ամբողջապես: Դրանք մնացել են այն ժամանակներից, երբ Պարսկաստանի յուրաքանչյուր գավառը կազմում էր միմյանցից անկախ առանձին խանություններ:

Խանությունները միշտ թշնամական հարաբերությանց մեջ լինելով, պատերազմը նրանց մեջ մնում էր անխզելի: Հաղթող կողմը կողոպտում էր հաղթվածի երկիրը, ավար էր առնում կայք և անասուններ, գերի էր տանում մարդիկ և կրակի էր մատնում նրանց բնակարանները: Իսկ հաղթվածներից շատ սակավ մասին էր հաջողվում իրանց կյանքը ազատել, պատսպարվելով բերդերում:

Միակ ազգը, որ այսպիսի դժբախտ դեպքերում զուրկ էր մնում բերդերի ապաստարանից, էր հայը, որովհետև բերդերը հազիվ էին կարողանում իրանց մեջ ամփոփել թուրքերին և պարսիկներին:

Երբ ես նայում եմ Զահրի, Կարնի-յարուղ, Փիրչավուշ և Հավատար բերդերի փլատակներին, հայի դժբախտ անցյալը պատկերանում է իմ առջև: Հանկարծ ժամանակը կես դար ետ է գնում, և ես տեսնում եմ Օսման-Ազա ասպատակը. նա յուր քուրդ ելուզակներով հեղեղի նման թափվում է այս գավառի վերա: Հուսեին-խանը, նույն ժամանակվա Խոյա և Սալմաստա իշխանը, չէ կարողանում դիմանալ քուրդերի արշավանքի առջև, և յուր թուրք և պարսիկ ժողովրդով ամրանում է բերդերում: Իսկ հայերն իրանց թույլ զորությամբ մնում են քուրդերի անգթությանը զոհ...

Օսմանի ելուզակներն ավար են առնում հայերի անասունները, կողոպտում են նրանց կայքը, և դառնում են, տանելով իրանց հետ մի ամբողջ քարավան բեռնավորած հայերի գլուխներով.

Որովհետև Օսմանը խոստացել էր յուր ելուզակներին յուրաքանչյուր կտրած կառափի համար ընծա տալ մի հատ ոսկի էշրաֆի: Բայց տեսնելով նրանց սարսափելի բազմությունը, նա ժխտում է յուր խոստմունքը, ու վճարում է էշրաֆիի տասներորդ մասը՝ մի արծաթի դահեկան.

Հետևյալ տարին Հուսեին-խանը, հավաքելով յուր ուժերը. հարձակվում է Օսմանի երկրի վերա, վերջինն հաղթվում է: Այնտեղ ևս պատահում է միևնույնը: Քուրդերն ամրանում են բերդերում, իսկ հայերը մնում են Հուսեին-խանի անգթությանը առարկա: Եվ պարսիկը վերադառնում է ոչ թե կտրած, կառափներով, այլ կենդանի գերիներով, որոնք բոլորը հայոց մանկահասակ աղջիկներ և տղաներ են լինում Հաղբակա և Վանա կողմերից: Եվ պարսիկ զինվորը մի գեղեցիկ հայ աղջիկը փոխում էր մի քանի բուռն քիշմիշի հետ...

Արշավանքները Պարսկաստանում ունեցել են և ունին իրանց սարսափելի հետևանքները: Թշնամին նվաճված ժողովրդի հետ այնպես է վարվում, որպես վատ գողերն այգու հետ, որոնք պտուղը կողոպտելեն հետո՝ արմատախիլ են անում ծառերը: Գերեվարությունը շատ անգամ ասպատակների համար մի անշահ ծանրություն լինելով, նրանք տանում են կտրած գլուխները, և իրանց բեռը ավելի թեթևացնելու համար տանում են գանգերի մաշկած մորթերը, որպեսզի ցույց տան իրանց մեծավորներին, թե որքա՛ն մորթել են, և նրա համեմատ պատիվ և պարգև ստանան:

Սալմաստա մեջ եղած բերդերից հետաքրքրական է Փիրչավուշը, որի փլատակների հետքերը մնացել են այժմ: Սարը, որի վերա շինված է եղել ամրոցը, ունի յուր զանազան բնական և արհեստական այրեր: Ինձ չհաջողվեցավ մտնել նրանց մեջ, որովհետև գիշերը վերա հասավ: Բայց որպես պատմում էր իմ ուղեցույցը, այրերն կազմում են լեռան մեջ մի ոլոր-մոլոր լաբյուրինթոս, որ շատ հավանական է, ծառայում էր վտանգի ժամանակ պահեստի համար:

Միևնույն սարի արևմտյան ճակատում, մի տաշած քարաժայռի վերա, որի մակերևույթն ունի մինչև հիսուն քառակուսի արշին լայնություն, դուրս են փորված մի քանի արձաններ նինվեական ոճով հսկայական մեծությամբ: Այս պատկերը ներկայացնում է մի հաղթություն: Երկու զինվորված ձիավորներ հալածում են երրորդին, իսկ չորրորդը, երևի զարկվելով, գետին է տապալված, Զենքերի ձևը հնադարյան է: Արձանագրություն չունի:

Ես որքան մտածեցի, չկարողացա այդ արձաններին տալ մի պատմական ճիշտ նշանակություն. որովհետև ոչինչ տառեր չեն երևում, բայց հավանական է, որ նրանք մնացած լինեին Սասանյանների ժամանակից, և որևիցե պատերազմի նկարագիրը լինեն: Արհեստի և ճարտարապետության այս երևելի գործը այժմ մեծ մասամբ եղծված է, բայց դարձյալ պահպանել է յուր մի քանի գեղեցիկ գծերը:

Փիրչավուշից 10 ժամու ճանապարհ դեպի արևելք գտնվում են Գոգարչին-Կալե (Աղավնու բերդ) կոչված ամրոցի փլատակները: Նա շինված է Ուրմիո լճակի միջից դուրս ցցված մի ապառաժի վերա, որ ձևացնում է մի փոքրիկ կղզի և բաժանվում է ցամաքից անձուկ նեղուցով: Գոգարչին-Կալեն շինված է թաթարներից և նշանավոր է յուր անառիկ դրությամբ: Մինչև այսօր ավանդությունը պահպանել է երևելի արյուն թափող Հուլավունի անունը, մինչև այսօր խոսվում է, թե այս մոնղոլական մեծ ավազակը հիշյալ ամրոցի մեջն էր պահում յուր գանձերը, որ նա կողոպտում է ըստ մեծի մասին Հայաստանից:

Հետազոտելով այդ բերդի շինվածքը, նույն ապառաժի վերա ես գտա ձկների, ոստրեների և զանազան ծովային զեռունների քարացած մարմիններ: Դրանք այնքան խիտ ածած են միմյանց վերա, մինչ հազարավոր քարացած ճճիներ բաղկացնում են մի ամբողջ մարմին:

Թաթարները, որպես բոլոր մոնղոլական ցեղերը, իրանց ամեն ինչ փչացնող և ոչնչացնող ներգործությամբ, չեն թողել այս կողմերում որևիցե նշանավոր հիշատակ արհեստի և աշխատության վերաբերյալ: Նրանք եղածը ջնջել են: Բայց ես երբեք չեմ մոռանա, որ մի անգամ ինձ մի թանգարանում ցույց տվին մի խոյաձև գերեզմանաքար, ասելով, թե Հայաստանից էր բերված: Թանգարանի գերմանացի կառավարիչը կամեցավ ինձանից տեղեկանալ, թե ի՞նչ նշանակություն ունեին այս խոյաձև քարերը, որ գտնվում են Հայաստանի գերեզմանատներում: Ես խիստ միամտությամբ պատասխանեցի, թե որովհետև Քրիստոս ուրիշ անունով կոչվում է «գառն աստուծո», զուցե դորա համար են դնում խոյաձև արձանները գերեզմանների վերա, որպես Քրիստոսի օրինակ: Գերմանացին ժպտելով պատասխանեց, — Ձեր ասածը ուղիղ կլիներ, եթե թաթարները միևնույնը չանեին, որոնք բնավ քրիստոնյա չեն:

Բայց ճանապարհորդելով այս կողմերում, ես հասկացա խոյաձև գերեզմանաքարերի գաղտնիքը: Դրանք մնացել են մոնղոլյան թաթարների տիրապետության ժամանակներից և նրանցից անցել են հայերի մեջ: Մինչև այսօր մոնղոլների հին գերեզմանատներն լի են խոյաձև արձաններով, և

նրանց վերա միշտ երևում է վարված մի սուր: Ի՞նչ էր նշանակում այդ: Ղոչ (խոյ) բառը մոնղոլի լեզվում այլաբանորեն նույն նշանակությունը ունի, որպես քաջ բառը, ասել է «ղոչիգիթ» նույն է, որպես ասել՝ քաջ տղամարդ: Դա առաջ է եկել այն գաղափարից, որ խոյը (ղոչը) նրանց մեջ քաջության նշան է, և այս պատճառով մոնղոլը յուր քաջերի գերեզմանները զարդարում է այս նշանով, այսինքն՝ խոյաձև արձանով: — Ահա՛, ինչ որ մնացել է Տուղրելների և Ալփ-Ասլանների օրերից:

Ատրպատականը, որպես հայտնի է և մեր պատմությունից, մի ժամանակ արաբացոց գլխավոր ոստիկանի կուսակալությունն էր կազմում: Անիրավ Ապշինը և Յուսուֆը այստեղից էին փորում Բագրատունյաց նորահաստատ թագավորության հիմքերը: Բայց արաբացոց արշավանքներն որքան և՛ արյան, և՛ արտասուքի պատճառ են դարձել Հայաստանին, դարձյալ պետք է խոստովանել, որ նրանք չեն եղել այնպիսի բարբարոսներ, որպես մոնղոլները:

Այժմյան Պարսկաստանի հայկական գավառներում մինչև այսօր մնացել են արաբացոց տիրապետության հոյակապ հիշատակարանները. Սալմաստա մեջ, գնալով դեպի Քոհնա-Շահար (հին քաղաք), տասը վերստ հեռվից ճանապարհորդի աչքն հրապուրում են մոզաիկների փայլողությունը մի գեղեցիկ մինարեթի, որ, իբրև արաբացոց ճարտարության պարծանք, հպարտությամբ կանգնած է մի գեղեցիկ դաշտի մեջ: Պարսիկների ոխակալությունը դեպի սուննիների ամեն մի սրբությունը, մի բարի բախտով, խնայել է արհեստի այդ հրաշալի գործը, որ ժամանակով երևի ծառայում էր մուազինին23 այդ մինարեթի բարձր գագաթից հրավիրել աղոթասեր մուսուլմաններին դեպի աստուծո նամազը: Մինարեթի հարավային կողմի դռան ճակատին դեռ մնացած կիսաեղծ արձանագրությունը, կապտագույն գրակոնտիկոններով երևցնում է մի քանի շարք արաբական գեղեցիկ տառեր, որոնց մեջ կարդացվում է, թե այս մինարեթն պահում էր իր մեջ շիրիմը մի երևելի տիկնոջ (անունը եղծված է) և 700 տարվա հնություն ունի:

Հիշյալ մինարեթից երեք վերստ հեռու մի դաշտի ընդարձակ տարածությունը ծածկում է արաբացոց գերեզմանատունը: Այդ գերեզմանատան քարերն իրանց գեղեցիկ շինվածքով ցուցանում են, թե արաբացիք հարգում էին իրանց մեռելների հիշատակը, որը ընդհակառակն, պարսիկների գերեզմանատներն խիստ անշուք են: Դա ունի յուր առանձին պատճառները: Պարսիկների կրոնական մոլեռանդությունը, որ կենդանության ժամանակ շինել է նրանց դիրք զանազան ուխտագնացությունների՝ դեպի Մաշհադ, Մեքքա, Քարբալա և այլն, — և մահից հետո չէ թողնում նրանց հանգիստ մնալ իրանց գերեզմաններում: Որովհետև ամեն մի պարսկի (շիայի) ոսկորները հանվելով գերեզմանից, նա պետք է կատարե յուր ետմահվան ուխտագնացությունը դեպի Քարբալա (Բաղդատ) և այնտեղ պետք է թողվի աթաբաթի հողի մեջ, որ սրբված էր իմամների արյունով: Այս պատճառով պարսիկները հոգ չեն տանում գերեզմանատների շքեղությանը, այլ իրանց մեռելները առժամանակյա կերպով միայն դնում են դատարկ փոսերի մեջ և երեսը ծածկում են հողով: Մի կտոր սալ միայն, տնկած հողադամբարանի վերա, կրում է հանգուցյալի անունը և մի քանի խոսք Ղորանից:

Պարսիկների գերեզմանատներն լինում են քաղաքների մեջ, տարածված մեծ փողոցների եզերքում, որպեսզի անցուդարձ անողներն ննջեցելոց համար «հոգվոց» (Քաթիայ) կարդային: Եվ դու կտեսնես, որ յուրաքանչյուր անցորդը մի քանի րոպե կանգնում է, երեսը դարձնում է դեպի գերեզմանատունը, և լուռ կարդում է յուր աղոթքը: Այդ սովորությունը որքան լավ էր մեռելների

հոգիներին, այնքան վնասակար է կենդանիներին, նայելով, թե ինչ ներգործություն ունի գերեզմանատունը օդի մաքրության վերա...

Քոհնա-Շահարի մոտ գտնված արաբական ընդարձակ գերեզմանատունը ցույց է տալիս, որ այն գեղեցիկ տաշված քարերի տակ պառկած մարդիկ որքա՛ն հառաջ էին գնացել արհեստի և ճարտարության մեջ: Այստեղ եղել են շատ մինարեթներ, որոց մեկը միայն կանգուն մնացած է, մյուսներն զոհ են գնացել ռամկի հալածասիրությանը: Պարսիկը չգիտե հարգել հնությունը և արհեստը. նա չէ սովորած ինքն հնարել, ինքն ստեղծագործել, այլ սովորած է պատրաստի նյութերից օգուտ քաղել: Մի կտոր քարի համար, մի քանի հատ աղյուսի համար նա անխղճորեն քանդում է գեղեցիկ մինարեթի հիմքը, ամենևին չմտածելով, թե որքա՛ն աշխատության և որքա՛ն ծախսերի էր արժել այն հիանալի գործը: Այսպիսի անգթություններին ես ուրիշ օրինակ չեմ կարող տալ, քան այն, որ կան բարբարոսներ, որպես սովորաբար ասում են՝ «Մի պատառ խորովածի համար ուրիշի կենդանի եզն են մորթում»:

Ահա՛ այդպես, սիրելի ընկեր, այս երկրները, — որ մի ժամանակ Հայաստանի գավառներ էին կազմում, տարուբերվելով զանազան պատմական հեղափոխությանց մեջ, ոտնակոխ լինելով երբեմն պարսիկների, երբեմն արաբների, երբեմն մոնղոլների արշավանքների ներքո, — պահում են մինչև այսօր հին թշվառությանց հիշատակարանները... պահում են արյունոտ հետքերը այն ազդերի, որոնք եկել և անցել են այս երկրների վրայով...:

Բայց երկիրը հայերին էր պատկանում. նրանցից ի՞նչ է մնացել: — Մնացել է ինքը հայը, մաշված, ջարդուփշուր եղած հայը: Որովհետև նրա հետ պարսիկը նույն կերպով է վարվել, որպես հսկա մինարեթի հետ, — մի քանի հատ աղյուսի համար հիմքը փորել է...

ՆԱՄԱԿ Ժ

Ես թողնում եմ Սալմաստը, սիրելի ընկեր, և ուղևորվում եմ դեպի արևմուտքը այս գավառի, դեպի սահմանակից Փոքր Հաղբակա կողմերը: Այնտեղ մեր պատմական Տմորիք կամ Կորդվաց լեռներում, խառն քուրդերի՝ այդ վիշապների (Աժդահակա) ծնունդների հետ, դեռ բնակվում են մնացորդներ հայոց հին ցեղերից, որոնք տակավին ապրում են նախնական կյանքով՝ խաշնարածությամբ: Ինձ ցանկալի է հետազոտել այդ նահապետական մարդերի կենցաղավարությունը:

Կեսօր էր: Մեր փոքրիկ քարավանը հանդարտ հառաջ էր գնում Երեցի-ձորի միջով:

Կարճահասակ քրդստանցի հայը, որ առաջնորդում էր ինձ որպես ուղեցույց, տաքացած կրոնական զգացմունքներով, շատախոսում էր, թե որպես կռապաշտների երեցը (մեծ քուրմը) այս ձորի մեջ հալածել էր սուրբ Բարդուղիմեոս առաքյալին, և թե որպե՛ս աստուծո բանի քարոզիչը, անիծելով նրան, քար էր դարձրել և այլն:

— Ահա՛ այն սարի գագաթան վերա, — մատով ցույց տվեց նա, — մինչև այսօր մնում է անհավատ երեցի քարացած մարմինը, և նրա անունով այս ձորը կոչվում է Երեցի-ձոր:

Եվ իրավ, նույն սարի գագաթան վերա ես նշմարեցի մի ահագին մարդաձև արձան, բայց իսկապես նա մի այլ բան չէր, եթե ոչ հասարակ քարե սյուն, — որի բնական գծագրությունը հեռվից նրան մարդու կերպարանք էր ընծայում:

Մինչ ես այն խորհրդածության մեջ էի, թե քանի կենդանի պահված են կրոնական ավանդությունները հայերի մեջ, տեսա իմ ուղեցույցը գդակը առեց, և երեսը խաչակնքելով, մոտեցավ մի ահագին քարաժայռի, որ ընկած էր ճանապարհի եզրում: Նա սկսավ յուր մեջքը քսել նույն քարաժայռին:

—Այդ ի՞նչ ես անում, — հարց արի ես, մոտենալով նրան:

—Այդ քարը սուրբ է, աղա, — պատասխանեց նա: — Մեջքս քսում եմ, որ պնդանա:

—Ինչո՞վ դու կարծում ես, թե դա սուրբ է և քո մեջքը կպնդացնե, — կրկնեցի իմ հարցը:

—Միթե չե՞ս գիտի, աղա, — պատասխանեց նա զարմանալով իմ անգիտության վերա, — երբ կռապաշտների երեցը հալածում էր սուրբ առաքյալին, նա յուր փախչելու միջոցում մեջքը տվեց այդ քարին, որ նրա ետքում պատսպարվի, և այս քարը բացվելով, նրան ընդունեց յուր գիրկը:

Եվ նա ցույց տվեց քարի մեջ այն բացված գոգավորությունը, որ ճանապարհորդների հաճախ քսվելուց բոլորովին կոկվել էր: Լսելով ուղեցույցի վերջին խոսքերը, մեր Մեսրոպը նույնպես իջավ ձիուց և սկսավ յուր հսկայական մեջքը ջերմեռանդությամբ քսել սուրբ քարին, թեև նրա մեջքը առանց դրան էլ ամուր էր:

Ես չուզեցի դիպչել նրանց սնահավատությանը և շարունակեցի իմ ճանապարհը: Բայց ուղեցույցս, տեսնելով, որ ես հետաքրքրվեցա նրա խոսքերով, ասաց.

— Եթե մի փոքր առաջ գնանք, դուք Հողեբավեզ (գուցե հողե բավիղ) գյուղի մոտ կտեսնեք սուրբ Բարդուղիմեոսի մի այլ հրաքը. — դա մի ահագին վիշապի քարացած մարմին է, որին սուրբ առաքյալը սպանել է յուր գավազանով: Նա այնքան մեծ է, որ գյուղացիք տեղավորում են նրա բերանում իրանց անասունների ամբողջ ձմեռվա պաշարը:

Ես հարց արի Մեսրոպից, — արդյոք ուղի՞ղ էր ուղեցույցի ասածը: Նա պատասխանեց. — Այո՛, ես ուրիշ մարդից էլ եմ լսեր

Ես չգնացի այն գյուղը, որովհետև ճանապարհից դուրս էր:

Բայց քարացած վիշապը ոչ այլ ինչ պետք է լիներ, եթե ոչ մի այր, ահագին քարաժայռի մեջ, որի մուտքը վիշապի բերանի ձև ունենալու էր:

Մենք դուրս եկանք Երեցի-ձորից, երբ արևը սկսել էր խոնարհվիլ դեպի յուր գիշերային մուտքը: Նրա վերջալույսը բաց արավ մեր առջև Ասբեստանու դաշտերի գեղեցիկ և ընդարձակ պատկերները:

Գիշերը վերա հասավ: Մեր քարավանը շտապելով հառաջ էր գնում, բայց տակավին չէինք հասած որևիցե իջևանի:

Ուղեցույցը հայտնեց ավելի շտապեցնել գնացքը, ասելով, թե գիշերը այս կողմերում բացօթյա մնալով, վտանգ կարող էր պատահել քրդերից, որ պարապում են ավազակությունով:

Սուրբ Բարդուղիմեոս Առաքելո վանքը դեռ շատ հեռու էր:

Երկինքը հետզհետե սկսավ մթնել, և աստղերը ծածկվեցան սև ամպերի տակ: Փայլակը երբեմնապես լուսավորում էր խավարի աղջամղջային թանձրությունը, և հեռվից լսելի էին լինում որոտման խուլ ձայներ:

Սկսավ փոքր առ փոքր անձրևել:

Մի քանի ժամ սարերի և դաշտերի միջով գնալուց հետո, կայծակի վերջին ճարճատման միջոցին, մեր ուղեցույցը կանգնեց, և սարսափելով հայտնեց, թե մոլորված էինք ուղիղ ճանապարհից: Այս խոսքը խիստ վատ տպավորություն ունեցավ ինձ վրա: Դեպի ո՞ր կողմը պետք էր գնալ. — ինքն ուղեցույցը չգիտեր:

Երբ մենք մտատանջության մեջ էինք, թե որպես պետք էր գտանել ուղիղ ճանապարհը, մին էլ հեռվից երևցան մի քանի հրեղեն կետեր, նրանք նմանում էին հովիվների գիշերային խարույկին, որ վառում են կաթ տաքացնելու համար:

— Քաջ, — ասացի ես Մեսրոպին, — դե՛ շուտ թռի՛ր, հասի՛ր տե՛ս, ի՛նչ կրակներ են դրանք:

Զեյթունցին լեռների ծնունդ է, սարը նրա օրորոցն է սկսյալ մանկությունից, իսկ մութ նսեմաստվեր անտառները նրա օրորոցի վարագույրներն են: Գիշերային խավարի մեջ նա ման է գալիս ժայռերի գահավեժների վերա, որպես մինը լեռնային աստվածներից: Ամպերի որոտը, կայծակի ճարճատյունը, մրրիկի ֆշֆշոցը, ձորերի միջից խաղաղ հեղեղատների գոռգոռոցը, որոնք նույն միջոցին ամեն մի արարածի վերա ահ ու սարսափ էին բերում, իսկ Մեսրոպի համար էին զվարճալի երևույթներ, որպես ծաղկազարդ դաշտերը՝ նորահաս կույսի համար:

Բարեբախտաբար անձրևը սկսեց դադարել, սև ամպերը հետզհետե նոսրանալով ցրվեցան, մեգապատ երկինքն յուր առաջին պայծառությունը ստացավ, և աստղերը, այդ երկնային հավերժ հարսունքը, իրանց քաղցրիկ ժպիտով դարձյալ սկսեցին հրապուրել մեզ, ամպերի թափանցիկ շղարշի հետևից իրանց դեմքը ցույց տալով:

Մենք իջանք ձիերից և բաց թողեցինք նրանց արածել անձրևով ցողած խոտերի մեջ, և անհամբերությամբ սպասում էինք Մեսրոպի դարձին:

Ես լուռ էի, և խորին ողևորությամբ նստած մի քարի վերա, նայում էի լուսնի նազելով սահելուն երկնքի կաթնագույն տարածության մեջ: Ոչինչ չէր վրդովում նույն րոպեին իմ սրբազան հոգեզմայլությունը ...

Չգիտեմ, պատճառը չեմ կարող բացատրել, բայց լինում են րոպեներ, որ բոլորովին չոր ու ցամաք իրապանն դառնում է գաղափարական և մինչև անգամ ցնորամիտ երևակայող: Ես հիշեցի այն կտորը, որ շատ վաղ, դեռ իմ պատանեկությանս հասակում կարդացել էի մեր պատմության մեջ, թե պարսից Շապուհը, կամենալով փորձել մեր Արշակ թագավորին, դյութերի և քավդյայների խորհրդով բերել տվավ հայոց երկրի հողից և ջրից, և նրանով ծածկեց յուր խորանի հատակի մի մասը: Քանի որ Արշակը պարսից հողի վերա էր կանգնած, խոնարհվում էր և Շապուհի ոտքերին էր ընկնում, և ողորմություն էր աղերսում: Իսկ երբ Արշակին տանում էր հայոց հողի վերա, նա սկսում էր խստությամբ խոսել, և պարսից թագավորին, որի գերին էր ինքն, սպառնալիքներ կարդալ: — Ես սկսել էի հավատալ այս առասպելին, կարծես հայրենի հողը ինձ վերա միևնույն ազդեցությունն էր գործում...

Պարսկաստանից դուրս գալով և բուն Հայաստանի հողի վերա ոտք կոխելով, ես, կարծես, փոխվեցա: Բայց մի՞թե Հայաստան էր այդ... նա Հայաստան էր, միայն իմ երևակայության մեջ...

Իմ մտախոհությունը շփոթեց ուղեցույցը, որ մոտենալով ինձ, ասաց.

— Քանի օր առաջ այստեղ սպանել էին մի հայ երիտասարդ, նա այս կողմերում նշանավոր մի տղամարդ էր: Մի քուրդ գալիս է նրա տունը, գարի է պահանջում յուր ձիան համար, նա չի տալիս, և քուրդին խստությամբ պատասխանելով, հեռացնում է յուր դռնից: Քուրդը ոխ է պահում, և երիտասարդն այս կողմերով անցնելու ժամանակ քուրդը քարի հետևից հրացանը արձակում է և սպանում է նրան:

— Եվ նա մնաց անպատի՞ժ, — հարցրի ես:

— Ո՞վ պիտի պատժե, — ասաց նա սառն կերպով:

— Լավ, քուրդն ի՞նչ իրավունքով էր գարին պահանջում:

— Իրավունքը ո՞րն է, քուրդին ինչ որ պետք է, հայի տնից կտանի:

—Եվ հայն էլ կտա:

—Ի՞նչ կարող է անել: Եթե չտա, այն ժամանակ յուր գլուխն իրանը չէ:

Այնտեղ տիրում էր պարսիկը, իսկ այստեղ բարբարոս քուրդը, — ահա՛ մեր հայրենիքը...

Ես կտրեցի այս խոսակցությունը, որ ինձ համար շատ դառն էր, և հարցրի ուղեցույցեն.

— Եթե Մեսրոպը մի լավ խաբար չբերե, մենք այս մոտ տեղերում կարո՞ղ էինք գտնել հայոց գյուղեր:

Նա պատասխանեց, — թե մերձակա տեղերում հայոց գյուղեր կարելի էր գտնել, միայն նրանք այժմ անբնակ են, որովհետև գյուղացիները, լինելով անասնապահ մարդիկ, տարվա այն եղանակում իրանց հոտերով չվում են դեպի ամառնային արոտները:

Ուղեցույցի հաղորդած տեղեկությունները շատ նպաստավոր չէին, և ես մտածում էի, թե որպե՞ս գիշերը բացօթյա պետք է անցուցանել այդ լեռների մեջ, ուր ամեն մի քարից արյան հոտ էր փչում...

Հանկարծ հեռվից լսելի եղավ ձիան խրխինջ:

— Այդ Մեսրոպի ձիան ձայնն է, — ասացի ես:

Եվ իրավ, քանի րոպեից հետո հայտնվեցավ քաջը: Նրա ձին պատած էր սպիտակ փրփուրով, բայց դեմքի ուրախ արտահայտությունը ցույց էր տալիս, թե նա պիտի ավետեր մեզ մի բարի լուր: Եվ արդարև, մենք շատ ուրախացանք, երբ նա հայտնեց, թե հեռվից երևացող հրեղեն կետերը հայ հովիվների չադրներում վառվող խարույկներ են, և հրավիրեց մեզ գնալ այնտեղ գիշերելու:

Մեսրոպի հրավերը բավական հաճություն պատճառեց և մենք, հեծնելով ձիաները, շուտով հասանք չադրներին: Նրանք թվով շատ էին, մի հովիտի մեջ համարյա զետեղված էին ամբողջ քսանի չափ գյուղերի բնակչաց վրաններ:

Մենք ընդունվեցանք խաշնարածների գլխավորի չադրումը, որին կոչում էին էլ-բակի. դա մի տիտղոս է, որ տալիս են հովիվների հասարակության պետին: Նրա չադրն որոշվում էր մյուս բոլորից թե յուր մեծությամբ և թե շքեղությամբ: Նա բաժանված էր չորս մասի, որի միջինը ծառայում էր որպես հյուրանոց, ետնակողմինը՝ որպես կանանոց, իսկ հյուրանոցի աջ և ձախ թևքերի մասներում՝ մեկի մեջ լինում էին ծառաները, մյուսի մեջ՝ արդեն թամքած և պատրաստ կանգնած էին էլ-բակիի նստելու ձիաները: Կարծես այդ խելացի անասունները անհամբերությամբ սպասում էին, որ վտանգի միջոցին նրանց տերը թռչի նրանց վերա և դուրս սլանա դեպի կռվի դաշտը:

Վրանի ներքին կերպարանքը արտահայտում էր խաշնարած ցեղի քաջազնական բնավորությունը: Նրա սյուներից քարշ էին ընկած էլ-բակիի զենքերը — նրա թուրը, վահանը, ատրճանակները, հրացանը և այլն: Վրանի առջև ցցված էր նրա դամասկական եղեգնյա նիզակը, որ յուր փետրազարդ գլխով փողփողում էր մեշմիկ հովից:

Բայց այն գիշեր, որպես երևում էր, էլ-բակիի վրանում հանդիսանում էր մի արտաքո կարգի երևույթ, կարծես թե նրանք տոնախմբում էին մի ուրախալի անցք, և այդ պատճառով այնտեղ հավաքված էին խաշնարածների բոլոր նշանավոր տղամարդիկն:

Ինքն էլ-բակին մի հսկայատիպ և հաղթանդամ տղամարդ էր, ավելի փառավոր կերպով հագնված, քան մյուսները: Նա քաղցրությամբ ընդունում էր հյուրերին, և մեզ հրավիրեց նստել յուր մոտ բոլորից բարձր, այսպիսի նահապետական խոսքերով.

— Բարով եք եկել, հազար բարով, իմ աչքի և իմ գլխի վերատեղ ունիք, իմ որդիքը ձեզ ծառա, իմ հոտերը ձեզ մատաղ, և այլն:

Ես շնորհակալություն հայտնեցի նրա բարեսրտության համար, միայն հետաքրքրությունը տանջում էր ինձ գիտենալ այն ուրախության պատճառը, մինչև ինքն էլ-բակին ասաց.

— Ողորմած աստվածը այսօր երկու բանով բախտավորեցրեց, յուր ծառային, մինը՝ պարգևելով իմ ավագ որդուն մի արու զավակ, մյուսը ուղարկելով ինձ ձեզ պես բարի հյուրեր:

Ես հասկացա տոնախմբության պատճառը: Եվ պատասխանեցի իմ փոխադարձ գոհունակությունը նույնպես արևելյան պերճախոսությամբ.

— Ուրախ եմ, որ բարի աստվածը բացի նրանից, որ ազատեց մեզ Ասբեստանի դաշտերում մոլորվելուց, այլև պարգևեց մեզ առաքինական հյուրասիրությունը իմ համազգի խաշնարածների գլխավորիս, որի տեսությունը ոչ միայն ցանկալի էր ինձ, այլև խիստ բախտավորեցուցիչ: Գո՜հ եմ աստծուց, որ իմ «ոտը բարով եղավ»24, և ես պիտի մասնակից լինեմ մի ուրախության, որով զվարճանում է այժմ ձեր ցեղը:

Մեր խոսակցության միջոցին ես նկատեցի, մի քանի գեղեցիկ դեմքեր գաղտուկ փայլեցան կանանոցի ետ քաշված վարագույրի ճեղքից: Ես իսկույն մտաբերեցի Սառային, որ վրանի ետքից ժպտում էր Աբրահամի երկնաքաղաքացի հյուրերի խոսակցության ժամանակ: Եվ արդարև, նույն անցքը պատահեց և ինձ, երբ ես բարեմաղթում էի, որ բարի աստվածը մի զավակ ևս պարգևեր իրան էլ-բակիին, նա շատ ուրախացավ և հրամայեց մեզ համար մորթել մի քանի գառներ, թեև նրա հասակը զավակ ծնելուց անցած պիտի լիներ: Բայց այս լեռների մարդիկը շուտ չեն ծերանում:

Եվ ավելորդ եմ համարում մանրամասնաբար նկարագրել մեր ընթրիքը, մեծ կերուխումը այդ նահապետական վրանի մեջ. նրանք առհասարակ նշանավորվում էին հյուրասիրության պարզ և անկեղծ առատասիրությամբ:

Բայց ինձ ավելի հետաքրքրական էր խաշնարածների զգեստը. նրանք Պարսկաստանի հայերի նման չէին հագնված, որոնց զգեստի ձևերն բոլորովին պարսկականի նման են, այլ հագնված հին քուրդերի նման: Բոլորովին սխալ կլիներ մտածել, թե այս ձևը մտել էր հայերի մեջ քուրդերից, բայց հավանական է, թե վերջինները հայերից առած լինեին, որովհետև ասիական Տաճկաստանում ամեն տեղ հայերն շատ փոքր տարբերությամբ միևնույն ձևով են հագնվում, մինչև անգամ այն երկրներում, ուր քուրդեր չկան և չեն եղել:

Մեր պատմությունը լուռ է, թե ինչպես էին հագնվում մեր նախնիքը: Բայց ես կարծում եմ, թե մեր Հայկն այնպես էր հագնված և մի այնպիսի վրանի մեջ էր ապրում, որպես մեր հյուրնկալ էլ-բակին, որովհետև նա էլ հովիվ էր և մի խաշնարած ցեղի գլխավոր՝ էլ-բակի:

Հայերի կյանքն այս կողմերում համարյա նույն է, ինչ որ էր Հայկի և Արամի ժամանակ. նրանք շատ քիչ են փոխվել: Եվ որպեսզի դու համոզվիս իմ խոսքերի մեջ, ես կնկարագրեմ քեզ մի քանի խաղեր, որ կատարեցին խաշնարածներն ընթրիքից հետո25:

Գեղեցի՛կ է լեռնային առավոտը, և ավելի գեղեցի՛կ անձրևային գիշերից հետո: Հուլունքների նման կաթիլներով ցողված խոտերն կարծես շողշողում են գույնզգույն գոհարներով. և ծաղիկների շնչով տոգորված զեփյուռը բերում է հեռավոր լեռներից բուսականների թարմ և փափուկ ամբարհոտությունը: Թռչունների մեղեդին այստեղ ավելի ախորժ, ավելի զվարթ է հնչում, և կարծես ժայռերն էլ զգում են նրա քաղցրությունը, և իրանց կողմից արձագանք են տալիս, որ

կրկնվի, չանհետանա բնության երգչի օրհներգությունը տիեզերքի անսահման տարածության մեջ:

Առավոտյան խաղերի ձևը փոխվեցավ:

Կյուրակեն՝ տերի հանգստյան օրը միջոց էր տվել բոլոր խաշնարածներին ուրախակից լինել իրանց գլխավորի ընտանեկան զվարճությանը: Այր, կին, աղջիկ, երեխա, — բոլորը հավաքվել էին դեպի վրանի շուրջը:

Զուռնան և դահոլը հնչեցին Քորօղլի եղանակով: Խաղերն սկսվեցան:

Կանաչ դաշտի վերա, վրանների հանդեպ հանդիսանում էին զանազան տեսակ խաղեր: Նրանցից մինը կոչվում էր էշիրաթի խաղ, որ նշանակում է ասպետական խաղ: Դա մի տեսակ միջնադարյան զինակռիվ (տուրնիր) էր, որի մեջ քաջերն աշխատում էին ցույց տալ իրանց հաջողակությունը և ճարպկությունը զենք բանեցնելու մեջ: Զինակռիվը կատարվում էր զանազան գործիքներով: Օրինակ, երկու տղամարդիկ զինամարտում էին մերկացուցած թրերով, նրանցից ամեն մեկը պաշտպանում էր յուր անձը ահագին երկաթագամ վահաններով, որ ունեին նույն ձևը, ինչ որ հոմերոսի հերոսներն էին կրում: Մի տեղ զինամարտում էին երկայն նիզակներով, նույնպես պատսպարվելով մեծ վահաններով: Մի տեղ կռվում էին հաստ լախտերով, մի այլ տեղ՝ ատրճանակներով և այլն, — բայց զարմանալի ճարպկությամբ և առանց վնասելու մինը մյուսին: Հաղթությունը պսակված էր համարվում, երթ հակառակորդին չէր հաջողվում համապատասխանել այնպիսի զարկով, որպիսին ինքն կրեց յուր խաղընկերից. կամ երբ նա չէր կարողանում մերժել իրանից զարկը վահանով: Հաղթողներին էլ-բակին տալիս էր պարգևներ:

Այդ տեսարանը ծնեց իմ մտքում օլիմպիական հերոսների հիշատակը: Եվ արդարև, մինչդեռ մեր ժողովրդի բարձր դասերում համարյա անհետացած են ազգային հատկություններ, նրա ստորին, մանավանդ լեռնաբնակ մասն դեռ պահպանում է յուր մեջ հինավուրց քաջազնական կյանքի առանձնահատկությունները:

Բայց ինձ ավելի հետաքրքրեց պատանիների և մանավանդ մանկահասակ աղջիկների պարախաղը, որ նրանք կոչում էին գոնդ կամ գուենդ: Դա մի տեսակ խաղ է, երբ երկու սեռի նորահաս զավակները, միմյանց ձեռքից բռնած, կազմում են մի տեսակ շղթայակապ՝ զանազան բոլորակ, կիսաբոլորակ և պես-պես ոլոր-մոլոր շարամասնություններով: Նրանք կաքավում են կշտե-կուշտ գայթելով, և ամբողջ շղթան յուր մանվածներով պտուլտվում է մի կենտրոնի շուրջը: Պարի եղանակը որոշվում է ձեռների և ոտների զանազան ձևով շարժմունքներով: Մի տղամարդ, էլբակիի որդիներից, տանում էր պարագլուխը. նա յուր ձեռին որպես դրոշակ փռփռացնում էր մի գույնզգույի թաշկինակ, և նրան հետևում էր պարողների ամբողջ շղթայակապը: Պարելու հետ զուգընթաց նրանք հերթով երգում էին զանազան ջանիմաններ: Այդ երգերի մեջ աղջիկներն և պատանիներն մրցում էին իրանց պարզ սրախոսություններով:

Ջանիմանը (իմ հոգի ասել է) մի տեսակ երգ է, որ յուր ձևերով շատ նման է այն երգերին, որոնք հայաստանում աղջիկներն երգում են վիճակի խաղերի ժամանակ, որոնք կոչվում են ջանգյուլում: Այս անունները առնված են այն խոսքերից, որ կրկնվում են երգի յուրաքանչյուր տան վերջում:

Ջանիմանը սկսում է պարագլուխը: Օհրինակ, նա առնում է. մի այսպիսի տեմա.

Ես տղա եմ մատղաշ,

Սև աչքերով դալամղաշ,

Ի՛նչ անգութ ես, դու աղջիկ,

Ինձ անում ես սրտամաշ:

Նրան պատասխանում է մի աղջիկ…26

Ես աղջիկ եմ նազ կանեմ,

Էրված սրտեր մաղ կանեմ,

Ով որ չրգիտե սիրել,

Ես նրան տնազ կանեմ:

Այդպես շարունակվում են երգերը ամեն տողերի վերջում կրկնելով այդ քուրդերեն խոսքերը.

Ջանիման, ջանիման,

Ղիլբարե ման, ջանիման:

Հետևյալ ավուր կեսօրին մենք հասանք Հաղբակ, սուրբ Բարդուղիմեոս Առաքելո վանքը: Միակ բանը, որ հետաքրքրեց ինձ, էր վանքի հնությունը, որ հասնում էր Լուսավորչի ժամանակներին» Պաշտելի՛ հնություն… միաբանների հնություն, ուսման և գիտության հնություն, մտքերի և կարծիքների հնություն… որք հասանում էին ծայրահեղ սնահավատության:

Այդ հնությունների միջից ես նախապատվեցի մի քանի քրքրված մագաղաթի գրչագիր մատյաններ, որոց համար մի քանի արծաթ տալով ծերունի վանահորը, ազատեցի վանքի անկյունների դարավոր փոշիների միջից:

ՆԱՄԱԿ ԺԱ

Մտնելով Հաղբակ27 իմ անցյալի նամակումս քեզ չհիշեցի, թե ես արդեն անցել էի Պարսկաստանի սահմանի գծեն: Որովհետև այդ երկիրը, որ քանի տարի առաջ տիրում էին, քուրդերը, այժմ պատկանում է Տաճկաստանին:

Բայց և այժմ այդ կողմերում քուրդերի թիվը սակավ չէ: Նոքա բաղկացած են զանազան ցեղերից, զանազան անուններով, որպիսի են — Շիկակ, Քարդար, Ռավանդ, Բիլբաստ, Հարքի և այլն: Այդ ցեղերը կառավարվում են յուրյանց ցեղապետներով և ներկայացնում են մարդկության առաջին ժողովուրդը, որ միայն ապրում էր անասնապահությամբ:

Նոքա չունին հաստատ բնակություն, չեն շինում տուներ, և լունին անշարժ կալվածք, այլ ապրում են տարաշրջիկ կյանքով:

Տարվա երեք եղանակները — գարունքը, ամառը և աշունը յուրյանց անասունների հետ — նոքա անցուցանում են լեռների արոտամարգերում, իսկ ձմեռը ապրում են բնակություն ունեցող ազգերի գյուղորայքում:

Վերջին հանգամանքը պատճառում է այս կողմերի հայերի գլխավոր նեղություններից մինը, երբ նոքա ստիպված են լինում ամեն ձմեռ յուրյանց փոքրիկ խրճիթներում տեղ տալ քուրդ ընտանիքների և նոցա անասուններին, որք ամենայն բարբարոսություն գործ են դնում սպառելու խեղճ գյուղացվոց ձմեռային պաշարը:

Քուրդերը կիսավայրենի ազգ են: Նոքա թեև սյունիտյան մահմեդական են, բայց չունեն ոչ գիր, ոչ գրականություն, այլ ապրում են ազգային ավանդություններով: Ավազակությունը, մարդասպանությունը, ոչ միայն մեղք է համարվում նոցա մեջ, այլ գերադասվում է որպես ազնիվ քաջագործություն: Մարդի արյունով յուր թուրը չներկած տղամարդը, և հափշտակության, կողոպուտի անընդունակը, համարվում է ծույլ և երկչոտ մարդ, որին ոչ մի աղջիկ չէր ցանկանալու յուրյան ամուսին ընտրել:

Առևանգած, այսինքն՝ բռնությամբ հափշտակված աղջիկը քուրդ տղամարդին վերաբերում է մի առանձին հերոսություն, մանավանդ իբր մի այդպիսի օրիորդը պատկանում էր այլ ցեղերին կամ օտար ազգերի: Այդպիսի բարբարոսական հերոսությանը զոհվում են ըստ մեծի մասին հայոց և ասորոց աղջիկները:

Արդարև, քուրդերը քաջ, հանդուգն և կրակոտ ազգ են: Քուրդը անկեղծ հյուրասիրությամբ պատվում է ամեն մարդու, որ ազգից և լիներ նա, երբ նա մտնում էր նորա չադրի մեջ, և մարդասիրաբար բաժանում է նորա հետ յուր աղուհացը: Իսկ եթե հյուրը հանդիպեր նորան չադրից հեռու, մի ձորի մեջ, նա պատրաստ էր կողոպտել, և մինչև անգամ սպանել նորան, եթե վերջինը գործ կդներ որևիցե ընդդիմադրություն պաշապանելու յուր կայքը:

Քուրդի ամեն մի ցեղերը ունին յուրյանց նահապետները, որին խոնարհվում են նոքա ամենայն սրբությամբ: Այդ նահապետը ընտրողական չէ, նա ծագում է նույն ցեղի ամենաազնիվ տոհմից, որ ժառանգաբար տիրում էր նորա վերա: Այդ նահապետը վճռում է ցեղի մեջ ծագած վեճերը, կռվի միջոցներում առաջնորդում է նորանց և ստանում է խաշնարածների ամեն մի գերդաստանից, ամեն տարի մի որոշյալ չափով յուղ, բուրդ, ոչխար: Այլև ցեղի ավազակները մասը պիտի հանեն նահապետին յուրյանց կողոպուտեն: Նայելով այդ ցեղերի և նոցա նավապետների վերա, ես հիշում եմ մեր հայկ նահապետը և տերությունների սկզբնական կազմակերպությունը:

Քուրդերը յուրյանց բնավորության և պարապմունքին հարմար բնակության տեղ են ընտրել Պարսկաստանի և Տաճկասաանի սահմանի գծի այս և այն կողմերը, սկսյալ Պայազետից մինչև Սուլեյմանի, մին ահագին տարածություն: Նոքա, Պարսկաստանից կողոպտելով վաճառականների ամբողջ քարավաններ, ավար հարկանելով ոչխարի և տավարների հոտեր, անցանում են սահմանից և պատսպարվում են Տաճկաստանում, և նույնը գործում են ընդհակառակն, այսինքն՝ Տաճկաստանից դեպի Պարսկաստան: Այդպիսի հարաբերությունները

կրկնվում են ամեն տարի քանիցս անգամ, և երկու տերությանց սահմանապահ կառավարիչներն օգուտ քաղելով ավազակներից, ամենևին չեն արգելում նորանց:

Ալի-Աղայի, Օմար-Աղայի, Միրզա-Աղայի, այդ երևելի ցեղապետների ասպատակությունները հաստատուն փաստեր են ասածներիս:

Այդ կողմերի հայերը, մասամբ լեռնային երկրի բնակիչներ լինելով, և մշտապես պատերազմելով կյանքի գոյության համար, յուրյանց քաջությամբ և կենդանությամբ գերազանցվում են մինչև այսօր իմ տեսած հայերից Պարսկաստանում, որք տափակ երկրներում բնակվելով, բոլորովին ստրկացած են մահմեդական տարրի ճնշման ներքո:

Հայերը և հրեաները գյուղաքաղաքներում պարապվում են մանրավաճառությամբ և մի քանի արհեստներով, որպիսի են՝ ոսկերչություն, հյուսնություն, դերձակություն, իսկ գյուղորայքում՝ երկրագործությունով և անասնապահությամբ: Նոքա գիտեն յուրյանց անասունների բուրդից գործել հագուստի բոլոր պիտույքները, որոցմե պատրաստում են վերարկուներ (ապա), շալվարներ, քազախաներ, զանազան տեսակ օթոցներ, կապերտներ և այլն, որք վաճառքի նյութ ևս դառնում են: Այդ արհեստը կատարվում է ըստ մեծի մասին կանանց ձեռքով, որք և մանում են բուրդից թելեր և գործում են նորան:

Երկիրը սարոտ և լեռնային լինելով, նա չէ արդյունաբերում ուրիշ բերք, բացի ցորյան և գարի, միայն շատ հարմար է անասնապահության: Քուրդերը հասցնում են գեղեցիկ նժույգներ, որոնց մեջ նշանավոր է Մանաք և Հադուդ կոչված ցեղերը արաբական ազնիվ արյունից:

Հաղբակը ունի շատ գյուղորայք, և մի գյուղաքաղաք Բաշկալե (գլխտվոր բերդ) անունով, ուր հավաքում են նահանգից և շաբաթվա մին նշանավոր օրում տոնավաճառ է լինում: Վաճառականությունը դեռ չէ փոխել յուր հին նահապետական ձևը. այսինքն նա կատարվում է նյութերի միմյանց հետ փոխարինությամբ:

Վաճառականությունը կենտրոնացած է հայերի և հրեաների ձեռքում: Նոքա տալիս են քուրդերին կտավ, չթեր, աղ և զանազան հագուստի և ուտելիքների պիտույքներ և առնում են նոցանից հում բերքեր, որպիսիք են բուրդ, յուղ, պանիր, կխտոր, ոչխար և այլն:

Այս կողմերի գյուղորայքը բոլորովին զուրկ են ուսումնարանից, թեև նոցանից շատերը գտանվում են այնպիսի վանքերի մոտ, որոնց մեջ ապրում էին թվով շատ ծույլ և ազգի հացը ձրի ուտող միաբանություն: Գյուղաքաղաքներում միայն հանդիպում է մարդ խանութներում (եթե նորա տերը գիտեր կարդալ), երեխաների, որք նստած մի կանոն սաղմոս էին կարգում, կամ այբուբեն էին սերտում:

Մի այլ ազգ այդ կողմերում, բացի մեր հիշածները, են տաճիկները, դոքա ըստ մեծի մասին են կառավարության պաշտոնակալներ, աստիճանավորներ, զինվորներ: Մի քանի երկրներում, որպիսի են՝ Ուշնի, Թար-Գավառ, Մար-Գավառ, տերությունը չունենալով մարտկոցներ, զինվորներ հինգ, տասն հոգիներով բաժնված են լինում հայերի տներում կենալու համար և խղճալի հայ ընտանիքը՝ յուր բարոյական և նյութական գոյությունով՝ զոհվում է տաճիկ ասկերի (զինվորի) լրբություններին:

Ճանապարհորդելով այդ կողմերը, ամեն տեղ հանդիպում ես վանքերի, այդ վանքերը, կրոնական ուղղությունը և կղերի քարոզները, թե «աջ երեսիդ զարկեն ձախը դարձրու», ունեցան այն վնասակար հետևանքը, որ խլեցին հայից նորա քաջությունը, որք սառեցրին նորա երակներում վեհության արյունը, և նա եղավ ստրուկ...: Իսկ վայրենի քուրդը փոխանակ վանքերի, լեռների անմատչելի տեղերում շինեց յուրյան ամրոցներ և վտանգի միջոցներում նա կարողացավ յուր գլուխը զերծ պահել թշնամու սրից, և մնաց միշտ ազատ:

Արդարև հայերը այս կողմերում, որպես հիշեցինք մեր առաջին նամակում, պահպանել են փոքրիշատե յուրյանց քաջազնական հատկությունները, բայց հանապազ ենթարկվելով ավելի զորեղ ճնշմանը, նոցա դրությունը դարձյալ նախանձելի չէ:

Նոցա բնակությունները գյուղորայքում չեն որոշվում անասունների որջերից: Եվ ծայրահեղ աղքատությունը մաշում է նորանց:

Միակ պարծանքը նոցա հայրենի ժառանգության մնացել են հոյակապ եկեղեցիքը և վանքերը: Բայց ժամանակի հոսանքը, թշնամու բարբարոսական ձեռքը շատ տեղ թողել է նոցա կիսավեր փլատակները միայն:

Քուրդերը այս կողմերում մինչ այն աստիճան բռնացած են, որ Տաճկաստանի կառավարությունը շատ անգամ դժվարանում է պատժել նորանց յուրյանց անկարգությունների համար: Ասածիս ապացույց կբերեմ մի փաստ:

Գավառի կողմերում, մի գյուղում գտանվում էր հոյակապ հին վանք, որ պատկանում էր նեստորական ասորիներին: Վանքի շքեղ և պատկառելի կերպարանքը շարժում է տեղային Շեյխի (քուրդերի հոգևորական գլխավորի) չար նախանձը, որ մտադիր է լինում անհետացնել այդ քրիստոնեական սրբարանը:

Մոլեռանդ ժողովուրդը, որոնց համար Շեյխի խոսքը վեր էր աստուծո պատգամից, փութով կատարում են նորա հրամանը, բոլորովին հիմնահատակ անելով վանքը: Նոքա քանդում են և գերեզմանները վանքի բակում, որոց մեջ թաղված էին նեստորականների եպիսկոպոսներ: Ենջեցյալների դուրս բերված դագաղները դառնում են խաղալիք մոլենախանձ ամբոխի կատաղությանը: Այդ դագաղների մի քանիսի մեջ հայտնվում է սուրբ գրքի հատորներ, ասորոց հին լեզվով, մագաղաթի վերա գրված: Որք դրված են լինում հանգուցյալ եկեղեցականի սրտի վերա:

Այդ անցքը Բաղդադու, ազգավ ասորի, անգլիացվոց կոնսուլի միջնորդությամբ հաղորդվում է Պոլսո անգլիացվոց դեսպանատանը, և անմիջապես Բարձրագույն դռանը: Բայց կառավարությունը ի նկատի ունենալով չգրգռել քուրդերի ապստամբությունը, Շեյխը մնում է բոլորովին անպատիժ:

Այդ վիճակի մեջ են քրիստոնյայք քուրդերի և տաճիկների ձեռքում, սկսյալ Պարսկաստանի սահմանից մինչև Բաղդադ, առավելապես Վանա և Տարոնա նահանգում, Բաղեշի և Մշու կողմերում: Նոցա եկեղեցիների և ընտանիքի պղծությունը, կայքի հափշտակությունը, սպանությունը, մի սովորական երևույթ է, որք պատահում են հաճախ:

Դոցա մասին ես մանրամասնաբար կհաղորդեմ քեզ իմ Պարսկաստանի ուղևորությունը վերջանալեն հետո:

ՆԱՄԱԿ ԺԲ

Վերջացնելով իմ ճանապարհորդությունը Տաճկաստանի Քուրդեստանի կողմերում — Հաղբակ, Թար-Գավառ, Մար-Գավառ և Ուշնի կոչված գավառներում, ես վճռեցի գնալ Ճոլամերիկ:

1861 ամի «Հյուսիսափայլ» ամսագրի մեջ կարդալով պարոն Հ. Մելիք-Հակոբյանի հետաքրքրական նամակը Ջոլամերիկի, նորա բնակիչների և Մար-Շիմոնի մասին, վաղուց մի խորին տպավորություն թողել էր իմ սրտում այդ կախարդական երկիրը տեսնելու:

Գտանվելով ավելի մոտ Ջոլամերիկի սահմաններին, ես վճռեցի իմ վաղեմի ցանկությունը կատարել, մանավանդ, երբ որ Բաշկալեում ինձ ասեցին, թե Մար-Շիմոնի տանում գտանվոլմ են հայերեն հին գրքեր ասորոց տառերով գրված:

Գնալուցս առաջ ինձ խորհուրդ տվեցին փոխել եվրոպական հագուստս: Այն աատճառավ, որ մի այդպիսի հագուստով ես կարող էի եվրոպացի համարվել, լրտես կարծվիլ, և իմ կյանքը վտանգի տակ ձգել: Ես համաձայնվեցա, երբ լսեցի, թե քանի տարի առաջ, այդպիսի կասկածելի պատճառով, մի եվրոպացի ճանապարհորդ այնտեղ սպանել էին:

Ես հագա վանեցի հայ վաճառականի շորեր ու գլխիս ունեի կարմիր ֆես՝ փաթաթած ապորոշով, լայն շալվար՝ միջին խրած իմ հալեբի զիբունի պիսակավոր դրոշակները, հաստ շալե գոտի, առջևից թեք խրած պղնձե, երկայն տաճկի թանաքաման. կարճլիկ կուրտիկ, մուսուլի կարմիր սաֆիանի ոտնամաններ:

Դու շատ կծիծաղեիր, սիրելի ընկեր, մի այդպիսի օտարոտի հագուստով ինձ տեսանելով, և իսկույն դնելով իմ երեսին մի դիմակ աղյուսի գունով, երկայն արծվի քթով, դուրս ցցված ծնոտքով — քարշ կտայիր ինձ դեպի բալ-մասկարադ, ցույց տալու հայ վաճառականի տարազը:

Ես ճանապարհ ընկա, առնելով իմ հետ Մեսրոպին և երկու քրդստանցի զինվորված մարդիկ: Մենք գնում էինք երբեմն ոտքով, երբեմն ջորիների վերա նստած: Այդ տոկուն անասունները, կարծես սովորած էին դիմանալ անտանելի ճանապարհորդությանը դժվարին սարերի միջով, որոց ամուր սմբակներբը շուտ չեն մաշվում սուր քարաժայռերի մեջ:

Մեր ճանապարհորդության երկրորդ օրր անցանք Նրհել գետը, դա Տիգրիսի գլխավոր ճյուղերից մինն է, երեսը պատած մշտականաչ նունուֆար ծաղիկներով, որոց հաստ արմատը ձգած է գետնի խորքումը:

Բոլոր մեր ճանապարհորդության միջոցումը ես տխուր էի: Ես անցանում էի մի երկրից, ուր ամեն մի սար, ամեն մի դաշտ, ամեն մի գետ, ամեն մի փլատակ հարուցանում էին իմ մտքի մեջ տխուր պատմական հիշատակներ...

Երրորդ օրը մենք մտանք Ճոլամերիկ: Ես չեմ կարող նկարագրել քեզ մեր Մեսրոպի խորին հոգեզմայլությունը և նորա հրճվանքը: Քանի մենք գնում էինք սարերի միջով, քաջ զեյթունցին

ավելի ու ավելի ոգևորվում էր: Լեռների սարսափելի դիրքը նորան մի առանձին ուրախություն էին բերում: Փոքրիկ շավիղները ապառաժների միջով, որոցմե մի փոքր շեղվելով պիտի գլորվես դեպի ահագին ձորի անդունդը, նորան ծաղկազարդ մարգեր էին թվում: Բնակիչների երևույթը, որք հրացանը ուսներին, վայրենի եղջերվի նման, թեթև ճարպկությամբ, ցատկում էին քարերի վերայով, հրապուրում էին նորա նախանձը, գրգռում էին նորա ջղերը: Քաջ զեյթունցին Ջոլամերիկի բնակության այդ վայրենի տեսարանների մեջ տեսանում էր յուր աշխարհի պատկերները...:

Երբ մենք հասանք Ղոճանիս գյուղին, նա ասաց ինձ խիստ զգալի կերպով. — մնանք այստեղ, աղա, այդ աշխարհը շատ աղվոր աշխարհ է...:

Ես հիշեցի Պետրոսի խոսքը, որ ասաց նա յուր վարդապետին սարի գլխումը:

Ղոճանիսը Ջոլամերիկի գյուղերից ամենագլխավորն է, որովհետև այնտեղ բնակվում է Մար-Շիմոնի, ասորոց պատրիարքի տունը:

Մենք հասանք այնտեղ, երբ արևը սկսել էր մտնել: Մեսրոպը մտավ գյուղը մեզ համար մի իջևան գտնելու:

Երեկոյան այն ժամն էր, երբ գյուղացի աղջիկները, մանկահասակ հարսները, խումբ-խումբ, կժերը ուսներին առած, դիմում էին աղբյուրից ջուր տանելու: Ես կանգնած էի այդ աղբյուրի մոտ և սպասում էի Մեսրոպին:

Աղջիկները շատ հետաքրքրությամբ նայում էին ինձ վերա: Ես զարմանում էի, թե ինչ բան ինձանում գրավում էր նոցա ուշադրությունը: Գուցե այդ պիտի լիներ իմ օտարոտի հագուստս:

Ես տեսնում էի, որ գեղեցիկ սեռը այստեղ դեռ ապրում էր յուր անմեղ պարզության մեջ: Հարեմային կյանքի ծածկապահությունը նորանց ծանոթ չէր տակավին: Նոքա բաց երեսներով, համարձակ, խոսում էին, ծիծաղում էին միմյանց հետ, չնայելով, որ նոցա մոտ կանգնած էր մի տղամարդ:

Ես շատ զարմացա, երբ մի օրիորդ մոտեցավ ինձ, ձեռքը մեկնեց և երեխայի նման սկսավ խաղալ ժամացույցիս շղթայի հետ: Փայլուն մետաղը երևի հրապուրում էր այդ անմեզ գառնուկի ուշադրությունը: Ես չկամեցա զրկել նորան այդ զվարճությունից, այլև ցույց տվի ժամացույցս: Երբ լսեց նորա չկչկոցը, նորա հիացմունքին չափ չկար: Նա ձայն տվեց յուր ընկերուհիներին, և մի րոպեում բոլորն հավաքվեցան իմ չորս կողմով: Յուրյանց կյանքում առաջին անգամ նոքա տեսանում էին մի այդպիսի բան:

Աղջիկները ցրվեցան, երբ մեր մոտեն անցան մի քանի ձիավորներ: Նոցանից մինը, որ արշավում էր ամենից առաջ, երիտասարդ էր: Նա իր աջում ուներ երկայն եղեգնյա մզրախ (նիզակ) և ուսին անփույթ կերպով ձգած էր բաղչիսարայան հրացանը: Նորան հետևում էին երկու այլ ձիավորներ, նույնպես զենքերով: Եվ նոցա առջև վազ էին տալիս մի քանի որսորդական շներ և բարակներ: Երևում էր, ձիավորները դառնում էին որսորդությունից:

Մի քանի ասորոց խոսքերով, որ գիտեի ես, հարցրի աղջիկներեն, թե ո՞վ էր այդ երիտասարդը:

— Սուրբ հայրը, — պատասխանեց մի սևուկ, կրակոտ աչքերով, գանգրահեր օրիորդ:

Ես ոչինչ չհասկացա և կրկնեցի իմ հարցը.

— Ո՞վ է սուրբ հայրը:

— Մար-Շիմոնը, — պատասխանեց միևնույն օրիորդը:

Ես չկարողացա ինձ հավատացնել, որ Մար-Շիմոնը, ասորոց պատրիարքը, կհանդիպեր ինձ որպես մի երիտասարդ զինվորված, որ դառնում էր որսորդությունից: Ես երևակայում էի նորան մի ծերունի, յոթանասունամյա, սպիտակ մորուքով, շիջած աչքերով, նստած փափուկ օթոցի վերա, քթախոտի տուփը մոտին դրած, կարդում էր աղոթագիրք:

Մյուս ավուր առավոտը ես գնացի Մար-Շիմոնին տեսություն: Նորա տունը որոշվում էր գյուղի մյուս տներից յուր մեծությամբ միայն, իսկ նորա շինվածքը բոլորովին պարզ և անզարդ էր, որպես հասարակ գեղջուկի բնակարան:

Նահապետական սովորություններով դատարկաձեռն անպատշաճ էր հայտնվել մի մարդու մոտ, որ ներկայացնում էր մի ամբողջ ժողովրդի գլխավորը, այդ պատճառով ես տարա նորան որպես ընծա, մի գեղեցիկ, սև սաթե տերողորմյա:

Եթե ինձ հաջողվեր մտանել Դավիթ թագավորի տունը, անտարակույս նույնը կտեսնեի, ինչ որ տեսա ես Մար-Շիմոնի աղքատիկ տնակում:

Եվ արդարև, Մար-Շիմոնը էր ներկայացուցիչը նեստորական ասորիների և հոգևոր և մարմնավոր իշխանության: Նա էր նոցա պատրիարքը, եկեղեցական գլուխը, և միևնույն ժամանակ նոցա քաղաքական իշխանը: Նա խաչը ձեռքին քարոզում էր նորանց տիրոջ խոսքը և սուրը ձեռքին առաջնորդում էր նորանց պատերազմի դաշտում:

Մար-Շիմոնի տան այդ հատկությունները կարողացան ժամանակի խորին հնությունից միշտ վառ պահպանել Ջուլոնների (ասորոց մի հին ցեղի) քաջազնական հոգին, և նոցա անկախությունը Ջոլամերիկի լեռներում:

Երբ ես ներկայացա նորան, նա շրջապատված էր յուր ցեղի մի քանի իշխաններով, որք զանազան կողմերից եկել էին յուրյանց ժողովրդյան դրությունը հայտնելու:

Նա ընդունեց ինձ խիստ սիրով և նստեցուց յուր մոտ: Պատրիարքի առաջին խոսքերը եղան բարովել իմ գալուստը և հարցնել իմ առողջությունը և ճանապարհորդությանս լավ կամ վատ անցուցանելը:

Քանի րոպեից հետո մատուցին մի փոքրիկ ֆինջան դառն խահվե և ապա մի երկար չիբուխ: Տեսնելով, որ բոլորն էլ ծխում էին, ես էլ սկսեցի ծխել:

Ես նկատում էի անկեղծ և ամենապարզ վարվեցողությունը իշխանների և Մար-Շիմոնի մեջ:

Նոցա հարաբերությունները էին կատարյալ ընտանեկան: Նոցա մեջ չէին երևում մեծավորի փառասիրությունը և ստորի, կեղծավորի ակնածությունը:

Մար-Շիմոնը խոսում էր արագ, կրակոտ և ազդու, որպես հատուկ էր նորա երիտասարդական հասակին և լեռնական բնավորությանը:

Եկեղեցականի կեղծ-պարկեշտական ցուցամոլությունը և երկյուղած-աստվածապաշտական մոլեռանդությունը բոլորովին աննշմարելի էին նորա դեմքի վերա: Նորա բոլոր կերպարանքը բացատրում էին վեհություն և ազնվություն:

Նա չէր որոշվում յուր ժողովրդից մինչև անգամ հագուստի ձևերով: Միևնույն շալե ապարոշը փաթաթած էր նորա գլխին, միևնույն հաստ գոտին կապած էր նորա մեջքը, միևնույն շալվարը, մի խոսքով, նա հագնված էր որպես մի հասարակ Ջուլո:

Նա հարցրավ, թե ինչ ազգից եմ ես:

Ես հայտնեցին թե հայ եմ:

— Իմ հանգուցյալ հայրս շատ էր սիրում այդ ազգը, — ասաց նա: — Ես նույնպես սիրում եմ հայերին: Նոքա խելացի և ճարտար մարդիկ են: Բայց ափսոս, նոքա յուրյանց բոլոր ճարպկությունը գործ են ածում միայն արծաթ ժողովելու:

—Ապա ի՞նչ պիտի անեին, — հարցրի ես:

—Արծաթը չէ կարող ազատել մարդին, երբ թշնամին հարձակվում է նորա վերա բաց սրով: Նա խլում է արծաթը, այլև ստրկացնում է նորան: Հարկավոր է սրով պատասխանել սրին: Այդ բնական օրենք է: Իսկ հայը մինչ այն աստիճան ստորացրել է յուրյան, որ ամեն մի քուրդր կամենալով մի նախատական խոսք ասել երկչոտ մարդուն, ասում է. «Դու ֆլայ ես». — նշանակում է դու հայ ես:

—Հայերի մի այդպիսի հատկությունը, — պատասխանեցի ես, — նոցա բազմադարյան պատմական կյանքի հետևանքն է: Հայերը, ճնշվելով, մաշվելով, ջարդվելով բարբարոս ազգերի բռնությանց ներքո, կորցրին յուրյանց քաջությունը:

—Ընդհակառակն, բռնակալությունը բարբարոսների, — ասաց Մար-Շիմոնը, — գլխավոր դասերն են լինում մի ազգին, միշտ վառ պահել քաջազնական հոգին: Ամեն ժողովուրդ կորցնում է յուր քաջությունը, ծուլանում է, փափկանում է միայն խաղաղության մեջ:

—Հայերը երբեք չեն եղել խաղաղ, ուրեմն ինչո՞ւ նոքա պիտի կորցրած լինեին յուրյանց քաջությունը, — հարցնում եմ ես:

—Յուրյանց եկեղեցականների շնորհիվ, — պատասխանեց նա: — Նոքա մեռուցին յուրյանց ժողովուրդը միշտ քարոզելով նորան խոնարհություն, համբերություն, ճգնություն և այլն:

Ես ոչինչ չպատասխանեցի: Մար-Շիմոնի խոսքերի մեջ երևում էր խորին ճշմարտություն:

—Մովսեսը և Դավիթը էին մարգարեներ, աստուծո բանի քարոզիչներ, — ավելացրուց նա, — իսկ միևնույն ժամանակ նոքա էին և պատերազմող մարդիկ: Եվ նոցա շնորհիվ Իսրաել քաջության հոգի ստացավ, և տիրեց ուխտյալ աշխարհին:

—Բայց Քրիստո՞ս, — ընդմիջեցի նորա խոսքը:

—Քրիստոս չսիրեց սուրբ, այդ պատճառով էլ նորան նահատակեցին խաչի վերա, — պատասխանեց նա, մի փոքր հեգնական ոճով:

Մեր խոսակցությունը ձգեց բավականին երկար: Ես նկատելով, որ ճաշի ժամանակ է, կամեցա գնալ իմ իջևանը:

Մար-Շիմոնը չթողեց գնալ, խնդրեց մնալ, յուր մոտ ճաշել: Շուտով մատուցին լվացվելու ձեռքի ջուր, և ճաշի սեղանը սփռվեցավ միևնույն սենյակում, ուր նստած էինք մենք: Այդ սենյակը էր պատրիարքի և դատարանը, նորա խորհրդարանը, նորա հյուրանոցը և սեղանատունը:

Ճաշը սկսվեցավ աղոթքով, որ կարդաց ինքը Մար-Շիմոնը:

Կերակուրները բոլորը միանգամ ներս բերվեցան, փայտյա սկուտեղների վերա դրված, պղնձե ամանների մեջ: Նոքա պատրաստված էին կաթնով, յուղով, բրնձով, ձավարով, ձվով և զանազան բանջարեղեններով: Մսեղեն ոչ մի բան չերևաց սեղանի վերա, որովհետև Մար-Շիմոնը յուր կյանքում միս չպիտի ճաշակե և նորա ժողովուրդը նույնպես սովորություն չունեին կենդանիք մորթելու ուտելու համար: Նոքա ուտում էին կամ որսի միս, և կամ մի ոչխարի միս, որին կամ գայլը պատառել էր, և կամ չափազանց ծերացել էր:

Ոգելից ըմպելիք նույնպես չերևաց սեղանի վերա: Միայն մեծ ամանների մեջ դրած էին սառը մածնաթան, որից ստեպ-ստեպ խմում էին ճաշողները:

Ինձ շատ դուր եկավ այդ պարզ նահապետական սեղանը: Եվ ես իմ կյանքում այնքան ախորժակով չէի ճաշել:

Ճաշը վերջացավ գոհության աղոթքով, որ կարդաց նույնպես Մար-Շիմոնը:

Մատուցին էլի դառն դահվե և չիբուխ: Մենք սկսեցինք ծխեր: Մեր խոսակցությունը ճաշից հետո եղավ դարձյալ ազգային խնդիրների վերա: Մար-Շիմոնը հայտնում էր յուր խորին տհաճությունը, Ջոլամերիկի սահմանից դուրս գտնված ասորիների զանազան երկրներում կրոնափոխ լինելու համար:

— Իմ հանգուցյալ հայրս, — ասաց նա, — շատ ընդդեմ էր օտարազգիների կաթոլիկությունը և բողոքականությունը մեր ժողովրդի մեջ մտցնելուն: Նա միշտ աշխատում էր, որ ասորիները հաստատ պահեին յուրյանց նախահարց կրոնական ավանդությունները (նեստորականությունը):

Իսկ եթե կցանկանային նոքա փոխել յուրյանց կրոնքը, նա միշտ խրատում էր նրանց միանալ հայերի հետ:

— Ի՞նչ նպատակ ուներ դորա մեջ ձեր հանգուցյալ հայրը, — հարց արի ես:

— Նպատակը խիստ պարզ էր — պատասխանեց Մար-Շիմոնը: — Հայերը մեզ հետ ունեցել են միշտ պատմական հին հարաբերություններ: Մենք խիստ մոտ ենք միմյանց թե երկրի սահմաններով և թե մեր ընդհանուր շահերով:

Մենք միանալով հայերի հետ կկազմեինք մի ուժ և զորություն, որով կարող էիմք ընդդիմանալ քուրդերի և տաճիկների բռնակալություններին: Իսկ ֆրանգները և ընկլիսները մեզանից խիստ հեռու են բնակվում. ասորին միանալով նոցա հետ յուր կրոնքով, ոչինչ չէր կարող շահել:

—Ապա ինչո՞ւ չիրագործեց ձեր հանգուցյալ հայրը մի այդպիսի նպատակը, — հարց արի ես:

—Նա երկար այդ մասին գրագրություն ուներ Թաբրիզում հայոց հոգևոր առաջնորդի հետ28, բայց հայոց առաջնորդը դավաճանեց նորա նպատակներին:

Վերջին խոսքերը Մար-Շիմոնը պատասխանեց այնպիսի մի կրքով, որ ես իսկույն նկատեցի նորա սրտում խորին վիրավորություն: Եվ չկամենալով քրքրել նորա հին վերքը, ասացի.

—Այն, որ չհաջողվեց ձեր հորը կատարելու, գուցե ձեզ կհաջողվեր, դուք փորձեցեք երկրորդ փորձը:

—Արդեն ուշ է, — պատասխանեց նա խորին հոգվոց հանելով: — Մեր ազգը Պարսկաստանում արդեն զոհ է դարձել կաթոլիկներին և բողոքականներին: Եվ Մուսուլի ու Բաղդադի կողմերում բնակվող մեր Քիտլանի ցեղը նույնպես կորած է մեզ համար, պապականների որոգայթի մեջ ընկնելով:

—Ինչո՞ւ եք հուսահատվում դուք, — կրկնեցի ես:

—Ես երբեք չեմ հուսահատվում: Ես իմ հույսը դրած եմ իմ Ջուլո ցեղի վերա: Նոքա ավելի սրտոտ են, քան անապատի առյուծները: Ես նոցա հետ միասին կապավինեմք ճոլամերցի լեռներին, նոքա հավատարիմ են, քան թե հայեր, կամ մի այլ ազգ, — պատասխանեց Մար-Շիմոնը վեհանձնությամբ:

Մի քանի րոպե ևս խոսելեն հետո ես հեռացա՝ անձնատուր եղած տխուր մտածությունների...:

ՆԱՄԱԿ ԺԳ

Մար-Շիմոնի աթոռը ժառանգական է, եպիսկոպոսապետը ընտրվում է միշտ միևնույն տունից: Նոցա բոլորն էլ կոչվում են Մար-Շիմոններ և սկսյալ առաջին սուրբ Սիմոնի օրից պահպանում են այդ անունը:

Եպիսկոպոսապետի ընտրությունը լինում է յուր մոր արգանդից: Նորան ծնելու ուխտված կինը, մինչև յուր որովայնի պտուղը աշխարհ ածելը, միս չէ ուտում: Ծնունդը աշխարհ գալեն հետո, իհարկե, եթե նա արու էր, համարվում է ժառանգը սուրբ աթոռի: Պատրիարքի մահից հետո ժառանգը բռնում է նորա տեղը, որքան և հասակով մանուկ լիներ նա: Որպես այդ վերջին Մար-Շիմոնը աթոռ է նստել, որպես լսեցի, յուր տասն և ութ տարեկան հասակում:

Մար-Շիմոնը ունի լիակատար իշխանություն յուր ժողովրդի վերա: Նա է նշանակում նորանց կառավարող իշխանները: Նա վճռում է նոցա մեջ ծագած գլխավոր վեճերը: Նա ստանում է ամեն մի ծուխից մասնավոր նվերք:

Վերջին արյունահեղ պատերազմից հետո, Բադիրխան-բեկի հետ այժմյան պատրիարքի հոր ժամանակով, թեև Ջոլամերիկը բոլորովին չընկճվեցավ, բայց ստիպվեցավ ամեն տարի մի որոշյալ տուրք վճարել Տաճկաստանի կառավարությանը: Այս տուրքը ինքը Մար-Շիմոնը հավաքել է տալիս յուր ժողովրդից և ուղարկում է Վանա փաշային, ամենևին թույլ չտալով օսմանցի պաշտոնակալներին ոտք կոխել յուր երկրի վերա:

Ջոլամերիկը խիստ լեռնային լինելով, նա շատ անպետք է երկրագործության համար: Բայց նա ունի անասնապահության բոլոր հարմարությունները: Եվ վերջինը ապահովում է բնակիչների ապրուստի պիտույքները: Ջուլոյի հագուստը ոտքից ցգլուխ, մինչև անգամ նորա ոտնամանները, բաղկացած են շալից, մազից և բուրդից: Տնային քնաշորեր, օթոցներ և այլն, նույնպես այդ նյութերից են պատրաստվում: Այդ բոլորը արվեստադործվում է կանանց ձեռքով: Թեև նոքա պատրաստվում են շատ կոպիտ կերպով, միայն ունեն այն ամրությունը, որ կարող էին երկար դիմանալ:

Տղամարդիկը աշխատության մեջ ավելի ծույլ են: Նոքա սիրում են թեք ընկնել միմյանց մոտ, ծխել և շատախոսել: Նոցա կանայքը ասում են. — «մեք ստեղծված եմք գործելու, իսկ տղամարդը պիտի պահպանե յուր զորությունը թշնամու դեմ կռվելու»:

Թեև Ջուլոն ամեն տարի յուր բահով բրում է մի փոքր տարաձություն ժայռերից ազատ հող մի սարի կողքում, ցանում է այնտեղ յուր սերմը, և թողելով աստուծո կամքին, դառնում է տուն: Եթե եղանակը անցնում էր անձրևային, նորա հունձքը հաջողվում է: Կանայքը ձեռքով արմատախիլ են անում փոքրիկ արտը, խուրձեր են կապում և շալակած բերում են տուն: Տան դռան առջև նոքա ձեռքով ծեծում են յուրյանց աղքատիկ կալը և մաքրում են ցորյանը: Այդպիսի անտանելի դժվարություններով ստացած հողի բերքը, իհարկե, բոլորովին չէ ապահովում նոցա ուտելիքը, այդ պատճառով ցորյան նոքա ըստ մեծի մասին ստանում են արտասահմանից, փոխելով նորան յուրյանց երկրի բերքերի հետ, որպիսի են՝ բուրդ, մորթիք, գարմիանու քիշմիշ, թուզ, մեղր և կխտոր:

Ջուլոների կյանքի պատկերները, նոցա ապրուստի ձևերը շատ նման են քուրդերին: Միայն որքան քուրդերը ավազակ են և հափշտակող, այնքան դոքա ազնիվ են և պարզամիտ: Ջուլոն բնավորությամբ խիստ հանդուգն է, դյուրագրգիռ և բարկացկոտ: Նա, երբ ստիպվեցավ մերկացնել յուր խենջարը, առանց հակառակորդին զարկելու յուր պատեհում չէ դնում: Այդ պատճառով մարդասպանությունը այստեղ մի սովորական դեպք է:

Ջուլոների դեմքի գծագրությունը, ամենայն ճշտությամբ պահպանել է յուր սիրեական տիպը:

Նոցա նրբակազմ, բարձրահասակ կանայքը ինձ հիշեցնում են միշտ Շամիրամին, այն համեմատությամբ միայն, որքան նինվեցի թագուհին վավաշոտ էր, դոքա այնքան ողջախոհ և անմեղ են:

Ամբողջ Ջոլամերիկում ես չտեսա ոչ մի ուսումնարան, միայն հանդիպեցի մի քանի ռաբիների, որք յուրյանց տներում պատրաստում էին տիրացուներ և քահանայացուներ:

Կրոնական սերբ մնացել է այստեղ յուր նախկին ջերմության մեջ: Ջուլոն, թեև ոչինչ գիտակցություն չունի Նեստորի վարդապետությունից, այսուամենայնիվ նա յուրյան կոչում է նեստորական: Նոցա եկեղեցական ծիսակատարությունը խիստ պարզ է: Ժամասացությունը կատարվում է ասորոց հին, ժողովրդին անհասկանալի լեզվով: Երաժշտության եղանակները շատ նման են մերինին:

Ժամատան տաճարը չէ զարդարված պատկերներով, որով նա յուր արտաքին ձևով շատ նման է բողոքական եկեղեցիների ժամատներին: Իսկ տաճարների շինվածքը մեր հին վանքերի շինվածքի ձևերը ունին:

Մի ամբողջ շաբաթ ես ճանապարհորդեցի Ջոլամերիկը: Իմ դուրս գալու միջոցին ես վերջին անգամ գնացի Մար-Շիմոնին տեսություն, առավել այն մտքով, որ տեսանեի իմ լսած հայոց լեզվով և ասորոց տառերով գրքերը: Նա խիստ ցավելով ասաց ինձ.

—Այո՛, մեք ունեիմք այդպիսի գրքեր, բայց Բաղիր-խան-բեկը, երբ կողոպտեց մեր տունը, նա բոլոր գրքերը այրեց:

—Ոչինչ չմնա՞ց, — հարց արի ես:

—Ոչ, միայն այնուհետև մի քանի հատոր զանազան գրքեր հավաքվել են մեր տանում: Եթե ձեզ ցանկալի էր նորանց տեսնել, ես բոլորը ցույց կտամ ձեզ:

Նա տարավ ինձ յուր գրքատունը: Տպագրված ոչինչ չտեսա այնտեղ, բոլոր գրքերը էին մագաղաթյա գրչագրեր, դարավոր ժամանակներից մնացած: Նոցա մեծ մասը սուրբ գրքի հատորներ էին, մեկնություններ էին, ժամագրքեր էին և եկեղեցական պատմություն: Կային և ասորոց պատմական գրքեր, և մի քանի հին թարգմանություններ հունաց իմաստասերներից: Բանաստեղծական գրքեր չտեսա, բացի եկեղեցական շարականներից և հոգևոր տաղերգություններից:

Ես չեմ կարող լիակատար տեղեկություն տալ քեզ Մար-Շիմոնի գրքատան մասին, որովհետև ես այնքան ծանոթ չեմ ասորոց լեզվի հետ, միայն կասեմ, մեզ հայերիս, շատ հարկավոր է սովորել այդ լեզուն, եթե կկամենայիմք մեր ազգային և եկեղեցական պատմության վերա կատարյալ լույս ձգել:

Երբ ես հրաժարական ողջույնը տվեցի Մար-Շիմոնին, նա ասաց ինձ յուր վերջին խոսքը.

— Գնա՛, հայ երիտասարդ, տերին հանձնում եմ քեզ, գնա՛, երբ տեսնես ձեր պատրիարքին, ասա, մեր երկուսիս վիճակը մի է, թո՛ղ մեր նպատակները ևս լինին մի, ձեռք տամք մեկմեկու և ազատեմք մեր ազգերը անօրենների հաղթահարությունից...:

Այդ խոսքերը թեև ծանր ազդեցություն ունեցան իմ վերա, բայց ես ոչինչ չպատասխանեցի, ի նկատի ունենալով մեր եկեղեցականների մեռելային անհոգությունը...:

Ես նորա ձեռքը համբուրեցի և շնորհակալությամբ հեռացա: Նա ինձ տվավ որպես հիշատակ մի գրչագիր ավետարան, որո հնությունը հասանում է ավելի քան հազար երկու հարյուր տարի:

Վերջացնելով իմ նամակը, ես չեմ կարող մի քանի խոսք չգրել քեզ իմ հյուրընկալ Շմուելի մասին, որո տանում իջևանել էի ես: Նա շատ ազնիվ մարդ էր: Գիշերները նա պատմում էր ինձ զվաճալի հեքիաթներ յուրյանց ազգի կյանքից: Նորա կինը էր զարմնալի բարեսիրտ, նա լվանում էր իմ գլուխս և ամեն առավոտ տալիս էր նախաճաշիկ մեղրով և կարագով: Իմ բաժանվելու ժամանակ նոքա շատ դժվարությամբ ընդունեցին մի քանի հատ մաջիդիան, որ ես առաջարկեցի նորանց իբրև վճարը նոցա հյուրասիրության, «Դուք մեր աղ ու հացը անպատվում եք, պարոն», — ասաց առատասիրտ Շմուելը:

ՆԱՄԱԿ ԺԴ

Դուրս գալով Ջոլամերիկից, մի քանի օրվա ճանապարհորդությունից հետո, ես մտա Ուրմիա նահանգը, — Ատրպատականի մեջ առաջին գավառն է, որ նշանավոր է յուր բնակիչների բազմությամբ, բերքերի հարստությամբ և յուր գեղեցիկ դիրքով, որ կարող է համարձակ մրցություն անել հրաշալի Զվիցերիայի հետ, թեև նա չունե Ալպիի գեղանկար լեռները:

Արևի վերջալույսը ձգել էր Սըր-Դաղի վերա յուր ոսկեգույն շառավիղը, երբ ես հասա Նախիջևան-Թաֆա կոչված գյուղը: Ես հանդիպեցա մի երիտասարդի, որ դառնում էր այդիեն: Ես հարցրի, թե որտեղ կարելի էր իջևանել:

— Իմ տունս փեշքաշ է ձեզ, աղա, թե արժան կհամարեք, — ասաց երիտասարդը:

Ես հետևեցի նորան, քանի րոպեից հետո հասանք նորա տունը: Որովհետև սաստիկ հոգնած էի, իսկույն քնեցա, առանց ընթրիքի:

Ես քնեցա, բայց որպիսի քաղցր երազներ հրապուրում էին իմ միտքը, եթե քեզ գրելու լինեմ, դու պիտի ասես, իմ ընկերը անձնատուր է եղած երևակայական ցնորքների... Մի սուր և ձգական ձայն հանկարծ վրդովեց իմ հանգստությունը, հավերու թառեն, որ շատ հեռու չէր իմ ննջարանեն, շինական կենդանի ժամացույցը թևքերը թափ տալով, երեք անգամ կանչեց՝ կուկրյուկու:

Ես զարթեցա: Դեռ կես-գիշերային ժամն էր:

Լսելի է լինում խշխշոց: Խավարի մեջ կայծակին է տալիս հրահանը: Եվ ահա տանուտիրոջ մանուկ հարսը, նոր վառած ճրագը լույսով, երևան է լինում խրճիթի կենտրոնում, որպես գիշերային վեստալկա:

Խրճիթի հավերժահարսը կարծում է, թե դեռ բոլորը քնած են, այդ պատճառով նա համարձակ բարձրացրել է երեսի քողը: Նորա դեմքը, թեև այրված արևից, սևացած մուխից ու ծուխից, այսուամենայնիվ բացատրում է քնքուշ գեղեցկությունքը արևելյան գծագրության: Նա զարթեցնում է յուր՝ ցերեկով դաշտումը հոգնած տղամարդին, որ առանց ձանձրանալու վեր է կենում յուր աջ կողմից և շուտով հագնվում է: Կինը ջուր է ածում նորա ձեռքերի վերա, նա լվացվում է: Եվ յուր մեջքի գոտիով երեսը սրբելեն հետո, դեմքը դարձնում է դեպի արևելք, խաչակնքում է երեսը, կարդում է յուր սովորական աղոթքը:

Աստուծո փառաբանության պաշտոնը կատարելեն հետո, տղամարդը դառնում է դեպի յուր գործը: Նա ջուլհակ է: Հորի վերա կազմված է նորա կտավագործության արհեստի մեքենաները: Նա ոտները մեկնում է այդ հորի մեջ: Նստում է: Նորա մաքուքը սկսում է խաղալ հինած թելերի միջից, և դուֆայի դաշնակավոր ձայնը անընդհատ հնչեցնում է խրճիթի մելամաղձական լռությունը...:

Ջուլհակի կինը, յուր ամուսնի մտերիմ գործակիցը, տղամարդի գործարանի մոտ շարժում է յուր ճախարակը, վիլակը պտիտ է գալիս, և նորա համար թելով փաթաթած մասուրայք է պատրաստում:

Ջուլհակի ծերունի հայրը և պառավ մայրը դեռ քնած են: Բայց մի կյանքի հոգսերով ծանրացած մարդի աչքերին մի՞թե քունը մոտենում է...:

Երեք անգամ լսելի եղավ հազի ձայն: Այդ նշանը բավական էր հարսին իմացնելու, թե նորա սկեսրայրը զարթնում է: Նա շուտով թողնում է ճախարակը և դիմում է դեպի ծերունու անկողինը: Նորա շորերը ձգում է ուսին և հագցնում նորան, սոլերը շիտկում է, ծերունին վեր է կենում տեղից: Նորա համար վաղուց պատրաստել է ժիր հարսը գոլ ջուր լվացվելու:

Արուսյակը դեռ նոր փայլում է հանդիպակաց լեռան գագաթեն:

Ծերունին դուրս գալով յուր տան բակում, և ալեզարդ գլուխը բաց արած երկնքի աստղերի տակ, սկսում է աղոթել: Նորա աղոթքը երկար է և ջերմեռանդ: Ես լսում եմ բոլորը: Նա աղոթում է յուր զավակների համար: Նա աղոթում է յուր ընտանիքի ապրուստի համար: Նա աղոթում է յուր ազգի համար: Ախ, ո՞ւմ համար չէ աղոթում նա...:

Ծերունու պառավ կինը նույնպես լվացված և հագնված է: Նորա հնազանդ հարսը լցուցել է յուր սպասավորության պարտավորությունը դեպի յուր սկեսուրը:

Պառավը մոտենում է յուր ջահրեին և նստում է նորա առաջև: Նա սկսում է պտտացնել նորա ճախարակը, բամբակե թելեր մանել, և կաժեր պատրաստել յուր որդվո կտավների համար: Իլիկի ճլվլուն ձայնը մի նոր կյանք է տալիս այդ վաստակավոր գերդաստանի գործունեությանը:

Եվ իմ աչքի առաջև ներկայանում էր կտավ գործելու արհեստը յուր նախկին տղայության մեջ, որ պահանջում էր գործողներից անհամեմատ շատ ֆիզիկական աշխատություն, իսկ արդյունքը՝ խիստ սակավ:

Իսկ ծերունին, գերդաստանի պատրիարքը, չնայելով նորա հասունացած տարիքին, նա ևս անգործ չէ մնում: Նա դիմում է դեպի յուր տավարները, նոցա տակը սրբում է, կեր է տալիս, և յուր ցամաքած մատներով քորում է նոցա մարմինը, փայփայում է, և ամեն մինին յուր անունով կոչելով հանաքներ է զրուցում նոցա հետ, ծիծաղում է և զվարճանում է նոցա առողջության մասին:

Արշալույսը սկսավ պարզվել:

Ժամատան կոչնակները զարկեցին:

Ծերունին մոտենալով ինձ հայտնեց, թե ժամանակ էր եկեղեցին գնալու:

Ես ասացի, այս առավոտ ոչ բոլորովին առողջ զգում էի ինձ, դորա համար չէի կարող ժամ գնալ:

Ծերունին թողեց ինձ տանում, ինքը միայնակ դիմեց դեպի եկեղեցին:

Իսկ նորա որդին, դուրս գալով ջուլհակի հորեն, բահը ուսին դրած, գնաց դաշտը: Այդ ժիրը արդեն գործել էր մինչև քսան արշին կտավ:

Մանուկ աղջիկները սափորները առած գնացին ջուր բերելու. իսկ հարսը կթոցը առած՝ գնաց թոնրի համար վառելիք բերելու մարագեն:

Թոնրի մեջ, այդ նվիրական օջախի մեջ, պառավը ձգում է կրակը. քանի րոպեից հետո խրճիթը լցվում է աթարների խեղդող ծխով: Տիրում է ընդհանուր խավար, և մուխի ամպերի մեջ կորչում են խրճիթի բոլոր առարկայքը: Միայն աթարների բոցը, դուրս ոսելով թոնրից, ձգում է յուր շրջակայքում թույլ, կանաչագույն շառավիղ:

Ես սկսեցի հազալ: Որովհետև ամեն մի անսովոր մարդ իսկույն խեղդվելու էր այդ ծուխի օվկիանոսի մեջ: Բայց կարծես թե, այդ խրճիթի բնակիչքը սովորած լինեին այդ տարտարոսական վուլկանի անախորժ արտահոսությանը, թեև երբեմն պառավի ծանր և ձգական հազալու ձայնը ցուցանում էր, թե նորա մաշված կուրծքը չէր դիմանում մուխի ծծմբային կծու ազդեցությանը: Եվ սիրուն հարսը, երբեմն դուրս գալով բակում, թարմ օդ էր շնչում, և ճմբռում էր յուր արտասուքով լցված աչքերը: Ա՛խ, որքան այդպիսի գեղեցիկ աչքեր ցավագարվում են այդ ծուխերի մեջ... և որքա՛ն այդպիսի սիրուն դեմքեր մրոտվում են այդ խրճիթների մեջ...:

Ես չկարողացա երկար համբերել, իսկույն դուրս եկա խրճիթեն:

Թռչունները դեռ նոր սկսել էին եղանակել յուրյանց վաղորդյան տաղերգությունը: Առավոտյան հովասուն օդը ոգևորված էր ախորժելի թարմությամբ: Ես միայնակ զբոսնում էի ուռիների ծառաստանի մոտով, որք տնկած էին փոքրիկ առվակի եզերքին:

Նույն ժամուն ես մտածում էի, թե դեռ որքա՛ն կրթության կարոտություն ունի մեր ժողովրդի ստորին մասը, մինչև նորա կյանքի ձևերը կստանային որևիցե մարդավարի կերպարանք մինչև նոքա կորոշվեին անասունների հետ կենակցությունից...:

Ես դարձա իմ հյուրընկալի խրճիթը, երբ ծուխը մի բարի բախտով դուրս էր գնացել երդիկներից: Թոնրի բոցերը շիջել էին: Եվ պառավ տանտիկինը թխել էր նոր լավաշներ, և պատրաստել էր յուր հյուրի համար նախաճաշիկ:

Ծերունին նույնպես դարձել էր ժամից՝ յուր հետ բերելով մի քահանա: Մեք իսկույն սեղան նստեցիմք: Թեյի գործածությունը դեռ չէր մտած այս խրճիթներում: Միայն մեք ունեիմք նախաճաշելու ձվածեղ, յուղով եփած խավիծ և դոշաբով եփած հասիդա:

Ես կամեցա մի փոքր խոսեցնել գյուղական քահանային և այդ պատճառով հարց արի նորան.

—Քանի՞ տարի է, որ դուք քահանա եք:

—Գալոց նավասարդին կլրանա տասը տարին, — պատասխանեց նա:

—Գո՞հ ես քո կարգեն:

—Ճշմարիտն ասած, ո՛չ այնքան:

—Ինչո՞ւ:

— Որովհետև մեք չունիմք այժմ այնքան արդյունք, որպես առաջ:

— Ի՞նչ պատճառավ:

—Այն պատճառավ, որ քահանան առաջ ստանում էր վարձ կնունքի, պսակի, թաղման, և մյուս այլ և այլ եկեղեցական խորհուրդների մասին, բայց այժմ...:

—Այժմ դոքա չե՞ն լինում:

—Լինում են... միայն այս աղբյուրներից գոյացած արդյունքը ստանում է վիճակավոր առաջնորդը, մեզ մնում են խիստ փոքր վաստակներ միայն շահել մեր եկեղեցին...:

—Ուրեմն ձեր կարգը չէ՞ բերում ձեզ ավելի օգուտ:

—Ոչ այնքան... դուք կհամաձայնիք իմ հետ, եթե գիտենաք, որքան թանկ է նստել ինձ այդ կարգը... Գ... եպիսկոպոսը քսանական դեղին թուման (60 ռուբլի) ստացավ իմ օրհնելու գինը. մի այդքան զգալի գումարը լրացնելու համար ես վաճառեցի իմ զույգ եզները տասն թումանով, և իմ արորը դադարեց գործելուց: Եվ մնացորդը պարտք արեցի մի թուրքից, և մինչև այսօր իմ ջուխտակ որդիքս պանդխտության մեջ մաշվում են յուրյանց հայրը այդ ծանր պարտքեն ազատելու համար, բայց դեռ նորա տարեկան տոկոսը չեմք կարողացել վճարել...

Այդ խոսքերը ինձ վերա խիստ անախորժ ներգործություն ունեցան, մտաբերելով սիմոնականության վատթարությունը. միայն ես ցանկացա տեղեկանալ քահանայի ուսման մինչև որ աստիճան լինելը: Բայց ցավալի է խոստովանել, խեղճ քահանան յուր մաշտոցը և ժամագիրքը օրինավոր կերպով կարդալ ևս չգիտեր...:

Արեգակը բավականին բարձրացել էր հորիզոնի վերա, ես դուրս եկա Նախիջևան-Թափա գյուղից և ուղևորվեցա դեպի Որմի քաղաքը:

Իմ ճանապարհը ձգվում էր խաղողաբեր այգիների և հունձքի արտերի եզերքով: Մշակների մանգաղը փայլում էր հասունացած սրայների մեջ: Ես անցա մի արտի մոտեն, ուր մի ալևոր յուր զավակների հետ հնձում էին: Նորա կինը և աղջկերքը կապում էին խուրձերը: Ես կանգնեցա արտի մարգի վերա և ախորժանոք նայում էի նորանց: Ալևոր հնձավորը յուր մանգաղը ձգեց մի խուրձից բարձրացուց և մոտենալով ինձ, դրեց իմ առաջև ասելով. — քեզ փեշքեշ, աղա:

Այդ նորա երկրագործության բերքի երախայրիքն էր, որ մշակը այնպես առատասրտությամբ նվիրում էր յուր արտի այցելուին:

— Աստված օրհնե քո հունձքը, — ասացի ես:

Մշակը շնորհակալ եղավ և սրբեց ճակատի քրտինքը: Մանավանդ, երբ բաշխեցի նորան մի քանի սև վաղ:

—Որպե՞ս է այս տարվա հունձքը, — հարցուցի նրան:

—Համեմատելով իմ դրացի երկրագործների բերքին, փառք աստուծո, իմ հունձքը ավելի պտղաբեր է, — պատասխանեց ալևորը գոհունակությամբ:

—Երևի քո արտի հողը ավելի պարարտ է:

—Ոչ, — պատասխանեց երկրագործը:

— Ուրեմն դու բարվոք մշակել ես նորան:

—Այդ ևս չէ պատճառը, — կրկնեց նա:

—Ապա ի՞նչ:

—Հունձքի պտղաբերությունը աստուծո ողորմությունիցն է. ադամորդին ոչինչ չէ կարող շինել առանց աստուծո կամքի: Նոքա, որ արդարությամբ վարում և ցանում են, աստված միշտ օրհնում է նոցա աշխատությունը: Ամբողջ քառասուն տարի ես վարում եմ այդ արտը, երբեք իմ արորի խոփը չէ ավերել նորա մարդը չարության մտքով, որ դրացիիս հողեն խառնեմ իմի հետ: Երբեք ես իմ սերմը առանց քահանային օրհնել տալու չեմ ձգել իմ ակոսների մեջ: Երբեք ես իմ խուրձերեն թափված հասկերը թույլ չեմ տվել իմ զավակներին հավաքելու, այլ միշտ թողել եմ նորանց աստուծո աղքատներին: Ահա այդ է պատճառը, որ աստված օրհնում է իմ վար ու վաստակը:

— Աստված օրհնե քո հավատքը, — պատասխանեցի ես նահապետական ծերունիին:

Ես հեռացա, մտածելով, որ Վերին տեսության մատը միշտ խառն է մեր ժողովրդի ամեն մի շարժմունքների մեջ, և կրոնքի ազդեցությունը դրոշմել է նոցա գործունեության վերա յուր կնիքը,

իսկ եկեղեցականի ներգործությունը տիրում է նորա կյանքի ամեն մի երևույթների վերա: Այդ միջոցում մտածում էի, եթե մեր գյուղական եկեղեցականք չէին լինիլ իմ այն օրվա տեսածի նման, — քսան թումանով յուր կարգը գնած շնորհավաճառ եպիսկոպոսեն, այլ կլինեին կրթյալ, գործնական մարդիկ, իրողական արհեստագետք, նոքա — որքան օգուտներ կարող էին մատակարարել յուրյանց ժողովրդին... նոքա կուսուցանեին գեղջուկին, թե բացի նորանից, որ պետք էր հուսալ վերին նախախնամության օգնությանը, պտղաբեր հունձք ունենալու համար, անհրաժեշտ հարկավոր էր և մշակել, պարարտացնել հողը:

ՆԱՄԱԿ ԺԵ

Հետևյալ ավուր առավոտյան, դուրս գալով Նախիջևան-Թափեից, ես ուղևորվեցա դեպի Ուրմի քաղաքը: Մեր ճանապարհը ձգվում էր խաղողաբեր այգիների, բամբակի արտերի և բրնձի դաշտերի միջով: Ես չէի տեսանում անմշակ թողուցած հող, երևում էր, որ երկրագործությունը շատ ծաղկած էր այդ գավառում, թեև յուր նահապետական դրության մեջ:

Ես տեսանում էի, այր, կին, երեխա, ծեր և երիտասարդ, բոլորը գործում էին: Մի բան միայն զարմացնում էր ինձ, որ Պարսկաստանում հայ կանայք, հետևելով մահմեդականների սովորությանը, ման էին գալիս ծածկված երեսներով, իսկ այստեղ ընդհակառակն, ես տեսանում էի նորանց բոլորովին արձակ, համարձակ վարվում էին տղամարդերի հետ: Այդ սովորությունը մտած պիտի լինի տեղային հայերի մեջ ասորիներից, որոց կանայքը բավականին ազատ են ընտանեկան ստրկությունից:

Կեսօրին ես հասա Ուրմի քաղաքը: Նա շրջապատված էր, որպես պարսից շատ քաղաքները, պարիսպներով, աշտարակներով, և դրսից բավականին խորն ընկած խրամով, որ ջրով լեցնում են պատերազմի միջոցին: Նանա-Մեյրամ (մայր Մայրամ) կոչված հայաբնակ թաղում իջևանեցի մի ասորու տան:

Պարսկաստանում հյուրանոցներ չկան, մի քաղաք մտանելով ստիպված ես կամ կեղտոտ քարվանսարաներում իջևանել և կամ մասնավոր տներում: Մահմեդական ընտանիքը քրիստոնյային տեղ չի տալ յուր տանում. մնում են քրիստոնյայք և հրեաները, որք ամենայն սիրով ընդունում են օտարականին յուրյանց բնակարաններում:

Մի փոքր հանգստանալուց հետո, ճանապարհի փոշին ինձանից սրբելուց հետո, երեկոյան պահուն, ես այցելություն գործեցի ամերիկացի Պորտ Ընկերության միսիոնարների տանը, որ կենում էին այդ թաղում մի հոյակապ, եվրոպական ճաշակով շինվածքի մեջ:

Մտանելով նոցա բակում, Պարսկաստանում առաջին անգամ հնչեց իմ ականջներին պիանոյի ձայն, այդ ձայնը կախարդապես հարույց իմ սրտում վաղեմի զգացմունքները, ես երևակայում էի, թե գտանվում եմ Եվրոպայում:

Մստեր Պերկին անունով ծերունի քարոզիչը, աստվածաբանության վարդապետը ընդունեց ինձ յուր մոտ: Նա մի բարձրահասակ մարդ էր սպիտակ մորուքով, ազնիվ և պատկառելի դեմքով: Եվ շատ վարժ խոսում էր թուրքերեն, ասորոց և եբրայեցոց լեզու:

Մի քանի սովորական զրույցներեն հետո, որ մարդիկ գործ են ածում տեսության առաջին բոպեներում, ես հարց արի միսիոնարեն, թե որպես էր առաջ գնում նոցա գործը Պարսկաստանում:

—Տիրոջ գործը ամեն երկրներում առաջ է գնում հաջող կերպով, առավելապես Պարսկաստանը կարող է նորա պտղաբեր հողը դառնալ, — պատասխանեց քարոզիչը, ինքնաբավական վստահությամբ:

—Ո՞ր ազգերի մեջ գործում եք դուք, — հարց արի ես:

—Առավելապես ասորիների մեջ, իսկ մասնավորապես հայերի և հրեաների մեջ, — պատասխանեց նա:

—Հայերը և ասորիները արդեն քրիստոնյաներ են, — ասացի ես. — ինչո՞ւ չգործել ասրսիկների և թուրքերի մեջ:

—Միայն քրիստոնյա կոչումը ունենալով չէ նշանակում ճշմարիտ քրիստոնյա լինել: Մեք աշխատում եմք պատրաստել հայերին և ասորիներին, որպեսզի նոցա ձեռքով կարողանանք ներգործել ասիական մյուս ազգերի վերա:

—Դուք ավելի խստությամբ եք դատում հայերի և ասորիների վերա, նորանց քրիստոնյաներ չհամարելով:

—Դուք երևի չհասկացաք ինձ, պարոն, — ասաց քարոզիչը մեզմությամբ: — Այո, նոքա կոչվում են քրիստոնյաներ, բայց թե որքան կատարում էին նոքա քրիստոնյայի պարտավորությունքը, եթե թույլ կտայիք, ես պատմեմ ձեզ մի քանի խոսք նոցա անցյալից:

—Մեծավ ուրախությամբ, լսում եմ:

—Մեք եկամք այստեղ 30 տարի առաջ, և գտամք հայերին և առավելապես ասորիներին ամենաթշվառ դրության մեջ: Նոքա չունեին ո՛չ տպագրված գրքեր և ո՛չ ուսյալ եկեղեցականներ: Նոցա նախնյաց հոյակապ գրականությունից այս և այն քահանայի տանում գտանվում էին միայն սուրբ գրքի հատորներ մագաղաթի վերա գրված, հին անհասկանալի լեզվով, այն ևս ո՛չ թե կարդալու համար, այլ փաթաթած թաշկինակներում, դրած էին նոցա տան մի անկյունում, որպես սրբություն, ճրագ էին վառում նոցա առջև, և մերձանում էին նորանց մարդիկ, երբ մինին հարկավոր էր երդում տալ նոցա վերա, կամ որևիցե հիվանդի գլխին դնել բժշկելու նպատակավ: Եկեղեցական դասը յուր տգիտությամբ ետ չէր մնում խավար ժողովրդից, որոնք կոչում էին յուրյանց գրիգորյան, և նեստորական քիրստոնյաներ, բայց ոչինչ գիտակցություն չունեին յուրյանց դավանության վարդապետությունից: Կրոնքը նոցա մեջ պայմանավորվում էր մի քանի արտաքին ծեսերով և ավանդություններով միայն:

Ես նկատեցի, քարոզչի խոսքերը բոլորովին հեռու չէին ճշմարտությունից, որովհետև ես ինքս շատ տեղերում ականատես էի եղել հայերին և ասորիներին դեռևս նույն դրության մեջ:

—Իսկ ա՞յժմ, — հարց արի ես:

—Հայերը նույն դրության մեջն են որպես առաջ, — պատասխանեց քարոզիչը: — Որովհետև մենք դեռ նոր ենք սկսել գործել նոցա մեջ: Մեր ժողովրդի մեծ մասը բաղկացած է ասորիներից, դուք նոցա ամեն մինի տանում կգտանեք բազմաթիվ տպագրած հատորներ Աստվածաշնչի և զանազան կրոնական գրքերի, նոր և կենդանի լեզվով: Նրա ամեն մինը գիտե գրել կարդալ և ճշմարիտ քրիստոնյայի պարտականությունքը ճանաչել:

—Ի՞նչ օգուտներ կարող է ունենալ մի այդպիսի ստկրացած ազգի համար, որպես ասորիներն են, լոկ կրոնական կրթությունը, — հարց արի ես:

—Մեք ունիմք երկու մեծ վարժարաններ, մինը՝ այս քաղաքում մեր տան մեջ, աղջիկների համար, մյուսը Սիր-դարի կոչված ամառանոցում, տղաների համար: Այդ վարժարաններում, բացի կրոնքը, աշակերտները և աշակերտուհիք ուսանում են և զանազան այլ առարկաներ ու արհեստներ, որպիսի են ընդհանուր պատմություն, մաթեմատիկա, աշխարհագրություն, բնական պատմություն, ֆիզիկա, քիմիա և այլն: Մի խոսքով, այդ երկու վարժարաններում մեք պատրաստում եմք քարոզիչներ, վարժապետներ և վարժապետուհիք, ուսուցչություն անելու գյուղորայքի երկսեռ տարրական վարժարաններում, որոնցից զուրկ չէ ոչ մի գյուղ, ուր մեք ունեիմք փոքրիշատե ժողովուրդ:

—Մտանելով Ուրմիո գավառում, — ասացի ես, — ամեն տեղ նկատել եմ, ձեր ժողովուրդը թեև մտավորապես և բարոյապես բավականին զարգացած են, բայց այդ չոր ու ցամաք կրթությունը նոցա նյութական կյանքի և ապրուստի ապահովությանը ոչինչ չէ նպաստում: Ասորին տակավին նույն ստրկական դրության մեջն է, որպես առաջ, նա որպես մի անբան անասուն գործում է միմիայն կալվածատեր խաների սրտին: Եվ այդ ստկրությունը զգալի չէր, այժմ անտանելի է դարձել, երբ նա հասկացել է, թե ինչ նշանակություն ունի մարդկայնությունը, ազատությունը և իրավունքը:

—Ի՞նչ կարող էիմք անել մեք նոցա նյութականը ապահովելու համար, — հարցուց քարոզիչը:

—Դուք կարող էիք նոցա որդիներին սովորեցնել ուսման հետ և զանազան արհեստներ, — պատասխանեցի ես:

—Մի այդպիսի միտք ունեցավ մեր ընկերներից մինը՝ մստեր Ստաքինը. նա Ուրմիի Անզալի կոչված մասնում, որ պարունակում է յուր մեջ շատ ընդարձակ տարածություն խիստ բերրի հողի, Գովլան անունով գյուղում շինեց մի ամրոց, ուր միտք ուներ հիմնել բազմարվեստյան ուսումնարան, ուր աշակերտները պիտի սովորեին ուսման հետ և զանազան արհեստներ, որպիսի են հյուսնություն և այլն. այլև գյուղատնտեսություն և երկրագործություն: Վերջինիս մասին գործնական փորձեր անելու համար, նա Շահից ստացավ ընդարձակ դաշտեր, և բերել տվավ Ամերիկայից զանազան երկրագործական անոթներ, և ինքը ուղևորվեցավ դեպի Ամերիկա, վարդապետներ բերելու այդ արհեստները սովորեցնելու համար: Բայց դժբախտաբար մահը վախճան տվեց այդ բոլոր նպատակներին:

—Շատ ցավում եմ, մի այդպիսի օգտավետ ձեռնարկությունը չէ հաջողվել: Միայն ձեր առաքելությունը կարող է իրագործել նույն նպատակները, որ ձեր հանգուցյալ ընկերը յուր հետ գերեզման տարավ:

— Այո, մեք ևս արհեստագիտություն սովորելու նպատակավ մի քանի պատանիք ուղարկել եմք Մալթա կղզին, որ նոքա դառնալով յուրյանց հայրենակիցների մեջ տարածեին նորան: Բայց գիտնական երկրագործությունը մի քանի պատճառներով այստեղ չէ կարող հաջողվել:

—Որպիսի՞ պատճառներով, — հարց արի ես:

—Առաջին պատճառն այն է, որ գյուղացիք այստեղ հող չունեն, այլ ամբողջ երկիրը պատկանում է կալվածատեր խաներին, երկրորդ, գիտնական երկրագործությունը այստեղ շատ ծախս է պահանջում, մինչդեռ հողի բերքը ավելի գին չունի:

—Իսկ արհեստները այդպես չեն, — կտրեցի ես քարոզչի խոսքը. — պարսիկները արդեն սկսել են, ոչ յուրյանց գլուխը, այլ արտաքին բաները, որպիսիք են, տան կահ-կարասիքը, հագուստը, զենքերը, շինության ձևերը, փոքր առ փոքր նմանացնել եվրոպացիներին, այդ բաները եվրոպական նմանությամբ արվեստագործող մարդը կարող է ապահովել յուր ապրուստը:

— Այդ ուղիղ է, — պատասխանեց քարոզիչը և մտածության գնաց:

—Ոչ միայն ուղիղ է, այլ վերին աստիճանի ճշմարտություն: Իմ ճանապարհորդությանս մեջ, Ռուսաստանում, Տաճկաստանում, միշտ ես տեսել եմ ուրմեցի ասորին, հարյուրավոր անձինքներից խումբեր կազմած, դիմում են դեպի պանդխտություն, այդ բախտախնդիրները մաշվում են, փտում են օտար երկրներում, շատ քչերին նոցանից հաջողվում է դառնալ յուրյանց հայրենիքը, երևում է, այդ մարդիկը յուրյանց երկրում ապրուստ ճարելու հնարներ չունեն:

—Այստեղ միայն հացի խնդիրը չէ, պարոն, որ ստիպեցնում է նորանց դեպի օտար աշխարհներ դիմել, դուք չգիտեք, թե քանի ծանր պարտավորություններ դրած են նոցա վերա կառավարունից և գյուղատեր աղաներից, որոնց լրացնելու համար նոքա ստիպված են թողուլ յուրյանց հայրենիքը և օտար աշխարհներում արծաթ վաստակել:

Մեր խոսակցությունը շատ երկար ձգեց, քարոզիչը խոստացավ մանրամասնաբար պատմել ինձ այդ երկրի գյուղացիների դրությունը, որ ես էլ հետևապես կհաղորդեմ ձեզ:

ՆԱՄԱԿ ԺԶ

Մի քանի օրից հետո ես կրկին գնացի միսիոնարների տունը, ուր բնակվում էին հինգ ամերիկացի մեթոդիստների ընտանիքներ: Իմ գլխավոր նպատակն էր տեսնել նոցա հիմնարկությունները, որ տեղավորված էին նոցա տան մեջ: Մի երիտասարդ միսիոնար, մստեր Լաբերի անունով, բարեհաճեցավ ցուցանել ինձ բոլորը:

Նախ և առաջ մեք մտանք տպարանը, ուր գործում էր մի հատ արագատիպ մամուլ միայն: Գրքեր տպվում էին միայն ասորոց լեզվով, որոց տառերի ձևը և գեղեցկությունը գերազանցվում էին մի ժամանակ Լոնտրայում նույն լեզվով տպված Աստվածաշունչի գրատպությունից: Բացի Աստվածաշնչից և զանազան կրոնական ու աստվածաբանական պարունակություն ունեցող գրքերից, այդ տպարանում տպվում է ասորոց լեզվավ մի պարբերական թերթ «Զարիրզդ-բարա» անունով, որ նշանակում է Լուսո արշալույս և ունի կատարյալ կրոնական ուղղություն:

Ինձ վերա շատ ախորժ տպավորություն ունեցավ, երբ մստեր Լաբերին հայտնեց, թե նոցա մամուլը գործում է առանց ցենզորի քննադատության:

Ուրեմն գրատպությունը Պարսկաստանում վայելում է կատարյալ ազատություն:

—Այդ ոչ թե ազատությունիցն է, — ժպտելով պատասխանեց միսիոնարը, — այլ կառավարության անգիտակցությունից, որ տակավին ծանոթ չէ նորան մամուլի և ցենզորի նշանակությունը:

—Ուրեմն դուք կարող եք օգուտ քաղել դորանից:

Միսիոնարը դարձյալ ժպտեցավ և ոչինչ չպատասխանեց:

Տպարանից մեք մտամք նոցա գրքատունը: Թեև այնտեղ ամբարված էր բազմաթիվ հատորներ զանազան նորատիպ կրոնական և արհեստական գրքերի, բայց մի բան միայն առավելապես ուրախացուց ինձ, որ միսիոնարները յուրյանց ուշադրությունից չէին թողել հավաքել այնտեղ ժամանակի կորստեն զերծ մնացած ասորերեն մագաղաթյա գրչագրները, որոնց ուսումնասիրությունը կարող է լույս ձգել գիտության վերա արևելքի վերաբերությամբ:

Յուրյանց տան մեջ միսիոնարներն ունեին և ապտեկա: Մի երիտասարդ ընկլիս բժիշկ այնտեղ կանգնած նայում էր հիվանդներին և դեղ էր տալիս:

—Մեր բժիշկը, — ասաց մստեր Լաբերին, — նայում է հիվանդներին և այցելություն է գործում նոցա մոտ առանց վարձատրությանն. դեղերն ստացվում են մեր ապտեկից նույնպես ձրի: Այդ հանգամանքում մեք խտրություն չեմք դնում ազգերի և կրոնքների մեջ:

—Այդ մի մարդասիրական գործ է, — պատասխանեցի ես. — մանավանդ մի այդպիսի երկրում, ուր չկան եվրոպացի բժիշկներ:

Միսիոնարների տանում կար մի հյուրանոց: Մստեր Լաբերին հրավիրեց ինձ և այն տեսնելու:

— Այդ հյուրանոցում կերակրվում են, — ասաց նա, — մեր ժողովրդից և օտարներից այնպիսի մարդիկ, որք զանազան տեղերից քաղաք գալով, ուրիշ տեղ չունին օթևանելու: Այստեղ մեք հաց եմք տալիս և աղքատներին: Հյուրանոցի ծախսը մեր առաքելությունը յուր վերա է առնում:

Այնուհետև մեք մտամք օրիորդաց գիշերօթիկ ուսումնարանը: Նա կառավարվում էր երկու ամերիկացի վարժուհիների վերատեսչության տակ, որոց մինը կոչվում էր միս Ռայիս, մյուսը՝ միսիս Ռեյ:

Ուսումնարանում դասատվության գլխավոր լեզուն ասորոց էր: Վարժուհիքը շատ լավ գիտում էին այդ լեզուն: Ես զարմացա, թե ինչու չէին սովորեցնում անգլերեն:

—Մեք մեր լեզուն չեմք սովորեցնում ոչ մի ուսումնարանում, որ հիմնել եմք Պարսկաստանում, — ասաց մստեր Լաբերին:

—Ինչո՞ւ, — հարց արի ես:

— Մեր նպատակն այն է, որ ամեն ազգ, որոց մեջ մեք լուսավորությունք, խղճի, ազատություն ու կրոնքի ճշմարտություն եմք տարածում, կրթվին յուրյանց մայրենի լեզվով, և պահպանեն յուրյանց ազգային ինքնուրույնությունը:

— Մի այդպիսի նպատակը ոչինչ նշանակություն չէր կարող ունենալ, երբ նոր քարոզված կրոնքի հերձվածը նորան բաժանում է յուրյանց հայրենական եկեղեցուց և հետևաբար ազգայնությունից:

— Մեք նոր կրոնք չեմք քարոզում, մեր քարոզած կրոնքը Ավետարանն է և քրիստոնեությունը: Ասածիս ապացույց է այն, որ մեք մինչև այսօր թույլ չեմք տվել մեր հետևորդներին կրիլ յուրյանց վերա մի նոր կրոնական անուն:

— Ապա ի՞նչ են պրոտեստանտ, մեթոդիստ կամ բողոքական անունները:

— Մեր Ժողովրդից շատ հիմարներ յուրյանց ընկլիսներ էին կոչում: Յուրյանց պրոտեստանտ կոչելն էլ հետևանք է մի այդպիսի հիմարության: Եթե ոչ, մեք երբեք չեմք մտցնում նոցա մեջ այդպիսի մտքեր: Մեք քարոզում ենք մնալ քրիստոնյա. և ազգությամբ պատկանել այն ցեղին, որից ծնված էին նոքա:

Ես չեմ կարող որոշակի ասել, թե որքան ճշմարիտ էին այդ խոսքերը, միայն դարձա դեպի վարժուհիքը, նոցանից մի քանի տեղեկություններ քաղել ուսումնարանի մասին:

Այդ ուսումնարանում մտանում էին օրիորդներ, որք գյուղերի ծխական վարժարաններում արդեն ուսել էին արհեստների և գիտությունների տարրական մասը: Այստեղ նոքա ավելի կատարելագործվում են ուսման մեջ, և նոցանից շատերը պատրաստվում են գյուղերում վարժապետուհիք լինելու: Պետք է ասած, որ այդ ուսումնարանում առանձին ուշադրություն է դարձվում կրոնքի և ձեռագործության վերա: Աշակերտուհիքը և տանտիկնության մեջ ընդունակ լինելու մտքով, նշանակված է նոցանից ամեն մինը որոշյալ օրերում վերակացու լինել խոհանոցին և սովորել կերակուրներ պատրաստելու ձևերը:

Ավարտելով այդ ուսումնարանում՝ օրիորդները մեծ մասամբ ամուսնանում են այն աշակերտների հետ, որ ավարտել էին Սիր-դաղիի գլխավոր ուսումնարանում, որք յուրյանց նվիրում են կամ քարոզչական և կամ ուսուցչական գործին:

Այդ տան մեջ էր և նոցա գլխավոր եկեղեցին, ուր նոքա քարոզներ էին կարդում և աղոթում էին:

Նույն ավուր կեսօրից հետո ես գնացի Սիր-դաղի (Գաղտնյաց սար): Այստեղ Սիր անունով մի գյուղ նստած է նույն սարի բարձրավանդակի վերա: Գյուղը ունի Ուրմի քաղաքից կես մղոն հեռավորություն: Առաջին անգամ ես տեսա մի հարթ հավասար ճանապարհ, որ ուղղել էին մեսիոնարները այդ գյուղից քաղաքը յուրյանց կառքերով անցուդարձ անելու համար:

Սիր գյուղը յուր դիրքով, գեղանկար շրջակայքով, պատկերացնում էր հիանալի տեսարան: Այստեղ, յուրյանց համար հատուկ շինել տված ամրոցում, բնակվում էին չորս միսիոնարների ընտանիք: Նույն ամրոցի մեջ և տեղավորված էր նոցա արական գլխավոր ուսումնարանը: Մստեր

Կակրին անունով միսիոնարը ընդունեց ինձ յուր մոտ, նա ցույց տվավ ինձ ուսումնարանը: Ես շատ հավանեցի նոցա ֆիզիկական և քիմիական կաբինետները: Այդ ուսումնարանը պատրաստում էր վարդապետներ և քարոզիչներ, որք մտել էին այնտեղ զանազան տեղերի տարրական վարժարաններից:

Ես գիշերեցի մստեր Կարկինի մոտ: Ընթրիքից հետո նորա երկու մատաղահաս դստերքը ամբողջ ժամերով ածում էին և երգում էին պիանոյի վերա:

Այդ գիշերը երկար կմնա իմ հիշողության մեջ անմոռանալի:

Մյուս ավուր առավոտը իմ հյուրընկալ միսիոնարը առավ ինձ յուր կառքի մեջ, մեք դարձամք քաղաք:

Այժմ կգրեմ քեզ մի քանի տեղեկությունք միսիոնարների գործի մասին, ինչ որ վերաբերում էր հայերին և պարսիկներին:

Վերոհիշյալ երկու ուսումնարանների մեջ, այսինքն՝ քաղաքի օրիորդաց և Սիր-դաղիի արական ուսումնարաններում, ես շատ փոքր թվով տեսա հայ աշակերտուհիք և աշակերտներ: Նոցա համար որպես վարժապետ հրավիրված էր Տաճկաստանի Մուշ քաղաքից մի երիտասարդ, որ ավարտել էր տեղային, Ամերիկայի միսիոնարների հայերի համար հիմնած ուսումնարանում: Այնտեղ նոքա ունին ընդարձակ առաքելություն և առանձին եկեղեցի հայերից:

Բայց պետք է ասած, որ Պարսկաստանի զանազան քաղաքներում և գյուղորայքում, միսիոնարները հայերի մեջ արդեն մտցրել են յուրյանց դպրոցները և քարոզիչները: Ես ավելորդ եմ համարում մանրամասնաբար նոցա դրությունը նկարագրել, միայն կասեմ, որ Պարսկաստանի հայերը ասորիների պես շուտով կենթարկվին ամերիկացի միսիոնարների ազդեցության տակ: Այդ մարդիկը բոլորովին նվիրված են յուրյանց գործին, աշխատում են, ուսուցանում են, քարոզում են, ձրիաբար զանազան տեսակ գրքեր և Պոլսո «Ավետաբեր» լրագիրն են տարածում հայերի մեջ, բայց հայ ժողովուրդը դեռ քնած է յուր անհոգ անտարբերության մեջ...:

Պարսիկների խստասրտությունը մինչև այսօր թույլ չէ տվել քրիստոնեությանը համարձակ մուտք ունենալ նոցա մեջ: Այդ պատճառով միսիոնարներն դեռևս նոցա մասին մի նշանավոր գործ կատարած չեն: Միայն Պարսկաստանում աննկատելի կերպով տարածվում են զանազան գրքեր: Ես ավելորդ եմ համարում դոցա մասին գրել քեզ:

Աստվածաշնչի թարգմանությունը կարելի է գտանել շատ պարսիկների և թուրքերի տներում: Բացի դորանից մի քանի գրքեր մեծ խռովություն բարձրացրին, որպես մի ժամանակ Տաճկաստանում, նույնպես այժմ Պարսկաստանում: Դոցա թվումն է Միզան-ուլ-հակկ կոչված գիրքը, որ նշանակում է կշիռ ճշմարտության: Միզան-ուլ-հակկի հորինողն է գերմանացի երևելի աստվածաբան դոկտոր Պըֆանտան: Այդ գրքի ոճը և պարունակությունը ցուցանում են հեղինակի խորին գիտությունը պարսից և արաբական լեզուների և նոցա գրականության մեջ:

Միզան-ուլ-հակկը կրիտիկաբար քննում է Ղորանը, ապացուցանում է նորա սուրբ գիրք չլինելը և հերքում է Մուհամմեդի ինքնակոչ մարգարեությունը: Նույն գրքի մեջ հեղինակը խոսում է պարսիկների այլ կրոնական գրքերի մասին (Հադիսների) և ցուցանում է նոցա վնասակար

ազդեցությունը մարդկային լուսավորության և առաջադիմության վերա: Նույն գրքի մեջ հեղինակը խոսում է քրիստոնեության ճշմարտության վերա, Մեսիայի վարդապետության վերա, և նոցա օգտավետ ազդեցությունը մարդի խիղճը և հոգին սրբելու, և մարդկային ազատ զարգացմանը նպաստելու:

Դոկտոր Պըֆանտան ունի և այլ հեղինակություններ պարսից լեզվով, որոց կարգումն են՝ 1. Թարիգուլ-հայյաթ (ճանապարհ կենաց), որ ցուցանում է մարդու հոգվո փրկության ճանապարհը Քրիստոսի միջոցով: Միևնույն ժամանակ խոսելով մահմեդականության վնասակար ուղղության մասին: 2. Սաճարուլ-հայյաթ (ծառն կենաց): 3. Մըֆթարուլ-իսրար (գաղտնիքներ բացատրող): Վերջին երկու գրքերը դարձյալ ունեն կրոնական նշանակություն, մահմեդականության և քրիստոնեության վերաբերությամբ:

Մի այլ գիրք Ղըսասուլ-ամբիա անունով, որ նշանակում է մարգարեից պատմություն, է հեղինակություն ամերիկացի միսիոնար մստեր Մերիքի, նույնպես պարունակում է յուր մեջ մարգարեից նախագուշակություններն Մեսիայի մասին և քրիստոնեության ճշմարտությունը:

Վերոհիշյալ գրքերն և զանազան տետրակները բազմաթիվ հատորներով տարածված են Պարսկաստանում, և նոցա համակրողների թիվը սակավ չէ, թեև նոքա դեռևս երկյուղից մնում են անհայտության մեջ:

Հետևյալ նամակով քեզ կգրեմ տեղվույս կաթոլիկ միսիոնարների մասին:

ՆԱՄԱԿ ԺԷ

Ես խոստացել էի քեզ գրել Ուրմիի կաթոլիկ միսիոնարների մասին, այդ պատճառով քանի օրից հետո ստիպվեցա քաղաքիս Ֆաթալի-խանգոլ կոչված թաղը գնալ: Այստեղ նոքա բնակվում են մի տան մեջ, ուր տեղավորված է և նոցա փոքրիկ վարժարանը և եկեղեցին: Նոցա բնակարանի հանդեպ, առանձին տան մեջ կենում են մի քանի հոգի իտալացի և ֆրանսիացի մայրապետներ, որք ունեն օրիորդաց փոքրիկ վարժարան: Ես տեսա վերոհիշյալ թե՛ արական և թե՛ իգական վարժարանները, նոցա մասին այդքանը միայն կարող եմ գրել քեզ, որ աշակերտները և աշակերտուհիքը սովորում են միայն հասարակ ընթերցանություն, քրիստոնեական վարդապետություն և աղոթքներ, մի քանի չափահաս աշակերտներ ուսանում էին լատիներեն և ֆրանսերեն: Դոքա պատրաստվում էին քահանայացաք լինելու: Այստեղի կաթոլիկ միսիոնարները լազարիստների կարգիցն են: Ես երկար խոսեցի նոցա մեծավորի, մոսիո Կլուզերի հետ: Տեր հայրը աշխատում էր հավատացնել ինձ պապի անսխալականությունը, Պետրոսի արքայության դռնապան լինելը և բացի ուղղափառ կաթոլիկներից ոչ ոքի այնտեղ մուտք չտալը...:

Լազարիստները Պարսկաստան մի քանի տասը տարիներով առաջ եկած են, քան թե բողոքական միսիոնարները: Բայց դոցա գործունեության արդյունքը համեմատաբար շատ չնչին է եղել, յուրյանց հետ մրցություն անող մեթոդիստներից: Լազարիստները միայն կարողացել են Ուրմիո նահանգում և Սալմաստա Խոսրովիա գյուղում կրոնափոխ առնել մինչև յոթ հարյուր գերդաստան ասորիներ, մինչդեռ բողոքականների ժողովուրդը (թեև դժվար է ճիշտ թվանշաններ դնել) հասնում է մի քանի հազար գերդաստանների:

Բայց հետաքրքրական են այն միջոցները, որոնք այստեղ գործ են դրել և դնում են կաթոլիկ միսիոնարները զանազան մարդիկ որսալու:

Եզվիտների դասը թողեց մարդկային պատմագրության մեջ մի կեղտոտ հիշատակ, թե որպիսի հնարներով նոքա Հնդկաստանում, Չինաստանում և Ավստրալիայի կղզիներում որսում էին կռապաշտներին դեպի կաթոլիկություն: Լազարիստները յուրյանց Պարսկաստանում գործ դրած հնարներով ետ չեն մնում նոցանից: Ամեն երկրներում, ուր տիրում է մտավոր խավարը, ուր ժողովուրդը ստրկության մեջ է ապրում, ուր բռնակալը երկաթե գավազանով է տիրում, պապականության արբանյակները, յուրյանց մանգաղին միշտ առատ հունձք են գտանում:

Լազարիստները ծանոթանում են գյուղատեր խաների և կալվածատերերի հետ, գրավում են նոցա բարեկամությունը զանազան եվրոպական իրեղենների ընծաներով: Հետո սկսում են գյուղացիների մեջ ինտրիգաներ և խռովությունք սերմանել, կռիվներ հարուցանել, իրանց միջնորդ դառնալ, հետո մինին պատժել տալ գյուղատիրոջ ձեռքով, մյուսին պաշտպանել, եթե նա խոստանում էր կրոնքը փոխել: Կառավարությունը հարկ է պահանջում որևիցե գյուղից, շինականները պատրաստի փող չունեն, որ տան, կաթոլիկ միսիոնարը վճարում է տուրքը և առնում է կառավարության բարաթը (ստացականը). ամբողջ գյուղը դառնում է նոցա պարտական և հետևապես ստրուկ:

Մինը պարտքերի մեջ է ընկնում, եթե նա կրոնքը կփոխե, լազարիստները, կամ նոցա գլխավոր եպիսկոպոսը, միշտ պատրաստ են նորան թուղթ տալ, որ նա գնա կաթոլիկ երկրներում ժողովրդարարություն անե:

Եվրոպայի զանազան անկյուններում դուք կգտնեք ուրմեցի և խոսրովեցի ասորին, մի թուղթ ձեռքում բռնած, դռնե դուռն ընկած, ողորմություն էր խնդրում: Այսպիսի թղթերի մեջ սովորաբար գրված են լինում այդպիսի խոսքեր. «Այդ մարդը երևելի, մեծատոհմիկ և բարեպաշտ ուղղափառ էր, սուրբ կրոնքի պատճառավ անհավատների հալածանքին ենթարկվելով, նա զրկվեցավ յուր հարստությունից, և ծանր պարտքերի տակ ընկավ, այժմ մահմեդական պարտատերերն նորա երեխայքը հափշտակում են փողի փոխարեն և այլն»:

Մայրապետներից ոմանք յուրյանց ձևացնում են որպես բժիշկներ, թուրքի կանայքը երեխայք են բերում նոցա մոտ բժշկելու, մոլեռանդ կույսը միշտ պատրաստ է մոր ձեռքից առնել երեխան, և նորա ճակատը օրհնած ջրով օծել, որ նա ապագայում քրիստոնյա դառնա...

Պետք է ասած, որ Պարսկաստանում — թողյալ Սպահանում դոմինիկյանների և մոսիո Բոռեի ձեռքով հայերից կրոնափոխ եղածները — լազարիստները դեռևս չեն կարողացել մի այլ տեղ յուրյանց մոլորությունները հայերի մեջ մտցնել:

Ինձ պատմեցին, թե կաթոլիկությունը Պարսկաստանի հայերի մեջ տարածելու համար, քանի տարի առաջ Վիեննայի Մխիթարյանների վանքի միաբանությունից այստեղ եկած էին երկու վարդապետներ: Բայց նոցա բոլոր ջանքն իզուր անցան և ոչինչ չկարողացան շինել: Ես շատ ծիծաղեցի, երբ լսեցի, որ այդ վարդապետներից մինը տալիս է մի խեղճ հայի մի քանի թուման փող, և նա փոխում է յուր դավանությունը, կաթոլիկ է դառնում: Քանի ամսից հետո հայը զղջանում է և կրկին յուր հայրենական եկեղեցվո գիրկն է դիմում: Վարդապետը պահանջում է նորանից տված փողերը: Հայը պատասխանում է. — Ես ստացա քեզանից այսքան արծաթ, և մի

քանի ամիսներ կաթոլիկներու եկեղեցին գնացի: Դուք էլ մի այնքան ժամանակ Հայոց եկեղեցին եկեք, հետո ես կդարձնեմ ստացած արծաթը: Վարդապետը հրաժարվում է և կորցնում է փողը:

Եվ այդպիսով, լազարիստները, ամերիկացի միսիոնարների նման, չեն աշխատում յուրյանց վարդապետությունը տարածել ուսումնարանների, քարոզության և տպագրության միջոցներով: Այլ նոքա գործ են դնում այնպիսի հնարներ, որ վերևում հիշեցիմք:

Պարսիկների մասին նոքա շատ քիչ են մտածում — մի գիրք միայն, որո իսկականը ես չկարողացա տեսանել, այլ նորա պարսկերեն կրիտիկան կարդացի. — Պատրի անունով մինից գրված է եղել երրորդության, Քրիստոսի և պապի մասին, և որպես կրիտիկայից երևում է, պետք է մի թույլ և անօգուտ բան եղած լինի:

Այսքանով առ այժմ բավականանալով լազարիստների մասին, մի քանի բան կավելացնեմ պարսիկների հարաբերությունների մասին հայերի և մահմեդականության չպատկանող այլ ազգերի հետ կրոնքի վերաբերությամբ: Պետք է ասած, որ Պարսկաստանի Բարձրագույն կառավարությունը գործ չէ գնում ոչինչ միջոցներ յուր հպատակ օտարազգիների մեջ մահմեդականություն տարածելու: Որովհետև յուր տերության մեջ զանազան ազգությունները և կրոնքները մի ամբողջ ձուլելու գաղափարը դեռ նորան անծանոթ է: Պատահում են դեպքեր, և այդ դեպքերը կրկնվում են հաճախ, որ պարսիկները և թուրքերը քրիստոնյաներից աղջիկներ են փախցնում, երեխայք խելքից հանելով թուրքացնում են, և այլ այդպիսի բռնաբարությունք են գործ դնում, բայց դոքա գործվում են մասնավոր անձինքներից, որոնց նպաստում է ոչ թե Բարձրագույն կառավարությունը, այլ մոլլաների մոլեռանդությունը:

Պարսկաստանի Բարձրագույն կառավարությունը դեռևս չունի ոչ մի հիմնարկություն կամ սահմանադրություն, որո նպատակը լիներ օտարազգիները դեպի մահմեդականություն որսալու կամ նոցա ազգային ինքնուրույնությունը ջնջելու: Նա մինչև անգամ յուրյան սխալված է համարում, որ թույլ տվեց օտարերկրյա միսիոնարներին յուր երկիրը մտնել, և աշխատում է, որ յուր հպատակ ազգերը պահպանեին յուրյանց կրոնքը և չմիանային կաթոլիկների կամ բողոքականների հետ:

Միրզա-Նաջաֆալի Սարփարաստի29 արտաքին գործող վեզիրին գրված նամակները, ավելի քաղաքական հայեցողական կետից, ցուցանում էին հայերի և ասորիների կրոնափոխ լինելու վնասակար հետևանքը Պարսկաստանի կառավարությանը. թե այդ ազգերը, յուրյանց հայրենական կրոնքը փոխելով, կաթոլիկներին և բողոքականներին խառնվելով առիթ էին տալիս կաթոլիկ և բողոքական տերությանց ներկայացուցիչներին միջամտություն առնել պարսից հպատակ քրիստոնյաներին վերաբերյալ խնդիրներում:

Վերոհիշյալ հանգամանքները աչքի առաջ ունելով, կառավարությունը Հայոց և Ասորոց հոգևոր առաջնորդներին շնորհել է զանազան իրավունքներ և արտոնություններ յուրյանց ժողովրդի գոյությունը յուրյանց ազգային հիման վերա անփոփոխ պահպանելու համար: Կառավարությունը ոչ միայն չէ արգելում հայերին ամեն տեղ համարձակ դպրոցներ բանալ և նորանց յուրյանց ցանկացածին պես ուղղություն տալ, այլ դեռևս ոչ մի օրենքով պարտավորեցրած չէ նորանց մինչև անգամ դպրոցներ բանալու մասին թույլտվություն խնդրել: Վերջինը թեև մասամբ վերաբերում է նորա անգիտակցությանը ուսումնարանի նշանակության մասին, այսուամենայնիվ, պետք է

ասած, որ դա առավելապես նպաստում է հայերի մեջ դպրոցների և կրթության առաջ գնալուն: Ասածիս ապացույցը այն է, որ Շահը Դավրեժու ազգային ուսումնարանը տնողական հիմք ունենալու համար շնորհեց նորան տարեկան 200 թուման ստանալ արքունի գանձարանից:

Բայց ցավալին այն է, որ Պարսկաստանի հայոց հոգևոր կառավարությունը յուր գործունեությունը չէ կարողանում հարմարեցնել կառավարության նպատակներին, կրոնափոխությունը յուր ժողովրդի մեջ չտարածվելու համար: Այլ ընդհակառակը, դեպի յուր անձնական օգուտներն է գործ դնում յուրյան շնորհված իրավունքները, որոց մասին մանրամասնաբար կկարդաք իմ Դավրեժու նամակներում:

Նամակս վերջացնում եմ այդ խոսքերով, որ Պարսկաստանում մինչև այսօր միսիոնարների որոգայթներեն փոքրիշատե զերծ մնացած հայերը ոչ թե պաշտպանված են եղել յուրյանց եկեղեցականների հսկողությունից, այլ յուրյանց մոլեռանդ նախապաշարմունքներեն, որ նոքա ընկլիսի և ֆրանկի կրոնքներին դեռևս նայում են որպես կռապաշտության վերա: Իսկ այդ նախապաշարմունքը ժամանակավոր կլինի և անցողական, եթե հայ ժողովուրդը այստեղ չպահպանվի ավելի հիմնավոր ուժերով, այսինքն՝ ուսումնարանի և կրթության միջոցով: Եվ եթե դարման չտրվի նորա աղքատությանը, որո պատճառավ նա շատ անգամ ստիպված է լինում փողին վաճառել յուր միակ սրբությունը — կրոնքը:

ՆԱՄԱԿ ԺԸ

Դու պահանջում ես քեզ գրել այստեղի հայերի սովորություններից: Ես կգրեմ քեզ, թե որպես կատարվում են այստեղ հարսանիքները: Հարսանիքները առհասարակ լինում են աշնան վերջանալուց հետո, մինչև մեծ պասի սկզբները, երբ գյուղացիք հանգստացած էին յուրյանց մշակություններից, երբ նոր գինիքը հասունացել էին:

Մի օրինավոր հարսանիք տևում է յոթն օր և յոթն գիշեր: Հարսանիքից մի քանի օր առաջ փեսայի հայրը, մի քանի բարեկամների հետ, գնում են հարսի հոր տունը քասը մաթ անեն, այսինքն՝ կտրական անեն, թե որքան բաշլըղ (գլխագին) պետք էր տված հարսի հորը նորա աղջկա մասին: Զուտ փողի հետ ստացվում է փեսայի հորից և նշանավոր քանակությամբ գինի, յուղ, բրինձ, հաց և այլ մսացու անասուններ:

Երեկոյան, որո առավոտը պիտի սկսվի հարսանիքը, փեսայի տան առջև մորթվում են մսացուն, դհոլ և զուռնա են ածում, աղջիկները պար են գալիս նորա չորս կողմով, և դրացիքը, այնտեղ հավաքվելով, խմում են մի-մի բաժակ գինի, բարեմաղթելով, որ աստված բարի սհաթի անե և այլն: Միսը գիշերով եփում են և ազատ տղերքը մաղում են հարսանիքի համար թխելու հացերի ալյուրը, որը նույնպես պատրաստվում է նույն գիշեր:

Հինայով ձեռքերը ներկելու սովորությունը հայերը առած պիտի լինեն պարսիկներից: Միսը մորթելու գիշերը մի ազապ աղջիկ, սկուտեղի մեջ, գլխի վրա դրած մի քանի քսակ հինա, մի խումբ այլ աղջիկների հետ դհոլ և զուռնա ածելով և պար գալով, գնում են հարսնացուի տունը: Այն գիշեր այնտեղ լինում է հարսանիք և պարահանդես, որո վերջն հարսնացուին առանձին պար են ածում, երկու լավաշ նորա գլխի վերա խաչաձև դնելով: Նորա պար գալը վերջանալեն հետո ազապ աղջիկները լավաշները բաժանում են յուրյանց մեջ, որ աստված նրանց էլ մասնակից անե այդ ուրախությանը և նրանց բախտն էլ բաց անե:

Այն գիշեր աղջիկները մնում են հարսնացուի մոտ, քնելու ժամանակ շաղախում են հինան, նախ և առաջ ներկում են հարսնացուի ձեռքերը, հետո յուրյանց ձեռքերը: Շատերը թաթախում են միմիայն յուրյանց ճկույթը, որպեսզի իրանք ևս մի օր մասնակից լինեն մի այդպիսի ուրախության:

Մյուս օրը, վաղ առավոտյան, փեսայի ազգականներից մի հասակավոր կին, ձեռքում բռնած մի մեծ փունջ ծաղիկ, մի տղամարդի հետ, որ կրում էր մի մեծ դդմասրվակ գինի, դհոլ զուռնա ածելով սկսում են պտտել տնից տուն: Նվիրակ կինը, ամեն մի առն մտնելով, մատուցանում է գերդաստանի ծերունիին յուր փնջից մի ծաղիկ, և նորա հետ տղամարդը տալիս է մի բաժակ գինի, նոքա բարեմաղթում են, որ աստված նոցա որդուն էլ փոխ անե մի այդպիսի ուրախությունը և հրավիրում են նորան գալ հարսանիք:

Այդ կերպով մի քանի օրեր շարունակ ճաշի սեղանին հրավիրվում են տղամարդիկ, իսկ երեկոյան ընթրիքին՝ կանայքը: Իսկ պարհանդեսները և նվագածությունները կատարվում են գիշերներով:

Հարսանիքի տան դահլիճի մի անկյունում, հատակից բավականին բարձր կապած է թախտը, որո վերա նստած է լինում թագավորը (փեսան), խաչեղբոր ձեռքից բռնած: Նորա չորեքկողմը պատել են ազապները, նորա մինիստրները: Փեսան յուր վզին ձգած ունի կուրծքի վերայից խաչաձև փաթաթած կանաչ-կարմիր գույնով մի կերպաս, իսկ աջումը բռնած ունի բաց թուր: Նա յուր թախտից իշխում է հարսանիքի հանդեսի վերա:

Նույն դահլիճի կենտրոնումը կանգնած են սազանդարները (նվագածուքը): Նոքա ածում են: Դահլիճը լիքն է բազմությունով: Նոցա բոլորն էլ բռնել են գուանդ. դա մի տեսակ պար է, որ ամբողջ բազմությունը, հարյուրավոր անձերից, բռնելով միմյանց ձեռքից, կազմում են մի շղթա, որո օղակների մեջ տեղ-տեղ երևում են աղջիկներ բաց երեսներով, հարսներ և կանայք ծածկված երեսներով, և լուռումունջ, գայթե-գայթ, կողք-կողքի կաքավում են, զանազան ոլոր-մոլոր շարամանությունք կազմելով: Պարի ձևերը ունեն յուրյանց առանձին նվագածության եղանակները:

Պետք է հիշել, որ ոչ մի կին և ոչ մի աղջիկ չէ բռնում այնպիսի մի տղամարդի ձեռքից, որ նորա ազգակիցը չէր:

Գուանդների վերջը հոգնած բազմությունը նստոտում են հարսանիքի տան պատերի տակով: Տիրում է ընդհանուր լռություն: Տան դահլիճի կենտրոնում բացվում է ընդարձակ տարածություն:

Այդ որպես թե թատրոնական բեմի վերա, հայտնվում են սազանդարները, հագնված ծիծաղաշարժ կերպով, որք սկսում են ներկայացնել զանազան կատակերգական խաղեր: Այդպիսի խաղերը թեև տակավին յուրյանց տղայության մեջն են ապրում, բայց հիշեցնում են մեզ, թե բեմական արհեստը վաղուց է ծանոթ եղած հայերին:

Չորրորդ օրը փեսայի տանից ուղարկվում է հարսի տունը նանգուշտ, որ կնշանակե հաց և միս, որոց հետ և տանում են եղ, բրինչ, գինի և այլ ուտելիքներ: Այնուհետև բազմությունը հավաքվում է հարսանիքի տանը, և մի ճոխ հացկերույթեն հետո քահանան օրհնում է նորափեսայի հագուստը,

զգեստավորում են նորան, և ապա բոլորը, բացի փեսայից, դհոլ-զուռնա ածելով, գնում են հարսնացուի տունը:

Այնտեղ մի թեթև կերուխումից հետո մեջ են բերում հարսնացուի հալավը, դրած մի սկուտեղի վերա, որո մեջ լեցրած էր զանազան մրգեղեններ և քաղցրավենիք: Քահանան օրհնում է հագուստը, հետո մրգեղենը և քաղցրավենիքը բաժանում են բազմությանը, որք ուտելով խնդրում են ամուսնացուների համար բախտ և քաղցրություն և շատերը տանում են յուրյանց տանը, տալիս են հասած աղջկան կամ տղային, որ նոքա ևս մի օր արժանի լինեն հարսանիքի ուրախությանը:

Օրհնած հալավը հագցնում է հարսնացուին մի կին, որ եղել էս նորա վարժուհին: Հետաքրքրության արժանի է այդ խորհրդական զգեստավորությունը, որ այլ խոսքով կարելի է ասել «աղջքիս ձեռնադրությունը կնամարդ լինելու», կին բառի բոլոր նշանակությամբ ասիական կյանքում: Վարժուհին կապում է նորա ականջները երկկողմանի խլության ակնջուկով, ասելով այդպիսի խոսքեր. — Քո ականջները թող խուլ լինեն ամեն չար բան լսելեն: Ապա կապում է նորա բերանը լռության յաշմաղով, ասելով. — Քո լեզուն թո՛ղ լուռ լինի չար բաներ խոսելուց: Հետո հագցնում է նորա գլխին ողջախոհության կալկուռը, դնում է նորա վերա փառաց գոտին30, ասելով. — Քո գլուխը թող միշտ խոնարհ լինի քո մեծավորների առջև: Վերջապես ձգում է նորա երեսին ամոթխածության քողը ասելով. — Քո դեմքը թո՛ղ չտեսնեն չար աչքեր: Եվ այնուհետև նորա երեսը մինչև մահ մնում է ծածկված ամեն աչքերից: Բոլոր հալավները հագցնելեն հետո, որոնց ամեն մինը առանձին ունեն մի առանձին խորհրդավոր գաղտնիք նորահարսի ապագայի համար, նորա մեջքը պնդում են փեսայի հոր, հարսի սկեսարի, որպես նորա հանդերձյալ գերդաստանի նահապետի գոտիով: Թողություն խնդրելով յուր բոլոր ազգականներից, նորահարսը ընկնում է յուր հոր և մոր ոտքը, համբուրում է աղաչելով, որ նոքա յուրյանց կաթը, աղուհացը հալալ անեին նորան, երեք անգամ պտիտ է գալիս թոնրի, այդ նահապետական օջախի չորս կողմով, և արտասուքը աչքերում բաժանվում է ծնողական տնից...

Սույն միջոցին երաժիշտներր ածում են դառն եղանակ, որ ավելի նման է թաղման երաժշտական եղանակներին: Կարծես թե այդ արվեստական ձայները անլսելի կերպով գուշակում լինեին նորահարսի տխուր ապագան...

Իսկ փեսայի բարեկամները ուրախ են, նոքա, պար գալով հարսնացուի առաջև, հանդարտ քայլերով տանում են նորան: Տանիքներից վեր են ածում հարսի գլխին ծաղիկներ, մրգեղեններ և ով որ մոտիկ ազգական է, մանր արծաթի դահեկաններ:

Ճանապարհի կեսին փեսայի տնից ընդառաջ է գալիս մի կին գլխի վերա դրած մի ամանի մեջ կրակ, խունկով ծխած. այդ փեսայի սիրո անուշահոտության արտահայտությունն է: Այնուհետև երևան է լինում փեսան, շրջապատված յուր ազատներով: Նա խաչաձև ձգել է յուր վզից մետաքսյա կանաչ-կարմիր գույնով մի կերպաս, ցցել է յուր գդակի վերա գեղեցիկ փետուրներ, և աջումը բռնած ունի բաց սուրը: Նորա ձախ կողմից ձեռքեն բռնած, գալիս է խաչեղբայրը և տանում է ուրցը, դա թագավորի խաչաձև դրոշակն է, զարդարած խնձորներով, չամիչներով: Ամեն մի քայլում փեսային մատուցանում են մի բաժակ գինի, բարձր ձայնով գոռալով՝ անո՛ւշ, անո՛ւշ, անո՛ւշ...

Փեսան առաջ ընկած, և նորա հետևից հարսը գալով, հասնում են մինչև հարսանիքի տան դռանը: Այստեղ կանգնում են նոքա: Երաժիշտների ձայնը լռում է: Բազմության ամեն մինը ընծայում են արծաթ փեսային: Մի մարդ ստանում է արծաթը բարձր ձայնով կանչելով, թե ո՛վ որքան տվեց:

Այդ սովորությունը կատարվելեն հետո, փեսան ներս է մտնում: Դռան շեմքի վերա դրած են մի քանի ամաններ, նա ոտքը կոխելով ջարդում է, և անցանում է... դորանով նա կոտրում է յուր կենակցի կամակորությունը, որ այնուհետև դառնում էր նորան հպատակ... և ստրուկ:

Նույն ավուր կես-գիշերին կատարվում է պսակը համարյա գաղտնի կերպով, որ կախարդները և վհուկները կապումներ չանեին: Գոցա առաջն առնելու համար, պսակի միջոցին բաց են թողում հարսի ու փեսայի կոճակները, մի-մի կողպած կողպեք դնում են նոցա գրպաններում և կատարում են զանազան թիլիսմանական հնարներ...:

Նույն գիշերը հարսը մտնում է յուր փեսայի առագաստը: Իսկ առավոտյան մոտ ազգականները պիտի տեսնեն նորա ողջախոհության նշանը: Եվ մի փոքրիկ նախաճաշիկից հետո վերջանում է հարսանիքը:

Այդ նկարագրությունը հարսանիքի ես տեսել եմ Ատրպատականի գյուղերում, ուր այնպես սրբությամբ պահպանում են մեր նախնյաց սովորությունները և ավանդությունները: Բայց քաղաքներում սովորությանց այդպիսի ձևերը օրըստօրե փոխվելու վերա են, և ամբոխը կորցնում է յուր ժողովրդական առանձնահատկությունները:

ՆԱՄԱԿ ԺԹ

Վերջին նամակն է, որ գրում եմ քեզ Ուրմիո նահանգից: Ես երկար թափառեցի այստեղ: Պատրաստվում եմ առավոտյան դուրս ելանել:

Պարսկաստանում ժողովրդի վիճակագրական թվանշաններ չլինելու համար, ես դժվարանում եմ այստեղի բնակչաց թվի մասին ճիշտ տեղեկություններ տալ: Միայն որքան ստույգ է, չգիտեմ, ինձ ասացին, թե ամբողջ Ուրմիո գավառը բաղկանում է 700 գյուղերից: Դոցա ամեն մինի բնակիչները միջին թվով 60 տուն հաշվելով, և ամեն մի տան գերդաստանի անդամների թիվը 5 հոգի համարելով, կնշանակե, թե այդ գավառը ունի մինչև 175.000 հոգի բնակիչ: Դոցա մեծ մասը թուրքեր են օվշար կոչված ցեղից, նոցանից փոքր թվով են ասորիները, հետո հայերը, այնուհետև հրեայք, ղարաչիներ, քուրդեր, որք տեղային ազգաբնակությանց ավելի փոքր մասն են կազմում: Իսկ Ուրմի քաղաքը յուր արվարձաններով ունի մինչև 30 հազար հոգի բնակիչ:

Ուրմիո նահանգը խիստ պտղատու հող ունի, նա ոռոգվում է Նազլու-չայ, Շահար-չայ, Բարանտուզ-չայ, և այլ մանր գետերով, որք բաժանված են գյուղերի մեջ՝ Երկրագործությունը պահպանել է յուր բոլոր նահապետական ձևերը: Գլխավոր բերքերն են՝ բամբակ, ծխախոտ, ցորյան, բրինձ, քիշմիշ, կտավատ, գերչակ, որո յուղն գործ է դրվում որպես լուսավորության նյութ:

Այգեգործությունը ավելի ծաղկյալ դրության մեջ է այստեղ: Արևելյան բոլոր ազնիվ պտուղները, ծիրան, խնձոր, շլոր, տանձ, սերգևիլ, կեռաս, դեղձ, յուրյանց զանազան տեսակներով, հասունանում են հաջողությամբ: Ուրմիո խաղողը այնքան բազմատեսակ և ազնիվ է, որո չորացած քիշմիշը և սաբզան ոչ միայն բավականանում է բնիկներին, այլև առատ վաճառքի նյութ

է դառնում առավելապես դեպի Ռուսաստան: Գարնան սկզբից մինչև աշնան վերջերը, բնակիչների բազմությունը երկու սեռից ևս, աշխատում են այգիներում, աշխատում են, որքան պիտի աշխատե մի կյանքի և ապրուստի հոգսերովը ծանրացած մարդ: Բայց նոցա այդ աշխատության պտուղը տանում է վաշխառու դրամատերը, որից գյուղացին փող էր փոխ առել խանին, բեկին, և կալվածատերի տուրքը վճարելու...

Բամբակը կացուցանում է գլխավոր արդյունաբերությունը տեղային ժողովրդի: Գյուղացու ձմեռային օրերի պարապմունքը նվիրված է այդ նյութի արվեստագործությանը: Ուրախալի է նայել գյուղացուն այդպիսի րոպեներում, երբ ամբողջ գերդաստանը, հավաքված թոնրի, այդ նահապետական օջախի չորս կողմով, երեխաներից սկսած մինչև տան պատկառելի ալևորը գործում են, աշխատում են: Փոքրիկ երեխայքը, մանկահասակ աղջիկները ձեռքով բամբակի կոզակներն են մաքրում կեղևներից, հարսները չիրչիր31 են քաշում և բամբակի կորիզներն են բաժանում. տան ծերունին զզում է բամբակը, պառավները թել են մանում, իսկ երիտասարդները կտավ են գործում: Ամբողջ գերդաստանը շարժողության մեջ է: Իսկ նոցա անքուն գիշերների արվեստագործության արդյունաբերությունը դառնում է հարստահարող վաճառականի շահասիրությանը առարկա...

Պարսկաստանում գյուղացին ոչ մի տեղ այնքան նվիրված չէ յուրյան գործին և աշխատությանը, որպես այստեղ, և ոչ մի տեղ գյուղացու դրությունը այնքան վատթար չէր, որպես այստեղ: Նոքա ապրում են դառն աղքատության մեջ: Որովհետև գյուղացու մշակած հողը պատկանում է զանազան կալվածատերերին, և նոցա արդյունաբերության հյութը ծծում են դոքա: Գյուղի աղան (տերը) այստեղ է ամենայն ինչ: Գյուղացին համարյա թե նորա ստրուկն է, նա անգթությամբ գործ է դնում նորան յուր հողերի մշակության համար: Մահմեդականության չպատկանող ազգերի դրությունը ցավալի դեր է խաղում այդպիսի հանգամանքներում: Դոցա թվում կարելի է հաշվել հայերին, ասորիներին և հրեաներին: Վերջինները բնակվում են միայն քաղաքի մեջ, բազարին մոտ մի առանձին թաղում: Այստեղ է քաղաքի բոլոր կեղտոտության կացարանն:

Այստեղ են մսավաճառների սպանդանոցները, այստեղ են ատաղձագործների, դաբաղների գործարանները: Այնտեղ ածվում են քաղաքի անմաքրությունքը: Այդ կեղտոտ և հոտած թաղից առաջին անգամ հանդիսանում է խոլեռան, անմաքրության սերտ բարեկամը, երբ ցանկանում էր նա քաղաքի մյուս բնակիչներին այցելություն գործել:

Այսուամենայնիվ, երբ մարդասեր ճանապարհորդը խորին ցավակցությամբ նայում է այդ հաղթահարված ազգի վիճակին, նոցա բոլորովին ոտնահար եղած դրությունը, հուդայի դստերքը ծագում էն նորա սրտին մի նշույլ ուրախության, յուրյանց դեմքերի բիբլիական գեղեցկությամբ:

Չնայելով զանազան հալածանքներին, հրեաները կարողացել են պահպանել յուրյանց ազգային առանձնությունքը, յուրյանց մայրենի լեզուն, կրոնքը և ժողովրդական ծեսերը ու սովորությունքը:

Հրեաները պարապվում են այստեղ ոսկերչությամբ և մանր առուտուրներով: Մինչդեռ քաղաքի թուրք բնակիչները ազատ են զանազան հարկատվությունից և քաղաքացի են համարվում, հրեաները և քրիստոնյայք քաղաքի մեջ բացառություն են կազմում, լինելով հպատակ մի քանի խաների, որք ստանում են նոցանից առանձին տուրք: Այդ ծագել է նորանից, որ հիշյալ ազգերը թուրքերի հալածանքներեն յուրյանց գոյությունը պահպանելու համար սկզբում տվել են

քաղաքումը նշանակություն ունեցող խաներին արծաթ յուրյանց պահպանելու համար, այդ դարձել է սովորություն և վերջապես պարտավորություն: Որպես Սալմաստի Քյոհնա-շըհարում հրեաները վճարում են սեիդներին առանձին տուրք, որ նորանց պահպանեն թուրքերի կողոպուտներեն:

Քաղաքի հայ և ասորի բնակիչներր պարապվում են հյուսնությունով և շատերը՝ գինեվաճառությամբ: Իսկ մեծ մասը քրիստոնյաների, որք բնակվում են գյուղորայքում, ենթարկված են այն պայմաններին, որ վերևում հիշեցինք շինականների և կալվածատերերի հարաբերությանց մասին:

Շատ անգամ այդ հաղթահարված ազգերի ճիչը և բողոքը հասել են մինչև Պարսկաստանի Բարձ. դուռը: Ավելի օտարազգի միսիոնարների, և եվրոպական պետությունների ներկայացուցիչների միջամտությամբ, Նորին մեծությունը՝ Շահը, նշանակեց քրիստոնյաների և հրեաների վերա հսկելու և նորանց զանազան հալածանքներեն պահպանելու համար առանձին պաշտոնակալներ, որք կոչվում էին սարփարաստ, որ նշանակում է գլխապահ: Դոքա կան Պարսկաստանում, համարյա ամեն տեղ, ուր որ կան հիշյալ ազգերը: Իսկ սարփարաստները ինքյանք թուրքեր և պարսիկներ լինելով, շուտով յուրյանց պաշտպանելու ազգերի հալածիչների հետ քույր-եղբայրներ են դառնում և իրանք էլ մի կողմից սկսում են կեղեքել խեղճ ժողովուրդը32:

Բացի նորանից, որ գյուղացին պիտի լցուցանե կալվածատիրոջ պահանջմունքները նորա հողերի վարձատրությունների մասին, որը մշակում է նա, նորան ավելի զգալի են հարկերը, որ նա պիտի վճարե կառավարությանը (մալիաթ դիվան): Թեև այդ հարկերը համեմատելով եվրոպական շինականների տուրքերին, յուրյանց քանակությամբ այնքան ծանր չեն, բայց մշակների արդյունաբերության անշահավետության պատճառավ, նոքա դառնում են անտանելի:

Թողյալ այն, որ մշակը յուր արդյունաբերության մեծ մասը հողատիրոջը պիտի տա, թողյալ այն, որ նորան մնացած մասը, նորա արյան և քրտինքի պտուղը, երկրի չափազանց էժանության պատճառով ավելի գին չէ բերում, թողյալ այն, որ յուր աղքատիկ վաճառքեն ստացած փոքրիկ գումարը խլում է նորա ձեռքեն հարստահարող վաշխառուն, — գյուղացին յուրյան դարձյալ բախտավոր է համարում, եթե կտային նորան մի կտորիկ հող մշակելու: Նոցա մեծ մասը դորանից ևս զուրկ են մնում, և ստիպված են օրական վարձով աշխատելու մեծ կալվածատերերի մշակությանց դաշտերում, և նոցա օրական վարձի գինը չէ ավելանում 15 կոպեկից:

Իմ Պարսկաստանում մինչև այսօր ճանապարհորդության միջոցում, վերոհիշյալ հանգամանքները ամեն տեղ միակերպ եմ տեսել: Մի այդպիսի դրության հետևանքն այն է լինում, որ ժողովուրդը, չկարողանալով յուր հայրենի երկրում յուր գոյությունը պահպանել, սկսում է գաղթել դեպի պանդխտություն:

Մի այդպիսի վիճակին առավելապես ենթարկված են քրիստոնյայք, այսինքն հայերը և ասորիները:

Տաճկաստանի ծովեզրյա քաղաքներում, Պոլսում, Տրապիզոնում, Աղեքսանդրիայում, և այլն նավահանգստները, պանդոկները, հրապարակները լիքն են պարսկաստանցի հայ մշակներով, որոց դրությունը ավելի տարբերություն չունի բեռնակիր անասունների վիճակից: Նոքա նույնպես

փալանը (համետը) յուրյանց ուսի վերա առած ծանր բեռներ են կրում և անասունների գործ են կատարում:

Եվրոպիո ամեն մին անկյուններում, մանավանդ Ռուսաստանում, դու կտեսնես պարսկաստանցի հային և ասորուն, խղճահար դեմքով մի պարոնի լուսամուտի դեմ կանգնած, մայա գրեկ (ես հույն եմ) ասելով ողորմություն է խնդրում:

Ամեն տարի Պարսկաստանի զանազան գավառներից հազարավոր այդպիսի մշակներ, յուրյանց ընտանիքը ձգելով անտերունչ և հետին աղքատության մեջ, պանդխտության գավազանը առած, խումբ-խումբ դիմում են դեպի օտար երկրներ բախտ որոնելու: Նոցանից շատ սակավներին միայն հաջողվում է լիքը քսակով և ողջությամբ յուրյանց հայրենիքը դառնալ, իսկ մեծ մասը մաշվում են և կորչում են օտարության մեջ: Պարսկաստանում ես տեսել եմ ամբողջ գերեզմանատներ այնպիսի անբախտների, ուր ծնողքը, սիրելի ամուսինը, մեռելոց օրերում, նստած գերեզմանի մոտ, լաց էին լինում, ոչ յուրյանց ննջեցյալի ոսկերքը, որք չէին դրած այն քարե հիշատակարանի ներքո, այլ նորա գդակը, նորա ձեռքի գավազանը, կամ նորա հողաթափները, որ ննջեցելո ընկերը բերեց հեռու աշխարհից իբրև միակ հիշատակ նորա կյանքի, և նորա ազգականները խնամքով թաղեցին հողի տակ...:

Մի այդպիսի թափառական կյանքը մեր ազգայինների, ոչ միայն զրկում է ամբողջ ընտանիքներ օրական հացից, երբ նոցա ապրուստի հոգաբարձուն կորչում էր օտարության մեջ, այլ առավելապես արգելում է ազգի աճելության և բազմանալու պայմաններին: Տղամարդիկը կյանքի և ապրուստի ծանր պիտույքների պատճառով չեն կարողանում ամուսնանալ: Նոքա օտարության մեջ են անցուցանում յուրյանց ժամանակը: Իսկ թեև նոցանից շատերին վիճակվում է ամուսնության բախտը ունենալ, նոքա նույնպես ստիպված են յուրյանց սիրելի ամուսինը դեռ հարսանյաց քողը երեսին ձգել տանում և հեռանալ դեպի պանդխտություն: Ամբողջ քանի մի տասնյակ տարիներ խղճալի հարսը սպասում է և սպասում է... նորա ամուսնից ոչինչ լուր չկա... նոցա ամուսնության մի հատիկ պտուղը, որ թողեց մոր արգանդում հայրը, աշխարհ է գալիս, զարգանում է, հասակ է առնում և գնում է որոնել յուր հայրը: Նա գտանում է նորան կամ մեռած և կամ խեղանդամ նըստած մի եկեղեցվո դռան մոտ ողորմություն էր խնդրում...

Ինձ ասացին, թե այդպիսի անբախտ ամուսինների հասարակությունը, որոնց տղամարդիկը օտարության մեջ էին ապրում, քանիցս անգամ խնդիրներ մատուցին Պարսկաստանի հոգևոր առաջնորդներին, որ վեհափառ Կաթողիկոսից բերել տայր նոցա համար մի առանձին արտոնության կոնդակ, երբ նոքա յուրյանց ամուսիններից մինչև յոթն տարի ծախս անելու արծաթ և նամակ չստանային, իրավունք ունենային ուրիշ տղամարդու գնալու: Բայց նորին սրբազնությունները հերքեցին դոցա խնդիրքը, նկատելով, որ այդ համաձայն չէր հայաստանյայց սուրբ եկեղեցվո կանոնադրություններին...

Ահա՛ եղբայր, այդպիսի թշվառ դրությանը ենթարկված են մեր ազգայիններս Պարսկաստանում:

Գաղթականությունը և պանդխտությունը օրըստօրե մաշում է և ոչնչացնում է նորանց: Ցավելով սրտի կրկնում եմ, որ թափառական կյանքը ազգերի անհետացնում է նոցա գոյությունը...

ՆԱՄԱԿ Ի

Հոկտեմբեր ամիսը հասնում էր յուր վախճանին: Օրերը անցնում էին խոնավ և անձրևաբեր: Ցուրտը գնալով դառնում էր զգալի, երբ ես թողեցի Ուրմի քաղաքը:

Չնայելով եղանակի անախորժ ազդեցությանը, ես մի բանով միայն գոհ էի ցրտից, որ ազատվեցա մոծակների թունավոր խայթոցեն, որք, չալթիկների (բրնձի դաշտերի) հոտած ջրերի որդունքներեն գոյանալով, անհանգիստ էին անում իմ քունը: Ես սովորեցա բնիկներից նոցա խայթոցեն ազատվելու համար քնել ամեն կողմից փակված փոքրիկ վրանիկի մեջ, որին տեղացիք կոչում են միլչաքդան: Բացի նորանից, որ բրնձի դաշտերը գոյացնում են այդ անհրավեր հյուրերին, նոքա, ճահիճների նման բռնելով ամբողջ նահանգի մեծ մասը, յուրյանը հոտած ջրերի արտաշնչությամբ, ամառային եղանակներում տաքցոցը և տենդը անում են մի անհրաժեշտ երևույթ բնակիչների մեջ:

Ես դուրս եկա քաղաքից երեկոյան պահուն, և ստիպված էի մնալ մի թուրքաբնակ գյուղում: Ճանապարհին սաստիկ թրջվեցա անձրևից, և խնդրեցի ինձ տանող չարվադարին գտանել մի տաք իջևան գիշերելու: Նա մոտեցավ մի տան և սկսավ զարկել դուռը:

Դուրս եկավ տանուտերը:

—Ի՞նչ ազգից է պարոնը, — հարցրավ նա իմ մասին:

—Հայ է, — պատասխանեց չարվադարը:

Լսելով այդ անունը, մի անախորժ զգացմունք արտահայտվեցավ տանուտիրոջ խոժոռ դեմքի վերա, որ պարզ երևաց յուր ձեռքում բռնած ճրագի լուսով:

Եվ նա ցույց տվեց մեզ յուր չորքոտանիների փարախը: Ես մտա այնտեղ, այդ կեղտոտ բնակարանի աղտոտությունը անասուններին անգամ անտանելի էր:

—Դու քո բոլոր հյուրերին այստե՞ղ ընդունում ես, — հարցրի ես:

—Ոչ, ես ունիմ և այլ սենյակներ ճանապարհորդների համար, — պատասխանեց թուրքը յուր խռպոտ ձայնով:

—Այստեղ ինձ անհարմար է գիշերել, տուր մեզ քո սենյակներից մինը, որ ավելի մաքուր է, ինձ հարկավոր է կրակ վառել և չորացնել հագուստս, դու տեսնում ես, բոլորովին թրջված եմ:

Տանուտերը դժվարանում էր պատասխանել:

—Ինչո՞ւ չեք խոսում, — կրկնեցի ես:

—Գավուրներին մենք չենք կարող թողուլ թրջված մեր սենյակները մտանել, — ասաց նա սառն կերպով:

Մեր Մեսրոպը լսելով գավուր (անհավատ) բառը, ձեռքը տարավ սրին, բայց ես արգելեցի նորան ուշադրություն չդարձնել մահմեդականի խոսքին, որ կրոնական մոլեռանդությունից կուրացած,

չէր հոժարվում քրիստոնյայի ոտքերով պղծել յուր սենյակի օթոցները: Եվ հարցրի, թե այդ գյուղում կայի՞ն քրիստոնյա կամ օտարազգի բնակիչներ: Նա պատասխանեց, թե բացի թուրքերից միայն ղարաչիներ բնակվում են այդ գյուղում:

Ես հրամայեցի իմ չարվադարին ինձ տանել մի ղարաչու տուն: Դոքա ցիգանների մի ցեղ են, որք թափառում են Ասիայում և ամեն ազգի հետ անխտիր հաղորդակցություն ունին և խոսում են աղճատված պարսկերենի խառնուրդից մի առանձին լեզվով:

Ես ներս մտա մի աղքատիկ խրճիթ, ուր հավաքված էր ցիգան գերդաստանի բոլոր անդամները, — մի ալևոր դարևոր հասակով. նորա պառավ կինը. նոցա բարձրահասակ, գորշ գույնով և ջլուտ կազմվածքով որդիքը. նոցա նրբահասակ, թուխ և վառվռուն աչքերով կանայքը, նոցա վայրենի գեղեցկությամբ սիրուն դստերքը և մի քանի կիսամերկ երեխայք: Դոցա թվում մի անկյունում շղթայած պպզել էին երկու կապիկներ և չարանենգ աչքերով նայում էին տանեցոց վերա, և թոնրի շրթան մոտ յուր առջևի թաթերի վրա գլուխը դրած պառկել էր մի ահագին գամփռ: Մի առանձին հաճություն պատճառեց այդ ուրախ և խաղաղ գերդաստանին իմ երևույթը, և նոքա յուրյանց սովորական քաղցրախոսությամբ սկսան բարովել իմ գալուստը: Եվ բոլորը մի կողմ քաշվեցան տեղ տալով ինձ նստել նոր վառած թոնրի մոտ:

Գերդաստանի գլխավորը դարձավ դեպի ինձ հարցնելով, թե ինչ կամեի ես պատրաստել տալ ընթրիքի համար: Նորան ասացի ոչինչ հարկավոր չէր, որովհետև ես ամեն ինչ ունեի ինձ հետ: Եվ արդարև, Պարսկաստանում ճանապարհորդելու համար կամ պետք է Վամբերիի նման դերվիշ լինել և ուտել ուրիշի սեղանից և կամ ման ածել յուր հետ ամբողջ խոհանոց և ամեն տեսակ պաշարեղեն, որ սոված չմնաս:

Թոնրի տաքությունը ինձ մի առանձին հաճություն պատճառեց, և ես ախորժանոք նայում էի թափառական ցեղի գիշերային պարապմունքին: Տղամարդիքը նստած մաղեր էին գործում ձիու պոչի մազերից, կանայքը սև սաթի ուլունքներ և այլ զարդեր էին շինում, մի պատանի սովորեցնում էր անվարժ կապիկին պար գալ, մյուսները ածում էին քամանի (ջութակի) և տափի վերա և մի քանիսը հմայում էին: Վերջիններից մոտեցավ դեպի ինձ մի սևաչյա աղջիկ:

— Կամենո՞ւմ ես քեզ համար գուշակեմ, — ասաց նա ինձ ժպտալով:

Մանկահասակ աղջկա հրապուրիչ դեմքը շարժեց իմ հարցասիրությունը, և ես հարցրի.

—Մի՞թե դու մարգարեուհի ես:

—Այո՛, ես ոգիների հետ հաղորդակցություն ունեմ, նոքա տվել են ինձ ֆալ բաց անելու (գուշակելու) շնորհքը, ես կարող եմ գիտենալ մարդերի բախտը, նոցա գլխի գալիքը, և կարդում եմ մարդերի ճակատագիրը:

—Ուրեմն գուշակիր ինձ համար:

Մանուկ աղջիկը նստեց ինձ մոտ և առեց իմ աջ ձեռքը յուր քնքուշ ափի մեջ: Մի էլեկտրական հոսանք վազեց բոլոր երակներում: Նա սկսավ հետազոտել իմ ձեռքի գծերը, նորա աչքերը

վառվեցան, նա գունաթափվեցավ, քանի րոպեից հետո աչքերը խփեց և կարծես թե ուշագնացության մեջ ընկավ: Նա սկսավ ասել այդպիսի կցկտուր խոսքեր.

— Դու հեռու աշխարհներից գալիս ես... անցար շատ ծովեր և լեռներ... քեզ շատ վտանգներ հանդիպեցան... բայց աստված ազատեց քեզ... Հեռու, ծովերի այն կողմը, ես տեսնում եմ մի աղջիկ... նա գեղեցիկ է, որպես անտառի եղջերուն... նորա աչքերը թաց են եղած արտասուքով... նա քեզ համար լաց է լինում. դու խոստացար նորան... դու խաբեցիր նորան... բայց նա չէ դադարել քեզ սիրելուց...:

Վերջին խոսքերը վառեցին իմ սրտի մեջ արդեն մարած կայծերը մի վաղեմի զգացմունքի...

Մարգարեուհին շարունակեց.

— Դեռևս երկար պիտի թափառես դու... անբախտությունը միշտ ընկեր կլինի քեզ... դու փշոտ ճանապարհներով պիտի ընթանաս... բայց շուշանների հոտ պիտի առնես...:

— Բավական է, — ասացի ես:

Բայց գուշակող աղջիկը ոչինչ չհասկացավ: Նորա պառավ մայրը տեսնելով, որ վերջին խոսքերը ծանր տպավորություն ունեցան ինձ վերա, կարդաց աղջկա գլխին արաբական լեզվով մի քանի խոսքեր, և նա իսկույն սթափվեցավ: Ես բաշխեցի նորան մի քանի արծաթ, նա առեց և շնորհակալությամբ հեռացավ:

Չնայելով, թե որքան ծիծաղելի էր ինձ սնահավատությունը, այնուամենայնիվ ես ընկղմված էի խորին հոգեբանական վրդովմունքի մեջ: Հանկարծ խրճիթի դռները ետ գնացին, ներս մտավ մի գեղեցիկ հագնված պատանի, մինչև թիկունքը թափված գիսակով և սիրուն դեմքով: Նորա հետ կային և երկու տղամարդիք երաժշտական գործիքներով:

—Դա իմ թոռս է, — ասաց ալևոր ցիգանը, ցուցանելով պատանու վերա: — Իսկ դոքա իմ որդիքս են, — ցույց տվեց նա տղամարդերին:

—Որտեղի՞ց են գալիս, — հարցրի ես:

—Գնացել էին փող աշխատելու:

Եվ որդիքը տվեցին յուրյանց ծերունի հորը որքան արծաթ որ այն օրը վաստակել էին պատանիին պար ածելով, և պատմեցին, թե որտեղ են եղել և ինչ են արել:

Ցիգանների այդպիսի թափառական պար եկող պատանիքը կոչվում են մութրուֆներ, կամ մոյիդաներ: Ամեն մի ղարաչի ծնողքը բախտավոր են համարում յուրյանց, երբ ունեին գեղեցիկ որդի, մանավանդ երբ նա ուներ անուշ ձայն: Մանկությունից կրթում են նորան պար գալու զանազան եղանակների մեջ: Ծնողաց համար թե որդին և թե նոցա պար եկող կապիկը միևնույն նշանակությունը ունեն: Երկուսին էլ միօրինակ ման են ածում քաղաքից քաղաք, երկրից երկիր և փող հավաքում: Այդ պատվավաճառ ցեղը արծաթի համար թույլ է տալիս ամեն կերպ վարվել պար եկող մոյիդաների հետ, որ առավելապես առիթ է տալիս արևելքի ազգերի

անբարոյականությանը, որք յուրյանց խնջույքների մեջ գլխավոր զվարճությունը գտանում են մոյիդաներ պար ածելում:

Ղարաչիները Պարսկաստանու ըստ մեծի մասին չունին հաստատ բնակություն, նոքա թափառում են երկրե երկիր: Հետաքրքրական է տեսնել նոցա քոչը. այսինքն՝ գաղթելը մի տեղից ուրիշ տեղ: Դու տեսնում ես մի ահագին խառնիճաղանջ բազմություն, որ կազմված էր ամենատեսակ անասուններից, — կանայքը և ավանակները տանում են ամենայն ծանրությունքը: Առաջինները կրում են կուրծքի վերա ծծի երեխան, և շալակած ունեն կոնակին նորանից մեծը, որ ոտքով չէր կարող գնալ: Ավանակների վերա բարձած են սև մազե վրանիկներ յուրյանց պարագաներով, մազեր, որք են նոցա արվեստագործության միակ ապրանքը: Բեռան վերա խեղկատակորեն նստած է մի կապիկ, կարծես ծիծաղում է հետևակ կանանց վերա, որ ինքը ավելի երջանիկ էր, քան թե նոքա: Տղամարդիքը տանում են յուրյանց ուսին ավելորդ ծանրությունքը ավանակների:

Ղարաչիների լղար, ջղային կազմվածքը, ամրացած թափառական կյանքի մեջ, առիթ է տալիս նորանց արշավել Ասիայի մի ծայրից դեպի մյուսը: Ղարաչին շատ ուրախ է և անհոգ, պատահած տեղը նա անպատիվ է և խաբեբա:

Նոցա կանայքը կախարդներ են. ունեն թուխ դեմքեր, սև, փայլուն աչքեր, նուրբ, ուղղաձիգ հասակ, հրապուրիչ և վավաշոտ բնավորություն: Պատահում է, ճանապարհին գնալու միջոցին, ղարաչի կնկան ծնել յուր հղությունը: Նա լուռ առանձնանում է մի ժայռի տակ ու քանի րոպեից հետ յուր նորամանուկը կուրծքին սեղմած, վազ է տալիս, հասանում է քոչին:

Ինձ հետաքրքրական է տեսնել մոյիդաներու պարելու եղանակը: Գերդաստանի ծերունին շուտով կատարեց իմ բաղձանքը, հրամայելով յուր որդիներին պար ածել խաղացող թոռնիկը: Նոքա կազմեցին երաժշտական մի կոնցերտ, քամանի (ջութակի), տայերայի և սրնգի վերա, եղանակելով մի թեթև երգ: Մանուկ մոյիդան, հագնելով յուր մետաքսեղեն կերպասից պատրաստված գույնզգույն քամարչինը (որ կաքավող աղջիկների յուբկաների նման մի բան էր), սկսավ ձեռքի մատների վերա զնգզնգացնել զանգերը թեքթեքվել, թռչկոտել, պտտվել ու երգել: Նորա պարի ամբողջ բնավորությունը որոշվում է զանազան հրապուրիչ ձևերի մեջ, որք շարժում էին կիրք, ախտեր և հրճվանք...

Վերջացնելով յուր պար գալը, մոյիդան փաղաքշաբար մոտեցավ ինձ և կամենում էր գլուխը դնել իմ գրկում: Այդ նորա սովորությունն է պարի վերջում, երբ նոքա նաև թույլ են տալիս շատերին յուրյանց համբուրել:

Մի այդպիսի հաճոյամոլությունը խիստ անախորժ տպավորություն ունեցավ ինձ վերա, մանավանդ, երբ մոյիդան վշտացավ, թե ինչու ես էլ չհամբուրեցի նորան:

Հարեմային փակված դրությունը մահմեդական Պարսկաստանի մինչև այսօր թույլ չէ տվել պար եկող աղջիկներին տղամարդերին հանդես դուրս գալ: Այդ պատճառով պարսիկները զուրկ են գեղեցիկ սեռի հրապարակական պարողներից: Այդ պակասությունը լցուցանում են միայն մոյիդաները:

Սինայի և Սակղի կողմերը անցնելու ժամանակ ես հանդիպեցա միայն մի ցեղի, որ կոչվում էր Սուզմանի, որոց կյանքը տարբերվում էր ղարաչիներից այն զանազանությամբ միայն, որ

Սուզմանիները՝ փոխանակ պատանյակներին պար էին ածում յուրյանց մանկահասակ աղջիկները:

Ինձ պատմեցին, Թեհրանից հեռու, Քեաղզազի կողմերում, ապրում են հայ բոշաներ, որոց կյանքի ձևերը խիստ նման են ղարաչիներին: Նոքա քրիստոնյաներ են, խոսում են հայերեն, և յուրյանց կոչում են լուսավորչական: Բայց դեռևս Թեհրան չհասած դոցա մասին ստույգ ոչինչ չեմ կարող գրել քեզ:

Ղարաչի գերդաստանի մեջ գիշերը ես անցուցի բավականին զվարճությամբ և հանգիստ: Առավոտյան, երբ ես պատրաստված էի ճանապարհ ընկնել, մոտեցավ ինձ սիրուն Լեյլին, մանուկ մարգարեուհի աղջիկը, որ այն գիշեր գուշակում էր ինձ համար:

Նա տվեց ինձ մի թուղթ կարած մետաքսյա կանաչ կերպասի մեջ:

—Առ այդ ծրարը, — ասաց նա քնքշությամբ. — և կապիր թևքիդ, դա ազատ կպահե քեզ ամեն վտանգներեն քո ուղևորության մեջ:

—Ի՞նչ է այդ, — հարցրի ես:

—Թիլիսմ է, — պատասխանեց սիրուն օրիորդը:

Ես նշմարեցի նորա աչքերում արտասուքի կաթիլներ, և չկամենալով դիպչել նորա քնքուշ զգացմունքին, առեցի նորա ձեռքեն կախարդական ծրարը:

—Մնացիր բարյավ, Լեյլի, — ասացի նորան:

—Գնա բարյավ, դու մանուկ երիտասարդ, թո՛ղ աստված քեզ հետ լինի, ուր որ լինես, չմոռանաս Լեյլիին...:

ՆԱՄԱԿ ԻԱ

Հունվար ամիսն էր: Ծննդյան ցրտերը սարսափելի մրրիկներով էին անցնում: Եղանակի խռովության պատճառավ ամբողջ երկու շաբաթ ես արգելվեցա մի փոքրիկ քրդաբնակ գյուղում, կերակրվում էի մածնով, կաթով ու կորյակ հացով, և տանջվում էի տզերից, որք առանց խտրություն դնելու, թե անասունների և թե նոցա տերերի արյունը անխնայաբար ծծում են: Մի բան միայն ինձ զվարճացնում էր իմ տխուր — բանաստեղծական խրճիթի մեջ, այն էր, որ իմ հյուրընկալ քրդուհին գիշերները ինձ զբաղեցնում էր յուր հեքիաթներով, և նորա տղամարդը շատ անգամ պարծանքով պատմում էր յուր քաջություններից ու ավազակություններից:

—Զավոյի ծնողքը, — մի անգամ ասաց նա, ցույց տալով յուր կնոջ վերա, — չէին ուզում յուրյանց աղքիկը տալ ինձ կնության, թեև իմ հայրս տալիս էր նոցա դստեր փոխարեն որպես բաշլըդ (գլխագին) մի ընտիր մատակ ձի ազնիվ ցեղից և քսան գլուխ սպիտակ ոչխար: Նոքա ասում էին իմ հորը, թե քո որդին ծույլ է և երկչոտ, թե նա անարժան է մեր աղջկան ամուսին կոչվելու: Բայց երբ ճանապարհորդները սկսեցին զարհուրել ինձանից, երբ իմ բերած թալաններից (կողոպուտ) սկսան կերակրվել մեր ցեղի աղքատները, երբ իմ մզրախը (նիզակը) սկսավ շուտ-շուտ ներկվել

ոսոխներիս արյունով, — իմ անունը անմահացավ: Մեր ցեղի աղջիկները տարփանքով մտածում էին իմ մասին: Այն ժամանակ գեղեցիկ Զավոն ինքը թռավ իմ սիրուն նժույգի մեջքի վերա, և ես նորան փախցրի մեր վրանը: Նորա ծնողքը ուրախությամբ օրհնեցին մեր ամուսնությունը...

—Եվ դու պարծենում ես այդպիսի քաջություններով, — հարցրի ես:

—Վկա են իմ պապերի ոսկերքը, որ ես սուտ չեմ պարծենում, և վկա են այդ նշանները, որ դրած են իմ ճակատի վերա, — պատասխանեց ծերունի ավազակը, ցույց տալով երեսի վերա մի քանի խորն ընկած սպիներ:

Մի գեղեցիկ առավոտ խոստանում էր փառավոր օր: Ես շարունակեցի իմ ուղևորությունը: Մեր ճանապարհը ձգվում էր Սուլտուզի դաշտերի միջով: Այդ մի փոքրիկ նահանգ է Ուրմիից դեպի հարավ, որ նշանավոր է յուր ցորենի բերքով և խոտավետ արոտամարգերով: Նա ունի անասնապահության ամեն հարմարությունքը: Սուլտուզը մեծ մասամբ բնակեցրած է դաարափափախ կոչված թուրքերի մի ցեղով, որ գաղթել են այստեղ անդրկովկասյան գավառներից: Դոքա կազմում են Ատրպատականի հեծելազորի քաջ և նշանավոր մասը: Մի քանի գյուղորայքում ցրված բնակվում են այլ և հայեր և ասորիներ, թշվառ մտավոր և նյութական աղքատության մեջ:

Ինձ հետ ուղեկից էր մի պարսիկ մոլլա: Այդ մոլեռանդը յուր գիտությամբ և ուսմունքով պատկանում էր իսլամի հոգևորականության բարձր դասին: Ամբողջ օրը նորա ցամաքած շրթունքը շարժվում էր, և նա մունջ աղոթքներ էր կարդում:

Հիանալի առավոտ էր:

Վաղորդյան արշալույսը վառվում էր բյուրավոր գույներով: Արևի առաջին ճառագայթները հյուսել էին ձյունապատ սարերի գագաթների վերա ոսկյա-վարդագույն պսակներ: Բնությունը սքանչելի տեսարան էր ներկայացնում:

Ես զարմանում էի մոլլայի սառնասրտության վերա դեպի յուրյան շրջապատող հիանալի բնությունը: Երևում էր, որ պարսիկը չէր հրապուրվում նորա գեղեցկություններով:

Երբ ես կամեցա նորա ուշադրությունը գրավել, նա պատասխանեց.

— Այդ բոլորը աստծո փառքն է: Թո՛ղ օրհնյալ լինի նորա մեծ զորությունը:

Ես սկսեցի բացատրել մոլլային մի քանի մտքեր տիեզերքի կազմվածքի, արևի, լուսնի և մեր մոլորակի մասին: Երբ վերջացրի նորանով, որ երկրագունդը դարձյալ մի աստղ է, որ ունի յուր շրջանը, ընթացքը, մոլլան դևոտեցավ:

—Երկիրը մի անշարժ մարմին է, որ դրած է գետնի տակի եզան մեջքի վերա, — կտրեց նա իմ խոսքը:

—Որպե՞ս, — հարցրի ես:

—Անդունդը հուր է, հրո վերա ջուր. ջրի մեջ կենում է ահագին ձուկն, որո մեջքի վերա կանգնած է եզը. նորա մեջքի վերա դրած է երկիրը. իսկ երկրի վերա դրած է բյուրեղային կամարակապ երկինքը. նորա վերա զանազան աստիճաններով բարձրանում են մինչև յոթն երկինքներ ապա աստուծո հրաշալի աթոռը:

Եվ ավելացրուց, թե մեր մարգարեն (Մուհամմեդը) յուր բուրակի33 վերա նստած, բարձրացավ մինչև յոթերորդ երկինքը, իսկ Մեսիան համբարձավ մինչև չորրորդ երկինքը: Դորանով նա կամում էր ցույց տալ իսլամի կրոնքի հիմնադրի մեծությունը Քրիստոսից:

Ես չուզեցի քրքրել այդ կրոնական խնդիրը, միայն աշխատում էի ապացուցանել մոլլայի կարծիքի սխալմունքը երկրագնդի մի եզան մեջքի վերա կանգնած լինելու մասին:

Նա պատասխանեց, — Այդ անհերքելի ճշմարտություն է: Եվ երբ այն եզան մի մազը շարժվում է, այնտեղ պատճառում է երկրաշարժ: Բայց ֆրանկների (եվրոպացվոց) ուսումը դեռևս չէ հասել այն կատարելությանը, որ կարողանար հասկանալ դորանք:

Չնայելով, թե որքան ծիծաղելի էին իսլամի իմաստունի դատողությունքը, այնուամենայնիվ ես ախորժանոք լսում էի նորան, այնպես որ մինչև իջևան հասնելը ես ամենևին չզգացի ճանապարհի ծանրությունը:

Այն օր մենք գիշերեցինք մի թուրքի չորքոտանիների փարախից բաժանված մի տեղում, որ կոչվում էր սաքքու: Չնայելով այդ անասնական օթևանի չափազանց կեղտոտությանը, մենք մի բանով միայն գոհ էիմք, որ բավականին տաքացած էր տավարների շնչով, թեև նորա օդը խեղդելու չափ ծանրացած էր:

Մյուս առավոտը իմ ուղեկիցս հայտնեց, թե նա չկամեր այն օր շարունակել ճանապարհը:

—Ի՞նչ պատճառավ, — հարցրի ես, — մի թե քեզ քաղցր է այդ անասնական բնակարանը:

—Առավոտյան երբ վերջացրի նամազս, — պատասխանեց նա, — ես պատրաստվում էի ճանապարհ ընկնել, հանկարծ սաբր եկավ:

—Ի՞նչ կնշանակե սաբր եկավ:

—Ես մի անգամ փռշտացի, դորան ասում են սաբր, որ պարսից լեզվով նշանակում է համբերություն: Դա աստուծո ձայնն է, որ հայտնվում է մեզ պահապան հրեշտակի միջնորդությամբ. նա զգուշացնում է մեզ հրաժարվել այն նպատակից, որ պատրաստվում ենք գործել:

—Դորա համար էլ դու չե՞ս կամենում ճանապարհ ընկնել:

— Չեմ կարող մինչև ջահթ չգա:

— Ի՞նչ է նշանակում ջահթ:

—Երբ մի մարդ երկու կամ երեք անգամ փռշտում է, դորան ասում են ջահթ, այդ նշանակում է պարսից լեզվով փույթ կամ ջանք: Այդ մի բարի նախագուշակություն է, որով ամեն մարդ պիտի շտապի շուտով գործել այն, ինչ բանի վերա որ մտածում էր34:

—Ուրեմն դու այնքան պիտի սպասես, որ նորից աստուծո ձայնը լսես մի կամ երկու անգամ փռշտալով:

—Ստիպված եմ, — պատասխանեց մոլլան խորհրդական ձայնով: — Մանավանդ որ ես առավոտյան իսթիխարա35 արեցի իմ թազբեհի36 վերա և չար գուշակեց:

—Քո թազբեհը երբեք չէ՞ խաբում քեզ, նորանի՞ց էլ աստուծո ձայնի պատգամն է լսվում:

—Անտարակույս, որովհետև նորա հատիկները շինված են քարբալայի սուրբ հողից37:

Ես չգիտեի, թե ինչ վճռել: Հավաստի էի, որ մոլլային չէի կարող դուրս բերել յուր նախապաշարմունքներից: Եվ մեզ տանող չարվադարն նույնպես համաձայն էր նորա հետ:

Ես երկար պետք է մնայի այդ անորոշ դրության մեջ, եթե տանտիրոջ երեխան, որ կանգնած նայում էր մեզ վերա, բարեբախտաբար մի քանի անգամ չփռշտար:

— Ահա՛ քեզ ջահթ, մոլլա, — կոչեցի ես. — դե շտապիր ճանապարհ ընկնեմք. աստուծո ձայնն է այդ. մանավանդ մի անմեղ արարածի բերանից է լսվում:

Մոլլան, թեև ակամայից, այսուամենայնիվ հոժարեցավ շարունակել ճանապարհորդությունը: Եվ ես ուրախ էի, որ պիտի ազատվեմ մեր իջևանի ժահահոտությունից:

Նույն գիշերը եկած ձյունը ձգել էր դաշտերի երեսին յուր երկու թզաչափ թանձր վերմակը: Վաղ առավոտյան ճանապարհ ընկած քարավանի հետքերը խորին կերպով գծել էին ճանապարհի վրա մի նեղ շավիղ, որո միջով ընթանում էին մեր գրաստները մինը մյուսի հետքից շարված:

Բայց եղանակը գնալով պղտորվում էր, և թանձր մառախուղը թույլ չէր տալիս նշմարել փոքր-ինչ բացակա հեռուն: Վաղորդյան մեղմիկ քամին սկսեց հետզհետե սաստկանալ: Եվ երբ մեք բավականին հեռացած էիմք գյուղից, բարձրացավ սաստիկ մրրիկ: Նորեկ ձյունի հոսանքը, որ գոռալով ու ֆշֆշալով տեղափոխվում էր այս ու այն կողմ, բոլորովին ծածկեց ճանապարհի հազիվ նշմարվող շավիղը:

Քանի ժամից հետո մեր չարվադարը սարսափելով հայտնեց, թե մեք մոլորված էիմք ուղիղ ճանապարհից և խորհուրդ տվավ բաց թողուլ յուր փիշանդի38 գլուխը, ասելով, թե այդպիսի դեպքերում ձիաները ավելի ընդունակ են գտանել ճանապարհը, քան թե մարդիկ:

Մոլլայի վրդովմունքը սահման չուներ. նա պնդում էր յուր առավոտյան նախագուշակությունները. նա հանդիմանում էր ինձ, որ մենք քրիստոնյայքս դեռ շատ հեռու ենք մնացել ճշմարիտ գիտությունից:

Ես ոչինչ չպատասխանեցի նորան. միայն առաջարկեցի խմել մի բաժակ կոնյակ, եթե նա չկամեր սառչիլ ցրտից:

— Ահա այդպիսի պիղծ ըմպելիքների գործածությունը զրկում է ձեզ քրիստոնյաներիդ աստուծո թե ողորմությունից և թե իմաստությունից: — Ասաց նա անախորժ զգացմունքով և յուր բերանը ձգեց ափիոնի մի մեծ կտոր, որ տաքանա:

Ամբողջ օրը մեք թափառում էիմք դաշտերի, սարերի և ձորերի մեջ, չգտանելով որևիցե բնակություն:

Օրը տարաժամում էր:

Մեր դրությունը սարսափելի էր համարվում, երբ մտածում էիմք, թե այն գիշեր պետք է մնամք դրսումը բացօթյա: Մանավանդ, երբ որ տեսամք այստեղ և այնտեղ ձյունի մեջ սառած մի քանի մարդիք:

Մոլլայի սառած շրթունքը դարձյալ շարժվում էին: Նա ափիոնի արբեցության մեջ յուր աղոթքներեն էր կարդում:

Բայց մեր Մեսրոպը, որ դեռ չէր կորուսել յուր վստահությունը ինձ խրախույս տալու, հիմնվելով յուր հին փորձերի վերա, արձակեց հրացանը:

Մերձակա տեղից լսելի եղավ մի այլ հրացանի ձայն:

— Մեք ազատված եմք, — ուրախությամբ կոչեց քաջ զեյթունցին և դիմեց դեպի այն կողմը, ուսկից լսելի եղավ հրացանի ձայնը:

Քառորդ ժամ գնալուց հետո մեք լսեցիմք և շան հաչալու ձայն, որից կարելի էր գուշակել, թե արդեն հասել էիմք բնակության: Թեև այդ կարծիքը սխալ էր, բայց մեք դարձյալ ուրախ էիմք, որ գտամք մի փոքրիկ այր (մաղարա), ուր հավաքված էին Սուլդուզի իշխանի՝ Հասան-խանի որդվո որսորդները: Նոքա մեզ համար շուտով կրակ վառեցին և միս խորովեցին, կերամք, տաքացամք և այն գիշեր այնտեղ մնացիմք մինչև անցավ մրրիկը:

ՆԱՄԱԿ ԻԲ

Մոլլայի ուղեկցությունը վերջապես եղավ անտանելի, ես թողելով նորան ընկերացա մի փոքրիկ քարվանի հետ, որո մեծ մասը կազմում էին հրեաներ: Իսրաելի հալածական որդիքը ավելի բարեմտությամբ վարվում էին ինձ հետ, քան թե մահմեդականության մոլեռանդ ներկայացուցիչը: Ի՞նչ էր դորա պատճառը: Տիրապետողի — ճնշող ազգի հալածանքը եղբայրացնում է ստորադրյալ ազգերը, որքան և նոքա թշնամական հարաբերությանց մեջ լինեին: Պարսկաստանում գրեաների և քրիստոնյաների վիճակը շատ նման է, և նոքա զգում են միմյանց:

Հասնելով Սովուխ-Բուլախ քաղաքը, արդեն հայտնվեցավ իմ մեջ տաքցոց. այդ տկարությունը վերջին փոթորիկի միջոցին սաստիկ մրսելու հետևանքն էր: Եվ եթե ես փոխանակ տանջվելու սառն և կեղտոտ քարվանսարաների իջևաններում, գտա այդ քաղաքում մի հարմար օթևան տաք

քուրսու մոտ, փափուկ օթոցի վերա, դորանով ես պարտական եմ իմ ուղեկից հրեա խախամին (քահանա), որ կարեկցելով իմ տկարությանը, առաջարկեց ինձ յուր տունը: Հրեա քահանայի առատասրտությունը հիշեցնում էր ինձ Աբրահամի հյուրասիրությունը: Նա ուներ երկու կանայք, որք ամենայն մտերմությամբ նստում էին ինձ մոտ, կիսով չափ ծածկվելով քուրսու վերմակի տակ: Այդ Սիոնի դստրիկների հագուստը և զարդարանքը հիշեցնում էր ինձ Եզեկիելի տողերը. «Եվ քեզ զարդարելով զարդարեցի, և ձեռքերուդ վերա ապարանջաններ դրի, ու գլխանոցիդ վերա մանյակ դրի: Եվ քո քիթդ օղակ, ականջներդ՝ գնդեր, ու գլուխդ պարծանաց պսակ դրի, և դուն ոսկիով ու արծաթով զարդրվեցար՝:

Այդ տեսակ զարդարանքները երևում են այս կողմերում, ոչ միայն իսրաելուհիների մեջ, այլև քուրդ, հայ և ասորի կանանց մեջ: Քթից օղակ անցկացնելը ես առաջին անգամ տեսա Ատրապատականի հայոց գեղեցիկ սեռի մեջ, երևում է այդ սովորությունը նոքա հրեաներից պետք է ժառանգած լինեն: Իսկ սրունքների վերա հուլունք կապելը, կամ ապարանջան կցելը հանդիպում են վայրի ցեղերի մեջ միայն: Այդ սովորությունը Պարսկաստանի ստորին դասի հայ կանանց մեջ պետք է ժամանակի խորին հնությունից մնացած լինի:

Իմ հյուրընկալը, որպես հիշեցի, քահանա էր: Նա ուներ յուր տանում քինիշթա (սինագոգա): Ամեն շաբաթ օր այստեղ հավաքվում էին հրեա ժողովուրդը աղոթելու, կարդացվող էր հին կտակարանը, որ գրված էր մագաղաթի վերա: Նա ուներ կես արշին լայնությամբ երկար կերպասի ձև, որո ընթերցանությունը վերջանալեն հետո, կլորում էին, փաթաթում էին և խնամքով դնում էին մի արկղի մեջ: Այդ ամենահին ձևը պետք է լինի Աստվածաշնչի գրչագրի պահպանության:

Լոնտրայում և Եվրոպիո զանազան քաղաքներում տպագրված հատորները հին կտակարանի, ոչ միայն ընդունելություն չեն գտած այս կողմերի սինագոգաներում, այլ նոցա ընթերցանությունը անգամ մեղք է համարվում: Առանձին դպիրների արհեստն է այս կողմերում պատրաստել մագաղաթ և գրել սուրբ գիրքը, որ թանկ գնով ծախում են նոքա յուրյանց մանրավաճառությամբ, և պահպանել են յուրյանց լեզուն, թեև նա բավականին աղավաղված է հեռնալով հին եբրայական բարբառից: Նոցա տղամարդիկը մեծ մասամբ գիտեն գրել կարդալ: Նոքա զենք չեն կրում: Միակ զենքը, որին սպասում են՝ է ոսկի թուրը, որո գտնելու հետ անմիջապես կապակից է Մեսիայի հայտնվիլը: Այդ ավանդությունը տիրում է այս կողմերի բոլոր հրեաների մեջ: Այդ սնահավատությունից օգուտ քաղելով, պարսիկները կամ թուրքերը, պատմում են, շատ անգամ գաղտնի գցել են մի հրեայի տնում որևիցե թուր և իսկույն հայտնվել է նոցա մեջ հուզմունք և խռովություն: Այդ կատակը առիթ տվեց ինձ մի օր հարցնել իմ հյուրընկալից:

—Ինչո՞ւ դուք էլ քուրդերի նման զենք չեք կրում, որ պաշտպանեք ձեր անձը նոցա հարստահարություններից:

—Երբ կհայտնվի Մեսիան, — ասաց նա, — այժմյան ազգերի ամենազորեղ թագավորները կբռնեն մի իսրայելացի գռեհիկի փեշքեն և ողորմություն կխնդրեն:

Այս կողմերումս էլ, որպես մի ժամանակ Եվրոպայում, դեռևս տևում են այն սարսափելի հալածանքները հրեաների դեմ, և կողոպտում են նոցա տները, պատճառ բռնելով, թե նոքա

գողանում էին երեխաներ: Այդպիսի հանգամանքներում հրեան ոչ միայն յուր կայքի, այլև յուր գլխի տերը չէ:

Սովուխ-Բուլախը բնակեցրած է մեծ մասամբ քրդերի զանազան ցեղերով, որք ունեն հաստատ բնակություն: Նոքա կառավարվում են յուրյանց բեկերով, որոց ամեն մի տունը ժամանակի խորին հնությունից ժառանգաբար տիրում է առանձին ցեղի վերա և համարվում է նորա նահապետը: Այժմ դոքա թեև բոլորովին հպատակած են Պարսից տիրությանը, բայց դեռևս պահպանում են միջնադարյան ասպետների ազնվապետական հատկությունքը: Նոքա տիրում են յուրյանց ժողովրդի թե կյանքի և թե կայքի վերա: Այստեղի քրդերը բավականին գեղեցիկ դեմք ունեն և քաղցրահնչյուն բարբառ: Նախնական զենքերը — նիզակ, վահան, թուր, դաշույն, սաղավարտ և զրահ — դեռ պահպանվել են նոցա մեջ ամենայն սրբությամբ: Սպանությունը, արյան վրեժխնդրությունը մի առանձին զվարճություն է համարվում նոցա համար: Քուրդերը չունեն գրականություն, գրում են արաբացվոց տառերով և պարսից լեզվով: Ժողովրդի մեջ դեռ չէ մտած դպրությունը նա սեփական է տակավին շեյխերին և բեկերին: Քուրդերի կանայքը (առավելապես ստորին դասի մեջ) դեռ չեն ընդունել պարսից ծածկապահության սովորությունը: Նոքա երևում են տղամարդերին բաց երեսներով:

Սովուխ-Բուլախը ունի մինչև 1000 տուն բնակիչ: Չնայելով նորա փոքրությանը, նա համարվում է Քրդստանի վաճառականության կենտրոնը: Հայ բնակիչների թիվը այստեղ շատ փոքր է: Վաճառականության գլխավոր ուժը գտանվում է այլ քաղաքներից այստեղ եկած հայերի ձեռքում: Բայց ցավալի է խոստովանել, որ նոցա մեծ մասը փոխանակ միջնորդ լինելու Մուսուլի և Բաղդատի առևտրական հարաբերություններին Սովուխ-Բուլախի հետ, փոխանակ անկիրթ քրդերին վաճառականության հավատարիմ օրինակ դառնալու, — պարապվում են վաշխառությամբ, աններելի անգթություններով հարստահարելով քուրդ բեկերին և ծանր-ծանր տոկոսների փոխարեն տիրելով այդ միամիտների կալվածքները և նոցա արդյունաբերությունքը:

Երեք օր միայն մնացի այս քաղաքում, և բոլորելով Ուրմիո լճակի հարավ-արևելյան եզերքը, ես անցա Բինաբ, Միանդաբ, Մարաղա, Դոխարզան և Գունեյստան կոչված մահալները: Դոքա զանազան գավառիկներ են, որք ունեն յուրյանց փոքրիկ գյուղաքաղաքները: Ինձ պատմում էին, թե այդ երկրները տարվա մնացորդ եղանակներում կատարյալ դրախտ են: Խաղողենին պտղաբերվում է այստեղ ամենայն շքեղությամբ: Մարաղայի քիշմիշը և սաբզան կարելի է որթի բերքի ամենաազնիվ տեսակներից մինը համարել: Նա վաճառահանվում է մեծ մասամբ դեպի Ռուսաստան: Չնայելով բնության հարստություններին, ժողովուրդը թշվառ աղքատության մեջ է ապրում: Հիշյալ երկրները բնակեցրած են մեծ մասամբ թուրքերով: Մարազայում, Սովուխ-Բուլախում առաջին անգամ ես հանդիպեցա հայ ազգաբնակության, որք յուրյանց մայրենի լեզուն չգիտեին և խոսում էին տաճկերեն: Նոցա քահանայքը ոչինչ կերպով չէին որոշվում հասարակ գռեհիկից:

Վերոհիշյալ երկրները յուրյանց ջրերի պակասության պատճառավ շատ տեղեր կարող էին բոլորովին անապատ դառնալ, բայց կյանքի և ապրուստի հոգսերով ծանրաբեռնված ժողովրդի աշխատասեր ձեռքերը կարողացել է այն չոր ու ցամաք ավազոտ դաշտերի միջից, գետնի տակով ծակելով, արվեստական խողովակների միջոցով, ջուր դուրս բերել, որ կոչվում են քարհեզ: Իհարկե, քարհեզների շինությունը աղքատ գյուղացու գործ չէ, նոքա սեփականություն են դրամատերերի, որք ջուրը րոպեներով ծախում են գյուղացիներին, որք ողորմելի աղքատության

մեջ են: Թեև տեղ-տեղ հանդիպում են հարուստներ, բայց դոքա նմանում են այն հսկա և հրեշավոր ծառերին, որք խորին արմատ ձգելով դետնի մեջ, և երկրի բոլոր ուժը և սնունդը ծծելով, չափազանց հաստացել են, և ընդարձակ ստվերախիտ ճյուղեր արձակելով, միևնույն ժամանակ ճնշում են, խեղդում են փոքրիկ ծառերը յուրյանց հովանվո տակ:

Ամբողջ երկու շաբաթ տևեց իմ ճանապարհորդությունը Բինաբի, Միանտարի, Մարաղայի, Դոխարղանի և Գունեյստանի միջով: Անցանելով Մայանի անապատը և Աջի գետը, — Այդ Թաբրիզն է, — ասաց առաջնորդը, ձեռքը մեկնելով դեպի արևելք:

Զուբեյդա-Խաթունի քաղաքը39 դեռ մրափում էր վաղորդյան մառախուղի տակ, որ թափանցիկ եթերական փոշիի նման նստած էր նորա վերա: Արշալույսը դեռ նոր էր սկսել շառագունիլ: Հսկայական Արքը40 նկարվում էր հեռվից երկնքի մանիշակագույն կապուտակության մեջ:

Մեր գրաստները ընթանում էին դողդոջուն և դանդաղ քայլերով. նոցա մաշված պայտերը (նալ) սլլվում էին սառած գետնի վերա:

Խորասուզված տխուր մտածությանց մեջ, անցյալի հիշատակներով և ներկայի թշվառություններով, ես իմ ամբոշխմունքը ցրվելու համար սկսեցի մի այդպիսի խոսակցություն իմ Սանշո Պանսայի հետ:

— Մեսրոպ, տեսնո՞ւմ ես այդ սարերը, նոցա հետքումն է Մարանդը, ուր դրած է Նոյի կնոջ գերեզմանը, տեսնո՞ւմ ես այդ մեծ քաղաքը, ուր շուտով կհասնեմք մեք, ասում են դա շինված է եղել մեր հայ պապերից:

Մեր խոսակցությունը ընդհատեցին մի քանի ձեռքը ոտքը գոսացած բորոտներ, որք դուրս գալով քարհեզի խողովակներից ողորմություն էին խնդրում: Այդ թշվառների այլանդակված կերպարանքը զզվանք էր բերում: Արևելքում այդպիսի հիվանդները միշտ արտաքսված են ժողովրդյան բնակությունից, որպեսզի մյուսները չվարակվեն նոցա ախտով41:

ՆԱՄԱԿ ԻԳ

Մուհարլեմ ամսի տասներորդ օրն էր, երբ ես հասա Թաբրիզ քաղաքը: Շիիտյան աշխարհը ողբում էր նահատակված իմամների սուգը: Դուքան, բազար փակված էր, քրիստոնյայք երկյուղից տանից դուրս չէին գալիս, մուսուլմանները հագնված էին սևերով, մզկիթների ամպիոնները ծածկված էին սև պաստառներով, նոցա կտուրների վերա փողփողում էին նույնպես սև դրոշակներ, որոց գլխին ցցված էր Ալիու սպիտակ թիթեղյա աջը:

Զարդված ճանապարհի հոգնածությունից, առավոտյան ես զարթեցա խիստ ուշ: Տասներկու ժամն էր, երբ Մեսրոպը թեյ ներս բերավ: Հանկարծ փողոցեն լսելի եղան ծանր — տխրական հնչումներ շեփորի, թմբուկների, որոց հետ միախառնվելով ճիչ, աղաղակ, լաց, հարայ-հրոց, որոտում էին սարսափելի բարբարոսական ներդաշնակությամբ:

Այս ձայները դուրս կոչեցին իմ տանտիկնոջ աղջիկներին, որոնք վազելով դեպի կտուրը բարձրացան, որ այնտեղից թամաշա անեն:

—Ի՞նչ խաբար է, — հարցրի ես Մեսրոպին:

—Չգիտեմ, աղա, — ասաց նա զարմացական կերպով, — կարծես թե բոլոր թուրքերը կատաղած են այսօր:

Հետաքրքրությունը ինձ նույնպես դեպի կտուրը տարավ, ուր դրացիներից հավաքվել էին մի մեծ բազմություն և նայում էին դեպի փողոցը, որտեղից անց էր կենում կրոնական ոգևորությամբ խռոված ամբոխը:

Փողոցի ընդհանուր երկարությամբ ձգված էր կատաղի ամբոխի շղթան, բոլորն էլ մերկ, գլխաբաց, բոբիկ ոտքով, ծածկված պատանքի նման սպիտակ կտավով և ամեն մինը բռնած ուներ ձեռքումը բաց սուր: Զարհուրելի տեսարան էր: Նոքա, վիրավորված երեսներով ու գլուխներով, արյունաշաղախ և այլանդակված, առաջ էին ընթանում միաձայն գոռալով.

Էյ, տաղ Շիմր ալիննան,

Ֆարյադ, Շիմր ալիննան:

(Բողո՛ք Շիմրի ձեռքից, աղաղակ Շիմրի ձեռքից)42:

Նոցա առջև հարկանվում էին թմբուկներ, հնչվում էին շեփորներ և տանում էին մի քանի գեղեցիկ երիվարներ զարդարված շալերով և նախնական զենքերով: Մինը կրում էր սև դրոշակ, որո գլխին ցցած էր Ալիու արծաթյա աջը: Երիվարների վերա նստած էին շատվոր մանուկ երեխաներ, սև հագնված, արյունաշաղախ, որք երկու ձեռքով անդադար ցրվում էին յուրյանց գլխին հարդ, որ քարշ էր տված նոցա կշտեն քսակով: Դոքա իմամների գերի ընկած երեխայքն էին:

Սարսափելին այն էր, որ այդ մոլեգնյալ ամբոխի թվում գտանվում էին մի քանի մանկահասակ պատանիներ, որոնք նույնպես կտրատել էին յուրյանց գլուխը և արյուն էր հոսում:

Մի եվրոպացի կին յուր ամուսնի հետ կանգնած, նայում էր այդ արյունաշաղախ բազմությանը, իսկույն սիրտը թուլացավ, նվաղեցավ և վայր ընկավ:

Այդ խումբը անցավ: Նորան հետևեց մի այլ խումբ կատաղիների: Դոքա նույնպես մերկ էին, և փոխանակ սրերի, ունեին յուրյանց ձեռքին շղթաներ, որով անդադար մտրակում էին յուրյանց մերկ կուրծքը և մեջքը, որոց կաշին կապտել և սևացել էր չարաչար շղթայակոծ լինելեն: Նոքա միաձայն գոռում էին «չախսե՛յ, վախսե՛յ, Հասան, Հուսե՛յն, Ալի՛, Մադաթ»: Դոցա առջևով մի քանի մարդիք փայտյա խոների վերա, յուրյանց գլխին դրած տանում էին Հասանի և Հուսեյնի արյունով ներկված դիակները:

Դոքա նույնպես անցան: Հետևեցին մի այլ խումբ: Նրանք թեև բոլորովին մերկ չէին, բայց գալիս էին բոբլիկ ոտքով և գլխաբաց, երկու ձեռքով անդադար զարկելով յուրյանց մերկ կուրծքին, որոց բախմունքեն թնդում է օդը: Նոքա տանում էին յուրյանց առջև մի խոնի վերա դրած նահատակված առյուծի43 դիակը, որը օգնության Հասավ իմամի որդիքը կոտորելու ժամանակ, և միաձայն գոռում էին.

«Է՛յ, շիր, բիր գալ եթիշ հարայա, գոր նա թուֆան դյուշուբ քարբալայյա» (ով առյուծ, դե՛ ե՛կ, հասիր օգնության, տե՛ս ինչ մրրիկ է բարձրացել Քարբալայի մեջ):

Դոքա նույնպես անցան: Հայտնվեցավ մի այլ խումբ, բաղկացած այս քաղաքում ծառայող արաղցի (պարսիկ) ֆերրաշներից: Նոցանից ամեն մինը ուսին ձգած ուներ մի շալ և ձեռքով բախում էին երկու տախտակներ, որոնք հատուկ դորա համար շինված էին: Նոքա անցնում էին եղանակելով մի այդպիսի ողբ. Է՛յ, վա՛յ, Հուսեյնամ,

մեջլում Հուսեյնամ,

դար Քարբալլայյա

քուշտե շոտե

նուրուլ դու Էյնամ:

(Վա՛յ, իմ Հուսեյն, թշվառ Հուսեյն, ո՛վ Քարբալայում նահատակված երկու աչքիս լույս):

Տեսնելով, որ դոքա վերջ չունեն, միշտ մինը մյուսի հետքից հայտնվում էին նոր և նոր խումբեր, որոց ամեն մինը ներկայացնում էր իմամների որդվոց նահատակության որևիցե անցքը, ես իջա կտուրից:

Այսօր ամենահարուստ հաջին, որո հինայով ներկած ոտքերը սովոր էին միայն կոխել խորասանի փափուկ գորգերը, բոբլիկ թափառում է փողոցներում, և մերկ կուրծքը կոծելով «Է՛յ, վայ Հուսեյն, է՛յ, վայ Հասան» է կոչում: Այսօր ամենաքնքուշ աչքերը մի շիայի, որք հազիվ դառնացած էին արտասուքի կաթիլներով, լաց է լինում և նոցա մի կաթիլ արտասուքը մարում է դժոխքումը այնքան կրակ, որքան չէին կարող հանգցնել օվկիանոսի ջրերը...

Երեկոյան պահին ես դուրս եկա տանից: Փողոցներում կատաղի ամբոխի թափորը դադարել էր արդեն: Շուկաներում հազիվ երևում էին մահմեդականները: Նոքա հավաքված էին մեջիտներում, ողբալու համար, ուր մասնակցում են և կանայքը: Մի առանձին դաս մոլլաների, որք կոչվում են մասիյխուն, նոցա պաշտոնն է մուհարլեմի ամիսներում, կամ երբ կցանկանային, տխուր — ցավակցական խոսքերով երգել է նկարագրել իմամների նահատակության պատմությունը: Ամեն մի մեջիտում այդ մասիյխուններից մինը բարձրանում է ամբիոնի վերա, որո բոլորտիքը շրջապատված է նորա մանկահասակ երգիչ աշակերտներով: Նա խիստ ողբալի ձայնով սկսում է պատմել և լաց լինել, և երբեմն նորա աշակերտները ներդաշնակում են տխուր-սգավորական հնչումներով պարերդ: Մեչիտում հավաքված բազմությունը սկսում է ողբալ և արտասուք թափել:

Ես կանգնած, մի մեջիտի լուսամուտից նայում էի այդ հանդեսին: Ահա մասիյխունի խոսքերից մի քանիսը, որք հիշեցնում են գեթսեմանյան այգիի զոհը, որ հոժարակամ ընդունում էր տիրոջ հրեշտակի ձեռքից մահվան բաժակը:

«Երբ անիծված Յազիդի զորքերը պաշարել էին Ալիու որդվոց կուսակիցների փոքրիկ խումբը, երբ նոցա արդար արյունով սրբվում էր Քարբալայի հողը, երբ նզովյալ Շիմրի խենջարը շողում էր Հասանի և Հուսեյնի, այդ անմեզ զոհերի, գլխին, — իսկույն դղրդաց անդունդը, որոտաց երկինքը և

գոռացին լերինք, — «ո՛վ Հուսեյն, թույլ տուր մեզ մեր կայծակներով, բոցերով և կրակով սատակեմք այդ չարագործներին». ձայն տվեցին նոքա: — «Հանգստացիր անդունդ, լսեցեք լերինք, և մի՛ խռովիր երկինք». Հուսեյնը պատասխանեց, ինձ պետք չէ ձեր կայծակը, բոցը և կրակը, զի ես տիեզերքի ստեղծվելեն առաջ ինքնակամ ընդունել եմ այդ անձնազոհությունը և ինչ որ գրված է հավիտենականի գրչով՝ պիտի կատարվի»:

Բայց վերոհիշյալ ժողովները, որ լինում են մեջիտներում, քաղաքի զանազան մարզիկների, կամ երևելի մոլլաների տներում գտան վում են առանձին տեղեր, որք կոչվում են թաքիա, այդ մի քառանկյունի շինվածք է, որ պարունակում է յուր մեջ բավականին տարածություն տափարակ տեղ, որո չորեքկողմի պատերի մեջ զուգահեռաբար բաժանված են փոքրիկ օթյակներ: Նոցա մեջ նստած են հանդիսականք: Իսկ շինության մեջտեղումը, բեմի նման մի քառանկյունի բարձրության վերա, ներկայացնում են իմամների նահատակության զանազան անցքերը, որ կոչվում է շարիհ (նմանություն): Դերասանների պաշտոն կատարում են նույնիսկ մասիյխունները: Թաքեան հռովմեական կոլիզեի նման մի բան է, որ հատուկ շինված է մուհարլեմի ամիսներում այդ կրոնական ողբերգությունքը ներկայացնելու համար: Նա չունի ոչ դեկորացիա և ոչ կուլիսներ: Այդ պատճառավ դերերի փոփոխությունքը բոլորը կատարվում են աչքի առջև: Բայց չնայելով նախնական այդպիսի պարզ ներկայացման ձևին, նա մինչ այն աստիճան ներգործում է հանդիսականաց սրտին, որ դերասանների ձայնի հետ միշտ միախառնվում է ժողովրդի լացը: Այդպիսի ողբերգական ներկայացումները կրկնվում են ամբողջ քառասուն օր մինչև մուհարլեմի տասներորդ օրը. նոցա ամեն մինը հարմարեցրած է որևիցե անցքին Ալիու սերնդի կյանքից: Թեև այդ ողբերգությունքը զուրկ են բեմական արհեստի արժանավորություններից, թեև նոքա շատ տեղերում հակառակում են պատմական ճշտություններին, այսուամենայնիվ, նոցա ջերմեռանդ-կրոնական բնավորությունը, նկարագրվելով խիստ վառ գույներով արևելյան երևակայության, ներշնչում է շիաների մեջ այն խորին առասպելաբանական մոլեռանդությունը, որով նոքա անգիտակցաբար միշտ կապված են մնում իսլամի ցնորքներին:

Այդ ներկայացումները, որպես հիշեցիմք, ունեն բոլորովին կրոնական նշանակություն: Նոքա չեն համարվում թատրոնական գործոդություններ:

Ամբողջ Պարսկաստանի մեջ չկա ոչ մի թատրոն: Եվ պարսից գրականությունը բոլորովին զուրկ է բեմական աշխատություններից: Այսուամենայնիվ չէ կարելի մտածել, թե Պարսկաստանը ամենևին չէ ունեցել բեմական ներկայացումներ:

Ամեն քաղաքներում կարելի է գտանել մի խումբ մոլաշրջիկների, որք կոչվում են օյինբազներ (ներկայացողներ): Այդ մարդիկներից շատերը միևնույն ժամանակ գիտեն երաժշտություն: Նոքա հարսանիքներում և զանազան խնջույքներում ներկայացնում են փոքրիկ ծիծաղաշարժ վոդևիլներ, որ կոչվում է օյին: Կատակը այդ օյինների մեջ շատ անգամ հասնում է խայտառակ և անբարոյական տեսարանների: Այդ ժողովրդական օյինները մնացորդ պետք է լինեն նախքան մահմեդականության ժամանակներից: Իսլամի հայտնվելեն հետո ամեն մի՝ ամբոխի մարմնավոր զվարճություն գրգռող խաղերը արգելվեցան: Այնուհետև թե՛ թատրոն, թե՛ երաժշտություն և թե՛ երգեր, բոլորն ընդունեցին կրոնական կերպարանք:

Խիստ ուշ երեկոյան ես դարձա իմ իջևանը: Այն գիշեր ինձ մոտ եկավ տանուտերս, մի բավականին հասկացող երիտասարդ հայ վաճառական: Մեր խոսակցությունը մեծ մասամբ եղավ նույն ավուր հանդեսների վերա, որոնցմով ես շատ հետաքրքրված էի: Նա ինձ պատմեց, թե մուհարլեմի ամսում, ժողովուրդը գրգռված լինելով վրեժխնդրության կրքերով, շատ անգամ ծագում են թաղական կուսակցությունների մեջ արյունահեղ կռիվներ, որք հասնում են կոտորման և մինը մյուսի կայքը թալանելուն: Այդպիսի կռիվները ավելի բորբոքվում են այն սնոտի հավատքով, թե սպանվածները նոցա մեջ, ուղղակի դրախտը կմտնեին: Գլխավոր, միմյանց հակառակ կուսակցությունները զանազան քաղաքներում, որոց մեջ մուհարլեմյան կռիվներ են պատահում, կոչվում են հեյդարի և նամաթի, թե ուսկից էին ծագել այդ կուսակցությունքը և թե ինչ նշանակություն ունեին նոքա, իմ տանուտերը չկարողացավ ճշտությամբ բացատրել ինձ:

Քրիստոնյաների, առհասարակ մահմեդականության չպատկանող ազգերի դրությունը մուհարլեմի ամսում, խիստ աննախանձելի է և մի անմեզ ծիծաղը, կամ արհամարհանքը նոցա կողմից դեպի մահմեդականների սնոտիապաշտությունը, կարող էր վճռել նոցա մահվան դատակնիքը: Այդ պատճառավ հայերը և հրեայք, այդպիսի օրերում խիստ զգույշ են, նոքա հազիվ են տանից դուրս գալիս:

Միակ օգուտը, որ ծագում է մուհարլեմյան սուգերի պատճառով, այն է, որ հարուստներից շատերը այդ օրերում տալիս են իմամխե բաթի կոչված հոգեհացը, և աղքատները կերակրվում են դորանով: Զանազան մեծամեծ տների որդիներից մանկահասակ պատանիներ, հագնված արաբական ձևով, փոքրիկ տկերը ուսից քարշ տված, արծաթի թասերով ջուր և շերբաթ են բաժանում բազմությանը այդպիսի հացկերույթների և, մանավանդ, թաքեաների մեջ. նոքա կոչվում են ապպասիներ, որք ներկայացնում են Ապպասին, որը Արաբիայի անապատումը զովացրուց իմամների ծարավը: Նոցա ծնողքը ուխտել են այդ պաշտոնը յուրյանց որդիներին, որ կատարում են քանի մի տարի:

ՆԱՄԱԿ ԻԴ

Իմ նախընթաց նամակիցս գիտես, որ ես արդեն Թաբրիզումն եմ: Ես բնակվում եմ հայոց թաղումը, որ կոչվում է Արմենիստան (Հայաստան): Դա մի առանձնացած թաղ է, որ բնակեցրած է, միայն հայերով: Պատճառը շատ պարզ է, հայը, երկյուղ կրելով քաղաքի մի այլ մասումը առանձնապես ապրելուց, ստիպված է եղել միշտ մոտենալ յուր ազգայիններին և այդպիսով հավաքվել են մի տեղ: Այդ երևույթը նկատվում է համարյա ամեն ասիական քաղաքներում:

Հայոց թաղումը բնակվում են եվրոպական պետությունների կոնսուլները և եվրոպացի վաճառականները:

Քաղաքից ոչ այնքան հեռու մի արվարձան Լեյլաբաթ անունով նույնպես բնակեցրած է հայերով: Թե քաղաքից դուրս, թե ներսումը հայոց բնակիչների թիվը կարելի է մինչև 500 տուն հաշվել: Գոցա մեծ մասը գաղթականներ են Պարսկաստանի զանազան քաղաքներից և գավառներից այստեղ հավաքված, առավելապես եկել են Ղարադաղի կողմերից, չալաբիան կոչված ավազակների հաղթահարություններից ազատվելու համար:

Թեև այդ մի շատ ցավալի երևույթ է, որ հայերը, ձգելով գյուղորայքը, կենտրոնանում են քաղաքներում, և այդպիսով թողնում են հողի մշակությունը, որ գլխավոր հիմքը է մարդու ապրուստի, այսուամենայնիվ, եթե խորը քննեմք այն բոլոր ստիպեցուցիչ պատճառները, չեմք կարող մեզադրել հային, թե նա սեր չունի դեպի երկրագործությունը: Պարսկաստանի գյուղորայքում հայր ոչ միայն յուր արյան քրտինքի վաստակը զոհում է գյուղատիրոջ շահերին, այլ շատ անգամ նա յուր գլխի տերն էլ չէ:

Թաբրիզի գաղթականների մեջ ղարադաղցիները, որք մեծ մասն են կազմում, ապացուցանում են այն ճշմարտությունը, թե հայը մինչ որ աստիճան ընդունակ, գործունյա և ճարպիկ ազգ է վաճառականական ասպարիզում: Ղարադաղցին եկել է այդ քաղաքը որպես մի գռեհիկ, որ քիչ բանով կարող էր զանազանվել յուր երկրի անտառների արջերից: Միակ հարստությունը, որ բերել է նա յուր հետ հայրենական տնից, եղել է յուր մաշված տրեխները, ճանապարհորդական փայտը և պարկը: Նա սկզբում լինում է ծառա մի եվրոպական, կամ այլ վաճառականի մոտ ամենաչնչին ռոճիկով: Նորա ժրությունը և հավատարմությունը բարձրացնում է նորան մինչև գործակատարի աստիճանը: Քանի տարուց հետո նա ստանում է մի մասը յուր աղայի աշխատանքից, հետո յուր համար անկախ առևտուր է անում: Եվ դու տեսնում ես, քսան տարի առաջ թշվառ, աղքատիկ խրճիթներում բնակվող ղարադաղցին այսօր փառավոր կյանք է վայելում եվրոպական կարասիքներով զարդարված գեղեցիկ տների մեջ, և սկսում է գնել չալաբիան բռնակալներից այն գյուղերը, որտեղ ինքը մի ժամանակ ստրուկ էր, որո հողը ջրում էր յուր արտասուքով...:

Մուհարլեմի խռովությունքը դադարել էին արդեն, ես կարող էի մի փոքր համարձակ պտտել քաղաքում: Եվ մի գեղեցիկ առավոտ, իմ տանտիրոջ հետ ձի նստելով, գնացիմք ման գալու:

Նեղ, ծուռումուռ շուկաները վերջ չունեին: Անծանոթ մարդը շատ հեշտությամբ կմոլորվեր ծածկված չարշիների և փողոցների լաբիրինթոսի մեջ: Տները արտաքուստ չէին ցուցանում ոչինչ գեղեցկություն, նոցա բոլոր շքեղությունը, գեղեցիկ սեռի հետ, փակված էր հարեմի պատերի մեջ: Այդ պատճառավ, այդ հսկա, լայնատարած քաղաքը պատկերացնում է մի տխուր, ասիական կերպարանք:

Կեղտոտությունը տիրում է ամեն տեղ: Մի բան խիստ շատ էր հետաքրքրում իմ ուշագրությունը, թե ինչու, համարյա բոլոր տներում, բակերի մակերևույթը մինչև տասը, քսան արշին խոր էր ընկած քուչաների հավասարությունից: Պատճառը խիստ պարզ էր, որովհետև քուչաները չեն ավելում, չեն մաքրում աղբից, ցեխից և փոշուց, կեղտոտությունքը մնալով միմյանց վերա պնդանում են, և քուչան հետզհետե բարձրանում է:

Քաղաքի մեջ, մեծ փողոցների վերա հանդիպում էին ինձ ահագին, լայնատարած գերեզմանատներ: Այդ ընդդեմ առողջապահական կանոններին երևույթը՝ իմ տանուտերը մեկնեց նորանով, թե պարսիկները յուրյանց մեռելները նորա համար թաղում են մեծ փողոցների վերա, որ անցուդարձ անողները նոցա հոգուն աղոթք կարդային: Ես մտածում էի, որ զրադաշտական Պարսկաստանը, Արամազդի և Արիմնի տիրապետության ժամանակ, ավելի խելոքությամբ էին վարվում մեռած դիակների հետ, քան թե Մուհամմեդի շիաները, որ յուրյանց մեռելները չեն էլ թաղում հողի մեջ, այլ դնում են դատարկ փոսերում և երեսը միայն ծածկում են հողով: Որպեսզի ապականությունը բոլորովին չտիրե նորան, որովհետև մի օր նույն դիակը հանվելով պիտի տարվի Քարբալայի սուրբ հողումը յուր վերջին հանգստությունը վայելելու: Գերեզմանները

գտնվելով քաղաքի մեջ մեծ փողոցների վերա, միշտ ոտնակոխ են դառնում զանազան չորքոտանիներից, շատ անգամ ծակվում են, և իսկույն դուրս է փչում հոտած մարմինների արտայնչությունը:

Իսկ շատերը չեն էլ դնում փոսերի մեջ յուրյանց մեռելների դիակները, այն լեցնում են գերեզմանատների մոտ շինված մի հասարակաց ամբարում, որ կոչվում է դախմա, նորա լուսամուտներից միշտ դուրս է փչում թունավոր օդը:

Վերոհիշյալ երևույթները աչքի առջև ունենալով, փոքրիշատե մեկնվում է այն հարցը, թե ինչու Պարսկաստանի քաղաքների կյանքի հետ միշտ կապակից են լինում խոլերան և շատ անգամ ժանտախտը:

Խոլերայի տարածվելուն փոքր չեն նպաստում զինվորանոցները, որք շինված են համարյա քաղաքի սրտումը: Թաբրիզեցին երբեք չէ կարող հավատալ, թե քաղաքումը խոլերա կա, եթե զինվորանոցների մեջ չէին մեռնում սարվազները: Որովհետև խոլերան նախ և առաջ այստեղից է բարձրացնում յուր դրոշակը:

Թաբրիզը զուրկ է գետերից: Մի գետ Աջի-չայ անունով, յուր ջրի դառնահամ լինելու պատճառավ անպիտան է բնակիչների գործածությանը, նա ևս ամառը շատ անգամ չորանում է: Գործածության համար հարուստները — հեռու տեղերից, ստորերկրյա խողովակներով, բերած են քարհեզներ (ջրանցքներ) և նոցա ջուրը վաճառում են բնակիչների վերա: Ամեն մի թաբրիզեցին յուր տան ներքի հարկումը շինված ունի ստորերկրյա մի ամբար, որ կոչվում է աբ — ամբար, այսինքն՝ ջրի ամբար: Այդ ջրամբարները հաղորդակցություն ունեն ջրանցքների հետ, և տարենը մի քանի անգամ լեցնվում են ջրով, որտեղից ամիսներով գործ են ածում տնեցիք: Այդ պատճառավ թաբրիզեցին երբեք թարմ ջուր չունի:

Մեր զբոսանքը տևեց մինչև կեսօր: Ճշմարիտն ասած, ոչինչ առանձին զվարճություն չբերեց ինձ: Ամեն տեղ՝ միևնույն ծուռումուռ փողոցները, ամեն տեղ միևնույն տները, բոլորը միանման, տխուր, մռայլոտ, և ամեն կողմից փակված, որպես ասիական անշարժ կյանքը...

Միայն տեղ-տեղ հանդիպում են քեզ կոլոլված գունդեր. նոքա շարժվում են, նոքա առաջ են ընթանում: Նոքա նմանում են այն ուռած կապտագույն ամպերին, որք լողում են մթնոլորտի մեջ: Դու մոտենում ես: Խորհրդական սփածանելիքի ճեղքից հանկարծ կայծակին են տալիս մի զույգ կրակոտ աչքեր, սև, ախտաբորբոք աչքե՛ր... և իսկույն ծածկվում են...: Դու հասկանում ես, որ դոքա կանայք են: Խե՛ղճ կանայք, որքան ցավալի է ձեր վիճակը, տան մեջ ծածկված, դրսումը ծածկված... փա՛կ է ձեր կյանքը, թե բարոյապես և թե մտավորապես:

Իմ ուշադրությունը գրավեց միայն Գոյ-Մեչիտը, արաբացվոց մի հին մզկիթի փլատակները, ճշմարիտն ասած, պատիվ է բերում նա արևելյան ճարտարապետությանը, մոզաիկները, քանդակները, ղորանի արձանագրությամբ — ահագին մարմարիոնից քարերը՝ անհամեմատ գեղեցիկ են: Մի այլ նշանավոր հնություն կարելի է համարել Արքը, դա մի հսկա մինարեթ է, վիթխարի կերպով դիմանալով դարերի հոսանքին, մինչև այսօր կարծես իշխում է ամբողջ քաղաքի շինությունների վերա:

Ես վերադարձա իմ կացարանը, կեսօրից բավականին անց էր: Մի բանով միայն ես գոհ էի, որ այն օրվա զբոսանքը ինձանում պատճառեց սաստիկ ախորժակ ճաշելու:

Ճաշին ինձ հետ սեղանակից եղան զանազան մարդիք, որք ներկայացուցիչներ էին զանազան երկրներից եկած գաղթականների: Ես նկատում էի, նոցանից ամեն մինը յուրյանց մեջ առանձնապես խոսում էին յուրյանց գավառական բարբառով, բայց երբ խոսակցությունը դառնում էր ընդհանուր, նոքա գործ էին ածում բավականին մշակված լեզու: Այդ բանը ինձ շատ ուրախացրուց. մտածելով, երբ կանցնի հին սերունդը, թաբրիզեցի հայերը կունենան ավելի մաքուր և նոր գրականությանը մոտ լեզու, քան այլ երկրներում բնակվող հայերը:

Նոքա ամենքը գիտեին գրել կարդալ և բոլոր ժամանակը խոսում էին ուսման, կրթության, ազգասիրության, վաճառականության, հոգևորականության վերա և երբեմն մեջ էին գցում կրոնական վիճմունքներ:

Երեկոյան պահուն տանուտերս ինձ ստիպեց յուր հետ գնալ եկեղեցի, ասելով, թե այն օր տոն էր: Ես ուրախությամբ հանձն առի և քանի րոպեից հետո մեք գտանվում էիմք եկեղեցվո մոտ: Նա բավականին հոյակապ շինվածք էր, բայց շատ հասարակ ճարտարապետության գործ: Նա չուներ զանգակատուն, որովհետև քրիստոնյա եկեղեցվո զանգահարությունը արգելված է մահմեդական աշխարհում: Ժամտան մղդսին, փայտյա մուրճը ձեռքին, սովորական ժամերում, ստիպված է բախել ժողովրդի դռները և հրավիրել նորանց աղոթելու: Այսուամենայնիվ եկեղեցին լիքն էր բազմությամբ: Երևում էր, կրոնական ջերմեռանդությունը դեռ խիստ վառ էր նոցա մեջ:

Ես կանգնեցա մի սյունի մոտ, ոչ հեռու այն տեղից, որ առանձնապես բաժանված էր կանանց համար: Հարեմական դրությունը մահմեդական Պարսկաստանի երևում է և աստուծո տաճարի մեջ: Կանայքը կանգնած էին տղամարդերին անտեսանելի, որոշված և չորեքկողմից փակված տեղում: Փոքրիկ դուռը, ուսկից քահանան մտնում էր նորանց խնկարկելու կամ գանձանակ հավաքելու, ծածկված էր վարագույրով: Նոքա դուրս են գալիս յուրյանը խորանից պատկերները համբուրելու այն միջոցին, երբ բոլոր տղամարդ ժամավորքը հեռացել էին արդեն:

Ճշմարիտն ասած, կանանց դռվռոցը, նոցա քչփչոցը չթողեցին ինձ մի բան լսել ժամերգությունից, թեև առանց դորան էլ նկատելի էր, որ շատ անկարգ էր: Ամբողջ ժամանակը ես մտածում էի այն բանի վերա, թե ինչու հայ կանայք աստուծո տաճարի մեջ չէին պահպանում համեստության կանոնները, որո ընդհակառակն նոքա ընտանեկան կյանքի մեջ շատ համեստ, ամոթխած և լուռ են: Այդ երևույթը ես մեկնեցի հորանով, որ Պարսկաստանում հասարակական կյանքը խիստ սահմանափակված լինելով, կանայք հանդիպում են միմյանց միայն եկեղեցումը և այդ միակ հարաբերությունը առիթ է տալիս նորանց այնտեղ դուրս թափել յուրյանց սրտի բոլոր կրքերը: Նոցա բոլոր գանգատները, կռիվները, բամբասանքները, վճռվում են եկեղեցում:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԹԻՖԼԻՍԻՑ

ՄԻՆՉԵՎ ԱԳՈՒԼԻՍ

ՊԱՐՈՆ ԽՄԲԱԳԻՐ

Դուք հանձնեցիք ինձ հետազոտել հայ գաղթականների վիճակը, որոնք ներկա ռուս-թուրքական պատերազմի միջոցում Տաճկաստանից անցան դեպի ռուսական Հայաստանը: Ձեր առաջարկությունը այնքան կարևոր էր, որքան և մոտ էր իմ սրտին: Բայց ցավում եմ, որ լիակատար բավականություն չի պիտի կարողանամ տալ Ձեր հարցասիրությանը: Դուք իմ ուղևորության մեջ կգտնեք այնքան միայն վերաբերող գաղթականների վիճակին, որքան կարող է հաղորդել մի ճանապարհորդ, որ բոլորովին առանձին պաշտոնով շտապում է գնալ մի օտար երկիր:

Արդարև, ներկա պատերազմիս միջոցում հայերի նոր գաղթականությունը, որպես մի պատմական իրողություն, ամենայն ուշադրության արժանի է: Բայց ափսո՛ս այդ մասին շատ փոքր գրվեցավ, շատ փո՛քր խոսվեցավ: Մենք լսեցինք միայն, որ 3000 հայ ընտանիք թողեցին իրանց հայրենիքը և անցան Արարատյան նահանգը, բայց թե հետո ի՞նչ եղան, ո՞ւր մնացին և ի՞նչ վիճակի մեջ են ապրում, — դրանց մասին խիստ աննշան տեղեկություններ ունինք:

Թիֆլիսից ես դուրս եկա փոստային կառքով, թեև ունեի արքունի անցագիր, բայց պատերազմի պատճառով զնվորական աստիճանավորների անցուդարձն այնքան հաճախ էր, որ անկարելի էր լինում յուրաքանչյուր իջևանում գտնել պատրաստի կառք և ձիեր: Ստիպված էի օրերով սպասել, մինչև հերթն ինձ հասներ, որ ճանապարհ ընկնեի: Այս համընթացությունը ինձ միջոց էր տալիս մասամբ կատարել Ձեր հանձնարարությունը, պարոն խմբագիր: Ես սկսում էի գրել իմ ուղևորության նկատողությունները, և շատ անգամ վարձում էի մի ձի, դուրս էի դալիս փոստային ճանապարհից, և սկսում էի թափառել մերձակա գյուղերում: Ուր և գնում էի, իմ առաջին աշխատությունը լինում էր որոնել ալաշկերտցիք. բայց նրանց գտնիլը շատ հեշտ էր, որովհետև ըստ մեծի մասին տարածված էին նույն գծի մերձակա գյուղորայքում, որոնց միջով անցնում էր իմ ճանապարհը:

Մի քանի տեղեր հեռավորության պատճառավ կամ հարմարություններ չգտնելով, ես գնալ չկարողացա, բայց որքան տեսա և գրեցի, այդ ևս բավական է մի փոքր գաղափար տալու, թե որպես է ապրում հայ գաղթականը...

ՐԱՖՖԻ

Ա

Առաջին տպավորությունները Թիֆլիսից դուրս գալուց հետո: — Կուր գետը և նորա բողոքը: — Թաթառներ և նրանց կենցաղավարությունը: — Ջհանգիր-խան: — Հայոց գյուղորայք և Դիլիջանի անտառը: — Վիրավորյալներ պատերազմի դաշտից: — Ղարաբաղցի հայ կամավորի պատմությունը:

Երբ ես Թիֆլիսից դուրս եկա, եղանակը պարզ էր: Չնայելով, որ սեպտեմբերի կեսը անցել էր, տոթը տակավին անտանելի էր: Իմ ճանապարհորդական սայլակը սրընթաց կերպով վազում էր կոկած խճուղու վերա, որի հետ զուգահեռաբար ձգվում էին հեռագրական թելեր, մինը արույրի, մյուսը փայտե ձողերի վերա պնդացրած: Երևակայում էի, թե գտանվում եմ մի եվրոպական աշխարհում: Այս տպավորությունը երկար չէ տևում, մին էլ տեսնում ես, անցավ ավանակների մի քարավան, մարդիկ նրանց վերա նստած, անդադար շարժում են իրանց ոտները, ծակծկում են նրանց վզերը ձեռքներումը բռնած իրանով, որ ուշիմ կենդանիքը առաջ գնան: Ահա անցնում են մի

քանի թաթառներ եզների վերա նստած. սանձի փոխարեն մի պարան կապած է նրանց եղջյուրներից, ծեծելով առաջ են մղում ողորմելի գրաստները: Հանկարծ քո ուշադրությունը գրավում են զանգակների խուլ-ներդաշնակավոր ձայներ, նայում ես, մի շարք ուղտեր չափավոր քայլերով ընթանում են ճանապարհի երկարությամբ, թուրք ուղտապանը նրանց վերա նստած, օրորում է և ինքնաբավական հաճությամբ ծխում է յուր կարճլիկ չիբուխը: Այդ էլ անցավ: Ահա գալիս են արաբաներ, գոմեշներով լծած, և նրանցծանր անիվների ճռճռոցը ահագին աղմուկ է բարձրացնում: Դու կարծում ես, նրանք շինված են գուցե այն ժամանակներում, երբ երկաթի գործածությունը տակավին ծանոթ չէր մարդկանց. մի մեխ անգամ նրանց վերա չկա. բոլորը շինված է փայտից, հին կոշտ կոպիտ ձևով: Արաբաների վերա կապերտից կազմված են վրանաձև խուղեր, սրոց մեջ երևում են կանացի կերպարանքներ, երեխաներ, մի քանի հավեր ոտներով կապած վրանի ձողերին և կթոցներում դարսած զանազան իրեղեններ: — Դա թափառաշրջիկ խաշնարածների մի ուրդ է, որ վերադառնում է արոտատեղերից: Եվ հանկարծ այդ հնադարյան խառնուրդի միջով սլանում է մի փառավոր կառք, որ տանում է յուր մեջ մի օրիորդ վերջին մոդայի ձևով հագնված, և մի տղամարդ կողքին նստած...

Ինչե՛ր չեն գալիս ու չեն գնում քո մտքի մեջ, երբ նայում ես այդ խառնիճաղանջ բազմությանը: Դու տեսնում ես մարդկային քաղաքակրթությունը յուր զանազան ելևէջների վերա, սկսյալ խորին նահապետական օրերից մինչև մեր օրերը: Դու տեսնում ես զանազան երեսներ, զանազան հագուստներ, լսում ես զանազան բարբառներ:

Թիֆլիսից դուրս գալով, որքան գնում է մարդ, համարյա անապատների միջով է անցնում: Լեռները, բլուրները, դաշտերը մերկ և այրված են բոլորն: Միայն ձախ կողմում հեռվից հետևում է ճանապարհորդին Կուր գետը, որ յուր ծառազարդ եզերքով ձգվում է որպես գեղեցիկ ժապավեն: Նա ձգվում է զուգահեռաբար փոստային ճանապարհի հետ, իսկ տեղ-տեղ թաքնվում է բլուրների հետքում և կրկին երևան է գալիս, կարծես քեզ ասելու համար այս խոսքերը. տե՛ս, որքա՛ն գեղեցիկն են իմ եզերքը... Բայց մարդիկ ծույլ են, ինձանից օգուտ քաղել չեն գիտում, որ նրանց դաշտերն էլ գեղազարդեմ...

Մինչև Աղստաֆա բնությունը միակերպ մեռած է: Տեղ-տեղ երևում են հողակույտեր: Այդ հողակույտերը շատ նման են այն շինվածքներին, երբ խլուրդները իրանց ստորերկրյա բնակարաններից հողը դուրս փորելով, իրանց բույների վերա բլրակներ են կազմում: — Իսկ այդ հողակույտերի ներքո մարդիկ են բնակվում գետնափոր խրճիթներում: — Դրանք թուրքի գյուղեր են: Թիֆլիսից մինչև Քարվանսարա կոչված հայոց գյուղը անդադար հանդիպում են այսպիսի բնակարաններ. անծանոթ մարդը երբեք չէ կարող կարծել, թե նրանք պատկանում են մարդկանց, թե նրանց մեջ կարող էին ապրել կենդանի արարածներ: Այդ գետնափոր խրճիթները մի տեսակ գերեզմաններ են, այն զանազանությամբ միայն, որ նրանց մեջ կարելի էր շունչ քաշել:

Ինձ պատահել է ամառը ևս անցնել այս գյուղերի միջով, մի մարդ, մի անասուն անգամ չէ երևում, բոլոր խրճիթներն դատարկ են: Այն ժամանակ նրանք գնացած են լինում հեռավոր լեռների վերա իրանց անասունների համար արոտ որոնելու: Իսկ այդ անգամ, երբ ես անցա, սեպտեմբերը մոտենում էր յուր վախճանին և խաշնարածները արդեն վերադարձել էին յայլաղից (արոտատեղերից): Եվ շատ անգամ տեսնում ես, յուր խրճիթի բլրակի վերա կանգնած է մի տղամարդ, կռացած յուր երկայն մահակի վերա: Մի ահագին խենջար քարշ է ընկած յուր գոտուց և լայնաբերան կախած է կողքից: Նրա այրական դեմքը քաջազնական է, և ավազակային

աչքերում կարդացվում են այս խոսքերը. — Եթե դու գիշերով անցնեիր, իմ հաշիվը կվերջացնեի քեզ հետ...

Այս կողմերում թաթառները գլխավորապես տարածված են Ղազախի, Բորչալուի և Շամշադինի գյուղորայքում, և նրանք տվել են մեզ ամենաընտիր ավազակներ, որպիսի են Քոռ-Ջամալը, Իսմայելը, Դաշի-Դամուրը և այլն: Եվ ամեն տարի Մեքքայի փոխարեն բազմաթիվ ուխտավորներ ճանապարհ են գցում դեպի Սիբիրիա...

Այս կողմերի թաթառները կրոնքով պատկանում են սուննի աղանդին. մի քանի գյուղեր միայն ունին մոլլաներ, որոնց գործն է՝ ծնածը թլփատել, մեռածը թաղել և քեբինը (ամուսնությունը) հաստատել: Վարժարանը նրանց մեջ աներևակայելի բան է. շատ գյուղեր մեջիտ ևս չունեն: Այդ պատճառավ ժողովուրդը զուրկ է մնացել մինչև անգամ մահմեդական կրոնի բարոյական ազդեցությունից է բավականանում է կույր մոլեռանդությամբ միայն, իրան մահմեդական և աստուծո արքայության ժառանգորդ համարելով, իսկ ոչ-մահմեդականներին — դժոխքի որդիք:

Աշխատության մեջ շատ ծույլ են այս կողմերի թաթառները, ցանում են այնքան միայն, որքան իրանց պետք է և գլխավոր պարապմունքը նվիրած են խաշնարածության: Տղամարդիկ որևիցե արհեստով չեն պարապվում. կանայք միայն խուզում են իրանց ոչխարների բուրդը, թել են մանում և կապերտներ են գործում: Նրանց կապերտներն թեև այնքան նուրբ չեն, բայց նշանավոր են իրանց տոկունությամբ: Թաթառները գնում են զանազան արհեստագործական արդյունաբերություններ Թիֆլիսում, այնտեղ վաճառելով իրանց անասունները և մասնավորապես ալյուր: Այն ազարակային բերքերը, որ ստացվում են Թիֆլիսում Սողանլուխի կողմերից, այստեղ Պարսկաստանից եկած թուրքերի աշխատության արդյունքն է. տեղացիք դեռ անընդունակ են երկրագործության այս ճյուղի մեջ:

Մի իջևանում ոչինչ չգտա ուտելու և ստիպված եղա գնալ մերձակա թուրքի գյուղ մի բան գնելու: Իսկույն մի խումբ գայլանման շներ թափվեցան իմ վերա: Ինձ պաշտպանեց մի կին, որ իսկույն դուրս թռավ գետնափոր խրճիթի ծակից: Կինը ամեն ժողովրդի մեջ ավելի փափուկ սիրտ ունի: Նա շատ ցավեցավ տեսնելով, որ իմ սյուլտոյի փեշը ճղած է:

—Հաց ունի՞ս, — հարցրի նրանից:

—Այս րոպեիս կպատրաստեմ, — ասաց նա:

—Ուրիշ ի՞նչ ունիս:

—Կաթ, մածուն, ձու կգտնվի:

Նա հրավիրեց ինձ նստել յուր խրճիթի դռանը գտնված հողաթամբի վերա, մինչև ինքը կպատրաստեր ինձ համար ուտելիք: Ես սիրով հանձն առա նրա հրավերը, մտածելով, որ փոստային իջևանում պատրաստի ձիեր չկային, հարկավոր էր մի քանի ժամ սպասել: Իսկույն հավաքվեցան իմ շուրջը մի քանի կիսամերկ երեխաներ ահագին փափախներով (գլխարկ) և սկսեցին հետաքրքրությամբ նայել ժամացույցիս շղթայի վերա, կոշիկներիս վերա, նկատողություններ անելով և խնդալով: Դրանք տանտիկնոջ որդիքն էին: Հազիվ թե մի ամենափառավոր պալատ յուր բոլոր կենսական հարմարությամբ կարող է ծնել այնպիսի առողջ և

պնդակազմ երեխաներ, որպես էին այն բոբլիկ լամուկները: Երեխայք սիրելի են միշտ, ինչ ազգից և լինեին նրանք: Ես սկսեցի հանաքներ անել նրանց հետ: Մայրը ուրախանում էր, երբ տեսնում էր, որ յուր զավակները սիրվում են: Նա իսկույն կրակ վառեց օջախի մեջ, դրեց նրա վերա երկաթե կասկարան և նրա վերա նույնպես երկաթե մի լայն սինի (սաջ). այնուհետև իսկույն խմոր հունցեց և նրանից կլորիկ բաղարջներ շինելով, ձգեց սինու վերա: Այգ գործողությունը կատարվում էր զարմանալի արագությամբ: Մի քանի րոպեի մեջ նոր թխած հացը արդեն պատրաստ էր:

Ես բոլոր ժամանակը լուռ նայում էի ժիր տանտիկնոջ վերա: Նա շատ հասակավոր չէր, երեսուն տարեկան հազիվ կլիներ, բայց յուր նուրբ և ջլուտ կազմվածքով եղջերվի նման դյուրաշարժ էր: Հագուստը խիստ պարզ էր յուր ինքնուրույն ձևով: Կարմիր շիլայի շապիկը հասնում էր մինչև ոտները, որի կուրծքը սկսյալ պարանոցեն մինչև գոտին ուներ լայն բացված օձիք, եզերավորած արծաթի դահեկաններով, պարանոցը, բազուկները և սրունքները զարդարած էին գույնզգույն հուլունքներով: Շիլայի շապկի վերա հագած ուներ կարճլիկ կուրտիկ, նույնպես զարդարած դահեկաններով: Գլխի պաճուճանքը ավելի փառավոր էր. նա բաղկանում էր գույնզգույն թաշկինակներից, որ կազմում էին գագաթի վերա մի կոնաձև բարձրություն և իրանց դրոշակներով թափվում էին թիկունքի վերա: Ամեն մեկ շարժվելիս, նա ամբողջ մարմնով զնգզնգում էր. այդ ձայնը պատճառում էր նրա մեջ մի առանձին բերկրություն, որ ավելի նման էր կանացի ցուցամոլության:

Այս կողմերի թաթառների կանայքը, չնայելով մահմեդական կրոնի դրած խիստ արգելքներին, իրանց երեսը չեն ծածկում, տղա մարդից չեն թաքնվում, այլ արձակ համարձակ խոսում են: Այդ պետք է վերաբերել նրանց ազատ կյանքին, որովհետև որպես խաշնարած մի ցեղ, զերծ են մնացել փակված կյանքից: Բայց ինձ երևաց, որ տանտիկինը ուրախ չէր, մի ներքին տխրություն երևում էր դեմքի վերա: Նա շատ սակավ էր խոսում:

Ես խիստ ախորժանոք կերա պատրաստած ճաշը. երբ առաջարկեցի փող, նա չընդունեց, ասելով.

—Ափսո՜ս որ մարդս տանը չէ, և մեր ոչխարները դեռ չեն դարձել դաշտից, մենք քեզ համար մի գառ կմորթեինք և օրերով մեր տանը կպահեինք:

—Այսքանով ես դարձյալ շնորհակալ եմ. բայց դուք ընդունեցեք արծաթը, — ասացի ես:

—Մենք սովորություն չունինք, — պատասխանեց նա. — եթե դու ուզում ես մեզ մի լավություն անել, մի թուղթ գրիր:

—Ի՞նչ թուղթ:

—Գրիր, որ եղբորս թողնեն բանտից:

—Մի՞թե նա բռնված է և ի՞նչ բանի համար:

Տիկինը փոխանակ պատասխանելու, սկսեց գանգատվիլ ժամանակի վատության վերա, ասելով.

— Վա՜տ ժամանակներ են, պարոն, մի բանի ձեռք չես կարողանում դիպցնել, իսկույն բռնում են ու ծակն են կոխում... էլ ինչո՞վ պետք է ապրել, տուն ու տեղ պահել... բայց այսպես չէր առաջ...

Ես հասկացա, որ ավազակուհու ինձանից պահանջածը մի խնդիրք գրել էր, որով նա հույս ուներ, թե յուր եղբայրը կազավի բանտից: Բայց դժբախտաբար ես ոչ փաստաբան էի և ոչ խնդիրք գրող, որ կարողանայի ազատել մի քրեական հանցավոր:

Ես իմ շնորհակալությունը հայտնելով հեռացա, երբ իջևանից իմացում տվին, թե ձիերը պատրաստ են:

Փոստային իջևանների սայլապաններն այս կողմերում ըստ մեծի մասին հայեր են: Ես եկա, սայլակը տակավին լծած չէր դեռ նոր օծում էին անիվները և ձիերը դուրս քաշում ախոռից: Ավելի քան տասը մարդիկ և ինքն ստարոստան զբաղված էին այս գործով. մի հարայ-հրոց էին բարձրացրել, որ աստված ազատե. մինը ձիու վերա էր բարկանում, մյուսը սանձերը և սայլի թոկերն էր այս կողմ և այն կողմ քաշքշում, երրորդը քաղաքավարի հայհոյանքներ էր թափում բերնից. մի խոսքով՝ շունը տիրոջը չէր ճանաչում: Մի ամբողջ ժամ տևեց այդ բաբելոնյան խառնակությունը, տակավին սայլակը պատրաստ չէր: Ահա հայի ամեն գործ այսպես է կատարվում, մտածում էի ես. խոսում են ու խոսում, բայց չեն շինում: Այդ խիստ հատկանիշ է մեր բնավորությանը:

Մութը պատել էր, երբ ճանապարհ ընկա, թեև գիշերով այս կողմերում շատ վտանգավոր է ուղևորությունը, բայց ի՞նչ պետք է արած...

Գիշերից բավական անցել էր, երբ հասա Աղստաֆայի իջևանը, այստեղ ես ծանոթացա նորին պայծառափայլության՝ Ջհանգիր-խանի հետ, որ դառնում էր Եվրոպայից, Պարսկաստան էր գնում: Նորին պայծառափայլությունն երևելի Սուլեյման-խանի որդին է, որ յուր ժամանակին Պարսկաստանի առաջնակարգ պետական անձինքներից մեկն էր. նա երկար ժամանակ վարեց ամբողջ Շիրազի և Սպահանի նահանգների փոխարքայությունը և յուր հավատարիմ ծառայության փոխարեն ստացավ տիտղոս՝ մոհտամիդ-դովլա (պետության հավատարիմ): Նա ազգավ հայ էր և մինը այն ազնվականներից, որ Աղա-Մամատ-խանը Թիֆլիսից տարավ Թեհրան: Իսկ որդին՝ Ջհանգիր-խանը, այժմ Դռան մոտ նույն նշանակությունն ունի, որպես յուր արժանահիշատակ հայրը: Նա յուր անշահասեր և հավատարիմ ծառայությամբ արժանացած է միրփանջի (գեներալ-ինֆանտերիայի) աստիճանի: Ջհանգիր-խանը վարում է մեծամեծ պաշտոններ, նա ընդհանուր Պարսկաստանի զինապետը և վառոդապետն է. նա, որպես հմուտ մեքենագետ և ճարտարապետ, առաջինը եղավ, որ Թեհրանում հիմնեց մի գործարան թնդանոթներ ձուլելու և զինվորների ասիական զենքերի ձևը եվրոպականի փոխեց: Բացի դրանից Ջհանգիր-խանը Շահի գաղտնի խորհրդարանի անդամ է, իսկ արքունիքում կատարում է գլխավոր սենեկապետի պաշտոն: Ջհանգիր-խանը ունի և զանազան գրական աշխատություններ պարսից լեզվով, որպես է նրա Տելեմաքի թարգմանությունը ֆրանսերենից: Իբրև պետական անձ նա խիստ գործունյա է և հանճարեղ, և իբրև մարդ ազնիվ է և բարի: Նա ունի մի եղբայր ևս Նարիման-խան անունով, որ մի Ժամանակ Աղեքսանդրիայի հյուպատոս էր պարսից կողմից, դա երևելի Տատյանների փեսան է և շատ անգամ պարսից մեծամեծ ծառայությանը մեջ մտած է:

***

Աղստաֆայից սկսած բնությունը հետզհետե կենդանանում է, չոր ու ցամաք լեռները, բլուրները և դաշտերը ծածկվում են թփերով ու մացառներով, և երբ ճանապարհորդը մտնում է Դիլիջան գետի

հովտի մեջ, ամբողջ տարածությունը հովանավորված է թթենի ծառերով և դարևոր ընկուզենիներով: Այս տեսարանը միակերպ է մինչև հայոց Քարվանսարա գյուղը, իսկ այստեղից սկսվում է Դիլիջանի գեղեցիկ անտառը: Այնուհետև երևում են հայոց գյուղորայք: Խճուղին, ոլոր-մոլոր պտույտներ անելով, դնում է մի նեղ ձորի միջով և Դիլիջանի սրընթաց գետը չէ բաժանվում ճանապարհորդից: Տեսարանները հետզհետե փոխվում են, երևան հանելով նորանոր պատկերներ՝ նոր գեղեցկությամբ:

Հայոց գյուղորայքը թե իրանց դիրքով և թե շինությունների ձևերով շատ չեն զանազանվում թաթառների գյուղերից, որոնք մի մասնավոր նկարագիրը տեսավ ընթերցողը: — Դարձյալ գետնակոր խրճիթներ, դարձյալ մարդիկ ապրում են խլուրդների նման ստորերկրյա ծակերի և խորշերի մեջ: Բայց թաթառների այս տեսակ կեցությունը հասկանալի է, նա առաջ է եկած ավելի տեղական հանգամանքներից. նրանց բնակած տեղերում ծառ, փայտ կոչված բաներ չկան: Բայց բոլորովին աններելի է Դիլիջանի անտառներում գետնի տակում ապրիլ:

Այս կողմերի հայերը շատ նման են իրանց հարևան թաթառներին և հագուստի ձևերով ու գյուղական տնտեսությամբ: Երկրագործությամբ սակավ են պարապվում, որովհետև անտառներում ցանելու հողեր շատ քիչ ունեն: Այս հանգամանքը պետք է զարգացներ նրանց մեջ անասնապահությունը, որո համար տեղական հարմարություններ ունին. բայց դրա մեջ նույնպես ավելի առաջ չեն գնացած, անասուններ պահում են այնքան, որքան իրանց պետք է, այսինքն՝ թե բերքը և թե նույնիսկ անասունները այնքան չեն բազմացնում, որ վաճառքի նյութ դառնան:

Շատերն ունեն հին ձևով արաբաներ, եզ կամ գոմեշ լծած, որ բանեցնում են ծանրություններ փոխադրելիս: Բայց նրանք, որ անտառների խորքումն են բնակվում և հեռու են փոստային ճանապարհից, շատ աղքատության մեջ են ապրում:

Բայց տեղ-տեղ երևում են դուքաններ, համեմատաբար ավելի փառավոր շենքերով. հայ մանրավաճառը դարսել է նրանց մեջ ամեն տեսակ իրեղեններ և փող է որսում: Այս դուքաններում ամեն տեսակ բաներ ծախվում են, սկսյալ գինուց, արաղից, պանրից, սոխից, սխտորից, մինչև թեյ, շաքար, երեխայոց խաղալիքներ և զանազան տեսակ գործվածներ: Այնտեղ ցանկացողը կարող է նաև ճաշ և ընթրիք ստանալ: Ինձ պատահեց այսպիսի մի դուքանում փոքր-ինչ ճաշել: Անգութ դուքանչին այնպես անողորմ կերպով կողոպտեց ինձ, որ ես իսկույն մտաբերեցի Տենարդիեի պանդոկը «Թշվառների» մեջ...

Դիլիջանի անտառում ծառերի խուլ և ստվերախիտ հովանու տակ շատ անգամ տեսնվում են վրանների ամբողջ շարքեր, որոնց մեջ դարմանում են պատերազմի դաշտից բերած վիրավորները: Նույն վրանների մոտ տեսնվում են թարմ գերեզմանատներ, մի-մի սև խաչ միայն տնկած անշուք հողադամբարանի վերա: Ովքե՞ր են պառկած այն խաչերի տակ, ի՞նչ ազգից են, — հայտնի չէ. ոչ մի արձանագրություն չէ պահպանել նրանց հիշատակը... Հայտնի է միայն, որ կռվի դաշտից բերված զինվորներ են:

Ինձ պատահեց մի գյուղացի քահանա, որ յուր տիրացվի հետ դիմում էր դեպի վրանները: — Ու՞ր, տեր հայր, — հարցրի նրանից: — Այստեղ մի հայ տղա է մեռած, գնում եմ թաղեմ, — ասաց նա և հեռացավ:

Ես հետաքրքրվեցա մոտենալ վրաններին, բայց մեռելի մոտ չգնացի. ինձ գրավում էին կենդանիքը: Յուրաքանչյուր վրանում կազմված էր երկու մահճակալ ցամաք ոստերից հյուսած, որոնց վերա պառկած էին դեղնած, արյունաքամ եղած հիվանդներ: Այստեղ ու այնտեղ սպիտակ գլխարկներով պտտում էին մանկահասակ աղջիկներ, դրանք «գթության քույրեր» են:

Ինձ գրավեց մի երիտասարդ, որ դեռ ոչ բոլորովին առողջացած, մի ծառի տակ նստած էր վրաններից հեռու: Նա նստած էր միայնակ և տաքանում էր վաղորդյան արեգակի ճառագայթներով: Ես մոտեցա նրան, երբ ասացին, որ երիտասարդը հայ է: Նա յուր մաշված տկարության մեջ տակավին պահպանել էր այրական քաջազնությունը: Երիտասարդը ղարաբաղցի էր, մինը այն հայ կամավորներից, որ կոտորվեցան Բայազետի մոտ: Նա խնդրեց ինձանից ծխախոտ. ես շինեցի նրա համար մի սիգար, երբ նշմարեցի, որ ձեռքերը դողդողում էին: Ինձ շատ հետաքրքրական էր լսել Բայազետի անցքը այն տղամարդից, որ նույն կռվի հերոսներից մեկն էր: Նա հաճեցավ պատմել:

— Երբ Տեր-Ղուկասովն, — ասաց նա — առաջ գնաց դեպի սուրբ Հովհաննեսի և Ալաշկերտի կողմերը, Բայազետը պահպանելու համար թողեց շատ փոքր զորք, — մի քանի հարյուր սալդատներ միայն և նույն թվով ձիավորներ, որ հավաքված էին հայ և թուրք կամավորներից: Եվ ավելի մեծ զորություն այնտեղ պահելու պետք չկար, քանի որ ոչ մի կողմից վտանգ չէինք սպասում: Թե հայ և թե թուրք կամավորները խառն էին միմյանց հետ, թուրք խաների գլխավորության ներքո:

Բայազետի հայերն, որ ամեն կողմից մեզ լուրեր էին բերում, շատ անգամ ասում էին, թե քուրդերի և բաշիբոզուկների մեծ բազմություն մի շեյխի44 առաջնորդությամբ գալիս են Բայազետի վերա և նրանք խնդրում էին, որ վաղօրոք իրանց թույլ տրվի հեռանալ Բայազետից: Ոչ ոք նրանց չէր լսում, և մանավանդ մի մարդ հավատացնում էր, թե բոլորը սուտ է, և ամենևին երկյուղ չկա: Այս մարդը մի կապալառուի գործակատար էր, որին հանձնված էր, որպես ասում էին, բավականին մեծ գումար գարի գնելու համար: Նա քաղաքի մեջ ազդեցություն ունեցող մարդերից մեկն էր: Թե ի՞նչ մտքով էր նա մեզ խաբում, ես չգիտեմ, միայն բայազետցի հայերը, երբ որ տեսան քուրդերը մոտենում են, իրանց իրեղենները թաքցրին հարևան թուրքերի տներում, այն մտքով, որ նրանց մոտ կարող էին ազատ պահել թշնամու հափշտակությունից: Այդ մի տեսակ պարտք էր, որ հայերը պահանջում էին նրանցից, որովհետև ռուսներն առաջին անգամ Բայազետ մտնելու ժամանակ թուրքերն էին իրանց կայքը թաքցրել հայերի տներում, մտածելով, որ գուցե կողոպտեն ռուսները:

Քրդերը և բաշի-բոզուկները եկան մոտ 20 հազար հոգի բազմությամբ, նրանց հետ միացած էին ավելի քիչ թվով կանոնավոր զորք: Բայազետը պաշարվեցավ: Մեր սալդատները և կամավորների մի փոքր մասը հազիվ կարողացան բերդը մտնել և այնտեղ պաշտպանվել: Մենք մնացինք բերդից դուրս, որովհետև ամենիս համար տեղ չկար... Բերդի մեջ մտնողների թվումն էր և այն մարդը, որ մեզ հավատացնում էր, թե քրդեր չեն գալու:

Քրդերը ոչ միայն տաճկաստանցիք էին, այլ նրանց հետ խառնվել էին նաև պարսկահպատակ քրդեր, և նրանք տեղային քրդերից, որոնք ընդունել էին ռուսաց հպատակություն: Այդ դեռ բավական չէ, թշնամու կողմն անցան և զիլանցի քրդերը, որոնք վաղուց ռուսաց հպատակներ էին և բնակվում էին Արարատյան նահանգում: Այդ չարագործներն էին, որ կողոպտելով Ալաշկերտի

գյուղորայքը, հափշտակեցին շատ կանայք և աղջիկներ, տարան Արագած լեռների վերա, և այնտեղ իրանց գազանական կիրքը կատարելեն հետո, բոլորին սպանեցին:

Մենք, հայ ձիավորներս, որպես ասացի, մեծ մասամբ բերդից դուրս մնացինք: Մեր մահը արդեն հասել էր. բայց վճռեցինք կռվիլ և այնպես մեռնել: Մերոնք լավ էին ընդդիմանում, քանի որ վառոդ և գնդակ ունեին, բայց երբ որ բոլորը սպառվեցավ, այնուհետև սկսեցին սրերով վրա տալ: Բայց մեր անբախտությունը նրանումն էր, որ մենք կոտորվում էինք երկու կողմից — թշնամուց և մեր ընկեր թուրքերից: Մեզանից ազատվեցան նրանք միայն, որ փախան, իսկ մնացածները բոլորն ընկան:

Այնուհետև քրդերը մտան քաղաքը: Սկսվեցավ սարսափելի կոտորածը: Բարբարոսի սուրը ոչ սեռի էր նայում և ոչ հասակի, պատահածը միակերպ մորթում էր: Քրդերի հետ խառնվեցան նաև տեղային թուրքերը: Այնպես որ, Բայազետի 400 տուն հայ բնակիչներից միայն 100 ընտանիք ազատվեցան դեպի Պարսկաստանի Մագու քաղաքը փախչելով45, իսկ մնացածը կամ սպանվեցան, կամ քրդերի ձեռքը գերի ընկան:

Բայազետի հայերը հարուստ էին, այս պատճառով հափշտակությանը և կողոպուտին ոչ թիվ կար և ոչ համար. ինչ կարողանում էին վեր էին առնում, որ չէին կարողանում՝ կրակ էին տալիս և այրում էին: Մի քանի օրվա մեջ այն գեղեցիկ քաղաքը ավերակ դարձավ:

Ես ընդհատեցի իմ խոսակցին, հարցնելով, թե ի՞նչ եղավ այն պարոնի գարին, որ հավատացնում էր, թե քրդերը չեն գալու:

— Չգիտեմ, — ասաց նա, — միայն չար լեզուները այսպես էին պատմում, թե նա իսկապես գարի չուներ, միայն գնելու համար մեծ գումար ուներ յուր մոտ, որ առնելով բերդը քաշվեցավ: Ասում են, թե նա սիրով սպասում էր մի այսպիսի սարսափելի խռովության, որ յուր խազեիններին ասե, թե կողոպտվեցա...

— Բայց ի՞նչ եղան բերդի մեջ մտնողները, — հարցրի ես:

— Նրանք երկար մնացին այնտեղ, անտանելի տանջանքով համբերելով քաղցի և ծարավի, մինչև մի աբարանցի հայ տղա, որ լավ քրդերեն խոսել գիտեր, իրան քուրդ ձևացրուց և քրդերի բազմության միջից անցնելով, խաբար տարավ և այնուհետև Տեր Ղուկասովն եկավ նրանց ազատեց:

Այստեղ վիրավորը կտրեց յուր պատմությունը, ավելացնելով. — Շա՜տ բան կա ասելու, բայց լեզուս չէ բռնում որ ասեմ... այս տեղը, որ ծակեց գնդակը (նա ցույց տվեց յուր թիկունքը), թշնամու գնդակ չէր, այլ իմ ընկեր թուրքը զարկեց: Նա զարկեց այն ժամանակ, երբ ես իմ հրացանը ուղղեցի դեպի քրդերի առաջնորդ շեյխը, որ սպիտակ պատանը հագին առաջ էր ընկած և քաջալերում էր յուք կատաղի զինվորները...

Բ

Սևանա լիճը: — Աշոտ Երկաթ: — Հայ գաղթականներ: — Եզիդիներ: — Հայ գաղթականների վիճակը: — Ախտա գյուղը: — Տիրացուի խրճիթը: — Գաղթականի մահը: — Ծերունի

ալաշկերտցին ու նրա խոսակցությունները: — Ինչպե՞ս են վարվում տեղացի հայերը գաղթականների հետ:

Դիլիջանի անտառը վերջանում է մալականների Սիմյոնովկա կոչված գաղթաշենքի մոտ, որից փոքր-ինչ հեռու ճանապարհից դուրս ընկած է հայոց Բոզիգյուղը: Այստեղից սկսյալ թեև սարերը ծառերից մերկանում են, բայց նրանց պարարտ սև հողը ծածկվում է ճոխ արոտներով, որոնք թավիշյա կանաչ պաստառների նման տարածվելով լեռների ալիքավոր բարձրավանդակի վերա, հետզհետե ներկայացնում են ավելի գեղեցիկ տեսարաններ:

Ճանապարհը բարձրանում է միշտ դեպի վեր ու վեր: Հանկարծ երևում է Սևանա լիճը յուր հիանալի գեղագրական եզերքով: Նա որպես պարզ-կապտագույն հայելի դրած է լեռնային շրջանակի մեջ, մի քանի հարյուր ֆուտ բարձր ծովային մակերևույթից: Երեկոյան ժամն էր, երբ հասա այստեղ: Հեռվից տեսնվում էին, թափանցիկ մառախուղի միջից դուրս ցցված, նոր Բայազետի սարերի ձյունապատ գագաթները: Արևի վերջալույսը ճառագայթելով նրանց վերա, ոսկեջրել էր ամպերը կարմիր-հրագույն բոցերով, որոնք միախառնվելով լճակի մանիշակագույն տարածության հետ, կազմում էին մի հիանալի տեսարան, որո նմանը գուցե միայն Զվիցերիայում կարելի է տեսնել:

Իմ սայլակը այժմ սկսեց լեռնային բարձրությունից դեպի ցած իջնել: Ներքևում, լճի ափերի մոտ, երևում էին հայոց Չիբուխլու գյուղի խրճիթները: Լեռներից ոչխարներին քշում էին դեպի գյուղը. մի տեղ կալ էին կալսում, մի տեղ հնձում էին. գյուղական կյանքը եփ էր գալիս յուր անխոնջ գործունեության մեջ: Երևում էր, որ այդ մարդիկը ծույլ չէին. բայց ինչո՞ւ այնքան աղքատ էին...

Սևանա լիճը շրջապատող աշունքը շատ նման է գարունքի: Այստեղ բնությունը, կարծես, նորից աշխատում է վերադարձնել յուր մանկությունը ասելով, թե ես ծերանալ չեմ ուզում: Սար ու դաշտ և ձորեր բոլորը ծածկված են կանաչով: Ամառվա տոթերից խամրած ծաղիկները նորից կոկոն են արձակում, նորից բացվիլ են սկսում:

Մինչև մալականների Ելենովկա գաղթաշենքը ճանապարհը գնում է լճի եզերքով: Երբ տասն և հինգ վերստի չափ առաջանում ես, ջրի կապտագույն մակերևույթի վերա, եզերքին մոտ, երևում է մի մթին կետ, որ գալով ընդարձակվում է և կղզու ձև է ստանում: — Դա Սևանա անապատն է: Ահա երևում են կաթուղիկեի խաչազարդ գմբեթներ: Այստեղ հավաքված են աշխարհից հրաժարված աբեղաներ և ամբողջ տասն և հինգ դար նրանց սաղմոսների օրհներգությունքը բարձրանում են դեպի հավիտենականի աթոռը:

Սևանա լճի մոտից անցնելիս ես մտաբերում եմ մեր պատմական անցյալը, թե 5 դար առաջ այս լճի գեղեցիկ եզերքը պատկանում էին մեր պապերին: Այստեղ առաջին անգամ մեր Գեղամ Պապը հիմնեց յուր գաղթաշենքը և այս կանաչազարդ լեռների վերա արածում էին այն քաջ հովվի ոչխարները:

Այս մտածությունները ինձ քցել էին մի տեսակ երևակայական ցնորքների մեջ: Կարծես ինձ լսելի էին լինում ձիերի խրխինջ և ոտնաձայների որոտմունք. աղեղների ճայթյունը թնդացնում էր օդը, և նետերը կարկուտի նման թափվում էին: Սարերը և խորին ձորերը լիքն էին հրոսակների բազմությամբ, որոնք այնքան կատաղած էին, որ մի քանի րոպեում ուզում էին լափել, սպառել լիճը, կամ խորասույզ առնել այն փոքրիկ կղզին, որտեղից խաչեր էին փայլում: Բայց ահա կղզուց

բաժանվեցան տասն նավակներ, նրանց յուրաքանչյուրի վերա կան տասնից պակաս տղամարդիկ, որոնք մի կողմից պատերազմում են ալիքների հետ և առաջ մղում նավակները, իսկ մյուս կողմից իրանց նետերով կռվում են վայրենի բազմության հետ, որ պատել է լճի ափերը: Յոթանասուն քաջեր դուրս թռան նավակներից: Նրանք կայծակի արագությամբ մտան թշնամու բազմության մեջ, ճեղքելով անցան անհայտացան հայոց լեռների մեջ: — Այս անգամն էլ հաղթեց Երկաթը (Աշոտը), — գոռաց արաբացոց բազմությունը և ցրվեցավ:

Ի՞նչ բանի նման էր Հայաստանը այս քաջի ժամանակ: Մի հսկայական, բայց խարխուլ շինվածքի էր նման, որ ամեն կողմից կրակը սկսել էր հրդեհել: Ամեն սիրտ կարող էր թուլանալ, ամեն կողմից տեսնելով հայրենիքի վտանգը. բայց Աշոտ Երկաթի սիրտը միշտ մնաց անվեհեր. նա յուր ամբողջ կյանքը անցուց արյունով և կոտորածով: Նա անդադար Հայոց երկրի մի ծայրից մյուսն էր թռչում, երբ վտանգի ձայն էր լսում, ամեն տեղ հասնում էր պահապան հրեշտակի նման:

Սևանա լիճը անցնելով, ավելի հաճախ պատահում են հայոց գյուղորայք, մանավանդ, երբ ուղևորը շեղվում է փոստային ճանապարհից կամ դեպի Նոր Բայազետի և կամ Դարաչիչակի (Ծաղկաձորի) կողմերը: Այստեղից սկսյալ հայոց նոր գաղթականներն սկսում են երևնալ: Խոսելով գաղթականների վերա, ես ավելորդ եմ համարում մի առ մի նկարագրել, թե որ գյուղում որքան են բնակվում, և կամ յուրաքանչյուր տեղում ինչ վիճակի մեջ են ապրում: Այս տեսակ մանր հետազոտությունն ավելի երկար ճանապարհորդության կարոտ էր, որ ես զանց արեցի, նկատելով, որ գաղթականների վիճակը, ուր և լինեին նոքա, շատ չէ տարբերվում, ամեն տեղ առանց զանազանության միևնույն թշվառ դրության մեջ ես գտնում նորանց: Այս պատճառավ ես պիտի բավականանամ տեսածներիս ընդհանուր տպավորությամբ:

Գաղթականները գլխավորապես ցրված են՝ Նոր Բայազետի (Գոգչայ), Դարաչիչակի (Ծաղկաձորի), Սարդարապատի, Սուրմալուի, Աբարանու և Շորագյալի գյուղորայքում: Նրանք գտանվում են նաև Վաղարշապատ, Ղամարլու և Դավալու գյուղերում: Հիշյալ վիճակներում նրանց զետեղվիլն ոչ այնքան տեղերի հարմարության համար է, որքան բնակիչներից հյուրասիրություն գտնելու համար. որովհետև այս վիճակների բնակիչները, որպիսին են՝ նոր-բայազետցիք, աբարանցիք և սուրմալուցիք՝ Տաճկաստանից եկած հին գաղթականներ են և միևնույն կողմերից, որտեղից եկած են այժմյան գաղթականները:

Այժմյան գաղթականները դուրս են եկած Ալաշկերտի (Վաղարշակերտ) վիճակից, Ղարաքիլիսայի վիճակից, Սուրբ Հովնաննու վանքի (Բագրևանդի) վիճակից, Հին Բայազետի քաղաքից և յուր շրջակա Չուխուր կոչված վիճակից, — ընդամենը մոտ 30 գյուղի բնակիչներ46: Գաղթականները խմբովին եկած են եղել Վաղարշապատ և այստեղից տարածվել են դեպի ամեն կողմեր, բայց նրանց մեջ հույն ոչ ոք չէ տեսել:

Հայ գաղթականների հետ եղել են 100 ընտանիքի չափ եզիդիներ: Եզիդիները թեև ազգավ քուրդ են, բայց մինչև այսօր պահպանած լինելով իրանց հին զրադաշտական աղանդը, հայերից ավելի հալածված են մահմեդական քուրդերից: Այդ հալածանքը սկսյալ վաղ ժամանակներից առիթ տվեց եզիդիներին խիստ սերտ կապերով միանալ իրանց դրացի հայերի հետ, որոնցից միշտ վայելած են սեր և պաշտպանություն: Տաճկական Հայաստանում կան շատ եզիդիներ, նրանք համարվում են այն երկրների պարիասներ, ամեն ազգերն խորշում են նրանցից, պիղծ և սատանայապաշտ են համարում: Միակ ազգը, որ գութ ունի նրանց վերա, հայն է: Հայերի

համակրությունը դեպի այդ թշվառները այն աստիճանի հասած է, որ մի քանի տեղերում սկսեցին խնամություն անել նրանց հետ: Եվ մինչև անգամ մի հայ հոգևորական ծնեց մի գեղեցիկ միտք, քրիստոնեությունը և հայոց լեզուն տարածել նրանց մեջ և այդ քաջ ու պատերազմական տարրը միախառնել մեր մեջ: Առանց դրան ևս եզիդիներից շատերը հայերեն խոսել գիտեն, որովհետև տեղացի հայերի ծառաները և աղախինները մեծ մասամբ եզիդիներ են: Տաճկաստանի ժողովրդական ատյաններու եզիդիները չունին ներկայացուցիչներ, իրանց իրավունքները պաշտպանում է հայոց առաջնորդը :

Բայց եզիդիներն որքան և հալածված են եղել, դարձյալ ստրկացած չեն. նրանք տակավին պահպանել են իրանց մեդական քաջազնությունը և այն բոլոր սովորությունները, որ ունի մի քուրդ ավազակ ու միայն կրոնով զանազանվում են միմյանցից:

Որպես ամեն գործում միաբան են եղել, նույնպես և ներկա գաղթականության ժամանակ եզիդիները չբաժանվեցան հայերից. նրանց հետ ուղղակի եկան Ս. Էջմիածին, բայց նրանք ավելի խելացի գտնվեցան, քան հայերը, որովհետև զգալով Վաղարշապատի հուլիսյան տոթը, իսկույն քաշվեցան դեպի Արագած լեռան ստորոտները և զերծ մնացին հիվանդությունից: Այդ շուտափույթ տեղափոխությանը նպաստեցին նրանց վրանները, որովհետև իբրև խաշնարած և թափառաշրջիկ ժողովուրդ, իրանց շարժական տները իրանց հետ ունեին: Եզիդին առանց զարդի մի քայլ չէ փոխում: Պատմում են, թե Վաղարշապատում Ս. Էջմիածնա վանքը եզիդիների վերա նույն խնամքն էր տանում, որպես առհասարակ գաղթականների վերա:

Սևանա լճից անցնելով, թե Նոր Բայազետի և թե Դարաչիչակի գյուղորայքում ճանապարհորդը հանդիպում է հայ գաղթականների: Բայց ի՞նչ վիճակի մեջ են ապրում նրանք: — Այդ պետք է աչքով տեսնել, գրելուց և կարդալուց բան չէ կարելի հասկանալ: Եթե կարելի է գտնել մարդկային հասարակության մեջ մի բոլորովին թշվառացած ժողովուրդ, — դրանք հայոց նոր գաղթականներն են: Ահա մի օրինակ:

Շատ անգամ հանդիպում է մի տղամարդ, մի կին, մի աղջիկ, մի ծերունի մարդ, պատառոտած հագուստը հազիվ ծածկում է նրանց մարմնի մերկությունը, նրանք արևից այրված, սովից մաշված, կմախք են դարձած: Երեսներին գույն չկա. աչքներումը կենդանությունը վաղուց է հանգել: Խոսեցնում ես, նրանց ձայնը թույլ է և դողդոջուն, կարծես գերեզմանի խորքիցն է դուրս գալիս: Նրանց ընթացքը հաստատուն չէ. անզոր ոտների վերա ոլորվում են արբածի նման: Կատաղության նման մի բան ցնցվում է նրանց դեմքի վերա, — այդ հուսահատության վերջին սոսկումն է: Դու կարծում ես, այդ մարդիկը խելագարված են, երբ ուրվականի նման լուռ ու մունջ անցնում են քո մոտից: Իսկ շատ անգամ նրանց ցամաքած շրթունքների միջից լսում ես այսպիսի խոսքեր. — Ես տուն տեղ ունեի... իմ դուռս բաց էր աստուծո աղքատների համար... իսկ այժմ մի պատառ հացի կարոտ եմ...

Գաղթականները զետեղված են գյուղերում միայն, որ բնակեցրած են հայերով: Որպեսզի մարդ հասկանա, թե ի՞նչ դրության մեջ է նրանց կեցությունը, նախ պետք է փոքր-ինչ գաղափար ստանալ բնիկների գետնափոր խրճիթների մասին: Երևակայեցեք ձեզ մի կրիա տափակ նստած գետնի վերա, — այդ հայ գյուղացու խրճիթն է: Այդ կրիայի բլրաձև պատյանի տակ, հողը մեջ փորված, բաժանված են զանազան խուլ և մթին խորշեր, որոնց մեկի մեջ զետեղված է տնային պաշարը, մյուսի մեջ բնակվում են անասունները և շատ անգամ ընտանիքի հետ խառը կազմում

են մի գերդաստան, երրորդի մեջ դարսած է տնային վառելիքը՝ աթար, կտրտուր և այլն, — և բոլոր շնչավորները մուտք ու ելք են, գործում միևնույն ծակից, որտեղից կրիան դուրս է հանում յուր գլուխը: Այդ կրիայի պատյանի մեջ այն մասը, որ հատկացրած է անասուններին, նրանից մի անկյուն որոշած է գաղթական հյուրի համար. Ավելի պարզ ասած, նա բնակվում է գոմի մեջ: Այս թշվառ բնակարանով նա դարձյալ կարող էր երջանիկ լինել, եթե միշտ նրա մեջ պատսպարվելու բախտ ունենար: Բայց ցուրտը սկսվել է այս կողմերում, մոտենում է ձմեռը, գյուղացոց գոմերը լցվում են անասուններով, և խեղճ գաղթականը ստիպված է տեղի տալ նոր հյուրերին և յուր համար մի ուրիշ ծակ որոնել...

Հասնելով Ախտա կոչված հայոց գյուղը, փոստային իջևանում տեղ չգտա գիշերելու, բոլոր սենյակները լցված էին անցորդներով: — Ինձ համար մի տեղ գտի՛ր, — դարձա հայ յամշչիկներից մեկին: — Կուզե՞ս, աղա, գնանք, այստեղ մոտ մալականի տներ կան, — ասաց նա ծոծրակը քորելով: — Ո՛չ, ինձ տար հայի տուն, — ասացի նրան:

Հայոց Ախտա գյուղը մալականների գաղթաշենքից բաժանվում էր մի փոքրիկ գետով, հարկավոր էր միայն կամուրջը անցնել, մյուս կողմում հայոց տներն էին: Այս գյուղը յուր մերձակա գյուղերի հետ համեմատելով, բոլորի Փարիզն է. թե յուր շինություններով և թե բնակիչների բարեկեցությամբ գերազանցում է ամենից, որովհետև գտանվում է մեծ ճանապարհի վերա:

—Այստեղ կա՞ն ալաշկերտցիք, — հարցրի ձի քշողից դեպի գյուղը գնալու ժամանակ:

—Կան, շատ կան, — պատասխանեց նա մի առանձին դժգոհությամբ:

—Ուրեմն տար ինձ մի այնպիսի տուն, ուր լինեին ալաշկերտցիք:

—Նրանց մոտ գնա՞լ, ի՞նչ կանես, աղա, բոլորը հիվանդ են, — ասաց նա զարմանալով:

—Ես կամենում եմ հիվանդները տեսնել:

Որպես երևաց իմ ուղեցույցի խոսքերից, հայ գյուղացիք շատ կասկածանոք են նայում հիվանդ գաղթականների վերա, միգուցե իրանք ևս վարակվեին, թեև նրանց հիվանդությունները տարափոխիկ չեն: Այս պատճառով փոխանակ խնամելու նրանց, շատ անգամ հեռացնում են իրանցից:

Իմ վերջին խոսքերը լսելով, յամշչիկն հարցուց.

— Դու բժի՞շկ ես:

Ես ոչինչ չպատասխանեցի, կրկին հրամայելով, որ ինձ տանե մի այնպիսի տուն, ուր կային շատ ալաշկերտիցք: Գիշերվա կեսից անց էր արդեն: Գյուղը մտնելով, շները մի ահագին աղմուկ բարձրացրին: Մենք թակեցինք մի քանի դռներ, բաց անող չեղավ. վերջապես մեկը հոժարվեցավ ընդունել ինձ, երբ խոստացվեցավ, թե նրա հյուրասիրությունը առանց վարձատրության չէ մնալու:

Պետք է ասած, որ մեծ ճանապարհների վերա գտնված հայ գյուղացիք մասամբ կորցրել են իրանց նահապետական հյուրասիրությունը, որ հատկանիշ է ամեն հայ մարդու: Եվ ցավալին այն է, որ նրանց մեջ մտել են զանազան վատ սովորություններ և մինչև անգամ անբարոյականություն: Եթե մնացել է հայերի մեջ ազգային բնավորության մաքրություն, այդ կարելի է տեսնել այն գյուղերում միայն, որոնք հեռու են մեծ ճանապարհներից, որոնք հաղորդակցություն չունեն օտարների հետ:

Բայց իմ բախտից իմ հյուրընկալն հայտնվեցավ մի բարի մարդ, նա կարդալ ևս գիտեր, հայրը քահանա է եղել, ինքն լավ տիրացու էր. մի քանի անգամ դիմել էր «հայր սուրբի» մոտ, որ նրա միջնորդությամբ յուր հանգուցյալ հոր կարգը ընդունե, բայց «հայր սուրբը» աչք էր դրել «կապույտ ձիուն», որին տիրացուն յուր ջուխտ որդու հետ չի փոխի: Այս պատճառավ նա մնացել էր զուրկ քահանայական աստիճանից...

Տիրացուն չափահաս մարդ էր. նա յուր ռամկային խոսակցության մեջ երբեմն տեղի և անտեղի գրաբար բառեր ևս խառնում էր: Նրա ընտանիքը քնած էին, երբ ներս մտանք. բոլորը միևնույն վերմակի տակ: Տիրացուն մոտեցավ անկողնին, ոտքով բրզեց քնողներից մեկին և իսկույն վեր բարձրացավ կինը: Երևի նա շատ գոհ չէր որ յուր քունը խանգարեցին, բայց տղամարդի կամքին ընդդիմանալ նույնպես անկարող էր: Նա մրթմրթալով քաշվեցավ դեպի խրճիթի մթին անկյունը և սկսավ հագնվիլ:

— Ի՞նչ եք կամենում, որ ձեզ համար պատրաստեն, — հարցրեց տանուտերը:

—Ոչինչ, — միայն ինձ տարեք այն գաղթականների մոտ, որ ձեր տանն են, — պատասխանեցի ես:

—Նրանք գոմումն են, — ասաց տանուտերը:

—Միևնույն է, ես այնտեղ էլ կմտնեմ,

—Բայց ձեզ համար հավից-ճվից թող մի բան պատրաստեն:

— Հարկավոր չէ, դուք ինձ ցույց տվեք գոմի դուռը:

Մտնելով այս խրճիթների մեջ, այցելուն կարող է մի պարզ գաղափար կազմել, թե ինչ բան էր հունական լաբիրինթոսը: Տիրացուն յուղային ճրագը ձեռին, իմ առջևս ընկած, առաջնորդում էր: Ես մի քանի ոլոր-մոլոր պտույտներ գործեցի, մի քանի ծակերից մտա և դուրս եկա, վերջապես գոմի դուռը բացվեցավ: Լույս ցերեկով պետք է այնաեղ ճրագ վառել, որ աչքդ բան տեսնի: Իսկ այժմ, որ գիշեր էր, ճրագի փոխարեն վառվում էր մի փայտի կտոր, որ ավելի ծուխ էր արձակում, քան թե լույս: Խոնավ և խեղդված այրի նման մի բան էր այդ գոմ կոչվածը: Կենդանիների անմաքրությունը նրա հատակի վերա ամբարվելով, ամբողջ գոմի մեջ կազմել էր թանձր ճահճանման մի խառնուրդ, ուր և ոտքդ դնես, խրվելու ես մինչև ծնկներդ: Գոմի մի անկյունը փոքր-ինչ մաքրած էր: Մաքրած էր ասելով, պետք է հասկանալ, որ ճահիճը այնտեղ բավական պնդացել էր և ցամաք էր: Նրա վերա խառն և անկանոն կերպով տարածված էին մի քանի քրքրված ցնցոտիներ, որոնց տակից լսելի էին լինում խուլ հառաչանքի ձայներ: Դրանք հիվանդներ էին: «Ա՛խ, մեռա... » կոչում էր մեկը. «Մի փոքր ջուր... այրվեցա...» կոչում էր մյուսը: Իսկ երրորդը ձայն չէր հանում: Նա սառն էր և անշարժ: Դա մի մանկահասակ աղջիկ էր: Նրա մոտ նստած էր սգավոր մայրը և ապշած կերպով նայում էր դիակի վերա: Նա նստած էր լաց լինելու

համար, բայց լացել չէր կարողանում: Որովհետև արտասուքն էլ առողջություն է պահանջում, բայց խղճալին ինքն էլ հիվանդ էր, այնքան ուժ չէր մնացել նրա մեջ, որ գոնյա փակեր սիրուն դստեր շիջած աչքերը...

— Խե՛ղճ աղջիկ, մեռած է, — ասաց տիրացուն: — Սրբության էլ չհասավ...

Նույն միջոցին ախոռների միջից բարձրացան մի քանի գլուխներ: Դրանք նույնպես գաղթականներ էին, որոնք պառկել էին գոմի այն մասում, ուր անասունների համար դարման են ածում ուտելու: Դրանք նստած տեղից նայեցան դիակի և մոր վերա և ոչինչ չխոսեցին: Անընդհատ դժբախտությունը մեռցնում է մարդկային զգացմունքը և մի տեսակ սառնասրտություն է բերում: Մահը նրանց համար մի հասարակ բան էր դարձել: Մահվան մեջ նրանք որոնում էին հանգստությունը:

Իրավն ասեմ, ես չկարողացա ինձ երկար պահել և շուտով դուրս եկա գոմից: Մտնելով տիրացուի հյուրանոցը, խնդրեցի նրան գաղթականներից մեկին, որ ավելի գործի խելամուտ էր, մեզ մոտ կանչել: Նա կանչեց մի ծերունի, որ Ալաշկերտի գյուղերից մեկի տանուտերն է եղել և յուր հայրենիքում հարուստ համարված մի պարոն: Իսկ այժմ նրա հագին շապիկ անգամ չկար: Նա նոր էր եկել Ալաշկերտից, այսինքն Տեր-Ղուկասովի գաղթեցնելուց հետո: Ես հարցրի, թե ի՞նչը ստիպեց նրանց թողնել իրանց հայրենիքը: Նա պատասխանեց.

— Ի՛նչ ըսեմ, աղբար, աստված առաջ մըր խելք ձեռքեն առեց, ապա մըր տուն մըր ձեռքով ավրեցինք... էլ ըսկի չիմացանք, թե ի՛նչ ըրինք... թորկինք (թողեցինք) մըր կանաչ արոտներ, մըր պաղ-պաղ աղբյուրներ... անտեր թորկինք մըր տուն ու տեղ... ա՛խ... թորկինք մրը պապերու գերեզման... մրը լուսաթաթախ վանքեր, ուխտատեղեր... մրը սուրբ Կարապետու մարմառ գերեզման... մրը սուրբ Հովհանու զորավոր վանք... ծառա եղնեմ ընոնց շնողքին ու խրաշքին... Օրթա մարդ քոռ կերթեր, սաղ ետ կու դառնար... խիվանդ կերթեր, առողջ կի գար...: Համա՛ ամեն բան փարձեցինք, քոռ-քոռան (կույր-ըզկուրյան) էկանք էսա էրկիր...: Ասին մըզի, որ հայ-քրիստոնի էրկիր է. մրը սև օրին բալքի լուս ու ճար եղնի: Ամա, աղբեր ջան, խող քաշինք վըր մըր գլխին...: Եկանք, ընկանք մըջ բաբելնական (բաբելական) կրակին: Քու բարի աչքով կտեսնես մեր խեղճ հալ (վիճակ)...: Ամա էս չէինք, ինչ որ կտեսնեք, մընք լե (մենք ևս) մըզի գորա ունեինք տուն, տեղ, արտ, գութան, լծու գըմշանք, կթու մատակներ, լուծքով եզներ, կթու կովեր, հարուրով օչխարներ, աղեկ գառներ, հավեր ու ճիվեր... վերջ՝ ինչ գլուխդ ցավցունեմ, աստված հրմեն բան բոլ-բոլ տվեր էր, ըսկի բանի լե պակասություն չունեինք. սև հավու կաթն էլ օրթա ըսեի, մըր ամենուս տանը կեղներ: Էդ հրմեն, ինչ որ ըսի, ըղորդ է, աստծու մեկ անուն. — էդ հրմեն թորկեցինք, առանք խրտ մըզի հարուր գլուխներով տավար, օչխար, փախուցինք անօրեն քրդու ձեռքեն, ամա, ընոնցեն ավելի անռահմների ձեռքը ձգեցինք...

Այս խոսքերը այնքան զգացմունքով էր պատմում ողորմելի ալաշկերտցին, որ չէր կարելի առանց ցավակցության լսել նրան: Արտասուքը կաթիլ-կաթիլ գլորվում էր ճերմակ մորուքի վերա, կարծես յուր խոսքերի հետ սրտիցն էր բխում: Երբ նա մի փոքր հանգստացավ, ես հարցրի.

—Ուրեմն դուք գոհ չե՞ք ձեր գալու վերա:

—Ընչո՞ւ վրա զոհ եղնենք, ախպար, մըջ էս հալին էլ մարդ գո՞հ կեղնի...: Տան տեր էինք, մըկա մըզ տուն չըն թորկի, որ սըթրինք: Հացի տեր էինք, օր հարուր մարդ մըր դռան հաց կուտեր, կերթար: Մըկա մըզ ողորմություն տվող չկա. թե փշուր լե հաց տան, էն էլ խազար թուք ու մուրով...:

—Ուրեմն եթե հնար լինի, կրկին կդառնա՞ք դեպի ձեր հայրենիքը:

—Ախ, ինչպե՞ս չէ, մըր էրկրի պես էրկիր կա՞... մըր մամլաքաթ արքայություն է. մեռնիմ ընոր հողին ու ջրին... Երնե՛կ մըր հոգին աստված էնա տեղ առներ, էս սև օրերնի չը տեսնինք...: Ա՛խ, աղբեր ջան, մըր էրկրի հողեր ջավահիր է. մեկին հիսուն, վաթսուն, մեկին հարուր պտուղ կուտա: Մըր ջրեր անմահական են. մեռած մարդ որ խմե, կը սաղնա: Աստված լե գինա, սուտ չէ: Ամա, էսա տեղ ի՞նչ կա. մըր ճրժեր, մըր պըժեր — հըմեն կոտորվեցան: Մնացած լե դռնե դուռ ընկած, էլի (հասարակության) ումուդի (հուսով) կապրին: Շատ լե՝ դարդու հիվանդ վեր թափած են, անտեր, անտիրական, տկլոր, անհաց, անջուր կմեռնին...:

—Այդ իրավ է, — ընդհատեցի ես նրան. — բայց գուցե ձեր մեջ կային այնպիսիները, որ չէին ցանկանալ մյուս անգամ վերադառնալ, այլ կուզեին այստեղ մնալ:

—Չէ, խելքդ չըկտրե, աղբեր, — պատասխանեց նա գլուխը խորհրդական կերպով շարժելով. — խելքդ չկտրե, որ մեկն էլ է մոռցած էղնի իր վաթանը. էնոնց մարմիննի, ըղորդ է, էստեղ ի, ամա ուրանց խոգիք էնտեղն ի...: Հըմենու էլ ջանին հասիր ի, դանակ ոսկրին առիր ի...: Տա աստված, որ ռուսի թուր կտրուկ էղնի. մընք էլի կերթանք մըր վաթան, մըր խորոտիկ մամլաքաթ... Հայրենասիրությունը այն աստիճան տիրած էր ծերունու սրտին, որ նա խոսում էր նորա վերա որպես մի սուրբ և նվիրական առարկայի վրա: — Դա ամեն մի ալաշկերտցու զգացմունքն է, որքան պատահել է ինձ տեսնել նրանց: Էլ ի՞նչը կարող է պահել նրանց մեր երկրում:

Մեր խոսակցության միջոցին ես նկատեցի, որ մի քանի ուրիշ գաղթականներ ևս գոմից դուրս գալով, նստած էին խրճիթի դռան շեմքի մոտ և մեզ լսում էին: Նրանք շատ համակրությամբ էին վերաբերվում դեպի իրանց հայրենակցի խոսքերը և շարժում էին գլուխները: Դժգոհ էր միայն մեր տանուտերը՝ կարդացվոր տիրացուն,.նա երբեմն բարկությամբ ընդմիջում էր, հայտնելով, թե այդ մարդիկը հիմարներ են, թե նրանք իրանց բախտը չեն ճանաչում, և թե քուրդի ու թուրքի սուրը վերադասում են Քրիստոսի խաչից, Ես էլ առժամանակ մեր տիրացուին հետևելով, ասացի.

— Բայց եթե ձեր երկիրը կրկին երթալու լինիք, քրդերը ձեզ կկոտորեն, կթալան են:

Նա բավական սրտդողած կերպով պատասխանեց.

—Աղբեր ջան, ըստոնք դարտակ խոսքեր են. մըր էրկրի քրդեր, աստված լե գինա, որ մըզի խետ աղբոր պես են. մընք ընոնց տուն՝ ընոնք մըր տուն՝ կերթայինք կուգայինք: Էն քրդեր օրթա դուք լսեր իք, ընոնք մըր էրկրի քրդեր չէին. աստված ընոնց քոքը կտրա...

—Ասենք թե քրդերը ձեզ հետ վատ չվարվին, բայց օսմանցին յուր խիստ հարկերով ձեզ դարձյալ կկողոպտե:

—Օսմանլին մըզնե ի՞նչ կառնե: Բոլ-բոլ կցանեինք, բոլ-բոլ կինձեինք, էն ա կուգեր մըզնե մեկ տասնորդ կառներ, կերթեր: Մըր էրկիր ազատ, մըր տավարներ ազատ, ուր ուզեինք, ընտեղ կարածացնեինք: Ուր ուզեինք, ինչ ճամփով ուզեինք, կերթեինք. մըր դեմ կտրող չը կեր:

Ես կամեցա փոքր-ինչ մխիթարել ծերունուն, ասելով.

—Հիմա պատերազմի ժամանակ է, ամեն մարդ խառնված է պատերազմի գործերով, դուք եթե մի քիչ համբերեք, գուցե այստեղ էլ ձեզ համար լավ կլինի:

—Հա՛, բալքի լավ եղնի, թե որ սաղ մնացինք, — պատասխանեց նա փոքր-ինչ հեգնական ձևով: — Էս օրը, ինչ մենք կքաշենք, ճանճերի նման պիտի կոտորվենք, շուտով թմենքս էլ պիտի չմնանք...

—Այսպես միշտ չի մնալու ձեր դրությունը, — կրկնեցի ես: — Այժմ Ռուսաստանի բոլոր հայաբնակ քաղաքներում ձեզ համար փող է հավաքվում և ձեզ ամեն կերպով կօգնեն ու կխնամեն:

Նա պատասխանեց մի խորհրդավոր ժողովրդական առածով.

— Է՛հ. չուր խնձորն ի գա, հիվանդը հոգին կտա: — Չուր ջուրի առուն ջուր գա, գորտի աչքեր դուրս կգա: ... Էտա մըր բան է մկա...

Այս միջոցին դռան շեմքի վերա նստող գաղթականներիցը մեկը մոտեցավ իմ խոսակցին և ասաց.

— Է՛լի վեր, աղբեր Մկրե, էլի վեր, էրթանք մըր մեռել պառտըկինք, էն սեֆիլ աղջկա դարդը քաշենք...: Աստված սաբրբու տուն քանդա...:

Ծերունին վեր բարձրացավ և լուռ, գլուխը քաշ տալով, հեռացավ: Նա գնաց յուր ընկերների հետ ամփոփելու այն խղճալի հանգուցելո մարմինը, որ քանի րոպե առաջ ես տեսած էի:

Այս մասնավոր խոսակցությունից ընթերցողը կարող է եզրակացնել թե ի՞նչ է մտածում այժմ ալաշկերտցին: Ամեն տեղ, ուր և մարդ հանդիպում է նրանց, լսում է այսպիսի խոսքեր: Նրանք գոհ չեն իրանց վիճակից և գոհ լինել չէին կարող, երբ այնպիսի դառն դրության մեջ են: Համարյա բոլորը ցանկանում են վերադառնալ դեպի իրանց հայրենիքը:

Նրանք զոհեցին տուն, տեղ, կալվածք, հարստություն, կյանք և ամեն ինչ, որ ունին, բայց փոխարենը ոչինչ մխիթարություն չգտան: Մեր մարդասերները և բարերարները դեռ մտածում են օգնել նրանց, տեղեկություններ են հավաքում, ծրագրեր են սարքում և թշվառ պանդուխտների ապագան են վճռում: Իսկ այդ բոլորի մասին շատ ճիշտ նկատեց ծերունի ալաշկերտցին, թե «մինչև առուն ջուր գա, գորտը հոգին կտա»: Ուրեմն փոխանակ հագուստներ պատրաստելու, ավելի լավ կլինի պատաններ պատրաստվեր, որովհետև մեռնողների թիվը ավելի շատ է լինում, քան մնացողներինը:

Իմ հյուրընկալ տիրացուի գոմը և այն սարսափելի տեսարանը մի բացառություն չէ գաղթականների կյանքի մեջ: Բայց ցավալին այն է, որ ոմանք՝ կեղտոտ շահամոլներ, աշխատում են գաղթականների կյանքը ավելի բավականացուցիչ գույներով նկարել, քան ինչ որ է: Նպատակը հայտնի է...:

Տիրացուի գոմը մի փոքրիկ պատկեր է գաղթականների կյանքից:

Ուր և մտնում ես, քո աչքի առջև հանդիսանում է այդպիսի և դրա նման մի տեսարան: Չէ կարելի գտնել մի ընտանիք, որի մեջ հիվանդներ չլինեին և խիստ սակավ է այն ընտանիքների թիվը, որ յուր գերդաստանի անդամներից մինը, երկուսը կորցրած չլիներ: Շատ ընտանիքներ ամբողջովին սպառված են: Երբեմն տեսնում ես նրանց մի քանի ընտանիքներ միասին, լցված են գյուղացոց մարագներում, որոնք ծածկ անգամ չունին, իսկ երբեմն բաց օդի մեջ, այս և այն պատի տակ ընկած:

Որպես իրանք գաղթականները պատմում էին, հայ գյուղացիք սկզբում լավ էին վարվում նրանց հետ, ամեն տեսակ հոգս էին տանում, հաց և հագուստ էին տալիս, և հարկավորված ժամանակ վարձով բանեցնում էին իրանց մշակության դաշտերում: Բայց վերջապես ձանձրանում են ինքնակոչ հյուրեն և գյուղացիք սկսում են սառիլ... Եվ իրավ, դժվար է մի ամբողջ կողոպտված և աղքատացած ժողովուրդ միշտ ձրի կերակրել, մանավանդ այժմյան պատերազմական ժամանակում, երբ բոլոր կենսական պիտույքները չափազանց թանկացել են: Այս պատճառավ գաղթականներն մի տեղում են կենում, նրանք անդադար թափառում չեն մի գյուղից մյուս գյուղը և նոր բարերարներ են որոնում: Շատ տեղ նրանց չեն ընդունում և մինչև անգամ չեն թողնում գյուղը մտնել: Օրինակ, աշտարակեցիք վերջին օրերում գաղթականներին թույլ չէին տված իրանց գյուղը մտնել:

Գյուղացոց այս տեսակ անգթությունը առաջ է գալիս ոչ թե նրանց անհյուրասիրությունից, այլ այն երկյուղից, որ չեն կամենում ծանրաբեռնել իրանց հասարակությունը նոր բնակիչներով, մտածելով, որ եթե գաղթականներին իրանց գյուղերում տեղ տային, այն ժամանակ իրանց կեցությունը կնեղանար և հետևապես կդժվարանար իրանց ապրուստի միջոցներն: Առանց գաղթականների, առանց նոր դրացիներ ընդունելու ևս, հայոց գյուղերն այնքան խիտ են բնակեցված, որ գյուղացին շատ փոքր հող ունի թե բնակության և թե երկրագործության համար:

Գ

Վաղարշապատ: — Ս. Էջմիածնա բարեգործական հոգատարությունը գաղթականներու մասին: — Ուչքիլիսայի Հովհաննես վարդապետը: — Գաղթականների վիճակը Վաղարշապատում: — Հաքիմ-բաշին և յուր բժշկական հրաշագործությունները:

Իմ ճանապարհորդության միջոցում ես անցա նախ Նոր Բայազետի մի քանի գյուղեր, այստեղ ձմեռն արդեն սկսվել է, և գաղթականներն տակավին մի ապահով պատսպարան չունին: Բնիկներն այն աստիճան աղքատ են, որ հազիվ կարողանում են իրանց կիսամերկ որդիքը պահել, ո՞ւր մնաց օտարների համար հոգալ: Այնուամենայնիվ, նորբայազետցիք Հին Բայազետից եկած գաղթականներ լինելով, մինչև այսօր խնամք էին տանում իրանց վաղեմի հայրենակիցների վերա, իսկ այժմ սկսել են փոքր-ինչ սառիլ: Այնուհետև անցա ես Դարաչիչակի կողմերը, այնտեղ ավելի վատ վիճակի մեջ գտա. նրանց մեծ մասը ճանապարհների վերա կանգնած ողորմություն են խնդրում: Երևան քաղաքում գաղթականներ շատ փոքր են թվով, մի քանի անձինք միայն, որոնք այս և այն տնում ծառայություն են անում, ամբողջ ընտանիքներ համարյա չկան: Երևանի մոտակա գյուղերում նույնպես փոքր են թվով, օդի վատության պատճառով նրանք հեռացան այստեղից նոր Բայազետի և Դարալիչակի լեռնոտ բարձրավանդակների վերա:

Երևանից ես գնացի Վաղարշապատ և իջևանեցի Ս. Էջմիածնա Ղազարապատ կոչված հյուրանոցում: Վաղարշապատը այն կենտրոնն է, ուր առաջին անգամ խմբովին հավաքվեցան բոլոր գաղթականներն և այստեղից տարածվեցան դեպի զանազան կողմեր: Ուրեմն այստեղից ավելի լավ կարելի էր հարցասիրել նրանց դրությունը: Ղազարապատում ես գտա Ուչքիլիսայի Հովհաննես վարդապետին, որ գաղթականների հետ եկած էր, և ինքն Հին Բայազետի վիճակի առաջնորդ եղած էր: Նրա հետ էին Առաքել և Գրիգոր վարդապետներն, որոնք նույն վանքի միաբաններ են: Հովհաննես վարդապետը մի ճարպիկ, փորձառու և խոհական մարդ է. նա ինքն ականատես է եղած այն բոլոր թշվառություններին, որոնք պատճառ տվեցին խեղճ գաղթականներին թողնել իրանց հայրենիքը: Առանց արտասուքի նա չէ կարողանում պատմել անցքերի զարհուրանքը, որոնցով լի են նրա նկարագրությունները...: Շատ անգամ նա լռում է, կարծես մի սարսափ ծանրացած է նրա սրտի վերա և չէ կարող ամեն ինչ պարզաբար արտահայտել: Ես երկար և շատ երկար խոսեցի այդ անբախտ կրոնավորի հետ, և նույն լռությունը ստիպված եմ պահպանել և ես...:

Գաղթականները, թողնելով իրանց հայրենիքը — մի հայրական տուն, ուր նրանք կարող էին հանգստություն և ապահովություն գտանել, էր Ս. Էջմիածինը: Այս պատճառով նրանք խմբովին դիմեցին դեպի ամենայն հայոց Մայր Աթոռը: Ս. Էջմիածնու վանքը չխնայեց ամեն բան յուր տարանջատյալ որդիներին խնամք տանելու. ամեն օր հազարավոր թշվառներ կերակրվում էին վանքի սեղանից: Նա յուր հացով և հագուստով պահպանեց բոլորին, մինչև ուրիշ տեղերում նրանց պատսպարելու տնօրինություն եղավ: Մայր Աթոռի այս մարդասիրական առաքինությունը ամենայն գովության արժանի է:

Ես Վաղարշապատ գնացած օրը այնտեղ տակավին մնացած էին շատ ընտանիքներ, որոնց մի մասը բնակվում էր վանքի պարիսպների մեջ, իսկ մյուս մասը բաժանված էր Վաղարշապատի տներում: Բոլորը կերակրվում էին վանքի խոհարանից: Այստեղի գաղթականները, որ համեմատաբար ավելի խնամված և ավելի ապահով են, քան մյուս տեղերինը, դարձյալ մի ցավալի տպավորություն են թողնում տեսնողի վերա: Նկարագրելով դրանց վիճակը, ընթերցողը կարող է ավելի ճիշտ գաղափար ստանալ այն Ս. Էջմիածնուց հեռավոր անբախտների վերա, որոնք բոլորովին զուրկ են հոգատարությունից: Ղազարապատում, ուր իջևանել էի ես, բնակվում էին մի քանի ալաշկերտցի ընտանիքներ: Իմ առաջին այցելությունը եղավ այդ թշվառների մոտ: Ինձ հետ էր իմ ուղեկիցը Դորպատի համալսարանի ուսանող պարոն Կ. Է...յանցը և մի բժիշկ, որ հոգ էր տանում տեղային գաղթականներին: Ուխտավորների համար հին ձևով շինված կացարանների ստորահարկում զետեղված էին նրանք: Ես մտա խուցերից մեկի մեջ: Դա մի նեղ և խոնավ խորշ էր, որ ավելի նման էր քարանձավի, որի նմանը կարելի էր տեսնել միայն լեռների մեջ: Վանական կյանքը ստեղծում է այսպիսի խորշեր յուր աբեղաների կեցության համար: Խուցի աղյուսով ծածկված մերկ հատակի վերա նստած էր մի օրիորդ հասուն հասակով: Նրա դեմքը նիհար էր և գունատ. տխրությունը ազատ կերպով արտափայլում էր սևորակ աչքերի մեջ: Նա նստած էր մի քրքրված վերմակի մոտ, որի մեջ հեկեկում էր մի տասներկու տարեկան տղա: Ես վեր բարձրացրի վերմակը. հիվանդը բոլորովին մերկ պառկած էր կապերտի կտորի վերա:

—Դա ո՞վ է, — հարցրի օրիորդից:

—Եղբայրս է, — պատասխանեց նա հոգվոց հանելով:

—Դու հայր, մայր չունե՞ս, — կրկնեցի իմ հարցը:

—Բոլորը մեռան... — ասաց նա, տխուր ձայնով:

Այս պատասխանը այնքան սրտաշարժ էր և զարհուրելի, որպես ինքը մահը:

— Դե՛ղ տուր, դե՛ղ, եղբայրս մեռնում է, — դարձավ նա դեպի բժիշկը:

Բժիշկը ոչինչ չպատասխանեց, միայն շարժեց ուսերը:

Ինձ ասեցին, թե օրիորդը նշանված է:

— Բայց նշանածդ ո՞ւր է, — հարցրի ես:

Երկու կաթիլ արտասուք միայն եղան խղճալու պատասխանը: Նշանածն էլ մեռած էր...:

Սրտիս կսկիծը չթողեց ինձ երկար մնալ այնտեղ, իսկույն դուրս եկա: Հետո հարցրի բժշկից, թե ինչո՞ւ նա հոգ չէր տանում հիվանդին, որովհետև օրիորդի խոսքերից երևաց, որ նա դժգոհ էր դեպի բժշկի վարմունքը:

— Նա կմեռնի, — պատասխանեց բժիշկը սառնասրտությամբ. — լուծողականս վերջացել էր, ես փսխողական տվի, այն ևս չօգնեց... այժմ կփորձեմ և քինա, տեսնենք ինչ կլինի:

Որպես երևաց, բժշկի ամբողջ դեղարանը բաղկացած էր երեք դեղերից — լուծողականից, փսխողականից և քինայից: Երեքից որը դժբախտաբար սպառվում էր, նրա փոխարեն պատրաստ էր տալ մյուսը, առանց ուշադիր լինելու հիվանդության որպիսությանը: Ես կնճռեցա բարկությունից:

—Երեք դեղով մի՞թե կարելի է բժշկություն անել, — հարցրի նրանից:

—Է՛հ, պարոն, գեղ տեղ է, էդ էլ շատ է... — պատասխանեց նա անխորհուրդ կերպով գլուխը շարժելով:

Այնուհետև Ղազարապատում մի քանի խուցեր ևս մտնելով, ամեն տեղ հանդիսանում էր նույն տեսարանը, ամեն տեղ հիվանդներ պակաս չէին: Ինձ բոլորովին զարմացնում էր այդ իրողությունը, թե ի՞նչ էր պատճառը, որ մարդիկ առողջ և պինդ կազմվածքով, այնպես տկարացած և նվաղած էին մեծ մասը: Դրա վերա կխոսենք հետո: Գնանք առաջ:

Ղազարապատից դուրս գալով, ես դիմեցի դեպի գյուղը, այսինքն՝ Վաղարշապատ: Ինձ հետ էր իմ ուղեկիցը, մեզանից չբաժանվեցան և պարոն բժիշկը: Այստեղ նույնպես գաղթականները մեծ մասամբ բնակվում են գյուղացոց գոմերում: Գոմերը, ամեն մարդ գիտե, որ շինված են անասունների համար. եթե այդ անբան կենդանիներից հարցնելու լինեինք՝ գո՞հ են իրանց բնակարաններից, անշուշտ կստանայինք մի այսպիսի պատասխան. «Ո՛չ, պարոն, գոհ չենք. մեր բնակարանի առաստաղը մաղի նման ծակծկված է, այնպես որ անձրևը և սառը քամին

հեշտությամբ ներս են վազում: Գետնի սալահատակը չափազանց ցավեցնում էր մեր կողքերը և վատն այն է, որ մեր տերը շատ ծույլ է, նա չէ մաքրում հատակը. այդ պատճառավ մենք պառկում ենք, համարյա թե, ժահահոտ աղբերի մեջ...»: Այդ դժբախտ արարածներին այժմ ընկերացել է հայ գաղթականը. — մարդիկ, որ գուցե մի ժամանակ փափուկ օթոցների վերա էին պառկում...

Վաղարշապատում շատ տներ ես մտա և դուրս եկա, ամեն տեղ տեսնում ես միևնույն ցավալի դրությունը: Շատ խրճիթներում մի քանի ընտանիքներ ածված են միասին կամ գոմերում և կամ խրճիթների այն մասերում, որոնք բնակության համար չեն շինված, որպիսի են փայտանոցը, դարմնոցը և այլն: Ամեն տեղ լսում ես միևնույն խոսքը՝ օգնեցե՛ք, ի սեր աստուծո, մեռնում է որդիս ... քույրս ... մայրս... եղբայրս...

Մի տան մեջ ես տեսա մի բանի հիվանդներ ընկած միմյանց մոտ. առողջները նստած քշում էին նրանց ճանճերը: Իմ հետաքրքրությունը շարժեցին թղթի մի քանի փոքրիկ փաթոթներ, որ դրված էին հիվանդների մոտ: Ես բաց արի փաթոթները, նրանց մեջ գրած էին զանազան բժշկական փոշիներ:

—Դրանք որտեղի՞ց են, — հարցրի ես:

—Այն ակնոցավոր փոքրիկ մարդը տվավ, — պատասխանեց մի պառավ:

—Չօգնեցի՞ն, — հարցրի ես:

—Բոլորիցն էլ փորձեցի, բայց շահ չտեսա, — ասաց պառավը հուսահատությամբ:

Որպես Վաղարշապատում, նույնպես և բոլոր գյուղերում, ուր ցրված էին գաղթականները, իրավ է, դեղարաններ չկան և այդ մահին Թիֆլիսի մասնաժողովի տնօրինությունը վատ չէ կարելի համարել, որ դեղեր է ուղարկում, բայց վատությունը նրանց գործադրության մեջն է:

Բժիշկը, որ ինձ հետ ման էր գալիս, վանքի կողմից կարգված էր հիվանդներին հոգ տանելու: Նրան կոչում էին հեքիմբաշի (բժշկապետ): Ճանապարհին ունեցանք նրա հետ մի այսպիսի խոսակցություն:

—Այս գյուղի բոլոր հիվանդների հոգատարությունը ձե՞զ է հանձնված, պարոն բժշկապետ:

—Ոչ միայն այս գյուղի, այլ մինչև անգամ ամենահեռավոր գյուղերինը, — պատասխանեց նա մի փոքր հպարտությամբ:

—Ուրեմն դուք ամեն տեղ գնո՞ւմ եք:

—Ոչ, այդ դժվար է, — ասաց նա կակազելով:

—Ուրեմն ինչպե՞ս եք բժշկում:

—Ահա այսպես. շատ անգամ իրանք հիվանդներն են գալիս, շատ անգամ ազգականներն են գալիս, պատմում են ցավի հանգամանքները, ես էլ նրա համեմատ դեղ եմ տալիս:

Ես նկատեցի, որ պարոն բժշկապետի և «ակնոցավոր մարդու» բժշկության եղանակը իրանց ձևերով շատ չէին տարբերվում և ասացի.

—Այդ ինչպե՞ս կարելի է, ռամիկը շատ անգամ չէ հասկանում հիվանդությունը և ձեզ կարող են սխալեցնել:

—Ո՛չ, ես այդ բանի մեջ բավական զգույշ եմ, — ասաց նա ինքնաբավական վստահությամբ, — և միշտ տալիս եմ այնպիսի դեղեր, որ կարող էին օգնել:

— Ուրեմն դուք գործ եք դնում Հոլովիեի դեղահատները...

— Ըշտա, աղբար, գյուղ տեղ է, ի՞նչ պիտի ընենք, պետք է կերպով մը յոլա տանինք:

Պարոն բժշկապետի վերջին խոսքերից երևաց, որ նա վանեցի է: Հետո ուրիշներից տեղեկացանք, որ նա յուր հայրենիքում եղել է դեղագործի ծառա, իսկ պատերազմի պատճառով Ռուսաստան գալով, Ս. Էջմիածնում դարձել է «հեքիմբաշի»...:

Ս. Գայանյան վանքի մոտ այժմ կազմվել է մի նոր և ընդարձակ գերեզմանատուն գաղթականներից: Ս. Հովհաննու վանքի (Ուչքիլիսեի) վանահայր և միևնույն ժամանակ գաղթականների առաջնորդ Հովհաննես վարդապետը ցույց տվեց ինձ մի ցավալի հաշիվ, որից երևում էր, թե մինչև այսօր գաղթականներից վախճանվողների թիվը հասնում է մոտ հազար հինգ հարյուրի:

Ինձ պատմեցին, թե Վաղարշապատի բժիշկ Բ. Նավասարդյանը, քանի որ այստեղ էր, մեծ եռանդով էր հոգ տանում հիվանդներին, բայց նրա Թիֆլիս գնալուց հետո խղճալի գաղթականները բոլորովին անխնամ մնացին:

Գուցե ընթերցողը կնկատե, որ ես իմ գրվածքիս մեջ ավելի ուշադրություն եմ դարձնում հիվանդների վերա, չնայելով, որ գաղթականներից առողջները կարոտ են ուրիշ շատ կենսական պիտույքների, որպիսի են հացը, հագուստը, հարմար բնակարանը և այլն: Բայց այդ բաների մեջ պետք է որոնել հիվանդության բուն պատճառը:

Եթե մտաբերենք բոլոր անտանելի փորձանքները, որոնց միջով անցան ողորմելի գաղթականները, շատ հեշտ կլինի բացատրել բազմաթիվ հիվանդությունների և մահվան պատճառը: Գաղթականներն իրանց երկրում բնակվում էին Եփրատի հովասուն հովիտների մեջ, Նպատ լեռան սառն բարձրավանդակների վերա: Հանկարծ հուլիս ամսում ընկնում են Երևանյան նահանգի գեհենի մեջ: Տոթը մի կողմից, ճանապարհի անտանելի հոգնածությունը և երկյուղը մյուս կողմից, ավելացնենք դրանց վերա քաղցը, ծարավը, բնակարանների անհարմարությունը, վատ կերակրվիլը, — շատ հասկանալի է, որ նրանք չէին կարող առողջություն պահպանել, եթե երկաթի կազմվածք ևս ունենային:

Մուրացկանը ստիպված է ուտել, ինչ որ տալիս են նրան: Իսկ սովատանջը ուտում է, ինչ որ հանդիպում է նրան: Ես Վաղարշապատի փողոցներում տեսա գաղթականներից շատերին, երբ գտնում էին փոշիների մեջ ընկած սեխի կամ ձմերուկի կեղևներ, իսկույն իրանց շուրջն էին

նայում, երբ նկատում էին տեսնող չկա, վեր էին առնում այն կեղևները, փոշին սրբում էին իրանց հագուստի դրոշակներով և սկսում էին ուտել: Որովհետև քաղցած էին, պետք էր մի բանով սնունդ ստանալ...

1827 թվին Պարսկաստանից դեպի Արարատյան նահանգը գաղթող հայերի հետ նույնը պատահեց. մեծ մասը կոտորվեցան հիվանդությունից: Բայց նրանք ավելի բախտավոր էին, քան ալաշկերտցիք, նրանք սրի և հրի միջով չանցան, նրանց ճանապարհորդությունը ավելի հանգիստ էր, և մի նոր երկիր գալով, իսկույն բնակության տեղ ստացան: Բայց ալաշկերտցիք ամբողջ օրեր սոված և ծարավ անցուցին, թշնամու հրացանները անդադար գոռում էին նրանց վերա, մինչև հասան ռուսաց սահմանը, իսկ գալով այստեղ, անտեղ ու անտեր մնացին: Ես տեսա մի տղա, որի ձեռքի մեջ դեռ մնացել էր գնդակի վերքը, որ նա ստացել էր ճանապարհում:

Ես երկար ման գալ չկարողացա Վաղարշապատում, ամեն տեղ տեսնում էի մերկություն և հիվանդություն, ամեն տեղ ողորմություն էին խնդրում: Ասում են մեզ համար փող է հավաքված, ո՞ւր է», — հարցնում էին մեզ, կարծելով, թե ես կամ ընկերս որևիցե մասնաժողովի անդամներ ենք: Իրավն ասած, թե իմ և թե ընկերիս քսակները պարպվեցան: Խիստ անտանելի մի դրություն է, երբ մարդ տեսնում է թշվառություն, ցանկանում է օգնել և չէ կարողանում...:

Դ

Իմ ժողովը Ղազարապատում: — Թուրքաց գործ դրած միջոցները գաղթականները դարձնելու: — Լավ է նրանց դարձնել իրանց հայրենիքը: — Աբարանցոց մարդասիրական վարմունքը: — Երիտասարդ ալաշկերտցու պատմությանը: — Իմ դատողությունները: — Խելագարված կինը:

Երեկոյան ես վերադարձա վանքը բոլորովին հոգնած և խիստ վատ տրամադրության մեջ: Շատ ապրի հայր Փեշտալմալջյանը, վանքի հյուրընկալը, որ պատրաստել էր տված մի փառավոր ընթրիք ուտիսվա կերակուրներից: Այն գիշեր ինձ մոտ հավաքվեցան մի քանի ալաշկերտցիք և նրանց առաջնորդ՝ Սուրբ Հովհաննու վանքի վանահայր Հովհաննես վարդապետը: Նրանք տեսնելով, որ ես հետաքրքրվում եմ գաղթականների վիճակով, հոժարությամբ պատմում էին, ինչ որ ես հարցնում էի: Գիշերի մեծ մասը մենք անցուցինք նրանց վերա խոսելով:

Ինձ մոտ եղող ալաշկերտցիքը հասարակ մարդիկ չէին, այլ գաղթականների առաջավոր անձինքներից էին, որոնք գյուղերից եկել էին իրանց վանահոր՝ Հովհաննես վարդապետի մոտ ինչ-ինչ խնդիրների մասին խորհելու, նրանցից երկուսը քահանա էին:

Նրանք պատմում էին, թե տաճկաց կառավարությունը մեծ կորուստ համարեց յուր երկրին, զրկվելով հայերի նման օգտավետ, աշխատասեր ժողովրդից և թե նա տակավին հույս ունի, որ հայերը կվերադառնան. այս մտքով նա հրամայեց, որ նրանց տները անվնաս և ամբողջ պահվին: Եվ որովհետև գաղթականները իրանց ցանքերը թողել էին առանց քաղելու, տեղային կառավարությունը կարգադրեց, որ ցանքերը հանձնվին մահմեդականներին կամ այնտեղ մնացած հայերին այն պայմանով, որ նրանք հնձեն, կալսեն և մաքուր ցորյանը լեցնեն առանձին ամբարներում, որպեսզի, եթե նրանց տերերն վերադառնալու լինեն, ուտելու հաց ունենան: Իսկ տեղացիք, որ այս աշխատությունը հանձն առան, ստանալու էին բերքի մի փոքրիկ մասը, որպես վարձատրություն: Պատմում էին, իբր թե գաղթականներից ոմանք, վերադառնալով իրանց հայրենիքը, արդեն ստացան իրանց թողած հունձքերի պատրաստի բերքը և որպես թե

կառավարությունը շնորհեց նրան և այն տասանորդը, որ ինքն պետք է վեր առներ երկրագործական արդյունքներից: Գուցե տաճկաց կառավարությունը դրանցով կամեցել է հրապուրել գաղթականներին և վերադարձնել իրանց տեղերը. չկամենալով յուր երկի մի ամենալավ մասը զուրկ կացուցանել մի աշխատավոր ժողովրդից, որպիսին էին հայերը: Այլև պատմում էին, թե մի քանի երևելի քուրդեր պատժվեցան իրանց գործած անգթությանց և հարստահարությունների մասին, մի քանիսը կախաղան հանվեցան. և շեյխ-Ջալալեդդինին հրամայվեցավ, որ յուր բարբարոս ասպատակները վեր առնի գնա յուր տեղը, այլևս պատերազմին չմասնակցե:

Ինքը Հովհաննես վարդապետը՝ գաղթականների առաջնորդը, շատ գեղեցիկ միտք էր հայտնում. նա ասում էր, եթե աստված տա, ռուսը մյուս անգամ գրավե այն երկրները, ավելի լավ է, որ գաղթականներին վերադարձնե իրանց տեղերը. եթե այսպես մնալու լինեն, նրանց մեծ մասը կոչնչանա և մնացյալները կցրվին դեպի զանազան կողմեր: Նա ասում էր, թե ինքն որպես գաղթականների առաջնորդ, ավելի լավ գիտե յուր ժողովրդի ցանկությունը. որ նրանք ռուսական Հայաստանում մնալու նպատակ չունեն:

Մենք Հովհաննես հայր սուրբի կարծիքը բաժանում ենք ավելի գործնական կետից ըմբռնելով այս խնդիրը: Որպես ճիշտ աղբյուրներից տեղեկացանք, տաճկաց կառավարությունը միտք ունի հայերի թողած երկրները բնակեցնել աբխազներով, որ նա տարավ Սուխումի կողմերից: Եթե այդ այդպես լինի, այն ժամանակ Ռուսաստանը կունենա նոր և բարբարոս դրացիներ և յուր սահմանագլուխները միշտ ազատ չեն մնալու նրանց ասպատակություններից: Ուրեմն ավելի լավ կլիներ, որ աբխազների տեղը բռնեին նույնիսկ խաղաղասեր հայերն, որ այնտեղից բերված են: Իսկ եթե աբխազներ ևս չբերվեին հայերից դատարկված երկրնեում, քրդերն կան ու կան — դրանք աբխազներից պակաս չեն իրանց բարբարոսություններով:

Ես սարսափելով լսեցի մի քանի տխուր ճշմարտություններ ալաշկերտցիներից, թե որպիսի համակրություն ցույց տվեցին դեպի իրանց տարանջատյալ եղբայրներն՝ տեղացի հայերը: Պատերազմի ժամանակ կարծես ամեն մարդ անգութ է դառնում: Եղբայրը եղբոր վերա անգամ չէ խղճում: Օրինակ, պատմում էին այսպիսի բան, երբ ալաշկերտցիք կամեցել են գաղթել, մեծ մասն ճանապարհի սայլ կամ արաբա չեն ունեցել, որ իրանց տնային շարժական կայքը վեր առնեին: Նույն ժամանակ աբարանցի հայերից շատերն իրանց արաբաներով գնացած են եղել այն կողմերում ռուսաց բանակը պաշար կրելու: Դրանք օգուտ են քաղում ընդհանուր խռովությունից և գաղթականների շուտափույթ ու հանկարծական չվելուց և որպես բեռնակիրներ դիմում են գաղթականներին, որ օգնության ձեռք հասցնեն և նրանց շարժական իրեղենները վերցնեն իրանց արաբաների վերա: Ալաշկերտցիք շատ սիրով են ընդունում նրանց ազգասիրական եռանդը, որպես հայերի, հավատում են իրանց կայքը աբարանցի արաբաչիներին և այնքան ժամանակ չեն ունենում, որ ճանաչեն, թե նրանք ովքեր և ինչ տեսակ մարդիկ են: Մոտ քառասուն արաբաչի առնում են տեղացիների տնային իրեղենները իրանց սայլերի վերա, բայց փոխանակ բերելու և կրկին իրանց տերերին հանձնելու, նրանք անհետանում են...: Այժմ շատ ալաշկերտցիք աբարանի գյուղորայքում իրանց կայքն են որոնում և ցավալին այն է, որ չգիտեն, թև ումից պահանջեն, որովհետև մի այնպիսի սարսափելի րոպեում նրանք հանձնեցին իրանց հարստությունը օտարին, որ նրան ճանաչելու կամ մի գրավական առնելու ժամանակ չունեցան...:

Այլև պատմում էին, թե այժմ այս և այն հայ պարոնի հոտերի մեջ արածում են գաղթականների ոչխարները, տավարները, նրանց գոմեշները, թե ինչ հրաշքով հայտնվեցան ողորմելի գաղթականի չորքոտանիքն օտարի հոտերի մեջ, — այդ մի գաղտնիք է, որ գուցե հետո կհայտնվի, բայց այսքանը ճիշտ է, որ գաղթականներն կորցրին իրանց անասունների մեծ մասը... Ո՞վ տարավ, ինչպե՞ս եղավ, այդ մենք չգիտենք:

Եվ իրավ, մարդ առանց զարմանալու մտածել չէ կարողանում, երբ նկատում է գաղթականների ողորմելի չքավորությունը: Մի՞թե այդ անբախտները իրանց հայրենիքում այսպես աղքատ են եղել. մի՞թե նրանք ոչինչ չեն ունեցել: Ի՞նչ եղավ նրանց կայքը, որտե՞ղ կորցրին իրանց հարստությունը, որ այժմ հագներին հագուստ չունին, ոտներին տրեխ, հողաթափ անգամ չկա. գիշերները մի ծածկոց չունին պառկելու, քրքրված ցնցոտիների մեջ են քնում: Հայտնի բան է, այդ մարդիկը իրանց երկրում օդի մեջ չէին բնակվում, դրանք էլ ունեին տուն տեղ, կայք և կարասիք: Բոլորն նրանք չթողեցին և փախան, մնացածն ի՞նչ եղավ: Վերջապես որտե՞ղ կորցրին իրենց անասունները, որ շինական մարդու գլխավոր հարստությունն է. անասունների համար արաբաներ պետք չէին, նրանք իրանց ոտներով կարող էին հետևել իրանց տերերին: — Այդ հարցերը այնքան փափուկ են, որ մենք ցանկություն չունինք այժմ դիպչել նրանց, թողնելով գուցե ժամանակը որևիցե կերպով կպարզե...

Այսքանը միայն կասենք, որ գաղթականների մեծ մասը վերջին աստիճանի աղքատության մեջ է, բացի իրանց կիսամերկ մարմիններից ուրիշ ոչինչ չունեն: Թվով շատ քիչ են այնպիսիքը, որ ունեն մի ավանակ, մի քանի կովեր կամ եզներ և կամ մի քանի հատ ոչխար: Մինչև այսօր վերջինները կարողանում էին պահել անասուններ, որովհետև կերակրելու համար շատ պահանջ չկար, արածացնում էին արձակ դաշտերում: Բայց երբ ձմեռը եկավ, պահել ևս չեն կարող, նախ՝ տեղ չեն ունենալ, երկրորդ՝ ձմեռվա պաշար պետք է նրանց, իսկ պաշարը, օրինակ, խոտի սայլը այս կողմերում, կամ ուր որ գաղթականներ կան, արժե 20-ից մինչև 50 ռուբլի: Որտեղի՞ց նա կարող է տանել այս գումարը, երբ մի կով պահելու համար ամենափոքրը պետք է մի սայլ խոտ ունենալ: Եվ ի՞նչ հաշիվ, 20 — 30 մանեթ տալ խոտի մի կով պահելու համար, որ յուր կերածի կես արժեքը չունի: Պատերազմի պատճառով չորքոտանիների ճարակը չափազանց թանկացել է: Ուրեմն, գաղթականներն իրանց ունեցած անասունները նույնպես կոտորելու են սովից, եթե վաղօրոք վաճառելու հոգ չտանեն: Մեր կարծիքով լավ էր վաճառել բոլորը, փողը գոնյա կմնար իրանց քսակում, մանավանդ այժմ մորթելու անասունները լավ գին ունեն, միսը ամեն տեղ թանկ է:

Ես Հովհաննես վարդապետին նույնը ասացի, թե գաղթականները, քանի որ իրանց գլուխը պահել չեն կարողանում, ուր մնաց, որ ձմեռը անասուններ կարողանային պահել և խորհուրդ տվեցի նա վաճառել տա: Նա պատասխանեց, թե ամեն բան կորցրած ալաշկերտցուն շատ դժվար է համոզել, որ նա վաճառե յուր անասունը, որ միակ բանն է մնացել նրա հարստությունից, թե նա ավելի լավ կհամարե, անասունը յուր աչքի առջև մեռնի, քան օտարի ձեռքը տա, որովհետև ալաշկերտցին նույնքան սիրում է յուր չորքոտանիքը, որքան յուր որդիքը:

Գիշերից բավական անցել էր, երբ վարդապետը յուր հայրենակիցների հետ հեռացան: Բայց նրանցից մեկը մնաց, ես նկատեցի, որ նա ասելու բաներ ունի և խնդրեցի նստել: Այդ մարդը մի բարձրահասակ հսկա էր ջլուտ և զորեղ կազմվածքով, նա բոլոր ժամանակը լուռ էր և տխուր, երբ մյուսները խոսում էին, բայց երբ որ միայնակ մնաց, լեզուն բացվեցավ: Որքա՛ն վշտեր, որքա՛ն գաղտնիքներ թաքնված էին այն ծածկամիտ տղամարդի մեջ...

Նկատելով, որ նա բավական խելացիգլուխ մարդ է, խնդրեցի, մանրամասն պատմել, թե ինչ շարժառիթներից ստիպված նրանք թողեցին իրանց հայրենիքը: Նա խիստ դժվարությամբ հանձն առավ պատմել, և ես կհաղորդեմ իմ ընթերցողին այնքան, որքան կարող եմ հաղորդել:

— Մեր երկիրը վատ չէր, — ասաց նա, — հողը ընդարձակ էր, իսկ ջուրը՝ առատ. ցանում էինք, որքան կամենում էինք և վարում էինք, որքան կարող էինք: Մենք մեր հողի տերն էինք: Մեր սարերն խոտավետ էին, իսկ մեր անասունները՝ կուշտ ու պարարտ: Մեր հարևան քրդերը չէին վնասում մեզ. մենք սիրով էինք ապրում միմյանց հետ և նրանց քիրվա (կնքավոր) էինք կոչում: Պատահում էր, որ լինում էին ավազակություններ, օրինակ, մի խումբ քրդեր ուրիշ երկրից գալով, կողոպտում էին որպես մեր, նույնպես և իրանց ազգակիցների անասունները, խտրություն չէին դնում: Մենք էլ նույնպես էինք վարվում նրանց հետ: Այդ մեր երկրի սովորությունն է:

Կառավարությունը նույնպես վատ չէր մեզ հետ. հարկերը թեթև էին: Երբեմն մուլթեզիմներն անգթություն էին անում, բայց երբ նրանց վերա զանգատ էր լինում, մեզանից անիրավացի առածը կրկին մեզ ետ էին դարձնում: Մեր առաջնորդները մեջլիսներում շեյխերի ու ղազիների հետ հավասար ձայն ունեին. եթե մեզ զրկողություն էր լինում, մեր ձայնը հասնում էր մինչև սուլթանի պալատը: Եվ քիչ էր պատահում, որ մեր խոսքը չլսեին, որովհետև հայի խոսքը ավելի ընդունակ էր, քան թուրքինը, և կառավարիչ փաշաները գիտեին, որ հայը մահմեդականի վերա սուտ խոսելու սովորություն չունի: Այսպես, ամեն կերպով լավ էին անցնում մեր օրերը:

Բայց երբ ռուսը սկսեց տիրել մեր երկիրը, աստված է վկա, մենք դատ ուրախացանք, ինչպես որ լինի, մտածում էինք, նա էլ խաչապաշտ է, մենք էլ, նա էլ մեզ հետ սուրբ ավազանի եղբայր է: Ռուսը, ասում էինք, ավելի լավ կլինի, քան թուրքը: Այս պատճառավ մենք ամեն տեղ խաչով, խաչվառով, քահանաներով և ավետարանով էինք գնում նրանց զորքի առաջը: Մահմեդականները երբ այս տեսնում էին, մեզ վերա բարկանում էին, կարծում էին, թե մենք ենք կանչել ռուսներին, թե նրանք մեզ համար են գալիս: Աստված է վկա, որ մենք այդ բանում մեզավոր չէինք: Բայց ի՞նչ անես, մահմեդականները սկսեցին մեզ հետ թշնամանալ: — Ռուսը ձեր քեռին է, գյավուրներ, ասում էին նրանք, դուք մեր երկիրը մատնում եք մեր թշնամուն...

Եվ իրավ, մենք շատ աշխատեցինք... բայց մեր բախտից ռուսը մեր երկրում երկար չմնաց: Հանկարծ լսեցինք, թե Տեր-Ղուկասովն թողնում է տիրած երկրները:

—Լա՛վ, դուք ինչո՞ւ եկաք նրա հետ, — ընդմիջեցի նրա պատմությունը:

—Մեզ ասեցին, թե ինչ հայեր մնում են այն երկրներում, բոլորին թուրքերն կոտորում են: Որքան ուղիղ էր այդ լուրը, մենք չգիտեինք, բայց այդպես ասեցին մեզ. մենք հավատացինք և սաստիկ երկյուղի մեջ ընկանք: Էլ չուզեցինք այնուհետև մնալ այն երկրում, ուր սպասում էր մեզ թուրքի սուրը, հայրենիքը մեր աչքից ընկավ... Դեռ Տեր-Ղուկասովն մեզ մոտ չհասած, կազախներ եկան, լուր տվեցին, թե շուտ քոչեցեք (չվեցեք) և ձեր գլուխն ազատեցեք: Այդ ժամանկ մեզանից շատերը, մի քանի գյուղերի բնակիչներ, հավաքված էինք Ս. Հովհաննու վանքումը, որ բերդի պես պինդ է...

—Եվ դրա համար էլ դուք փախա՞ք այնտեղից:

—Այո, բայց մենակ այդ չէր: Այն ժամանակ մենք լսեցինք, թե շեյխ-Իբադուլլան և շեյխ-Ջալալեդդինը քսան հազար քրդերով և բաշիբոզուկներով եկել, Բայազետը քանդել են, երկու հարյուր հայ ընտանիք կոտորել են, հարյուր ընտանիք գերի են տարած, իսկ մնացած բայազետցիք փախել են Պարսկաստանի Մազու քաղաքը: Ուրիշ շատ բաներ լսեցինք...: Այլևս ապրելու հույս չմնաց, ասում էին, ռուսը գնալուց հետո ձեզ էլ բայազետցոց նման կկոտորեն: Դրա համար վճռեցինք ռուսի հետ միասին հեռանալ մեր երկրից:

Այս միջոցին իմ խոսակիցը կանգ առեց, մի քանի անգամ հոգվոց հանեց, չիբուխը վառեց և փոքր-ինչ ծխելուց հետո ոգի առավ, շարունակեց.

— Այո՛, մենք վճռեցինք թողնել մեր հայրենիքը: Բայց այս բանը այնքան հանկարծակի եղավ, որ պատրաստվելու ժամանակ չունեցանք: Մեր անասունների մեծ մասը դաշտումը մնաց. շատերն սայլեր չունենալով, իրանց ծանրությունները վեր առնեք չկարողացան: Մենք աշխատեցինք չթողնել, ինչ որ մեզ համար թանկագին էր, այսինքն մեր զավակները, իսկ մյուս բաների շատ չնայեցինք: Մենք թողեցինք թակույկներով լիքն ձեթ և պանիր. մենք շատ բան թողեցինք... ալաշկերտցու հարստությունը եթե ծովը լցնեիր, կցամաքեր... Բայց ինչ որ կարողացանք մեզ հետ վեր առնել, այն էլ բավական էր, որ այստեղ քաղցած չմնայինք, բայց այն ևս չմնաց, կորա՛վ, գնա՛ց...

Ես հարցրի, թե գաղթականները գլխավորապես ո՞ր տեղերից դուրս եկան:

— Գաղթականները հավաքվեցան, — ասաց նա, — գլխավորապես Ալաշկերտի (Վաղարշապատի) վիճակից, Ղարաքիլիսայի վիճակից, Սուրբ Հովհաննու վանքի՝ այսինքն Ուչքիլիսայի (Բագրևանդի) վիճակից, Բայազետի Չուխուր կոչված վիճակից: Ընդամենը 30 գյուղի բնակիչներ հավաքվեցան միասին: Մեզ վերա դրած
էին լեզգի և կազախ ձիավորներ, որ բերեն և ռուսաց սահմանից անցկացնեն: Իմ լեզուն չէ կարող նկարագրել այն սարսափելի ճանապարհորդությունը, որ մենք ունեցանք: Աստված իմ թշնամուն էլ ցույց չտա այն տանջանքը, որ մենք կրեցինք...:

—Պատմեցեք, պատմեցեք, ասեցի ես, նկատելով, որ նա դժվարանում էր շարունակել:

—Որպեսզի թշնամուն չհանդիպեինք, մեզ բերում էին զարտուղի ճանապարհներով. — այդ Ղուջախու և Խանի անիծյալ ճանապարհն է, որ անցնում է նեղ կիրճերի միջով, անդունդների վերայով և սարսափելի ելևէջներ ունի: Մեր սայլերի մեծ մասը մնաց կես ճանապարհի վերա, անցկացնել չկարողացանք: Նրանք մնացին բոլոր այն բաներով, որ բարձած էին: Ինչ որ մնում էր, այլևս նրա տերը չէինք: Այդ դեռ ոչինչ: Շատ անգամ ընկնում էր մի երեխա մոր գրկից, շատ անգամ մի կին, աղջիկ, տղա, հոգնածությունից թուլանում էին, ուշաթափ էին լինում, վեր էին ընկնում. — վեր առնելու ժամանակ չկար և կամ այն աստիճան խռովված էր բազմությունը, որ նկատող չէր լինում: Մայրը կորցնում էր որդին, այրը կորցնում էր յուր ամուսինը և ազապ տղամարդը՝ յուր նշանածը...

Չգիտեմ ինչո՞ւ վերջին խոսքը արտասանելու ժամանակ նրա աչքերում երևաց արտասուք, նրա ձայնը դողաց և դեմքը գունատվեցավ:

— Սարսափելի մութ գիշեր էր, երբ հասանք մի տեղ, ուր կարծես մեր առջև բացվեցավ մի անտակ ծով. գնացողը, մոտ եկողը կուլ գնաց… — Այդ Արուջացի ճահիճներն էին, որ հարյուրավոր մարդկանց գերեզման դարձան…:

Կարծես մի աներևույթ ձեռք քշում էր մեզ. քշում էր անդադար և շունչ առնելու ժամանակ չէր տալիս: Մենք գալիս էինք գիշեր և ցերեկ առանց հանգիստ առնելու: Հոգնածությունը մի կողմից, քաղցածությունը մյուս կողմից չարաչար տանջում էին մեզ, բայց ավելի անտանելի էր ծարավը: Ծարավը այնպիսի մի կատաղության էր հասցրել մեզ, որ երբ ճանապարհին կոտրվեցավ մի արաղի տակառ, այր, կին, երեխա, բոլորն վրա թափվեցան և սկսեցին ջրի պես խմել: Շատերը դրանից հիվանդանալով մեռան, որովհետև այնպիսի մարդիկ էին, որ իրանց կյանքում արաղի համը առած չէին:

Երբ հասանք Իգդիր, կարծեցինք, թե ազատված ենք: Այնտեղ երկյուղ չկար: Գիշեր էր, երբ հասանք: Մի քանի օրվա անընդհատ ճանապարհորդությունից ջարդված և թուլացած, հանգստանալ կամեցանք: Մենք գիշերեցինք մի լեռան զառիվայրի վերա: Այդ հանգստությունը քուն չէր, այլ մի տեսակ թմրություն կամ մեռելություն էր, որ տիրում է մարդուն անտանելի հոգնածությունից հետո: Ամբողջ գիշերը մենք անցուցինք անզգայության մեջ: Երբ առավոտյան աչքներս բաց արինք, ի՞նչ տեսանք, — մեր անասունների կեսը չէր մնացել, ութն հազարի չափ չորքոտանիք անհետացել էին…

Այստեղ ալաշկերտցին այլևս չկարողացավ շարունակել յուր պատմությունը, արտասուքը խեղդեց նրան:

***

Այս պատմությունից ընթերցողը կարող է փոքրիշատե հասկանալ, թե ինչու մի ահագին բազմություն, որ յուր հայրենիքում բարօրության մեջ էր ապրում և մինչև անգամ հարուստ էր, այսօր մերկ և աղքատ գյուղից գյուղ է թափառում, ողորմություն է խնդրում:

Առաջարկենք մի հարց. ի՞նչ պետք է արած, որ այդ սովից, մահից և հափշտակությունից մնացած բազմությունը պահպանվի և բոլորովին չոչնչանա: Գաղթականների թիվը սկզբում 3000 ընտանիք էր, իսկ այժմ նրա կեսը հազիվ է մնում: Այդ զգալի փոփոխությանը պատճառ են բերում, թե առաջին թվանշանների մեջ պետք է սխալմունք մտած լինի, իբր թե 3000-ի մի մասը հույներ են եղել, մի մասը եզիդիներ են եղել, մի մասը մի քանի անգամ հաշվի է անցել և այլն: Բայց հայտնի է, որ հույներ չկային և եզիդիների թիվը 100 ընտանիքից ավել չէ: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թե անդադար մի գյուղից մյուսը անցնելով, միևնույն ընտանիքը մի քանի անգամ հաշվից անցել է և, այսպիսով, գումարը բազմապատկվել է. — այդ նույնպես հավանական չէ, որովհետև հաշիվը եղել է այն ժամանակ, երբ գաղթականներն ամփոփ դրություն ունեին և տակավին չէին ցրված զանազան կողմեր: — ուրեմն ինչո՞ւ պակասեց երեք հազարը:

Գաղթականների թվի այսպես զգալի կերպով փոքրանալուն ուրիշ պատճառ մեր կարծիքով չէ կարելի տալ, բացի նրանից, որ մի մասը չկարողանալով տանել տեղային կլիման — կոտորվեցավ, ամբողջ ընտանիքներ սպառվեցան, ոչնչացան: Ով որ նայելու լինի Գայանյան վանքի մոտ կազմված նոր գերեզմանատանը, կհամոզվի, որ գաղթականներից մեռածների թիվը փոքր չէ: Եվ որքա՞ն այսպիսի գերեզմանատներ լցված են նրանց ննջեցյալներով…: Շատերը ճանապարհին,

դեռ չհասած ռուսաց սահմանը, ոչնչացան, դրանց թվում էր գլխավորապես թույլ և քնքուշ սեռը՝ կանայք, աղջիկներ, երեխայք, որոնք շատ անգամ սայլերի անիվների տակ ընկնելով ջարդվում էին: Մի երկրորդ պատճառ ևս գաղթականների թվի պակսելուն այն է, որ նրանց մի մասը, օգուտ քաղելով ներկա խռովություններից, փախան գնացին դեպի իրանց հայրենիքը: Այժմ մնացել է ոչ ավելի քան 1500 ընտանիք: Ի՞նչ պետք է արած, որ դրանք, գոնյա պահպանվեին, մինչև նրանց վիճակը մի կերպով որոշվեր:

Մենք գիտենք, որ Թիֆլիսում և Երևանում կազմվել են մասնաժողովներ գաղթականների վերա հոգ տանելու համար. մենք գիտենք, որ զանազան քաղաքներից լինում են մարդասիրական օժանդակություններ գաղթականներին օգնելու համար: Բայց մասնաժողովները տակավին մի նշանավոր գործ կատարած չեն: Նրանք դեռ փող են հավաքում, իսկ փողը ի՞նչ պետք է անեն, — հայտնի չէ: Մեզանում առհասարակ գործը խեղդվում է ձևամոլության մեջ: Դե՛ մարդ ուղարկենք, տեղեկություն հավաքենք, այստեղ գրենք, այնտեղ գրենք, հետո նրա հարմար կարգադրություն կանենք. — այս բոլորն այնքան ծանր ու բարակ բաներ են, որ հազիվ թե խեղճ գաղթականը սպասելու համբերություն կունենա: «Մինչև Շուշանը զարդարվի, պատարագը կարձակվի»: Մինչև մասնաժողովների անդամները իրանց պլանները գծեն, ողորմելի գաղթականը հոգին կտա...

Մեզ պատմեցին, թե Թիֆլիսի մասնաժողովը յուր կողմից մի պարոն էր ուղարկել գաղթականների վիճակը հետազոտելու և այդ պարոնը Ղազարապատում յուր ոտների տակ բնակվող երեք ալաշկերտցի ընտանիքներից մեկը միայն տեսնելու բարեհաճություն էր ունեցել, չնայելով, որ մի ամբողջ օր մնացել էր Էջմիածնում:

Ղամարլուի փոստային իջևանում պատահեցավ մի պարոն ևս, որն դիմեց ինձ ու ընկերիս տեղեկություններ հավաքելու: Մի բոլորովին ձանձրանալի պաշտոն է հանձնված ինձ, — ասաց նա, — ես պետք է գաղթականների բնակության համար տեղ որոշեմ: Եվ նա մեզ ցույց տվեց յուր պաշտոնական թղթերը, թեև պահանջող չկար: Այդ պարոնը չգիտեր մինչև անգամ, թե գաղթականներն ի՞նչ ազգից են և որտե՞ղ են բնակվում այժմ:

Երևանի մասնաժողովի անդամ պարոն Վ. Ե. ինձ ասաց, թե նոր Բայազետու և Ալեքսանդրապոլու կողմեր արքունական հողեր կան, որոնք զանազան անձինքների վարձով են տված այն պայմանով, որ եթե կառավարությանը հարկավոր լինին, պետք է ետ առնվին: Խոսվում է, թե հիշյալ հողերի վերա կարգադրելու են բնակեցնել գաղթականներին: Մեր կարծիքով, թե Երևանի, թե Նախիջևանի և թե Ալեքսանդրապոլու գավառներում այնպիսի ազատ հողեր չկան, որոնց վերա կարելի լիներ նոր բնակություններ հաստատել. կան միայն անապատներ, որոնք անպետք են: Ժողովուրդը ամեն տեղ գանգատվում է հողի և ջրի պակասության համար: Այս կողմերում տարվա մեջ պատահած կռիվների մեծ մասը հողի և ջրի վերա է:

Մեր կարծիքով, այժմ մտածել գաղթականներին բնակեցնելու հողի մասին՝ բոլորովին ավելորդ է, նախ, այն պատճառով, որ շատ հավանական չէ, որ նրանք պատերազմից հետո ցանկանան մնալ մեզ մոտ. երկրորդ, դիցուք թե հիմա տվեցինք նրանց հող. ի՞նչ պետք է անեն, ձմեռը արդեն սկսվել է, կարո՞ղ են իրանց համար տուն և տեղ շինել և ինչով շինել, երբ ոչ ուտելու հաց ունեն և ոչ կոպեկ փող:

Գաղթականների համար այժմ հարկավոր են պատրաստի բնակարաններ: Այդ ամենակարևոր խնդիրն է: Պետք է մտածել ձմեռվա բնակության համար, որ պատսպարվելու մի ապահով տեղ ունենային: Մինչև այսօր, քանի ցրտերը չէին սկսվել, նրանք ապրում էին թափառական կամ աստանդական վիճակի մեջ. մի քանի օր մնում էին մի հայի տան մեջ մինչև կամ տանուտերն էր ձանձրանում և կամ իրանք հյուրերը նեղվելով, հեռանում գնում էին մի ուրիշ տեղ նոր բարերար որոնելու: Դրանով է մեկնվում նրանց մի գյուղից մյուս գյուղ անդադար չվելը: Մինչև այսօր կարելի էր այս տեսակ կյանք վարել, որովհետև եթե գաղթականը գնում էր մի գյուղ և տեղ չէր գտնում, դարձյալ կարողանում էր յուր օրերը բացօթյա անցուցանել, բայց ձմեռը անհնար է այսպես ապրել: Ձմեռվա համար պետք է ապահով բնակարան: Բայց գլխավոր հարցը նորանում է, թե որտեղից պետք է ունենալ:

Վեհափառ կաթողիկոսի խնամատարությունիցն է կախված վիճակավոր առաջնորդների, հոգևոր իշխանության գործակալների և գյուղական քահանաների միջնորդությամբ այնպես կարգադրել, որ գաղթականներն այս ձմեռ ապահով պատսպարաններ ունենային գյուղացիների տներում: Փույթ չէ, եթե այդ պատսպարանը կլիներ գյուղացու խրճիթի մի անկյունը կամ նրա գոմը, բավական է միայն, որ մերկ և պանդուխտ ալաշկերտցին մի տաք տեղ կունենար բնակվելու:

Իսկ ինչ որ վերաբերում է նրանց ուտելիքին, հոգևոր իշխանությունը վեհափառի հրամանով վաղուց արդեն տնօրինել էր կալերի ժամանակ ամեն գյուղից ցորյան հավաքել և պահել առանձին ամբարներում գյուղական քահանայի և տանուտերի հսկողության ներքո: Այս կարդադրությունը շատ տեղերում հաջողված է, որովհետև գյուղացու համար մի մեծ ծանրություն չունի, երբ նա յուր կալից մի քանի կոտ ցորյան տալիս է. նա յուր բերքի առատությունից միշտ հոժարությամբ բաժին է հանում դերվիշներին և աղքատներին: Իսկ այդ մանր-մանր ստացված կոտերն հավաքվելով կարող են մեծ քանակություն կազմել, եթե օրինավոր կերպով խնամք տարվի և եթե անհավատարիմ ձեռք չդիպչի...

Կրկնում եմ, հոգևոր իշխանության ներգործությունը կարող է ավելի հիմնավոր և օգտավետ լինել: Բայց ցավալին այն է, որ թե Թիֆլիսի և թե Երևանի մասնաժողովները չուզեցին իրանց գործունեությունը միացնել Ս. Էջմիածնա հետ: Այսպիսով նրանք զրկվեցան մի զորեղ և ազդու ուժից: Հոգևոր հարդարմունքը մեծ նշանակություն ունի այն գործերում, որ կապ ունի ժողովրդի ջերմեռանդության և նրա զոհաբերության հետ: Արդարև, մասնաժողովները դիմեցին վեհափառին, իսկ այդ ավելի ձևի համար էր և որևիցե իսկական նշանակություն չուներ:

Ես ավելի մեծ նշանակություն չեմ տալիս այն քսան հազարին, որ հավաքվել է Թիֆլիսի մասնաժողովի գանձարանում. այդ գումարը եթե բաժանվելու լինի գաղթականների վերա, հազիվ թե յուրաքանչյուրին 50 կոպեկ կհասնի: Մի քանի օրվա ծախս է: Այլևս ավելի մեծ նշանակություն եմ տալիս այն կոտերով հավաքված ցորյանին, որ կարող է ահագին քանակություն կազմել, եթե օրինավոր կերպով շարունակվի: Հոգևոր իշխանությունը ամեն միջոցներ ունի գաղթականների վիճակը ապահովելու մասին: Մինչև այսօր տերտերների հորդորելով գյուղացիների տված հացը, հագուստը և կերակուրը, եթե հաշվելու լինենք, տասն անգամ ավելի մեծ արժեք ունի, քան այն արծաթը, որ հավաքվել է մասնավոր նվիրատվություններից: Ուրեմն, եթե գաղթականների կյանքը կարելի է պահպանել մինչև նրանց ապագան որոշվի, — այդ կարելի է անել դարձյալ մեր հայ գյուղացիներով. իսկ գլխավոր հորդորող, քաջալերող և ազդող գործիչը պետք է լինի մեր հոգևոր իշխանությունը:

***

Վաղարշապատից ես դուրս եկա, երբ բոլորովին մութն էր: Խորասուզված դառն մտածությունների մեջ, համարյա ինձ անլսելի էր մնում զանգակների ձայնը փոստայի կառքի: Խաղաղ և հանգիստ գիշեր էր: Հասնելով Հռիփսիմեի վանքի դիմացը, հանկարծ ձիերը խրտնելով ետ-ետ գնացին և կառքը փոքր էր մնում, որ շուռ գա, երբ խավարի միջից հայտնվեցավ մի կերպարանք: «Որդի՛ս, որդի՛ս, սիրուն որդիս տվե՛ք», — գոռում էր նա լալագին ձայնով:

Նա ուրվականի պես անցավ:

Մեր կառքը շարժվեցավ: Հեռվից դեռ լսելի էր լինում նույն ձայնը: «Որդի՛ս, որդի՛ս եմ ուզո՛ւմ... տվե՛ք իմ որդին»...

—Այդ ո՞վ էր, — հարցրի կառավարից:

—Մի ալաշկերտցի կին է, խեղճը խելագարված է, — պատասխանեց կառավարը. — ասում են ճանապարհին որդին կորցրել է և գիշերները թափառում է այդ անապատներում, որդին է պտռում: — Լավ էր, չմնաց կառքի տակը...

Ե

Հայ գաղթականները Երևանում և նրանց բողոքը: — Գաղթականների մեջ սայլապաններ, արհեստավորներ, վաճառականներ և դրամատերեր: — Երևանի և Թիֆլիսի մասնաժողովների նշանակությունը գաղթականների հոգատարության մեջ: — Երևանի սեմինարիան և պ. Բեկնազարյանցը: — Օրիորդաց դպրոցը: — Երևանը որպես թուրքաբնակ քաղաք և նրա աղետավոր գիշերը: — Վաճառականություն: — Հասարակաց այգին և միրզա Թաթոսները:

Վաղարշապատից ես վերադարձա Երևան: Այստեղ գաղթականների թիվը շատ փոքր է. պետք է ասած, որ երևանցիք բավական անկարեկից են գտնվել դեպի իրանց թշվառ ազգայինները: Գյուղացիք համեմատաբար ավելի զգացմունքի տեր են երևում, քան թե այստեղի քաղաքացիքը: Նրանք կարող էին իբրև ծառա կամ աղախին իրենց տներում պահել գաղթականներից այն բազմաթիվ պատանիներին և աղջիկներին, որոնք բոլորովին անտեր են մնացած իրենց ծնողքը կորցնելու պատճառով:

Առհասարակ ես գաղթականներից լսում էի այսպիսի գանգատներ. «Մենք աշխատանքի սովորած մարդիկ ենք, գործից մենք չենք փախչում, թող մեզ բանեցնեն և հասարակ մշակների պես վարձատրեն: Մուրացկանությունը մեզ անտանելի է, ձրի հացը մենք մարսել չենք կարողանում»: Իրավ է, որ հայերի այս գաղթականությունը, բացի մեծամեծ վնասներից, ունեցավ և այն ամենագլխավոր վնասը, որ մի ամբողջ հասարակություն բարոյապես մահացավ, սովորելով մուրացկանության:

Գաղթականները եկան այն ժամանակ, երբ դեռ նոր էր սկսվել հունձքը: Այս միջոցում հազարավոր հայեր, ասորիներ և թուրքեր Պարսկաստանից գալիս են և տարածվում են Երևանի նահանգից սկսյալ մինչև Թիֆլիս, հունձ են հնձում և ժամանակավորապես մնալով, բավական

փող են վաստակում: Մի՞թե գաղթականները նույնը չէին կարող անել, քանի որ այս գործի մեջ լավ վարժված էին: Հունձքից հետո սկսվեցավ այգեքաղը: Գյուղացիք այն ժամանակ ևս նրանց գործ չտվեցին, որովհետև հոժարվում էին խեղճ ալաշկերտցուն բանեցնել միայն այն պայմանով, եթե նրանք կբավականանային մի փոր հացով, առանց վարձ ստանալու. թեև տեղական սովորության համեմատ մշակը օրական 40 — 50 կոպեկ փող է ստանում և հացն էլ նորանից է ստանում, որի համար աշխատում է: Ինձ պատահեց տեսնել մի քանի ալաշկերտցիք, որոնք թուրք գյուղում էին բանում: — Ինչո՞ւ հայերի գյուղերում չեք բանում, — հարցրի ես: — Հայերը փարա չեն ի տա, աղա, — պատասխանեցին նրանք:

Ինձ պատահեց նաև հարցնել մի հայ գյուղացու, թե ինչո՞ւ նրանք գործ չեն տալիս գաղթականներին: — Հպարտ և ծույլ մարդիկ են, աղա, — պատասխանեց նա. — սովորել են ձրի առնել և ձրի ուտել: Եվ իբրև փաստ նա ցույց տվեց մի ընտանիք, որ յուր տանը ընդունած էր: — Տե՛ս, ավնլացրուց նա, — ամբողջ օրը քաղցած պառկում են, բայց չեն ուզում մի բան շինել:

Ես հետաքրքրվեցա տեսնել այդ ընտանիքը: Գերդաստանի հայրը մի հասակն առած մարդ էր. յուր ցնցոտիների վերա նա հագած ուներ բավական նոր մահուդե վերարկու — միակ մնացորդը նորա կորցրած փառքի: Նորա խոսքերից և ձևերից երևում էր, թե այդ պատկառելի մարդը ստոր աշխատանքի սովորած չէր, և գուցե մի ժամանակ ունեցել էր յուր ձեռքի տակ շատ բանվորներ, իսկ այժմ յուր աղքատության մեջ դարձյալ վեհ էր: «Փեշով ոսկի կցրվեի, — ասաց նա արտասվալի աչքերով. — բայց այժմ մի պատառ հացի համար պետք է վիզս ծռեմ... լավ է, որ քաղցած մեռնեմ»...

Գաղթականների մեջ շատ կան այսպիսի աղքատացած մեծատուններ, և դրանք են, որ տեղացի ժողովրդի մեջ ծույլի նշանակություն են ստացել: Շատ բնական է, որ մի մարդ, որ քանի օր առաջ հարուստ էր, այսօր աղքատանալով, իսկույն իրան չի խոնարհացնի ստոր աշխատանքների. այսպիսիներին պետք է հարգել, նրանք անհաջող արկածների զոհեր են...

Գաղթականներից նրանք, որոնք իրանց հետ սայլեր ունեն բերած, որոնք կարողացել են իրանց եզները ազատել ճանապարհի հափշտակությունից, կարողանում են նաև իրենց ընտանիքը պահել ազատ աշխատանքով: Նրանք զանազան մթերք են տեղափոխում դեպի Ալեքսանդրապոլու և դեպի Բայազետի կողմերը: Բայց դժբախտաբար, դրանց թիվը շատ փոքր է, որովհետև շատերն չեն կարողացել իրանց բեռնակիր անասունները հասցնել մի ապահով տեղ...

Գաղթականների մեջ արհեստավորներ նույնպես փոքր են թվով: Նրանց մեջ կան, արդարև, այնպիսի արհեստավորներ, որոնք գյուղացիներին պետք են, օրինակ, սայլ, արոր, գութան շինողներ, բրուտներ, դարբիններ և այլն: Այսպիսիքը հազիվ կարող են գործ գտնել, որովհետև Երևանի նահանգում համարյա գյուղ չկա, որ յուր հյուսնը, ատաղձագործը և դարբինը չունենա: Գյուղացիք իրանց ծանոթ արհեստավորը թողած՝ օտարին գործ չեն հավատալ: Թողյալ այդ, գաղթականների մեջ գտնված արհեստավորները գործիքներ ևս չունեն:

Այդ մարդիկը, որպես լավ երկրագործներ և անասնապահներ, հենց որ հեռացան մայր հողից, այնուհետև ապրուստի միջոցները դժվարանում են նրանց համար: Նրանք սովորել են գործ ունենալ երկրի հետ և ամեն ինչ նրանից պահանջել: Այդ պարապմունքի մեջ մեծ ընդունակություն ունին: Վաճառականներ եղել են նրանց մեջ խիստ աննշան թվով: Նրանց բոլոր հարստությունը բաղկացած է եղել ընտանի անասուններից և երկրագործական բերքերից, որոնց

առևտուրի մեջ է պտուտվել նրանց վաճառականությունը: Նրանց մեջ եղել են և դրամատերեր: Բայց որովհետև գյուղացի դրամատերը, մանավանդ այն երկրում, ուր կայքի ապահովություն չկա, սովորաբար յուր արծաթը հողի տակ թաքցրած է պահում, այս պատճառով գաղթականների ոմանց հարստությունը մնացել է հողի մեջ ծածկված իրանց հայրենի երկրում: Այս շատ հավանական է, որովհետև եթե նրանք այս սովորությունը ևս չունենային, այսուամենայնիվ, պատերազմի վտանգի ժամանակ գյուղացիք իրանց թանկագին իրեղենները թաքցնում են հողի մեջ, որպես իգդիրցոց համար պատմում էին, որ թեև ռուսաց հպատակներ են, բայց Բայազետի աղետավոր անցքից հետո, իրանց հարստությունը խորելով գետնի մեջ, փախան դեպի Արագածի ստորոտներում գտնված հայոց գյուղորայքը, որպիսի են Աշտարակ, Օշական և այլն:

Բայց պետք է այն ևս նկատել, որ գաղթականներից կան և այնպիսի բախտավորներ, որոնք կարողացել են իրանց արծաթը բերել իրանց հետ. թեև դրանց թիվը շատ փոքր է, բայց շատերի համար խոսվում է, թե դիտմամբ աղքատ են ձևանում, որպեսզի գաղթականներին բաժանվելիք օժանդակությունից մասն ստանան: Բայց ինձ բոլորովին անհուսալի է երևում այս կարծիքը:

Միայն այդքանը պետք է ի նկատի ունենալ, որ գաղթականների մեծ մասը բոլորովին զուրկ են ապրուստի միջոցներից, իսկ ոմանք կարող են իրանց գյուխը պահել: Այսպիսիներին որոշելու համար և իսպառ կարոտյալները ճանաչելու համար՝ դիմելու է նրանց տանուտերերին, քահանաներին և իշխաններին, որոնց ավելի հայտնի է իրանց ժողովրդի յուրաքանչյուրի վիճակը, և նրանց խորհրդով բաշխումներ անելու է: Այս իրողության վերա Թիֆլիսի և Երևանի մասնաժողովների ուշադրությունը դարձնելով, հարկավոր եմ համարում ավելացնել, որ Երևանի մասնաժողովին ավելի հարմար է հոգալ գաղթականների վիճակի վերա, այն կողմից, որ նա ավելի մոտ լինելով, կարող է միշտ ճիշտ կերպով ուսումնասիրել նրանց դրությունը և դարման տանել կարևոր պետքերին, մինչդեռ Թիֆլիսի մասնաժողովը ստիպված է ամեն անգամ մեծ ծախսեր անել, մարդ ուղարկել և զուցե սխալ տեղեկություններ հավաքել...

Թիֆլիսի մասնաժողովը, կազմված լինելով կենտրոնում, կարող է ծառայել այն նպատակին, որ փող հավաքե, նվերներ ստանա, հագուստներ պատրաստե և այլն, իսկ դրանց բաշխման և գործադրության տնտեսությունը Երևանի մասնաժողովի վերա թողելու է: Ես առիթ ունեցա Երևանում տեսնվիլ տեղային մասնաժողովի անդամ պ. Վ. Ե.-յանի հետ. նա բավական լավ ուսումնասիրած էր գաղթականների դրությունը և նրանց անհրաժեշտ պետքերը: Ես թույլտվություն չունիմ պարոնի կողմից հրատարակել մեր ունեցած մասնավոր խոսակցությունը, միայն այսքան կասեմ, որպես ինքը պարոնը, նույնպես յուր պաշտոնակիցները, այնքան ծանոթ են մեր ամենիս, և այնքան արժանահավատ անձինք են, որ կարելի է ամեն կերպով վստահանալ նրանց բարեմտությանը: Եվ գլխավորն այն է, որ այդ մարդիկը, որպես բնիկներ, ավելի լավ գիտեն իրանց երկրի հանգամանքները և ավելի հարմարություն ունին նվիրատուների ընծաները իրանց նպատակին հասցնելու:

Երևանում երեք օր մնալով, ես միջոց ունեցա տեսնել տեղացի օրիորդաց և տղայոց դպրոցները: Վերջինը ես տեսել էի մի քանի տարի առաջ ևս, բայց ամենաթշվառ վիճակի մեջ: Իսկ այժմ պ. Բեկնազարյանցի տեսչության օրով բավական բարեկարգվել է նա և ավելի հառաջադիմության հույս է տալիս, մանավանդ երբ պ. Բեկնազարյանցը ունեցավ պ. Աղայանցի նման մի լավ պաշտոնակից: Ես ներկա գտնվեցա պ. Բեկնազարյանցի տարրական ֆիզիկայի և պ. Աղայանցի հայ պատմության դասերին, — երկուսն էլ զոհացուցիչ գտա:

Երևանի դպրոցի, յուր թշվառ անցյալի հետ համեմատելով, այժմյան բարեկարգությունը թեև գլխավորապես պարտական է պարոն տեսչի ջանքերին, բայց պետք է այն ևս նկատել, որ այժմյան հոգաբարձությունը չէ, որ ինչ որ էր մի քանի տարի առաջ: Հոգաբարձուք այժմ ընտրված են բարենպատակ և ուսյալ անձինքներից, որոնք կարողացել են Երևանի նման անտարբեր և անուսումնասեր հասարակության մեջ դպրոցի վիճակը բավական բարձրացնել: Երևանցին կամ ամենևին ուսման վերա չէ մտածում և կամ մտածում է այն բանի վերա, որ յուր որդին փոքրիշատե ռուսերեն սովորի, բավական է, որ նա որևիցե դատարանում ամենաստոր գրագրի տեղ կբռնե: Նա փառավորվում է դրանով, որ յուր որդին ծառայող է, թեև նա մի խոհարարի վարձ չէ ստանում, բայց նրան միրզա Թաթոս են կանչում: Երևանցին հայոց լեզվի և հայոց դպրոցի վերա արհամարհանքով է նայում, բայց չգիտե ողորմելին, որ յուր որդին մայրենի լեզվի դպրությունը սովորելեն հետո, ավելի լավ կսովորե օտարինը:

Օրիորդաց դպրոցում ես գտնվեցա կրոնասույց տեր հոր դասի ժամանակ: Նա ինձ ասաց, թե առաջին դասն է, որ սկսել է կրոնից: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ էր այդ առաջին դասը, որ պատվելի հայրը տալիս էր փոքրիկ աղջիկներին: — Նա բացատրում էր, թե ինչ է Սուրբ Երրորդությունը, բացատրում էր խնձորի համի, հոտի գույնի վերա...: Ես հավատացած եմ, որ խեղճ աղջիկներն այնքան էին հասկանում տեր հոր խոսքերը, որքան հասկանում էին այն անզգա տախտակներն, որոնց վերա նստած էին: — Կրոնի դասատվությունը հարկավոր է մեր դպրոցներում և շա՛տ հարկավոր, բայց ոչ թե այն բաները, որոց մեջ մինչև անգամ բարձր աստվածաբանությունն խարխափելով է պտտվում: Իմ կարծիքով, այնպիսի փոքրիկների հետ ավելի օգտավետ կլիներ պարապել Սուրբ Գրքի այն տեղերից, որ նրանց վերա բարոյական ազդեցություն ունենային:

Երևանը, յուր դիրքին նայելով, դարձյալ մնացել է թուրքի քաղաք: Ասիական կեղտոտությունը տիրում է ամեն առարկայի վերա, սկսյալ մարդիկներից, մինչև փողոցները, հրապարակները և տները: Թուրքը այստեղ նույնպես կատաղի է և նույն արհամարհանքով է նայում քրիստոնյայի վերա, որպես Հասան խանի ժամանակ: Զարմանալին այն է, որ հայերը տակավին հին երկյուղի նախապաշարմունքից չեն ազատվել, մահմեդականի անունը մինչև այսօր նրանց վերա սարսափ է ազդում: Պատճառն այն է, որ այդ ազգը դեռ մնացել է յուր վաղեմի բարբարոսության մեջ, իսկ հայը հին ստրկական բնավորությունը չէ փոխել: Շատ անգամ թուրքի գործած, բայց հայերին հայտնի եղած մի չարագործություն մնում է ծածկված և անպատիժ: Երբ ասում ես հային. — ինչո՞ւ չես գնում և հարկավոր տեղում հայտնում: Նա տալիս է այս սովորական պատասխանը. «Ի՞նչ անեմ, անօրեն է, վնաս կտա...»: Ինձ պատահեց այս տարի հունիս ամսում գտնվել Երևանում: Բայազետի աղետավոր լուրը դեռ նոր էր հասել այդ քաղաքը: Գիշեր էր, երբ նահանգապետը Իգդիրից վերադարձավ և ոստիկանության միջոցով հայտնեց հայերին, թե վտանգ է սպառնում, թող իրանց պահպանեն...

Սոդոմի և Գոմորի կորստական գիշերը այնքան սարսափելի չէր կարող լինել, որպես այն գիշերը երևանցոց համար: Մի քանի րոպեում քաղաքը լցվեցավ ողբով, աղաղակներով: Ընդհանուր խռովությունը տիրեց ամեն տեղ: Փոքրիկ տների գերդաստանները փակչում էին մեծ տներում, հարևանի մոտ պատսպարան գտնելու, հույսը դնելով շինվածքի ամրության վերա: Վաճառականները խանութներից իրանց ապրանքը փոխադրում էին և թաքցնում տների խուլ անկյուններում: Այսպիսի դեպքերում հայը ամեն բանից առաջ մտածում է յուր սիրելի ապրանքի

վերա: Ամեն րոպե սպասվում էր, թե քսան հազար քրդի ձիավորներ կլցվին քաղաքը, և տեղացի թուրքերն ևս նրանց հետ խառնվելով, հայերին կկոտորեն, կթալանեն...:

Այս օրհասական տագնապի միջոցին ես կանգնած էի մի կտորի վերա, իմ չորեք կողմից լսելի էին լինում խառն հառաչանքի ձայներ: Ամեն մարդ շտապում էր փախչել... Ամեն մարդ թաքուստ էր որոնում... բայց ոչ ոք չէր պատրաստվում դեմ դնել թշնամուն, կռվել, սպանել և սպանվիլ, և ապա յուր կինը, աղջիկը հանձնել հաղթողի կամքին...

Թուրքերի տանիքներից արդեն լսելի էին լինում հրացանների խուլ որոտմունք, նրանք ձևացնում էին որպես թե պատրաստվում են հարձակվող թշնամու դեմ: Իսկ հայերի տանիքների վերա տիրում էր. գերեզմանական լռություն: Ձենք ասած բանը նրանց տներում չկար: Հայը զենքից այնքան է խորշում, որքան սատանայից:

Իմ աչքի առջև ներկայանում էր հայը յուր ամբողջ պատմական այլանդակությամբ: Եվ ես լցված խորին ատելությամբ, ասում էի այս խոսքերը, «Թո՛ղ գան, թո՛ղ կոտորեն, թո՛ղ ձեր կանայքը ձեր աչքի առջև անպատվեն, դուք սովորել եք այդ բաներին... այսպես էին և ձեր պապերը, այնպես էլ մնացիք և դուք... — Ով որ յուր գլուխը պահել չէ իմանում, կոտորելու իրավունքը ինքն է տալիս թշնամուն:

Առավոտյան, ով որ միջոցներ ուներ, ֆուրգոններ, ֆայտոններ, փոստայի սայլեր վարձելով սկսան փախչել դեպի զանազան կողմեր, իրանց անկարող եղբայրներին թողնելով բախտի և ճակատագրի կամքին: Տագնապը ավելի սաստկացավ, երբ հրամայվեցավ կանայքը հավաքել բերդում: Թուրքերի երեսի վերա խաղում էր մի արհամարհական ժպիտ, իսկ հայերը մեռելի գույն էին ստացել: Բարեբախտաբար մի քանի օրից հետո քաղաքը մուտք գործեցին ութն թնդանոթներ մի զունդ զինվորների հետ: Ժողովուրդը փոքր-ինչ հանգստացավ: Հայերը կրկին բաց արին իրանց խանութները և շուտով մոռացան անցյալը...

Երևանի վաճառականությունը կայանում է գլխավորապես երկու արդյունաբերության մեջ — բամբակի և քիշմիշի առևտրում: Բամբակի մշակությունը Երևանի նահանգի նշանավոր հարստությունն է կացուցանում, որը բավական մեծ քանակությամբ հավաքվում է քաղաքը և այստեղից տարվում է դեպի Թիֆլիս, Մոսկվա և ուրիշ տեղեր: Գնողները կամ արտահայտողները լինում են ըստ մեծի մասին ագուլեցի հայ վաճառականներ, որոնք աշնան սկզբից գալով այստեղ, մնում են ամբողջ ձմեռը և բամբակ են հավաքում:

Տեղացիների մեջ նշանավոր դրամատերեր չկան, ասպարեզը մնացել է զոկերին: Եվ երևանցի նախանձոտ հայը, փոխանակ գործով նրանց հետ մրցություն անելու, սկսում է տեսակ-տեսակ ինտրիգաներ հնարել:

Վերջին ժամանակներում Երևանի բամբակի տեսակը բավական ազնվացավ, երբ սկսան Ամերիկայի սերմ ցանել. այս բանին պատճառ եղավ տաճկաստանցի հայ վաճառական Մեյլան-օղլին, որ հիմնեց Երևանի մոտ բամբակ մաքրելու մի գործարան: Իսկ այժմ Ամերիկայի բամբակի միայն անունն է մնացել, որովհետև օտարերկրյա սերմը, ենթարկվելով տեղային կլիմայի և հողի ազդեցությանը, հետզհետե փոխվել է, բերքը տեղական հատկություն է ստացել: Իսկ ցանողներն այնքան տխմար են, որ չեն մտածում նոր սերմ բերել տալ, չնայելով, որ օգուտը տեսել են. —

Ամերիկայի մաքուր սերմից արդյունաբերված բամբակը յուրաքանչյուր փթում միշտ մի քանի ռուբլի բարձր արժեք ունի, քան տեղայինը:

Քիշմիշը Երևանի արդյունաբերություն չէ, այլ ստացվում է Պարսկաստանի Ուրմի քաղաքից և երևանցիք գնելով, արաղ են քաշում: Արաղը քաշում են խաղողի չեչից, ողկույզների քաղցուն գինու համար քաշելուց հետո: Այստեղ պատրաստվում է այլև թթի արաղ: Երևանցիք այս տարի շատ վաստակեցին արաղից պատերազմի պատճառով:

Երևանում կան նաև փոքրիկ մանրավաճառներ տեղացի հայերից, որոնք Թիֆլիսից, կամ ուղղակի Մոսկվայից ապրանքներ են ստանում, կան և այնպիսիները, որոնք Նիժնայի տոնավաճառի հետ հարաբերություն ունեն: Այսպիսիներին կոչում են կուպեցներ: Կան նաև հին բազազ կոչված խանութպաններ, որոնք վաճառում են ասիական ապրանքներ: Գլխավոր վաճառականությունը հայերի ձեռքումն է: Բայց մրգավաճառներն և զանազան նպարավաճառներն դեռ հին պարսկական սովորությամբ մահմեդականներ են. քրիստոնյան այս տեսակ մթերք չէ ծախում:

Երևանում ուշադրության արժանի հնություն ոչինչ չէ մնացել, խաների հին բերդը համարյա ավերակ է դարձել, այն բերդը, որ հազարավոր եղեռնագործությանց վկա է եղել, այժմ ներկայացնում է մի տխուր տեսարան: Ողջ մնացել է միայն Սարդարի այգին, որի մեջ տակավին պահպանվել է մի գեղեցիկ բարձր մինարեթ, պարսկական շռայլ ճաշակով զարդարված:

Երևանը մտածել է ունենալ և յուր հասարակական զվարճության տեղերը: Պոլիցիայի հանդեպ, կա մի փոքրիկ այգի, որի չորեքկողմից անցնում են փողոցներ, և փոշին այնպես սաստիկ հոսանքով լցվում է այգու մեջ, որ խեղճ ծառերը անդադար հառաչում են. «ի սե՛ր աստուծո մեզ դուրս տարե՛ք այստեղից. մենք խեղդվում ենք»: Այս այդու փոշիով պատած ծառաստանի տակ, օրվա ամեն ժամերում, կարելի է գտնել մեր վերոհիշյալ միրզա Թաթոսներին, որոնք իրանց ծուռ ու սխալ ռուսերենը կոտրատելով այնքան հպարտանում են, որքան սուլթանը Մահմեդի կանաչ դրոշակով: Ոչինչ բան այնքան անտանելի չէ, որպես այդ միրզա Թաթոսները. նրանց հանդիպում է մարդ կլուբում, կանաչ սեղանի շուրջը նստած, նրանց կարելի է տեսնել դատարանների ստոր գրասեղանների մոտ նստած, ուր չեն պատասխանում խեղճ գյուղացի հայի հայերեն հարցվածին: Նրանց ավելի հաճախ պատահում է մարդ փոստայի իջևաններում, որպես վերակացու, ուր ժամերով, օրերով պահում են ճանապարհորդին մի բան պոկելու համար...: Միրզա Թաթոսը, ութն դեղին կոճակ կուրծքի վերա շարած, մի ավերված տիպ է, որ յուր նմանը չունի մարդկային հասարակության մեջ:

Զ

Պարսկաստանի հայ գաղթականները Երևանի նահանգում: — Նրանց աշխատասիրությունը և անփոփոխ բնավուրությունը. — Դավալու գյուղը և նրա բնակիչների քաջասրտությունը: — Խաշնարածության կարևորությունը Երևանի նահանգի հայերի մեջ: — Գյուղացի մահմեդականների կատաղությունը ներկա պատերազմի առիթով: — Սադարակը և պ. Կախանովի ջրանցքը: — Շարուրի գավառը և նրա բեղմնավորությունը: — Բաշ-Նորաշեն գյուղի իրավաբանական ֆակուլտետը: — Կրթության կարևորությունը մանմեդականների մեջ:

Երևանից դեպի Նախիջևան դուրս գալու ճանապարհը սկզբում քարքարոտ է. փոստային սայլակը դժվարությամբ և դղրդվելով անցնում է չեչաքարի բեկորների վերայով: Հետո հայոց Նորագավիթ և Աղ-Համզալի գյուղերից սկսյալ մինչև Յուվա գյուղը, ճանապարհի վերա աջ և ձախ դրված, սկսվում է մի շարք հայոց գյուղեր: Նրանց մեծ մասը ամբողջապես հայաբնակ են, իսկ մի քանիսը խառն են թուրքերի հետ: Բոլորովին ուրիշ տպավորություն են անում այս գյուղերը ճանապարհորդի վերա: Նրանց շրջակայքում մի քիչ տեղ չկա, որ մշակված չլիներ և ճանապարհը ձգվում է ծառազարդ այգիների և պարտեզների միջով:

Այս գյուղերի բնակիչները Պարսկաստանից եկած գաղթականներ են, որ տեղափոխվեցան գլխավորապես Խոյ, Սալամաստ և Ուրմի կոչված գավառներից: Ամբողջ կես դար է, որ այդ ժողովուրդը թողել է յուր հայրենիքը, բայց ամենևին չէ փոխվել է, — նույն բարբառը, նույն հագուստի ձևերը, նույն սովորությունները պահպանվել են մինչև այսօր: Մինչև անգամ տների ձևը և հողագործության եղանակն ու գործիքներն նույնն է, ինչ որ ունեցել են Պարսկաստանում:

Այս տողերը գրողին բավական ծանոթ է նրանց հայրենիքը, մինչև անգամ գիտե, թե Պարսկաստանի ո՛ր գյուղերիցն են գաղթել: Ամբողջ կես դար մնացել են անշարժության մեջ: Ուրեմն ի՞նչ ավելացրին այստեղ գաղթելով: Եվ եթե նրանք երևում են այժմ մի գործունյա և աշխատասեր ժողովուրդ, — այդ ոգին բերել են իրանց հայրենիքից: Պարսիկը որքան և բարբարոսաբար վարվե, յուր հպատակների հետ, դարձյալ սովորեցնում է նրանց գործող լինել, որովհետև նրա մեջն է յուր օգուտը: Նա ամեն միջոցնե ձեռք է առնում հողի մշակության գործը առաջ քշելու:

Զարմանալին այն է, որ այս ժողովուրդը մինչև անգամ հոգով, ու սրտով չէ փոխվել: Շատ անգամ նկատում ես, մի պատի հովանու ներքո, մերկ գետնի վերա նստած են մի խումբ մարդիկ հանգստանում են օրվա աշխատությունից: Բավական է, որ ճանապարհորդի զանգակի ձայնը նրանց ականջին հասավ, և նկատեցին որ սայլակի վերա մի պատվավոր մարդ է անցնում, իսկույն ամբողջ խումբը ոտքի է կանգնում և խորին կերպով գլուխ է տալիս: Եվ դու երևակայում ես քեզ Պարսկաստանում, ուր ողորմելի հայը ամեն մի թուրքի առջև թեքվում է...: Մի այդպիսի փոքրոգությունը առաջ չէ գալիս նրանց մեջ նահապետական մեծարանքից, այլ դարևոր ստրկության հետևանք է: Այնտեղ նա խոնարհվում էր երկայն գդակների առջև, այստեղ խոնարհվում է, ում գլխին ֆուրաշկա է տեսնում: Այնտեղ սարվազից և ֆերրաշից դողում էր, այս-տեղ ամենակեղտոտ յասավուլը նրա աչքին հոգեկան հրեշտակ է երևում:

Պարսկաստանից եկած գաղթականների գյուղերը միշտ հանդիպում են ճանապարհի վերա, նրանց տեսնում ես և Շարուրի մեջ, Նախիջևանի գավառում, մինչև Ագուլիս: Ամեն տեղ միևնույն տպավորությունն են գործում: Փոքրիշատե փորձված աչքը, առանց հարցնելու, կարող է որոշել այս կողմերում հայաբնակ գյուղերը թուրքաբնակներից, վերջինները ըստ մեծի մասին ծառերից մերկ և շատ վատ մշակված, իսկ առաջինները ծառազարդ են և կանաչագեղ:

Ով որ փոքրիշատե ծանոթ է Պարսկաստանի հայերի գաղթականությանը, կհամոզվի, որ նրանք համեմատաբար ավելի բախտավոր գտնվեցան, քան թե ողորմելի ալաշկերտցիքը: Ահա ինչո՛ւ: Նրանք գաղթեցին այն ժամանակ, երբ ռուսները պատերազմը վերջացրել էին պարսիկների հետ և Թուրքմենչայի դաշնագրության համեմատ իրավունք ստացան ազատ կերպով թողնել հայրենիքը: Ուրեմն նրանք չփախան, նրանց չհալածեցին, այլ բավական ժամանակ ունեին իրանց

կայքը վաճառելու և ճանապարհի պատրաստություն տեսնելու: Ռուսաց զորքը չհեռացավ Պարսկաստանից, մինչև նրանց դուրս գալը, թեև խաղաղությունը կապված էր երկու պետությունների մեջ: Նրանք ունեին ճանապարհի լավ պատրաստություն և կառավարությունը մասամբ վճարում էր ծախսը: Գալով Արաքսի այս կողմը ռուսաց հողի վերա, նրանք գտան պատրաստի բնակարաններ և հող մշակության համար: Որովհետև թուրքերից շատերն այն ժամանակ, չկամենալով ռուսաց իշխանության տակ ապրել, գնացել էին Պարսկաստան, և ամբողջ գյուղորայք մնացել էր դատարկ, իսկ շատերին ինքը կառավարությունը քշելով, նրանց բնակության տեղերը տվեց նորեկ հայերին: — Այս բոլոր հարմարությունները ունենալեն հետո, դարձյալ գաղթականների կեսը չմնաց. մեծ մասը, չկարողանալով տանել նոր երկրի կլիման, կոտորվեցան:

Իսկ ալաշկերտցի գաղթականների պատմությունը արդեն մեր ընթերցողին հայտնի է:

Թեև ես չունիմ և չեմ կարող տալ ճիշտ վիճակագրական թվանշաններ, բայց հիմնվելով, հարևանցի հետազոտությունների վերա, համոզված եմ, որ այս հիսուն տարվա ընթացքում Պարսկաստանում մնացած հայերի թիվը գաղթողներից անհամեմատ ավելի աճել է: Ես ի նկատի ունիմ այսպիսի փաստեր, օրինակ, մի գյուղ Պարսկաստանում ունեցել է 100 ընտանիք ժողովուրդ, նրա կեսը գաղթելով այս կողմը, մի նոր գյուղ է կազմել, այս նոր գյուղը մինչև այսօր կամ նույնն է մնացել և կամ նրա վերա ավելացել է խիստ աննշան բազմություն, իսկ Պարսկաստանում մնացածները համարյա կրկնապատկվել են:

Չնայելով, որ այս գաղթականները քրիստոնյա պետության հովանավորության տակ են ապրում և ազատված են մահմեդականների հալածանքից, այնուամենայնիվ, երբ հարցնում ես նրանց ծերունիներին, միշտ ա՛խ քաշելով են հիշում Պարսկաստանը: Հին Իսրաելի նման չեն մոռանում Եգիպտոսի բեղմնավորությունը, թեև այնտեղ գերիներ էին...

Յուվայից սկսյալ հայոց գյուղերը վերջանում են մինչև Ղավալու, այս տարածության վերա տեղ-տեղ տեսնվում են ողորմելի խրճիթներ, որոնք կացուցանում են թափառական քրդերի և թուրքերի ձմեռային բնակարաններ: Դավալուի մեջ գտնվում են մոտ քառասուն ընտանիք նոր գաղթականներ, դրանք բայազետցիք են, այն փախստականներից, որ գնացել էին Պարսկաստանի Մագու քաղաքը, իսկ այնտեղից տեղափոխվել են այստեղ: Որքան ինձ հայտնի եղավ, դավալվեցիք լավ խնամք էին տանում այս ողորմելիների վերա, որոնք բոլորը գոհություն էին հայտնում:

Դավալվեցիք Մագուից եկած հին գաղթականներն են և ամբողջ երևանյան նահանգի մեջ նշանավոր են իրանց քաջությամբ: Այստեղ մարդ գյուղացու տանը զենք է տեսնում և նրա գոտկից քարշ ընկած մի խենջար: Այդ նրանց տարբեր կենցաղավարության հետևանքն է, որով որոշվում են ուրիշ հայ գյուղացիներից: Դավալվեցին պարապում է երկրագործությամբ և միևնույն ժամանակ խաշնարածությամբ: Նրանք բնակվում են քրդերի հետ խառն և համարյա քրդի բնավորություն են ստացել, թեև վերջիններս կամ հայերի հովիվներ են և կամ նրանց տներում ծառաներ:

Ինչ որ հիշեցի յուր տեղում Երևանի թուրք ազգաբնակության կատաղության մասին դեպի քրիստոնյաները, ներկա պատերազմի պատճառով, իմ ճանապարհի վերա, ամեն տեղ նկատելի

էր նույն սարսափելի երևույթը: Թուրքերն այն աստիճան կատաղած էին, որ ամեն րոպե պատրաստ էին իրանց մեջ գտնված հայերին կոտորել և նրանց ունեցածը հափշտակել: Միայն սպասում էին մինչև օսմանցիք փոքր-ինչ անցնին ռուսաց հողի վերա: Այդ բոլորը հայերը իմանում էին, և ճակատագրական համբերությամբ սպասում էին օրհասին...: Միայն Դավալուի մեջ ես տեսա, որ գյուղի փողոցները կտրած էին պատնեշներով, և հրացանը ձեռքին, պատրաստ էին հանդիպել թշնամուն: Սայլերը և երկրագործական անոթները փողոցների վերա մարտկոցների էին ծառայում: Մյուս հայ գյուղացիների մոտ զենքի նշույլ չէր երևում: Նրանք միայն աղոթում էին և երկնքից օգնություն էին խնդրում...

Երբ շատ անգամ խոսվում է տաճկահայոց թշվառության մասին, թե ինչո՞ւ նրանք չեն ընդդիմանում քրդերին, այլ թույլ են տալիս իրանց կողոպտել, — միշտ լսում ենք այսպիսի պատասխան. — «Ի՞նչ անեն ողորմելիքը, երբ նրանց թույլ չէ տված զենք կրել և իրանց պաշտպանել»: Ես չեմ հասկանում, ե՞րբ և ո՞վ արգելեց հայերին զենք կրել: Մի՞թե Վասպուրականի մեջ ասորիները (ջուլոների) նրանց դրացիները չեն, ինչո՞ւ նրանց ձեռքից չեն խլում զենքը և ասորաց քուրդը վախենում է այնքան, որքան հայը՝ քուրդից:

Մեզանում մի տեսակ հայրենասերներ կան, որ սովորություն ունին հայի բոլոր թերությունները թաքցնել իրանց փտած ազգասիրության մեջ: Ինչ որ հայկական է, նրանց համար լավ է. թող այդ ստրկություն, փոքրոգություն և ստորաքարշություն լիներ: Որպես մի տեսակ հիմար հայեր ներում են իրանց զավակների մոլություններին, բայց նույնը ուրիշների մեջ ներել չեն կարում: Հայրական սիրո մեջ նրանք թաքցնում են որդու ամեն տեսակ թերությունները:

Բայց մեր պատվելի հնախույզը ուրիշ տեսակ է մեկնում վերոհիշյալ երևույթը, դա ունի յուր պատմական պատճառները, — ասում է նա: Բայց ես ասում եմ, մարդը ինքն է յուր համար լավ կամ վատ պատմություն պատրաստում, եթե նրա պատմությունը սև ներկերով է գրված, դարձյալ ինքն է մեղավոր և ուրիշ ոչ ոք: Ես չեմ մեղադրում նրան, որ կողոպտում է և մորթում է, այլ նրան, որ թույլ է տալիս իրան կողոպտել և մորթել:

Թողնենք այդ փիլիսոփայությունները: Դիցուք թե Տաճկաստանում այնպես է. իսկ այստեղ ո՞վ է արգելել հային զենք և սիրտ ունենալ, որ ամեն րոպե և ամեն օր նրանց մեջ պետք ունի, քանի որ ոչ միայն այժմյան պատերազմական խռովությանց մեջ, այլև խաղաղ ժամանակներում այս կողմերում հայի թե կյանքը և թե կայքը միշտ վտանգի մեջ է մահմեդականների բարբարոսությունից: Իրավ է, կառավարության զենքը և օրենքը հարստահարված հպատակի պաշտպանն է. բայց մի՞թե միշտ պետք է ծանրաբեռնել կառավարությունը անտեղի հոգսերով: Պարսիկները մի լավ առած ունեն, թե՝ «Ապրանքդ լավ պահի՛ր, որ դրացուդ գողության մեջ չմեղադրես»:

Դավալուի մեջ ես ստիպված եղա մի ամբողջ օր մնալ, որովհետև պատմեցին, թե Սադարակի դաշտերում, որտեղից անցնելու էր մեր ճանապարհը, մի խումբ քրդեր 40 — 50 հոգով կողոպտում են անցորդներին. հետո հայտնվեցավ, որ տեղացի թուրքեր էին, որոնք քրդի հագուստով ավազակների խումբ էին կազմել, որպեսզի կարծիք տանեն, թե արտասահմանից են եկած: Այսուամենայնիվ, արտասահմանի քրդերին հեշտ էր անցնել այս կողմերը, որովհետև Արաքսը երեք վերստ հեռավորություն ունի այստեղից, իսկ դեպի մյուս ափի վերա՝ Արարատի ստորոտներում արդեն դրած էին խաշնարած քրդերի չադրներ, որոնք հեշտությամբ կարող էին

անցնել Արաքսը, քանի որ գետի եզերքում գտնված պոստերից կազակներին հեռացրել են և նրանց տեղը թուրք ձիավորներ են դրել: «Հավաբունը աղվեսի հսկողությանն են հանձնել» մի այսպիսի վտանգավոր միջոցում...

Դավալուից մինչև Սադարակ (Դահնա) այլևս հայոց գյուղեր չկան, այլ տարածվում է մի ընդարձակ անապատ, որի միջով անցնում է Կախանովի ջրանցքը, որն երբեմն մոտենում է փոստային ճանապարհին և կտրում է նրան: Պատմում էին, թե այդ ջրանցքը այն օգուտը չտվեց տեղացիներին, որքան սպասվում էր. և դրա պատճառը մեկնում են ջրի տիրոջ շահասիրական վարմունքի մեջ մշակողների հետ, այնպես որ, յուր հաշիվը իմացող հողագործը չէր հոժարվի նրա հետ գործ ունենալ: Երկրորդ, Սադարակը սարսափելի մի տեղ է ամառվա ժամանակ, օդը լցվում է մի տեսակ մանր և հազիվ տեսանելի մժեղներով, որոնք խայթելով մարդու մարմնի բաց տեղերը, իրանց թունավոր ազդեցությամբ կրակի պես այրում են. — նրանք արգելում են մինչև անգամ շնչառությունը, լցվում են մարդու բերանը, աչքերը, ականջները և ամեն տեղ: Ամեն մարդ փախչում է այդ սարսափելի միջատներից, որոնք խայթելով կարող են գժվացնել: Բարեբախտություն է ճամփորդի համար, եթե այստեղից անցնելու ժամանակ քամի լինի, այսպիսի եղանակում նրանք չեն երևում: Այս բոլորից հետո Կախանովը մինչև այսօր մի բնակություն, մի պատսպարան չէ շինել տված յուր հողագործների համար այդ անապատում, ուր ավազակները մժեղներից թվով պակաս չեն: Իմ անցնելու ժամանակ նոր սկսել էին շինել ճանապարհի կողքին թուրքի քարվանսարայի նման մի բան, չգիտեմ ինչ նպատակով:

Խոսելով Կախանովի ջրանցքի վերա, չեմ կարող չնկատել մեր հայ դրամատերերի անտարբերությունը, որոնց ոչ մեկը չէ մտածում կամ առանձին, և կամ ընկերություններ կազմելով, Արաքսից նոր ջրանցքներ բաց անել, և նրա ափերի վերա ընկած անապատ տարածությունները մշակել տալ: Հայերին ավելի կհաջողվի այս տեսակ ձեռնարկությունը, որովհետև տեղական հանգամանքներին ծանոթ են:

Սադարակը, որ այլ անունով կոչվում է Դահնա, իսկապես մի նեղ կիրճի անուն է, որից անցնելով, սկսվում է Շարուրի երկրամասը: Այս կիրճը բոլորովին արժանի է յուր կոչմանը47: Երկու լեռնային շղթաների ծայրերը, բոլորակաձև միմյանց մոտենալով, այստեղ կազմում են մի դուռն կամ մի նեղ անցք, ուր միշտ կարելի է ողբալ անզգույշ ճանապարհորդին: Այս պատճառավ Սադարակը շատ անգամ եղել է սարսափելի եղեռնագործությանց վկա:

Սադարակի կիրճից անցնելով, սկսվում է Շարուրի երկրամասը՝ մեր պատմական Շարայի ժառանգությունը: Արփա-չայը բաժանվելով հարյուրավոր առվակների, ոռոգում է այս կանաչազարդ հովիտը, որ մշակված է ըստ մեծի մասին բրնձի դաշտերով: Ջրի առատությունը նպաստում է այս հացաբույսի բեղմնավորությանը, որովհետև բրինձը աճում է միշտ ջրով լիքը ածուների մեջ: Այսպիսով Շարուրը ներկայացնում է ճահիճների մի ընդարձակ տարածություն, որոնց մեջ մշուշը խմորվելով և գոլորշիանալով, մի կողմից ապականում է օդը, մյուս կողմից՝ գոյացնում է անհամար թունավոր միջատներ: Այս պատճառով Շարուրը մոծակների և տենդի հայրենիքն է: Այստեղի ամառը անտանելի է: Այսուամենայնիվ, Շարուրը երևան յան նահանգի ամենաբարեբեր մասն է համարվում: Բայց ի՞նչ օգուտ, որպես ռամկորեն ասում են՝ «Մեղրը շան տկի մեջ» — մի այսպիսի երկիրը մեծ մասամբ բնակեցրած է թուրքերով, կիսավայրենի և բարբարոս թուրքերով, որոնց գործունեության մեջ և ավազակությունը առաջին տեղն է բռնում:

Շարուրի մեջ հայոց գյուղերը համեմատաբար սակավ են թվով և բնակիչները նույնպես Պարսկաստանից եկած գաղթականներ են: Պետք է մտածել, եթե այս գաղթականությունը չլիներ, ամբողջ Արարատը և Նախիջևանի գավառը կմնար թուրքերի սեփականություն: Ուրեմն Ներսես Երրորդի ջանքը՝ յուր որդիներից թափուր Հայաստանը կրկին զետեղել հայոց ազգաբնակությամբ, ունեցել է յուր բարի նպատակները:

Շարուրի բրնձի մշակությունը եթե ծույլ թուրքերի ձեռքում լիներ, կարող էր բավականություն տալ ամբողջ Կովկասին, իսկ բամբակի արդյունաբերությունը յուր քանակությամբ ցած չէ մնում բրնձից: Բրնձի ճահճային դաշտերը ցամաքելուց հետո, փտած արմատներից գոյանում է խիստ արգավանդ սնահող, որի վերա ցանվելով բամբակը, առատ արդյունք է տալիս: Արփա-չայը Շարուրի Նեղոսն է, որ գարնան սկզբներում հորդանալով, թողնում է դաշտերի վերա պարարտ լիլային ծալքեր, որոնք նպաստում են մշակության բեղմնավորությանը, փոստայի ճանապարհը ուղիղ անցնում է Արփա-չայի վերայով, մինչև այսօր գետը կամուրջ չուներ և ամեն տարի բազմաթիվ ձիեր և մարդիկ զոհ էին լինում հորդացած ջրի հեղեղներին, բայց վերջապես շինվեցավ մի կամուրջ, որ տակավին գործածական չէ, ճանապարհը այն կողմից դեռ պատրաստ չլինելու պտճառով:

Շարուրի գլխավոր գյուղն է Բաշ-Նորաշենը, անունը հայերեն, իսկ ինքը թուրքաբնակ է և ամբողջ Շարուր-Դարալագյազ գավառի կենտրոնն է համարվում: Այստեղ փոստայի իջևանում ես տեսա երկու թուրք պատանիներ, մինը 20, իսկ մյուսը մոտ 14 տարեկան: Նրանք նստած հասարակաց գրասեղանի մոտ, մեկը տետրակ էր խազում, իսկ մյուսը ռուսաց մեծ տառերով գրում էր խազած թերթի վերա: Իսկույն երևաց, որ աշակերտներ էին: Լա՛վ բան է փոստայի իջևանում դպրոցը:

—Ո՞վ է սովորեցնում, — հարցրի աշակերտներից մեկին:

—Իսմաթրիթելը, — պատասխանեց նա յուր ազգային արտասանությամբ:

Երևաց, որ իջևանի վերակացուն էր վարժապետը, որ միևնույն ժամանակ նամակատան մեծավորի պաշտոն էր կատարում. — մի հին ծառայող հայ և այնպիսի ծառայողներից, որ այսպիսի տեղերում քոշով են ման գալիս, միայն կուրծքի վերա դեղին կոճակներ ունեն:

Նամակատան սենյակը կից էր իջևանին. վարժապետը այն ժամին զբաղված էր փոստը ուղևորելով, ուրեմն ես միջոց ունեի նրա աշակերտների հետ մի փոքր խոսել:

— Ի՞նչ եք սովորում:

— Հայրս ասաց, որ փռաշենիա (խնդիր) գրել սովորենք, — պատասխանեց հասակավոր ուսանողը:

—Եվ դուք սովորո՛ւմ եք այդ բանը:

—Իսմաթրիթելն ասաց մի քանի ամսվա մեջ կսովորացնեմ: Երկու աշակերտներն էլ մի բառ չգիտեին ռուսերեն և մի քանի ամսվա մեջ պետք է իրավաբան դառնային, գուցե այնպես, որպես իրանց վարժապետն էր: Երկուսն էլ հարուստ բեկերի որդիներ էին: Զարմանալի բան է կարիքը: Ոչինչ չէր կարող ստիպել մոլեռանդ բեկին, որ նա թույլ տար յուր որդուն այն գլուխը, որ սովորել է

դորանի սուրբ տառերին երկրպագել, և խոնարհեցնել մի օտար տառի առջև, որ կրոնքով նրա համար պիղծ է: Բայց նոր ռեֆորման ստիպեց բեկին սրբապիղծ լինել: Նա զգաց որդու մեջ փռաշենիա գրելու և սթաթյաներ սովորելու կարևորությունը, որպեսզի ինքը կարոտություն չունենա մի հայ փաստաբանի, որ կողոպտում է նրան, որպես ինքը կողոպտում է անպաշտպան ճանապարհորդին, — մեկը գրչով, մյուսը՝ սրով:

Շատ իրավացի է նկատել Շարուրի գեղեցիկ նկարող պ. Քաջբերունին յուր «Փորձի» մեջ տպված «ճանապարհորդական նկատողությունների» մեջ, թե այդ ժողովուրդը ամենևին կրթության հույս չէ տալիս: Բայց պատճառը պետք է որոնել մի գլխավոր մանկավարժական կետի մեջ: Մեր խոսքը միայն Շարուրի մասին չէ: Ամբողջ երևանյան նահանգի թուրքերը և մի խոսքով, ռուսաց այն բոլոր երկրներում, որ ժամանակով Պարսկաստանի մի մասն էին կազմում, ուսման և կրթության վերաբերությամբ մահմեդականները դեռ պահպանել են այն, ինչ որ առաջ էր, այսինքն՝ պարսից տիրապետության ժամանակ:

Ինչպե՞ս էր պարսից տիրապետության ժամանակ:

Պարսից քաղաքականությունը պահանջում էր, որ մահմեդական դպրոցներում սովորեն երկու լեզու՝ պարսկերեն և արաբերեն, առաջինը որպես պետական լեզու, երկրորդը որպես կրոնական: Այս կանոնին ենթարկվում էին բոլոր մահմեդականները, ինչ ազգից և ինչ ցեղից որ լինեին: Նույն կանոնը պահպանվել է և մինչև այսօր այս կողմերում: Չնայելով, որ ամբողջ Կովկասի մահմեդականները, բացի Դաղստանի լեռնաբնակներից, մոնգոլական ցեղից առաջ եկած թուրքեր կամ թաթառներ են և նրանց խոսեցած լեզուն թուրքերի մի բարբառ է, բայց վաղեմի սովորությամբ թուրքերի մեդրեսեներում (դպրոցներում ) ոչինչ չեն սովորում մայրենի լեզվով, ամբողջ դպրությունը ավանդվում է պարսկերեն և արաբերեն լեզուներով: Թուրքերեն ոչ մի դասագիրք չունեն. Ղորանը, Գյուլիսթանը և Թարիխնատերը նրանց բոլոր կուրսն է, չնայելով որ գյուղացի մոլլան բոլորովին չէ հասկանում այս լեզուն: Նախ, մահմեդականների գյուղերում դպրոցներ չկան և եթե մի մեջիտի անկյունում մի մոլլա հավաքել է յուր մոտ մի քանի երեխաներ և նրանց դաս է տալիս, դասատվության լեզուն կամ պարսկերեն է և կամ արաբերեն, և դասագրքերը նույն լեզուներով են: Բոլորովին անբնական և հակամանկավարժական է, երբ մի երեխա յուր ուսումը սկսում է օտար և յուրյան անհասկանալի լեզուներով: Մինչև անգամ քաղաքներում, օրինակ, Երևանում և Նախիջևանում պահպանել է նույն եղանակը, թուրքերի բոլոր դպրությունը պարսկերեն լեզվով է. 5 — 6, մինչև յոթն տարի տանջվում են երեխաները, հազիվ թե կարողանում են նույն լեզվով նամակներ գրել, այնպես, որպես մեզանում առաջ գրաբար նամակներ գրում էին, բայց խոսել չէին կարողանում: Պարսկերեն նամակ գրող թուրքը պարսկերեն խոսել չէ կարող — դրա համար առանձին վարժություն պետք է:

«Աքինչի» լրագիրը չկարողացավ հաջողություն գտնել, որքան հուսացվում էր, որովհետև նա սկսավ թուրքերեն լեզվով հրատարակվիլ նախքան մահմեդական դպրոցներում թուրքերենի դպրությունը մտնելը:

Պարսկաստանի ամբողջ Ատրպատական նահանգը թեև բնակեցրած է թուրքերով և ոչ պարսիկներով, այսուամենայնիվ, դպրոցների լեզուն պարսկերեն է. արաբերենը նրանք սովորում են այնքան, որ ղորանը կարողանան կարդալ, բայց ոչ հասկանալ: Շատ անգամ ինձ պատահել է խոսել այնտեղի թուրքերի հետ, թե ինչո՞ւ իրանց մայրենի լեզվով չեն գրում ու չեն կարդում. — այդ

հարցը նրանց բլորովին ծիծաղելի է երևել: Սովորությունը օրենք է դարձել նրանց մեջ, թեև անգիտակցաբար մտել է նրանց մեջ այդ օրենքը: Երբ ամերիկացի միսիոնարները հիմնվեցին Թավրիզում, — դպրոց և թուրքերեն լեզվով դասագրքեր հորինելով, սկսեցին մայրենի լեզվով դպրությունը տարածել թուրքերի մեջ, — այդ եղանակը նրանց շատ խորթ երևաց և շատերը հանձն չառան իրանց որդիքը հանձնել մի դպրոցում, ուր նրանք պարսկերեն չպիտի սովորեն: Բայց ամերիկացիք չփոխեցին իրանց սկզբունքը:

Ինչո՞ւ ենք զարմանում այն բանի վերա, թե ուսման վերաբերությամբ այս կողմերի մահմեդականների մեջ տակավին պահպանվել է պարսկական ազդեցությունը, քանի որ ժողովրդի տնտեսական կյանքի մեջ նույնն է տեսնվում: Մինչև այսօր գյուղացիների հարաբերություններն ու նրանց փոխադարձ պարտավորությունները թե կառավարության և թե կալվածատերերի հետ դարձյալ նույնն է, ինչ որ խաների տիրապետության ժամանակ: Հարկերը և մշակության արդյունքի տասնորդներն ոչինչ փոփոխություն չեն կրել, դեռևս պահպանել են հին ձևերը: Ինչ պայմաններով որ վարվում էր մի խան, մի բեկ յուր գյուղացու հետ և ինչ արդյունք որ ստանում էր նրանից հիսուն տարի առաջ — նույնը ստանում է և այսօր: Ես ձեռքի տակ չունեմ մանրամասն թվանշաններ, թե զանազան բերքերից որքան մասն է վճարում գյուղացին կալվածատիրոջը և որովհետև նրանց պայմանները այլևայլ գյուղերում փոփոխվում են, այս պատճառով դժվար է այժմ ճիշտ հաշիվ տալ, միայն խոստանում եմ մի անգամ ևս խոսել այս առարկայի վերա, երբ կհավաքեմ բոլոր մանրամասնությունները:

Բայց ինչ որ վերաբերում է այս կողմերի մահմեդականների մեջ ուսումը և կրթությունը տարածելուն, այս գործը հաջողված կարելի է համարել այն ժամանակ, երբ նրանց գյուղերում կբացվեն վարժարաններ և այն վարժարաններում կմտցվի մայրենի լեզվի դպրությունը, բայց ոչ թե պարսկական տառերով, որոնց լոկ ընթերցանությունն մի քանի տարիներ է խլում, այլ երբ թուրքերի համար կհնարվին նոր տառեր և այն տառերով դասագրքեր կպատրաստվեն: Իմ կարծիքով, հայոց տառերը շատ հարմար են թուրքերեն լեզվի արտաբերության համար, որովհետև նրանց բոլոր հնչյունները կարելի է ձևակերպել մեր տառերով:

Մեր՝ հայերիս օգուտը պահանջում է, որ այս կողմերի մահմեդականների մեջ տարածվի ուսումը, որովհետև բացի քաղաքակրթությունից ուրիշ ոչինչ միջոց չէ կարող խզել նրանցից յուրյանց սովորական բարբարոսությունը և ավազակությունը:

ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱՂՎԱՆԻՑ ԵՎ ՍՅՈՒՆՅԱՑ

ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒՄ

Հրաժեշտ Թիֆլիսին: — Անվճար ճանապարհորդություն: — Նոր շինված խճուղին և ձիաների խելքը: — Ղարաչիների թաբուն: — Գոմեշների, եզների և կովերի վիճակը: — Թարաքամաների ձմեռանոցները: — Հայերի խելքը: — Ղազախը, Շամշադինը և Շամքորը: — Գանձակը հեռվից:

1881 թ. հուլիս 25-ին թողի Թիֆլիսը, ճանապարհի սայլակը, որ բերել էին ինձ համար պոստի կայարանից, այնքան նեղ, այնքան փոքրիկ էր, որ կարծես ձվի պես կիսած կճեպից էր շինված: Ասում են, կապալառուները այդ վարպետությունը բանեցնում են, որ ճանապարհորդները շատ ծանրություններ չկարողանան վեր առնել իրանց հետ: Ճշմարիտն ասած, թե իմ և թե ընկերիս ծանրությունները մեծ չէին: Նա ուներ մի թեթև մաֆրաշ, իսկ ես մի փոքրիկ չեմոդան: Մաֆրաշը

դրեցինք մեր տակին, իսկ չեմոդանը մեր ոտների առաջ: Նստեցինք, սայլակը շարժվեցավ: Հետո ես իմ կողմից, ընկերս յուր կողմից, սկսեցինք միմյանց քաղաքավարությամբ հարցնել ձեր տեղը ինչպե՞ս է, հանգի՞ստ եք: Բայց մեզանից ոչ մեկը չէր ուզում սկզբում խոստովանվել, որ նստած է համարյա մի փշի վրա, մի փոքր անզգույշ շարժում, — ահա կգլորվի ցած... Վերջը ընկերս ասաց ինձ: — Երբ այդ պոստայի կապալառուները իրենց զեղծումների համար կդատապարտվեին տաժանակիր աշխատանքի աքսորվել, ես եթե դատավոր լինեի, կվճռեի նրանց նստացնել իրանց շինել տված սայլակների վրա և մի քանի տարի ման ածել խճուղու (շոսեի) ճանապարհով...

Սալահլուի փոստայի կայարանում պատահեց մեզ ականատես լինել մի սկանդալի: Դռան առջև ինքնաբավական վեհությամբ կանգնած էր կայարանի հսկողը (смотритель). նրա մոտ կանգնած էին մի քանի քած շներ (քած շներ կարելի է տեսնել ամեն կայարաններում: Նրանք հսկողների (смотритель-ների) անբաժան ընկերուհիներն են, գրելու ժամանակ պտտվում են նրա գրասեղանի շուրջը, քնելու ժամանակ պառկած են նրա մահճակալի մոտ, իսկ դուրս գալու ժամանակ նրանից չեն հեռանում): Հսկողի առջև, վզները ծռած, կանգնել էին երկու պարսկաստանցի ասորիներ: Դրանց կեսը թուրքերեն, կեսը հայերեն, կեսը ռուսերեն ասում էին . — «Աստված է վկա մենք տվել ենք... մեզանից առել են փողը... մեզ ասեցին, որ ձեզանից փող էլ չի պահանջվի»...

Սմոտրիտելը երբեմն հռհռում էր խեղճ ճանապարհորդների միմատության վրա, երբեմն բարկանում էր, երբեմն հայհոյում էր, վերջապես բարեհաճեց ասել. — Մեզ խաբել են...

Բանից ի՞նչ դուրս եկավ: Երկու ասորիները Թիֆլիսում գնում են ճանապարհաթուղթ (подорожная) առնելու: Գանձապահության (казначейство) արտիստ-գրագրներից մեկը, նկատելով, որ դրանք անփորձ մարդիկ են, հանձն է առնում նրանց ճանապարհաթուղթ տալ, իհրակե, գանձարանից առնելով: Նա ստանում է ասորիներից, սկսյալ Թիֆլիսից մինչև Կարս, ամբողջ ճանապարհավճարը (прогон), հավատացնելով նրանց, թե այլևս նրանցից փող չի պահանջվի, ամեն տեղ ձիաներ կտան և այդ թղթով կարող են ցանկացած քաղաքը գնալ, առանց մի կոպեկ վճարելու:

Ասորիները դժվարանում էին հավատալ, որ գրագիրը կարող էր այսպես խաբել նրանց: Երբ նրանց հասկացրին, թե յուրաքանչյուր կայարանում պետք է նորից փող վճարեն ձիաներ ստանալու համար, նրանք ստիպվեցան ոտքով վերադառնալ Թիֆլիս և որոնել իրանց կողոպտող արտիստին:

Ասորիների վիճակը մեզ այնքան չէ հետաքրքրում, որքան մեր սեփական դրությունը: Սալահլուի կայարանում մտածեցինք մի կերպ անել, որ գոնե այս անգամ կարողանանք փոքր-ինչ հանգիստ նստել սայլակի վրա: Ընկերիս մաֆրաշը էլի առաջվա նման դրեցինք մեր տակին, իսկ իմ չեմոդանը կապել տվինք սայլակի հետևը:

Կարծես բախտը վճռել էր դեռևս երկար հալածել մեզ: Կես ճանապարհին ետ են նայում, տեսնում են, որ չեմոդանը չկա: Սայլավարը այնքան վատ էր կապել, որ ճանապարհին ցած էր ընկել: Անպիտանը իր մեղքը քավելու համար իսկույն բաց արեց ձիաներից մեկը, նստեց և վազեցրուց, որ գտնե չեմոդանը: Այդ միջոցին իմ գլխում ծագեց մի միտք, եթե այդ ավազակը չեմոդանը կգտնե, մի փոսի մեջ կծածկե, հետո կվերադառնա ինձ լուր կբերե, թե չգտա, անցորդները տարել են, — ես ի՞նչ կարող եմ ասել նրան:

Այդ ենթադրությունը շատ հավանական էր, թեև սայլապանը իմ չեմոդանը գողանալով, շատ խեր չէր տանի, նրա մեջ կային՝ Ջալալյանցի ճանապարհորդությունը, Թաղիադյանի ճանապարհորդությունը, Կաղանկատվացու Աղվանից պատմությունը, Օրբելյանի Սյունյաց պատմությունը, Ինջիջյանի հնախոսությունները, հին Հայաստանի քարտեզը, մի քանի կտոր ուրիշ քարտեզներ նոր Հայաստանի մասին, «Մշակի» վերջին համարները, որ Թիֆլիսում ժամանակ չէի ունեցել կարդալու, թուղթ, մատիտ, մի խոսքով՝ բոլորը մի սայլավարի համար անպետք բաներ:

Բայց հենց որ ձին մի քանի քայլ վազեցրի, ես մոռացա Ինջիջյանի հնախոսությունն էլ, հին Հայաստանն էլ, նոր Հայաստանն էլ... ով որ յուր կյանքում գոնե մի անգամ նստել է տկլոր ձիու վրա, կհասկանա իմ դրությունը: Ավելացնենք դրան, որ ձին սաստիկ նիհար էր, մեջքի ողնաշարը լեռնային շղթայի նման դուրս էր ցրցված: (Այդ պետք է վերաբերել փոստայի ստարոստաների առողջապահական հմտությանը, որ նրանք իրենց խնամակալությանը հանձնված ձիաներին շատ գարի չեն ուտացնում, զգուշանալով, մի գուցե նրանց ստամքոսը փչացնեն): Ինչ էլ որ լինի, իմ դրությունը անտանելի էր: Ես նստած էի, ինչպես որ ասեցի, ձիու տկլոր մեջքի վրա: Հենց որ նա տրտնկում էր, ես այնպես էի կարծում, որ ողնաշարի սուր, դուրս ցցված ոսկորները իմ նստատեղը կտրատում էին:

Ծիծաղելի բան է, որ մարդ ամենասարսափելի տագնապի մեջ երբեմն փիլիսոփա է դառնում: Այդ միջոցին մի բան գրավեց իմ ուշադրությունը, ես մոռացա իմ ցավը, սկսեցի դրա վրա մտածել: Ձին քշում էի խճուղու վրայով, բայց նա սատանայի նման կանգնում էր, ճանապարհից դուրս էր գալիս, և աշխատում էր կողքերովը գնալ: Այստեղ ի՞նչ խորամանկություն կարող էր լինել: Հետո իմացա, որ ձին չէր ցանկանում իր սմբակները ջարդել խճուղու անհարթ մակերևույթի վրա, և ավելի բարվոք էր համարում կողքերովը գնալը, ուր գետինը իր բռի դրության մեջ համեմատաբար ավելի վաւիուկ էր և հավասար: «Այդ խելացի անասունը, ասացի ինձ ու ինձ, ավելի լավ է հասկանում խճուղու անպիտանությունը, քան այն բազմաթիվ ռևիզորները, որոնք գալիս են, տեսնում են և զեկուցում են տալիս, թե «ամեն ինչ լավ է...»:

Սայլավարը գտավ չեմոդանը: Եվ հեռվից ինձ տեսնելով, որ արդեն մոտենում եմ, իհարկե շատ էլ որ ցանկանար, չէր կարող թաքցնել նրան, միայն ուրախությամբ ձայն տվեց, «աղա, նավոթկան շատ պիտի տաս...»:

Ձիաները կրկին կապեցին սայլակին, նա շարժվեցավ:

Սայլավարը իր խելքով պակաս չէր երևում իր ձիաներից: Նա էլ թողնելով խճուղին, քշում էր կողքերի ճանապարհներով, որոնք զանազան ուղղությամբ երբեմն հեռանում էին, երբեմն մոտենում էին խճուղուն: Մերկ գետինը քանդելով անիվների ծանրության տակ, հողը փշրվելով, մանրվելով, փոշիացել էր, և մի քանի թիզ թանձրությամբ ծածկել էր ճանապարհը: Անիվները խրվելով, ակոսներ բաց անելով, անցնում էին, բարձրացնելով ահագին փոշեղեն ամպ, որի մեջ խիստ հեշտությամբ կարելի էր կուրանալ, իսկ դժվարությամբ շունչ քաշել:

Ես կարծեցի, թե սայլակավարներին պատվիրված է խճուղու հետ խնայողությամբ վարվել, նրա վրայով չքշել, որպեսզի չմաշվի: Այս պատճառով հարցրի սայլավարից. — Ինչո՞ւ չեք քշում խճուղու վրայով:

— Այնտեղից, աղա, մենք քշում ենք միայն անձրևային օրերում, երբ այստեղ ցեխ է լինում, — նա ցույց տվեց իր գնացած թանձր փոշիով ծածկված ճանապարհը, որի անձրևային օրերի ցեխը կարելի էր երևակայել, թե ինչ կլինի:

Ինձ շատ է պատահել տեսնել ասիական գնչուների թաբուններ, բայց Կովկասում առաջին անգամ ես տեսա նրանց: Մեր մոտով անցավ ղարաչիների մի ամբողջ քարավան: Խիստ հետաքրքիր էր նայել բնության այդ ազատ զավակների վրա, որոց համար ոչ հայրենիք կա և ոչ տուն: Քարավանը շարժվում էր արագ, խառնափնթոր բազմությամբ, անասունների համարյա ամեն տեսակները կարելի էր գտնել այնտեղ: Տեսնում ես, բարձած ավանակի խուրջինի մի հակից երևում է մի նորածին քուռակի գլուխը, որը դեռ շատ թույլ լինելով, չէր կարողացել հետևել յուր մորը: Խուրջինի մյուս հակից երևում են երկու փոքրիկ երեխաների գլուխներ: Բարձած ավանակը վազում է քարավանի հետ, տնկտնկում է, և երեխաների գլուխները ավանակի շարժվելուց ներդաշնակաբար զարկվում են միմյանց: նրանք հանգիստ են, կարծես ցավ չեն զգում: Մինը, երևի, քնած է, գլուխը թեքված է դեպի ցած և օրորվում է ավանակի քայլերի հետ:

Կնիկները բաց կուրծքով, մերկ սրունքներով և բոբլիկ ոտներով վազում են քարավանի հետ: Դրանք էլ ավանակների նման բարձած են. մեկը շալակին կապել է իր երեխան, իսկ մյուս ծծկերին գրկած ունի: Տղան այնպես պինդ կպել է մոր կուրծքին, և ծծում է, կարծես տզրուկ լինի: Ահա՛ այնտեղ ավանակի բեռան վրա կապած են մի քանի հավեր: Մյուս բեռան վրա պպզել է մի կապիկ և հեգնական ժպիտը երեսին, նայում է իր շուրջը:

Գլխավոր մթերքը, որ բարձած է ավանակների վրա, են պատրաստի կամ անպատրաստ մաղեր, որ այդ ցեղի արհեստագործության գլխավոր արդյունքն է: Նրանք հավաքում են տներից ձիու ագիներ և նրանցից մաղեր են պատրաստում:

Մեր սայլակը կանգնեցրին մի քանի կնիկներ, որոնք մոտեցան զանազան հարցերով: Այդ կնիկների ձեռքի թաթերի, բազուկների, կուրծքի և երեսի վրա երևում էին մուգ-կապույտ գույնով զանազան նկարներ, որ դրոշմված էին մարմնի կաշու վրա ( )48 և այդ ավելացնում էր նրանց վայրենի գեղեցկության վրա մի առանձին հրապուրանք:

Մեկը մեկնեց ինձ սև, փայլուն քարածուխից շինած մի բան, ասելով. — Գնիր, պարոն, դա կբախտավորե քեզ:

—Այդ ի՛նչ է, — հարցրի ես ընդունելով բախտավորեցուցիչ առարկան, որը տափակ քառանկյունի ձև ուներ, և մակերևույթի վրա փորված էին զանազան երևակայական նշանագրեր:

—Թաիլիսման է, — պատասխանեց նա խորամանկ ժպիտով, ուղիղ աչքերիս մեջ նայելով, ավելացրեց. — քեզ մի վտանգ է սպառնում, կամենո՞ւմ ես, քեզ համար «ֆալ բաց անեմ» (գուշակեմ):

Մտածելով, որ մի քանի կոպեկներով կարող եմ ազատվել գնչուհու թախանձելուց, քսան կոպեկով ազատվեցա նորանից:

Մեր սայլակը շարժվեցավ և տասն րոպե արագ քշելուց հետո հազիվ դուրս եկանք փոշեղեն մառախուղի միջից, որ ղարաչիների քարավանը թողել էր ճանապարհի վրա:

Կարծես այդ կողմերում բոլոր ժողովուրդը դեռ չէ դուրս եկել այն նախնական դրությունից, որի մեջ դեռ ապրում են ղարաչիները:

Ճանապարհի վրա անդադար տեսնում էի ահագին, ծանր սայլերի խումբեր, որ ճռնչալով ձգում էին մի զույգ գոմեշներ, իսկ նրանց առջև լծած մի զույգ եզներ: Ծիծաղելի բան է տեսնել վիթխարի գոմեշին խամուտների մեջ: Խե՛ղճ անասուն, ինչ աշխատության մեջ ասես նրան չեն գործ ածում: Նրանով վար են վարում, սայլ են կրում, Գանձակից մինչև Թիֆլիս գինու ահագին տիկեր կրելով, նրա վրա մինչև անգամ հեծնում են: Ծանրաշարժ գոմեշին կատարել են տալիս բոլոր այն գործերը, ինչ որ բնությունը տնօրինել է ձիու համար: Միևնույն վիճակին դատապարտված է և եզը: Երան ոչ միայն լծում են, այլ նրա վրա բեռն են կրում, նրա վրա նստում են:

Մենք անցնում էինք դատարկ անապատների միջով: Դեպի աջ մինչև Կուր գետի եզերքը, դեպի ձախ մինչև...49 լեռները. այդ ընդարձակ հարթ տարածության վրա, բացի ճանապարհորդներից, ուրիշ ոչ մի մարդկային արարած չէր երևում: Կարծես ժանտախտը, խոլերան կամ մի այլ մահաբեր ախտ, միանգամայն մեռցրած լիներ բոլոր շնչավորներին: Բայց մեր շուրջը երևում էին մարդու աշխատության նշաններ: Ցորենի, գարու արտերը հնձած էին. խուրձերի տեղերը բլրակների նման երևում էին արտերի մեջ: Խոտը նույնպես հնձված էր. կորյակի ցանքերը դեռ կանաչ էին, չէին հասել: Կնշանակե այդ կողմերում բնակություն կա, մարդիկ են ապրում: Բայց որտե՛ղ են նրանք, ինչո՞ւ չեն երևում:

Ղազախի, Շամշադինի, Շամքորի ամբողջ վիճակները մինչև Գանձակ այդ տպավորությունն են գործում: Այդ երեք վիճակների ընդարձակ, արգավանդ դաշտերը, տարվա երեք եղանակներում, — գարնանը, ամառը և աշունը, — ներկայացնում են կատարյալ դատարկություն: Թարաքամա բնակիչները իրանց անասունների հետ գաղթում են դեպի հեռավոր լեռները, յայլաղ: Նրանց ձմեռանոցները մնում են բոլորովին ամայի: Ոչ մի շուն, ոչ մի կատու անգամ չեք տեսնի այնտեղ: Ես հետաքրքրվեցա մտնել այդ ձմեռոցների (ղշլաղ) մեկի մեջ, որ մեր ճանապարհին մոտ էր: Այստեղ ու այնտեղ երևում էին գետնափոր խորշեր, որոնց մեջ բնակվում է այդ թափառաշրջիկ ժողովուրդը, երբ ձյունը պատում է երկիրը: Գազանների որջերը միայն կարող էին դրանց հետ համեմատվել: Մարդը չի կարող այսպիսի մթին և խոնավ խորշերում բնակվել: Այնտեղ կարող է բնակվել միայն թարաքաման, որ իր բնավորությամբ շատ չէ տարբերվում գազաններից: Զարմանալի է, որ ռուսաց տիրապետությունից հետո մոտ մեկ դար ոչինչ չկարողացավ փոխել այդ կիսավայրենիների կյանքից:

Եթե ընդունենք այն հիմնական օրենքը, որ պետքը, կարիքը և առհասարակ կյանքի պահանջները ժողովուրդների քաղաքակրթության առաջին վարժապետներն են դառնում, — շատ հեշտ կարելի է բացատրել թարաքում աների իրանց հարևան ազգերից հետամնացության պատճառները: Պտղաբեր և արգավանդ երկիրը նրանցից մեծ աշխատություն և մեծ հմտություն չէ պահանջում: Գարնան սկիզբներում մի կերպով փորփորում են հողը, սերմը ցանում են և այդպես թողնում, գնում են դեպի սարերը: Բնությունը ինքնահորդոր կերպով բուսցնում է նրանց ցանքը, անձրևը ոռոգում է, արտերը աճում են: Նրանք կրկին այցելության են գալիս իրանց արտերին այն ժամանակ միայն, երբ հունձքը հասած էր: Հնձում են, դիզում են և դեզերը թողնելով դաշտերի մեջ, կրկին գնում են դեպի լեռները: Վերադառնում են աշնան վերջերում միայն, շատ անգամ իրանց հունձքի դեզերը գտնում են ձյունի տակ ծածկված: Այն ժամանակ միայն սկսում են կալսել, ծեծել և

ցորյակը բաժանել հասկերից: Երբեմն դեզերը աշնան անձրևներից փտած են լինում, երբեմն մի թշնամի ձեռք, նրանց բոլորովին անպետք և անպաշտպան գտնելով, կրակ է տալիս և հրդեհում է:

Ամբողջ Ղազախը, Շամշադինը, Շամքորը այդ կյանքով է ապրում: Այդ երեք վիճակները, մինը մյուսին կից, տարածվում են Կուր գետի աջ կողմը և ներկայացնում են ընդարձակ տափարակներ, մինչև Գանձակ հասնելը: Դաշտերը տեղ-տեղ ծածկված են թփերով, տեղ-տեղ ճահիճներով ու ճոխ խոտերով, տեղ-տեղ այրված, ավազոտ անապատներ են երևում, իսկ շատ տեղերում պարարտ վարելահողեր, որ խիստ արդյունավոր հունձք են տալիս:

Ամառային տոթը անտանելի է այդ կողմերում: Տենդը թագավորում է ամեն տեղ, գուցե, դա առաջ է գալիս այն բազմաթիվ ճահիճներից, որ Կուր գետը կազմում է իր ընթացքում: Բայց Շամքորի բրնձի մշակության դաշտերը լրացնում են այն, ինչ որ պակաս են թողնում ճահիճները: Շամքորը իր դիրքով շատ նման է Երևանյան նահանգի Շարուրին: Նրա մոտով հոսում է Երասխը, Շամքորի մոտով հոսում է Կուր գետը: Շարուրի դաշտերի վրա Արփա գետը, բազմաթիվ առվակների բաժանվելով, ոռոգում է բրնձի մշակությունները: Իսկ Շամքորի դաշտերի վրա Շամքոր գետը նույնպես բազմաթիվ ճյուղերի բաժանվելով, նույն սնունդն է տալիս բրնձի դաշտերին: Թե այնտեղ, թե այստեղ տենդը, մոծակը, զանազան տեսակ թունավոր մժեղներ թագավորում են ամբողջ ամառը: Գուցե այդ պայմանները ստեղծեցին բնակիչների համար կենցաղավարության այն եղանակը, որ նրանք տարվա տաք եղանակներում գաղթում են դեպի հովասուն լեռները և այդ նպաստում է նրանց առողջությանը:

Ղազախի, Շամշադինի և Շամքորի վիճակներում, Կուր գետի ընթացքին մերձավոր տափարակների վրա, ոչ մի հայոց գյուղ չպատահեց ինձ տեսնել: Այդ տեղերում բնակվում են միայն թարաքամաներ: Հայոց գյուղերը ընկած են դեպի հիշյալ վիճակների լեռնածին (՞) կողմերը, սարերի ստորոտներում, բարձրավանդակների վրա, կամ ձորերի մեջ: Այդ երևույթը պետք է վերաբերել այն պատմական հանգամանքներին, որ հայերը ժամանակի անխաղաղ դրությունից պաշտպանվելու համար ընտրել են ավելի ամուր, անմատչելի տեղեր, — իսկ այժմ նրանց դրությունը ավազակաբարո թարաքամաների հետ, նույնպես չէր կարող շատ ապահով լինել: Ավազակությունը թարաքամաների համար նույնքան սուրբ բան է, որքան իրանց կրոնի սահմանած նամազը ու դաստամազը...

Մեր ճանապարհի ընթացքում, մինչև Գանձակ, անցանք չորս նշանավոր գետերից, — Ալգետ, Խրամ, Աղստաֆա և Շամքոր: Առաջին երեքը կամուրջներ ունին, իսկ վերջինը՝ Շամքորը, կամուրջ չունի50: Այդ ժամանակից այդ գետը կամուրջ չունի, չնայելով, որ գարնան ժամանակ հորդանում է, ծածկում է իր ափերը և անկարելի է անցնել, թեև միակ անցքն է, որ տանում է դեպի Գանձակ, Շուշի, Նուխի (՞), Շամախի (՞) և այլ քաղաքները: Երևում է, որ հին ժամանակի մարդիկը, դրդված բարեգործության զգացմունքից, ավելի եռանդ ունեին գետերի վրա կամուրջներ շինելու, քան թե այժմյանները, որ նույնը պիտի անեին հաղորդակցությունը դյուրացնելու նպատակով:

Աղստաֆայի կայարանից սկսյալ, դեպի Գանձակ տանող ճանապարհի խճուղին վերջանում է: Խճուղին ձգվում է դեպի Երևանի կողմերը: Թեև խճուղուց մենք մի առանձին բարիք չէինք տեսել, այնուամենայնիվ, խիստ ծանր տպավորություն էր գործում, երբ ընկանք մերկ ճանապարհի վրա: Բարեբախտաբար մի քանի օր առաջ շատ անձրև էր եկել և ճանապարհը պնդացել էր, և կարելի էր առանց առատ փոշի կուլ տալու առաջ գնալ:

Կարաերի կայարանից մինչև Կոշկար գետը, և այստեղից մինչև Գանձակ անցնում էինք մերկ, ավազուտ տափարակների միջով: Ես անդադար հարցնում էի ընկերիս, չէ՞ երևում Գանձակը: Վերջապես նա ցույց տվեց ինձ մի կանաչազարդ տարածություն, որ հեռվից երևում էր, որպես փոքրիկ օազիս, մերկ անապատների մեջ: Գանձակն էր, իր գեղեցիկ այգիներով:

Բ

Գանձակի առաջին տպավորությունը, փողոցները, տները, չինարիները: — «Եվրոպա» հյուրանոցը: — Ջավադը և իլ-յարասի. — «Մշակի» աշխատակիցը գավառական քաղաքում: Մեյդանը, Շան-աբասի մեջիտը, հին ամրոցը Ջավադ-խանի պալատը: — Վաճառանոցները: — Կլուբը: — Գանձակեցիների գլխավոր արդյունաբերությունը: — Գանձակի վիճակը նոր շինվող երկաթուղու վերաբերությամբ:

Ի՞նչ տպավորություն կգործե մի պարսիկ. իր քոշերով, երկար արխալուղով, շալե գոտիով, որ գլխին դրած ունի եվրոպական շլյապա և մերկ պարանոցի վրա կապել է մետաքսյա սև փողպատ, — նույն տպավորությունը գործեց ինձ, վրա կիսապարսկական Գանձակը: Նեղ, ծուռումուռ փողոցներից և ոչ մեկը քարած չէր: Թանձր փոշին, աղբը, ամեն տեսակ ապականություն ծածկել էր հատակը: Տներից մեկը, քարից կամ աղյուսից շինած, դուրս էր նայում դեպի փողոցը բացված լուսամուտներով, իսկ նրա կշտին մի այլ տուն պատերով, ցածրիկ, որ դեպի փողոցը լուսամուտներ չուներ: Բարձր, հոյակապ տան մոտ, անդադար հանդիպում է կամ մի խրճիթ, կամ քանդված ավերակներ: Մեկը փողոցի լարից դուրս է ընկած, մյուսը ներս է գնացած: Ինչ որ գեղեցիկ է, դրանք են դարևոր, հսկա չինարիները, որ իրանց զով հովանու տակ պատսպարում են շինվածքները, և թույլ չեն տալիս նրանց բոլորովին շնչասպառ լինել փոշուց և տոթից: Չինարիները, որոնցից շատերը մեկ ու կես սաժեն տրամագիծ ունին, Գանձակի զարդն են. նրանք մնացել են պարսից տիրապետության ժամանակներից, և մի բարի բախտով ոչնչացրած չեն եղել: Այդ չինարիները պահպանում են Գանձակի առողջությունը, որ շատ նախանձելի վիճակի մեջ չէ: Առհասարակ շատ փոքր թվով կարելի է տեսնել տներ, որ պարտեզներ չունենային: Գեղեցիկ նռենիները, թզենիները և վարսավոր միմոզաները իրանց մետաքսյա ծաղիկներով դուրս են,նայում բակերի ցածրիկ պատերի հետևից:

Մտնելով քաղաքը, պատվիրեցինք սայլավարին, որ մեզ մի լավ հյուրանոց տանե:

— Ո՞րն եք կամենում, — հարցրեց սայլավարը, — այստեղ հյուրանոցներ շատ կան՝ «Եվրոպա», «Ամերիկա», «Կավկազ», «Թիֆլիս» և այլն:

—Դրանցից որն որ լավ է, այնտեղ տար, — ասեցինք նրան:

—«Եվրոպան», — պատասխանեց սայլավարը և քշեց դեպի այն կողմը:

Հասնելով հիշյալ հյուրանոցը, պահանջեցինք մեզ համար մի կացարան: Մեզ հայտնեցին, թե վերի հարկի սենյակները արժեն օրական 3 — 2 ռուբլի, իսկ ներքի հարկինները օրական 1 ռուբլի: Մենք ընտրեցինք վերջիններից մի սենյակ: Ավելորդ է նկարագրել այդ կացարանի սարք ու կարգը. միայն այսքանը կասեմ, ինչ որ մենք առնում ենք Եվրոպայից նրան այլանդակելու և իր փչացած

ձևի մեջ ցույց տալու համար, — այդ կացարանը կարող էր ամենաճիշտ տիպարը լինել այդ տեսակ աղավաղության:

Երկար սպասում էինք, որ սպասավորներից մեկը հայտնվի և մեզ լվացվելու ջուր տա, որ փոշին և կեղտը մաքրենք մեր մարմնից: Մի պատանի արխալուղը հագին կանգնած էր պատշգամբի վրա: Վերջապես հյուրանոցի պահողը հրամայեց նրան, որ կատարե մեր սպասավորությունը: — Թող գնամ նրան, որ կատարե մեր սպասավորությունը: — Թող գնամ շորերս հագնեմ... — ասաց սպասավորը և անհետացավ: Մեկ ժամից հետո հայտնվեցավ նա արդեն շորերը փոխած: Եվրոպական հյուրանոցի սպասավորը պետք է եվրոպական հագուստով հայտնվի հաճախորդների մոտ, և այդ մտքով Ջավադը կատարել էր ինչ որ պահանջում է պարտքը և պատշաճը:

Սկզբում պահանջեցինք ջուր լվացվելու համար, հետո սամովար: Նուխեցու հատուկ ճարպկությամբ Ջավադը երկու հանձնարարություններն ևս իսկույն կատարեց: Սամովարը սեղանի վրա դնելուց հետո, նա այդ միջոցին իմ ուշադրությունը գրավեց մի բոլորակ վերք, որ երևում էր նրա աջ ձեռքի թաթի երեսի վրա:

—Այ տղա, այդ ի՞նչ բան է, — հարցրի նրանից:

—Իլ-յարասի է, աղա, — պատասխանեց նա և շարունակեց իր գործը: Ինձ այնքան չդրդեց զզվանքը, որ մի այսպիսի վիրավոր ձեռքով մաքրում էր նա բաժակները, որքան այն սարսափը, որ կարող էինք վարակվել: Սպասավորի ձեռքի վերքը տեղական մի վերք էր, որ ամեն մի գանձակեցի պետք է անպատճառ ունենա: Նա կոչվում է իլ-յարասի նրա համար, որ մի ամբողջ տարի տևում է մինչև առողջանալը51:

Բժշկությունը այդպես է բացատրում, որ այդ վերքը մի սունկ է, որ հայտնվում է մարմնի մեջ. բայց գանձակեցիք այսպես են բացատրում, որ դա առաջ է գալիս չինարիների տերևներից, որոնք թափվելով փողոցներից անցնող վտակների մեջ, փտում են, և այդ ջրերի գործածությունից վարակվում է ժողովուրդը: Օտարքաղաքացիք ևս բնակվելով Գանձակում, ստանում են նույն վերքը: Մի կամ երկու ամսվա բնակությունը բավական է վարակվելու համար: Ջավադը ստացել էր այդ վերքը յուր Գանձակ գալուց երկու ամսից հետո:

Իսկ որքան հավանական է, որ դա առաջ է գալիս չինարի ծառերից, այդ պետք է բացատրե գիտությունը, ես այսքանը կասեմ, որ ուրիշ մի քանի երկրներում ևս գոյանում են նույն օրինակ վերքեր, որտեղ չինարի ծառերը չկան, օրինակ, Բաղդադում այդ վերքը վերաբերում են արմավենիներին (խուրմայի) կամ հաճախ արմավ ուտելուն:

Թողնելով այդ դատողությունները, ես դարձյալ վերադառնում եմ դեպի Ջավադը: Չնայելով, որ մի վտանգավոր սպասավորի հետ գործ ունեինք, նա ամեն տեղ հայտնվում էր: Նա էր ջուր տալիս լվացվելու և սեղանատանը կերակուրները պետք էր նրա ձեռքից ընդունել: Նա հյուրանոցի միակ խաս սպասավորն էր, բոլորը նրան ճանաչում էին, և իր կամակատարությամբ միշտ պատրաստ էր ամենի պատվերները կատարելու:

Այդ հյուրանոցի մեջ իջևանելու գիշերվա առավոտը զարթնելով, զգում էի բերանիս մեջ սաստիկ դառնություն: Ես կարծում էի, թե գիշերը ծխելուցն է: Ես սովորություն ունիմ գիշերը մի քանի

անգամ զարթնել ու ծխել: Բայց այն գիշերը, ընդհակառակն, ճանապարհի հոգնածությունից այնպես թմրած էի, որ ամենևին չէր զարթնել: Իսկ այդ ի՞նչ դառնություն էր: Ես դարձա իմ ուղեկցին երբ նկատեցի նա էլ գլուխը վեր բարձրացրեց բարձից:

—Ընկեր, բերանդ ի՞նչ դրության մեջ է:

—Սաստիկ դառն է, — պատասխանեց նա և մի այնպիսի խոժոռ շարժեց իր սևուկ դեմքի վրա, կարծես լեղի էր կերել և բերանը կծկծում էր:

Իսկույն հասկացա, որ այստեղ մի բան կա, որ երկուսիս էլ բերանը միևնույն վիճակին է ենթարկվել:

Կես ժամից հե տո մեզ մոտ եկավ մի պարոն, նրան պատմեցինք մեր բերանների դրությունը:

— Այստեղի ջրիցն է, — ասաց նա, — զգուշացեք այստեղ ջուր խմելուց:

Այդ ջուրը, որից խմում է Գանձակի մեծ մասը, քարհեզի ջուր է, որ հեռու տեղից բերվելով, գետնի տակով անցնում է թուրքերի թաղից, և տեղ-տեղ բացվում է թուրքերի տների մեջ: Թուրքերը այդ ջրի հետ ինչ օյին ասես խաղում են, ամեն անմաքրություն նրա մեջ լվանում են, նրանով նամազ են անում, հավատացած լինելով, որ ջուրը չի պղծվի: Այդ հերիք չէ, նա բավական երկար տարածության վրա անցնում է թուրքերի գերեզմանատան տակով և բերում է իր հետ փտությունների լուծված մասները: Խմելու միջոցին մարդ զգում է մի տեսակ թանձրություն, և մի տեսակ մածուցիկ տպավորություն է գործում բերանի մեջ, կարծես մածուն լինի: Այստեղից հասկանալի է այն հիվանդությունները, որոնց անընդհատ ենթարկվում են գանձակեցիք, մանավանդ ամառվա ժամանակ: Այդ քաղաքում փոքրիշատե տանելի է գետի ջուրը, բայց ամառը գետը բոլորովին ցամաքած է լինում, և գտնված ջուրն էլ վերևից զանազան առվակներով վեր են առնում ցանքերը կամ այգիները ջրելու համար:

Գետի ջրին գալով, ես չեմ կարող մի քանի խոսք չասել այդ մասին: Գանձակում երեք օր մնալով, ես անդադար լսում էի գանգատներ, կռիվներ, դժգոհություններ ջրի պակասության մասին: Գանձակը շինված է նույն անունով գետի վրա, որ քաղաքը երկու մասն է բաժանում. մի մասում բնակվում են հայերը, մյուսում՝ թուրքերը: Գարնան սկզբում գետը սաստիկ հորդանում է և ծածկում է իր եզերքը, իսկ ամառը այնտեղ մի կաթիլ ջուր չէ կարելի տեսնել, գետը ցամաքում է: Եղած ջուրը, ինչպես վերևում ասացի, զանազան առվակներով վեր են առնում այգիները և ցանքերը ջրելու համար: Այդ ջուրը այնքան անբավական է, որ համարյա ամեն օր կռիվեր են լինում նրա բաշխման համար: Գանձակեցիք հավատացնում էին, որ ջուրը առաջ խիստ շատ էր լինում. իսկ այժմ «մարդկանց մեղքի համար» սակավացել է:

Գանձակի գետի ջրի սակավանալը ուրիշ պատճառի չէ կարելի վերաբերել, բացի նրանից, որ անտառները սաստիկ անխնա կերպով ոչնչանում են: Այն լեռները, որոնց մեջ գտնվում են գետի աղբյուրները, առաջ պատած են եղել խիստ անտառներով, իսկ այժմ կամ բոլորովին մերկացել են, կամ մեծ ծառերի փոխարեն թփեր են տեսնվում:

Ջրի հարցը Գանձակի կյանքի հարցն է. եթե այդ մասին պետք եղած հոգածություններ չկատարվեն (որոնց մեջ գլխավոր տեղը պետք է բռնե անտառների պահպանությունը ), այդ քաղաքը մի ժամանակ սովամահ կլինի:

Գանձակի գլխավոր արդյունաբերությունն է խաղողը և գինին, որ մեծ քանակությամբ արդյունահանվում է, տարվելով գլխավորապես Թիֆլիս: Շատ փոքր է այն գանձակեցիների թիվը, որ մի, երկու կամ երեք այգի չունենար: Տերերից ամեն մեկը յուրաքանչյուր տարի մի քանի հազար ռուբլու գինի է վաճառում: Ի՞նչ կլինի ժողովրդի վիճակը, եթե արդյունքների այդ աղբյուրը ցամաքի: Գինի պատրաստում են հայերը միայն, մահմեդականներին, որովհետև կրոնքով մեղք է համարվում աստուծո պարգևած բարիքներից մեկը, խաղողը, պղծել և նրանից գինի պատրաստել, այդ սնահավատությունից52 դրդված, իրանք գինի չեն պատրաստում և իրանց խաղողը վաճառում են հայերին, կամ իրանց այգիները նրանց վարձով են տալիս:

Գանձակի մյուս արդյունահանությունն է ալյուրը: Այդ արդյունահանությանը շատ նպաստում է պ. Հախվերդյանի շոգեշարժ աղորիքը: Պարոնի մարդիկը գնում են մեծ քանակությամբ ցորյան, և աղալով ուղարկում են Թիֆլիս, կամ ուրիշ տեղեր: Այդ, իհարկե, շատ օգնում է շրջակա գյուղացիներին, որոնց ձեռքումն է ցորյանի արդյունաբերությունը: Եթե այդ աղորիքը չլիներ, գյուղացին ստիպված էր ինքն հասարակ ջրաղացի մեջ աղալ տալ ցորյանը և ալյուրը ուրիշ տեղ տանել: Բայց պ. Հախվերդյանի աղորիքը հեշտացնում են գյուղացու գործը, որովհետև նրան միջոց է տալիս իր բերքը իր տան մեջ վաճառելու, առանց օտար երկիր տանելու:

Երբ գանձակեցիք լսեցին, թե Բաքու — Թիֆլիսյան երկաթուղին պիտի անցնի իրանց քաղաքի մոտով, նրանց ուրախությանը չափ չկար: Բայց երևում է, որ Գանձակին ևս սահմանված էր նույն վիճակը, որին ենթարկվեցավ Քութայիսը: Երկաթուղու գիծը անցավ Գանձակից 5 վերստ հեռավորության վրայով: Գանձակեցիք բողոք հայտնեցին, հայտնելով, որ գիծը մոտեցնեն քաղաքին: Նրանց բողոքը մինչև Ս. Պետերբուրգ հասավ և մնաց անհետևանք:

Բավական հետաքրքիր բան է լրագրի աշխատակցի հայտնվելը գավառական փոքրիկ քաղաքում, որպես էր Գանձակը: Բոլորը դիտում են, թե նա որտե՞ղ գնաց, ո՞ւմ հետ տեսնվեցավ, ի՞նչ խոսեց և այլն: Ամենից առաջ նրա մոտ այցելում են տեղային վարժապետները և քահանաները: (Դրանց վրա լրագրության մեջ շատ է խոսվում):

Ճշմարիտն ասած, ես մի առանձին ցանկություն չունեի մարդկանց հետ ծանոթանալու, միայն աշխատում էի մի քանի նշանավոր տեղեր տեսնել և շուտով թողնել քաղաքը, որովհետև ամեն րոպե վախենում էի հիվանդանալուց:

Առավոտյան մի քանի այցելուներից ազատվելով, շտապեցի դուրս գալ հյուրանոցի խեղդված սենյակից, բազարը տեսնելու համար: Այստեղ իմ ուշադրությունը գրավեց մեյդանը (հրապարակը): Դա մնացել է պարսից տիրապետության ժամանակներից, մի քառակուսի, փոքր-ինչ երկայնաձև ահագին հրապարակ է, շրջապատած դարևոր չինարի ծառերով: Այդ ծառերը իրանց ընդարձակ ստվերի տակ հովանավորում են խանութները, որ գտնվում են հրապարակի շուրջը: Երևում է, ծառերի վերաբերությամբ պարսիկները թե լավ ճաշակ և թե խնամք են ունեցել:

Այդ հրապարակի մոտն է քաղաքի նշանավոր մեջիտը: Նրա գլխավոր դռան աջ և ձախ կողմերում բարձրանում են երկու բարձր մինարեթներ: Բացի դրանցից, դռան երկու կողմում կան երկու

սաքուներ, որոնց վրա նստած են մոլլաները: Այդ տեսնելով, ես իսկույն հիշեցի Պարսկաստանը: Այդ մոլլաները զանազան գործեր են կատարում. նրանք աղոթքի թղթեր են վաճառում, տպված երկար, ժապավենաձև թղթի վրա, նրանք կնիքներ են վարում, նրանք անգրագետ մարդկանց համար նամակներ են գրում իրանց բարեկամներին ուղարկելու համար. նրանք միևնույն ժամանակ նոտարիուսներ են, գրում են զանազան տեսակ դաշնրագեր, պարտամուրհակներ և այլն, չնայելով, որ քաղաքում պաշտոնական նոտարիուս կա: Նրանց մոտ վաճառվում են «տեր ողորմյաներ», վաճառվում են Քարբալայի53 սուրբ հողից շինված փոքրիկ մոհրներ, որոնց վրա մահմեդականները նամազ ժամանակ խոնարհվում են, համբուրում են, երևակայելով, թե Քարբալայի սուրբ երկիրն են համբուրում, որտեղ թափվել է իրանց իմամների արյունը: Միևնույն մոլլաները վաճառում են զանազան տեսակ գրքեր, կախարդություններ են անում և իրանց հաճախորդների համար զանազան թիլիսմանական թղթեր են գրում: Դրանց կշտին մի քանի երեխաներ, գետնի մեջ փորած փոսիկների մեջ ածուխ էին ածել, մի կարդոնի կտորով հովհարում էին և թարմ սիմինդր էին խորովում վաճառելու համար: Ահա այդ բոլորը, ինչ որ տեսա, հիշեցրին ինձ Պարսկաստանը... Ես դիմեցի դռան մոլլաներից մեկին, խնդրելով կարելի՞ է արդյոք մեջիտը տեսնել: Նա զարմացած աչքերով չափեց ինձ ոտքից ցգլուխ, նայեց գլխարկիս, նայեց կապույտ ակնոցներիս, և ապա բավական դժգոհությամբ պատասխանեց. — Կարելի է:

Ես մտածեցի գրավաճառ, կախարդ, նոտարիուս, կնիքներ փորող մոլլայի բերանին փոքր-ինչ յուղ քսել, նրան մի քանի աբասի շահ տալ, և հարցրի արդյոք ունի՞ այս և այն գրքերը: Իմ պահանջածը Ղարաբաղի խաների պատմությունն էր, մեկը հեղինակություն Միրզա-Ջամալի, մյուսը հեղինակություն Միրզա Ադիգոզլուի: Այդ աշխատություններից և ոչ մեկը չգտնվեցավ մոլլայի մոտ, նրա խոսքերից երևաց, որ այդ պատմությունները դեռ տպված չեն, այլ ձեռագիրները գտնվում են հեղինակների ժառանգների մոտ:

Դռնից ներս մտանք մեջիտի բակը, որ քառակուսի ձև ուներ: Չորս կողմում պարսկական ճաշակով շինված էին փոքրիկ և մեծ խուցեր, որոնց մեջ մոլլաները նստած, բարձր ձայնով ղորան էին կարդում: Խուցերից մի քանիսը հատկացրած էին երեխայոց դպրոցի (մադրասե) իսկ մի քանիսը չափահասների ուսման համար (թաքիա): Ես հետաքրքրվեցա տեսնել երեխաների դպրոցը: Թեև հուլիս ամիսն էր, տոթը խեղդում էր, բայց նրանց չէին արձակել: Մի սենյակում լցված էին 40 — 50-ի չափ հասակի երեխաներ, 5 տարեկանից մինչև 20 տարեկան: Նրանք խառնափնթոր կերպով ծալապատիկ նստել էին միմյանց մոտ, ամեն մինը իր տնից բերած օթոցի վրա: Նայելով ծնողների կարողությանը, այդ օթոցները ունեին իրանց լավ կամ վատ հատկությունները: Այնտեղ կարելի էր տեսնել մի քրքրված փսիաթ կտորից սկսյալ մինչև թանկագին խալիչա: Բոլոր աշակերտները, գրքերը իրանց առջև հատակի վրա դրած, անդադար օրորվելով, բարձր ձայնով կարդում էին: Երևակայեցեք, թե ինչ աղմուկ և բաբելոն կլինի, երբ 40 — 50 աշակերտ միանգամից ձայն է բարձրացնում: Շատերը կարդում էին, շատերը ոչինչ չէի կարդում, միայն աղաղակում էին, ոմանք ձայն էին հանում, միայն բերանները բաց էին անում և շրթունքները շարժում էին: Այդ ընդհանուր աղմուկի մեջ դժվար էր որոշել, թե ո՛րն էր կարդացողը և ո՛րը չկարդացողը:

Վարժապետ-մոլլան նստած էր մի անկյունում և գիրք էր կազմում: Նա զբաղված էր իր գործով: Աշակերտները դրանից օգուտ քաղելով երբեմն միմյանց բոթում էին, կմշտում էին, կամ միմյանց մազերից քաշում էի: Բողոքներ էին բարձրանում: Մոլլան կանչում էր իր մոտ անհանգստին, իր կշտին դրած ճիպոտը վեր էր առնում, մի քանի զարկ տալիս էր նրա ափերի մեջ, ականջներիցը

քաշում էր, հետո թող էր տալիս, որ գնա իր տեղը նստի: Հետո նա կրկին սկսում էր իր կազմարարությունը: Այդ բոլորը կատարվում էր մեր աչքի առջև: Որովհետև սենյակի փենջարեները բացվում էին դեպի բակը, մենք դրսից նայում էինք:

Պարսկական մանկավարժության եղանակները ինձ վաղուց արդեն ծանոթ լինելով, ես չուզեցի երկար նայել այդ տանջանքի և բթամտության հիմնարկության վրա, միայն զարմանում էի, որ մոտ մի ամբողջ դար ռուսաց տիրապետությունը ոչինչ չէր փոխել դրանց վաղեմի քաղաքակրթությունից: Դարձյալ մնացել էին միևնույն հետադեմ, խավար թուրքերը, ինչ որ էին Ջավադ-խանի ժամանակ: Ես խնդրեցի ինձ առաջնորդող մոլլային, որ ցույց տա մեջիտը: Դա մի հսկա շինվածք էր ընդարձակ բակի կենտրոնում, հովանավորած գեղեցիկ չինարիներով: Մեչիտի դուռը բաց էր: Մոլլան ակնարկեց եթե կամենում էի ներս մտնել, պետք էր հանել կոշիկները: Այդ առաջարկությունը բավական դժվար լինելով, ես բավականացա միայն դռնից նայել: Այստեղից ամբողջ ներսը երևում էր: Արևելյան ճարտարապետության այդ հոյակապ գործը, ճշմարիտ որ հիանալի էր: Ամբողջ շինվածքը, առանց սյուների, կանգնած էր միայն ահագին կամարների վրա, որ նրա առաստաղին գմբեթի ձև էին տալիս: Հատակը ծածկված էր գորգերով, պատերի ստորին մասները զարդարած էին զանազան նկարներով: Մի կողմում դրած է բարձր ամբիոնն, որի սանդուղքներով մոլլան բարձրանում է և քարոզ է կարդում: Ուրիշ ոչինչ չկար այնտեղ, առհասարակ դեպի ամեն կողմ, ուր և նայում էր մարդ, մի տեսակ պարզություն, հեռու էր քրիստոնեական կամ հեթանոսական տաճարների զարդարանքներից: Երկու հոգի այնտեղ նստած ղեյլան էին ծխում, մի քանիսն էք ճաշում էին: Երևում էր, որ մահմեդականները աստուծո տան շինվածքին այն սրբազնությունը չեն հատկացնում, որպես այլ կրոնքների հետևողները:

Ես դարձա դեպի ինձ առաջնորդող մոլլան, հարցնելով, թե ո՞ր թվականից է շինված այդ մեչիտը: Նա ինձ ոչինչ ասել չկարողացավ, միայն հայտնեց, որ Շահ-Ապաս մեծի շինածն է: Որովհետև այս կողմերում ամեն մի հոյակապ շինված ընծայում են Շահ-Ապասին, թեև նրանից դարերով առաջ շինված լիներ, այդ պատճառով մոլլայի ասածը շատ հավանական չէ կարելի համարել54:

Մեչիտը տեսնելուց հետո, ես կամենում էի տեսնել Ջավադ-խանի պալատը, որ վերջինն էր Գանձակի տիրապետող խաներից: Որովհետև քաղաքի դրսումն էր գտնվում, հարկավոր էր կառքով գնալ: Քառորդ ժամվա մեջ ես հասա այնտեղ, Պալատի դուռը և դռան կողմի մի քանի շինվածքների ավերակներն էին մնացել միայն: Կառքով ներս մտանք: Երևում էր, որ այստեղ դտնվում էր խանի ամառային ամարաթը: Որովհետև այստեղ մի ընդարձակ այգի է եղել, շրջապատի պարիսպների մոտ շարքով տնկած ահագին չինարիները դեռ մնում էին: Մեջտեղում կար մի քառանկյունի լճակ, նորա շուրջը զարդարող մարմարյա քարերը բոլորը քանդել և տարել էին, ջուրը դեռ մնում էր և անշարժությունից կանաչել, պատած էր մամուռով: Այդ գեղեցիկ լճակը, որի հստակության մեջ ամառային տոթի ժամանակ լեղանում էին, զովանում էին հարեմները, այժմ մի հոտած ճահճի էր նմանում: Լճակի երկու կողմերում երևում էին երկու բարձ քոշքերի ավերակներ. քարերը, աղյուսները տարել էին, մնացել էին երկու հողակույտ միայն: Այդ քոշքերից հարեմները նայում էին լճակի հայելու մեջ55: Դռան հանդեպ, այգու մյուս ճակատում երևում էին հարեմխանայի ավերակները: Այնտեղ, ուր պահվում էին երկրի կնիկներից ամենագեղեցիկները, այժմ մողեսներ, օձեր ու չղջիկներ էին բնակվում: Հին փառքից, հին վայելչությունից ոչինչ չէր մնացել: Ամեն ինչ տրորվել, ոչնչացել էր հավիտենական անեծքի և դատապարտության տակ: Որքա՞ն հայ աղջիկներ զոհել էին այստեղ իրանց ողջախոհությունը, որքա՞ն հայ կնիկներ վատնել էին այստեղ իրանց պատիվը:

Պատմում են, որ Ջավադ-խանին հայտնեցին մի գեղեցիկ աղջկա մասին, որ նոր էին պսակում և հարսանիքի հանդեսը դեռ չէր վերջացել: Նա ուղարկում է իր նոքարներին աղջկա ծնողների մոտ. պահանջում է, որ նորապսակ աղջիկը իր փեսայի առագաստը մտնելուց առաջ ուղարկեն իր մոտ: Ծնողները երկյուղից կատարում են բռնավորի կամքը. նորահարսին տանում են խանի ամարաթը: Խանը տեսնելով գեղեցկուհուն, կամենում է նրա հետ փոքր-ինչ սիրախոսություններ անել: Բայց նորահարսը, գլուխը դեպի ցած խոնարհած, մնում է լուռ կանգնած նրա առջև, և բերանը չէ բաց անում. «Դեպի վեր նայիր, ասում է խանը, տես ո՛վ է քեզ մոտ կանգնած»: Նորահարսը զգացմունքով պատասխանում է. «Դու էլ դեպի վեր նայիր, տես ո՞վ է այնտեղ կանգնած»... Նա ցույց է տալիս բռնակալին արդարադատ երկինքը և նրա աչքերը լցվում են արտասուքով:

Ասում են, որ այդ բողոքը այն աստիճան ազդում է խանի սրտին, որ առանց նրան դիպչելու, հետ է ուղարկում ծնողների տունը և այն օրից երդվում է հայ կնիկներ չբռնաբարել: Առհասարակ Ջավադ-խանը բավական սեր է ունեցել դեպի հայերը, նա հաճախում էր հայոց եկեղեցին և ծննդյան տոնին փող էր ընծայում, որ խաչը իր անունով ջրից հանեն: Մինչև այսօր Գանձակի սուրբ Հովհաննես եկեղեցու սյուներից մեկի վրա դեռ մնում է հին արձանագրությունը «խանի սյուն»: Այդ սյունի մոտ սովորաբար կանգնում էր խանը, երբ հայոց եկեղեցի էր գալիս: Նրա դեպի հայերը ունեցած համակրության գլխավոր պատճառն այն էր, որ հայերից միշտ հավատարմություն էր տեսել և հայոց մելիքները միշտ օգնում էին նրան վտանգի ժամանակ: Մյուս օրվա առավոտը ես կամեցա տեսնել Գանձակի հին բերդը: Այդ բերդը, որ ինն ամիս պահեց իր ամուր պարիսպների տակ ռուսաց զորքերին, այժմ բոլորովին ավերակ է: Նա բաժանված է մի քանի մասների: Մի մասնում, զանազան բաժինների մեջ, շինված էր խանի ամարաթը, կանանոցը, դիվանատունը, բաղանիքները և կեցության այլ հարմարությունները: Մի մասնում շինված էին բազմաթիվ կացարաններ, որոնց մեջ լցնվում էր քաղաքի կամ շրջակա գյուղերի ժողովուրդը պաշարման ժամանակ: Ցույց էին տալիս այն մասը, որ հայերին էր հատկացրած, և այն մասը ուր թուրքերն էին բնակվում: Բերդի շրջապարսպի մի քանի մասները և ամուր աշտարակներից մի քանիսը դեռ ողջ են: Երկաթե ահագին դռները ես տեսա թավալված հողակույտերի մեջ: Պատմում էին, որ այդ բերդը մի քանի տարի առաջ բոլորովին քայքայված չէր: Բայց այն օրից, երբ տեղային կառավարությունը սկսեց աճուրդով մաս-մաս վաճառել շինվածքների նյութը, քաղաքացիք գնելով, սկսեցին քանդել քարերն ու աղյուսները, տարան իրանց համար նոր բնակություններ կառուցանելու: Այդ բերդը ծառայում էր որպես պատսպարան թե պարսից՝ խաների, և թե Գանձակի մելիքների56 համար: Երբ 1790 թվին (՞) Շուշվա Իբրահիմ խանը, վրաց Գիորգի իշխանը, միացած լեզգիների հետ (՞՞) պաշարեցին այդ բերդը, նրա աշտարակներից չորսը հանձնված էր շատ հայ մելիքների պահպանությանը: Դրանցից մեկն էր մելիք Մեջլումը, մի քաջ, խորամանկ, միևնույն ժամանակ անբարիշտ մարդ: Մելիք Մեջլումը պաշարման ժամանակ նույնիսկ բերդում գնդակ ստացավ մի գաղտնի չարագործից57 և վիրավոր տարվեցավ իր վրանը, Ջավադ խանը մի ամբողջ շաբաթ նրա սպանված մարմինը պահեց, թե ճաշին և թե ընթրիքին նրա մոտ կերակուրներ էր ուղարկում իր խոհանոցից՝ ցույց տալու համար, թե մելիք Մեջլումը դեռ մեռած չէ, որպեսզի զորքը այդ քաջի մահը լսելով չվհատվի58: Երբ պաշարումը վերջացավ, թշնամուն հեռացրին, Ջավադ-խանը նրա մարմինը թաղել տվեց Գանձակի Ս. Հովհաննես մայր եկեղեցու աջակողմյան խորանում, Աղվանից Ներսես կաթողիկոսի (՞) գերեզմանի մոտ, թեև դա հակառակ էր հայ ժողովրդի կամքին:

Գանձակի բերդի շինության նյութերը, քար, աղյուս և այլն, որպես վերևում հիշեցի, աճուրդով վաճառում են, իսկ տեղը նույնպես վաճառում են բնակիչներին նոր շինություններ կառուցանելու համար: Այնտեղ շինված է ռուսաց փոքրիկ եկեղեցի, ամբարներ և այլն:

Բերդի ավերակները տեսնելուց հետո ես մտա հասարակաց այգին, որ շատ հեռու չէ այնտեղից: Բոլոր գավառական քաղաքներում, որքան պատահել է ինձ տեսնել հասարակաց այգիներ, Գանձակինը կարելի է ամենագեղեցիկը համարել: Այդ այգին տնկված է Վարանցովի փոխարքայության ժամանակներից և խիստ խնամքով պահպանված է: Այնտեղ կարելի է տեսնել, սկսյալ հնդկական մագնոլիայից մինչև տեղական ամենաընտիր տունկերը: Միակ գեղեցիկ բանը, որ գրավեց Գանձակում իմ ուշադրությունը, — այդ այգին էր: Պետք է ասած, որ գանձակեցիք առհասարակ այգեգործության մեջ շատ առաջ են գնացել: Նրանց խաղողը իր ընտիր հատկություններով ծանոթ է և թիֆլիսեցիներին:

Գանձակի մեջ մի այլ նշանավոր բան չլինելով տեսնելու համար, ես շտապում էի դուրս գալ: Հայոց դպրոցները ես չգնացի, մանավանդ ամառն էր, աշակերտները արձակված էին: Բացի դրանից, այնքան գրվել է հայոց դպրոցների մասին, որ կարդացողների զահլեն տարել են: Մնում էր ինձ տեսնել մի շարբաբի գործարան, որտեղ մետաքսից ղանազան տեսակ գործվածներ են պատրաստում: Այդ գործարանը թեև եվրոպական կատարելագործված մեքենաներ չուներ, թեև մեքենաները բոլորը պարսկական հին ձևն ունեին, այսուամենայնիվ պատրաստված կերպասները թե իրանց տոկունությամբ և թե գույների գեղեցկությամբ հիանալի էին: Այստեղ պատրաստվում էին՝ դարայի, ղանավուզ, կանանց գլխի չերղաթներ և այլ զանազան տեսակ մետաքսեղեն գործվածներ, որ բավական ծախվում են տեղացիների մեջ:

Նույն ավուր գիշերը ես գնացի կլուբ: Նրա բավական մեծ շինվածքը պատկանում է մի գերմանացու Ելենդորֆի կալոնիայից, որը Գանձակից շատ հեռու չէ. կլուբի շինվածքը գտնվում է քաղաքի կամրջի մոտ, որ շինված է Գանձակի կամրջի վրա: Կլուբում ես բազմություն չգտա, մի քանի ծառայողներ նստած թուղթ էին խաղում: Կլուբի դատարկությունը այն պատճառով չէր որ շատերը ամառանոց էին գնացել, ինձ ասում էին, որ հաճախորդների թիվը միշտ փոքր է լինում, այնտեղ գնում են միայն ռուս ծառայողները, տեղացի վաճառական կամ արհեստավոր դասը ոտք չէ կոխում այնտեղ, իսկ հայ ծառայողները գնում են նրանք միայն, որ առանձին սեր ունին թուղթ խաղալու: Այդ ողորմելի հիմնարկությունը պահպանվում է գլխավորապես նրանով, որ գյուղացի թուրք բեկերից յուրաքանչյուրից 20 ռուբլի առնելով, անդամ են գրել տալիս, որոնք քաղաքը տարին մի անգամ ոտք չեն կոխում:

Գանձակի հին քաղաքի տեղը ավերակ է այժմ, տների փլատակները դեռ երևում են: Այստեղ կա մահմեդականների մի ուխտատեղի, որ կոչվում է Գոգ-Իմամ: Դա առաջ պատկանելիս է եղել հայերին, և այնտեղ է Խոսրով նահատակի գերեզմանը:

Գանձակում մնացի երեք օր միայն. այնուհետև ձի վարձեցի, որ զարտուղի ճանապարհներով կարողանամ տեսնել իմ ցանկացած տեղերը:

Գ

Քարտեզով ճանապարհորդություն: — Ելենդորֆ: — Հաջի-քենդ կամ Հաջի-շեն: — Սյուլուկ գյուղ: — Գետաշեն: — Ղարաբուլաղ: — Թոդամ գյուղ: — Էրքեջ: — Ղարաչինար: — Աղջակալա: — Մելիք Բեգլարովների կալվածքները:

Ես Թիֆլիսից դուրս գալու ժամանակ վեր էի առել ինձ հետ Թիֆլիսի գլխավոր շտաբի պատրաստած Անդրկովկասի հինգ վերստանոց քարտեզներ: Երբ կամենում էի Գանձակը թողնել, Ելիզավետոպոլի գավառի քարտեզը դրի առջևս, կամենում էի մի մարշրուտ պատրաստել, որ նրա համեմատ սկսեի ճանապարհորդությունս: Նայում եմ, նայում եմ, իմ ցանկացած տեղերից և ոչ մեկը նշանակված է քարտեզի մեջ: Տեր աստված, մտածում եմ, այդ ինչ բան է, թուրքերի ամենաանանշան ձմեռոցները, որոնց մեջ տարվա երեք ամիսը միայն բնակություն է լինում, նշանակված են քարտեզի մեջ, բայց հայոց գյուղեր չկան: Բարեբախտաբար ինձ մոտ էր մի գանձակեցի պարոն, որին ես դարձա, խնդրելով, որ բացատրե այդ գաղտնիքը: Նա նույնպես նայեց քարտեզի վրա ոչինչ չկարողացավ ջոկել:

—Ո՞ր գյուղն եք ուզում, — հարցրեց նա:

—Օրինակ, ես ուզում եմ տեսնել Գետաշեն գյուղը: Նա որոնեց քարտեզի վրա և ասաց.

—Ահա այդ Չայ-քենդը հայոց Գետաշենն է:

—Հիմա հասկացա, քարտեզ պատրաստողները հայոց անունները թարգմանել են, չայ — թուրքերեն նշանակում է գետ, իսկ քենդ նշանակում է գյուղ, և այսպիսով Գետաշենը դարձրել են Չայ-քենդ՝ այսինքն՝ գետի գյուղ:

Ես նկատեցի, որ ոչ միայն հայոց գյուղերը, այլ մինչև անգամ հայոց վանքերը թուրքերեն անուններով էին նշանակված: Ուրեմն առաջ պետք էր նրանց թուրքերեն անունները սովորել, հետո օգուտ քաղել այդ քարտեզներից, որը մի մեծ դժվարություն էր ինձ համար: Բայց ի՞նչ նպատակ կար այսպես խառնաշփոթ բան շինել անուններից — ես հասկանալ չկարողացա:

Ես մի կողմ դրեցի քարտեզները, և ավելի բարվոք համարեցի մի հմուտ առաջնորդ ինձ հետ վեր առնել, քան թե թուրքերեն անուններ սերտել:

Մի ամբողջ ժամ տևեց մինչև ես դուրս եկա Գանձակի այգիներից և բռնեցի այն ճանապարհը, որ տանում էր դեպի գերմանական Ելենդորֆ կոչված կալոնիան: Ցանկանում էի տեսնել, թե ինչպես է ապրում եվրոպացի գաղթականը Հայաստանում:

Թիֆլիսի գերմանական կալոնիան իր մաքրությամբ և գեղեցկությամբ ամենին հիացք էր պատճառում: Բայց պետք է ասած, որ Թիֆլիսի կալոնիան այժմ իսկապես քաղաքի մի մասն է կազմում. նա կորցրել է իր կալոնիայի հատուկ բնավորությունը: Բայց Ելենդորֆը կալոնիայի կատարյալ կերպարանք է կրում. այստեղ կարելի է տեսնել մի քաղաքակիրթ ժողովրդի տնտեսությունը: Փողոցները լայն, ընդարձակ և ուղիղ են. աջ և ձախ կողմից զարդարած են բարդի և չինարի ծառերով, որոնք հովանավորում են տների շարքը: Փողոցների երկու կողմից ևս, տների դռան առջևից ջրի վտակներ են վազում: Բոլոր տները միակերպ են, արխիտեկտուրայով չեն զանազանվում միմյանցից, բայց բավական պարզ, մաքուր և համեստ ճաշակով շինված, պատուհանները նայում են դեպի փողոցը, որոց միջում կարելի է տեսնել զանազան տեսած

ծաղիկների բազարներ: Տների ետևի կողմում է ընդարձակ բակը, ամբարները, ախոռատունը և մի կանոնավոր տնտեսության համար հարկավոր եղած այլ շինվածքները59: Միևնույն տների շարքում դուք կտեսնեք կոպեկների ետևից ընկած հայ մանրավաճառի խանութը, որը հայտնի չէ որ ջհանդամից եկած, այստեղ ամբողջ օրը երդումներ է ուտում, ստախոսում է, որ կարողանա մի առարկա իր արժեքից կրկնապատիկ գնով վաճառեր: Ի՛նչ համեմատություն կա այդ խաբեբայի և այն հասարակության մեջ, որ գործ ունի բնության հետ, որ իր արդար վաստակը ստանում է աշխատանքով ու քրտինքով:

Այս կողմերում չկա մի ուրիշ աշխատասեր ժողովուրդ որպես Ելենդորֆի գերմանացիները: Կինը այստեղ ամեն գործում օգնում է տղամարդին: Նա հունձք է հնձում, խոտ է հնձում, կալ է կալսում, նայում է անասուններին: Քաղցր է նայել կնոջ վրա, հարդյա գդակը գլխին, մի կարճ դերյա հագած, թեթև բաշմակները ոտին, հնձում է: Աղջիկները, տղաները նույնպես ամենայն եռանդով մասնակցում են ծնողների եռանդոտ աշխատությանը:

Ելենդորֆի գաղթականները շվաբներ են, եկան այդ կողմերը բոլորովին մերկ և աղքատ: Մի ամբողջ տարի Գանձակի հայերը կերակրեցին նրանց, մինչև կառավարությունից տեղ ստացան իրանց համար բնակություն հաստատելու: Նրանք եկան կարծեմ 1828 թվին, և երեք տարի առաջ կատարեցին իրանց հիսունամյա հոբելյանը: Կես դարի ընթացքում նրանք կարողացան հարստանալ և իրանց համար կանոնավոր տնտեսություն ստեղծել: Կառավարությունը շնորհել էր նրանց այնպիսի արտոնություններ, որ կես դարը բավական էր այդ աշխատասեր ժողովրդին իր դրությունը ապահովելու համար: Նրանք ստացան ամենապատվական հողեր, այնքան, որքան ցանկանում էին: Գանձակի ջրի յոթը մասից վեցը տվեցին քաղաքի ամբողջ ժողովրդին իրանց այգիները և ցանքերը ոռոգելու համար, իսկ մի մասը ստացան Ելենդորֆի գաղթականները: Հիսուն տարի ազատ էին հարկերից և ամեն տեսակ տուրքերից, ունին իրանց առանձին ինքնավարությունը, իրանց մեջ եղած բոլոր վեճերը քննվում էին և վճռվում էին իրանցից ընտրված շուլցի ձեռքով: Տեղային իշխանությունը իրավունք չուներ շուլցի ընտրության կամ նրան փոխելու մեջ60:

Այդ բոլոր դյուրությունները կարող էին մի այլ հասարակության ծուլացնել, փչացնել, բայց նրանց միջոց տվեցին ինքնուրույն կերպով զարգանալու և կանոնավոր-բնական ճանապարհով առաջադիմելու: Այժմ նրանցից յուրաքանչյուրը ունի մի քանի այգիներ, ընդարձակ վարելահողեր, խոտ հնձելու մարգագետիններ, այլև աշխատում են գնել այգիներ Գանձակում, երբ աճուրդով վաճառվում են, կամ աղքատությունից ծախվում են:

Յուրաքանչյուր գերմանացի ամեն տարի վաճառում է մի քանի հազար ռուբլու գինի և այլ բերքեր:

Ելենդորֆի գաղթականները ունին մի գեղեցիկ եկեղեցի կարմրագույն քարերից շինված, նրա մոտ է դպրոցը, որի մեջ սովորում են երկու սեռի աշակերտները: Դպրոցի մոտ կա մի փոքրիկ կոկիկ տուն վարժապետի բնակության համար. դպրոցը ունի ընդարձակ պարտեզ երեխաների խաղալու համար: Տարենը երկու անգամ արձակուրդ է լինում մի քանի շաբաթներով, մեկը գարնան սկզբում ցանքի ժամանակ, մյուսը՝ ամառը հունձքի ժամանակ:

Ունին խնայողության կասսա, ունին բարեգործական կասսա աղքատներին գնելու համար, ունին հասարակաց շտեմարան, մի խոսքով, այն բոլոր հիմնարկությունները, որ միջոց են տալիս

մարդուն ապահով կերպով ապրելու և կարոտությունից ազատ մնալու: Խնայողությունը, չափավոր և համեստ կյանքը այդ գաղթականների կենցաղավարության հիմնական կանոնն է: Նրանք իրանց հեռու են պահում ամեն տեսակ շռայլությունից: Մինչև վերջին տարիները նրանց կանայքը ծանոթ չէին մետաքսեղեն, կամ բրդեղեն հագուստների հետ, չնայելով, որ շատ հարուստ էին: Հասարակ չթեղեն հագուստով կառավարվում էին: Տղամարդիկ նույնպես չէին հագնում մահուդ կամ տրիկո: Պատմում են, որ նրանցից մեկը Թիֆլիսում գնել էր մի թանկագին մուշտակ: Իսկույն կալոնիստները ժողով կազմելով, արգելեցին նրան հագնել, որ իր օրինակով չգայթակղեցնի մյուսներին: Նա ստիպվեցավ իր մուշտակը վաճառել:

Ելենդորֆի գաղթականները իրանց օրինակով կարող էին լավ օրինակ տալ Գանձակի հայերին: Բայց մինչև այսօր հայերը դրանցից սովորեցին երկու բան միայն, այն է՝ ֆորգոն և տակառ շինել: Գանձակեցի թուրքերի բանեցրած բոլոր ֆորգոնները հայերն են շինում:

Ելենգորֆում ես մնացի կես ժամ միայն: Այստեղից պիտի գնայի Հաջի-քենդ, որը Գանձակի ծառայողների ամառանոցն է: Ճանապարհը հարթած էր, որովհետև մինչև հիշյալ գյուղը Գանձակից միշտ կառքեր և պոսաայի սայլակներ են գնում: Ելենդորֆից սկսյալ Գանձակի տափարակը վերջանում է և ճանապարհը բարձրանում է դեպի բլուրների զառիվերը, և լեռների վրայով պտույտներ գործելով, հասնում է մինչև Հաջի-քենդ: Ելենդորֆից այն կողմը բնությունը բոլորովին փոխվում է, կարծես մարդ մտնում է մի ուրիշ աշխարհ: Հետզհետե բլուրները ծածկվում են թփերով, և ապա սկսվում են անտառները: Ես հագած ունեի բարակ ամառային հագուստ, մինչև Ելենդորֆ հասնելս սաստիկ շոքում էի տոթից. իսկ այժմ սկսեցի մրսել և միևնույն օրը հարփուխ ստացա:

Հաջի-քենդը, ինչպես ասացի, Գանձակի ամառանոցն է. այնտեղ է անցկացնում ամառը գավառապետը իր բոլոր ծառայողներով, այնտեղ են լինում քաղաքի բոլոր պաշտոնատարները: Գանձակից մինչև այստեղ բերած է հեռագրական թեր Հաջի-քենդը այժմ բացի ամառանոց եկողներից ուրիշ բնակիչներ չունի: Բայց նա առաջ եղել է հայաբնակ գյուղ, մինչև այսօր մնացել է հայոց եկեղեցին, որ կիսով չափ ավերակ է: Գյուղից ոչ այնքան հեռու, անտառի մեջ երևում է հայոց գերեզմանատունը:

Հասնելով Հաջի-շեն, մի փոքր այս կողմ և այն կողմ ման գալով երկու ժամը լրացավ: Սաստիկ սոված էի, մտա հյուրանոցը մի բան ուտելու: Հյուրանոցի պահողը գերմանացի էր, ով դիտե որտեղից եկած. ահագին բարձրահասակ կինը, նստած պատշգամբի վրա նամակ էր գրում, ամուսին այրը պտտվում էր հյուրերի շուրջը, զանազան հանաքներ էր անում: Մտա սեղանատուն: Նրա շուրջը պատել էին տեղային բոլոր ծառայողները ամեն կոչման և ամեն աստիճանի, սպասում էին, որ ճաշ տան: Երևում էր, որ կերակուրների ցուցակ չկար, սպասավորը ներս մտավ և բերանացի հայտնեց, թե ինչ տեսակ կերակուրներ կան, և նրանց թվում հիշեց հայոց բորանին ու չիխիրթման: Այդ երկու անունները ընդհանուր ծիծաղ բարձրացրին, ռուսները սկսեցին հռհռար: Նրանց թվում գտնվող մի քանի հայ ծառայողներ ևս սկսեցին ծիծաղել իրանց պապերի բորանու և չիխիրթմայի վրա, երբ նկատեցին, որ իրանց ռուս պաշտոնակիցները ծիծաղում են: Բնավորության ցածությունը, — ստոր հաճոյամոլությունը երևում է առավելապես այսպիսի մանր բաների մեջ: Իմ դրությունն էլ ոչ սակավ ծիծաղելի էր. ազգային զգացմունքը շարժվեց ինձանում, ես բոլորի հակառակ պահանջեցի չիխիրթմա և բորանի: Դուրս եկավ, որ շատ լավ էին պատրաստված:

Ճաշի սեղանի վրա խոսակցության առարկան գուբերնատորի ջեյրանն էր:

—Դուք տեսա՞ք գուբերնատորի համար բերած այն նոր ջեյրանը, — հարցնում է մեկը մյուսից:

—Տեսա, ինչպես չէ, շատ զալումն է, — պատասխանում է մյուսը:

—Երբ մոտենում է մարդուն, սկսում է առջևի ոտիկներով քանդել գետինը, — մեջ է մտնում երրորդը:

—Չէ՛, առջևի ոտիկներով չէ քանդում, ետևի ոտներովն է քանդում և միևնույն ժամանակ պոչը շարժում է, — մի չորրորդը սկսում է ուղղել նրանց սխալը:

Ամբողջ կես ժամ տևեց վիճաբանությունը, արդյոք գուբերնատորի ջեյրանը մարդուն մոտենալու ժամանակ առջևի ոտներն է շարժում, թե ետևի: Ես ձանձրացա այդ դատարկախոսությունից, դուրս եկա սեղանատնից պատշգամբի վրա, այստեղ պահանջեցի կոֆե: Դրսից ես լսում էի միևնույն վիճաբանությունը, բայց հարցը դարձյալ մնաց անվճիռ:

Պատշգամբի վրա նստած ժամանակս հայ ծառայողներից մեկը մոտենում է և ինձ, առանց իրան ծանոթացնելու, ուղղակի ասում է.

—Գիտե՞ք ինչ կա, հյուրանոցի տերը այդ տունը շինելու ժամանակ, ասում են, գտել է ահագին գանձ, հիմա նա շատ հարուստ է:

—Ես հավատում եմ, այսպես թանկ-թանկ որ ծախում է նա իր կերակուրները, կարող է գանձ ունենալ, — եղավ իմ պատասխանը:

—Չէ, փո՛ղ է գտել, փո՛ղ, կրկնեց անծանոթը, և դարձյալ չէր կարողանում ըմբռնել, որ իր տեղեկությունը միայն առասպել էր և ավելի ոչինչ:

Մինչև Հաջի-շեն ես եկա միայնակ, որովհետև ճանապարհը ուղիղ էր և հեռագրական թելի սյուները օգնում էին ինձ չմոլորվելու: Բայց հեռագրական թելը Հաջի-շենում վերջանում էր: Այստեղից ես պիտի գնայի Սյալուկ կամ Ազատ կոչված գյուղը: Ճանապարհը, որ տանում էր այնտեղ, մի նեղ շավիղ էր, որ պտտվում էր լեռների վրայով: Խիստ հեշտությամբ կարող էի մոլորվել, մանավանդ, որ տեղ-տեղ շավիղը կորչում էր թփերի մեջ: Իմ բախտից պատահեց մի գյուղացի, որ Հաջի-շենից գնում էր դեպի Սյուլուկ: Ես խնդրեցի, որ առաջնորդն ինձ, խոստանալով, որ նրան արաղի փող կտամ: Դուրս եկավ, որ գյուղացին, թեև հագուստից աղքատ էր երևում, բայց բավական բարեսիրտ և ունևոր մարդ էր: Ճանապարհի երկարությունը ձանձրալի չլինելու համար, ես սկսեցի նրա հետ հետևյալ խոսակցությունը.

—Ի՞նչ գործ ունեիք Հաջի-շենում:

—Գնացել էի ղուփերնաթի մոտ, — ասաց նա մի առանձին կերպով:

—Ի՞նչ գործ ունեիր ղուփերնաթի հետ:

—Ղազախները մեր արտերը ուտացնում են:

—Հետո դուփերնաթը լսե՞ց քո գանգատը:

—Ինձ չթողեցին նրա մոտ:

—Քեզ ի՞նչ ասեցին:

—Ոչինչ:

—Հիմա ո՞ւր ես գնում:

—Գնում եմ մեր տունը:

—Քեզ ինչո՞ւ չթողեցին դուփերնաթի մոտ:

Նա լռեց:

Բարձրանալով լեռան բարձրավանդակի վրա, ես տեսա նույն կազակների վրանները, որոնք իրանց ձիաներով տրորում էին գյուղացու արտերը, և որոնց վրա գանգատվելու էր գնացել նա:

Երեկոյան, դեռ արեր մայր չմտած, ես հասա Ազատ գյուղը: Այստեղ իջևանեցի մի երիտասարդ քահանայի մոտ, որ Գանձակից եկել էր ամառանոց: Արևը մայր մտավ, բայց դեռ բավական լույս էր, որովհետև լուսնկա գիշեր էր:

Գյուղացիները ցերեկվա աշխատությունից դադարելով, հավաքվել էին խրճիթների կտուրների վրա և բըբուզ նստած խոսում էին միմյանց հետ: Ես իմ հյուրընկալի հետ մոտեցանք մեկ խումբի: Խոսակցությունը դարձյալ կազակների վրա էր, որոնք գյուղացիների խոտի դեզերը և հունձքը ուտեցնում են իրանց ձիաներին և այլն:

Մի քանի րոպե լսելուց հետո ես այն եզրակացությանը հասա, որ կազակները իսկապես մեղավոր չեն: Նրանց տվել են իջևանելու համար մի տեղ, որ ծածկված է անտառով, իսկ մնացած բոլոր հողերը մշակված են: Հայտնի բան է խիտ անտառում անկարելի է ձիաներ արածացնել, նրանք իրանց ձիաները քաղցած չպահելու համար ստիպված են արածացնել մշակված դաշտերի վրա:

Գյուղացիների խոսակցությունից երևաց և մի ուրիշ բան: Հիշյալ կազակների իջևանելու համար տեղային իշխանությունից նշանակված է եղել մի այլ ամառանոց, ուր ընդարձակ արոտամարգեր կային նրանց ձիաների համար: Հետո զանազան անձինք այդ տեղերը պահել են իրանց ձիաների համար խոտ հնձել տալու, իսկ կազակներին քշել են այնտեղ որ արածացնեն գյուղացիների հունձքի արտերը: Այժմ ես հասկացա, թե ինչո՞ւ իմ առաջնորդին չէր հաջողվել յուր արտերն ազատել:

Ազատ գյուղում ես մնացի երկու ամբողջ օր, որովհետև այդ գյուղի մերձակայքում մի քանի նշանավոր տեղեր կային, պետք էր տեսնել:

Ազատ գյուղում պատահեց ինձ ծանոթանալ Կովկասյան ուսումնական շրջանի տեսչի օգնականի հետ: Նա մի հայ երիտասարդ էր, որ իր ընտանիքով եկել էր այդ գյուղը ամառը անցկացնելու համար: Որպես Կովկասյան ուսումնական շրջանի տեսչի օգնական, նրան հանձնված էր աշխատել թե Ելիզավետոպոլի, թե Նուխվա և թե Ղարաբաղի կողմերի հայաբնակ գյուղերում ռուսաց դպրոցներ բաց անել: Որովհետև այդ դպրոցները վերջին ժամանակներում բավական աղմուկներ բարձրացրին, ես հետաքրքրվեցա տեղեկանալ պատճառները:

Հետո առա ինձ հետ, որպես ուղեցույց, գյուղացիներից մեկին, իսկ որպես առաջնորդ Սարգիս Ջալալյանցի ճանապարհորդության երկու հատորները: Շուտով հայտնվեցավ, որ այդ գրքերը միևնույն տեսակ բաներ էին, որպես Թիֆլիսի շտաբի պատրաստած քարտեզները, միայն տարբերությունը նրանումն էր, որ քարտեզների մեջ բոլոր տեղերի անունները թուրքացնում են, բայց ճիշտ իրանց տեղումն են դնում, իսկ Ջալալյանը տեղերի անունները հայացնում է և ցանկացած տեղումն է դնում: Երևում է, լուսահոգին շատ տեղեր աչքով չի տեսել, գրել է ուրիշներից հարցնելով. թեև անդադար կրկնում է, թե հայրենյաց սուրբ հողը համբուրելով, արտասուք թափելով, անցա այստեղ, այնտեղ և այլն:

Սիով գնալ շատ դժվարին էր լեռների ելևէջների վրա, ես վճռեցի այնօր ոտքով ճանապարհորդել:

Ես կամենում էի տեսնել Գեոգգյոլ (կանաչ լիճ) կոչված փոքրիկ լիճը: Այդ լիճը կազմվել է Քյափազ սարի փլատակներից: Մինչև այսօր ժողովրդի հիշողության մեջ մնացել է դարևոր ավանդությունը, թե ինչպես երկրաշարժից հիշյալ սարի մի մասը քանդվեցավ և թափվելով ձորի մեջ, կտրեց գետի(՞) ընթացքը, որ նույն ձորով հոսում էր: Ջուրը հավաքվելով լճացավ, բայց դարձյալ ահագին ժայռերի տակից նա բուսնում է և շարունակում է իր ընթացքը:

Քյափազ սարի փլատակները, դիզելով ահագին քարաժայռեր միմյանց վրա, կազմել են բազմաթիվ խոռոչներ և այրեր, որոնք մեծ ծառայություն են արել բնակիչներին երկրի խռովյալ ժամանակներում: Այդ այրերի մեջ պատսպարվում էր հայ ժողովուրդը լեզգիների, պարսիկների և օսմանցիների արշավանքների ժամանակ: Այնտեղը, ուր գտնվում է Քյափազ լեռան քարակարկառը, կոչվում է Չինգիլ, այսինքն՝ չանկլ, որ նշանակում է անկարգ կերպով դիզված քարեր: Չնայելով, որ Քյափազ սարի մի մասը քանդվել է, բայց նա դարձյալ բարձրաբերձ հանդիսանում է իր շրջակա լեռների մեջ: Անտառներից մերկ է նա:

Վերադառնալով Քյափազ սարից, ես կրկին եկա Ազատ գյուղը, ուր իջևանել էի: Այդ գյուղը գտնվում է լեռան բարձրավանդակի վրա, նրա դեպի արևմտյան (՞) կողմը բարձրանում է Սարի-յալ կոչված սարը, որի գագաթի վրա կա մի հայոց մատուռ, որի մեջն է ս. Պանդալյոն բժշկի գերեզմանը: Նույն լեռան արևելյան կողմը, մի ձորի մեջ գտնվում է հայոց վանք, որի մեջն է Հերմոգինե քահանայի գերեզմանը:

Ազատ գյուղում երկու օր մնալով, իմ հյուրընկալ քահանայի հետ ձի վարձեցինք, և երրորդ ավուր առավոտյան պահուն սկսեցինք դիմել դեպի Գետաշեն գյուղը: Ճանապարհը ձգվում էր լեռների բարձրավանդակների վրայով, երբեմն իջնում էր խորին ձորերի մեջ: Կեսօր էր, երբ հասանք Գետաշեն հայաբնակ գյուղը:

Գետաշենը գտնվում էր մի փոքրիկ ձորի մեջ, որտեղից անցնում է Քյուրակ-չայի ճյուղերից մեկը: Ամբողջ ձորը, գետի աջ և ձախ կողմերում, լցված է գյուղացիների այդներով, որ նրան անտառի ձև են տալիս: Վայրենի ընկուզենիները դարևոր հասակ ունին:

Այդ գյուղում ես իջևանեցի Մելիք Մնացականովների տանը. մի հոյակապ, քարից շինված տուն, որ որոշվում էր մյուսներից իր մեծությամբ: Դա Գանձակի գավառի չորս մելիքներից մեկի տունն էր: Ես գտա այդ տոհմի ներկայացուցիչներից մեկին՝ Մնացական բեկին անկողնի մեջ: Մոտ հարյուրամյա ծերունին տկար էր, բայց հիշողությունը տակավին արթուն և դատողությունը առողջ: Խիստ հետաքրքրական էր խոսել այդ կենդանի հնության հետ հին անցքերի մասին: Նա պատմում էր բոլորը ինչպես մի Խորենացի: Երբ նա նկատեց, որ ասածները նշանակում եմ հիշատակարանիս մեջ, շատ ուրախացավ: «Գրեցեք, որդի, ասաց նա, թող հայոց նախնյաց գործքերը չկորչեն. նրանք շատ երևելի մարդիկ են էլել»: Հետո նա հարցրեց. «Հիմա ինչպե՞ս է հայոց ազգի գործը»: Ես պատմեցի նրան մի քանի բաներ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից, ներսես պատրիարքի աշխատություններից և այլն: «Բա մեր կաթողիկոսը ի՞նչ է շինում», հարցրեց նա: — Ոչինչ, պատասխանեցի ես: Ծերունին խորին կերպով հոգվոց հանեց և լռեց:

Գետաշեն գյուղը ունի մի քարաշեն եկեղեցի և մի մատուռ, որ ուխտատեղի է. նա կոչվում է ս. Նշան: Եկեղեցին ես չգնացի, ինձ հետաքրքրում էր ուխտատեղին, որտեղ ես կամենում էի տեսնել մի հին գրչագիր ավետարան:

Երկար որոնելուց հետո գտան քահանային, որ եկավ մատուռի դուռը բաց արավ: Ճանապարհին իմ ուղեկից տեր Գ. Բ. պատմեց մի նոր պատահած61 անցք, որից ես հասկացա, թե ինչպես պետք էր վարվել այդ մատուռի մեջ: Ամենայն երկյուղածությամբ մոտեցա, երեսս խաչակնքելով համբուրեցի ս. Ավետարանը և այլ սրբությունները, որ կարգով շարած էին սեղանի վրա: Հետո խնդրեցի քահանային, եթե կարելի էր, ինձ ցույց տալ գրչագիր ավետարանը: Որովհետև մատուռի մեջ սաստիկ մութն էր, նա այնքան բարի եղավ, որ թույլ տվեց ավետարանը մատուռից դուրս հանել և բակումը նայել:

Ես տեսել եմ հայոց բազմաթիվ գրչագրեր, բայց առաջին անգամ պատահում էր ինձ տեսնել մի այսպիսի գեղեցիկ աշխատություն: Մագաղաթի նրբությունը, գրչի գեղեցկությունն ու կանոնավորությունը սքանչելի էր: Համարյա ամեն երեսների վրա կային հիանալի պատկերներ, որ ներկայացնում էին ավետարանի յուրաքանչյուր գլխի բովանդակությունը: Պատկերների նկարները, գույները, ոսկեզօծությունը, ցույց էին տալիս ժամանակի գեղարվեստի կատարելությունը: Կազմը ամբողջապես արծաթից էր. կազմի վրա դուրս էին փորված առաքյալների և այլ սրբերի պատկերները:

Բայց ես բախտավոր գտնվեցա, որ նույն ավետարանի վերջին թերթերի վրա գտա մի հիշատակարան, որ ինձ համար շատ թանկագին էր: Իմ ճանապարհորդության գլխավոր նպատակներից մեկը լինելով հայոց հին մելիքների մասին պատմական տեղեկություններ հավաքել, — այդ ավետարանի մեջ գտա Ջրաբերդի մելիքների ամբողջ տոհմագրությունը62:

Ահա ինչ դիպվածքով, հիշատակարանից երևում է, որ 1753 թ. Ջրաբերդի մահալի իշխան Մելիք Հաթամը ետ է գնել այդ ավետարանը պարսիկներից, որ նրանց ձեռքում գերի էր ընկած: Նրա առաջին արծաթ կազմը պարսիկները պոկած են եղել, մելիքը նորից արծաթով կազմել է տալիս և

ընծայում Գետաշենի եկեղեցուն: Որպեսզի ապագա սերունդը այդ բարեգործության համար հիշե նրան իր աղոթքների մեջ, մելիքը ժամանակի սովորության համեմատ, իհարկե կրոնական մտքով, արձանագրում է հիշատակարանի մեջ իր նախնյաց, իր որդիների և թոռների անունները: Ահա այդքանը մի հաստատ փաստ է պատմագրի համար, գիտենալ, թե որ ժամանակումն էին ապրում այդ մարդիկը, ովքե՞ր էին նրանց նախնիքը, ովքե՞ր էին նրանց որդիքը, թոռները և այլն: Բացի դրանից, հիշատակարանի մեջ արձանագրվում է, թե ով էր ժամանակի կաթողիկոսը, առաջնորդը, երկրի տիրապետողը և այլն:

Մեր հին ձեռագրերի մեջ գտնված հիշատակարանները, համարյա բոլորը այդ ձևով են գրվում, և կարող են մատակարարել հնասերներին առատ պատմական նյութեր, եթե հավաքվեին: Գոնե Էջմիածնի ծույլ, պորտաբույծ վարդապետները այսքանը անեին: Հավաքեին իրանց ձեռքի տակ գտնված ահագին գրադարանի գրչագիր գրքերի հիշատակարանները և տպել տային իրանց տպարանում:

Ես ավելորդ եմ համարում յուրաքանչյուր գյուղի տնտեսության եղանակը, կեցության ձևերը, գյուղացիների վիճակը առանձին-առանձին նկարագրել, դա կձանձրացներ իմ ընթերցողներին, և ես անդադար կրկնությունների պիտի հանդիպեի: Այդ կողմերի գյուղացիների դրությունը և նրանց կենցաղավարության եղանակը այնքան նման է միմյանց, որ բոլորի մասին կարելի է գրել մի ընդհանուր տեսություն և այդ կգրեմ ես հետո:

Գետաշենցիների մասին այսքանը ավելորդ չեմ համարում հիշել, որ նրանք հայտնի են շրջակա գյուղացիների մեջ իրանց կռվասեր և խռովարար բնավորությամբ: Երբ գյուղական աշխատությունները դադարում են, հանգստի ժամանակ նրանք մի առանձին բավականություն են զգում, հավաքվել խրճիթների կտուրների վրա, ծխել և միմյանց ուշունցներ տալ: Երևանի նահանգի աշտարակցիները հայհոյանքը, ուշունցը իր կատարելությանն են հասցրեք, բայց գետաշենցու ուշունցը, թեև սյունեցու նման կոշտ է, կոպիտ է, բայց ազդու է:

Գետաշենից անցանք Կարաբուլաղ գյուղը, որ ընդամենը 2 ժամվա ճանապարհ է: Ամեն մի գյուղ հասնելիս կամ պետք է որոնել տանուտերի տունը, կամ քահանայի տունը: Ես ընտրեցի վերջինը, մտածելով, թե հունձքի, կալի ժամանակ է, տանուտերը զբաղված կլինի, բայց քահանան անգործ կլինի: Բայց իմ կարծիքը խաբեց ինձ: Քահանային մենք գտանք մեր քարաշեն քարվանսարայի մեջ: Այդ քարվանսարան մնացել է ամենահին ժամանակներից: Նրա շրջապարիսպը, դարվազան, ախոռատները քանդված են, և գյուղացիները քարերը տանելով գործ են ածել իրանց շինությունների համար: Այժմ ողջ մնացել են մի կարգ քարաշեն և կամարակապ սենյակներ, որ առաջ ծառայում էին որպես իջևան ճանապարհորդների համար63:

Քարվանսարան այժմ բոլորովին անտեր մնալով, գյուղի տեր Դ. քահանան սենյակներից մեկը ընտրել էր իր համար որպես արհեստանոց, այնտեղ տակառներ էր շինում, որոնք մեծ քանակությամբ գնում են շրջակա գյուղացիները: Քահանան վարպետի մոտ չէ սովորել, այլ իր սեփական վարժություններով փայտից այնպիսի իրեղեններ է շինում, որ ամենահմուտ արհեստավորի գործ կարելի է համարել: Ես տեսա նրա շինած մի փայտյա մատուցարան (պոդնոս), որը իր նրբությամբ և գեղեցկությամբ շատ հիանալի էր64: Քահանան բացի հյուսնությունից գիտեր և այգեգործություն անտառներից վայրենի պտղատու ծառեր բերելով,

տնկել էր մի այգի և տունկերը պատվաստելով, այն աստիճան ազնվացել է, որ ամենաընտիր տեսակների հետ կարելի է համեմատել:

Առհասարակ այդ քահանան ինձ վրա շատ լավ տպավորություն գործեց, ես առաջին անգամ տեսնում էի աստուծո սեղանի պաշտոնաներից մեկին, որ իր ապրուստի հույսը չէր դրել միայն պսակից, մկրտությունից և թաղումից ստացած փողերի վրա, այլ ապրում էր արդար արհեստով և գյուղացու տնտեսությամբ: Նրա արհեստանոցի մոտ էր կալը, որտեղ նա կալսել էր տալիս իր մշակության բերքը:

Քահանայի արհեստանոցում ես գտա մի ուրիշ զարմանալի մարդ: Դրան կարելի է իր կյանքում պատահած արկածների համար և տեսած երկրների համար հայոց թափառական հրեա կոչել: Նա եղել է Թուրքիայում, Պարսկաստանում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Չինաստանում, մի խոսքով, ամեն տեղ: Հնդկաստանում նա սովորել էր լեղակ մշակելոլ արհեստը: Կամենալով այդ արհեստը իր հայրենիքում ևս մտցնել, նա վերադառնալով Գանձակ, սկսեց փորձեր անել, փորձը հաջողվեցավ և իր արդյունաբերած լեղակը նա ցույց տվեց տեղային կառավարությանը, խնդրելով, որ իրան օգնեն, որ կանոնավոր մշակություն սկսե: Ոչ ոք նրա վրա ուշադրություն չդարձրեց, այժմ ծերությունից և աղքատությունից ստիպված, նա պատսպարան էր գտել Կարա-բուլաղի հին քարվանսարայի ավերակների մեջ, և տեր հոր արհեստանոցում նստած, կոշիկներ էր կարում, կոշիկների կաղապարներ էր շինում և օգնում էր տերտերին նրա հյուսնության գործում:

Կարա-բուլաղի եկեղեցին մտնելուց հետո և մի քանի գրքերի հիշատակարանները քննելուց հետո, ես պատրաստվեցա շարունակել իմ ճանապարհը: Այստեղ ես պիտի բաժանվեի տեր Գ. Բ.-յանցի հետ, որը Ազատ գյուղից բերել էր ինձ մինչև Կարա-բուլաղ:

Մի թուրքից ձի վարձելով, ճանապարհ ընկա: Ձիու տերը եկավ ինձ հետ ճանապարհը ցույց տալու համար: Հարցուփորձով հասկացա, որ իմ առաջնորդը թուրքի մի թափառական ցեղին էր պատկանում, և մեծ անզգուշություն էր իմ կողմից մի այսպիսի ավազակի հետ, միայնակ, լեռների վրա ճանապարհորդել: Նա փիադա էր, ասացի, որ առաջ գնա, իսկ ես ձիով կհետևեմ նրան: Այդ այն նպատակով էր, եթե թուրքը ինձ կողոպտելու փորձ անե, ես կարողանամ շուտով նկատել և պաշտպանվելու միջոց ունենամ: Իմ հետևից գալով, նա կարող էր մի ատրճանակի հարվածքով ինձ ցած գլորել, հետո կողոպտել: Բարեբախտաբար ոչինչ չպատահեց և ես Թոդան65 թուրքաբնակ գյուղից անցնելով, անվտանգ հասա հայոց Էրքեջ գյուղը, որ գտնվում է Բալայ-քյուրակ գետի մոտ:

Չկամենալով Էրքեջում երկար մնալ, շուտով կանչել տվի գյուղի քահանային, որ եկեղեցու դուռը բաց անե: Քահանան հայտնվեցավ, դա Կարա-բուլաղի արհեստավոր քահանայի հակապատկերն էր: Նա հոժարությամբ բաց արավ եկեղեցու դռները, կարծելով, թե ես ուխտավոր եմ և շուտով ավետարանը և մի կոտրած խաչ դրեց սեղանի վրա, որ ես համբուրեմ և նրան փող տամ: Բայց երբ նկատեց, որ ես հիշատետրը դուրս հանեցի ծոցիցս և սկսեցի մատիտով մի քանի նկատողություններ անել նրա վրա, քահանան սարսափեց, կարծելով, թե ես մի պաշտոնական անձն եմ և սատանան գիտե, ինչ նպատակով եկել եմ նրա եկեղեցին «գրելու»: Իմ բոլոր ջանքը, համոզելու նրան, որ նա այսպիսի կասկածներ չունենա, իզուր անցավ: Նա ոչինչ չկամեցավ ինձ ցույց տալ: Մտածելով, որ կարող է մի անախորժություն պատահել, ես թողեցի ու դուրս եկա

եկեղեցուց, բայց ամենևին չմեղադրելով ողորմելի քահանային: Էրքեջից դուրս գալով, շարունակեցի իմ ճանապարհը դեպի Կարաչինար, կամ Աղջաղալա (Սպիտակ բերդ): Դեպի ձախ կողմի լեռները, որ շարունակություն են Մռավ լեռան, պատած էին անտառներով. իսկ դեպի ձախ բարձրավանդակները փոքր առ փոքր իջնում են լեռները, ավելի տափարակ ձև են ստանում, անտառներ չկան, միայն պատած են ճոխ խոտաբույսերով և մշակած արտերով: Երեկոյան ես հասա Ղարաչինար, Մելիք Բեգլարովների տունը:

Դ

Գյուլիստանի կամ Իգիրմիգորդի մահալը: Մելիք Բեգլարովների ու Մելիք Յուսուփովների պատմական անցյալը66: Մելիք Բեգլարովների գյուղական տնտեսությունը: — Գյուղական տնտեսությունը առհասարակ Գանձակի գավառում: — Կալվածական վեճեր: — Հին մելիքների սերունդի այժմյան ազնվապետական նշանակությունը: — Ազնվապետությունը առհասարակ Գանձակի և Ղարաբաղի գավառներում:

Գյուլիստանի մահալը կոչվում է Թալիշի մահալ, նա կոչվում է և Իգիրմիդորդ (24), որովհետև բաղկացած է քսան և չորս գյուղերից: Նրա սահմաններն են՝ հյուսիսից Քյուրակ գետը, հարավից Թարթար գետը, արևելքից այժմյան փոստի ճանապարհը, իսկ արևմուտքից Մռավ սարը: Այդ մահալը նախքան ռուսաց տիրապետությունը էր Ղարաբաղի հինգ դաշնակցական մելիքությունների (խամսայի) մասներից մեկը: Այստեղ իշխում էին Թալիշի հայ մելիքները, և ամբողջ մահալը նրանց սեփականությունն էր, թե երկիրը և թե իշխանությունը անցնում էր սերունդից սերունդ:

Դիտավորություն ունենալով առանձին գրքով հրատարակել Ղարաբաղի մելիքների պատմությունը, որոնց թվում և կլինի Գյուլիստանի մելիքների պատմությունը, այժմ այսքանը միայն կասեմ, որ Գյուլիստանի մահալի այժմյան տիրապետողները միակ են Ղարաբաղի բոլոր մելիքներից, որ կարողացել են ամբողջապես պահպանել իրանց հայրական ժառանգությունը: Հին Գյուլիստանը իր սահմաններով այժմ որպես կալվածք և սեփականություն գտնվում է այդ երկրի նախկին տիրապետողների ժառանգների ձեռքում, որ բաժանված են երկու ճյուղերի, մեկը՝ Մելիք Բեգլարովները, մյուսը՝ Մելիք Յուսուփովները:

Մելիք Բեգլարովների տոհմի ձեռքում կա մինչև 70 հազար դեսյատին հող, իր դաշտերով, լեռներով, անտառներով և արոտամարգերով: Այդ տարածության վրա կա 15 գյուղ, չհաշվելով ձմեռոցները: Մելիք Յուսուփովների ձեռքում կա 20 հազար դեսյատին հող, երեք գյուղերով:

Գալով Կարաչինար, կամ Աղջակալա67 գյուղը, ես իջա Մելիք Բեգլարովների տանը: Ինձ առաջին անգամ պատահում էր տեսնել մի հայ մեծ կալվածատիրոջ տնտեսությունը:

Կալվածատիրոջ տունը համարյա մի ամրոց է. նրա մոտով խոր ձորի միջով անցնում է Գորան գետը: Ահագին դարվազայից ներս մտնելով, ձեր առջև բացվում է մի ընդարձակ բակ: Նրա մի կողմում շինված են ցորենի և այլ բերքերի պահելու համար ամբարներ, մյուս կողմում՝ գինի պահելու մառաններ և զանազան ծածկոցներ երկրագործական անոթներ պահելու համար. մի կողմում ձիաների ախոռատունն է. մի կողմում կալվածատիրոջ բնակարանն է զանազան վայելուչ սենյակներով: Սենյակների մի երեսը նայում է դեպի բակը, իսկ մյուս երեսը՝ դեպի

գեղեցիկ պարտեզը: Տունը ունի բոլոր հարմարությունները կանոնավոր գյուղատնտեսության համար:

Կանոնավոր գյուղատնտեսություն ասելով չպետք է հասկանալ եվրոպական գյուղատնտեսություն, այլ մեր տեսած, մեր ունեցած գյուղական տնտեսություններից ամենակատարյալը:

Մելիք Բեգլարովները առաջինը եղան Գանձակի գավառի կալվածատերերի մեջ, որ բերել տվեցին եվրոպական գութան և հնձելու մեքենա: Այդ փորձից հայտնվում է, որ եվրոպական երկրագործական մեքենաները չեն կարող մի առանձին օգուտ տալ, եթե հարմարած չլինեն մեր երկրի տեղական պայմաններին: Ահա ինչ պատճառով:

Այս կողմերում հողի պարարտությունը բուսցնում է շատ բարձրահասակ հունձք, գյուղացիք հնձում են հասկերը միայն մի երկու կամ ավելի թզաչափ ձողի հետ. իսկ ձողի մնացած մասը մեկ արշինի չափ մնում է գետնի վրա: Այդ նրա համար է, որ կարճ հնձելով, ավելի հեշտությամբ է ծեծվում, բացի դրանից, ձողի վերին մասը ավելի նուրբ լինելով, հարդը ավելի փափուկ և ավելի նուրբ է լինում, անասունները ախորժակով են ուտում:

Եվրոպական հնձելու մեքենան չէ համապատասխանում այդ պայմաններին: Նա բոլորովին տակիցն է հնձում, այսպիսի հունձքի խուրձերը համ երկար են լինում, համ դժվարությամբ են կալսվում, համ հարդը կոշտ է լինում, անասունները չեն ուտում: Շատ հասկանալի է, որ հնձելու մեքենաները պատրաստվում են այն երկրների համար, ուր հարդը չեն ուտացնում անասուններին:

Գութանի անհարմարությունը նրանում է, որ նա թեև համեմատաբար սակավ զույգ անասուններ է պահանջում բանեցնելու համար, բայց այնքան խոր ակոսներ չէ ձգում, որպես մեր գութանները: Իսկ խոր ակոսները հարկավոր է մեր երկրի հողի համար, մանավանդ արան տեղերի ջրային ցանքերի համար: Եթե ակոսը խոր չէ, ցանքը շուտով է ծարավում, և եթե շուտով ջուր չեն հասցնում՝ այրվում է: Մինչդեռ խոր ակոսը կարող է խոնավություն պահպանել և ցանքը շուտ չէ ծարավում: Այդ ավելի նպաստավոր է, որովհետև ջուրը այս կողմերում սակավ է:

Կան և տեխնիկական անհարմարություններ, հանկարծ մեքենայի մեկ վինտը կամ մի ուրիշ տեղը կոտրվում է, ամբողջ մեքենան դադարում է, ո՞վ պիտի շինի, մի կալվածատեր չէ կարող մի երկու մեքենայի համար մի մեխանիկ պահեք յուր մոտ: Մինչև գրեն, մինչև Եվրոպայից բերել տան կոտրված մասը, ժամանակներ կանցկենա. բայց մշակության գործը չէ սպասում, նա պետք է յուր ժամանակին կատարվի:

Այդ բոլոր անհարմարությունները կվերջանան այն ժամանակ միայն, երբ երկրագործական անոթները թեև եվրոպական սիստեմով, բայց մեր երկրի պահանջներին հարմարեցրած, մեզ մոտ կպատրաստվին և վնասված ժամանակ դյուրին կլինի նրանց նորոգել տալ: Այդ կարող է լինել այն ժամանակ միայն, երբ մի քանի կալվածատեր, կամ մի քանի գյուղերի հասարակությունը միանալով, ընդհանուր ծախքով բերել կտան մեխանիկներ և բաց անել կտան անոթներ պատրաստելու գործարաններ:

Ավելորդ չեմ համարում համառոտ կերպով մի քանի տեղեկություններ տալ այդ կողմերի երկրագործության վրա: Ժամանակի վերաբերությամբ ցանքը լինում է երկու տեսակ, գարունցան և աշունցան, այսինքն՝ մեկը գարնանն են ցանում, մյուսը՝ աշնանը: Գարնան ցանքի սերմը պետք է գարնան ցանքից ստացած հունձքից լինի, իսկ աշնան ցանքի սերմը պետք է աշնան ցանքից ստացած հունձքից լինի: Գարնան ցանքերը անվում են ըստ մեծի մասին սարոտ և ցուրտ տեղերում, ուր չեն ջրում, ջրվում է անձրևով և ցողով: Իսկ աշնան ցանքը անվում են ըստ մեծի մասին օրան տեղերում, ուր պետք է ջրել:

Մի քանի խոսք էլ կալվածական իրավունքների մասին: Գանձակի գավառում կան երեք տեսակ հողեր. 1 աղալարների հողերը, որ 47 թվի հողային պալաժենիայի զորությամբ, տրվեցավ աղալարներին վայելելու համար, նրանց իրավունք տալով ստանալ գյուղացիներից բերքի տասն մսանից մեկ մասը. 2. Կալվածատերերի հողերը, դրանք հողի սեփականատերեր են, կամ ժառանգությամբ ստացած, կամ փողով գնած, իրավունք ունին կապել գյուղացիների հետ ամեն տեսակ պայմաններ, որ իրանց շահավետ է, կամ տասանորդ ստանալու, կամ տասնից երկու մասը և կամ տասնից երեք մասը և այլն: Երրորդ տեսակը արքունի հողերն են, որոնց մշակող գյուղացիները վճարում են հարկ միայն, բայց բերքից մաս չեն վճարում:

(Որքան ես տեղեկացա, Մելիք Բեգլարովները իրանց բոլոր գյուղացիներից ստանում են տասանորդ միայն):

Արքունի հողերի վրա բնակվող գյուղացիների վիճակը ավելի թեթև լինելով, գյուղացիները ոչ միայն ցանկանում են, այլ աշխատում էլ են, որ հողերը կառավարության ձեռքը անցնեն: Կառավարության և կալվածատերերի մեջ եղած վեճերի ժամանակ գյուղացիները աշխատում են պաշտպանել կառավարության շահերը: Մի քանի գյուղերում, օրինակ, Գյուլիստան գյուղում, իրանք գյուղացիները խնդիրք են տվել, թե գյուղը կառավարությանն է պատկանում և ոչ Մելիք Բեգլարովներին:

Գյուղացիների այդ ջանքը առաջ է գալիս և այն հանգամանքից, որ այս կողմերում ևս սահմանվել են հողային հաշտարար միջնորդներ, որոնք գնահատում են հողը և գյուղացիներին իրավունք են տալիս մի որոշ գնով գնելու կալվածատերերից: Այժմ գյուղացիները, կամ այնքան հասկացողություն չունենալով, որ կալվածատերերից գնեն և իրանք կալվածատեր դառնան, և մի կողմից էլ ցանկանալով ազատվել կալվածատերից, աշխատում են վկայություններ տալ, որ գյուղը թագավորական է:

Առհասարակ կալվածական վեճերը, թե կառավարության և կալվածատերերի մեջ, թե կալվածատերերի և գյուղացիների մեջ, — այս կողմերում շատ զարգացած է:

Կալվածատերերի միմյանց հետ ունեցած վեճերի ժամանակ, երբ մի կողմը թուրք է, իսկ մյուս կողմը հայ, ասում էին, որ ըստ մեծի մասին թուրքերն են տանում գործը: Պատճառները՝ 1. թուրքերի ընդունակությունը հաճոյանալու պաշտոնատարներին. 2. մահմեդական օրենքի ոգին վկայության մեջ, մահմեդականի շահերը պաշտպանելու համար:

Մելիք Բեգլարովները բացի երկրագործությունից պահում են ձիաների զավոդ: Ղարաբաղի հռչակված ձիաների ցեղը վերջին ժամանակներում բոլորովին այլասերվել էր: Հայտնի է, որ Ղարաբաղի ձիաների ցեղը մի խառնուրդ էր տեղական և պարսկական (արաբական) ձիաների:

Նախքան ռուսաց տիրապետությունը Ղարաբաղի խաները Պարսկաստանի հետ հարաբերություններ ունենալով, այստեղից կամ բերել էին տալիս կամ ընծա էին ստանում ազնիվ նժույգներ և իրանց ձիաների ցեղը միշտ նորոգում էին: Բայց ռուսների տիրելուց հետո նրանց հարաբերությունները Պարսկաստանի հետ կտրվեցավ, և ձիաների սերմը չնորոգվելով, այլասերվեցան: Այժմ Մելիք Բեգլարովները կազմելով մի թաբուն երկրի ընտիր մատակներից, Թեհրանից ստացել են երկու պարսկական նժույգներ, մեկը ուղարկել է Սադրազամը, մյուսը՝ Շահի փեսա մի խան: Տարակույս չկա, որ այդ հոգածություններով Մելիք Բեգլարովները կարող են վերանորոգել Ղարաբաղի ձիաների ցեղը, որ հոչակված էր մեր կողմերում:

Ե

Գյուլիստան գյուղը: — Ամենափրկչի անապատը: — Գյուլիստանի բերդը: — Մռավ լեռը: — Թոռուտ կամ Յուղակեր: — Հոռեկ և Թալիշի մելիքների պալատը: — Թալիշ գյուղը:

Օգոստոսի 4-ին գուրս եկա Կարաչինարից: Անցնելով Գորանի գետը, մի վերստ առաջ գալով, հասա Խարխափուտ կոչված հայաբնակ գյուղը, որ զարդարված էր գեղեցիկ այգիներով: Այդ գյուղը գտնվում է նույն անունով ձորի բերանում, որի միջով ճանապարհը խարխափելով տանում է դեպի Գյուլիստան գյուղը: Այդ ձորը ձգվում է անտառոտ երկու լեռնային գոտիների միջով, որ բարձրանում են ճանապարհի աջ և ձախ կողմից: Ձորի միջով վազում է մի վտակ, որ գնալով խառնվում է Գորանի գետակին: Ճանապարհին պատահեց ինձ տեսնել Մելիք Բեգլարի այգու տեղը: Հնձանի տեղը, դարավոր թթենիները, ընկուզենիները, տանձենիները և այլ պտղատու ծառեր, ծերացած, վայրենացած, դեռ մնում են: Այդ այգին ունի մի ռոմանական նշանակություն, երևելի մելիքի կյանքից, որովհետև այդ այգու մեջ էր պահում նա յուր Բալա անունով խասային:

Շարունակելով ճանապարհը նույն ձորի միջով և կես ժամի չափ առաջ գնալով, անտառը վերջանում է, և ճանապարհը ընկնում է հարթ բարձրավանդակների վրա, որ զուրկ են անտառից: Այստեղ կան արոտատեղիներ և մշակած դաշտեր: Խաչի գատուկից անցնելով, ճանապարհը հետզհետե ցածանում է դեպի մի խոր ձոր, որի մեջ գտնվում է Գյուլիստան գյուղը:

Գյուլիստան գյուղը, որի անունով կոչվում է Գյուլիստանի մահալը, գտնվում է կարծես մի խոր կաթսայի մեջ, որի չորս կողմից բարձրանում են անտառապատ լեռներ, որպիսի են Գոգթափա, Կարմիր-խաչ լեռը, Ղազուն տուրմաշ և Մռավի շարունակությունը կազմող սարերը:

Գյուլիստան գյուղը հայաբնակ է, գտնվում է Ինջա կոչված գետակի մոտ: Ունի մի եկեղեցի, որ շատ հին չէ: Հին եկեղեցին ավերակ է, այժմ նույն գյուղացիները, որ նրա մեջ մկրտվել են, նրա սերունդը հազար անգամ համբուրել են, նրա մեջ պահում են իրանց ոչխարները: Զարմանալի մարդիկ են այդ գյուղացիները, նրանց մեջ կա և ծայրահեղ մոլեռանդություն և ծայրահեղ անկրոնություն, իսկ հաստատ ոչինչ չկա նրանց մեջ:

Գյուլիստանի եկեղեցում գտնվում է մե հոչակավոր գրչագիր ավետարան, որ պաշտվում է ամբողջ գավառի ժողովրդից: Սկսյալ Գանձակից և ամեն կողմերից քաշում է նա յուր մոտ ուխտավորների բազմություն, և նրան վերաբերում են բազմաթիվ հրաշագործությունները:

Գյուլիստանում իջևանած լինելով գյուղի քահանայի տանը, ես խնդրեցի, որ ինձ տանե եկեղեցին և ցույց տա հիշյալ ավետարանը: Նա մեծ ուրախությամբ կատարեց իմ խնդիրքը, կարծելով, թե ես

էլ ուխտավոր եմ: Մտանք եկեղեցին, նա իսկույն ծածկվեցավ շուրջառով և մի արկղի միջից դուրս հանեց մի ահագին կապոց և դրեց գրքակալի վրա: Այդ կապոցը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ գույնզգույն թաշկինակներ մինը մյուսի վրա փաթաթած: Քահանան շարունակելով շարականը, մեկ-մեկ բաց էր անում թաշկինակները, որոնցից շատերը մետաքսից էին: Վերջապես, այդ բոլոր փաթեթների միջից հայտնվեցավ ավետարանը: Ես մոտեցա և համբուրեցի նրա կազմը: Հետո կամեցա բաց անել, որ նայեմ: Քահանան արգելեց, կիսաքաղաքավարի կերպով հասկացնելով, որ ինքը միայն կարող էր նրան բաց անել, իսկ մի աշխարհական մարդու մատները չպիտի շոշափեին այդ սրբությունը: Ես չհակառակվեցա, ասելով, որ նա բաց անե. ես միայն հեռվից կնայեմ: Քահանան յուր ձեռքով, որ շատ էլ մաքուր չէր, բաց արեց սուրբ գիրքը: Դա մի հասարակ գրչագիր ավետարան էր, հաստ թղթի վրա գրված, ոչ Գետաշենի ավետարանի գեղեցկությունն ուներ և ոչ նրա գրչության արհեստը: Պատկերները շատ տգեղ էին, այնուամենայնիվ ժողովրդի մեջ ավելի համարում և համբավ ստացած էր, քան թե Գետաշենի ավետարանը: Իմ որոնածը էր նրա հիշատակարանների մեջ մի պատմական տեղեկություն գտնել, այն ևս չգտա, որովհետև վերջին թերթերը քրքրված և պակաս էին:

Մյուս օրը վաղ առավոտյան ես ցանկացա տեսնել երկու հնություններ, որ Գյուլիստանի գյուղից շատ հեռու չեն: Դրանցից մեկն էր ս. Ամենափրկչի անապատը, իսկ մյուսը՝ Գյուլիստանի բերդը: Իմ հյուրընկալ քահանան, թեև մոտ յոթանասուն տարեկան մարդ էր, յուր ձեռքով ձին թամքելով, մի ձի էլ ինձ համար պատրաստելով, հրացանը ձգեց ուսին, ծտի նման թռավ նրա վրա և իմ առջևը ընկնելով, սկսեց առաջնորդել ինձ:

Առավոտյան զով ժամանակն էր: Մենք գնում էինք ձորի միջով, որտեղից անցնում է արծաթի նման սպիտակ Աղ-սու կոչված գետակը: Այդ գետակի վրա պետք է գտնեինք Ամենափրկչի անապատը: Նա Գյուլիստանից մի և կես ժամու չափ հեռավորություն ուներ, այդ պատճառով ես չէի շտապում, հետաքրքրվեցա իմ տերտերիցս մի քանի տեղեկություններ հավաքել:

— Տեր հայր, այս անտառում պտղատու ծառեր կա՞ն:

Նա գլուխը բացասական կերպով շարժում է, պատասխանելով, — օրհնած, ոչինչ չկա:

Մի փոքր անցնում ենք, տեսնում եմ հոնի, զկեռի, կաղինի, տանձենու և այլ պտղատու ծառեր:

—Տեր հայր, դու ասում էիր, որ պտղատու ծառեր չկան, այդ ի՞նչ է. տես, հոնի, զկեռի:

—Ո՞նց չկան, կան, հաճար կա:

Հաճարն էլ ես նոր լսեցի: — Հաճարը ի՞նչ են անում:

— Խոզերին են ուտացնում:

Այդ խոսակցության միջոցին տերտերը ինձ հեռվից ցույց տվեց Ամենափրկչի անապատը: Նա մանր առարկաների վրա, որպես էին պտուղները, ուշադրություն չէր դարձնում, խոշոր բաները ավելի շուտ էր տեսնում:

Ամենափրկչի անապատը, ինչպես ասացի, գտնվում էր Աղ-սու գետակի մոտ, ոչ այնքան հեռու Մռավ լեռից, մի անտառապատ ձորակի մեջ: Անապատի տաճարի շինվածքը կանգնած է չորս բոլորակ սյուների վրա, որ շինված են խամկուր քարից: Այդ տաճարը այժմ ամայի է. խաշնարած թուրքերը անասուններ են լցնում նրա մեջ. անասունների աղբը թանձրացած էր հատակի վրա: Տաճարից ոչ այնքան հեռու կա մի այլ շինվածք, ուր ապրում էր մի ժամանակ այնտեղի միաբանությունը: Դա էլ նույնպես անասնանոց է դարձել: Թե տաճարի և թե միաբանության բնակարանի բոլոր շինությունները դեռ մնացել են ամբողջ. կտուրների վրա բուսել են մացառներ և աճել են ահագին ծառեր: Անապատից մի քսան քայլ հեռավորության վրա գտնվում է մի փոքրիկ մատուռ, որ ուխտատեղի է. այստեղ դեռ թուրքերի անասունները մուտք չեն գործել, որովհետև դուռ ունի: Զարմանալի անհոգություն, թե ժողովրդի և թե մեր հոգևոր կառավարության կողմից. ահագին ծախքեր անելով, նախնիքը թողել են այդ սրբավայրերը: Այժմ նրանց որդիքը գոնե դռները քարով ամուր կպցնեին, բաց չթողնեին, որ թուրքերի անասնանոց դառնար: Անապատի ջրաղացի ավերակները դեռ մնում են:

Այդ անապատի գ ավթում թաղված կան զանազան անձանց գերեզմաններ, որոնց թվում է Աբրահամ յուզբաշու գերեզմանը (որ գնաց Պետրոս Մեծի մոտ):

Ես շտապում էի տեսնել Գյուլիստանի բերդը, որի մեջ ամրացած, հայոց մելիքները մինչև վերջին ժամանակները սարսափեցնում էին մահմեդականներին: Ամենափրկչի անապատից մի նեղ ճանապարհ անտառների միջով ուղիղ տանում է դեպի բերդը: Նա շատ հեռու չեր, ընդամենը պետք է գնալ մի երեք վերստ, որը հեռվից տեսա, իմ սիրտը սկսեց բաբախել: Ես տեսնում էի այն բերդերից մեկը, որի մեջ իմ վեպի68 հերոսները գործել էին:

Այդ բերդի տեղը բնության հրաշալիքներից մեկն է: Մի ահագին սեպացած քարաժայռ բարձրանում է խոր ձորի միջից և այդ քարաժայռի գլխին շինված է բերդը: Որպես խրամատ ծառայում է նրան խոր անդունդը, որի միջով հոսող գետակը պտույտներ է գործում և այդ քարաժայռի երեք կողմից ոլորվելով, նրան թերակղզու ձև է տալիս: Մի կողմից միայն բարձր քարաժայռի ստորոտը միանում է ցամաքի հետ:

Մռավ լեռը այստեղից ընդամենը մի երկու վերստ ճանապարհ է, բայց ես նրա գագաթը բարձրանալու բախտ չունեցա: Չնայելով իմ բոլոր թախանձանքին, ինձ առաջնորդող քահանան չկամեցավ ինձ հետ գալ, անդադար կրկնելով, թե մեզ կսպանեն: Եվ ոչ մի Գյուլիստանցի չցանկացավ ինձ հետ ուղեկցել, միևնույնը կրկնելով: Բանից դուրս եկավ, որ այդ բոլոր երկյուղը խաշնարած թուրքերիցն է, որ այդ լեռան ստորոտներում ցրված են: Զարմանալի բան է, Աֆրիկայում ճանապարհորդը ավելի ապահով է իրան զգում, քան թե այստեղ:

Բայց որքան ես տեղեկացա ականատեսներից, թեև Մռավը հեռվից խիստ սրածայր է երևում, բայց նրա գագաթը բոլորովին տափարակ է, և բավական տարածություն ունի: Նրա գագաթի վրա կան երկու գերեզմաններ, որ հայոց ուխտատեղի է: Այդ գերեզմանները պատկանում են ճգնավորների, որոնք բնակվում էին այդ լեռան գագաթի վրա: Մինչև այսօր ցույց են տալիս նրանց ճգնարանները, որոնք ուրիշ բան չեն, եթե ոչ երեք ահագին քարեր միմյանց մոտ դրած և մի քար ևս դրած նրանց վրա որպես ծածկոց: Միջում մի մարդ միայն կարող է բնակվիլ: Այդ ահագին քարերի այսպես միմյանց վրա դրվիլը միայն հսկաների գործ կարող է համարվել:

Գյուլիստանից դուրս գալով, բարձրացանք Թոռուտ69 կոչված անտառապատ լեռների վրա: Այդ լեռները արժանի են իրանց անվանը, որովհետև, օդի մեջ, կարծես մի տեսակ նուրբ անձրև աննկատելի կերպով թորում է: Երկու ժամից հետո հասանք Թոռուտ գյուղը, որ կոչվում է նաև Յուղակեր: Այստեղ բնակվում են ոչ ավելի քան 15 հայ ընտանիք, որ գաղթական են Շուշվա կողմերից: Այդ գյուղը առաջ հայոց բազմամարդ գյուղերից մեկն է եղել, հետո ավերակ է դարձել, այժմ նորից այնտեղ բնակություն են հաստատել:

Հիշյալ գյուղում փոքր-ինչ հանգստանալով, երբ նկատեցի տեղային անպիտան տանուտերը ձին ուշացնում է, ստիպվեցա այդ գյուղի մոտ իջևանած քոլանիներից մի ձի վարձել և շարունակել իմ ճանապարհը:

Թոռուտից դուրս գալով դարձյալ անտառների միջով շարունակելով մեր ճանապարհը, մեկ ժամ առաջ գնալուց հետո, իմ առաջնորդ քոլանին դարձյալ ընդհատեց տիրող լռությունը, ասելով՝ «Հիմա կտեսնենք այն տունը, որ ասում էինք»:

Իմ սիրտը թնդաց ուրախությունից, ես պիտի տեսնեի Գյուլիստանի հին մելիքների պալատները: Ճանապարհը սկսեց ցած իջնել, դեռ ոչինչ չէր երևում անտառի ծառերը արգելում էին հեռվից մի բան տեսնել: Երբ բոլորովին մոտեցանք, երևաց սպիտակ պալատը:

Պալատը շինված է ամբողջապես սպիտակ քարերից: Նա բաժանվում է երկու շինվածքների, մինը մյուսի հանդեպ, մեջտեղից ճանապարհ է անցնում: Հոռեկի բլուրի ստորոտում գտնվում է բուն պալատը: Ամբողջությունը քառակուսի ձև ունի. շրջապատի չորս անկյունները ամրացրած են չորս աշտարակներով: Գլխավոր դռնից ներս մտնելով բակը, դեպի աջ կողմը բոլորովին ողջ կանգնած են մի կարգ ընդարձակ սենյակներ. նրանց թիվը ութն է: Սենյակների առաստաղը կամարակապ է և գմբեթաձև: Գմբեթի գագաթից բոլորաձև երդիկ է բացված, որտեղից լույս է թափվում: Սենյակները ուրիշ լուսամուտներ չունին: Դրանց ձևը սյունեցու տան կատարելագործված ձևն է: Այդ մի կարգ սենյակների առջևը կա երկայն պատշգամբ, որ ծածկված է կամարներով, որոնք ամրանում են ութր հաստ սյուների վրա: Սյուները քառակուսի են, շինված քարից, որպես ամբողջ շինվածքը:

Պալատի այդ կարգի սենյակները հարմարեցրած են բնակիչների բոլոր պահանջներին, բոլորի մեջ կան բուխարիներ. կա առանձին խոհանոց, նրա մոտ ստորերկրյա մառան, զանազան պահեստի տեղեր և այլն: Սենյակների դռները եկեղեցու դռների ձև ունին, քարե կշտանոցներով: Այդ կարգի սենյակները բոլորը մի հարկանի են և պահպանել են իրանց ամբողջությունը: Քարն ու կիրը, — այդ է նրանց բաղադրությունը. փայտի մի կտոր անգամ չկա նրանց շինվածքի մեջ:

Այդ մի կարգ սենյակների հանդեպ կառուցված է պալատի մյուս մասը, որ բաժանվում է առաջինից երկայնաձև, քառակուսի բակով: Դա բաղկանում է մի ընդարձակ սրահից, որի երեսը բաց է և որը ծառայելիս է եղել ամառվա բնակության համար: Ըստ մեծի մասին այս տեսակ սրահներ ունենում են իշխանները, որոնք ասարսից սովորության համեմատ, այնտեղ նստելով, դատավորություն են անում: Ժողովուրդը թակում, բաց օդի մեջ կանգնած է լինում, իշխանը սրահում նստած լսում է նրանց խոսքը և վճիռներ է տալիս: Սրահի երկու կողմերում կան գեղեցիկ սենյակներ, որոնք երեքհարկանի են եղել: Վերին հարկը քանդված է:

Այդ պալատի հանդեպ, ճանապարհի մյուս կողմում, կա մի այլ առանձին շինվածք, որը յուր ընդարձակությամբ ավելի մեծ է, քան առաջինը: Որպես երևում է դա ծառայելիս է եղել հիշյալ պալատում բնակվող իշխանի ծառաների, հյուրերի և պահապանների բնակության համար: Այստեղ կա ախոռատուն, ստորերկրյա ներքնատներ, որոնք բանտի համար են եղել և այլ զանազան ծածկոցներ: Այդ շինվածքի ամբողջությունը նույնպես քառակուսի ձև ունի. անկյունները ամրացած են ահագին աշտարակներով: Բայց մի քանի շինվածքներ միայն այստեղ պահպանել են իրանց ամբողջությունը. մնացածը քայքայված է, անտառը մասամբ պատել է, սենյակների միջից ծառեր են բուսել:

Այդ մասնում մի դահլիճի դռան կամարի վրա կարդացվում է հետևյալ արձանագրությունը. «Հիշատակ է Օհան բարուն70 տերին Մելիք Թամրազ թ. ՌՃՀԶ» (1176):

Հիշյալ երկու շինվածքներից փոքր-ինչ հեռու, մի աղբյուրի մոտ, գտնվում են բաղանիքները, որոնց առաստաղի գմբեթները քանդված են, իսկ մնացածը ողջ է:

Առհասարակ հնության այդ գեղեցիկ հիշատակարանները, որ կառուցված են քարով և կրով միայն, ոչ այնքան տրորվում են ժամանակից, որքան ժողովրդի բարբարոս ձեռքերից: Թալիշեցի հայերը դրանց մոտ ունին կիր այրելու քուրաներ. քանդում են պալատների քարերը և քուրաների մեջ այրելով, կիր են պատրաստում: Թեև շրջակա լեռները կազմված են կրային քարերից, բայց ծույլ գյուղացու համար ավելի հեշտ է քանդել պալատի արդեն պատրաստի քարերը:

Տեղացիք այդ պալատները ընծայում են մելիք Թամրազին և նրա եղբայր Աբով յուզբաշուն: Բայց այդ շինվածքների գոյությունը պետք է ավելի հին համարել, քան հիշյալ երկու իշխանների ժամանակները71: Դրանք, անտարակույս, Աղվանից վաղեմի իշխանների կամ թագավորների ամառանոցներ են:

Բարտավ քաղաքի Աղվանից իշխանները սովորություն ունեին ամառը այդ կողմերի անտառապատ լեռների վրա անցկացնել, որովհետև ամառվա տոթը Բարտավի մեջ անտանելի է լինում:

Հիշյալ պալատներից բարձրանում է դեպի Հոռեկ գյուղը, որ գտնվում է անտառապատ սարի լանջքի վրա: Հոռեկը հին Թառիջն է, որ հիմնեց ուտիացոց աշխարհից գաղթական Թառիջ իշխանը, որ Գյուլիստանի կամ Թարիջի (Թալիշի) մահալին տիրող իշխանների նախապապն է: Այդ գյուղի մեջ այժմ բնակություն չկա, շինվածքները բոլորը կորած են անտառի տակ: Որովհետև, երբ բնակիչները գաղթեցին Վրաստան, այդ գյուղը ավերակ դարձավ, այնտեղից վերադառնալով 4 վերստ հեռավորության վրա հիմնեցին նոր Թարիջ կամ Թալիշ գյուղը:

Հոռեկում կամ հին Թալիշում այժմ շեն է մնացել միայն մի եկեղեցի, որ ուխտատեղի է: Դա շինված է ՉԻԸ (728) թվին, 602 տարվա հնություն ունի: Եկեղեցին բաղկացած է երկու մասնից՝ գավթից և տաճարից: Եկեղեցու շուրջը, անտառի մեջ, պատած մացառներով, ցրված են Թալիշի մահալի վաղեմի տիրապետողների մամռապատ շիրիմները: Ինձ հաջողվեց մացառների միջին գտնել մի քանի մելիքների, յուզբաշիների և բեկերի գերեզմաններ, որոնք մեծ դեր են խաղացել այդ երկրի պատմության մեջ: Թալիշի մելիքների այժմյան ներկայացուցիչների՝ Մելիք Բեգլարովների տոհմային գերեզմանատունը նույնպես այստեղ է: Հոռեկի եկեղեցին ուխտատեղի է, գտնվում է մի

հիանալի անտառապատ սարի լանջքի վրա, որի բարձրությունից երևում է Կուր գետը, Թարթար գետը և Ջուանշիրի մահալի հարթ տափարակները:

Արևը մայր է մտել, երեկոյան մութը բավական թանձրացել էր, ես տատասկների մեջ տակավին որոնում էի նոր գերեզմաններ: Այն տապանաքարերը, որոնք բաց էին մնացած, դժվարությամբ էին կարդացվում, ժամանակը մաշել էր արձանագրությունները: Իսկ նրանք, որ պատած էին մամուռով, կամ ծածկված էին հողով, պահպանվել էին: Շատ տեղ առանձին պատրաստություններ էին հարկավոր տապանաքարերը բաց անելու համար, պետք էր բահ՝ հողը փորելու, պետք էր տապար՝ թուփերը կամ ծառերը կտրատելու, որոնք խիտ կերպով աճել էին նրանց շուրջը: Թեև վերջին դեպքում ինձ օգնում էր իմ առաջնորդ քոլանին, իր խենջարով կտրատելով թփերը, բայց այդ մի մարդու գործ չէր:

Երբ խավարը բոլորովին պատեց, պատանի քոլանին ասաց ինձ.

—Աղա, դուք չե՞ք վախենում:

—Ինչի՞ց:

—Այդ լեռների վրա մի սոխի համար մարդու գլուխը կկտրեն: Երկու օր չկա, — ավելացրեց նա, — ահա այնտեղ մի մարդ սպանեցին. նա ցույց տվեց դեպի Թալիշ տանող ճանապարհը:

Ոչ այնքան պատանի քոլանիի զգուշացնող խոսքերը, որքան գիշերային մութը ստիպեց ինձ թողնել հայոց վաղեմի հերոսների հանգստարանը. ես նստեցի ձին, և իմ ուղեկիցը առաջնորդեց ինձ դեպի Թալիշ գյուղը, որ այստեղից երկու ժամվա հեռավորության վրա էր գտնվում:

Բոլորովին մութն էր, երբ ես հասա Թալիշ գյուղը և իջևանեցի տեղային յուզբաշու տանը: Այդ գյուղը որպես վերևում հիշեցի, հիմնել են հին թալիշեցիք, երբ նրանք վերադարձան գաղթականությունից: Հնության արժանավոր մի բան չգտա այստեղ: Գյուղը դեռ նոր է, ոչ եկեղեցի ունին, ոչ գերեզմանատուն. իրանց ննջեցյալները թաղում են հին Թալիշում, Հոռեկի եկեղեցու շրջակայքում:

Մյուս օրը ինձ ասացին, որ այստեղ մի մարդու տանը մի սուրբ գիրք կա, որով բժշկություններ են լինում: Իսկույն հասկացաք որ Ավետարան կլինի: Ինձ այնքան չէր հետաքրքրում գրքի հրաշագործությունը, որքան այն միտքը, թե կարելի է նրա հիշատակարանների մեջ մի պատմական տեղեկություն գտնել, այդ պատճառով ինձ հետ առնելով գյուղի երիտասարդ քահանային, գնացինք այդ գիրքը տեսնելու: Նա գտնվում էր մի հասարակ գյուղացու մոտ և այդ գրքի պատճառով գյուղացին իր տունը ուխտատեղի էր շինել: Ամեն կողմից թափվում էին այնտեղ հիվանդներ և զանազան ցավագարներ, որոնցից, իհարկե, գյուղացին շահվում էր:

Ինձ ևս ուխտավոր համարելով, տանտերը մեծ ուրախությամբ ընդունեց: Իսկույն առաջարկեց նա մոմեր գնել, որ յուր մոտ պատրաստի պահում էր:

Գիրքը դրած էր մի մութ, խոնավ խորանում, որի դուռը բացվում էր տան մեջ: Այստեղ այնքան մութն էր, որ չնայելով մենք մեր գնած մոմերը վառեցինք, բայց դարձյալ դժվար էր կարդալ հին գրչագիրը, որի տառերը ժամանակի հնությունից մուգ-դեղին գույն էին ստացել: Ես խնդրեցի, որ

գիրքը դուրս տանեն, տան տերը ընդդիմացավ, ասելով, որ «աղան» կբարկանա, եթե տեղից շարժեն նրան: Ով էր այդ «աղան» ես հասկանալ չկարողացա: Միայն, եթե «աղա» համարում էր նա Հիսուս Քրիստոսին, կարծեմ ավելի պիտի բարկանար տանտիրոջ վրա, որ յուր հեղինակությունը՝ սուրբ Ավետարանը, բանտարկել էր մի մթին խորանում և անմատչելի էր դարձրել հասարակությանը, — այն Հիսուս Քրիստոսը, որ ասում էր, թե ճրագը չեն գնում ամանի տակ, այլ աշտանակի վրա, որ լույս տա ամենին:

Այս քարոզները թեև ես կարդացի տանտիրոջը, բայց նրա ականջը չմտավ, նա թույլ չտվեց սուրբ ավետարանը յուր մթին խորշից դուրս հանել, որ կարողանայի հետազոտել նրան, թեև երիտասարդ քահանան ևս աշխատում էր համոզել նրան, որ դրանում ոչինչ մեղք բան չկա: Ես կարողացա կարդալ նրա թվականը միայն. 821 տարվա հնություն ունի, գրված է հայոց ՇԹ (509) թվականին, բավական հաստ մագաղաթի վրա, խոշոր և գեղեցիկ երկաթագրերով: Այդ պատճառով գիրքը բավական հաստ ծավալ է ստացել, թեև նա բովանդակում է իր մեջ չորս ավետարանիչները միայն72:

Կրոնը և սնահավատությունը ավելի քան ութն հարյուր տարի պահպանեցին մեր նախնյաց գրչի այդ սուրբ հիշատակարանը: Բայց այն գրքերը, որ նրանց հանճարի ծնունդն էին, ոչնչացան: Գյուղացիների խրճիթներում, եկեղեցիների, վանքերի պահարաններում ես չէի տեսնում և ոչ մեկը նրանցից: Այդ ավետարանը, ինչպես և Գետաշեն գյուղի ավետարանը, գերի ընկած է լինում այլ ազգիների ձեռքում, բարեպաշտ անձինք փող են տալիս և ազատում են նրանց, գրել տալով վերջին թերթերի վրա իրանց ամբողջ ազգատոհմի անունները, որ ապագա սերունդը «աստված ողորմի» ասե նրանց հոգուն: Բայց ինձ չպատահեց տեսնել և ոչ մի Խորենացի և ոչ մի Եղիշե, որ թափված լիներ բարբարոսի ձեռքից, որ ունենար այսպիսի հիշատակարան: Դրանք անհետացան, ոչ գյուղացու խրճիթը և ոչ եկեղեցին չպահպանկցին նրանց:

Զ

Թարթար գետը, Գյուլիստանի և Չարաբ. սահ. — Գոլանիներ: — Մատաղիս գյուղ: — Եղիշե առաքելո վանքը: — Դաստակերտ գյուղի ավերակները: — Տոնաշեն գյուղ: — Կաթղկասար: — Չարդախլու կամ Մղավուզ: — Քաղաքատեղի: — Չարաբերդ: — Երից մանկանց վանքը: — Տոնի ապերը և Տեր-Սարգիսը: — Սուրբ Գորոս մատուռը: Չալադան յուզբաշու բերդի ավերակները:

Թալիշ գյուղից սկսած դեպի արևելք բնությունը բոլորովին փոխվում է. բարձր անտառապատ լեռները հետզհետե փոքրանում են, վերջը մերկ, փոքրիկ բլուրների ձև են ստանում: Հսկա ծառերի փոխարեն լեռնադաշտերը ծածկված են թփերով: Վերջապես ճանապարհորդի առջև բացվում է մի լայնածավալ, հարթ տարածություն, որի միջև հեռվից անցնում է Կուր գետը, սեղմված իր կանաչազարդ ափերի մեջ, և կատաղի Թարթարը, որ անձուկ ձորերի միջից դուրս գալուց հետո, հենց որ անցնում է լայնարձակ դաշտերի վրա, ճյուղավորվում է, բազմաթիվ գետակներ է կազմում:

Ճանապարհը գնում էր Խանագահի տափարակների վրայով. դեպի աջ կողմը վերջանում էին Թալիշի մահալի լեռների ծայրերը, իսկ դեպի ձախ տարածվում էր ընդարձակ, ցամաք անապատը: Մի ժամու չափ առաջ գնալուց հետո, մտանք մի գեղեցիկ ձոր, որ զարդարած էր նռնենի և թզենի ծառերով, որոնք աճել էին վայրենի գրության մեջ: Այստեղ բնությունը դարձյալ

կենդանացավ: Այդ ձորը տանում է դեպի Թարթար գետը, որի ափերի վրա, խլուրդների բունի նման, ցրված են գոլանիների ձմեռանոցները: Դրանք ոչ թե մարդկանց բնակություններ, այլ գազանների որջեր են: Դրանց մեջ բնակվում է մի վայրենի ժողովուրդ, որ ոչ երկրագործություն ունի և ոչ արհեստ, այլ տարվա տաք եղանակներում տարածվում է Մռավ լեռան բարձրավանդակների վրա, այնտեղ արածացնում է իր անասունները, և միայն սաստիկ ցուրտը և ձյունը կարողանում են նրան ետ մղել իր գետնափոր որջի մեջ, որտեղից նա սարսափ է տարածում դեպի իր շրջակայքը: Գոլանին Ջուանշիրի խաշնարած թափառական ցեղից մեկն է: Նա երկրի ցեցն է, որ լցնելով անտառները, գողանում է հայ գյուղացիների կովը, եզը, ոչխարը, ձին և այլն: Դա մի ավազակ ժողովոլրդ է, որ երկրի պատուհասն է դարձել: Ոչ օրենքը, ոչ իշխանության հսկողությունը չէ կարողանում զսպել այդ ավազակների վայրագությունը: Նա մի չնչին առիթով մարդ կսպանե, կվիրավորե, միայն թե մի բան լիներ հափշտակելու: Ցերեկները նա դարանամուտ է լինում անտառների խլության մեջ, որպես սարդը իր ոստայնում, սպասում է իր որսին: Հենց որ մի անասուն վրիպելով հսկողի տեսությունից մտավ անտառը, նա իսկույն իր դարանից դուրս կգա, կքշե ու կտանե: Իսկ գիշերները նա շրջապատում է հայոց գյուղերը, ինչպես մի աղվես, մի չախկալ, որ ժայռերի միջից իջնելով, մոտենում է քնած գյուղացու ախոռին հավեր գողանալու: Այդ պատճառով մեծ եղավ իմ երկյուղը, երբ իմ առաջնորդը հայտնեց, թե այստեղ պետք է պատրաստ լինել, մոտենում ենք գոլանիների բնակարաններին:

—Ես մի զույգ գոմեշ էի առած հարյուր և քսան ռուբլով, — ասաց նա. — մինչև այսօր երեք անգամ գողացել են և բերել են գոմեշը ինձ վրա վաճառել:

—Ինչպե՞ս:

—Ո՞նց թե ինչպես, — պատասխանեց նա, զարմանալով, որ ես չհասկացա նրա ասածը: — Գոմեշը գողանում է, տանում է, և ինքը գողը գալիս է քեզ մոտ, ասում է, ես գիտեմ քո գոմեշը ով է տարել, եթե ինձ կտաս 20 — 30 ռուբլի, ես կգնամ կբերեմ: Ի՞նչ պիտի անես, ճարահատյալ խոստանում ես տալ նրա պահանջած փողը , որ նա գնա բերե: Եվ իրավ, մյուս օրը բերում է և քեզ տալիս մյուս անգամ գողանալու և նոր փող ստանալու համար:

— Ինչո՞ւ չեք մի անգամ վախեցնում այդ ավազակներին, որ էլ չհամարձակվեն ձեր ապրանքը գողանալ:

—Ինչո՞վ վախեցնենք:

—Դատաստանով, գանգատվեցեք, որ կառավարությունը պատժե նրանց:

—Վկաների առջև գողը գողություն չի անի: Բայց մի մարդ էլ եթե հենց իր աչքով տեսած լինի, վկայություն չի տա, որովհետև կվախենա, գողը նրան անպատիժ չի թողնի. կամ դեզը կրակ կտա, կամ տանը նստած ժամանակ երդիկից հրացանի գնդակով կզարկե, կամ ծմակի մոտով անցնելիս, թփերի միջից կհարձակվի նրա վրա, իր խենջարը կխրե նրա փորը:

—Այն ժամանակ դուք էլ նույնը արեցեք, ինչ որ նրանք են ձեզ հետ անում:

—Մենք կանենք, մենք ավելի լավ կանենք, մեր մեջ այնպիսի տղերք կան, որ մեկը տասը քոլանիի ջուաբ կտա, բայց մեր մեջ հանցանքը չի թաքնվում. եթե մեկը մի հանցանք գործեց, նրա

դրացիներից հարյուր մարդիկ կգտնվեն, որ կմատնեն, որ կգնան վկայություն կտան: Բայց քոլանին մեզ նման չէ. նրանց մեջ միաբանություն կա. նրանք բոլորն էլ գողեր են, իհարկե գողը գողին կպաշտպանե, որ իր գողությունն չհայտնվի:

Մի ուրիշ բան էլ կա, այդ անիրավները հայերի նման մի տեղում խմբված չեն, մեծ շեներ չունին, որ հեշտ լինի նրանց վրա հսկելը, ցրված են ամեն տեղ, հինգ-վեց ընտանիքով, ո՛ր մեկի վրա կարելի է հսկել:

Իմ առաջնորդի վերջին խոսքերը շատ հավանական էին. երկինքը այդ ավազակների հափշտակություններից ազատելու միակ ճարն այն է, իմ կարծիքով, այդ թափառական ժողովուրդը հավաքել էլ բոլորին բնակեցնել Մուղանի անապատներում: Իրանք խաշնարածներ են, և Մուղանի անապատները առատ սնունդ կտան նրանց անասուններին:

Այսպես խոսելով, մենք մտանք Թարթար գետի ձորը և նրա հակառակ ընթացքով կես ժամվա չափ առաջ գնալով, հասանք Մատաղիս գյուղը, որ գտնվում է Կարա-քորփի կոչված կամրջի մոտ, որ հին ժամանակներից շինված է Թարթար գետի վրա:

Մատաղիս գյուղում ես իջևանեցի տեղային տանուտերի տանը: Մատաղիս գյուղը, ժողովրդի ավանդության համեմատ, շինված է եղել Վաչագան թագավորի Մադա-գըզ աղջկա անունով: Արդյոք ունեցել է Վաչագանը այդ անունով մի աղջիկ, — ինձ հայտնի չէ:

Մյուս օրը, վաղ առավոտյան, տանուտերի որդիներից մեկը ինձ հետ առնելով, սկսեցի գնալ դեպի Եղիշե առաքելո վանքը: Մեր նախնիքը մի առանձին հանճար են ունեցել վանքերը կառուցանել այնպիսի խուլ, դժվարամատչելի տեղերում, որ համ ժամանակի ասպատակություններից ազատ պահեն, համ ուխտավորներին տանջեն, որ նրանց հոգիներին ապաշխարություն լինի:

Մատաղիս գյուղից մինչև Եղիշե առաքելո վանքը ընդամենը 4 — 5 վերստ հազիվ կլինի, բայց ես այդ հինգ վերստը անցա հինգ ժամվա մեջ, այն ևս ոտքով, որովհետև ձիով անհնարին է գնալ: Թեև մեզ հետ ձիաներ էինք վեր առած, բայց նրանց քարշ էինք տալիս մեր հետևից և ավելի մենք էինք նրանց տանում, քան թե նրանք էին մեզ տանում:

Ճանապարհ չկար. նեղ շավիղը, որ ոլորվում էր խիտ անտառի միջով, սարսափելի ելևէջներ ուներ: Մի մարդկային շունչ անգամ չէր երևում լեռների ամայության մեջ: Բարեբախտաբար իմ առաջնորդը այծյամի նման ճանաչում էր բոլոր անցքերը, եթե ոչ կարելի էր ամենայն հեշտությամբ մոլորվել:

—Այս կողմերում քոլանիներ չե՞ն հանդիպում, հարցրի նրանից:

—Ո՞ւմը պիտի կողոպտեն այստեղ քոլանիները, ոչ մարդ է լինում այդ ծմակներում և ոչ անասուն:

Այդ միջոցին ծառերի միջից մի բարձրավանդակի վրա երևացին մի խումբ սպիտակ շինվածքներ:

— Դա Եղիշե առաքելո վանքն է, — ասաց իմ առաջնորդը:

Եվ իրավ, այդ վանքը մատուռների և տաճարների մի խումբ է, առանձին-առանձին շինված միմյանց մոտ և այնքան մոտ, որ մի մարդ հազիվ կարող է նրանց միջից անցնել: Բուն Եղիշե առաքելո անունով շինված տաճարի գավիթը միայն ողջ է մնացել, իսկ դարպասը կիսով չափ կործանված է: Երևում է, որ այդ ավերմունքը պատահել է մի քանի տարի առաջ և ոչ ավելի: Այդ տաճարի յուրաքանչյուր կողմում, կարգով շարված են երեք-երեք առանձին մատուռներ, որոնց մեջ թաղված են զանազան իշխանների և եպիսկոպոսների շիրիմներ73: Այդ մատուռներից մեկի մեջ գտնվում է Վաչագան թագավորի շիրիմը: Տապանաքարը տակնուվար է գրած, այնպես որ արձանագրությունը չէ երևում: Դա սև գույնով, ահագին քար է: Նույն մատուռի հանդեպ գտնվում է Մելիք Ադամի շիրիմը. ահագին տապանաքարի ճակատից դուրս է հանած մարմարյա տախտակը, որի վրա գրված է եղել տապանագիրը: Այժմ նրա տեղ մնացել է մի քառակուսի փոս տեղ միայն:

Միաբանության կացարանները և խուցերը և վանքի տնտեսության համար կառուցված բոլոր շինվածքները ողջ են մնացել, բայց ամայի: Իսկ այդ բոլոր սրբարանների մեջ ինձ հետաքրքրում էր տեսնել կացարանը այն քաջ աբեղայի, որ ամբողջ Սյունյաց աշխարհում Քոր-օղլուի նման անուն է թողել: Թե ծեր և թե մանուկ գիտեն նրա քաջագործությունների պատմությունը, մինչև այսօր ժողովրդի բերանում դեռ երգվում են այն երգերը, որ նվիրված էին այդ հսկա աբեղայի սխրագործություններին: Դա այդ վանքի միաբան Մեծշենցի Ավագ վարդապետն էր, որ թե հայ և թե թուրք ժողովրդի մեջ հայտնի է անունովս Դալի-Մահրասա74:

Դալի-Մահրասայի գերեզմանը գտնվում է Գանձակի սուրբ Հովհաննես մայր եկեղեցու զավթում:

Կացարանը, ուր բնակվում էր Դալի-Մահրասան, վանական աբեղայի խուցի նմանություն չունի, որտեղ Սաղմոս և եկեսցե է կարդացվում: Նրա կացարանը մի երեքհարկանի աշտարակ է, որ կառուցված է ապառաժի վրա և նայում է դեպի խորին, անտառապատ անդունդը, որ բացվում է նրա ստորոտում և որի միջով անցնում է Եղիշե առաքելո գետակը: Աշտարակի վերին հարկը կործանված է: Այնտեղ աճել է այժմ մի կանաչազարդ կաղնի ծառ, այնքան ամուր, այնքան անխորտակելի, որպես եղել է այդ աշտարակի մեջ բնակվող մարդը: Նա լեզգիների հոգեառ հրեշտակն էր, իսկ թուրքերի՝ սարսափը: Նրա որոտալից ձայնը լսելիս ամեն մարդ փախչում էր կռվի դաշտից: Մինչև այսօր երևում են աշտարակի պատերի մեջ բացված ծակերը, որտեղից նա դիտում էր իր շուրջը, որտեղից նա հրացաններ էր արձակում:

Չգիտեմ Էջմիածնի որ մոլեռանդ կաթողիկոսներից մեկը, լսելով, որ Դալի-Մահրասան շատ կոտորածներ և արյունահեղություններ է անում, նրան տանել տվավ Էջմիածին, ձգեց սառցատան մեջ, որ ապաշխարե:

Մի անգամ նա իր բանտի մեջ լսում է, որ վանքում ինչ-որ աղմուկ և խռովություն է տիրում. երբ հարցնում է պատճառը, նրան ասում են, որ Ջալալի քրդերը եկել վանքի անասունները թալանում են:

— Ինձ կարո՞ղ ես տալ մի ձի և մի որևիցե զենք, — ասում է նա յուր բանտապետին:

— Ի՞նչ կանես, — հարցնում է նրանից բանտապետը:

— Ես ավարը ետ կդարձնեմ:

Այդ հայտնում են կաթողիկոսին, ապաշխարողը զինվորվում է, նստում է ձին, և մի քանի ժամից հետո խլում է ավարը ասպատակների ձեռքից:

Եղիշե առաքելո վանքը գտնվում է մի անմատչելի ձորի մեջ, որի չորս կողմից բարձրանում են սեպացած անտառապատ զագաթներ:

Այդ վանքը այժմ բոլորովին ամայի է, ոչ մի մարդ չէ բնակվում այնտեղ, թեև տարին մի անգամ ուխտավորների մեծ բազմություն է գալիս այնտեղ:

Պատմում էին, որ մի մդդսի մի քանի տարի առաջ Նուխվա կողմերից եկավ և այդ վանքում բնակություն հաստատեց միայնակ իր մի հատիկ ավանակի հետ: Նա արհեստով կաշեգործ էր, գործերը վատ գնացին, կամեցավ իր բախտը փորձել վանքի մեջ: Այստեղ հաջողվեցավ նրան, ուխտավորների մատաղների մորթիներից կաշի էր պատրաստում և դրանով փող էր շահում: Բայց այդ բախտը երկար չտևեց, որովհետև մի գիշեր թուրքերը սպանեցին նրան և ինչ որ ուներ կողոպտեցին:

Երևում է, որ Էջմիածինը այդ վանքի գոյության մասին ամենևին տեղեկություն չունի, Էջմիածնի անհոգությունից նա կորցրել է ահագին տարածությամբ հողեր, անտառներ, արոտատեղիներ, որ գտնվում են նրա շրջակայքում: Վերջին երկրաչափության ժամանակ, որ կատարվեցավ այս տարի, Շուշիի կոնսիստորիայի ներկայացուցչին հաջողվեցավ միայն 3500 դեսյատին տարածություն գրել տալ վանքի անունով, այն ևս վեճի ենթակա: Արդյոք կհաջողվի՞ առնել գոնե այդքանը, — դա ևս մի հարց է:

Դառն զգացմունքներով թողի այդ վանքը, իմ սրտում անիծելով այն անհոգությունը, որ եթե չեն հարգում մեր ազգային արհեստի պատմական հիշատակարանները, գոնե աշխատեն պահպանել այն հարստությունը, որ կապված է այդ հիշատակարանների հետ: Իմ խոսքը վանքային կալվածքների մասին է, որ ժամանակով կարող են միլիոններ շահել:

Թողնելով Եղիշե առաքելո վանքը, իմ առաջնորդը ինձ տարավ մի այնպիսի ճանապարհով, որտեղից սատանաները միայն կարող էին անց կենալ: «Դա որսորդների ճանապարհն է», — ասաց նա: Անտառը միանգամայն իր ամուլ դրության մեջ էր մնացած. դարևոր ծառերը, խորտակված, արմատախիլ եղած փոթորիկներից, ցած էին գլորվել և ամեն քայլում կտրում էին մեր անցքը: Բարձրացավ թեթև քամի:

— Այդ վատ է, — ասաց իմ առաջնորդը:

— Ինչո՞ւ:

— Քամու ժամանակ շատ վատ է այդ ծմակներում, տեսար մի ահագին ծառ ցած գլորվեցավ, կամ վերևից մի ժայռ պոկ եկավ, և դու տակը մնացիր:

Անտառը այստեղ իր կուսական դրության մեջն էր և այս պատճառով ծառերը շատ խոշորացել էին: Մի ամբողջ ժամ տևեց մինչև դուրս եկանք Եղիշե առաքելո վանքի ձորից դեպի Դաստակիրի բարձրավանդակները, ուր գտնվում են նույն անունով գյուղի ավերակները: Գյուղից մնացել է

կիստվեր եկեղեցին միայն, և գերեզմանատունը, որ պատած է անտառով: Ժողովրդի մեջ դեռ պահպանվել է հին ավանդությունը, թե այդ եկեղեցին շինել է Վաչագան թագավորի աղջիկը, որի գերեզմանը նրա մեջ է, և թե այդ գյուղը Վաչագան թագավորի աղջիկներից մեկի ամառանոցն էր, որի անունը Դաստագյուլ էր. և գյուղը նրա անունով կոչվեցավ Դաստագյուլ, և ժողովրդի բերանում աղճատվելով դարձավ Դաստակիր: Այժմ ամբողջ գյուղը և նրա շրջակայքը մի թուրք ավազակապետի ձեռքումն է, որը տարեկան 12 ռուբլի վճարելով տիրում է այդ ընդարձակ տարածությանը:

Դաստակիրից մինչև Տոնաշեն մեկ ժամու ճանապարհ է: Այստեղից ես իմ ձին պիտի փոխեի: Իջևանելով գյուղի նշանավոր անձինքներից մեկի տանը, լուր տվի տանուտերին, որ նոր ձի պատրաստե: Այստեղ դարձյալ լսեցի սովորական խոսակցությունները գողությունների և թուրքերի բարբարոսությունների մասին:

Տոնաշենից ճանապարհ ընկնելով, ես անցա Կաթողկասարի (կաթողիկոսաց սարի) մոտով, որ ձգվում է Թարթար գետի աջ ափի երկարությամբ: Այդ սարի վրա էր Աղվանից կաթողիկոսների ամառանոցը, մի վանքում, որ այժմ կործանված է: Այդ հոյակապ վանքի կործանումը ժողովրդական ավանդությունը Լենկ-Թեմուրին է վերաբերում, իբր թե նա վառոդով հօդս է պայթուցել նրան: Մինչև այսօր երևում է Թարթար գետի ափին վանքի պարիսպների ահագին փլատակները, որ իրավ, շատ հեռու են ընկած վանքի բուն տեղից: Այժմ վանքի տեղում կա մի մատուռ միայն:

Երեկոյան դեռ արևը մայր չմտած, հասա Չարդախլու հայաբնակ գյուղը: Օրը կյուրակի էր. գյուղացիները դադարել էին գործից: Մի կալատեղում զուռնա և նաղարա էին ածում, գյուղական աղջիկները հավաքված պար էին գալիս: Ես հետաքրքրվեցա տեսնել սյունեցի աղջկա պարը, հենց որ վեր եկա ձիուց տան ուտերի տանը, գնացի նրանց պարին նայելու: Ոչ մի տղամարդ չկար այնտեղ, բոլորը աղջիկներ էին, հենց որ ինձ տեսան, մի աղմկալի ճիչ բարձրացրին և բոլորը փախան: Չկամենալով խանգարել նրանց ուրախությունը, ես իսկույն հեռացա:

Չարդախլուն կոչվում է և Մղավուզ, նա նրա հին անունն է, այդ գյուղի մոտ գտնվում են քաղաքատեղի նշանավոր ավերակները:

Է

Մեծ-շեն կամ Ուլու-Կարա բեկ: — Քալբալի-բեկ: — Հին և նոր Մոխրաթաղը: —

Մելիք Ադամի պալատը: — Ինն մասանց մատուռը: — Կարապետ: — Մելիք Վանի: — Մարդակերտ: — Միրզա Ասրի. — Գյուլ-յաթաղ: — Մելիք Ալահվերդովների ամրոցը — Ջանյա-թաղ: — Ձիաների զավոդը: — Մեհմանայի հանքերը:

Երիցմանկանց վանքից շարունակելով իմ ճանապարհը, եկա Մեծ-շեն, որ թուրքերը կոչում են Ուլու-Կարաբեկ: Այդ գյուղը այժմ ունի մոտ հիսուն տուն հայ բնակիչներ, իսկ առաջ շատ բազմամարդ է եղել և իր բնակիչների քաջությամբ մեծ դեր է խաղացել Քարաբերդի մելիքների պատմության մեջ: Այդ գյուղացին էր Դալի-Մահրասան և նրա տոհմի ներկայացուցիչները մինչև այսօր հայտնի են իրանց քաջություններով: Այդ գյուղից էր Չոլաղան-յուզբաշին և այստեղացի էր Երիցմանկանց վանքի կառուցանող կաթողիկոսը:

Մեծ-շենը իր բարձր դիրքով մի գեղեցիկ ամառանոց է. ամառը այստեղ է անցկացնում ուեզդնի նաչալնիկը, հաշտարար դատարանը և այլ պաշտոնական անձինք:

Մեծ-շենից ես ճանապարհ ընկա դեպի Հին-Մոխրաթաղ, այդ գյուղի ավերակները և գերեզմանատունը այժմ ծածկված են թփերի ու անտառի տակ, իսկ նրանից ոչ այնքան հեռու շինված է նույն անունով նոր Մոխրաթաղ գյուղը, որ թուրքերը կոչում են Քեչիկ-ղարաբեկ: Այստեղ ինձ հետաքրքիր է տեսնել Մելիք Ադամի ապարանքը, որի մեջ բնակվում էր Չարաբերդի իշխանը և որը նրա շինել տվածն է: Այդ ապարանքը գտնվում է Ինն մասանց անապատի մոտ, մի փոքրիկ դաշտավայրի վրա, ուր դեռ մնում են հին այգու ծառերից շատերը, որ զարդարում էին նրա շրջակայքը: Ապարանքի շրջապարիսպը, սենյակներից և դահլիճներից շատերը դեռ ողջ են. այստեղ ու այնտեղ երևում են խորտակված սյուների և հոյակապ կամարների փշրանքներ: Դահլիճներից երկուսի ճակատին կարդացվում է արձանագրություն, որից երևում է այդ պալատի Մելիք Ադամից շինված լինելը: Այստեղ էր բնակվում այն մարդը, որ սարսափեցնում էր լեզգիներին ու թուրքերին, իսկ այժմ դատարկ է նա, երբեմն խաշնարած թարաքամաները լցնում են այնտեղ իրանց անասուններին:

Ինձ պատահեց տեսնել Մելիք Ադամի տոհմի միակ ներկայացուցչին, մի երիտասարդի, որ բնակվում է Մոխրաթաղ գյուղում և տեղային հարուստ կալվածատերերից մեկն է: Ես նրանից հարցրի, թե ինչու է այսպես անտեր ու անխնամ թողել իր նախահարց տունը, որը մի պատկառելի հնություն է: Իմ հարցին նա պատասխանեց, որ այնքան զբաղված է, որ այդ մասին մտածելու ժամանակ չունի: Եվ իրավ, երիտասարդից շատ ժամանակ էին խլում որսորդական շները, իր ձիաները, բազեն, որոնց վրա սիրահարված էր. իսկ իր նախնյաց հիշատակարանը պահպանելու ժամանակ չուներ:

— Գոնե որպես կալվածք պահպանեցեք նրան, կարող է ձեզ օգուտ բերել:

— Հա, — ասաց նա ձանձրանալով իմ թախանձելուց. — մի անգամ ուեզդնի նաչալնիկը ասաց, եթե մի քանի նորոգություններ անեք, մենք կվարձենք վիճակի բոլոր ծառայողներով ամառը այնտեղ անցկացնելու համար:

— Իհարկե, դուք նորոգություններ չարեցիք:

Նա ոչինչ չպատասխանեց:

—Ես ձեզ խորհուրդ կտայի, որ նրա դուռը քարով ամուր կերպով փակեիք, որ ոչ ոք ներս չմտներ մնացածը քանդելու համար. այդ ձեզ ծախք կարժե մի քանի ռուբլի միայն:

—Ի՞նչ ծախք, երբ ուզենամ, ծառաներիս կհրամայեմ, որ գնան դուռը քարով փակեն, — ասաց նա և խոստացավ, որ կանե այդ, բայց ես այնքան վստահ չեմ իր խոստմունքը կատարելու մասին:

Իմ հարցին, արդյոք մնացե՞լ են նրա նախնիքներից որևիցե թղթեր, որ ծառայեին նրանց պատմությանը, նա պատասխանեց, թե ոչինչ չգիտե: Այդ իդիոտը մինչև անգամ նրանց անունները չգիտեր, միայն լսել էր, որ մեծ մարդիկ են եղել:

Մելիք Ադամի ապարանքին մոտ է Ինն մասանց անապատը, որ ուխտատեղի է: Այդ անապատը ավերակ էր. այժմ հայտնվել է մի վարդապետ, որ գյուղերից նվերներ հավաքելով սկսել է շինել անապատը: Այդ վարդապետի հսկողությանը հանձնված է մի քանի ուրիշ վանքեր ևս, որոնց թողել է անտեր, իսկ այստեղ նոր վանք է շինում: Շատ հասկանալի է, որ նորը շինել ավելի ձեռնտու է նրան, քան հները պահպանելը: Նորի համար առիթ ունի նվիրատվություններ հավաքելու, և թուրքի առածի համեմատ, «միշտ հավաքողը մատները կլիզե... »:

Ինն մասանց անապատից ճանապարհը տանում է ուղիղ դեպի Կսապատ ավանը: Դա հայոց մեծ գյուղերից մեկն է. նրա բնակիչները այնքան բազմացել են, որ մոտումը հիմնել են մի այլ գյուղ Մարտակերտ անունով: Կսապատ գյուղիցն էր նշանավոր Մելիք Վանին:

Մարտակերտ գյուղում ես տեսնվեցա Միրզա Ասրու հետ. այդ իննսունամյա ծերունին Ղարաբաղում պատահած անցքերի կենդանի արխիվն է: Նա գիտե հայերեն, ռուսերեն և պարսկերեն, ուսել է Շուշի քաղաքում մի ժամանակ եղած գերմանացի միսիոնարների մոտ. հետո Մեհտի-խանի մոտ գրագրի պաշտոն է կատարել և այնուհետև երկար ծառայել է Մելիք Վանիի մոտ որպես քարտուղար:

Ցավում եմ, որ այդ մարդուն ես պատահեցա նրա ծերության այն տարիներում, երբ ուղեղը դադարում է առողջ գործունեությունից և երևակայության մեջ մնում են անցյալի աղոտ և խառնաշփոթ տպավորությունները միայն... Այսուամենայնիվ նա ինձ պատմեց շատ բան, թեև կցկտուր ու անկապ կերպով: Նա ուներ մի քանի գրավոր աշխատություններ ևս, զանազան թերթերի վրա գրած, բայց երեխաները բոլորը պատառոտել էին:

Մարտակերտից ճանապարհ ընկնելով, երեկոյան հասա Գյուլ-յաթաղ գյուղը, իջևանցի բժիշկ Ա.-ի մոտ, որ ժամանակավոր կերպով բնակվում էր այդ գյուղում ամառը անցկացնելու համար: Ոչ ոք այդքան ճիշտ տեղեկություններ չէր կարող հաղորդել ինձ տեղային ժողովրդի դրության մասին, որպես մի մարդ, որ գավառական բժիշկ է և շատ առիթներ ունի անդադար այս գյուղից այն գյուղ գնալ հիվանդներին, վիրավորներին օգնելու համար:

Գյուլ-յաթաղ գյուղում, մի բարձրավանդակի վրա, գտնվում է Մելիք Ալահվերդյանների ամրոցը: Նա, ինչպես բոլոր հայ մելիքների հին ամրոցները, քառակուսի ձև ունի, շրջապատած է ամուր պարիսպներով և աշտարակներով: Մի մասը ավերակ է, ողջ մնացել են մի քանի կամարակապ սենյակներ միայն. որոնց մեջ բնակվում են այդ տոհմի աղքատ ներկայացուցիչները, որոնք ոչնչով չեն զանազանում հասարակ գյուղացիներից:

Այդ գյուղի մեջ կա մի հանք, որ մնացել է անգործադրելի:

Գյուլ-յաթաղ գյուղից մի քանի վերստ հեռավորության վրա գտնվում է Ջան-յաթաղ հայաբնակ գյուղը, որը այժմ նշանավոր է նրանով, որ այստեղ է գտնվում արքունի ձիաների զավոդը, որ կոչվում է Елисаветопольский конский завод: Այդ զավոդը հիմնվել է 1871 թվից ու տասն տարվա ընթացքում յուրաքանչյուր ամի միջին թվով 50 հազար ռուբլի ծախք է ունեցել:

Ղարաբաղը հայտնի է Հայաստանի մեջ որպես արդյունաբերող ընտիր նժույգների: Հիշյալ զավոդի նպատակն է պահպանել տեղային նժույգների ցեղը, հետզհետե ազնվացնել և թույլ չտալ, որ այլասերվեն: Այդ կետից նայելով, զավոդը մասնավոր շահատակության հիմնարկություն չէ,

այլ նա պիտի նպաստե ամբողջ գավառի ձիաների ցեղի բարելավությանը: Դրա համար էլ սահմանված է, որ գյուղացիները իրավունք ունենան իրենց մատակները մի մասնավոր վճարով (50 կոպեկից մինչև 1 ռուբլի) զավոդի նժույգներից քաշել տալ, իրավունք ունենան իրանց մատակները հղանալու համար առժամանակ թողնել զավոդի նժույգների մեջ, վճարելով 3-ից մինչև 5 ռուբլի և վերջապես իրավունք ունենան մատակները պահել տալ զավոդի մեջ, ծնունդների կեսը իրանք վեր առնելով, իսկ կեսը զավոդի օգտին թողնելով: Բացի դրանցից, զավոդը պարտավոր է յուրաքանչյուր տարին նժույգների ընտիր տեսակներից երկու-երկու հատ ուղարկել գավառի զանազան կազմերում, ուեզդի նաչալնիկների միջոցով նախապես իմացում տալով գյուղացիներին, որ իրանց մատակները բերեն այնտեղ և քաշել տան:

Գյուլ-յաթաղ գյուղում ես մնացի մի քանի օր, հետո բժշկի եղբայր Ն. Ա. ինձ առաջնորդեց շարունակելու իմ ճանապարհորդությունը: Մեր առջևում ճանապարհները շատ երկյուղալի էին, նա չթողեց ինձ միայնակ լինել: Այդ երիտասարդը մի քաջ տղա էր և ճանապարհին արկածներ էր որոնում, որ ինձ ցույց տա, թե իսկապես ինքը կարող է ավազակների դեմ կռվել: Բայց ոչինչ չպատահեց: Ճանապարհը տարածվում էր խիտ անտառների միջով. գնում էինք, գնում առանց արեգակի ճառագայթներ տեսնելու: Վերջապես հասանք Մեհմանայի հանքերին: Այդ հարուստ հանքերը գտնվում են հայոց Մեհմանա գյուղի ավերակներից ¾ վերստ հեռավորության վրա: Երևում է, մի ժամանակ հանքերի մերձակայքում եղել է հայոց խիտ ազգաբնակություն, որպես ցույց են տալիս Սովուկ-Բուլաղ և Սամբաղ գյուղերի ավերակները, որոնք ծածկված են անտառի տակ: Ավերակ եկեղեցիների մեջ ահագին ծառեր են աճել:

Հանքերը բովագործում են հույներ, որոնք ընտանիքով բնակվում են անտառի խլության մեջ փոքրիկ փայտաշեն խրճիթներում. ինձ շատ բարի մարդիկ երևացին այդ գործավորները, մեկը համարյա ուժով մեզ տարավ իր խրճիթը և հյուրասիրեց թեյով: Նրա կինը ազգով հայ էր, բոլոր երեխաները խոսում էին հայերեն:

Հանքը պղնձի է, բովագործում են բոլորովին նահապետական ձևով, այսուամենայնիվ, մեկ պուդից ստացվում է 7 ֆունտ զուտ պղինձ: Պղնձի հանքին շատ մոտ գտնվում է մի արճիճի հանք, որ խառն է արծաթի հետ, բայց վարպետները այնքան անհմուտ են, որ չեն կարողանում արծաթը բաժանել արճիճից: Փորձը ցույց է տվել, որ մեկ պուդից ստացվում է 24 ֆունդ դուտ արճիճ: Հանքերը գտել են հիշյալ հույները, մի մասը վաճառել են մի շուշեցի վաճառականի և նրա փողով բովագործում են:

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԻՆՉՈ՞Վ ԵՆՔ ԱՐԴԱՐԱՆՈՒՄ

Մեզանից ո՞րի հետ չէ պատահել աշակերտության ժամանակ, երբ վարժապետը նկատել է մեր այս և այն անկարգությունը, ասելով. — Արշակ, անպիտան, ինչո՞ւ ես այդպես անում: Արշակը պատասխանել է. — Վարժապետ, աստված վկա, ես մենակ չէի, Արամն էլ էր անում...:

Արշակը Արամին մատնելու դիտավորությամբ չէ հայտնում նրա անկարգությունը, այլ կամենում է ցույց տալ, թե ինքը ընկեր ունի, ինքը միայն չէ անկարգը, — կամենում է դրանով արդարանալ...

Կարծես միևնույն սովորությունը մենք ուսումնարանից բերել ենք մեզ հետ և կյանքի մեջ: Երբ մեզ նկատում են, թե դու այս և այն թերություններն ունես, — մենք իսկույն ցույց ենք տալիս մի ուրիշը, ասելով, տե՛ս, ահա՛ նա էլ միևնույն թերություններն ունի և դրանով արդարանում ենք...:

Կարծես միևնույն սովորությունը տարածվել է և մեր ամբողջ ազգի, ամբողջ դասակարգերի վրա: Դուք փորձեցեք մեր եկեղեցականներին ասել. — սրբազան հայրեր, ձեր վարմունքը չէ համապատասխանում ձեր կոչմանը, դուք Քրիստոսի աշակերտներ եք, պետք է նրա նման անարատ և անձնազոհ լինեք, պետք է ժողովրդին առաջնորդեք դեպի բարություն և բարոյական ուղղություն և այլն: Տեսար, մինը պաշտպան հանդիսացավ, և քո առջև դնելով կաթոլիկ կղերը, սկսեց նկարագրել նրանց անբարոյականությունները, ասելով. — Նայի՛ր, նրանք էլ միևնույնն են անում, ինչո՞ւ եք մեզադրում մեր եկեղեցականներին...:

Դուք փորձեցեք ասել, թե մեր վաճառականներն անազնիվ կերպով են վարում իրանց առևտուրը: Իսկույն ձեզ ցույց կտան հույներին և հրեաներին, ասելով. — Տեսեք, նրանք ավելի վատ են վարվում:

Մի խոսքով, ինչ որ մեր մեջ վատ է, անբարոյական է, անազնիվ է, վնասակար է, — ներելի է, որովհետև օտար ազգերի մեջ էլ գանում ենք միևնույն հատկությունները: Բայց արդյոք ուշադրություն դարձնում ենք օտար ազգերի ունեցած այն առավելությունների, այն լավ կողմերի վրա, որ մենք չունենք, որոնցից մենք, զուրկ ենք:

***

Մենք մեզ արդարացնում ենք և մի տեսակ մխիթարություն ենք զգում, երբ օտարների մեջ էլ գտնում ենք մեր պակասությունները:

Կույրը նույն մխիթարությունն է զգում, երբ տեսնում է մի ուրիշ կույրի. ուրախանում է, որ ինքը մենակ չէ: Չարագործի խիղճը մեղմանում է, եթե իրանից թշվառին է հանդիպում: Այդ առաջ է գալիս այն ցանկությունից, որ մարդ կամենում է ամեն ինչ խավար տեսնել, որ յուր սևությունը չերևա...:

ՃԱՆՃԸ

Ամեն մարդ գիտե, թե ի՛նչ ողորմելի բան է ճանճը. նա այնքան հիմար է, որ ինքն իրան խրվում է սարդի ոստայնի մեջ, և այնքան անզոր է, որ չէ կարողանում կտրատել յուր որոգայթի ամենաթույլ թելերը: Այնտեղ մնում է, և բզբզալով հույս ունի, թե կազատվի: Հանկարծ դուրս է գալիս սարդը, և բռնելով յուր որսի շլնքից, սկսում է արյունը ծծել... և մի քանի ժամից հետո տեսնում ես, բզբզոցը կտրվեցավ, և ողորմելի կենդանին քարշ ընկավ ոստայնի թելերից:

Չնայելով, որ ճանճն այս աստիճան ողորմելի է, այսուամենայնիվ մեր լեզվի մեջ վայելում է մի նշանավոր առած. «Ճանճը թեև ոչինչ է, բայց մարդկանց սիրտը պղտորում է»: Եվ, իրավ, տեսնում ես, որ անդորր քեզ համար նստած ես, նրա հետ գործ ունենալու ցանկություն չունես, բայց նա լրբաբար թռչում է՝ երեսիդ, աչքիդ, քթիդ, ականջիդ, մի լավ ծրտում է ու փախչում: Դու առջևդ կերակուր ես դրած, լավ ախորժակով ուտում ես, կամ պատրաստել ես ուրիշին ուտեցնելու

համար. — հանկարծ նա բզզալով գալիս է ու մեջն է ընկնում, մուռտառում է և սիրտդ պղտորում...:

Ճանճը զարմանալի հատկություններ ունի. նա լիրբ է, անամոթ է և հանդուգն է: Հազար անգամ քշես, դարձյալ չի ամաչի, դարձյալ կգա և քթիդ ծայրին կնստի: Յուր շահերը որոնելու համար, յուր փորը կշտացնելու համար, ճանճը խտրություն չէ դնում ոչ մի առարկայի, — նա ամեն բանի վրա նստում է և ամեն բանից հյութ է ծծում: Նա ընտրողություն չունի. տեսար, մի քանի րոպե առաջ շաքարի քաղցրություն էր վայելում, իսկ այժմ աղբի վրա է նստած, և նրա հյութն է ծծում...:

Բայց ավելի զզվելի են գրականության ճանճերը, որոնք զոհլներ, կծողներ և վայրահաչներ են կոչվում, որոնք ամեն բանի մեջ խրվում են, և սիրտ են պղտորում...:

«Երկու չարյաց փոքրագույնն է ընտրելու». դա մի առած է, որ կրկնվում է ամեն մի հայ մարդու բերանում, որովհետև մեր բնավորության հատկանիշն է:

Ի՞նչ է նշանակում:

Ես կպատմեմ ձեզ մի անցք, և դուք գուցե կհասկանաք այդ առածի նշանակությունը:

Պարսկաստանում երկու եղբայրներ կային, որոնց երկուսն էլ գերիներ էին, և ամեն մեկը ծառայում էր առանձին աղայի մոտ. մի անգամ ինձ պատահեց լսել նրանց մեջ մի այսպիսի խոսակցություն.

—Տանջվում եմ, եղբայր, տանջվում եմ, — ասաց երեցը. — ուզում եմ թողնել այդ անպիտան ծառայությունը և մի կտոր ազատ հացի համար մտածել:

—Ինչո՞ւ, ի՞նչ կան, — հարցրուց կրտսեր եղբայրը:

—Էլ ի՞նչ լինի, մի րոպե հանգստություն չունեմ, մաշվեցա, տրորվեցա աղայի ձեռքից, ու ոչ մի վարձատրություն չկա:

—Ապա իմ ջանը քա՞ր է, — պատասխանեց կրտսեր եղբայրը. — դու փառք տուր աստծուն, որ դեռ կենդանի ես մնացել. քո աղան թեև շատ է չարչարում, բայց չէ սպանում, բայց ես էսօր-էգուց հոգիս տալու վրա եմ:

—Միևնույն է, ինձ էլ կհասնի մեռնելու ժամը, — պատասխանեց երեցը:

—Ոչ, քո վիճակն ավելի լավ է իմից. դու համբերիր, մի՛ հուսահատվիր, աստված ողորմած է:

Երկու եղբոր գանգատները լսեց մի մոլլա, և կանգնելով, խրատական կերպով ասաց կրտսեր եղբորը, որ բողոքում էր բռնության դեմ.

— Որպես երևում է, դու գերի ես, բայց իրավունք չունեք գանգատվել վիճակիդ դեմ, քանի որ քո երեց եղբոր աղան ավելի բռնակալ է, քանի որ նա ավելի շատ է տանջում:

Մոլլայի խոսքը կիսատ թողեց մի երիտասարդ, որ բաբիների աղանդավորներից էր, և հանկարծ վրա հասնելով, բռնեց նրա օձիքից և ասաց.

— Է՛յ, մոլլա, էդ ինչե՞ր ես խոսում, էնքան Ղորան ես կարդացել, որ խելքդ ցնդել է: Ի՞նչ է նշանակում, թե մեկի աղան շատ է տանջում, իսկ մյուսինը՝ փոքր, և այս պատճառով վերջինը պետք է լռե և չմտածե յուր հանգստության համար: Ստրկությունը դարձյալ կմնա ստրկություն, թե մեծ եղբոր և թե փոքր եղբոր վերաբերությամբ. բանը տանջանքի չափի մեջը չէ, այլ ստրկության գաղափարի մեջն է՝ թե՛ մեծ և թե փոքր չափով լիներ տանջվածը:

— Երկու չարյաց փոքրագույնն է ընտրելու, — ասաց մոլլան և հեռացավ:

Դեռ հոդվածս չէի վերջացրել, մեկ էլ տեսնեմ բառերը մինը մյուսի հետևից մրոտվում են: Ի՞նչ էր պատճառը: Դու մի՛ ասիլ, մի ճանճ անզգուշությամբ ընկել էր գաղամարիս մեջ, և գրչիս սրածայր երկաթը խրվելով նրա սրտի մեջ, դուրս էր քաշել սև թանաքի միջից, և ես չնկատելով այդ, այնպես գրում էի:

Երբեմն ամենաչնչին առարկաները մարդու խորհրդածության նյութ են դառնում. ես էլ ակամայից սկսեցի նրա վրա մտածեի թե ի՞նչ բան է ճանճը:

«Ախար ի՞նչ գործ ունես թանաքամանիս մեջ, հիմար, ասում եմ ինձ ու ինձ, որ այնտեղ խեղդվես, և վերջը գրչիս ցցվելով, տողերս մուռտառես»:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ75

Ա

ՈՒՍՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհորդելով Պարսկաստանի քաղաքները՝ ամեն մի մեչիտի բակին կից գտնում ես մադրասաներ (վարժարաններ): Եվ շատ մեչիտներ իրանք ծառայում են որպես մադրասաներ: Դու տեսնում ես մի կողմում, յուր թթված դեմքով, փոքրիկ խալիչայի վերա ծալապատիկ նստած է մոլլան, վարժապետը: Նրա առջև դրված է փոքրիկ գրքակալ, մի երկայն նախշուն թանաքաման իր եղեգնյա գրիչներով, և մոտին դրած են մի քանի դալար ճիպոտ, խեղճ աշակերտների համար: Մադրասեի հատակի ամբողջ մակերևույթը ծածկված է փոքրիկ և մեծ աշակերտներով, խառն ի խուռն նստոտած, որը մերկ գետնի վերա, որը փսիաթի վերա, իսկ ոմանք, որ հարուստ են՝ յուրյանց տանից բերած փոքրիկ կապերտի վերա:

Աշակերտներից ամեն մինը յուր առջև դրած ունի գիրքը ծնկների վերա, գլուխը կռացրել է դեպի ընթերցարանը և կարդում է բարձրաձայն, անդադար գլուխը դեպի ցած շարժելով: Աշակերտների աղաղակը միախառնվելով, հնչեցնում են խիստ անախորժ և աններդաշնակ ձայն:

Մի այդպիսի մադրասեի այցելության էի գնացել ես: Ինձ շատ զարմացրեց աշակերտների անդադար շարժումը: Ես մոտեցա մոլլային և հարցրի դրա պատճառը: Մոլլան խիստ զարմացած կերպով պատասխանեց.

— Աշակերտները կարդում են սուրբ գրքեր և աստծու անունն ամեն անգամ արտասանելիս նրանք պարտավոր են երկրպագել:

Ես հասկացա, որ աշակերտների կարդացածը կամ ղորան պիտի լիներ և կամ այլ կրոնական գրքեր և ասացի մոլլային.

— Դա շատ վնասակար է աշակերտների առողջությանը, որովհետև այդպես չոքած, մեջքը կռացրած դրության մեջ, գլխի անդադար դեպի ցած շարժումը կպատճառե արյան մակընթացություն դեպի ուղեղը, երեխայի աչքերը կլցվին արյունով և կպատճառեն գլխի պտույտ և աչքերի ցավ: Այլև մեջքը միշտ այդպես կռացած պահելով՝ մեջքի ողնաշարն ևս ծռվում է յուր ուղղությունից, այնպես որ երեխայքը ոչ միայն կլինին սապատող, այլև կուրծքի ոսկորները և մկնակները ճնշելով սիրտը և թոքերը՝ նրանք կստանան կուրծքի և սրտի ցավ:

Մի հեգնական ծիծաղ շարժեց իսլամի մանկավարժի թթված ռեխը, և նա պատասխանեց ինքնաբավական համոզմունքով.

—Սուրբ գրքի ընթերցանությունը ո՛չ միայն այդպիսի ցավեր չէ պատճառում, այլ ընդհակառակն, նա փարատում է բոլոր ցավերը, ով որ կարդում էր նրան:

—Այդ մոլեռանդություն է, — կտրեցի ես մոլլայի խոսքը. — ես բժիշկ եմ, ես ոչ մի երկրում չեմ տեսած այնքան աչքի ցավ, կուրծքի ցավ, մեջքի ցավ, որպես Պարսկաստանում: Այդ բոլորի մեծ մասը երեխան ստանում է, իմ կարծիքով, մադրասեներում: Այլև այն բազմաթիվ գեմորոյի (մայասիլի) և նիկրիսի հիվանդությունները նույնպես մադրասեների ծնունդ է, երեխաների գետնի վերա ծալապատիկ նստելուց:

— Այդ բոլորը մարդկանց մեղքերիցն է, — ասաց մոլլան, — որովհետև նրանք չեն կարդում աստուծո գրքերը:

Ես նկատելով, որ մոլլայի համոզմունքը ավելի պինդ էր, քան թե նրա առաջ դրած քարը (որի վերա նույն րոպեին նա որոնում էր յուր...), թողեցի այդ խոսակցությունը և հետաքրքրվեցա տեղեկանալ նրա մանկավարժական մեթոդին:

Ես նկատեցի, որ մանկավարժությունը պարսիկների մեջ գտանվում էր ամենաթշվառ դրության մեջ. ոչ միայն դասատվության համար, այլ նույնիսկ ընթերցանության համար պարսից գրերն անմատչելի են:

Պարսիկները այժմ սեփական տառեր չունին, նրանք գործ են ածում արաբական տառեր, որի թե գրության ձևը և թե կարդալու դժվարությունը, ամբողջ տարիներով մաշում է խեղճ երեխաներին, մինչև որ նրանք կարողանում են հասարակ ընթերցանությունը սովորել:

Ես տեսա մի քանի երեխաներ, որ չորս տարի մադրասեի հասիրների վերա չոքած, սրբազան տառերին երկրպագություն էին տալիս և տակավին հասարակ ընթերցանությունը չգիտեին:

Այբբենարանը (ալիֆ-բեյը) վերջացնելուց հետո իսկույն երեխայի ձեռքը տալիս են ղորանը, որի ձայնավորի նշանները (զաբար, զիր, գուլ և այլն) դրված լինելով, իբր թե հեշտանում է

ընթերցանությունը: Ղորանի վերա, որի միտքը ինքն մոլլան չէ կարող հասկանալ, երեխան տանջվում է ամբողջ տարիներ, մինչև նա փոքրիշատե ընթերցանության ընտելանում է. ապա տալիս են նրան պարսկերեն գրքեր (մեծ մասամբ հադիսների, այսինքն՝ կրոնական ավանդությունների գրքեր), որոնք բոլորն գրված են առանց ձայնավոր նշանների: Երեխան մի քանի տարի չարչարվելով հազիվ ուսանում է ընթերցանությունը, այն էլ գրության մի քանի ձևերով միայն, որովհետև գրության ձևերն այնքան շատ են, որ ամբողջ կյանքում պետք է սովորել76:

Մի խոսքով՝ ամբողջ տասն տարում երեխան հազիվ թե կարողանա սովորել գրության մի քանի ձևերն: Սա Պարսկաստանի մեջ լուսավորություն տարածելու գլխավոր արգելքներից մինն է:

Այդ հասկանալի է, որ արաբական գրության այդպիսի կրճատյալ ձևն առաջ է եկել գրության նյութերի չլինելուց: Ղորանի այեթներն առաջին անգամ գրվեցան ոչխարի թիակների վերա: Իսկ թղթի արվեստագործվելուց հետո պարսիկները դարձյալ չեն մտածում փոխել գրության ձևերն, կամ թե ընդունել մի այլ ազգի այբուբենը: Այդ մասին շատ հարմար է հայոց այբուբենը, որ բոլորովին կարող է համապատասխանել պարսից և թուրքերի լեզվի հնչումներին:

Պարսից գրության ձևերը ոչ միայն դժվարացնում են ընթերցանությունը, այլև տպագրությունը: Մինչև ցայժմ Պարսկաստանը չունի դեռ ոչ մի տպարան և նրանք վարվում են ձեռագիր գրքերով: Վիմագրությունը դեռ նոր է մտել նրանց մեջ: Չնայելով որ պարսից գրականությունը յուր հարստությամբ գերազանցում է շատ արևելյան և առհասարակ ասիական ազգերի գրականությունից:

Ամբողջ Պարսկաստանի մադրասեները ժողովրդական են, մոլլաների հսկողության տակ: Եվ այս մադրասեներից ոչ մինում չեք կարող գտնել, որ ուսուցանեին բացի պարսկերենից օտարազգի լեզուներ: Արաբերեն սովորում են միմիայն ընթերցանությունը՝ ղորանը կարդալու համար, բայց ոչ լեզուն: Արաբական լեզուն սովորում են մասնավորապես նրանք, որոնք պատրաստվում են մոլլա լինել:

Կառավարությունը յուր կողմից չունի հիմնած դեռ ոչ մի ուսումնարան: Ինձ ասացին, թե Շահը քանի տարի առաջ Թավրիզում հիմնեց ուսումնարան, որ կոչվում է մուալիմխանա, և մի ուսումնական Թեհրանում, ոչ կոչվում է յարըֆընշան: Նա հրավիրեց եվրոպացի ուսուցիչներ, եվրոպական լեզուներ և գիտություններ ուսուցանելու: Այդ ուսումնարաններում ընդունվում էին աշակերտներ և օտար ազգերից:

Բայց մուալիմխանաները տևում են մի քանի տարի միայն: Մոլլաների մոլի նախանձը խափանում է այդ օգտավետ հիմնարկությունները: Մուշտայիդի մինը (գլխավոր մոլլա) բարձրանում է ամբիոնի վերա և ժողովրդին տալիս է մի այսպիսի քարոզ. «Ձեր որդիքը այդ մուալիմխանաների մեջ ուսանելով ֆրանկների լեզուներ և գիտություն՝ հոգվով և մտքով կլինին ֆրանկներ և կզրկվեն իսլամի սրբազան լեզվից, արաբերենից: Եվ նրանք մեռանելու ժամանակ, երբ նենքիր մունքիրը77 կգան նրանցից հարցնելու նրանց ազգը և կրոնքը՝ նրանք չգիտենալով արաբերենը՝ կսկսեն ֆրանկի լեզվով պատասխանել: Եվ նենքիր մունքիրը նրանց ֆրանկներ կարծելով, կտանեն դժոխքը, որպես անհավատներ»:

Այդ մի քանի խոսքերը բավական էին հիմարացնելու կույր ժողովուրդը, որ նրանք այլևս չկամենան յուրյանց որդիքը մուալիմխանա ուղարկել: Դժբախտաբար սույն միջոցներում Թավրիզի մուալիմխանայի տան շինվածքի մի կույտը քանդվում է: Այդ դեպքը վերին զորության վերաբերելով՝ տարածվում է լուր, թե Մուհամմեդը չէ կամենում իսլամի մեջ ֆրանկների լեզու և գիտություն մտցնել: Եվ մուալիմխանաները թե Թավրիզում և թե Թեհրանում արգելվում են:

Պարսից գրականությունը հատկանում է յուր բանաստեղծական ոգվով. կարծես գործնական և իրողական մտածությունը երբեք չէ սովորել այդ ազգը: Արբեցած ղեյլանի ծխով, յուր ուղեղը բորբոքած աֆիոնի թմրությամբ, ցողուն շադրվանի մոտ, ողկուզիների հովանիների տակ, միշտ յուր կիսամերկ հարեմների քնքուշությամբ հրապուրված պարսիկը, արդարև, չէր կարող գործնական կերպով մտածող մարդ լինել, նա բնականապես լինում է երևակայող: Այդ պատճառով պարսիկների բանաստեղծությունը առավել երևակայական է, քան թե բնական: Բնությունը զգալի չէ պարսիկներին, ո՛չ միայն բանաստեղծության մեջ, այլև նկարչության գեղարվեստից մեջ:

Հաֆեզի երգերը հնչում են ավելի քաղցր, քան թե Շիրազի գեղեցկուհիների քամահը, բայց նրա հերոսուհիները ապրում են ավելի նրա գլխում, կամ հրճվում են արմավենի ծառերի տակ ճեննաթի հուրիների հետ:

Ֆիրդովսու հրաշալի գործը, «Շահնամեն», այդ անմահ արձանագրությունը ժողովրդական վիպասանության, թեև նա չունի Վալտեր-Սկոտի պատմական ճշտությունները, բայց նրա վիպասանական ճարտարությունը գերազանցվում է Հոմերոսի Եղիականից: Ֆիրդովսու հերոսները երևում են հսկայական զորությունով, նրանք ներկայացնում են տիտանական ուժեր, հերքուլյաններ, աջեմի փահլևաններ. իսկ մարդու հոգեկան հատկությունները, բարյաց ազնիվ մտապատկերներով պահպանված են նրանց մեջ ամենայն ճշտությամբ:

Մասնավիի հեղինակը յուր երգերի մեջ անձնատուր էր լինում առավելապես սոփեստականության. դա միակ գիրքն է, որ յուր սուր, միստիկական ոճով փշրում է իսլամի կրոնական մոլեռանդությունները: Մասնավին թեև չունի Վոլտերի սիստեման յուր փիլիսոփայության մեջ, այսուամենայնիվ նա կարող է առաջին ազատ հեղինակությունը համարվիլ, ընդդեմ իսլամի սնոտիապաշտությանց:

Սաադիի առակները առաջին տեղն են բռնում բարոյապատում գրվածքների մեջ: Նրա առակները չունին ոչ Եզովպոսի, ոչ Կռիլովի և ոչ Լաֆոնտենի առակների ձևերը — անշունչ, անլեզու առարկաների խոսակցությամբ դուրս բերել բարոյականություն: Սաադիի առակները առնված են կենդանի տիպերից, այդ պատճառով նրանց ավելի հարմար է փոքրիկ վեպիկներ կոչել, քան թե առակներ: Նրա Գյուլիստանը և Բոստանը կարող են համարվել արևելյան կյանքի ճիշտ պատկերները:

Ղազանիի, ավելի նոր բանաստեղծի երգերը նշանավոր են յուրյանց երգիծական և պարսավաբանական ոճով, թեև նրանք զուրկ են Հեյնեի նուրբ սրախոսություններից:

Պարսկաստանը չունի թատրոններ և բեմական արհեստը նրանց մեջ դեռ անծանոթ է: Իմամների նահատակությունը մուհարլեմի ներկայացումների մեջ, փոխարինում են բեմական

եղերերգությունը և օյինբազների ծիծաղաշարժ օյինները (ներկայացումները — հարսանիքներում՝ փոխարինում են կատակերգական պիեսները):

Պատմական գրվածքները, ըստ մեծի մասին, կրում են յուրյանց վերա պարսից հաճոյամոլ բառտուկի կեղծյալ կնիքը: Նրանց գրողները եղել են կամ թագավորներին ժամանակակից մարդիկ, և կամ նրանց խիստ մերձավորը: Այդ պատճառավ նրանք ավելի գովասանական են, քան թե պահպանում են պատմական ճշտությունները: Որպես Միրզա Մուստաֆա-խանը, Նադիր-Շահի քարտուղարը, գրեց նրա պատմությունը Թարիխ-Նադիր անունով:

Գիտնական և արհեստական գրքերը այնքան աննշան են, որքան որ ետ է մնացել Պարսկաստանը գիտության և արհեստի մեջ. դրանց փոխարեն պարսիկները խիստ հարուստ են արձակ և ոտանավոր վիպասանական և ռոմանական բանաստեղծություններով, որպիսի են Խամսեի-Նիզամին, Ղահրաման Նամեն և այլն:

Տիպերը այդ վիպասանությունների ստեղծված են գրողների երևակայությունից. քան թե բնությունից, նրանք որքան ծայրահեղ հրապուրիչ են, այնքան էլ մտացածին առասպելական են:

Պարսից գրականության մեջ առաջին դերն են խաղում Հադիսների գրքերը: Դրանք մի տեսակ ժողովածուներ են կրոնական ավանդությունների, որոնք համապատասխանում են քրիստոնյաների «վարք սրբոց» կոչեցյալ գրքերին, թեև Հադիսները յուրյանց առասպելներով գերազանցում են բոլոր դիցաբանական ասացվածքներից թե հունական և թե հռովմեական:

Այդ Հադիսների մեջ դուք կտեսնեք ուշիբնիչներ, որոնք, օվկիանոսի մեջ կանգնած, կետ ձուկը հանում են ջրից, և ձեռքով խորովում են արեգակի վերա և ուտում, դուք կտեսնեք մալայքաներ, ֆրուշտաներ (հրեշտակներ), որոնք երկնքով սլանալու ժամանակ, նրանց մի թևքը սահում է գետնից: Դուք կտեսնեք հուրիներ, որոնց դեմքը յոթանասուն արեգակի փայլողություն ունի, որոնց գլուխը արևելք, իսկ ոտքերը հասնում են արևմուտք...

Հադիսները գլխավոր մանկավարժական գրքերն են մադրասաների մեջ, որոնք այնքան խորին կերպով տպավորում են երեխայի թարմ ուղեղի մեջ մոլեռանդ սնահավատությունը, որ պարսիկը դառնում է երևակայական մարդ, և նա յուր կյանքում ընդունակ չէ ազատ մտածելու:

Չնայելով որ Ատրպատականը մեծ մասամբ բնակեցրած է զանազան թուրքի ցեղերով, որոնք խոսում են նույն ազգի լեզվով, բայց նրանք զուրկ են գրականությունից յուրյանց ազգային լեզվավ: Թուրքերը գրում են և կարդում են պարսից լեզվով: Միակ բանաստեղծը՝ Նաբութին երգեց յուր ոգելից տողերը հայրենի լեզվով: Թեև նա յուր երգերի մեջ հետևած է Հաֆեզին:

Բ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՂԱՆԴՆԵՐ

Մարդ այն ժամանակ միայն սկսում է մտածել յուր ազատության վերա՝ երբ ստրկության շղթաների ծանրությունը ավելի և ավելի զգալի է դառնում: Մարդ այն ժամանակ միայն սկսում է ազատ կերպով մտածել՝ երբ նրա համոզմունքները, կարծիքները բռնաբարվում են:

Ամեն երկրում, ամեն ազգի մեջ, ուր չկա կրոնքի և խղճի ազատություն՝ աղանդները և հերձվածները հայտնվում են ավելի շատ: Ասածիս ապացույց է Պարսկաստանը: Այստեղ Մուհամմեդի վարդապետությունը պահպանվում է թե հոգևոր և թե քաղաքական կառավարությունից ծայրահեղ խստությամբ: Մուհամմեդի վարդապետության և նրա շարիաթի դեմ որևիցե թերհավատություն հայտնողը համարվում է քյաֆար (անհավատ), և դատապարտվում է քարկոծ լինելու:

Այսուամենայնիվ Պարսկաստանի մեջ աղանդները խիստ շատ են և նրանք ավելանում են օրեցօր:

Երեսուն տարի առաջ Շեյխ Ահմուտ Բահրեյնցին, այդ համարձակ Լուտերը շիիդյան մուսուլմանների, քարոզեց մի այսպիսի վարդապետություն, թե կրոնքը չէ կարող հասնել յուր բարոյական նպատակին. երբ նա պայմանավորվում է արտաքին ծիսապաշտություններով և արարողություններով միայն: Կրոնքը պիտի ազդե մարդու հոգու և խղճի վերա. նա պիտի սրբե մարդու սիրտը՝ լինելու բարի դեպի աստված և սիրով դեպի նրա արարածները:

Այդ ասացվածի հիման վերա Շեյխ-Ահմուտը հերքեց շարիաթի օրենքները, որոնք նյութապաշտական արարողություններով հուսադրում էին հավատացողներին գտնել հոգու փրկությունը:

Նա ասաց, որ հոգու փրկությունը կարելի է գտնել միմիայն աստուծո հետ հաշտվելով: Եվ աստուծո հետ հաշտվելու համար այս և այն իմամը, այս և այն խալիֆան չեն կարող միջնորդ լինել, որովհետև նրանք մեզ նման կրքերի տեր մարդիկ են: Միջնորդը աստուծո և մարդկության մեջ պիտի լինի մի անձն, որ ծագում էր աստուծո գոյությունից:

Այդ միջնորդը ճանաչեց նա Աբու-Թալեբի որդի Ալիին, տալով նրան վալիուլլահ (աստուծո դեսպան) անունը:

Շեյխ-Ահմուդը չէր ուրանում Ալիի մեջ մարդկությունը և չէր ճանաչում նրան իբրև աստուծո անձներից մինը, այլ նա դավանեց նրան իբրև մի հայելի, որ ցոլացնում էր յուր մեջ աստվածությունը յուր ամբողջ բովանդակությամբ:

Շիիդյան աշխարհի մեջ մինչև այն օր Ալիի մասին երգված բազմաթիվ բանաստեղծական գովասանությունքը նրա գործած գերահրաշ սքանչելիքների մասին, որոնք այնքան խորին կերպով տպավորված էին ժողովրդի սրտի մեջ՝ առիթ տվին նրան համակրել Շեյխ-Ահմուդի նոր վարդապետությանը և նա շուտով ունեցավ հետևողներ և կազմեց յուրյան մի կուսակցություն, որ կոչվեցավ նրա անունով Շեյխի:

Շեյխիքը այնքան բազմացան, որ համարյա կես կիսեցին շիիդների մի մասը և կազմեցին, եթե կարելի է ասած, մի առանձին եկեղեցի և ունեցան առանձին մուշտայիդ:

Մնացորդ շիիդները, այսինքն՝ շարիաթի կանոնների հին կուսակիցները, շեյխներից որոշվելու համար, կոչվեցան մութաշառռի, որ նշանակում է շարիաթին հնազանդողներ:

Շեյխին, համեմատվելով մութաշառռիի հետ, ներկայանում է ազատ բողոքականություն ընդդեմ մոլեռանդ կաթոլիկության. վերջինը որքան կաշկանդված է շարիաթի նախապաշարմունքներով՝ այնքան էլ ազատ է առաջինը յուր հայացքների մեջ:

Մութաշառռիները չընդունեցին Շեյխ-Ահմուդի վարդապետությունը, հիմնվելով այն ավանդության վերա, թե իսլամի կրոնական վերանորոգությունը չէ կարող լինել հասարակ մարդու ձեռքով, այլ մի անձի ձեռքով, որ շառավիղում էր Մարգարեի արյունից, որին աստված նախասահմանել է դրա համար, և որին նա պիտի աշխարհն ուղարկե:

Այդ անձը, վերջին իմամը — Մեհդին էր, որ և կոչվում է Սահաբի Զաման (ժամանակների տերը), որի գալստյանը շիաները սպասում են այնպիսի մի հույսով, որպես Իսրաելը սպասում է Մեսիային:

Շիմրի և Յազիդի սրից ազատվելով՝ այդ աներևութացած իմամը, Մեհդին, թողեց խիստ հրապուրողական հավատալիքներ յուր մասին, թե նա մի օր պիտի հայտնվի, և կբերե յուր հետ դորանի այն երեք գլուխները, որ գողացավ Օսմանը, և կլրացնե աստուծո խոսքը, կբացատրե դորանի մինչև այն օր անմեկնելի մնացած այաթների խորհուրդը, և կվերանորոգե Իսլամը, կտարածե նրան բոլոր աշխարհի վերա, և կթագավորե մինչև հավիտյան78:

Ամեն մի երևույթ, որի բնական պատճառները մնում էին Շիային անբացատրելի՝ գուշակել էին տալիս նրան Իմամի հայտնության մերձակա լինելը: Այդպիսի երևույթները շատ անգամ ձգում են Շիային ծիծաղելի սնահավատության մեջ. օրինակի համար, քսան տարի առաջ, Թավրիզ քաղաքում, Սահաբի-Զամանի անունով շինված մեչիտի դռան մեյդանում, մսավաճառը եզը մորթելու միջոցին, հանկարծ խեղճ անասունը դուրս է պրծնում, փախչում է և ուղղակի մտնում է Սահաբի-Զամանի մեչիտը, որ շատ մոտ է լինում սպանդարանին:

Որովհետև մեչիտը ծառայում էր այդ քաղաքում որպես ապաստանարան (բաստ), ուր ամեն մի պատսպարված հանցավորին չէր կարելի ստիպողական ձեռքով դուրս հանել, այդ պատճառով՝ մսավաճառը չէ համարձակվում դուրս բերել յուր զոհը:

Միայն նա տարածում է ժողովրդի մեջ շատ զարմանալի խոսքեր, թե երբ նա կամենում էր կտրել եզան վիզը, լսեց նրա բառաչմունքի մեջ որոշ ձայներով արտասանված Մեհդիի անունը, որից եզը խնդրում էր օգնություն, և նույն րոպեին եզան ոտնակապերը բացվեցան, և նա վազեց դեպի մեչիտը:

Այդ լուրը տարածվում է բոլոր քաղաքում, և Սահաբի-Զամանի մեչիտում ապաստանած եզը կատարելապես վայելում է եգիպտական ապիսի փառքը: Նրա ոտքերի տակ տարածվում են թանկագին խալիչաներ և կերակրում են քիշմիշով ու արմավով: Նրա ամեն մի մազերը բաժանվում են որպես սրբություն, և ամեն կողմից դիմում են դեպի նա ցավագարների ամբոխը:

Այդպիսի սնապաշտական դեպքերը պատահում էին շիիդյան աշխարհում խիստ շատ, մինչև 18... թվին հայտնվում է Սեիդ-Ալ-Մուհամմեդ Շիրազցին, մինը գլխավոր աշակերտներից Շեյխ-Ահմուդ բահրեյնցու:

Նա հայտնեց յուր մասին, թե ինքն էր վերջին Իմամը — Մեհդին, որը պիտի աշխարհ գար, և կոչեց յուրյան բաբ (դուռն) այն մտքով, որ այդ դռնով միայն կարելի էր մտնել Ամիրալ-Մոմնի (Ալիի) վիլայեթը, այսինքն նրա արքայության մեջ:

Բաբը ներկայացրեց յուրյան իբրև աշխարհային տեղապահ-Ալիի, աստուծո միջնորդի, որի մասին Շեյխ-Ահմուդը ոչ մի անձն չէր ցույց տվել:

Բաբը ունեցավ շատ հետևողներ, որոնք կոչվեցան բաբի: Խիստ կարճ ժամանակում նրա ուսմունքը տարածվեցավ Պարսկաստանի ամեն մի անկյունում, առավելապես Ղազվինում, Զանգանում և Թեհրանում:

Բաբիությունը, թեև երևցավ կրոնական կերպարանքով, հիմնված Շիաների փայլուն ավանդությունների վերա Ալիի և Մեհդիի մասին, բայց նրա գաղտնի նպատակը և ներքին կազմակերպությունը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ՝ կոմունայի համապատկերը:

Բաբը քարոզում էր ազատություն, հավասարություն, եղբայրություն: Նա հերքում էր սեփականության իրավունք ունենալ: Նա զինավորվում էր Իսլամի հոգևոր և մարմնավոր իշխանությունների դեմ:

Մի այդպիսի վարդապետություն, որքան համակրություն ստացավ ստրուկ, հաղթահարված ժողովրդի մեջ՝ այնքան էլ գրգռեց Շահի և մոլլաների բարկությունը, որոնք շուտով բարձրացրին բաբիների դեմ ամենասարսափելի հալածանքներ: Երևեցան նահատակներ և զոհերի թիվը օրըստօրե սկսեց բազմանալ79: Զանգանի կոտորածի բազմաթիվ նահատակները յուրյանց արյունով կնքեցին նորածին վարդապետությունը:

Ինքը բաբը բռնվում է, և առժամանակ Սալմաստա Զահրիի բերդումը պահվելով, Թավրիզում դատի է կոչվում, գլխավոր մոլլաներից կազմված մի ժողովրդի մեջ, Շեյխիների մուշտայիդը չէ ներկայանում ժողովքին: Եվ մութաշարիֆը դատապարտում է նրան մահվան պատժի: Եվ բաբը նույն քաղաքի Ալաղափուի բակումը, յուր երկու աշակերտների հետ հրացանազարկ է լինում:

Մինչև վերջին շունչը նա մնում է հաստատ յուր համոզմունքի վերա: Նա մեռնում է փառավոր մահվամբ. բայց բաբիությունը մնում է կենդանի նրա հետևողների մեջ:

Բացի բաբիությունը, Պարսկաստանում շատ է և այլ աղանդների թիվը: Բայց դրանց հետևողները այնքան ծածուկ են պահում յուրյանց վարդապետության իսկական խորհուրդը, որ շատ դժվար է նրանց մասին որոշակի տեղեկություն ստանալ: Պարսից գրականությունը անգամ չէ տալիս նրանց մասին պարզ տեղեկություններ: Եղած գրքերը գրված են կամ չափազանց կրքերով, և կամ ավելորդ զրպարտություններով:

Մի քանի տեղեկություններ, որոնք ես կարողացա հավաքել զանազան աղանդավորների ներկայացուցիչներից՝ հաղորդում եմ քեզ, թեև նրանք չեն այնքան լիակատար:

Պարսկաստանի բարձր իմաստություն ունեցող դասի մեջ տարածված է Սուֆի կոչված աղանդը: Դա մի տեսակ փիլիսոփայություն է, որ հիշեցնում է Հունաստանի սոփեստությունը: Սուֆիները հերքում են կրոնական վարդապետությունները, համարելով նրանց մարդու անհատական

զարգացմանը վնասակար: Նրանք ներողամիտ են դեպի ամենայն ազգ, համարելով բոլորին յուրյանց եղբայրներ:

Սուֆիները հավատում են մի գերագույն էակի, որ տարածված է բոլոր առարկաների մեջ, թե երկնային, և թե երկրային: Նա յուր ստեղծագործող զորությամբ կյանք է տալիս նրանց, ձևափոխում է և կառավարում է: Ամենաչնչին ծաղկից սկսյալ, մինչև փոքրիկ զեռունը, կրում են յուրյանց մեջ նրա էությունից: Այդ պատճառով տիեզերքի մեջ ոչինչ բան պիղծ չէ: Այլ ամեն մի երևույթ և ուժ այն գերագույն էակի հայտնությունն է:

Մարդը, իբրև ստեղծագործված առարկաների մի մասը, նույնպես ունի յուր մեջ նույն գերագույն էությունից: Եվ մարդու բոլոր գործունեությունը պայմանավորվում են նույն էության զորությամբը: Ուրեմն նա պիտի լինի ազատ, և ոչինչ օրենքներ չպիտի սահմանափակեն նրա ձգտումները:

Դահրիները, որ նշանակում է ժամանակականք Սուֆիներին, բոլորովին հակառակ փիլիսոփայություն ունին: Նրանք չեն հավատում ոչինչ գերագույն էակի և համարում են տիեզերքն ժամանակի ծնունդ, — տարերքի ֆիզիկական և քիմիական միավորության արտադրություն: Նրանք հերքում են աստվածությունը և հոգու անմահությունը և մարդու կյանքը գտնում են միայն այս աշխարհում, քանի նա ապրում է, քանի նրա մարմնի շինվածքը խանգարվելով, չէ դարձել յուր բաղադրության տարերքին:

Դահրին ասում է, թե ամեն կենդանի մեր հողագնդի արարածն է: Նա յուր գոյությունը պահպանելու համար, բաժանորդ պիտի լինի երկրին, այդ հասարակաց սեղանին, նրանից յուր ապրուստը ճարելու համար: Զորեղ ձեռքով սեփականել յուրյան ավելի շատ հող, քան որ բավական է մի մարդու պիտույքներին՝ դա հասարակաց ընչի հափշտակություն է: Իսկ տիրել յուր նման մարդկանց վերա, և ճնշել նրանց իրավունքը, դա ծայրահեղ բռնակալություն է:

Պարսկաստանում կան և Վահտաթ-աղվճուդի կոչված աղանդավորները: Դրանք հավատում են մարդկանց մահից հետո հոգիների զանազան կենդանիների մեջ տեղափոխվելուն:

Պարսկաստանի մեջ մինչև այսօր գտնվում են հետևողներ հին զրադաշտական կրոնի: Նրանք կոչվում են Գաբր: Զենդավեստան դեռ կարդացվում է նրանց մեջ, որպես սուրբ գիրք:

Պարսիկների մեջ կա և մի տեսակ ծածուկ կրոնք, որի հետևողները յուրյանց կոչում են Դավուդի: Դրանք յուրյանց համարում են Դավիթ Մարգարեի աշակերտներ և կարդում են Սաղմոս, թեև նրանց ծեսերը և ավանդությունները շատ տարբեր են հրեաներից:

Մի քանի նոր մտքեր և փիլիսոփայություններ մտցրին Պարսկաստանում այն պարսիկ ուսանողները, որոնց Շահը հարյուր հիսուն հոգու չափ ուղարկեց Փարիզ կրթության համար: Այդ ուսանողներից թեև չծնվեց ոչ մի հանճար և ոչ մի տաղանդ՝ այսուամենայնիվ նրանք ձգեցին Պարսկաստանում մի փոքրիկ լույս եվրոպական կրթության և ճանապարհ բաց արին եվրոպական կրթությունը յուրյանց աշխարհում մտնելու:

Բայց մոտ է ժամանակը: Պարսկաստանը երկար չպիտի մնա յուր խավարի մեջ: Ծածուկ աղանդները արդեն ձգել են Իսլամի կազմվածքի մեջ զանազան կայծեր, կայծեր, որոնք մի ազատ քամու են կարոտ, որ հանկարծ բռնկեն և հրդեհեն նրա գոյությունը...

Գ

ԴԵՐՎԻՇ

Պարսկաստանի մտավոր կյանքի մեջ մեծ դեր են խաղում նաև դերվիշները: Նրանք կոչվում են՝ և ֆագիր, զալանդար, որոնք նշանակում են խեղճեր:

Դերվիշին հեշտ է ճանաչել յուր արտաքին կերպարանքից անգամ: Դու տեսնում ես մի մարդ երկայն, չխուզած մազերով, որոնք կապված են կամ սև թելերից վարսակալով, կամ գլխին դրած ունի կարմիր և զանազան թալիսմանական գրվածքներով ասեղնագործած մի թագ: Նա հագած ունի միայն մի շապիկ սպիտակ կտավից, որ հասնում է մինչև նրա մերկ ոտքերը: Եվ մեջքը պնդել է նույնպես թալիսմանական տառերով զարդարած լայն գոտիով: Նա ձգած ունի յուր ուսին ընձու կամ առյուծի մորթի և մերկ բազուկից քարշ է տված հնդկաընկույզից շինած քաշկուլը — յուր միակ ամանը, որ նա ման է ածում յուր հետ: Նա յուր ձեռքին ունի մի ահագին մահակ կոճղնավոր բամբուկի ծառից և կողքից քարշ է տված յուր եղջերափողը (նաֆիր): Պարսկաստանի բոլոր քաղաքներում դու հանդիպում ես այդպիսի մարդկանց, շատ անգամ բոլորովին մերկ, սփածանելիք միայն գոտիից մինչև սրունքները կապած, — այդ մարդիկը դերվիշներ են:

Դերվիշն ամեն մարդու բարեկամ է: Նա հանդիպելով քեզ, իսկույն յուր աջը դեպի ճակատն է տանում և ասում է. «Էյ վալլահ» կամ «յա՛ հու հակ»:

Դու կհանդիպես նրան, երբ ծանր քայլերով գնում է նա փողոցի ծածկված չարսիի միջով: Նա երգում է կամ Հաֆեզից, կամ Մասնավիից և կամ Ամիր-ուլ-Մոմնի հրաշքները: Նա բանաստեղծ է, նա երգում է սեր: Նրա ձայնը քաղցր մեղեդիներով հնչվում են չարսիի գմբեթահարկ կամարների տակ:

Խանութպանները սիրում են իրանց երգչին և նրանցից ամեն մինը ձգում է նրա քաշկուլի մեջ մի սև փող:

Դերվիշը յուր դովրանը (շրջանը) կատարելուց հետո, դուրս է գալիս բազարից, հավաքած փողերից վեր է առնում այնքան, որքան պետք է իրան նույն ավուր ապրուստի համար, իսկ մնացորդը բաժանում է նա իրանից ավելի խեղճերին: Երեկոյան դերվիշն աղքատ է և մի սև փող չունի:

Դերվիշը տուն, տեղ, ընտանիք և հայրենիք — ոչինչ չունի:

Նրա հայրենիքը բոլոր աշխարհն է, նրա ընտանիքը — ամբողջ մարդկությունը: Նա երգելով թափառում է երկրից երկիր և ամեն տեղ բաց է նրա առջև աստուծո սեղանը:

Այդ կիսամերկ, մոլորաշրջիկ թափառականները գտնում են արժանավոր ընդունելություն՝ թե՛ ամենահարուստ հաջիի տան մեջ և թե բարձրաստիճան խանի ապարանքում: Ամեն մարդ

ցանկանում է լսել դերվիշի իմաստությունը և յուր խալիների վրա տեղ է տալիս նրան: Բայց դերվիշը փառասեր չէ, նա չէ սիրում շքեղ ապարանքներ, նա այցելություն է անում աղքատների խրճիթներին, նա անցուցանում է յուր գիշերը փողոցներում, փլատակված շինվածքներում: Նա քնում է ամեն տեղ, ուր օրը մթնում է նրա վրա: Դերվիշը Նովրուզի տոնից մի քանի ամիս առաջ յուր փոքրիկ վրանը կազմում է մի հարստի դռան հանդեպ: Նա պահանջում է նրանից նրա հարստության մի մասը, որ հափշտակել էր հասարակաց սեփականությունից: Հարուստն իրավունք չունի հեռացնել նրան յուր դռնից, մինչև չլրացնե նրա պահանջը (թալաբ): Անցնելով թալաբի նստած դերվիշների վրանների մոտից՝ մարդ իսկույն մտաբերում է Դիոգինեսը յուր կարասի մեջ նստած:

Դերվիշներից ոմանք արհեստավորներ են և ապրում են իրանց ձեռագործներով. կան նրանց մեջ բժիշկներ, քանդակագործներ, դեղարարներ, պատկերահաններ և գեղագիրներ, որոնց մի կտոր վայելչագրության օրինակը մեծ գին է բերում:

Նրանցից ոմանք անձնատուր են եղած էլեքսիրի — միջնադարյան փիլիսոփայական քարի՝ գյուտին և այրում են սնդիկ, ծծումբ, մկնդեղ և այլ հանքային մարմիններ՝ ոսկու սարեր գոյացնելու փափագով:

Պարսկաստանի քաղաքներում դերվիշների համար շինած են առանձին օթևաններ, որ կոչվում են թաքիա: Ես կգրեմ քեզ իմ այցելությունս այդ թաքիաներից մինին Շիրազ քաղաքում: Թաքիան ամֆիթատրոնի ձևով մի բաց շինվածք է, փոքրիկ քառանկյունի բակով, որ շրջապատված է զանազան միմյանցից բաժանված կրպակներով: Այդ կրպակների մեջ իջևանում են դերվիշները:

Ես ներս մտա այդ կրպակներից մինի մեջ, ուր ինձ ասացին, թե բնակվում է դերվիշների մուրշիդը, այսինքն՝ նրանց վարդապետը:

Ձմեռն էր: Կրպակի դուռը բացվելուն պես իմ գլուխս զարկեց խիստ անախորժ և կծու հոտ: Ես կարծում էի, թե մտնում եմ Իտալիայի շնական կոչված այրը: Այդ հոտը հավաքվել էր այնտեղ բոնգի, ափիոնի և զանազան արբեցուցիչ նյութերի ստեպ ծխելուց: Ես խնդրեցի բաց թողնել կրպակի դուռը՝ օդը փոքր-ինչ մաքրվելու համար:

— Հյուրի պատիվը միշտ հարգելի է, — ասաց դերվիշներից մինը և բաց թողեց դուռը, թեև սաստիկ ցուրտ էր:

Նրանք թվով չորս էին: Ինքը մուրշիդը նստած էր ընծու մորթու վրա, իսկ մնացածներից ամեն մինը ձգած ուներ յուր տակին առյուծի, վագրի և զանազան գազանների մորթիք: Նրանցից մինը տվավ ինձ յուր մորթին, ես նույնպես նստեցի:

Այդ դերվիշներից ամեն մինը պատկանում էր առանձին ազգի, առանձին տիպերի: Մուրշիդը պարսիկ էր, միջին տարիքով. նա էր մի բարձրահասակ և ցամաք մարդ, արևից այրված երկար ճանապարհորդության մեջ: Նրա սևուկ դեմքը, թուխ, վառվռուն աչքերը բացատրում էին հանճար և զարհուրանք:

Մինը խափշիկ էր, մի երիտասարդ, բոլորովին մերկ, միայն սպիտակ կտավե վարտիքով, որ սև ընձու նման, պառկած մի անկյունում՝ խորին կերպով մրափում էր: Նրա սև կերպարանքը, միախառնվելով կրպակի մթության հետ, մնում էին աննշմարելի, միայն աչքերի սպիտակուցը և ճերմակ ատամները երբեմն փայլում էին խավարի մեջ, երբ նրա դեմքը ցնցվում էր սարսափելի ծիծաղով: Երևում էր, որ երիտասարդը, թմրած ափիոնի արբեցուցիչ զորությունից՝ հրապուրվում էր գեղեցիկ երազներով: .

Մյուսն աղվան էր, մի փոքրիկ մարդ, կարճլիկ հասակով, թավ, սև սաթի նման մազերով, զորշ դեմքով և նեղ, պսպղուն աչքերով:

Իսկ չորրորդը հնդիկ էր, լերկ պղնձագույն դեմքով և երկայն, փափուկ մազերով:

Կրպակի մեջտեղում դրած էր մանղալ շիկացրած ածուխներով. նրանք բոլորել էին նրա շուրջը:

—Ի՞նչ բան բերեց ձեզ, տեր իմ, խեղճերի կացարանը. — հարցրեց ինձանից մուրշիդը:

—Ես էլ ձեզ նման դերվիշ եմ, — ասացի նրան. — և թափառում եմ երկրե երկիր. ինձ ցանկալի էր հարցասիրել իմ համավիճակների կյանքը:

—Էյ վուլլահ, — ձայն տվավ մուրշիդը, — ուրեմն մենք եղբայր ենք: — Եվ ձեռքը իմ ձեռքին տալով, հետո դեպի բերանը և ճակատը տարավ:

— Ի՞նչ ազգից ես, — հարցրեց նա ինձանից:

—Ազգով հայ եմ, — պատասխանեցի ես:

—Իսկ կրոնքո՞վ:

—Քրիստոնյա:

Վերջին խոսքերը շարժեցին մուրշիդի ուռած շրթունքները հեգնական ծիծաղով, և նա ասաց.

— Դուք խոստովանվեցաք, թե դերվիշ եք, բայց դերվիշները ազգ ու կրոնք չունեն:

Ես զգացի սխալմունքը իմ խոսքի մեջ և պատասխանեցի.

— Մենք այդ տեսակ դերվիշներ ենք:

— Բայց քրիստոնյաների կրոնքի վարդապետը, Մեսիան, կատարյալ դերվիշ էր, նա պատկանում էր ահլիմուհաբեթներին (սիրո ժողովրդին կամ սիրո նպատակին). նա ատում էր հարստությունը, նա բարեկամ էր աղաքատներին և սրբում էր նեղացածների արտասուքը:

—Այո՛, նա քարոզում էր սեր, նա աշխատում էր բառնալ ստրուկի ծանր լուծը, — ասացի ես:

—Իսկ նրա հաջորդները, ձեր խալիֆաները (եկեղեցականները) չեղան իրանց վարդապետին արժանավոր աշակերտներ: Նրանք սիրեցին աշխարհը և նրա փառքերը և ամենայն սրբություն զոհեցին իրանց կրքերին...

Մեր խոսակցությունն ընդհատեց խափշիկը, որ պառկած էր կրպակի անկյունում, մի երգով, որ նա հանկարծ եղանակեց քնի մեջ:

— Այս գիշեր բանգը շատ ներգործեց մեր եղբոր վրա, — ասաց մուրշիդը: — Նա տակավին հրապուրվում է երազներով:

Իսկ հնդիկը նույն միջոցին հանեց յուր մախաղից (ջուլբենդ) մի երկայն կտոր աֆիոն, կտրատեց և ափի մեջ լցնելով, բերանը ձգեց և բոլորը միանգամից կուլ տվավ: Ես զարմացա. աֆիոնի ամեն մի կտորը բավական էր թունավորելու ամենաառողջ տղամարդուն, բայց նա կերավ նրանց որպես շաքար, առանց մի զզվանք զգալու:

Իսկ մուրշիդը վառեց յուր դդմասրվակից շինված փոքրիկ ղեյլանը, և մի կտոր բանգ նրա գլխին դնելով, սկսավ ծխել: Մյուսները նույնպես սկսեցին աֆիոն ուտել և ծխել: Եվ մի քանի րոպեից հետո փոքրիկ սենյակը դարձյալ լցվեց խեղդող ծխով:

Բանգի և աֆիոնի արբեցուցիչ զորությունն սկսավ յուր ներգործությունն անել: Դերվիշները հետզհետե զվարթանում էին և ոգևորվում: Նրանք ինձ ևս առաջարկեցին ծխել իրանց ղեյլանից, բայց ես հրաժարվեցա, ասելով, թե սովոր չեմ, և վառեցի իմ սիգարը:

Մեր խոսակցությունը տևեց երկար: Ես նկատեցի, որ այդ դերվիշները պատկանում էին մի վարդապետության, որ կոչվում էր ահլ-հագիգաթ, որ նշանակում է ճշմարտության հետևողներ:

Դրանք ոչինչ ճշմարտություն չեն ընդունում, եթե նա իրանց հայտնված չէ որևիցե գերբնական զորությունից: Դրան հասնելու համար նրանք պիտի անցնեն հետևյալ երկու աստիճանները. առաջին՝ սեր (մուհաբաթ), որի վրա դնում են ամենայն բարոյականության հիմքը, երկրորդ թարիկաթ (ծեսեր), երբ տեսակ-տեսակ սարսափելի ճգնություններով մարդն աշխատում է մեռցնել յուր մեջ ամենայն մարմնականություն (ջամբեի հեյվանաթ) և մաքրվել, սրբվել և բոլորովին հոգիանալ (ջամբեի ռուհանյաթ), այն ժամանակ ինքնուրույն հասնում է հագիգաթին, այսինքն՝ ճշմարտությանը: Դերվիշներից շատերը պատկանում են զանազան այլ աղանդների, ինչպես են՝ դահրի, սուֆի բաբի, ուրաֆա, և այլն, որոնց մասին առաջին նամակումս գրած եմ քեզ: Այլև կան նրանց մեջ շատ խաբեբաներ, որոնք պարապում են կախարդությունով, աստղերի հմայությունով և թովչությունով:

Դերվիշները չեն սիրում մոլլաները, համարելով նրանց անհավատներ, որովհետև նրանք չեն կատարում շարիաթի կանոնները: Բայց ժողովրդի բարձր դասը, ազնվականները, պատվում են նրանց, և սիրում են լսել նրանց իմաստությունը:

Դերվիշները, այդ իմաստության թափառական միսիոնարները, կարող են օգտավետ լինել Պարսկաստանի մեջ նոր մտքեր տարածելու, թեև նրանք մի որոշակի ուղղություն չունեն, այլ յուրաքանչյուրն ունի յուր առանձին համոզմունքները և կարծիքները, այսուամենայնիվ նրանց մեջ կա ազատ մտածողություն:

ՆՈՏԱՐ

Պարսկաստանը չունի կառավարության կողմից նշանակված ո՛չ մակլերներ և ո՛չ նոտարներ: Այդ պաշտոնները կատարում են զանազան մոլլաներ կամ միրզաներ (գրագիրներ), որոնք նստած բազարներում, մի կտոր հասարակ թուղթ և թանաքաման առաջներին դրած, սպասում են իրանց մոտ հաճախողներին:

—Մի մարդ մյուսից պարտք է վեր առել և հարկավոր է նրան մուրհակ տալ. կամ մինը մյուսից անշարժ կայք է գնած, հարկավոր է նրան կալվածագիր տալ. կամ մինը մինի հետ պայման, դաշնադրություն ունե, կամ մինը բարևագիր պիտի գրե յուր բարեկամին. բոլորը գնում են մոլլայի կամ միրզայի մոտ: Նա գրում է նրանց թղթերը, ինքը կնքում է, և այլ երեք հոգի վկաների կնքել է տալիս, այդքանը բավական է թղթի հաստատության համար:

Միրզան կամ մոլլան, ով որ կուզե թող լինի, բարոյական, թե անբարոյական մարդ, այդ պաշտոնը կատարելու համար, մի առանձին երաշխավորություն կամ արտոնություն չէ պահանջվում նրանից, բավական է միայն, որ նա գիտե գրել և կարդալ:

Ամեն տեսակ թղթի վրա գրում է նա՝ սպիտակ, դեղին և այլն: Պարսկաստանը դեռ դրոշմավոր թուղթ չունի:

Ամեն մի վկայական չէ վատթարանում պարտավորված կողմերի կամ վկաների ստորագրությամբ, այլ նրանց և գրող մոլլայի լոկ կնիքների դրոշմվելով:

Այդպիսի կնիքներ կարելի է գնել բազարից, ուր՝ քանդակագործների մոտ զանազան մարդկանց անուններով, հարյուրներով պատրաստի ծախվում են:

Այնպես որ կեղծ վկաներով մուրհակ շինելն ամենայն կերպով հնարավոր է լինում: Բավական է մի միրզային մի քանի շահի տալ գրելու միայն մի վկայական, այնուհետև նրան վավերացնելու համար կնիքները հեշտ է գնել բազարից:

ՇԱՌԻԱԹ

Շառիաթն է քաղաքական և կրոնական օրենքը, որով կառավարվում են Իսլամին հետևող ազգերը: Նա յուր գոյությունն ստացավ Մուհամմեդից:

Շառիաթի օրենսդրական շրջանն այնքան նեղ եղավ, որքան սակավ էր այն ազգի (արբացոց) կյանքի պիտույքները, որի համար գրվեցավ նա, և որքան տկար էր նրա հեղինակի ուժը և քաղաքական զորությունը նրա գրելու ժամանակ:

Մուհամմեդը տվավ արաբներին շառիաթի հրահանգները ոչ իբրև հասարակ օրենսդրական կանոններ, այլ որպես սրբազան հայտնություն (աշար), երկնքից նրան իջած Գաբրիել հրեշտակի ձեռքով: Այդ հավաքված աշարները կոչվեցավ Ղորան:

Ղորանի աշարները հարմարեցրած են առօրյա անցքերին և դեպքերին, որ պատահում են մարգարեի հետ: Այդ պատճառով նրանց մեջ ոչ միայն չկա օրենքների ընդհանուր համակարգություն, այլ շատ տեղ նշմարվում են ամբողջ հոդվածների հակասություններ: Որովհետև փոխվելով դեպքերը, փոխվելով հանգամանքները, Մուհամմեդն ստիպված էր փոխել յուր խոսքը:

Ղորանի ընդհանուր պարունակությունը շատ բազմագունի է: Նա գրված է բանաստեղծորեն, գեղեցիկ և քաղցր խոսքերով: Նրա ոճը հատկանիշ է արաբացոց վառ երևակայությանը և նրա շրջապատող բնության ջերմությանը: Բայց եթե վեր առնեինք նրա միջից առասպելախառն պատմությունները (որոնք շատ հավանական է, թե մարգարեն հավաքած պիտի լինի բերանացի ավանդություններից), իբրև օրենք մնում են սակավ բաներ միայն:

Այդ օրենքներից շատերը, որպիսիք են՝ թլպատությունը, ծոմապահությունը, զոհաբերությունները, լվացմամբ մաքրությունը, ամուսնության կանոնները, փոխարինությունը՝ մի վնասը մյուսի դեմ, բաժանումը ժառանգության շարժական և անշարժ կայքերի և այլն, — դրանք էին Մովսիսական օրենքներ, որոնք ավանդությամբ մնացել էին արաբների մեջ, և որոնց Մուհամմեդը ձևակերպեց յուր նպատակների համեմատ:

Մի քանի օրենքներ, որոնք հնարեց ինքը Մուհամմեդը, որպիսիք են՝ ջահաթ, այսինքն միահամուռ պատերազմ ընդդեմ անջահաթների, և զառաթ, այսինքն կողոպուտ և նրա բաժանման կանոնները զորքերի մեջ, — դրանք էին նրա մարգարեական և աշխարհակալական նպատակների շարժառիթները: Առաջինը՝ ջահաթը, կրոնական ջերմեռանդությամբ ոգևորում էր նրա հավատացյալներին դեպի պատերազմ Իսլամը չընդունողների դեմ և թրի զորությամբ տարածում էր մարգարեի կրոնքը և իշխանությունը հաղթված ազգերի վրա: Երկրորդը՝ զառաթը, բորբոքում էր նրա զինվորների նյութական ընչասիրությունը և առիթ էր տալիս պատերազմելու:

Մի քանի օրենքներ վերաբերում էին մարգարեի անձնականությանը, նրա ընտանիքին և նրա սերունդի ապագային: Օրինակի համար, նա վերստին հաստատեց Քաբայի տան ուխտագնացությունը, որի պաշտոնը և բանալիքները իբրև հայրենական ժառանգություն՝ մնում էր Կորաշների, — յուր տոհմայինների ձեռքում: Նա հաստատեց խումսը, իբրև ապրուստի ապահովություն յուր զավակների, յուր ապագա սերնդի: Նա տվավ այեի նիջաբը՝ կանանց ծածկապահության օրենքը, յուր կասկածավոր կրքերից գրգռված, որ յուր գեղեցիկ հարեմները անմատչելի լինեին ժողովրդին, և օրենքով արգելեց՝ ամեն մարդու, մինչև անգամ յուր մահից հետո նրանց հետ ամուսնանալու իրավունքն ունենալուց:

Ես ավելորդ եմ համարում մանրամասն քննադատել Ղորանի ամբողջ վարդապետությունը, միայն կասեմ, որ նա մի խառն ժողովածու է բիբլիական պատմությունների և կրոնական ու քաղաքական օրենքների:

Բուն հոգին կրոնական օրենքների պայմանավորվում է արտաքին ծիսակատարություններով և արարողություններով: Նրանք չեն ազդում մարդու խղճի և սրտի վրա, նրանք չեն հանգստացնում մարդու միտքը, այլ թողում են նրան՝ անորոշ և անտարբեր դրության մեջ:

Մուհամմեդը հայտնում է մի այսպիսի միտք, թե աստված սկզբանե ստեղծել է մարդկանց՝ ոմանց անհավատ լինելու և ոմանց հավատացյալ, ոմանց դժոխքը տանելու և ոմանց դրախտը, այլ խոսքով՝ նա քարոզում է ճակատագրի նախասահմանությունը:

Այդ միտքն ավելի պարզեցին Ղորանի մեկնիչները, ասելով՝ տիեզերքի ստեղծվելուց առաջ աստված ստեղծեց աշխարհ գալու ամբողջ մարդկության հոգիների տարրը (զարրա): Այդ ժամանակը կոչվում է ալամզարր, այսինքն տարրերի ժամանակ: Նա առաջարկեց այդ տարերքին հավատքը դեպի աստված, հավատքը, դեպի գալոց աշխարհի ճշմարիտ կրոնքը — մայեն. ոմանք ընդունեցին, ոմանք ուրացան: Այդ պատճառով աստված ստեղծում է մարդկանց իրանց սկզբնական ընտրողությանը համեմատ՝ ոմանց հավատացյալ և բարի, իսկ ոմանց անհավատ և չար:

Եվ մարդ աշխարհ գալով՝ չգիտե, թե ինքը ո՞ր դասին է պատկանում՝ հավատացյալներին, թե՞ անհավատներին. նա չգիտե, թե յուր հոգու տարրը ի՞նչ է ընտրել, արդյո՞ք նա բարին է ընտրել, թե չարը, դժոխքին է պատկանում, թե դրախտին. նա մնում է մինչև յուր մահը անորոշ երկմտության մեջ:

Եվ այդպես Ղորանը մարդու ազատ անձնիշխանությանը այս աշխարհում ոչինչ չէ թողնում. մարդը դառնում է մի կրոնավորական էակ, որ պիտի խոնարհի սկզբնական նախասահմանությանը: Ահա՛ գլխավոր պատճառը, որ Իսլամի հետևողները մնում են զուրկ ինքնուրույն մտածելուց և ամենայն անհատական զարգացումից:

Իսկ քաղաքական օրենքները շատ թերի են, նրանք չեն համապատասխանում կյանքի բազմատեսակ պայմաններին, նրանք չեն լրացնում մարդկության պիտույքները, նրա պահանջմունքները: Այսուամենայնիվ Ղորանի օրենքները մնացին նաև նախասկիզբն Իսլամի իրավաբանության: Մարգարեի հաջորդ խալիֆաները՝ Օմարը, Օսմանը, Աբուբեքիրը, Ալին, հիմնվեցան նույն օրենքների վրա, համարելով նրանց աստուծո վերջին խոսքը, որով պիտի կառավարվեր մարդկությունը և որ անփոփոխ պիտի մնար մինչև դարերի վերջը: Թեև Ղորանն ունի յուր մեջ, որպես ասացինք, խիստ սակավ օրենքներ, միայն մարգարեից հետո, նրա հաջորդները և Ղորանի մեկնիչները սկսեցին տալ նրա խոսքերին զանազան բացատրություններ, և այդ բացատրություններից հետզհետե ձևակերպվեցան զանազան կանոններ, այնքան խառն և հակասական միմյանց, որքան շատ եղան այդ մեկնիչների թիվը զանազան դարերում: Եվ այդպիսով կազմակերպվեցավ շառիաթը:

Շառիաթի նախկին ավանդապահները և նրա գործադրողները եղան Մարգարեի հաջորդները, այսինքն՝ նրա խալիֆաները, որոնք էին ներկայացուցիչներն Իսլամի թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր իշխանության:

Տաճկաստանում օսմանցիների և Պարսկաստանում Սաֆավիների թագավորները խլեցին խալիֆաներից նրանց աշխարհական իշխանությունը և թողեցին նրանց միայն հոգևոր կառավարությունը և շառիաթի գործադրությունը:

Խալիֆաներից անցավ այդ արտոնությունը Իսլամի մոլլաներին: Որովհետև իմ խոսքը Պարսկաստանի վրա պիտի լինի, ուրեմն կգրեմ մի քանի տեղեկություններ Շիաների մոլլաների մասին:

Շիաների հոգևոր դասը բաղկանում է հետևյալ դասերից՝ Մուշտայիդ, ազամ, այսինքն՝ մեծ մուշտայիդ. դա է բարձրագույն գլուխը նրանց գինի, և որպես ընդհանուր պատրիարքը՝ նա նստում է Բաղդադի Քալբալա կոչված վանքում, որ և կենդրոն է շիաների կրոնական աշխարհի, ուր դրած են նահատակված իմամների գերեզմանները:

Բացի նրանցից, Պարսկաստանի քաղաքները ունեն իրանց առանձին Մուշտայիդները, որպես գլխավոր Մուշտայիդի տեղապահներ: Դրանք կոչվում են քիշնամաչներ, այսինքն՝ այնպիսի մոլլաներ, որոնք մեչիտներում հրապարակական աղոթքի ժամանակ կարդում էին նամազը, և ժողովուրդը հետևում էր նրանց օրինակին:

Մնացորդ կարգերն են Շեյխ-Ուլ-Իսլամ, Ղադի. դրանք են շառիաթի գլխավոր ավանդապահները, որոնք և կոչվում են Հաքիմջառ, որ նշանակում է դատավոր: Ղազի և Շեյխ-Ուլ Իսլամ լինելու արտոնությունը տալիս է կառավարությունը:

Ստորին կարգերն են՝ հասարակ մոլլաներ, որոնք պարապում են վարժապետությամբ և ունին ուսումնարաններ: Թալբաները համապատասխանում են քրիստոնյաների տիրացուներին:

Ամբողջ հոգևորական դասը, մի խոսքով՝ կոչվում է ուլամա (իմաստուններ) ախունդ կամ հասարակաբար մոլլա:

Մոլլա լինելու բարձր աստիճաններն ստանալու համար՝ որպես են՝ Մուշտայիդ, Շեյխ-Ուլ-Իսլամ, Ղազի, — հարկավոր է դիմել Բաղդադ՝ գլխավոր Մուշտայիդին: Այնտեղ, Քալբալայի տան մեջ կա հոգևոր բարձր ուսումնարան, Իսլամի աստվածաբանությունը և շառիաթի օրենսգիտությունը սովորելու: Ուսանողը մնում է այնտեղ յոթն, ութը տարի, սովորում է արաբական լեզուն, լսում է դասեր հիշյալ առարկաներից, և ուսումն ավարտեուց հետո ստանում է գլխավոր Մուշտայիդից վկայական յուր գիտության մասին:

Ոչինչ կրոնական ծեսեր չեն կատարվում ուսանողին մոլլա լինելու որևիցե կարգում ձեռնադրվելու. բավական է միայն, որ նա ունենա գիտնական արժանավորություն, և յուր վարձով գրավե գլխավոր Մուշտայիդի համակրությունը: Նորընծա մոլլան ավարտելով յուր ուսումը, գլխին փաթաթելով ճերմակ կտավե նվիրական ամմամոն, ծածկելով սև շալը մաչիտի վերարկուի (ապայի) մեջ, երկայն, սպիտակ արաբական հագուստով, մեջքը պնդած հաստ գոտիով, բարեպաշտական տերողորմյան ձեռքում, մի խոսքով, յուր արտաքին կերպարանքը ձևակերպելով ջերմեռանդ և բարի հոգևորականի ամենայն կեղծավորությամբ, — վերադառնում է հայրենիք և բաց է անում յուր համար շառիաթխանա (դատաստանատուն):

Շառիաթխանան կառավարչական մի առանձին պաշտոնական տեղ չէ: Ամեն մի հաքիմ-շառ յուր դասատան սենյակը որոշում է յուր համար, որպես շառիաթխանա:

Ես կնկարագրեմ այդ շառիաթխանաներից մեկը, որին ես այցելություն արեցի Թեհրանում: Հաքիմ-շառը ամենահարուստ կալվածատերն էր, նա ուներ գյուղորայք, ահագին հարստություն: Ես ներս մտա նրա շառիաթխանան. դա մի սենյակ էր խիստ աղքատիկ կերպարանքով, թղթած լուսամուտներով և մերկ հատակով: Ինքը՝ Հաքիմ-շառը, խիստ հասարակ հագուստով՝ նստած էր

փսիաթի վրա: Նա ներկայացնում էր ինձ Իսլամի մարգարեն կամ նրա խալիֆաները, որոնք իրանց ահագին մեծության մեջ ցուցանում էին՝ պարզ, անփառասեր և չափավոր կյանք:

Երեկոյան ժամն էր, Հաքիմ-շառը ինձ հրավիրեց յուր ներսի տունը թեյ խմելու: Ես զարմացա, տեսնելով ահագին զանազանություն ներսի և դրսի տան մեջ: Այդ անմատչելի բնակարանը, որ նվիրական էր նրա հարեմներին, վառվում էր ամենայն շքեղությամբ:

Ես այնտեղ մտնելու բախտն ունեցա նրանով, որ Հաքիմ-շառի երեխան հիվանդ էր, ինձ հրավիրեցին որպես բժիշկ:

Բակը զարդարած էր գեղեցիկ պարտեզով և հազվագյուտ ծաղիկներով. նրա մեջտեղում փողփողում էր մարմարիոն շատրվանը. ջուրը դեպի վեր էր ցողվում արծաթյա հոսանքով: Սենյակները վառվում էին գույնզգույն ապակեզարդ լուսամուտներով, ամենուրեք տիրում էր ճոխություն, փայլում էին շալեր, թանկագին խալիներ, մետաքս, ոսկի, արծաթ, չինական կարասիք:

Ես կամեցա օգուտ քաղել Իսլամի դատավորի ներկայացուցչից, խոսելով շառիաթի վրա, և հայտնեցի իմ կարծիքը նրա մասին, ասելով. — Ամեն մի օրենսդրություն, թող նա տված իսկ լիներ որևիցե մարգարեի ձեռքով, ժամանակների ընթացքից հետո հնանում է, անպիտանանում է և դառնում է ժողովրդի կյանքի պայմաններին անգոհացուցիչ: Այդպես է Մուհամմեդի շառիաթը: Համարյա տասն ու երեք դարեր անցնում են նրա գրվելու ժամանակից: Իսլամի քաղաքական և բարոյական կյանքն այժմ բոլորովին այլ պայմանների մեջ է, բայց շառիաթը դեռ մնում է նույնը:

Մոլլան պատասխանեց. — Շառիաթը որևիցե աշխարհական մարդու սահմանադրություն չէ, որ ենթարկվի այս և այն փոփոխություններին. նա աստուծո խոսքն է և պիտի մնա որպես հավիտենական օրենք:

— Ի՞նչ օգուտ մի այդպիսի օրենքից, երբ նա չէ համապատասխանում հասարակության կյանքի պայմաններին, — հարցրի ես:

Թո՛ղ ժողովուրդն ինքը յուր կյանքը հարմարեցնե շառիաթի կանոններին, և ոչ թե շառիաթը հպատակվի ժողովրդի կյանքի պահանջմունքներին, — պատասխանեց մոլլան:

— Այստեղ է գլխավոր սխալը, դուք կարծում եք, թե մարդկային կյանքը պիտի հարմարվի օրենքի պահանջներին, և ո՛չ օրենքը կյանքի պայմաններին: Ես հիմա ցույց կտամ ձեզ ընդհանուր վնասը մի այդպիսի ուղղության: Այն ազգերը, որ դարերով կառավարվում են միօրինակ օրենքով, նրանք մնում են միօրինակ անշարժության մեջ: Գիտությունը, կրթությունը, լուսավորությունը մնում է նրանց անմատչելի: Սույն դրության մեջն են այժմ Իսլամին հետևող ազգերը:

Վերջին խոսքերը կարծես բարկացրին մոլլային, և նա ասաց.

— Այն բանը, որ դուք կոչում եք գիտություն, կրթություն, լուսավորություն, դա ծայրահեղ մոլություն է, որ տանում է մարդուն դեպի դժոխքը և շինում է նրան սատանայի հպատակ: Լուսավորությունը բովանդակվում է միմիայն Ղորանի մեջ, և նրա լույսով պիտի կառավարվի ամբողջ մարդկությունը:

Ես հարցրի. — Գիտե՞ք այդպիսի սխալ կարծիքները որքա՜ն ետ թողեցին ձեր ժողովուրդը լուսավոր ազգերի առաջադիմությունից և նրանց բարօրությունից:

— Մեր բարօրությունը, մեր փառքը մարգարեի ճեննաթումը պիտի վայելենք. այս աշխարքը ոչինչ բան է, — պատասխանեց մոլլան խորին համոզմունքով:

Ազանի ծանր և ձգական ձայնն ընդհատեց մեր խոսակցությունը, մոլլան պատրաստվեցավ յուր նամազը կատարելու: Ես հեռացա նրանից:

ՋՐԱԲԵՐԴ

Մի հատված իմ ճանապարհորդությունից Ղարաբաղում

Մռայլ է: Առջևից օձի նման ոլորվում է մի հազիվ նշմարվող շավիղ, որ տանում է անտառապատ լեռների կողքերով, իսկ վերևից՝ տարածվում է հսկայական ծառերի կանաչազարդ կամարը: Արեգակի ճառագայթները չեն անցնում այդ կամարի սաղարթախիտ հյուսվածքից. ճյուղերը, ոստերը, տերևները սիրալիր կերպով գրկել են միմյանց:

Տեղ-տեղ կանաչազարդ կամարը տատանվում է և ճյուղերի ճեղքերից տեսնվում է կապտագույն երկնքի մի փոքրիկ մասը միայն: Այդ ճեղքերից ոսկյա ժապավենների նման ներս են ցոլանում արեգակի բարակ շողքերը, և անտառի մեջ տիրող մռայլը փոքր-ինչ պարզվում է, լուսավորվում է:

Օդը խեղդվում է: Վերևից հուլիսյան արեգակը կրակ է թափում: Բայց այդ կրակը, այդ տապը, այդ բոցը չէ թափանցում մինչև անտառի խորքը: Ոստերի տերևների խիտ հյուսվածքը ընդդիմադրում է նրանց: Ձորերի խոնավ զովությունը, մեղմացած վերևից ներգործող ջերմությամբ, խիստ ախորժ հրապուրանքով շփվում է ուղևորի երեսին, և նա լի ախորժակով շնչում է եղևնիներից բուրող բալասանը:

Շավիղը նեղ է: Նա անթիվ ելևէջներ ունի: Երբեմն բարձրանում է գագաթների վրա, երբեմն իջնում է մթին ձորերի և նեղ փապարների մեջ: Սայլակի անիվները, աշխարհի սկզբից մուտք չեն գործել այդ կուսական անտառների մեջ: Մարդը միշտ սարսափել է իր համար ճանապարհ հարթելու: Լեռնային գահավեժները սոսկալի են: Ուղևորի ձին անգամ չէ հանդգնում ոտք կոխել նրանց վրա. մի սխալ քայլ, մի թեթև սայթաքում, և ահա նա գլորվեցավ դեպի անդունդը...

Ստիպված ես գնալ ոտքով: Քո առաջնորդը, այդ ահարկու ապառաժների, այդ մթին ծմակների հարազատ որդին՝ կտանե քեզ: Նրան ծանոթ են բոլոր անցքերը, բոլոր շառավիղները, որտեղ միայն վայրենի այծերը համարձակվում են ոտք կոխել:

Տիրում է լռություն: Անտառի մեջ մի տերև անգամ չէ շարժվում: Միջօրեի տոթը բոլոր արարածներին հալածել է դեպի ծմակների խորքը, դեպի քարանձավների մթությունը: Թռչունները անգամ չեն երևում: Ամեն ինչ նիրհում է, ամեն ինչ հանգստանում է խորին խաղաղական բերկրության մեջ:

Ինչ-որ մի բան խշխշում է, կարծես ուղևորի ականջներին դիպչում է թփերի մեղմ սոսափյունը: Նայում ես քո շուրջը: Եվ ահա բեղմնավոր շլորենու ճյուղերից քարշ է ընկած մի էակ: Ծառերի խտությունը թույլ չէ տալիս պարզ նշմարել նրան: Երևում է մի կարմիր շապիկ միայն, որ իջել էր մինչև մերկ սրունքները: Հետաքրքրությունը վառվում է: Նայում ես, նայում ես, այժմ նկատվում են կնոջ ծամերի երկայն հյուսեր, որ ծածանվում են ճյուղերի հետ: Այդ ի՞նչ է, որտեղի՞ց հայտնվեցավ այդ անտառային ֆեան: Ի՞նչ գործ ունի նա այդ վայրենի ամայության մեջ, ուր վագրերն անգամ սարսափում են երկյուղից:

Դա մի շինական հայ աղջիկ է, որ հեռավոր գյուղից եկել է անտառային պտուղներ քաղելու: Նա քաղում է կարմիր, հասունացած շլորները և խնամքով լցնում է զամբյուղի մեջ, որ քարշ է ընկած նրա թևքից: Նա մենակ է: Փոքր-ինչ հեռու, գլուխը առջևի թաթերի վրա դրած, պառկել է նրա մտերիմ ընկերը, — մի ահագին շուն: Փորձի՛ր մոտենալ մենավոր աղջկան, այդ գազանը կը պատառոտե քեզ:

Աղջիկը ետ նայեց: Ուղևորը կասկածավոր երևեցավ նրան: Զարմանալի արագությամբ ցած ցատկեց նա շլորենուց և մի ակնթարթում անհայտացավ անտառի մթության մեջ: Այլևս՝ ինքը սատանան չէ կարող գտնել նրան: Նա չի վախենա. նա երկյուղ չունի. նա ամեն տեղ կգնա: Նա ծնվել է և սնվել այն մամռապատ ծառերի հետ, նրա օրորոցը եղել է այն վայրենի ապառաժները:

Մի քանի քայլ ևս, և ուղևորը նկատում է այդ անտառային կույսերի երկրորդը, երրորդը... Դրանք չեն փախչում. դրանք ճանաչեցին, որ դու նույնպես հայ ես, որպես իրանք: Նայում են քեզ վրա և խորամանկ հեգնությամբ ժպտում են: Ինչո՞ւ, ի՞նչն է շարժում այդ միամիտ շինական աղջիկների ծիծաղը:

Նրանք նկատեցին քո դողդոջուն քայլերը, նրանք տեսան, թե ինչպես դու երկչոտ կերպով մագլցում ես ժայռերից և կրիայի նման առաջ ես սողում: Այդ բավական է, որ հրավիրեր երիտասարդի վրա լեռնային աղջկա ծիծաղը: Կարծես մարդ լսում է նրանց ուրախ հանաքները: «Ա՛յ փափկամորթ, սովորե՛լ ես կառքերի վրա թեք ընկնել, կամ թավիշապատ դիվանների վրա ծուլանալ. դե՛, փորձի՛ր մեր սարերի վրա ման գալ, այն ժամանակ կասենք, որ դու էլ տղամարդ ես...»:

Ուղևորը թողնում է բնության այդ հարազատ զավակներին, և իրավ, կրիայի նման սկսում է առաջ շարժվել:

— Շուտով, — շտապեցնում է քեզ առաջնորդը, — եթե այսպես գնալու լինենք, մինչև արևի մտնելը տեղ չենք հասնի:

Առաջնորդի ծաղրածությանը ևս առարկա չդառնալու համար, ուղևորը ստիպված է փոքր-ինչ թեթև շարժվել: Հոգնածությունը վերջապես բոլորովին անտանելի է դառնում: Առաջնորդը նկատում է այդ, և մի առանձին քաղաքավարությամբ միջոց է տալիս հանգստանալու:

— Ծխեցեք, պարոն:

Նստում ես ծառերի հովանավոր ստվերի ներքո, սկսում ես ծխել: Քրտինքը հեղեղի նման թափվում է քո ճակատից: Ամեն ինչ թաց է, շապիկ, ժիլետ և ամառային ժակետ: Անկարելի է այդ

դրության մեջ երկար նստել: Հագուստը կորցնում է իր ջերմությունը և մրսողությունը անխուսափելի է դառնում: Պետք է դարձյալ շարժում գործել, պետք է առաջ գնալ...

Գնում ես, գնում ես, միևնույն լռության, միևնույն անշարժության միջով: Հանկարծ նիրհող անտառի խորհրդավոր հանգստությունը աղմկվում է և, կարծես, լսում ես մի խուլ, ստորերկրյա որոտման ծանր դղրդոցը: Որքան առաջ ես գնում, շրջապատող լեռները սկսում են հետզհետե որոտալ:

Նայում ես դեպի երկինքը, տեսնում ես նույն մանիշակագույն կապուտակությունը իր նուրբ ժպիտով, նույն լուսավոր արեգակը իր պայծառ ճառագայթներով: Ամպի մի փոքրիկ պատառ անգամ չէ երևում:

Բայց որտեղի՞ց է լսվում այդ խուլ, սարսափեցնող որոտի ձայնը: Մտածում ես, անդունդի մեջ կատարվում է մի սոսկալի խռովություն. կատաղի տարրերը մարտնչում են միմյանց հետ:

Ժայռերը, ապառաժները մռնչում են: Խաղաղ մթնոլորտը սկսում է երկյուղածությամբ դողդողալ: Եվ ուղևորի վրա տիրում է մի սրբազան սարսուռ. նա խոնարհվում է, ծունր է իջնում բնության վեհության առջև...

— Դա Թարթար գետի ձայնն է լսվում. — հանգստացնում է քեզ առաջնորդը:

— Շո՞ւտ կհասնենք:

— Այդ սարի մյուս կողմումն է:

Անցնում ես սարը, անցնում ես սարի մյուս կողմը: Քո առջև բացվում է մթին անդունդ: Նայում ես, նայում ես անդունդի խորության մեջ, աչքերդ սևանում են, գլուխդ պտտվում է, ոչինչ չես տեսնում: Հետո երևում են քեզ ծառերի հավասար կատարներ, որոնք կարծես մկրատով թարթած լինեին: Այդ ծառերը աստիճանաբար ցած են իջնում, ցած են իջնում և լցնում են կանաչապատ ձորի ամբողջ խորությունը: Ուրիշ ոչինչ չէ երևում:

— Ահա Թարթարը, — ցույց է տալիս առաջնորդը, ձեռքը մեկնելով դեպի ձորի խորությունը:

Բայց Թարթարը չէ երևում: Նա կտրել, անցել է ժայռերի ամրությունը. նա տաշել է միապաղաղ ապառաժների զանգվածը. նա հազարավոր քայլերով ցած է իջել դեպի երկրի սիրտը. նա դարերով գործել է այստեղ, մինչև քարերի միջով բաց է արել իր համար մի նեղ և անձուկ ճանապարհ: Այդ ճանապարհի մեջ խեղդված, ճնշված, մի հսկա վիշապի նման գալարվում է նա, պտույտներ է գործում, որոտում է, մռնչում է, և կատաղի կերպով աղմուկ է բարձրացնում, զայրանում է, թե ինչու չէ կարողանում ավելի լայնացնել իր ուղին: Իսկ վիթխարի լեռները երկու կողմից ավելի և ավելի սեղմում են նրան, և նա բարկացած, ավելի աղաղակ է բարձրացնում:

Թարթարը հայոց մեծ գետերի ամենակրտսեր եղբայրն է: Նա փոքրիկ է, բայց ահարկու է: Բնությունից վիճակված է եղել նրան կատարել մի ամենադժվարին դեր: Նա չէ վազում ընդարձակ, հարթ-հավասար և լայնատարած դաշտերի միջով, որ, որքան ցանկանար, այնքան

լայնացներ իր ափերը, և, խաղալով, խայտալով, ուրախ հոսանքով շարունակեր իր ընթացքը: Ճակատագիրը Թարթարին սեղմեց Ղարաբաղի լեռնային ձորերի մեջ. նա հազարավոր տարիներով պիտի կռվեր անզգա քարերի և անսիրտ ապառաժների հետ, — և այդ էր, որ զայրացնում էր նրան, այդ էր, որի դեմ բողոքում էր նա իր աղմկալի ձայնով:

Այդ ճնշված, նեղված դրության մեջ ևս Թարթարը պահպանել էր իր վեհությունը: Բնության խստությունը չէր կարողացել հուսահատացնել նրան. նա միշտ կռվել էր և շարունակում էր կռվել իր հոսանքին արգելք դնող խոչընդոտների դեմ:

Երբեմն լեռնային գագաթից պոկվում է, ցած է գլորվում մի ահագին քարաժայռ: Նա կտրում է գետի ճանապարհը: Ջրերի ընթացքը կանգ է առնում: Այդ միջոցին կատաղած Թարթարը ուռչում է, ուռչում է, և հետզհետե աճելով, հավաքում է իր ուժերը: Մի զա՛րկ, զա՛րկ ևս... և ահա ահագին քարաժայռը, որ կտրել էր նրա հոսանքի առաջը, հետ մղվեցավ, կատաղի ալիքները մի թեթև տաշեղի նման տանում են նրան, տանում են, և զարկելով ափերի ապառաժներին, խորտակում են, փշրում են: Գետը դարձյալ ընդունում է իր բնական հոսանքը:

—Դուք կամենում էիք տեսնել Ջրաբերդը, — հիշեցնում է ինձ առաջնորդը, — շատ հեռու չենք բերդից:

—Տարեք ինձ այնտեղ:

Ջրաբե՛րդ, այդ անունը լսելիս իմ սիրտը բաբախում էր և ուրախությունից և տրտմությունից: Ես պիտի տեսնեի այն բերդը, որ շատ անգամ պահել, պահպանել էր մեր հայրերին պարսիկների, թաթարների, արաբների և կովկասյան լեռնաբնակների հարձակմունքներից:

Մենք պիտի իջնեինք Թարթարի ձորը: Բերդը տեսնելու համար պետք էր անցնել գետը:

Բնությունը լավ հասկանալով այդ գետի անհաշտ բնավորությունը, գիտենալով, որ նա այնքան չար է, որ չէ կարող համբերել արհեստական կամուրջների, գտել էր մի հնարք. — երկու ժայռեր, երկու ահագին սյուների նման, ափերի հակառակ կողմերից մոտեցել էր միմյանց: Նրանք այնքան մոտ են, որ մտածում ես, թե կարող ես մեկ ժայռից թռչել մյուսի վրա: Այդ երկու ժայռերի վրա դրած է մի շարժական կամուրջ, որի տակով անցնում է Թարթարը: Ես անցա կամուրջը: Այժմ գտնվում էի գետաձորի հատակի վրա: Չորեք կողմից բարձրանում են անտառապատ լեռներ: Նայում ես դեպի վեր, երկնքի մի նեղ շերտն ես միայն տեսնում: Նայում ես դեպի ցած, և մտածում ես, որ ահա գտնվում ես անդունդի շրթունքների մոտ, որը իր ահագին բերանը բաց արած, պատրաստվում է կլանել քեզ:

Այդ անդունդի, այդ սոսկալի խորության միջից, հսկայական շաքարի գլխի նման բարձրանում է մի մերկ, սեպաձև քարաժայռ: Նայում ես նրա վրա և սքանչանում ես, թե ո՛րքան խելացի է բնությունը, թե ո՛րքան նախատեսել գիտե նա չար մարդիկների չար բնավորությունը, որ կանխապես ստեղծագործել է մի այսպիսի հրաշք, որ մարդիկ կռիվների ժամանակ պատսպարվեն նրա վրա, պաշտպանվեն թշնամու բարբարոսությունների դեմ:

— Դա Ջրաբերդն է, — ասում է առաջնորդը, ցույց տալով վիթխարի քարաժայռը:

Նրա լայնանիստ գագաթի վրա գտնվում են բերդի ավերակները: Իսկ ներքևից նա սրածայր է երևում, մի ահագին սեպի նման: Բայց ինչո՞ւ է կոչվում նա Զրաբերդ:

Բերդը արժանի է այդ կոչմանը: Եվ իրավ, նա երեք կողմից պատած է ջրով: Մի կողմից որոտում է կատաղի Թարթարը, մյուս կողմից, Թըրդի գետը գալով, կտրում է առաջինին, և կազմում է մի սուր եռանկյունի: Այդ եռանկյունիի միջից բարձրանում է սեպաձև քարաժայռը, և նրա գագաթի վրա է դրած Զրաբերդը, որի ստորոտները ողողվում են այդ երկու գետերով:

Բերդի գլխավոր դռան հսկա կամարներն են միայն մնացել: Այդ դռնից ներս մտնելով, մի օձապտույտ ճանապարհ, ապառաժների կուրծքը քերելով, դեպի վեր է բարձրանում: Ճանապարհի հին սանդուղքները այժմ ծածկված են փլատակների բեկորների տակ: Այդ բեկորների միջից բուսել են, աճել են ծառեր, թուփեր, որոնց ճյուղերից բռնելով, պետք է կամաց-կամաց վեր բարձրանալ: Ձեռքից պոկվեցավ ճյուղը, և դու մի քանի րոպեից հետո կգտնվես Թարթարի որոտացող կոհակների մեջ, որ ներքևում հոսում է:

Իմ առաջնորդը խորհուրդ չէր տալիս գնալ մինչև բերդի գագաթը, զգուշացնելով, թե այնտեղ կարող էինք գազանների հանդիպել: Բայց ինչ էլ որ լիներ, ես վճռել էի տեսնել բոլոր ավերակները:

Մի քանի ամբողջ ժամեր անցան, որ քարերը, ծառերը, թուփերը, մացառները բռնելով մենք դեպի վեր էինք բարձրանում: Ամենադժվարինն այն էր, որ տեղ-տեղ այդ վայրենի բուսականությունը այնպես խիտ հյուսված էր լինում մինը մյուսի հետ, որ անկարելի է անցնել: Իմ առաջնորդը խենջարով կտրատում էր ճյուղերը, և ինձ համար ճանապարհ էր բաց անում: Վերջը անկարելի եղավ շարունակել. հոգնածությունը մի կողմից, սաստիկ ծարավը մյուս կողմից, բոլորովին թուլացրին ինձ: Ես նստեցա հանգստանալու: Իմ առաջնորդը շուտով դարման գտավ իմ ծարավը հագեցնելու համար: Նա քաղեց հասունացած շլորներ և տվեց ինձ ուտելու: Թթվաշ պտուղները բավական զովացրին իմ սիրտը: Այդ շլորենիները բուսել էին այն ավերակների միջից, որոնք մի ժամանակ շեն էին, որոնց մեջ մի ժամանակ մարդիկ էին բնակվում:

Վերջապես մենք գտնվում էինք սեպաձև ապառաժի գագաթի վրա: Բերդի շինվածքներից ամբողջ ոչինչ չէ մնացել. երևում են կիսակործան աշտարակներ, երևում են կիսավեր պարիսպներ, երևում են զանազան սրահներ, սենյակներ, որոնց բոլորի ծածքերը ցած են թափվել: Այն հզորները, որ մի ժամանակ այդ ամրություններից սարսափ էին տարածում թշնամու վրա, այժմ չկան: Նրանց փոխարեն երկչոտ բուն թագավորում է ավերակների վրա, և կռնչում է իր չարագուշակ ձայնով:

— Տեսնո՞ւմ եք այդ անցքը, — ցույց տվեց իմ առաջնորդը, — պաշարման ժամանակ այստեղից ջուր էին բարձրացնում բերդի մեջ:

Այդ գաղտնի անցքը ցույց է տալիս, թե ո՛ր աստիճան զարգացած էր հայ մարդու արհեստը, և ո՛ր աստիճան հմուտ էր նա ռազմագիտական հնարների մեջ: Բերդի բարձրությունից ծակել էին ապառաժը և բաց էին արել մի անցք, որ տանում էր մինչև բերդի ստորոտը, մինչև Թարթար գետի ափը: Այդ անցքը թունելի նմանություն ուներ, և բազմաթիվ քարե սանդուղքներով իջնում էր ցած: Սանդուղքները փորված էին բնական ապառաժի վրա: Իմ առաջնորդը բացատրում էր, թե որպես այդ անցքը միջով ջուր էին գողանում գետից, և այդ պատճառով էլ անցքը կոչվում է ջրագող: Քարե սանդուղքների յուրաքանչյուրի վրա կանգնած էր լինում մի-մի մարդ, վերջինը գտնվում էր գետի

ափի մոտ: Նա ընդունում էր իր մոտ կանգնողից դատարկ ամանը և փոխարենը տալիս էր նրան ջրով լեցրածը, և այսպես ամանները ձեռքից ձեռք անցնելով, վերևից ստացվում էր դատարկը, իսկ ներքևից տրվում էր լիքը, և մի քանի րոպեի մեջ լցվում էր ջրի ահագին ավազանը, որ գտնվում էր բերդի մեջ, անցքի մուտքի մոտ:

Մի այսպիսի գաղտնի անցք ևս բերդից տանում էր դեպի ցամաքը, և ծայրը կորչում էր անտառի մեջ: Դա փախուստի ճանապարհ էր:

Արեգակը սկսել էր թեքվել դեպի իր գիշերային կայարանը: Իմ առաջնորդը շտապեցնում էր շուտով ցած իջնել: Ես տխուր մտածություններով հեռացա այդ սքանչելի ավերակներից, որոնք իրանց կործանման մեջ ևս դեռ պահպանել էին վաղեմի մեծությունը:

—Դուք ցանկանո՞ւմ էիք տեսնել և «քաղաքատեղի» ավերակները, — հարցրեց իմ առաջնորդը:

—Անպատճառ:

— Բայց ուշ է, մինչև այնտեղ կհասնենք, կմթնի:

— Վնաս չունի:

Չնայելով իմ առաջնորդի ենթադրությանը, մենք հասանք այնտեղ, երբ արեգակի վերջին ճառագայթները դեռ փայլում էին մի շարք սպիտակ շինվածքների վրա, որոնք գտնվում էին լեռնային բարձրավանդակի վրա: Ճանապարհը, որ տանում էր այնտեղ, այնքան դժվարին չէր: Մենք շուտով հասանք շինվածքներին, որոնք ամբողջապես կառուցված էին սպիտակ մարմարիոնի նման փայլուն, գեղեցիկ տաշված քարերից: Դրանք ամրոցներ էին: Դրանց մեջ բնակվում էին այն իշխանները, որոնց պատկանում էր Ջրաբերդը:

Բլուրը, որի վրա շինված էին այդ ամրոցները, կիսալուսնի ձև ուներ: Կիսալուսնի երկու եղջյուրների վրա երևում էին երկու աշտարակներ: Երևի դրանք ծառայելիս են եղել որպես պահականոցներ, որովհետև գտնվում էին երկու անցքերի մուտքի մոտ, որոնք միակ ճանապարհներն էին դեպի ամրոցը գնալու: Մի քանի զինված մարդիկ այդ աշտարակների մեջ բավական էին, որ թույլ չտային ոչ ոքի մուտք գործել դեպի ամրոցները, որոնք գտնվում էին կիսալուսնի մեջտեղում:

Այդ փառավոր պալատների երեսը դարձրած է դեպի առջևում բացվող խորին ձորը, որը ծածկված է անտառախիտ ծառերով: Ժամանակի կործանիչ ձեռքը դեռ շատ բան չէ ոչնչացրել այստեղ:

Ամրոցը չափազանց բաղադրյալ մի շինվածք է. ունի բազմաթիվ սենյակներ, շքեղ դահլիճներ, ընդարձակ սրահներ, երկայն կորիդորներ, բոլորի դռները բացված են միմյանց մեջ: Լուսամուտները լայն են, և դռները մեծ: Ամբողջ շինվածքը կառուցված է գեղեցիկ կերպով տաշված քարերից, և հայ մարդու ճարտարապետական տաղանդը փայլում է նրանց մեջ իր բոլոր ձիրքերով:

Մարդու սիրտը սկսում է դողդողալ, երբ նայում է այդ փառավոր շինվածքների վրա: Այն հիանալի դահլիճներում, ուր մի ժամանակ տիկինները նազ-նազում էին, ուր աղախինների բազմությունը

կամակատարությամբ պտտվում էր նրանց շուրջը, ուր կյանքը եռ էր գալիս երջանկության բոլոր բավականությամբ, — այժմ ապրում էին վայրենի գազանները: Ահագին ծառեր աճել էին կիսավեր սենյակների միջից, և իշխանների բոլոր փառքը ծածկված էր թփերի, մացառների և պատատուկների հյուսվածքի տակ: Մամուռը ամեն տեղ դրել էր հնության կործանիչ դրոշմը: Երկար, քարացածի նման նայում էի այդ մահվան տեսարանի վրա: Արևը վաղուց մայր էր մտել, մութը պատել էր, և ես այդ չէի նկատել: Ես միշտ նայում էի խավարի մեջ: Եվ կարծես դարերը ետ-ետ էին գնում, և իմ աչքերի առջևից շարքերով անցնում էին ուրվականները այն անձինքների, որոնք մի ժամանակ բնակվել էին այստեղ, որոնք մի ժամանակ իշխում էին այդ հրաշալի անտառների, այդ հսկա լեռների վրա:

Ինձ սթափեցրեց հափշտակությունից իմ առաջնորդը.

— Գնա՛նք, արդեն ուշ է, — ասաց նա: — Ճանապարհը երկար է. շուտով տեղ չենք հասնի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ Պ. ՄԵԼԻՔԶԱԴԵԻ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Ֆոմինոյի շաբաթ: 2. Լազարե: 3. Հայտնության: 4. Մի հերոս: 5. Հայտարարություններ: 6. Մանրալուրք:

1

Ֆոմինոյի շաբաթը անցավ հաջողությամբ: Վաճառականները ազատվեցան երկար տարիներից յուրյանց խանութներում մնացած փտած ապրանքներեն: Մի վաճառք, որ այս բախտավոր շաբաթում մնաց անշարժ, դոքա էին պառավ աղջիկները:

Անգութ ճակատագիրը կարծես պատժում է նորանց... Ինչ պիտի արած այդ հնացած ապրանքների հետ: — Քանի օր է, մի գեղեցիկ միտք հրապուրում է իմ երևակայությունը. — ես վճռում եմ, թե ավելի լավ կլիներ աճուրդի (տորգի) դնել նորանց:

***

Ամպերը սարսափելի կերպով փքվում են: Բայց տակավին անձրև չկա: Հացը և մյուս ուտելիքները ժողովրդի աղքատ դասի համար դառնում են անմատչելի: Քանի օր առաջ կնիկները գործ դրեցին յուրյանց վերջին ճիգը և քուչեքում երգելով ման էին ածում լազարե: Այդ փորձը անցավ ապարդյուն: Ուրեմն ինչ պիտի արած երկնքի հետ հաշտվելու համար:

Անցյալ տարի Թեհրանի Մուշտայիդը նախագուշակեց Պարսկաստանի երաշտության պատճառը: Նա արգելեց հայերին ամպած օրերում տանից դուրս գալ, որովհետև անձրևային կաթիլները նոցա վերա ընկնելով պղծվում էին, և երկինքը գարշում էր ցողել յուր խոնավությունը:

Բայց ի՞նչ է Թիֆլիսում անձրև չգալու պատճառը: — Ինձ թվում է, Թեհրանու Մուշտայիդի մարգարեական հոգին ազդում է ինձանում մի նախագուշակություն. ես կարծում եմ, որ ամպերը մեր քաղաքի հորիզոնում, մի չար նախանձից գրգռվելով, խռովել են: Նոքա տեսանելով, որ

աղջիկների յուբկեքը, շլեյֆները և նոցա ուռած զգեստա-դմակները ավելի շատ են փքվում, քան թե յուրյանք, չարանում են և անձրև չեն տալիս:

Մենք խորհուրդ կտայինք աղջիկներին գոնյա ամպամած օրերում տանից դուրս չգալ, եթե նոքա չկամեին սովից կոտորել աղքատներին...

***

Կարծում ենք հրաշքների դարը անցավ, այո՛, միայն լուսավոր երկրներում: Բայց տակավին Իսմայելի աշխարհ բնագավառում հայտնություններ լինում են: Մեքքայի քաղաքում արաբացի Շեյխ-Մուհամադ-Սադիկը Քաբայի տան մեջ աղոթելու ժամանակ, հանկարծ գերեզմանից հայտնվում է Մուհամմեդը յուր երկար մորուքով, և սպիտակ չալմայով: Մարգարեն ասում է Իսլամի կրոնավորին, որ յուր հետևողների մեջ սովի, ժանտախտի, խոլերայի պատճառը, այս քանի տարիներում եղան նոցա հանցանքները, և հրավիրում է նորանց զղջալ, ապաշխարել, մինչև կանցաներ աստուծո բարկությունը:

Շեյխը դուրս գալով մզկիթից, այդ հայտնությունը ահուդողով պատմում է արաբներին:

Մենք ցավում ենք, որ մարգարեն մոռացել է ասել մի բան, Պարսկաստանում Իսլամի հետևողների մեջ բացի մեղքը, սովի պատճառներից մինն էլ այն է, որ հարուստները, փոխանակ թույլ տալու արտասահմանից բերված ցորյանները ծախվին մեյդանում, իրանք թաքուն գնում են բերողներից, լեցնում են յուրյանց ամբարներում, որ կարողանան թանկ գնով վաճառել աղքատների վերա:

Թեև մարգարեն այդ մասին ոչինչ չէ հիշել, իմ կարծիքով, այդպիսի մուսուլմաններ, որք կենտրոնացնում են յուրյանց ձեռքում ժողովրդի ապրուստի սնունդը, իսպառ կզրկվին ճեննաթում յոթանասուն հուրի յուրյանց կին ստանալուց իբրև Իսլամի մոռմին (հավատացյալ):

***

Մի երիտասարդ, բերանը փրփրած, կատաղության արյունը աչքերում, դեպի «Մշակի» խմբագրատունն էր դիմում: Նա հանդիպեց ինձ բուլվարի վերա:

—Ո՞ւր, պարոն Սնապարծ:

Հարցնում եմ նորանից:

—Դեպի խմբագրատունը:

Պատասխանում է երիտասարդը շարունակելով ճանապարհը:

— Это уж черезчур, черезчур...

Это нестерпимо...

Ասում էր նա ինքն իրան:

— Տո՛, մի կանգնիր բան ունիմ ասելու:

Հետքից կոչում եմ ես:

Պ. Մնապարծը կանգնեց: Ես մոտեցա:

—Ի՞նչ կա: Հարցնում եմ:

—Ես գնում եմ նորա հետ կռվելու: — Ասաց նա:

—Ո՞ւմ հետ:

—Պարոն խմբագրի հետ:

—Ինչո՞ւ համար:

Երիտասարդի աչքերը ավելի վառվեցան, և նա շարունակեց.

—Ես չեմ կարող համբերել, ես չեմ կարող. «Մշակի» հարձակմունքը երիտասարդության վերա անցավ չափից, անցավ սահմանից...

—«Մշակը» ձեր մասին անձնապես ոչինչ գրած չէ՛. պարո՛ն:

—Միևնույնն է, — ասում է նա, — ես երիտասարդության ներկայացուցիչն եմ, այստեղ պատվի հարց է խաղում:

— Այո՛, պատիվը պաշտպանելը մի սուրբ բան է, միայն «Մշակի» խոսքերը այն երիտասարդության համար է, որք չգիտեն գործել:

— Это глупо! — բացականչեց մեր հերոսը: — «Մշակը» յուր գլխին զոռ է տալիս, մի՞թե մեր մեջ չկան գործող երիտասարդներ, մի՞թե գործողները չէին Աբովյանը, Նլբանդյանը, Կիրակոսը, Մարտիրոսը և այլն:

Ես չկարողացա երկար զսպել իմ ծիծաղը և հարցնում եմ.

—Այո՛, նոքա գործողներ էին. բայց դո՞ւք, պարո՛ն:

—Ես... ե՞ս...

Լեզուն փաթաթելով կրկնեց մեր հերոսը:

—Այո՛, դուք, պարո՛ն:

—Ես ուսանող եմ, եթե չարգելեր հիվանդությունս, մագիստր կդառնայի:

—Այդ բոլորը ուղիղ, բայց ի՞նչ եք շինում:

—Ես ժամանակ չունիմ գործելու:

—Ուրեմն ես կկրկնեմ ձեզ Կռիլովի սագերի առակից այն խոսքը, что вы годны только н жаркое...

***

Այս տարի տոթերի անակնկալ վերա հասնելու պատճառով ժողովրդի մեջ հայտնվել է փորի կապության հիվանդություն: Այդպիսիներին մի անվնաս լուծելիք գնելու համար հրավիրում ենք դիմել պարոն Զրախոսի մոտ № 00, տանը:

Պարոն Զրախոսի դեղահատները մի նոր գյուտ է բժշկական աշխարհում, որո գլխավոր բաղադրությունն է կոճապղպեղի հետ խառնած փտած բանախոսությունք «Մեղու Հայաստանիի» համարներում փաթաթած:

***

Տիկին Շնորհաբաշխը և տիկին Սրիկան պիտի վաճառին խիստ աժան գնով արդեն մոդայից ընկած յուրյանց կրինոլիները: Ամառանոց գնալու համար վրանի հարկավորություն ունեցողները թող դիմեն պարոն Պոխրոյի մոտ Կոլոլ թաղում:

***

Մեր քաղաքում հայտնվել է մի դալլաք (վարսավեր), ում գլուխը մազերից ծանրացած է, թող դիմե պարոն Վառոդյանցի մոտ:

***

Աղջիկների երեսները այս տարի փայլում են ավելի վարդի գունով, երևում է, որ բլեդնիության (գունատության) դարը անցավ: Կավիճի և պուդրի գները անհամեմատ կերպով իջել են: Յուրյանց դեմքը սպիտակացնելու համար այս նյութերը գնելու հարկավորություն ունեցող սև երեսներին հրավիրում ենք պարոն Ժանպոլի խանութը:

***

Մի օրիորդ ունե 5,000 ռուբլի արծաթ, որով կամենում է գնել յուր համար փեսա, միայն այդպիսի պայմանով, — որ նա երբեմն զվարճության համար իշի նոխտա պիտի դնե յուր ամուսինի գլխին, և յուր սրտի սիրածը նորա վզին նստացնելով պիտի պար ածե:

Ցանկացողները կարող են դիմել Մոցիքուլ Իվանեի մոտ Շան թաղում:

***

«Պառավ երիտասարդության» մի խումբի մեջ պարոն Դդմազլուխը հայտնեց մի նոր միտք, թե «Մշակիս խմբագրության աշխատակիցները, լինելով զանազան շրջաններից, զանազան

գաղափարների տեր մարդիկ, համաձայն չեն յուրյանց հայացքներով, և այդպիսյավ «Մշակը» չէր կարող ունենալ եզակի ուղղություն, և նորա մահը կլիներ փութանակի: Այս կարծիքը ընդունվում է խորին համակրությամբ, չնայելով, որ ամեն օրգանական մարմին կազմակերպվում է ուրիշ-ուրիշ գործիչներից, իսկ այն մարմինը որ միակերպ է, նա մեռած է:

***

Պառնասի մեջ Մուզաների տեղ երգող մեծապատիվ Ավանակների համար Ապոլոնը հրատարակեց մի նոր օրենք, թե պետք է վերացնել նոցանից մտրակի զարկը: Ծույլերը այդ օրենքի մեջ բացառություն են կազմում:

***

Մի բարձր ուսում ստացածի համարում ունեցող տիկին հարցնում է «Մշակի» խմբագրի մասին, թե ինչով է պարապվում նա: Ասում են հայոց լրագիր է հրատարակում: Նա զզվանքով պատասխանում է՝ միթե հիմարություն չէ՞ր նորա նման կրթված երիտասարդին լրագիր հրատարակել:

Տիկնոջ կարծիքով լրագիր հրապարակողը պիտի լինի անկիրթ մարդ:

2

1. Շռայլության ժանտախտը: 2. Մուշտայիդ: 3. Մողնից ընկած լեզու: 4. Հայտարարություններ: 5. Մանրալուրք:

Պարոն Ծղալոբը սնանկացավ: Ասել է թե, յուր հարստությունից նյութականապես մեռավ մի մարդ:

Շեփորի բոթաբեր ձայնը հրավիրում է ժողովրդին աճրդով առնել այդ անբախտի կայքը:

Բայց որպիսի՛ զգացմունքով նայում է մեր հասարակությունը մի այդպիսի աննախանձելի երևույթի վրա:

Մինը, — որ ամեն մի դժբախտ դեպքի մեջ նկատում է աստուծո վրեժխնդիր մատը, երկյուղած սնահավատությամբ ասում է.

— Աստված պատժեց նրան յուր մեղքերի պատճառով:

Մյուսը, — որ ավելի նշանակություն է տալիս հալալ (սուրբ) աշխատանքին, ասում է, — հարամ (անմաքուր) փողի վերջը միշտ այդպես կլինի, և ավելացնում է յուր հայրենական առածը, թե «քամու բերածը քամին կտանի»:

Երրորդը, պարոն Չարանախանձը, — որ մտածում է բոլոր մարդկությունը յուր ոտքի տակը դնել, Նեբրովթի աշտարակը կազմել, և մինչև երկինք բարձրանալ, ասում է. — լա՛վ է, լա՛վ, թո՛ղ վեր

ընկնի, թո՛ղ հողին հավասար լինի, նա շատ հպարտ, ինքնահավան, յուր ասածի մարդ էր, նա մեզ բանի տեղ չէր դնում, և ավելացնում է մի խոշոր հիշոց...:

Բայց ի՞նչ է ասում պարոն Խոհեմությունը:

— Այն օրից, երբ պ. Ծղալոբն սկսավ յուր գիշերներն անցուցանել կլուբում խաղաթղթով, այն օրից, երբ նրա կինը բացավ յուր տանը մի լայն ասպարեզ վեչերների, դոմինո-լոտոյի, բեղիկների և պիկնիկների, այն օրից, երբ նրա դստերքն սկսան հաճախեք մոդնի մագազինները, այն օրից, երբ նրա որդին վերադարձավ Մոսկվայից բերելով ուսանողի դեպլոմի հետ և հերոսության տիտղոսը Աստղկա դաշտերում, — շռայլության ժանտախտը մտավ խեղճ Ծղալոբի գերդաստանի մեջ և վերջապես պատճառեց նրա հարստության կյանքի մահը:

***

Մուշտայի՛դ: Ի՛նչ գեղեցիկ հնչում է այդ բառը: Իսլամը տալիս է այդ անունը յուր դենի գլխավոր վարդապետներին:

Իսկ Թիֆլիսում այդ անունով կոչվում է մի հիանալի այգի:

Եթե թույլ կտար մեզ փոխաբերական բանախոսությունը, Մենք չենք սխալվիլ ասելով, որ այդ անունը մի խորհրդավոր մտքով հարմարված է այդ այգիին, — որովհետև նա ևս մի վարդապետարան է այս քաղաքի զանազան տեսակ զվարճությունների:

Մայիսի 22-րդ գիշերն է:

Թարմ և հովասուն գիշեր է:

Պ. Ռ... լովը տալիս է դիմակահանդես:

Գույնզգույն լապտերներից, որոնք քարշ են ընկած ծառերի ճյուղերից, աստղազարդ երկինքը, ճրագներով լուսավորված և սաղարթախիտ ոստերով հյուսած դահլիճը, մուզիկայի անուշ ձայնը, մի առանձին կախարդական նշանակություն են տալիս այդ հանդիսին:

Հիանալի՛ հանդես...:

Եվայի դստերքն այստեղ բոլորը մի գույն, մի պատկեր ունեն: Ոմանց ամոթխածությունը, ոմանց լկտի անհամեստությունը, ոմանց պարկեշտությունը, ոմանց ազնվատոհմական մեծամտությունը դեպի հասարակ մարդիկը, ոմանց գեղեցիկ, ոմանց տգեղ պատկերները, բոլորը ծածկված են դիմակների տակ: Բոլորը միօրինակ ուրախ են, բոլորի լեզուներն ազատորեն արտահայտում են իրանց ախորժ կամ անախորժ, իրանց համեստ կամ անհամեստ զգացմունքները...:

Գեղեցի՛կ հավասարություն...

Մուզիկան հնչեց:

Պարահանդեսն սկսվեցավ:

Դիմակավորները շարժվեցան:

Պարախաղացություն, ընդհանուր խառնակություն մրրկածուփ ալեկոծության մեջ, պարողը և յուր պար-ընկերուհին, գրկած միմյաց, կաքավում են, երերում են, պտտվում են, քչփչում են... քսքսվում են...: Բայց ցավալին այն է, որ իրանք ևս չգիտեն, թե ո՛վ ո՛ւմ հետ գործ ունե:

Գիշերային երկրորդ ժամն է:

Պարահանդեսը վերջացավ:

Դիմակավորուհիքը մեծ մասամբ հեռացան: Բայց տակավին մնացածների թիվը փոքր չէ: Նրանք ցրվեցան այգիում: Լապտերները հետզհետե սկսան հանգչիլ: Այգիի մեջ տիրեց ընդհանուր խավարը:

Աստղկա դստերքը, ծածկված իրանց սև դոմինոների մեջ, գիշերային ուրվականների նման, թափառում են այգիի մթության մեջ: Նվիրական ծառերի տակից լսելի են լինում հեշտախտական քչփչոցը, գաղտնի սեթևեթները դիմակավորուհիների իրանց պարընկերների հետ...:

Խորհրդակա՛ն ժամ... երբ ամեն մի տարփածուն հասնում է յուր ըղձին...:

Թո՛ղ գնան մեր աղջիկները, մեր կանայքը, մեր քույրերը դիմակահանդես: Թո՛ղ գնան նրանք այդ հասարակական վարդապետարանի պարահանդեսները: Նրանք այնտեղ շատ բան կարող են սովորել...: Ուրեմն քաջալերենք մեզ այդպիսի հույսերով, թե մենք լուսավորվում ենք... մենք առա՛ջ ենք գնում...:

***

Մի ծխական օրիորդաց վարժարանի քննությանը ներկա էի:

Քննությունը կրոնից էր:

Ինձ վրա խիստ անախորժ տպավորություն գործեց մանուկ աղջիկների բավական լավ վարժությունն այդ առարկայի մեջ:

Մի թերություն, որ նկատելի էր նրանց պատասխանների մեջ, այն էր, որ աշակերտուհիք, թեև պատասխանում էին առաջարկած հարցերին բավական հասկանալի լեզվով, այսուամենայնիվ նշմարելի էր նրանց խոսքերի մեջ բառ առ բառ սերտողության նշաններ:

Այդ հետևանքն է դասատվության այն անօգուտ եղանակի, երբ ուսուցիչն ստիպում է աշակերտներին կուրորեն հպատակել միայն դասագրքերի մեջ գրվածներին, առանց յուր կողմից մեկնելու և բացատրելու նրանց միտքը:

Այդ եղանակով դասատվությունը չէր կարող երեխային մտավոր սնունդ մատակարարել, առավելապես այն պատճառով, որ օրինավոր կերպով հորինված մանկավարժական դասագրքեր մեզանում չկան:

Բայց հմուտ կրոնուսույցը կարող էր եղածների մեջ փոփոխություններ անել, և մանուկների ընդունակությանը և նրանց հասկացողությանը հարմարացնել:

Այսուամենայնիվ այդպիսի ծխական օրիորդաց ուսումնարանների օգուտներն անուրանալի են: Նրանք կարող են պատրաստել մեզ համար խելացի և բարեկիրթ մայրեր: Գլխավոր արժանավորությունը Գ...յան ծխական ուսումնարանի այն է, որ մանուկ աղջիկները սովորում են բավական մաքուր և հստակ կերպով խոսել իրանց մայրենի բարբառով: Այդ իրողությունն ինձ վրա թողեց խորին տպավորություն:

Արդարև, շատերին մինչև անգամ ծիծաղելի պիտի թվի, երբ մենք հրճվում ենք, տեսնելով հայոց մանուկին, որ այդպես քաղցր կերպով ճլվլում էր յուր մայրենի լեզվով:

Բայց մի այդպիսի երևույթ այնքան հազվագյուտ է մեր քաղաքում, որ մենք չէինք կարող սառն աչքով նայել մի փոքրիկ հայ աղջկա վրա, երբ նա յուր մայրենի, յուր ազգային լեզվով կարողանում է արտահայտել յուր մտքերը:

Բայց ցավալին այն է, որ տակավին ծնողները չեն հասկացել այդպիսի ծխական ուսումնարանների օգտավետությունը: Ասածիս ապացույց ես առաջ կբերեմ հիշատակարանիս մեջ երկու տիկինների խոսակցությունը, որոնցից մինը, տ. Սոֆիոն, յուր Կեկելին դուրս տանելով հայոց մի ծխական ուսումնարանից, հանձնեց մադամ Ն-ի պանսիոնը:

—Ինչո՞ւ դուրս տարար աղջկադ, — հարցնում է նրանից տ. Օսանը:

—Քա՛, Օսան ջան, վունց չը դուրս տանեի, դիփ հայեվար էին սորվեցնում, — պատասխանում է տ. Սոֆիոն դժգոհելով:

—Մաշ հայեվար չի պիտի՞ սորվի աղջիկը, — հարցնում է տ. Օսանը զարմացական ոճով:

Տ. Սոֆիոն արհամարհական ծիծաղն երեսին պատասխանում է.

—Վա՛յ մե, գանա իմ Կեկելը կռոյի աղջիկ է՞, վուր հայեվար սորվի՛ ու հայեվար խոսի:

—Գանա ո՛վ վուր հայեվար է խոսում, նա կռո է՞, — հարցնում է տ. Օսանը:

—Մաշ ի՞նչ է. ա՛ն կռո է, ա՛ն զոկ է, ա՛ն ղարաբարցի է, ա՛ն թե չէ շան-ճրագ է:

Տ. Օսանի դեմքի վրա արտահայտվեցավ համոզմունքի նման մի երևույթ, և նա կրկնեց յուր հարցը.

— Հիմի մադամ Ն...ի մոտ ի՞նչ պիտի սորվի Կեկելդ:

— Ի՞նչ պիտի սորվի՞, — կրկնեց տ. Սոֆիոն. — գանա չի՞ս գիտի ինչ պիտի սորվի. — նա կսորվի լավ ֆրանցուզնակ, լավ ռսնակ. կսորվի լավ տանցովատ, կսորվի լավ պիանոյի ածելը, ու էլի ուրիշ շատ բանիր կսորվի...:

— Մաշ հայեվարը՞, — հարցրեց տ. Օսանը, ուղիղ տ. Սոֆիոյի երեսին նայելով:

Տ. Սոֆիոն խորին կերպով ծիծաղեց յուր խոսակցի պարզամտության վրա և ասաց.

— Գանա դու չիս գիտի՞, վուր հայեվարը հիմի մոդա չէ...:

***

Մի փաստաբան, կամենալով օգուտ բերել աղքատ դատախազներին, որոնց չքավորությունը հնար չէ տալիս նրանց գործ սկսել դատաստանատներում, — ընդունում է գործեր բոլորովին ձրի, առանց կանխիկ վարձատրություն պահանջելու յուր պաշտպանյալի խնդրից: Միայն նա հակառակորդից գործ հանձնող պարոնների օգտին տարած արծաթն այլևս չպիտի դարձնե նրանց:

***

Պոլսից եկած մի երիտասարդ Աղեքսանդրյան այգում պտտելու միջոցին հարցնում է յուր ընկերից.

—Ախպա՛ր, աս ի՞նչ երկիր է, այստեղ հայերի աղջիկներ չես կարող ճանաչեր:

—Ինչո՞ւ, — հարցնում է մեր քաղաքացի երիտասարդը:

—Անոր համար, որ ամենևին հայերեն չեն խոսեր:

—Այդքանը բավական է նրանց ճանաչելու, որ հայոց աղջիկներ են, — պատասխանում է երիտասարդը:

***

Լսեցի, որ պառավ օրիորդների ներկայացուցիչներից մինը զինվորվել է՝ գրել իմ առաջին հիշատակարանի դեմ մի սարսափելի հոդված: Ընկերներիցս մինը խորհուրդ տվավ Խոջանց վանքը գնալ և նահատակի գերեզմանի վրա մի կուժ կոտրել, որ վախս անցնի:

***

«Մշակի» խմբագրությունն ստացավ մի կրիտիկա պարոն Հ. Մ...ի «Ընտանիքի կերբերոսներ» հոդվածի դեմ, որի մեջ պ. կրիտիկոսը շատ հետաքրքրվում էր գիտենալ, արդյո՞ք պարոն Հ. Մ. կերբերոս է, թե կերբերոսուհի. այսինքն արու է, թե էգ: Մենք հրավիրում ենք պարոնին Թելեթի ճանապարհի վրա «Երկու-հոգիս» կոչված քարափը գնալ. այնտեղ մի գոգավոր այր կա, ուր հղի կանայքը, կամենալով գիտենալ իրանց արգանդի պտուղների արու կամ էգ լինելը, մտնելով այրի

մեջ, կոչում են. — «տղա է՞, թե աղջիկ»: Անդրադարձ արձագանքը գուշակում է նրանց որովայնի ծնունդների որ սեռի պատկանելը:

Պարոն կրիտիկոսը կարող էր օգուտ քաղել այդ քարափից յուր հետաքրքրությունը լցուցանելու համար:

***

Ա. Արտավազդա շղթայքը: Բ. Մամոնի կուռքը: Գ. Կախարդական կուժը: Դ. Նահատակի գերեզմանը: Ե. Քարոզ:

Ա

—Բարով, եղբայր:

—Աստուծո բարին քեզ:

—Ցանկանում եմ ծանոթանալ:

—Քո խոնարհ ծառա Չաքուջ:

—Ինչո՞վ եք պարապում:

—Թափառում եմ...

—Ա, ես արդեն կարդում եմ քո ճակատին Կայենի դատակնիքը:

—Պետք է հնազանդվել ճակատագրին... — վերջացրուց Չաքուջը խորին տխրությամբ և ապա հարցրեց յուր խոսակցից.

— Ես պատիվ չունեցա ճանաչել քեզ:

— Քո խանորհ ծառա Սնդան:

—Տուր ինձ ձեռքդ, եղբայր ենք մենք, — ուրախությամբ բացականչեց Չաքուջը և բռնեց յուր խոսակցի ձեռքը:

—Ես պատրաստ եմ քեզ ծառայելու, — պատասխանեց Սնդանը:

—Ես էլ այդ էի պտրում:

—Ի՞նչ կա:

—Դու արդեն հասկացար, ես Չաքուջ եմ, իսկ դու Սնդան, երկու համապատասխանող ընկերներ: Ավագ ուրբաթի գիշերն ինձ անհրաժեշտ պետք է իմ մուրճով մի քանի զարկ տալ քեզ վրա:

— Ի՞նչ նպատակ ունիս, — հարցրեց Սնդանը, զարմանալով մի այդպիսի առաջարկության մասին:

Որ նորոգվին Արտավազդա շղթայքը:

— Դու նրա դեմ ո՞խ ունես:

— Ոչ, միայն եթե նա կտրեր յուր շղթայքը և իջներ Մասիսից, ուր նրան հափշտակեցին քաջերը, այն ժամանակ... արդեն...:

Սնդանը տխրության թախիծը դրոշմված երեսին կտրեց Չաքուջի խոսքը.

— Զուր ջանք, եղբայր, առանց քո Մուրճին էլ Արտավազդա շղթայքը նորոգվում են...:

— Որպե՞ս:

Սնդանը սարսափելով արտասանեց ճակատագրական խոսքը.

— Մենք կաշկանդվա՛ծ ենք...:

Բ

—Այլևս ի՞նչ բանով ես պարապում, — հարցրեց Սնդանը:

—Դու արդեն կարդացիր իմ ճակատագիրը, — պատասխանեց Չաքուջը:

— Հա՛, ներեցե՛ք, ես մոռացա, դու թափառում ես:

—Այո՛:

—Ուրեմն ես համարձակ կարող եմ կոչել քեզ՝ կամ Կայեն, կամ թափառական հրեա:

— Ո՛չ, եղբայր, հրեա բառը անախորժ է իմ ականջին, միայն համաձայն եմ առաջին կոչման հետ, որովհետև դորանով բացատրվում է իմ վիճակը:

Սնդանը մի փոքր մտածելուց հետո, ասաց.

—Եղբայր, երբ դու ընդունեցիր Կայեն անունը, այժմ ես կարող եմ ասել քո դժբախտության պատճառը:

—Որպե՞ս:

— Իսրաելի Եհովան չընդունեց քո ողջակեզը:

— Այո՛:

Եվ դրա պատճառով դատապարտվեցար:

—Այո՛:

—Քեզ վիճակվեցավ ապրուստի խիստ դառն հոգսը:

—Այո՛:

—Դու եղար ամենաթշվառականը արարածների մեջ:

—Այո՛:

Սնդանը տվեց յուր դեմքին մի փոքր խորհրդական կերպարանք, և ապա ասաց.

—Կարծեմ դու կընդունես քո բարեկամից (եթե շնորհ ունեմ այդպես կոչվել( մի բարի խորհուրդ:

—Որպիսի՞, — հարցրեց Չաքուջը ուրախանալով:

— Մի բարի խորհուրդ քո վիճակը բախտավորելու մասին:

— Ես լսում եմ:

— Ուրացի՛ր Եհովան:

— Հետո՞:

—Երկրպագե Մամոնի կուռքին և նվիրե նրան քո ողջակեզը:

—Հետո՞:

— Խնկե քո բուրվառը հարուստների առաջին, դրանք այդ կուռքի քուրմերն են:

Չաքուջը բացասական կերպով պատասխանեց.

—Թեև այդ վարդապետությունն այժմ մեր շատերից ընդունված մի դեն է, միայն ներեցե՛ք, ես նպատակ չունեմ կրոնափոխ լինելու...:

—Ուրեմն թափառե ծակ կոշիկներով և մաշված հագուստով: Սնդանը կնքեց յուր խոսքը:

Գ

—Ես մի նոր պարապմունք եմ գտել, — ասաց Չաքուջը:

—Որպիսի՞, — հարցրեց Սնդանը:

—Ծառայում եմ մի մշակի:

—Նա ի՞նչ է շինում:

—Նա ինչ է շինո՞ւմ. նա մշակում է...

—Ի՞նչ ես ուզում ասել:

—Նա մշակում է մեր հասարակության մտավորական և իմացական դաշտը:

—Էլի չասկացա:

—Նա լրագիր է:

—Այժմ հասկացա:

Մնդանը հեգնական ծիծաղը երեսին ասաց.

—Է՛, եղբայր, այդ ծառայությունդ դարձյալ չէ՞ բախտավորելու քեզ:

—Ինչո՞ւ, — հարցրեց Չաքուջը:

— Որովհետև մեր ժողովուրդը միշտ պատրաստ է սպանել լրագիրը, կոտրելով նրա հետքից կախարդական կուժը. նույն վիճակն է սպասում և քո մշակին:

— Ի՞նչ կախարդական կուժ:

Որպեսզի հասկանաս, ես հարկավոր եմ համարում պատմել քեզ մի անցք:

— Ես լսում եմ:

Մնդանը շարունակեց.

—Մի քանի օր առաջ անցնում էինք Հավլաբարի թաղով, մի տանից դուրս էին տանում ննջեցյալ, ես տեսա դրացի տան լուսամտից ձգեցին մեռելի հետքից մոխիրով լցված մի կուժ, նա կոտրվեցավ և ահագին փոշի բարձրացրեց: Փոշին լցվեցավ գնացող կենդանի մարդկանց աչքերը և նրանց հագուստը կեղտոտեց:

—Միևնույն վիճակին են ենթարկվում, — ասաց Չաքուջը, — հավիտենական քնով թմրած լրագրներից հետո լույս տեսած կենդանի լրագրերը: Նրանք երկար ժամանակ չեն կարողանում սրբել իրանցից առաջ մեռածների հետքից ձգած մոխրի փոշին:

—Երբ հարցրի մի այդպիսի օտարոտի գործողության պատճառը, — շարունակեց Մնդանը, — ինձ ասացին, թե ջադուկ պառավներն այդպես են անում, որ մեռելը կրկին չվերադառնա80:

—Ես էլ խորին հաճությամբ կցանկանայի մեր արդեն մեռած լրագրների հետքից կոտրել այդ կախարդական կուժը, որպեսզի նրանք չվերադառնային:

—Ինչո՞ւ, — հարցրեց Սնդանը:

—Որովհետև նրանք իրանց կենդանության ժամանակ շրջում էին որպես մեռյալ ուրվականներ...:

—Բայց եթե մտածեին նույնը գործ դնել մշակի վրա, ինչ որ դու մտածում ես հանգուցյալ լրագրների մասին:

—Այսինքն սպանե՞լ նրան, և կոտրե՞լ հետքից կախարդական կուժը, — հարցրեց Չաքուջը:

—Այո, — պատասխանեց Սնդանը:

—Մշակի բանվորները կախարդներ են, նրանք կտան նրան խմելու անմահական ջուր, և մահը երբեք չի ներգործիլ նրան:

Սնդանը ծափահարեց գոչելով.

— Կեցցե՛ մշակը...:

Դ

— Ես դարձյալ պիտի կոչեմ քեզ քո առաջին անունով, — ասաց Սնդանը:

—Այսինքն Չաքո՞ւջ:

—Այո՛:

—Ինչո՞ւ փոխեցիր միտքդ, — հարցրեց Չաքուջը:

—Ես նպատակ ունեմ:

—Որպիսի՞:

—Երբ դու չես պատկանում Մամունի դենին, ես կամենում եմ առաջարկել մի բարի գործ:

—Զո՛րօրինակ:

— Քո մուրճով ջարդել մինի գլուխը:

—Այսինքն՝ դու կամենում ես բարի գործ անունով ինձ դավակի՞ց առնել քեզ հետ:

—Ուղիղ այդպես: Բարի նպատակն արդարացնում է գործը, թեև նա լինում է չարության կերպով:

Չաքուջը ռոպեական մտածությունից հետո հարցրեց.

— Ո՞վ է նա:

— Մամոնի կուռքի քուրմերից մինը, — պատասխանեց Սնդանը:

— Ինչպե՞ս է կոչվում:

— Պարոն Կողոպտիչ:

— Ճանաչում եմ... — ասաց Չաքուջը և լռեց:

—Ինչո՞ւ չես խոսում, — հարցրեց Սնդանը:

—Երկյուղալի է այդպիսի մարդու հետ գործ ունենալը:

—Ինչո՞ւ:

—Նրա համար, որ թեև նա ծածկված է քուրմի վերարկուով, բայց կատարյալ ավազակ է, նա կարող է ինձ սպանել տալ:

—Ուրեմն վախո՞ւմ ես:

—Այո՛:

—Ես քո վախին ճար ունեմ:

—Կախարդ պառավի մո՞տ պիտի տանես:

—Ո՛չ:

— Վախի հուլո՞ւնք պիտի կապես վզիցս:

— Ո՛չ:

— Հմայող մղդսիին սրտոտության փիրի՞կ պիտի գրել տաս ինձ համար:

— Ո՛չ:

— Ապա ի՞նչ պիտի անես, ասա, համբերությունս հատավ: Երբ դու վախենաս, Խոջանց վանքը կտանեմ քեզ, նահատակի գերեզմանի վրա մենք կլցնենք մի սափորով ջուր և կրվեր առնենք մեզ հետ, այդ ջրով նույն գերեզմանի վրա դու կլվացվես, հետո սափորը գերեզմանի քարին զարկելով կկոտրենք, և դու կթողնես այնտեղ քո վախը81:

— Հիանալի՛ միտք, — գոչեց Չաքուջը, — այժմ ես պատրաստ եմ զարկել պարոն Կողոպտիչի գլխին իմ մուրճի հարվածները:

Ե

—Այժմ գնանք, — ասաց Սնդանը:

—Ո՞ւր, — հարցրեց Չաքուչը:

—Եկեղեցի:

—Լավ հոգեսեր մարդ ես եղել:

— Օրինա՛ծ, մի՞թե չես գիտում, մեծ պաս է, ապաշխարության օրեր են, պետք է ժամ գնալ, աղոթել, խոստովանել և մեղքերը քավել: Մարդ յուր տան պղնձները, քիչ ասեմ, տարենը մի անգամ տալիս է կլեկագործին սրբելու: Տերտերները որ կան, մեր հոգվո կլեկագործներն են, մի՞թե մեր սրտի ամանը չպիտի տանք նրանց սրբելու... Հիշի՛ր, որ այս տարի մեղք գործեցիր, և մի նորի համար արդեն պատրաստվում ես...:

— Դու պարոն Կողոպտիչի մասի՞ն ես խոսում:

—Այո՛:

—Ուրեմն գնանք, — ասաց Չաքուջը և սկսավ Բայրոնի քայլերով շարունակել յուր ճանապարհը:

—Բայց մի հարց, — ասաց նա:

—Ասա՛:

— Քարոզներ տալի՞ս են:

— Ինչպես չէ:

— Այդ լա՛վ է:

— Անցյալ օր մի քահանա մի շատ հիանալի քարոզ տվեց: Նրա քարոզը թե՛ յուր ճարտասանական ձևերով, թե՛ յուր տրամաբանական խորհրդածությամբ և թե՛ յուր բարձր ու վսեմ վարդապետությամբ ինձ վրա մինչ այն աստիճան ազդեցություն գործեց, որ ես բոլորն անգիր սովորեցա և կարող եմ ամբողջապես քեզ հաղորդել:

— Ասա՛, խնդրեմ:

— Պատվելի տեր հայրը քարոզն սկսեց մի բազմախորհուրդ հառաջաբանով:

— Սիրելի ժողովուրդ, — ասաց նա:

— Էսօր ես շատ բեզրած իմ, էնդուր վուր շատ գործ իմ կատարի: Մազրամ, տեր ամենակալ աստվածը ինձ էն ղադամի շնուրք է տվի, վուր էլի կանգնած իմ ձիր առջիվը, ուզում իմ մե քարոզ տա, վուր դուք փիքր չանիք, թե ես քարուզ տալը չիմ իմանում:

Առաջ ուզում իմ ասի ձիզ, թե ինչեմեն է, վուր ես էսօր շատ բեզրած իմ. ա՛յ, ասիմ թե ինչեմեն.

Առուտյան շուտ վիր իմ կացի, էն անիծած միր նուր բիճը խամ տղա է, ջեր իմ ադաթը չի իմանում, տեհնում իմ սամովարը հազիր չէ, ջիգրու ինծանիրս մոտ էլան, մի քիչ քոթկեցի, մե քանի ուշուց տըվի, էլ ի՞նչ անեի, ժամի վուխտն անց էր կենում, առանց չայ խմելու տանից դուրս էկա: Ժամն էլ, տեհնում իք, քանի սհաթ է վուր չալիշ իմ գալի, խան ժամն իմ ասում, խան Ավետրան կարդում, սրան խոստովնեցնում, նրան հաղորդում, վո՞ւր մեկն ասիմ: Էս տարի էլ խոմ մարդիկ էնքան միղք ին գուրծի, վուր ասելով չէ պռծնում, դե՛ նստե նհալու վրեն, ծանր ու բարակ լսե նրանց...:

—Հառաջաբանը վերջացնելուց հետո տեր հայրն սկսեց քարոզը:

—Սիրելի ժողովուրդ, — կրկնոց նա ոգևորված ոճով:

Ինչ վուր մինք խոսում ինք, գիփ էլ Ավետրանի կուղքին գրած ին, կարգս է վկա, վուր գրած ին, սուտ չիմ ասում: Չի՞ք հավատում... չիք հավատո՞ւմ, էս նիմուտիս բերիմ ձիզ Ավետրանը նշանց տամ:

Քարոզիչը դարձավ դեպի բեմը, որ Ավետարանը բերե և նրա կողքին գրածները ժողովրդին ցույց տա: Բայց ժողովուրդը չկամեցավ ավելի նեղություն տալ նրան, որովհետև տեր հայրն այն օր շատ գործ էր կատարած և բեզարած (հոգնած)...:

Չաքուջը երգիծական ծիծաղը երեսին կտրեց յուր բարեկամի խոսքը, ասելով.

— Բայց ինձ ցանկալի էր գիտենալ, բճին (փոքրավորի), սամովարն ուշացնելու համար, ուշունց տալն էլ Ավետարանի կողքին գրա՞ծ է, թե ոչ:

— Այդ հարկավոր է նույն տերտերից հարցնել, — պատասխանեց Սնդանը:

— Ուրեմն գնանք ժամ:

— Բայց մինչև եկեղեցին հասնելը ես կամենում եմ հայտնել քեզ մի գաղտնիք, — ասաց Սնդանը:

— Ի՞նչ գաղտնիք, — հետաքրքրվելով հարցրեց Չաքուջը:

—Պարո՛ն, դու լրտեսում ես ուրիշի գաղտնիքը, միայն չգիտես, քեզ համար ի՞նչ որոգայթներ են լարում:

—Որպե՞ս, — զարհուրելով գոչեց Չաքուջը:

— Մի քանի օրից դու դատաստանի պիտի կանչվիս իբրև քրեական հանցավոր:

— Ո՞վ է դատախազը։

— Գերառչնչականները։

— Ուրեմն ինձ չէ կարելի այժմ գնալ եկեղեցի, գնամ մի փաստաբան վարձելու, — ասաց Չաքուջը և բաժանվեցավ յուր ընկերից։